# Փ Ա Ս Տ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## Ա

ՀՐԱՄԱՆԱՒ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

*Տպագրվում է մեկենասությամբ՝*

Փ Ա Ս Տ Ա Գ Ր Ա Կ Ա Ն - Ա

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ

# ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ

*Հրատարակութեան պատրաստեց՝*
*ԿԱՐԻՆԷ ԱՒԵՏԵԱՆԸ*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Տ – 917

*Լուսանկարները տրամադրել է Հրայր Բազէն*

ՊԱԼԵԱՆ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Տ - 917 Հայ վանորայք: Հրատարակութեան պատրաստեց Կ. Աւետեանը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: - Ս. Էջմիածին, 2008, 464 էջ + 48 ներդիր:

Տրդատ եպիսկոպոս Պալեանը 19-րդ դարի վերջի եւ 20-ի սկզբների մեր մտաւորական այն բազմաթիւ նահատակ-հոգեւորականներից մէկն էր, որ զոհը դարձաւ 1922 թ. Զմիւռնիայի բարբարոսութեան. ոչ միայն ինքը, այլեւ իր գործերը՝ տպագիր ու անտիպ:

Նա «Հայ վանորայք» յօդուածաշարի պատրաստութիւնն սկսել է 1883 թուականից եւ շարունակել է ընդհուպ մինչեւ գրքի հրատարակութեան նախօրեակը, ինչպէս ինքն է գրել գրքի առաջաբանում. «մեր ձեռքին տակ ու աչքի առաջ ունենալով հին եւ նոր ազգային, եկեղեցական մատեանք, վանքերու մասին այլ եւ այլ ժամանակներ տպագրուած գրեանք, տեղագրական պատմութիւնք, հին եւ նոր լրագիր ու հանդէսք եւ գուշագիր ձեռագիրներու յիշատակարանք»:

Վանքերի շատ նկարագրութիւնների համար ինքն անձամբ է շրջել եւ նիւթեր հաւաքել. ականատեսի նրա այս նկարագրութիւնները այդ վանքերի՝ իր ժամանակի կացութեան եւ իւրայատկութիւնների արձանագրումն են, դրանով էլ ստոյգ վաւերագրի արժէք ունեն:

Պալեանի «Հայ վանորայք» գործը Կեսարիայի եւ կեսարահայոց, Մալաթիայի, Եւդոկիայի հայոց պատմութեան առաջնակարգ եւ վաւերական սկզբնաղբիւր եւ, միաժամանակ, ձեռագրական եւ վիմագրական աղբիւրների տուեալների վրայ հիմնուած համակողմանի ուսումնասիրութիւն է, որ դեռեւս ըստ արժանւոյն չի գնահատուել:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-74-5
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

# ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆԸ ԵՒ ԻՐ «ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ» ԵՐԿԸ

Տրդատ եպիսկոպոս Պալեանը 19-րդ դարի վերջի եւ 20-ի սկզբների մեր մտաւորական այն բազմաթիւ նահատակ-հոգեւորականներից մէկն էր, որ զոհը դարձաւ 1922 թ. Զմիւռնիայի բարբարոսութեան. ոչ միայն ինքը, այլեւ իր գործերը՝ տպագիր ու անտիպ[1]: Ծնուել է 1850 թ. Կեսարիայի Թալաս գիւղում: Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի Վարդ-Պատրիկեան դպրոցում, ապա՝ Զմիւռնիայի Մեսրոպեան վարժարանում:

1879 թ. մեկնել է Երուսաղէմ, այնտեղ ընդունել հոգեւոր կոչում, 1881 թ. ձեռնադրուել է վարդապետ, մինչեւ 1887 թուականը վանքում վարել է աւագ թարգմանի, տպարանի եւ գրադարանի տեսչի կարեւոր պաշտօնները:

1887-1910 թթ. եղել է Կեսարիայի առաջնորդ, 1899 թ. ստացել է ծայրագոյնութեան աստիճան, ապա եպիսկոպոս ձեռնադրուել Էջմիածնում: Իր կեանքի ընթացքում բազմիցս ուշադրութեան է արժանացել եւ կոչուել բարձր պաշտօնների. 1902 թ.՝ Կիլիկիայի կաթողիկոսական ընտրութեան թեկնածու, 1910 թ.՝ Տրապիզոնի առաջնորդ, 1913 թ.՝ Երուսաղէմի պատրիարքական տեղապահ, վերջապէս՝ 1921 թ. Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան եռանուն ցանկի մէջ եւս Եղիշէ Դուրեանի հետ միասին եղել է նաեւ Պալեանի ազգանունը, սակայն միշտ հրաժարուել է եւ մինչեւ վերջնական հրաժարականը հաւատարիմ ծառայել է իր հարազատ Կեսարիային առաջնորդական պաշտօնում:

1888 թ., նորոգելուց եւ բարեկարգելուց յետոյ, Կեսարիայում բացել է Ս. Կարապետի վարժարանը, 1897 թ. հիմնել է որբանոց-կրթարան, այնուհետեւ՝ մանկապարտէզ, իգական վարժարան եւ վանքերին կից ընծայարան-դպրանոց: Նախաձեռնել եւ 1903-4 թթ. աւարտել է նորակառոյց վարժարանի շինութիւնը, ուր տեղափոխուել է Ս. Կարապետի նորացած, ընդարձակուած գիշերօթիկը, որ այդուհետեւ յայտնի է եղել որպէս Բարձրագոյն վարժարան, որ շարունակել է գործել նաեւ Պալեանի հարկադրական հրաժարականից յետոյ՝ մինչեւ 1915 թ., չնայած մի պահ կուսակցական վէճերի պատճառով փակուելու վտանգ կար: Տրդատ եպիսկոպոսը կրթական գործին մեծագոյն նշանակութիւն տուող հոգեւորականներից էր. գուրգուրում էր դպրոցի յաջողութիւնները, ուսուցիչներին՝ պատուիրում. «Նեղ եւ ձախող օրերու մէջ պէտք է արի ըլլաք, ինչ որ ալ ըլլան հարկեցուցիչ պարագաները, եւ չգոցել երբեք վարժարանը: Օր մը, ժամ մը միայն գոցուելով, վերաբացումի հաւանականութիւնը կը նուազի: Միշտ բաց պահեցէք զայն: Եթէ աշակերտ մը իսկ չմնայ, ձեզնէ մին՝ ուսուցիչ, իսկ միւսը՝ աշակերտ թող ըլլայ, եւ անցնողը վարժարա-

---

[1] Պալեանի կենսագրութեան մանրամասները եւ գործերի մատենագիտութիւնը տե՛ս Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, Կազմեց՝ Կարինէ Աւետեան», Երեւան, «Քնճասէր», 2002, էջ 182-233:

նի դուռը թող բաց տեսնէ, եւ ներսէն դասաւանդութեան ձայն թող լսուի: Ցաչող օրեր չեն ուշանար»[2]:

Ստեղծել է «Հրատարակչական միութիւն Ս. Կարապետի վանուց» անունով ընկերութիւն, որ ծրագրել էր դասագրքեր հրատարակել[3]:

Գիտական գլխաւոր նախասիրութիւններից էին՝ ձեռագրերի նկարագրութիւն[4] եւ հայկական տպագիր գրքի, տպագրութեան պատմութիւն: Երկուսով էլ զբաղուել է միաժամանակ եւ հաւասարաչափ նուիրումով. արծարծել է պոլսահայ, զմիւռնահայ տպագրութեան պատմութեան հարցեր, կարեւոր ճշտումներ է արել որոշ հնատիպ հրատարակութիւնների, ինչպէս նաեւ հայերէն առաջին տպագիր գրքի թուագրման հարցերի մէջ, հրատարակել է նոր, մինչ այդ գիտութեանն անյայտ տեղեկութիւններ պարունակող յօդուածներ: Պալեանը իր ժամանակի գրագէտների (մտաւորական) նման հետաքրքրուել է բանահիւսութեամբ, հնագիտութեամբ. հաւաքել է կնիքներ, դրամներ, ձեռագրեր, տպագիր գրքեր, դրոշմաթղթեր, արձանագրութիւններ, այն ամենը՝ ինչ կարող էր հնագիտական արժէք ունենալ, հրատարակել եւ փորձել է վերծանել դրանք: Երազում էր իր ծննդավայրում ստեղծել Երուսաղէմի մատենադարանի նման հարուստ հաստատութիւն: Պալեանի բանահիւսական-բանահաւաքչական աշխատանքը սկսուել է դեռեւս 1865-78 թթ., ապա՝ շարունակուել Երուսաղէմում եւ Կեսարիայում, հրատարակել է երկուական հատոր՝ Առածներ եւ ասացուածքներ (1912 թ.)[5], Ա-Ջ այբբենական կարգով, թուով՝ 1555, եւ Հայ աշուղներ Ա-Գ, 89 անուն (1911, 1912)[6]: Նախատեսում էր գրքի վերջին հատորում զետեղել ինքնակենսագրութիւնը. «Իմ կեանքն, իր ընդհանուր գիծերով, մանրամասն եւ մանաւանդ անաչառապէս գրի առած, պատրաստած եմ ես ինքս, որ պիտի երեւի սոյն աշխատասիրութեանս վերջին հատորի վերջին մասին մէջ»[7]: Սակայն նրա այդ ցանկութիւնը եւս մնաց անկատար, այնպէս ինչպէս իր սկսած միւս

---

[2] Հ. Ուղուրլեան, Կ. Աբրահամեան, Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը. Բարձրագոյն վարժարանը եւ Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական աթոռը եւ առաջնորդներ. - «Ընդարձակ տարեցոյց», կազմեցին Մ. Զուհաճեան, Թ. Ազատեան, 1928, էջ 240:

[3] Գոնէ երկու գրքոյկի անուն (Ցուցակ հայ. ձեռ., հ. Ա, պր. Ա, 1892, Նշանագիրք Հայոց, 1898) յայտնի է որպէս այդ միութեան հրատարակութիւն. մտադիր էր տպարան հիմնել եւ այդ նպատակով 1892 թ. ամռանը Պոլսում այցելել է տպարաններ ու ձուլարաններ, ծանօթացել նրանց աշխատանքներին:

[4] Պալեանի՝ առանձին գրքոյկներով եւ մամուլում ցրուած ձեռագրերի պահպանուած եւ յայտնի նկարագրութիւնները հաւաքել եւ «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին» վերնագրով առանձին հատորով (Երեւան, 2002) հրատարակել է Գ. Տէր-Վարդանեանը, այսպիսով մասամբ իրականացնելով բազմավաստակ երախտաւորի երազանքներից մէկը՝ «ուղղակի տետր առ տետր առանձինն հրատարակել,ամբողջ հատոր մը կազմելու համար»:

[5] Հաւաքել եւ հրատարակութեան էր պատրաստել նաեւ թուրքերէն առածներ եւ ասացուածքներ:

[6] Աշուղների առիթով շնորհակալութեամբ ընդունելով Դպիր ծածկանունով հեղինակի հրատարակած եւ իրեն նուիրած ցանկը, գրում է. «Բայց միթէ բաւականանալու ե՞մք այսչափով: Ոչ, կըսեմ ես: Այլ պէտք է գրուին եւ հրատարակուին նաեւ՝ Հայ Դպրոցաց, վարժապետաց, եւ գրագիտաց պատմութիւնը, Հայ Ընթերցատանց եւ Թանգարանաց պատմութիւնը, Հայ Եկեղեցեաց, Եկեղեցականաց, եւ որ մեծն է, Հայ Վանորէից պատմութիւնները, Հայ Բժշկաց եւ արհեստաւորաց պատմութիւնը, եւն, եւն». տե՛ս «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1893, էջ 55:

[7] Տե՛ս Հայ աշուղներ, հ. Ա., 1911, էջ 4:

գործերը: Ունէր իր նախաձեռնութիւնների բազմաթիւ աջակիցներ եւ համակիրներ (խմբագիրներ՝ Մատթէոս Մամուրեան, Բիզանդ Քէչեան, Թորգոմ արքեպս. Գուշակեան, Կիլիկիայի Սահակ կաթողիկոս Խապայեան, Մելքոն Ասատուր, Երուանդ Երկաթեան, Ներսէս Ստեփանեան, Աբրահամ Ֆրէնկեան) եւ, իհարկէ, հակառակորդներ. վերջիններս հասցրեցին նրան, որ այդ անխոնջ, գործունեայ առաջնորդը հրաժարուեց պաշտօնից, հեռացաւ ազգային կեանքից եւ այնուհետեւ նուիրուեց բացառապէս իր գրական-բանասիրական աշխատանքներին:

Ընդհանրապէս դժուար է ասել, թէ Պալեանն իր հաւաքչական աշխատանքը յատկապէս ինչ նիւթից է սկսել եւ ամէն առանձին դէպքում ուր է հասել. երեւի սխալ չէ մեր այն տպաւորութիւնը, որ նա սկսել է բոլորը միաժամանակ, քանի որ մէկը միւսով լրացնում էր: Նրա թէ՛ յօդուածները (գրեթէ բոլորն անխտիր աւարտւում էին «շարունակելի» բառով, սակայն ո՛չ միշտ էին իրականանում) եւ թէ՛ առանձին հրատարակուած աշխատանքները հաստատում են այդ տպաւորութիւնը, քանի որ հրատարակել է «Ցուցակ հայերէն ձեռագրաց»՝ երկու պրակ, «Ցուցակ հայերէն հին տպագրութեանց» (Արեւ. Մամուլ, Հանդէս Ամսօրեայ, Բանասէր, Դաշինք) «Հայ աշուղներ»՝ երկու հատոր, «Ժողովրդական առածներ եւ զանազան ասացուածքներ»՝ երկու պրակ, որոնք, անկասկած, պէտք է ունենային իրենց շարունակութիւնը: Բացառութիւն չէր նաեւ «Հայ վանորայք» յօդուածաշարը:

Այս գործի պատրաստութիւնն սկսել է 1883 թուականից, երբ դեռեւս Երուսաղէմում էր, եւ շարունակել է ընդհուպ մինչեւ գրքի հրատարակութեան նախօրեակը, ինչպէս ինքն է գրել գրքի առաջաբանում. «մեր ձեռքին տակ ու աչքի առաջ ունենալով հին եւ նոր ազգային, եկեղեցական մատեանք, վանքերու մասին այլ եւ այլ ժամանակներ տպագրուած գրեանք, տեղագրական պատմութիւնք, հին եւ նոր լրագիր ու հանդէսք եւ գրչագիր ձեռագիրներու յիշատակարանք»:

Վանքերի շատ նկարագրութիւնների համար ինքն անձամբ է շրջել եւ նիւթեր հաւաքել. ականատեսի նրա այս նկարագրութիւնները այդ վանքերի՝ իր ժամանակի կացութեան եւ իրայատկութիւնների արձանագրումն են, դրանով էլ ստոյգ վաւերագրի արժէք ունեն: Նրա այդպիսի մի ուղեւորութեան մասին 1893 թուականին հետաքրքիր լուրեր է հաղորդել Կ. Պոլսի «Փունջ» շաբաթաթերթը. մայիսի 22ին «Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան՝ երէկ ուղեւորեցաւ ի պաշտօնավայրն»[8]: Այնուհետեւ գրեթէ մէկ ամիս անց, Յունիսի 19ին. «Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդապետ Պալեան՝ Գաղատիոյ մէջ երկու շաբաթու չափ ժամանակ մնալէ ետքը՝ ի պաշտօնավայրն հասեր, եւ եկեղեցականաց ու ժողովրդեան ամէն դասուց կողմանէ մեծաւ սիրով ու անձկանօք ընդունուեր է»[9]:

Ունեցել է բազմաթիւ թղթակիցներ. Գեղամ Տէր-Կարապետեան, Խաչիկ Լեւոնեան, Աւետիս Սահակեան (Մուշում, Վանում), Դանիէլ վարդապետ Յակոբեանց

---

[8] «Փունջ», 1893 թ., մայիսի 22. թիւ 2359:

[9] «Փունջ», 1893 թ., Մայիսի 22 եւ Յունիսի 19, թիւ 2359 եւ 2363՝ «Ազգային լուրեր» բաժնում:

(Երզնկայի առաջնորդ), Ս. Ամատեան եւ ուրիշներ, որոնք եւս նրա ձեռնարկին նպաստել են իրենց տեղեկութիւնները նամակներով ուղարկելով կամ յօդուածի տեսքով մամուլում հրապարակելով եւ հասցէագրելով Պալեանին: «Բիւզանդիոն» օրաթերթում առաջին հրապարակումն արել է 1897 թ., Երզնկայի առաջնորդական տեղապահ Դանիէլ վարդապետ Յակոբեանի եւ Կ. Թումմանեանի թղթակցութիւնների առիթով, որոնք հրապարակել էին Երզնկայի եւ Բաղէշի վանքերի անուններ: Պալեանը յիշատակել է Պատրիարքարանի մի պաշտօնեայի՝ Յովհաննէս Թաթարեանի անունը, եւ յորդորել, որ աջակցեն նրան, որ «տարիներէ ի վեր կզբաղի Հայ Վանորէից պատմութիւն մը գրելու. կարծեմ շատ ու շատ յառաջացուցած է իր աշխատասիրութիւնը քան զմեզ. թող օգնեն անոնք, որ վանքեր պտտած են կամ անոնց մօտիկը կ'բնակին, հաղորդելով անոնց վրայ կատարեալ եւ ամփոփ տեղեկութիւններ. թո՛ղ ըլլայ այդ վանքը կանգուն, թո՛ղ ըլլայ աւերակ, ինչո՞ւ չունենանք Հայ Վանորէից ցանկ մը, պատմութիւն մը, մի հատորի մէջ ամփոփուած, թո՛ղ ըլլայ համառօտ»[10]:

Սակայն շատ չանցած, 1899 թուականին Յովհ. Թաթարեանը վախճանուեց[11], եւ միայն 1993 թուականին իրականացաւ «Հայ վանորէից» թէկուզ մի համառօտ ցանկ[12] ունենալու Պալեանի ցանկութիւնը, որի անհրաժեշտութիւնը նա զգում եւ գիտակցում էր դեռեւս հարիւր տարի առաջ:

«Բիւզանդիոն»ում 1897-1908 թթ. հրապարակուած Պալեանի յօդուածների մէջ կան այնպիսիք, որ թւում են նախնական, աշխատանքային տարբերակներ, նկարագրութիւնները երբեմն շատ համառօտ են, երբեմն էլ բաւական ընդարձակ, լրացուած եւ մշակուած, այսինքն՝ ամէն պահի հրապարակել է այն, ինչ ունեցել է եւ սպասել արձագանգների, որոնք չեն ուշացել: Օրինակ, Մուշի վանքերին վերաբերող վերջին յօդուածը 1908 թուականի մայիսին գրել է բաւական երկար՝ շարունակաբար երեք համարների մէջ, սակայն Ս. Կարապետ վանքի վանահայրերին թուարկելուց յետոյ գրել է. «Այս վանքի մասին հին եկեղեցական ձեռագիրներէ հաւաքուած ունինք բաւական յիշատակարաններ, զորս յարմար առթիւ հրատարակութեան կուտանք»: Սակայն, ո՛չ Պալեանի եւ ո՛չ էլ միւսների նմանօրինակ աշխատանքների հրատարակութեան համար յարմար առիթ այդպէս էլ չներկայացաւ երկար ժամանակ, յամենայն դէպս՝ իրենց կեանքի ընթացքում. ինչպէս յաճախ պատահել է հայ իրականութեան մէջ՝ աշխատութիւններն էլ կիսել են հեղինակների ճակատագիրը՝ տարագրութիւն, թալան, կողոպուտ, եղեռն:

Պալեանը «Բիւզանդիոն» օրաթերթի իր հրապարակումներն արել է երբեմն մեծ ընդհատումներով. եւ սա բացատրել է նրանով, որ գրագողութեան դէպքեր է

[10] Բիւզանդիոն, թիւ 351, 1897-8:

[11] Բիւրակն, 1899, թիւ 5, Յունվար, էջ 77. «Ազգ. Պատրիարքարանի քարտուղար Յովհ. էֆ. Թաթարեան աս կիրակի մեռաւ 43 տարեկան հասակին մէջ, եւ Գշ. կատարուեցաւ թաղման հանդէսը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր»:

[12] Տե՛ս Repértoire des monasterès arméniens, Par Michel Thierry, Brepols-Turnhout, 1993, 250 p.

նկատել եւ առանց որեւէ բողոքի, ժամանակ առ ժամանակ դադարեցրել է իր ուսումնասիրութիւնների տպագրութիւնը[13]: Այդ ընթացքում հրապարակումներ է արել նաեւ «Արեւելք»ում (1907) եւ «Լոյս»ում (1906):

Նրա հրապարակումներն[14] անորոշ ժամանակով շատ անգամներ էլ ընդհատուել են օսմանեան գրաքննութեան պատճառով. սրա բռնատիրական խստութիւններն անընդհատ փակուելու սպառնալիքի տակ էին պահում հայկական պարբերականները, որով էլ խմբագիրներին հարկադրում էին ծայրայեղ զգուշութեան, այդ պատճառով էլ ոչ միայն սովորական լրագրային թղթակցութիւնները, այլեւ ձեռագրերի յիշատակարաններն էին երբեմն «խմբագրում», ոչ ցանկալի բառերն ու արտայայտութիւնները կրճատում էին՝ բնագիրներն աղաւաղելու աստիճանի: Այսպէս, Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի «Ընդարձակ օրացոյց»ի 1908-1910 թթ. կազմող-խմբագիր Արշակ Ալպօյաճեանը հրատարակելու համար խնդրել եւ Պալեանից ստացել է Կեսարիայի, Սեբաստիայի, Եւդոկիայի վանքերի պատմութիւնը, լուսանկարներով հանդերձ, եւ չնայած վերջինս ուղարկել է նրա նախընտրած կրճատ տարբերակը, որ Ալպօյաճեանն էլ իր հերթին է խմբագրել-կրճատել, եւ որն այժմ ձեռագիր տետրակի տեսքով պահպանւում է Մաշտոցեան Մատենադարանում՝ Ալպօյաճեանի արխիւում[15]: Այս ամէնով հանդերձ, ամենայն հաւանականութեամբ, գրաքննութեան յարուցած խոչընդոտների պատճառով, «Ընդարձակ օրացոյց»ում այն չի տպագրուել:

1911 թուականին վերջնականապէս հրաժարվելով առաջնորդական պաշտօնից, Պալեանը տեղափոխուել է Մաղնիսա՝ իր հայրական տուն՝ ապրելով մօր եւ եղբօր հետ եւ նուիրուելով «բանասիրական աշխատութեանց»[16]:

Մինչեւ 1922 թ. ապրել է Մաղնիսայում. «օրերս կ՛անցնեմ կարդալով եւ գրելով», Սեպտեմբերի սկզբներին տեղափոխուել է Իզմիր, մտածելով որ այնտեղ կարող է անվտանգ լինել, իր հետ տանելով դրամների ու նամակադրոշմի հարուստ հաւաքածուները, ձեռագրերն ու տպագիր գրքերը, բնահիւսական, ազգագրական նիւթերը, գորգերը եւ այն ամէնը, ինչ երեսուն տարուայ ընթացքում տքնաջան աշխատանքով հաւաքել էր: 1923 թ. յուլիսին վախճանուել է եւ թաղուել Աթէնքում, 1928 թ. հոկտեմբերին՝ վերաթաղուել Երուսաղէմում:

Պալեանի ամբողջ գործունէութիւնն իր ազնիւ, սրտացաւ էութիւնից, ներքին մղումից բխած պահանջ-ծրագիր էր. մարդ էր, որ իր մէջ ներդաշնակօրէն համատեղում էր հոգեւոր գործչի, մանկավարժի, մտաւորականի կերպարը, որ մեծ յար-

---

[13] Տե՛ս «Արեւելեան մամուլ», 1904, էջ 588:

[14] Պալեանն աշխատակցել է նաեւ թուրքերէն եւ հայատառ թուրքերէն պարբերականների:

[15] Ալպօյաճեանը լուսանկարների տպագրութիւնը խանգարող հանգամանք էր համարում. առ այս որոշ մանրամասներ տե՛ս Տրդատ եպիսկոպոս Պալեանի եւ Արշակ Ալպօյաճեանի մեր հրատարակած նամակագրութեան մէջ՝ «Էջմիածին», 2006, Ա., էջ 81-91:

[16] Աշխատակցել է Զմիւռնիայի «Դափնի»ին, «Դաշինք» լրագրին. ի միջի այլոց, հրաժարականից յետոյ «Բիւզանդիոն»ին այլեւս չի թղթակցել: Հրատարակութեան է պատրաստել «Հայ աշուղներ», «Հայ վանորայք» գործերի հատորները եւ այլ աշխատանքներ:

գանք ու պատկառանք էր ներշնչում շրջապատին: Իր ժամանակակիցների յիշողութիւնների մէջ Տրդատ եպիսկոպոս Պալեանը համեստ եւ պարզ հոգեւորական էր, պատկառելի արտաքինով. «Պարթեւ հասակով, նուշ աչքերու անուշ նայուածքով ու գեղադէմ: Կը տեսնեմ զինքը, կանգնած Ս. Կարապետի նորաբաց վարժարանի սեմին վրայ... սեւ վերարկուով ծածկուած լանջքին տակ ազնիւ հոգի մը եւ մաքուր սիրտ մը, նոր սերունդին համար տրոփող... Ընկերական էր եւ զուարճախօս այդ հպարտ եւ անմատչելի կարծուած եկեղեցականը»[17]:

Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում անցկացրած տարիներին Եսայի Պատրիարքի յանձնարարութեամբ պատրաստել եւ 1892 թուականին Պոլսում հրատարակել է «Սուրբ երկիր. Նկարագրութիւն Սուրբ Երուսաղէմի եւ սրբազան տեղեաց» պատկերազարդ գիրքը, որ համարւում է ժամանակի լաւագոյն հրատարակութիւններից մէկը, եւ որը նախափորձ էր հայկական վանքերի հետագայ ուսումնասիրութեան համար:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի կենսագրութիւնը եւ գործերի մատենագիտութիւնը պատրաստելիս խոստացել էինք մէկտեղել եւ գրքի տեսքով լոյս ընծայել «Բիւզանդիոն»ում տպուած եւ առկայ միակ գրքի[18] մէջ չընդգրկուած նկարագրութիւնները, նախ՝ նրանց գիտական մեծ արժէքի եւ կարեւորութեան, ապա՝ նաեւ հեղինակի յիշատակը ոգեկոչելու եւ նրա բազմաթիւ իղձերից գոնէ մէկը մասամբ իրականացրած լինելու համար: Սակայն հետագայում համոզուեցինք, որ անհրաժեշտ է մտադրուած գրքի մէջ ո՛չ միայն մէկտեղել օրաթերթերում սփռուած եւ գրեթէ անգործածելի դարձած յօդուածները, այլեւ պէտք է վերահրատարակել հեղինակի տպագրած առաջին հատորը, որ առաջին համաշխարհային պատերազմի ուղղակի նախօրէին Զմիւռնիայում տպուած լինելով, անհրաժեշտ չափով չի տարածուել, տպաքանակի զգալի մասը գուցէ կորսուել է հեղինակի տանը եղած մշակութային ամբողջ հարստութեան հետ միասին[19], ուստի մատենագիտօրէն հազուագիւտ եւ գրեթէ անգտանելի է դարձել: Այս արժէքաւոր նիւթի գրքային հրատարակութիւնը, որ սիրով ստանձնեցինք, կարեւոր է նաեւ այն իր հեղինակի անունով շրջանառելի եւ գործածելի դարձնելու համար, որովհետեւ շատ ուսումնասիրողներ Պալեանի շրջանառութեան մէջ դրած նիւթերն օգտագործում են Ա. Ալպօյաճեանի, Հ. Հ. Ոսկեանի եւ այլոց գրքերով միջնորդաւորուած, այսինքն՝ յղում են նրանց աշխատութիւնները, ուստի եւ գործի իրական հեղինակը մնում է մոռացութեան ստուերի մէջ: «Հայ վանորայք ի Թուրքիա» գրքի առաջաբանում խօսելով եկեղեցիների, վանքերի եւ վանական հաստատութիւնների անցեալի գործունէութեան մասին եւ այն համեմատելով իր ժամանակի հետ, հեղինակը գրել է. «Ահաւա-

[17] Մելքոն Ասատուր, Վերջին լուր, 1923, թիւ 2847, էջ 1:

[18] Հայ վանօրայք ի Թուրքիա, մասն Ա., Գաղատիոյ, Սեբաստիոյ եւ Տրապիզօնի կուսակալութեանց մէջ եղած վանօրայք. Հաւաքեց Տրդատ եպս. Պալեան, Զմիւռնիա, 1914, 204 էջ:

[19] Տե՛ս Ն. Ակինեան, Տրդատ եպիսկոպոս Պալեան. Համառօտ ակնարկ մը իր գրական գործունէութեան վրայ, ՀԱ. 1923, էջ 550-52:

սին այնպիսի փառաւոր վիճակէն ներկայ անկերպարան ու ցաւալի վիճակին հասած հայ վանորէից, նոյն իսկ շատ համառօտ տեղագրութիւնը գրելու համար տոկուն գրիչ, դիմացկուն սիրտ եւ չարտասուելու աստիճան ալ աչքեր կ՛ուզէ»:

Պալեանի այս գործի նմանողութեամբ, հաւանաբար, հետագայում մխիթարեան միաբան Հ. Համազասպ Ոսկեանը հրատարակեց «Հայկական վանքեր»ի հատորաշարը: Նոյն վերնագրով «Սիոն»ում յօդուածներ է հրատարակել նաեւ Նորայր եպիսկոպոս Պողարեանը: Այս գործի առկայութեամբ է պայմանաւորուած Կ. Տէր-Մկրտչեանի «Մահմեդական լուծը եւ նրա ներքոյ ծաղկող հայ վարդապետարանները» գործի, ապա նաեւ՝ Ն. Ակինեանի «Բաղէշի դպրոցը» ուսումնասիրութեան երեւան գալը:

1897-1908 թթ. «Բիւզանդիոն» օրաթերթում եւ 1906 թ. «Լոյս» հանդէսում «Հայ վանորայք», «Նոր ցուցակ հայ վանօրէից», «Ցուցակ հայ վանօրէից» վերնագրերով մաս-մաս հրապարակել է վանքերի մասին իր ուսումնասիրութիւն-յօդուածաշարը[20], ըստ որում՝ նախ ըստ տօնացոյցի խմբաւորել եւ իւրաքանչիւր սրբի տօնի օրը հրատարակել է նրա անունն ունեցող վանքերի նկարագրութիւնները (տասնչորս յօդուած), սկսելով Բարսեղ Կեսարացիով եւ Գրիգոր Նիւսացիով, այնուհետեւ շարունակել է Ս. Յովհաննէս, Ս. Կիրակոս, Ս. Սարգիս, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Թորոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Յարութիւն անուններով, ապա, անսալով բարեկամ-նամակագիրների առաջարկներին, սկսել է ցանկել ըստ գաւառների, որի հետեւանքով նախապէս ըստ տօնացոյցի տպուած որոշ նկարագրութիւններ երբեմն կրկնել է:

Կրկնուած նկարագրութիւնների բոլոր տեղեկութիւնները միաւորել-մէկտեղել ենք մէկ միաւոր-նկարագրութեան մէջ, այնպէս որ որեւէ թէկուզ փոքրիկ տեղեկութիւն դուրս չմնայ, միաժամանակ նշելով իւրաքանչիւր տեղեկութեան առաջին հրատարակութեան տեղը:

Արած հսկայական աշխատանքը հինգ հատոր էր, սակայն հասցրել է վերամշակել միայն մի փոքր մասը, որ պատկերներով օժտել է եւ որպէս առաջին ու միակ մնացած հատոր 1914 թուականին հրատարակել Զմիւռնիայում: Յաւօք, միւս հատորները որ նախատեսել էր, լոյս չեն տեսել, իսկ այս միակ հատորը Հայաստանի գրադարաններում նոյնիսկ գոյութիւն չունի, գրքի պատճէնը շնորհակալութեամբ ստացել ենք պոլսաբնակ Վաղարշակ Սերոբեանից:

Ինչպէս ասացինք, Պալեանը ի վերջոյ վանքերի նկարագրութիւններն արել է ըստ գաւառների: ԺԹ.-Ի. դարերի ընթացքում օսմանեան կայսրութեան վարչական բաժանման մէջ կատարւում էին փոփոխութիւններ, որի հետեւանքով փոխւում էին վարչական միաւորների (վիլայէթ, սանջակ, գազա) սահմանները եւ անունները: Մեր խնդրից դուրս ենք համարում այդ փոփոխութիւնների հետեւանքով առաջա-

[20] «Արեւելք»ի 1907 թ. 6556, 6583, 6588 համարներում Պալեանը հրապարակել է Ամասիայի եւ Մարզուանի վանքերի նկարագրութիւնները եւ առաջնորդական յաջորդութեան ցանկը, սակայն Երեւանի որեւէ գրադարանում օրաթերթի այս համարները չկան:

ցած մանրամասնութիւնների մէջ մտնելը, սակայն նկատենք, որ այդ հանգամանքի պատճառով՝ շփոթած կամ ճիշտ տեղեկացուած չլինելով, Պալեանը երբեմն արել է վանքերի ոչ ճիշտ տեղադրութիւններ, որոնք հետագայում ինքն էլ ճշտել եւ շտկել է:

Ինքն իր այս աշխատանքի մասին համեստօրէն գրել է. «Գալով մեր այս գործին ու աշխատութեան, անկեղծօրէն կը խոստովանինք թէ, երբեք չենք յաւակնիր ըսելու, «պատմութիւն» կամ «տեղագրութիւն» հայ վանօրէից, այլ պարզապէս կ՚ըսենք ու ըսած ենք «Հայ Վանորայք», եւ այն ալ մեր ծանօթութեան եւ կարելիութեան, մանաւանդ մեր կարողութեան սահմանին մէջ համառօտակի տեղագրելով»[21]: Եւ չնայած այս շատ համեստ ինքնագնահատականին, նրա «Հայ վանորայք»ը թէ՛ բովանդակութեամբ եւ թէ՛ կառուցուածքով կարելի է համարել վանքերի պատմութիւն:

Պալեանի «Հայ վանորայք» գործը Կեսարիայի եւ կեսարահայոց, Մալաթիայի, Եւդոկիայի հայոց պատմութեան առաջնակարգ եւ վաւերական սկզբնաղբիւր եւ, միաժամանակ, ձեռագրական եւ վիմագրական աղբիւրների տուեալների վրայ հիմնուած համակողմանի ուսումնասիրութիւն է, որ դեռեւս ըստ արժանւոյն չի գնահատուել: Իրենից յետոյ Ա. Ալպօյաճեանը այդ երկրամասերի հայոց պատմութիւնը գրելիս, նմանատիպ այլ նիւթերի շարքում, թէ՛ ձեռագրերի եւ թէ՛ վանքերի՝ Պալեանի արած նկարագրութիւնները, հաւաքած հսկայական բանահիւսական նիւթը որպէս Կեսարիայի, Մալաթիայի, Եւդոկիայի պատմութեան ստոյգ աղբիւրներ գրեթէ ամբողջութեամբ ներառել է իր մեծածաւալ աշխատութիւնների մէջ:

Ինչպէս ձեռագրերի նկարագրութեան դէպքում, բնականաբար, վանքերի համար եւս Պալեանն ունեցել է որոշակի մշակուած հարցակարգ (նկատի է ունեցել երեւի մտովի), որ ընդհանուր առմամբ կամ մօտաւորապէս ունի հետեւեալ դասաւորութիւնը.

- տեղագրութիւն.
- հոգեւոր եւ աշխարհիկ շինութիւններ.

---

[21] Յայտնի է, որ պատրիարքարանի յանձնարարութեամբ Գարեգին վրդ Սրուանձտեանցը, Արիստակէս Տեւկանց եւ Վահան Պարտիզակցի վարդապետների ուղեկցութեամբ, 1878-9 թթ. շրջել է հայկական Արաբկիր, Տիգրանակերտ, Խարբերդ, Բալու, Մալաթիա, Չմշկածագ գաւառներում եւ հաւաքել վիճակագրական զանազան տեղեկութիւններ, այդ թւում՝ դպրոցների, եկեղեցիների ու վանքերի, նրանց ունեցած կալուածների եւ մնացած գոյքի մասին: Իսկ թուրքական կառավարութեան պահանջով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը դաւանանքների եւ արդարադատութեան նախարարութեանն է ներկայացրել հայկական եկեղեցիների եւ վանքերի ցուցակները: Աւելի քան 1500 հայկական եկեղեցիների եւ վանքերի նկատմամբ այդ «սեւեռուն հետաքրքրութիւնը», ինչպէս իրաւացիօրէն նկատել է Ա. Սաֆրաստեանը. «որոշակի կապ է ունեցել արեւմտահայութեան ֆիզիկական ոչնչացման դիւային ծրագրի՝ մեծ եղեռնի ծրագրի հետ: Մի ամբողջ ժողովրդի նախճիրի ու բնաջնջման հետ ոչնչացուեցին նաեւ այդ ժողովրդի՝ դարերի ընթացքում ստեղծած տնտեսական, քաղաքակրթական բազմաթիւ եւ բազմատեսակ արժէքները, յուշարձանները, ինչպէս նաեւ մշակութային այդ արժէքների մասը կազմող վանքերն ու եկեղեցիները» - Ա. Սաֆրաստեան, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի եւ դաւանանքների մինիստրութեան ներկայացուած հայկական վանքերի եւ եկեղեցիների ցուցակներն ու թաքրիրները (1911-1913 թթ.).- «Էջմիածին», 1965, հոկտ., էջ 40-42:

- ժամանակ.
- ճարտարապետութիւն.
- արձանագրութիւններ (շինարարական, նորոգման, խաչքարերի, եկեղեցական զանազան առարկաների եւ իրերի, տապանագրեր).
- վանական տնտեսութիւն.
- մշակութային արժէքներ.
- սրբավայրեր.
- աւանդութիւններ եւ գրաւոր վկայութիւններ.
- առաջնորդների ու վանահայրերի ցանկ.
- վանքի ներկայ (Պալեանի ժամանակի) վիճակ:

Առաջնորդի բազմազբաղ գործունէութիւնը, անհրաժեշտ նիւթի եւ գրականութեան բացակայութիւնը, վանքեր այցելելու, անձամբ տեսնելու եւ ստուգելու անհնարութիւնը խանգարել են, եւ միշտ չէ, որ յաջողուել է կատարեալ նկարագրել եւ տալ բոլոր հարցերի պատասխանը: Ինչպէս երեւում է օգտագործած գրականութեան՝ նկարագրութիւնների մէջ առկայ յիշատակումներից, խնդրին վերաբերող գրականութիւնը Պալեանի ժամանակ ընդհանրապէս, իսկ իր ձեռքին՝ մասնաւորապէս, շատ չէր, այսուհանդերձ, նրա գործի կարեւորագոյն արժէքը անձամբ իր հաւաքած կամ թղթակիցներից ստացած եւ այժմ չպահպանուած նիւթի գործածումն է, որով նրա արածի արժէքն անուրանալիօրէն մեծ է, որովհետեւ Պալեանի նկարագրած վանքերն այսօր մեծ մասամբ չկան կամ գրեթէ բոլորը յայտնի բարբարոսի ձեռքով աւերուած են, ուստի եւ նրա՝ հիմնականում ականատեսների նկարագրութիւններ պարունակող յօդուածները նոյն վանքերին վերաբերող պահպանուած եզակի վկայութիւններ են եւ սկզբնաղբիւրի արժէք ունեն:

Պալեանի նկարագրած ձեռագրերից եւ վանքերից պահպանուել են միայն նկարագրութիւնները, ուստի եւ այսօր այդ յուշարձանները գիտութեանը յայտնի լինելու չափ մասամբ փրկուած են բացառապէս նոյն նկարագրութիւններով:

Վանքերի այսօր մեզ հասած նկարագրութիւնների թիւը հասնում է 346-ի:

«Հայ վանորայք» միակ պրակի նախաբանը (էջ Է-Ը) աւարտել է վերահաս աղէտի տագնապալի նախազգացումով՝ խնդրելով. «...ներողամիտ աչքով նայիլ մեր այս գործին պակասութիւններուն ու սխալներուն վրայ եւ աղօթել նաեւ մեզ հետ, որ «Դրունք երկնանման տաճարաց չի փակուին, լոյսք եւ կանթեղք չի խաւարին, խունկ եւ նուէրք չի պակասին, ընթերցմունք Աւետարանաց, երգք Սաղմոսաց, աղօթք եւ պատարագք անմահ չի դադարին. ամէն»[22]:

---

[22] Հաւանաբար նոյնպիսի կանխազգացում է ունեցել նաեւ վիեննացի մխիթարեան Հ. Յակոբ վ. Քօսեանը, որ 1911 թ. այցելել է Կարին եւ տեղի առաջնորդ Սմբատ ծ. վարդապետ Սաատէթեանի աջակցութեամբ շրջել գիւղերը եւ հաւաքել, նկարագրել վանքերն ու եկեղեցիները, ձեռագրերը, արձանագրութիւնները, գերեզմանոցները եւ խաչքարերը. «...Նպատակնիս էր հայ գիւղացին՝ անոր եկեղեցին, ուխտատեղին՝ վանքերը, հնութիւնները ներկայացնել բանասիրաց: Երկասիրութեանս մէջ մեր հետազօտութեան առարկայ եղող ամէն բան կար տակաւին մինչեւ 1914 օգոստոս: Յաջորդ տարին 1915 մայիսի սկիզբն՝ երբ սկսաւ հայ գիւղացւոյն տարագրութիւնն, այլ եւս

Այս գործի առիթով կազմել է նաեւ Կեսարիայի Ս. Կարապետ, Ս. Դանիէլ, Զմիւռնիայի Ս. Ստեփանոս, Սեբաստիայի Ս. Նշան, Մարզուանի Ս. Աստուածածին, Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքերի առաջնորդների գաւազանագրքերը: Ամենաընդարձակ եւ մանրամասն նկարագրութիւնը բնականաբար, Կեսարիայի առաջնորդանիստ Ս. Կարապետ վանքինն է, ինչպէս նաեւ ամենածաւալունը՝ նոյն վանքի Գաւազանագիրքը. «...զորս մենք անձամբ կազմած ենք մեր ձեռքէն անցած հայերէն գրչագիր մատեաններու յիշատակարաններէն եւ վանքին մէջ գտնուած հրովարտակ եւ այլեւայլ թուղթերէն»[23]:

Գաւառներում վանահայրերին եւս յանձնարարել էր կազմել գաւազանագրքեր, եւ փնտրել վանքերի պատմութեան յիշատակարաններ[24]:

Պալեանն իր բոլոր գործերը (բացի մէկից՝ «Սուրբ Երկիր») նախապէս հրապարակել է մամուլում եւ խնդրանքով դիմել ընթերցողներին, մանաւանդ, ինչպես ինքն է ասում՝ բանասէր-վանասէրներին, որպէսզի ճշտեն, լրացնեն, եթէ դրա կարիքը կայ, այսպիսով պարբերականների էջերում կազմակերպելով մի տեսակ քննարկում եւ երախտագիտութեամբ ընդունելով հրապարակուած առաջարկները, լրացումները, միաժամանակ հնարաւոր թերութիւնների եւ անճշտութիւնների համար հայցելով ընթերցողների ներողամտութիւնը: Երբ նկարագրութիւնների մէջ նկատւում էին անճշտութիւններ, որոնց համար քննադատւում էր, Պալեանը շնորհակալութեամբ եւ վեհանձնօրէն ընդունում էր, յաճախ ասելով, թէ «...անոնք ինձ տրուած շփոթ տեղեկութիւններէ առաջ եկած չեն, այլ ուղղակի իմ կողմէ, կ'երեւի բազմազբաղ մէկ ժամանակիս մէջ սխալմունք մ'ըրած եմ, որովհետեւ ինձ տրուած տեղեկու-

չը մնացին երկասիրութեանս առարկայ եղողներն իրենց տեղը: Ըստ այսմ գրութիւնս կըլլայ եւ պիտի մնայ հնախոյզ անձանց եւ բանասիրաց համար յիշատակ մը Կարնոյ հայ գիւղացւոյն ու իւր բնակած վայրերուն, եւ կը յուսամ որ հնութեան եւ անցելոյն հետամուտ եղողներ, թէեւ աւելի մանրամասն հետազօտութեամբ զարդարուած ուզեն տեսնել տողերս, այսչափս ալ գոհ սրտիւ պիտի կարդան եւ այս պիտի ըլլայ գրչիս ալ վարձքը».- Բարձր Հայք, հ. Բ., Կարնոյ գիւղերը, էջ Ե.:

[23] Տե՛ս Հայ վանորայք, Ա., էջ 31, նաեւ՝ Ընդարձակ տարեցոյց, 1928, էջ *229*. հմմտ. այստեղ, էջ 47:

[24] Ակադ. Լ. Խաչիկեանը վանական պատմութիւնների եւ յիշատակարանների մասին գրել է. «Հայ միջնադարեան գրականութեան մէջ եւս կան բազմաթիւ վանքերի, խաչերի եւ այլ սուրբ համարուած մասունքների մեծ ու փոքր «պատմութիւններ»՝ իրենց ժանրային տարատեսակներով ու երբեմն մէկից աւելի խմբագրութիւններով: Սակայն նրանք ըստ մեծի մասի յատուկ պատմագիտական քննութեան չեն արժանացել... Դրանք բոլորը ո՛չ միայն արժանի են աւելի հանգամանալից պատմա-բանասիրական ու գրականագիտական ուսումնասիրութեան, այլեւ վաղուց հասունացել է այդ կարգի գրուածքների հաւաքման, գիտական մշակման եւ հրապարակման ժամանակը». տե՛ս Հայ միջնադարեան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ. - Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հ. Ա., Երեւան, 1995, էջ 109-10: Այդպիսի բնագրեր են. Անաստասայ վարդապետի Վասն վանորէից Հայոց որ յԵրուսաղէմ, Աբուսահլ Հայի Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի, Պատմութիւն [Խնդրակատար] վանուց Սրբոյն Աստուածածնայ Բաղիշու, Պատմութիւն Գետարգել Սուրբ Նշանին, Յովհաննու Սեբաստացւոյ Պատմութիւն Սեբաստիոյ [Ս. Նշանի], Թումայ Մինասենցի Պատմութիւն Ս. Յակոբայ վանուց, Զաքարիա Սարկաւագի Պատմագրութեան Գ. հատորը՝ Յովհաննավանքի պատմութիւն եւ այլն:

թիւնները շատ ճիշդ են եղեր, երբ վերջին անգամ թղթատեցի այդ տեղեկութեանց թուղթերն եւ ապահովուեցայ»[25]:

Իր գրական գործունէութեան ամբողջ ընթացքում Պալեանը հրատարակել է միայն ինն անուն գիրք, տասներորդը եւ տասնմէկերորդը տպուել են իրենից յետոյ: Այսպիսով նրա տպագիր ժառանգութիւնը, արած հսկայ աշխատանքի համեմատ, այնքան էլ մեծ չէ. պահպանուել է միայն այն, ինչ հասցրել է տպագրել, մնացած մեծագոյն մասը՝ ունեցած բազմաթիւ անտիպ, գրեթէ հրատարակելու պատրաստ ուսումնասիրութիւնները եւ գրառած բանահիւսական նիւթերը, իր միւս հաւաքածուների հետ միասին, դժբախտաբար, ոչնչացել են 1922 թ. Իզմիրի մեծ աղէտի ժամանակ[26]:

Պալեանի «Հայ Վանորայք»ի առաջին հատորի հրատարակութիւնից անցել է աւելի քան իննսուն տարի: Ժամանակի ընթացքում հետաքրքրութիւնն այս թեմայի նկատմամբ աւելի է աճել ո՛չ միայն հայ, այլեւ օտարազգի հայագէտների մէջ: Վերջիններից պէտք է նշել ֆրանսիացի Միշէլ Թիերիին, որ ընդհանրապէս հայկական ճարտարապետութեան եւ մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի յուշարձանների ժամանակակից ուսումնասիրողներից է եւ, Revue (Հայագիտական հանդէս)ում հրատարակուած իր բազմաթիւ յօդուածներից բացի, կազմել է հայկական վանքերի արժէքաւոր մի ցուցակ[27], որ պարունակում է տարբեր երկրներում գտնուող հայկական վանքերի 1000-ից աւելի միաւոր նկարագրութիւն[28], որոնք պատասխանում են չորս հարցի: Ուշագրաւ է երրորդ հարցի՝ «Յուշարձանի ներկայ վիճակի մասին» պատասխանը, որ արտայայտուած է լատինատառ վեց պայմանանիշերով. «B - տանիքները պահպանուած են, կանգուն», «AB - տանիքն աւերուած, սակայն պատերը կանգուն են», «M - կառոյցը շատ վատ վիճակում է, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը», «D - ամբողջովին աւերուած է», «C - վերածուած է մզկիթի». սրանք նշանակում են հարեւան պետութեան կողմից եղեռնի շարունակումն արդէն մշակութային յուշարձանների նկատմամբ: Պայմանանիշերից մէկի պատասխանն էլ «R» տառով է, նշանակում է՝ վերականգնուած[29]. այդպիսի

---

[25] Տե՛ս Բիւզանդիոն, 1907, Հ^մր 3.300, էջ 4:

[26] Տ. Պալեանի նամակը (ՀԱ, 1923, էջ 551-2), Զմիւռնիայի հայոց օրուայ առաջնորդ Ղեւոնդ եպս. Դուրեանի օրագիր-տեղեկագիրը (Սիոն, 1982, էջ 92-6, 136-9) 1922 թ. սեպտեմբերին «յեղափոխական» քեմալականների իրականացրած եղեռնի սահմռկեցուցիչ նկարագրութիւններ են: Նոյն դէպքերի այլազգի ականատեսների վկայութիւններ տե՛ս Ռենէ Պիւո, Զմիւռնիայի վախճանը, Առաջաբանը եւ ֆրանսերէնից թարգմանութիւնը Վարուժան Պօղոսեանի, Երեւան, 2001, էջ 5-29:

[27] Repertoire des monasteres Armeniens, par Michel Thierry. Brepols-Turnhout, 1993.

[28] Այսուհանդերձ, այս մատենագիտութիւնն էլ լիակատար չէ, բացի այդ, Թիերին առաջնորդուել է վարչական նոր բաժանումով եւ օգտագործել է ռեֆորմի հետեւանքով թրքացած տեղանունները:

[29] Նշենք որ «B» պայմանանիշով՝ կանգուն նշանակող պատասխանը շատ յարաբերական է, քանի որ որեւէ պայմանանիշով չեն նշանակուած այն վանքերը, որոնք վերածուել են հիւանդանոցի, պահեստի, գոմի. մեծ թիւ են կազմում հարցականով պատասխանները: Բացի այդ, ասենք, որ Թիերիի գրքի հրատարակուելուց յետոյ անցել է տասնչորս տարի, եւ այդ ընթացքում, իհարկէ, բաւականաչափ յայտնի է, թէ ինչ փոփոխութիւններ են կրել «կանգուն» վանքերը:

մի քանի վանքեր նշուած են միայն Արեւելեան Հայաստանի տարածքում: Թիերիի ցուցակի այս կէտի պատասխաններն անխտիր արձանագրել ենք «Հայ վանօրայք»ի ներկայ հրատարակութեան ծանօթագրութիւնների մէջ:

Պալեանի բերած յիշատակարանները երբեմն «խմբագրուել» են. ոչ ցանկալի բառերն ու արտայայտութիւնները կրճատուած՝ երբեմն նոյնիսկ աղաւաղուած տեսք ունեն: Այդ «արգելուած» բառերից ու արտայայտութիւններից են՝ «Հայոց թուական, Հայ ազգ, Հայկայ սեռ, Ս. Գեղարդ, արքունական երկիր, զօրավար, քաջ նահատակ, իշխան», ինչպէս նաեւ յիշատակարաններում հանդիպող «դառն ու ծանր ժամանակների» նկարագրութիւն կամ տեղեկութիւններ բռնակալների եւ նրանց աւերիչ գործողութիւնների մասին: Յիշատակարանների հրատարակուած հատորներից հնարաւոր չափով լրացրել ենք կրճատուած մասերը՝ ուղիղ փակագծերի մէջ առնելով եւ վերականգնելով աղաւաղուած բնագիրը:

Ծանօթագրութիւնների մէջ օգտագործել ենք 20-րդ դարի ընթացքում հրապարակուած՝ խնդրին վերաբերող տեղագրական, ձեռագրական, մատենագրական, վիմագրական եւ այլ կարգի աղբիւրների նորայայտ հարուստ նիւթը եւ խնդրին վերաբերող նոր գրականութիւնը:

Ե՛ւ գրքում, ե՛ւ լրագրային հրապարակումների մէջ Պալեանն ունի «ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ, ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՄԸ» սկսուածքով պարզաբանումներ, որոնք դրուած են թէ՛ տողատակում եւ թէ՛ շարադրանքի (երբեմն էլ՝ փակագծերի) մէջ: Իւրաքանչիւր բաժնի վերջում ունի աստղանիշերով առանձնացուած, մեծ մասամբ ուխտավայրերին կամ այլ յուշարձանների վերաբերող, այդ թւում՝ նաեւ աւելի առաջ արդէն նկարագրուած որեւէ վանքի առընչուող տեղեկութիւններ: Այս ամէնը դարձրել ենք տողատակի ծանօթագրութիւններ (հանելով աւելորդ դարձած «Ծանօթութիւն» բնորոշումները), բացառութեամբ 234/17 եւ 242/7 վանքերին վերաբերողների, որոնք տողատակ տանել չէինք կարող, որովհետեւ նրանց մէջ դրուած են նաեւ մեր ծանօթութիւնները:

Մեր ծանօթագրութիւնները, որոնք միշտ տարբերակուած են աստղանիշերով եւ դրուած են Պալեանի բնագրի վերջում, արուած են մէկ եւ նոյն սկզբունքով, որ է հետեւեալը.

ա. Տեղագրական տուեալներ. համառօտելով, երբեմն էլ վերապատմելով, օգտագործել ենք Էփրիկեանի Բնաշխարհիկ պատկերազարդ եւ Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների (հինգ հատոր) բառարանները[30]. Սրանք աւարտւում են Մ. Թիերիի մատենագիտութեան համապատասխան մասերի մատ-

[30] Ի դէպ, այս երկուսի մէջ էլ, առանց աղբիւրի յիշատակման, շատ յաճախ օգտագործուած են Տ. եպս. Պալեանի նկարագրութիւնների լրագրային տարբերակների տեղեկութիւնները, ուստի եւ սրանցից արուած քաղումներով միաժամանակ ցուցադրում ենք նախ Պալեանի աշխատանքի լայն գործածուածութիւնը, ապա՝ պարզում ենք այդ տեղեկութիւնների բուն հեղինակի ինքնութիւնը:

նանշումով՝ վանքի կարգային համարը (թիւը), գրքի էջը եւ «ներկայ վիճակ» հարցի պատասխանը:

բ. Յիշատակարաններ. Պալեանը երբեմն ունի վանքերի՝ մէկ պարբերութեամբ կամ միայն անուան յիշատակմամբ նկարագրութիւններ, յատկապէս այսպիսի դէպքերում աշխատել ենք թերին որոշ չափով լրացնել նորայայտ տեղեկութիւններով եւ յիշատակարաններով: Կան վանքեր, որոնց վերաբերեալ գոյութիւն ունեցող յիշատակարանների թիւը անցնում է մի քանի տասնեակից. այսպիսի դէպքերում ընտրել եւ քաղել ենք համեմատաբար հարուստ տեղեկութիւններ ունեցող կամ ամէն դարի վերաբերող մէկը, իսկ մնացածները թուարկել ենք՝ նշելով թուականը եւ առկայ հրատարակութեան էջը:

գ. Ձեռագրերի յիշատակարանների վերահրատարակութիւններին վերաբերող կարճ ծանօթութիւնները դրել ենք հեղինակի արած քաղուածքների վերջում, փակագծերի մէջ[31] եւ տարբեր տառատեսակով:

դ. Ձեռագրերի իր արած նկարագրութիւնների մէջ Պալեանը երբեմն ունի այսպիսի նշումներ. «Համառօտ՝ բայց ճշգրիտ ծանօթութիւններ դնել ամէն ձեռագիրներու մէջ գտնուած վանորէից, վարդապետաց, եպիսկոպոսաց, քաղաքաց եւ գիւղորէից համար» (տե՛ս Ցուցակ ի Կեսարիայ, Զմիւռնիայ..., էջ 15). ուղիղ փակագծումով հնարաւոր դէպքերում աւելացրել ենք այդպիսի ծանօթագրութիւններ:

## ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

- «Բիւզանդիոն»ի 1898 թ. Յունուարի 1ի (թիւ 351) եւ 1900 թ. Յունուարի 5 - Մայիսի 15 ընթացքում՝ ըստ տօնացոյցի արած հրապարակումների նախաբանային մասերը դարձրել ենք սկզբի՝ առաջին առաջաբան.
- Ամէն նահանգի կամ գաւառի վանքերի թուարկումն արել է առանձին՝ միշտ սկսելով 1-ից. հեղինակի այդ համարները պահպանելով հանդերձ, դրանցից առաջ թեք գիծ ենք դրել եւ նշանակել ընդհանուր եւ միասնական 1-348 համարներ. ասենք՝ 348/30 (սրանք այս գրքինն են. դրա երկու մասերի մէջ այս համարակալումը միասնական է).
- Պահպանելով վանքերի նկարագրութեան Պալեանի որդեգրած աշխարհագրական սկզբունքը, գրքի երկրորդ՝ լրագրից առնուած մասի մէջ նոյն տարածքի վանքերի՝ տարբեր յօդուածների մէջ ցրուած նկարագրութիւնները տեղադրել ենք իրենց պատկան՝ առկայ բաժինների մէջ, իսկ սրանց մէջ չտեղաւորուողները խմբաւորել ենք մեր դրած չորս նոր բաժին-անուններ ներքոյ. Եդեսիայի եւ շրջակայքի, Վանի եւ շրջակայքի, Արեւելեան Հայաստանի, Գաղթավայրերի:

[31] Բնագրի մէջ մեր արած բոլոր լրացումները առնուած են ուղղանկիւն փակագծերի մէջ, որոնք ամէնուր միայն մերն են:

- Գրքով տպուած մասն ամբողջութեամբ համեմատել ենք լրագրային տարբերակների հետ եւ բնագրերի առանձնապէս էական տարբերութիւնները ուղղանկիւն փակագծի մէջ եւ տարբեր տառատեսակով նշել՝ նախորդող «լրգր-ում» բնորոշումով (այս տարբերութիւնների ցուցադրումը ներկայիս ընթերցողին աւելի կատարեալ եւ ճշգրիտ պատկերացում է տալիս թէ՛ հեղինակի աշխատանքի ընթացքի եւ թէ՛, առանձնապէս, թուրքական գրաքննութեան պարտադրած սահմանափակումների մասին).

- Վրիպակներն ուղղել ենք առանց նշելու, թուականների վերծանութիւնները պարզեցրել ենք. ՌԾՁ. (=1607)՝ դարձրել ենք. ՌԾՁ. (1607), ՊՂԷ. (=897+551=1448)՝ դարձրել ենք ՊՂԷ. (1448), իսկ նրանց պակասող վերծանութիւնները լրացրել ենք ուղղանկիւն փակագծերի մէջ, ասենք՝ «ՌՄԲ.»ի կողքն աւելացնելով «[1753]». յղումները լրացրել ենք ճանաչելի դարձրած լինելու նպատակով:

- Պալեանի անունով առկայ ձեռագրացուցակների օգտագործումով լրացուած յիշատակարանների դէպքում նրանց վերահրատարակութիւններն անտեսել ենք եւ յղել միայն նոյն ցուցակները՝ Պալեան, Ցուցակ Ս. Կարապետի եւ Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ:

- Միօրինակացնելով, եկեղեցիների անունների «սուրբ» բաղադրիչն ամէնուր դարձրել ենք «Սուրբ» (բնագրում յաճախ երբեմն փոքրատառով է): Վարդապետ բառի «Վրպ.» կրճատումը վերածել ենք հեշտ գուշակելի «վրդպ.» ձեւի:

- Արել ենք նաեւ Պալեանի ժամանակ տարբեր կերպ գրուող՝ այժմ ճշգրտուած եւ այլ գրութիւն ունեցող ձեւերի ուղղագրական սրբագրութիւններ. -որայք (մեծ մասամբ՝ վանորայք, վանորէից) գրել է «օ»ով, որ դարձրել ենք «ո» («Տրապիզօն» եւ «Պօլիս» դարձրել ենք «Տրապիզոն» եւ «Պոլիս» եւ այլն).

- Արել ենք նաեւ կէտադրական որոշ՝ սակաւաթիւ շտկումներ, որոնք անհրաժեշտ էին շարադրանքը դիւրութեամբ ընկալելու համար (նաեւ «...:», վերջակէտն աւելորդ համարելով, դարձրել ենք՝ «...»).

- Վիմական եւ իրերի վրայ եղած արձանագրութիւնները դրել ենք գլխատառերով (ինքնին պարզ է, որ նրանց բնագրերը երկաթագիր էին).

- Յիշատակարաններում արձանագրուած՝ ձեռագիր գրքերի անուններն ամէնուր դարձրել ենք գլխատառ՝ Աւետարան, Մաշտոց եւ այլն («Գրեցաւ սուրբ Աւետարանս»):

- վնասուած եւ անընթեռնելի դարձած բնագրերի (արձանագրութիւններ, ձեռագրական յիշատակարաններ) չընթերցուած մասերի տեղերում Պալեանը դրել է 3ից մինչեւ ամբողջ տող զբաղեցնող բազմակէտեր, որոնք փոխարինել ենք ընդունուած պայմանական նշանով՝ ///:

Վերջում զետեղել ենք երկու ՅԱՒԵԼՈՒԱԾ.

Ա. Արշակ Ալպօյաճեանին գրած 1906 թ. իր նամակներից մէկում Պալեանը թուարկել է երեսուն անուն վանք, որոնց մասին գրել է. «Իմ վանքերու հաւաքածոյին մէջ կան երեսունի չափ վանքերու ալ անուններ, որոնց տեղը, ինձ բոլորովին

անձանօթ մնացած են, մինչեւ ցայժմ, որչափ որ ալ ջանացած եմ ճշտել, անկարելի եղած է»[32]: Հեղինակի այս պարզ թուարկումը մեր ընդունած սկզբունքով օժտել ենք՝ նախ Տեղանունների բառարանի եւ Թիերիի տեղեկութիւններով ապա՝ յիշատակարանային վկայութիւններով:

Բ. Գաւազանագիրք Առաջնորդաց Ջմիւռնիոյ («Դափնի» 1921), որ անաւարտ է մնացել, իհարկէ ոչ իր մեղքով:

ԿԱՐԻՆԷ ԱՒԵՏԵԱՆ

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալպ., Կեսարիա - Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա., Բ., Գահիրէ, 1937, 2479 էջ:

Ալպ., Մալաթիա - Արշակ Ալպօյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, 1535 էջ:

Ալպ., Եւդոկիա - Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով համադրուած՝ Արշակ Ալպօյաճեանէ, Գահիրէ 1952, 1751 էջ:

Յովս., յիշ-ք - Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց. Հատոր Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.). 48 նմանահանութիւններով. Անթիլիաս, 1951. ԻԹ., 1256 սիւն.

Ե-ԺԲ. դդ. յիշ-ք - Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե-ԺԲ. դդ., Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, 1988. ԻԵ., 367 էջ.

ԺԳ. դ. յիշ-ք - Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984. 988 էջ.

ԺԴ. դ. յիշ-ք - ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950. ԼԳ., 757 էջ.

ԺԵ. դ. յիշ-ք, Ա. - ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Մասն առաջին (1401-1450 թթ.). Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955. ԿՁ., 818 էջ.

ԺԵ. դ. յիշ-ք, Բ. - ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Մասն երկրորդ (1451-1480 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1958. ՃԽԳ., 598 էջ.

ԺԵ. դ. յիշ-ք, Գ. - ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Մասն երրորդ (1481-1500 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1967. 713 էջ.

ԺԷ. դ. յիշ-ք, Ա. - Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. Ա., Կազմեցին Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, 1974. ԼԴ., 828 էջ.

[32] Տե՛ս «Էջմիածին», 2006, Ա., էջ 85:

ԺԷ. դ. յիշ-ք, Բ. - Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.), հտ. Բ., Կազմեցին Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, 1978. ԻՁ., 941 էջ.

ԺԷ. դ. յիշ-ք, Գ. - Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.). հտ. Գ., Կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, 1984. ԼԱ., 1015 էջ:

Տեղ. բառ. - Թ. Խ. Յակոբեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Չորս հատորով (հրականում՝ 5), Երեւան, 1986, 1988, 1991 (իրականում տպուած՝ 1991 թ.), հ. 4. 1998, հ. 5. 2001:

Էփրիկ., Բնաշխ. բառ. - Էփրիկեան, Բնաշխարհիկ պատկերազարդ բառարան, հ. 1, Վենետիկ 1902, հ. 2 -1907:

Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ - Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, Նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, Կազմեց՝ Գէորգ Տէր-Վարդանեան. Յաւելուած. Կենսամատենագիտութիւն Տրդատ եպս. Պալեանի, Կազմեց՝ Կարինէ Աւետեան, «Բնանսէր» հրատարակչութիւն, Երեւան. 2002, մեծադիր երկսիւն 260 էջ:

Ցուցակ Ս. Կարապետի - Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, Կազմեց Տրդատ եպ. Պալեան, Վիեննա, 1963:

Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... - Հ. Ոսկեան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, 232 էջ:

Հ. Ոսկ., Քղիի, Խնուսի... - Հ. Ոսկեան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951

Հ. Ոսկ., Սեբաստիայի վանքերը - Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, 282 էջ:

Հ. Ոսկ., Վասպուրական Վանի վանքերը - Հ. Ոսկեան Հ., Վասպուրական Վանի վանքերը, Վիեննա, հ. Ա., 1940, 383 էջ, հ. Գ., 1947:

Հ. Ոսկ. Հ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, 320 էջ:

Հ. Ոսկ. Հ., Արցախի վանքերը, Վիեննա, 1953, 256 էջ:

Հ. Ոսկ. Հ., Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, 270 էջ:

Հ. Ոսկ. Հ., Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, 365 էջ:

Թիերի - Repertoire des monasteres armeniens, par Michel Thierry, Brepols-Turnhout, 1993.

*Աւետեան Կարինէ*

# ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ

## Ի ԹՈՒՐՔԻԱ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## [ԱՌԱՋԱԲԱՆՔ Ի «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»]

*Միշտ հետաքրքրութեամբ կ՛կարդամ պատուական Հայաթերթիդ մէջ Հայ-Վանորէից վրայ տրուած տեղեկութիւններն, որք իմ մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ եղած են ի վաղուց հետէ: Ասկէ յառաջ գաւառային թղթակցութեան կարգին, Տ. Դանիէլ Վ. Յակոբեան, արժանընտիր առաջնորդական Տեղապահ Երզնկայի, հրատարակեց Երզնկայի ինն Վանորէից անուններն. - Ա. Ս. Կիրակոսի Վանք: Բ. Միաւորի կամ (Եալընըզ պաղ) Ս. Կարապետ: Գ. Տիրաշէնի Ս. Ներսէս: Դ. Ջագըրմանի Ս. Պօղոս Պետրոս: Ե. Շողակաթի Ս. Աստուածածին: Զ. Երկանայ Ս. Գէորգ: Է. Կայիփոսի (կամ Կապօսու) Ս. Յակոբ: Ը. Զարչարանաց Ս. Լուսաւորիչ (կամ Տատասկի): Թ. Բթառիճի Ս. Նիկողոս: - Այս վերջին օրերս ալ, Կ. Ս. էֆ. Թուխմանեան, նոյնպէս հրատարակեց Բաղէշի Վանորէից անուններն, որք են՝ Ա. Խնդրակատար Ս. Աստուածածին: Բ. Ամլորդւոյ (կամ Ամրտօլու) Ս. Յովհաննէս (կամ Ս. Նշան): Գ. Աւէխի Ս. Թադէ: Դ. Գոմոց Ս. Աստուածածին Տարկայ (կամ Դադրաբնակ): Ե. Պօռայ Ս. Նարեկացի (կամ Ս. Յովհաննու): Զ. Մոճկունիսի Վանք (Ս. Աթանագինէի): - Բայց մենք որչափ գիտենք, այդ երկու քաղաքներու եւ շրջակայից յիշեալ վանքերէն ի զատ, պիտի ըլլան նաեւ ուրիշ վանքեր ալ, փոփոխեալ կամ անփոփոխ, կանգուն կամ աւերակ, որոց անուններն այստեղ յառաջ բերելով, կը խնդրենք ձեր պատուական թղթակիցներէն, որ եթէ անոնց եւ ուրիշ Հայ-Վանորէից վրայ գրելու կրկին առիթ ունենան, ո՛րչափ կարելի է, ժողովրդեան բերնին մէջ գտնուած աւանդութիւններով եւ պատմական ու աւանդական մանրամասն, բայց ամփոփ տեղեկութիւններով համեմել հաճին: Աւասիկ այդ անյիշատակ թողուած Վանորէից անունները.*

*1. Ս. ՄԻՆԱՍԱՑ ՎԱՆՔ. Սա մօտ պիտի ըլլայ Կայիփոսի վանքին, որ Սեպուհ լերան քով է, եւ ուր Յովհաննէս Երզնկացին ԺԳ. դարու մէջ իր ուսմանց առաջին դասընթացքն ըրաւ: Գուցէ այժմ աւերակ:*

*2. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔ Երկան գիւղի. Այս ալ Ս. Կիրակոսի կամ Երկան գիւղի Ս. Գէորգայ Վանուց մօտերը պիտի ըլլայ. գուցէ այս ալ աւերակ: Երզնկայի մէջ ուրիշ երկու վանքեր ալ կ՛յիշուին յանուն Ս. Եղիայի, մին ի Կեղզուտ, միւսն ի Հանդիսի:*

*3. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՎԱՆՔ. Ի Հայրապետ գիւղ (արդեօք Ջուխտակ Ս. Հայրապե՞տն է), կ՛լսեմ թէ կիսաւեր է, եւ կամ եկեղեցի եղած է Հայրապետ գիւղացւոց. աւանդութիւն մը կայ այս Վանքին վրայ. կ՛ըսուի թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ այս տեղ ըսած ըլլայ «Իսկ մեք փառաւորեսցուք»ը:*

*4. Ս. ՕԳՍԷՆՏԻՈՍ ՎԱՆՔ. Ի Կարմրի գիւղ. ասոր քովիկն արտ մը կը յիշուի, որուն անունն է, կարծեմ «Նանտի Վանք»:*

*5. ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ.*

*6. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ.*

*7. ՔԱՌԱՍՈՒՆ ԽԱՉԵՐ ՎԱՆՔ.*

*8. ԳԱՌՆԻԿ ՃԳՆԱՒՈՐԻ ՎԱՆՔ. Տաճրակ գիւղի հարաւային արեւմտեան կողմը պիտի ըլլայ. գարդիս ալ կարծեմ մենաստան է, բայց ո՛չ մեր սեփական:*

*9. Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ. Երզնկայի եւ Տաճրակ գիւղի միջեւ, Պրասդիկ գիւղի հարաւային արեւմտեան կողմն, աւերակ: Կ՛յիշուի նաեւ.*

*10. ԹԵԼԱՑ ՎԱՆՔ. Բայց ես անձնապէս տարակոյս ունիմ, թէ սա միեւնոյն Վանքն է Տիրաշէն, կամ Տիրանաշէն, կամ Խաչկավանք, կամ Ս. Ներսէսի Վանք ըսուածին հետ. հետեւեալը գրուած է իմ յուշատետրին մէջ. «Թելայ Վանքը քաղաքէն հեռու է 1, 1/2 (մէկուկէս) ժամ յարեւմուտս յեզերս Գայլ գետի, ուր ի նախնումն կանգնեալ էր պատկեր Աթանասայ, ատ թաղեցան Ներսէս եւ Արիստակէս, որոց նշխարքն յայտնեցան թուին 721 Հայոց. (=1272 Քրիստոսի թուականի), եւ կանգնեցին եկեղեցի (ո՞ւր. հո՞ս, թէ ո՛չ այժմու Ս. Ներսէսի վանքն) եւ կոչեցաւ Ջուխտակ Ս. Հայրապետ. (ո՞րն է, Ս. Լուսաւորչայ վա՞նքն է ի Հայրապետ գիւղ). այժմ աւերակ եւ մի միայն կոյտ մ՛է քարանց»:*

*Զանց կ՛ընեմ առ այժմ Երզնկայ-Կամախի, եւ Երզնկայ-Դերջանի Վանօրէից անուններն, որք բաւական երկար ցանկ մը կը կազմեն:*

*Գալով Բաղէշի նոյնպէս անյիշատակ թողուած վանօրէից, ահաւասիկ.*

*1. ՅԵՋՏԻԲՈՒՋՏԻ ՎԱՆՔ.*

*2. ԾՂԱԿԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ.*

*3. ՄՐՈՐՍԱՑ (Ս. ԹՈՎՄԱ՞Ս) ՎԱՆՔ. ունէր 20 արտավար հող:*

*4. ԾԱՊՐԿՈՐՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏ. ունէր 30 արտավար հող:*

*5. ՇԷԽԻՍ ՎԱՆՔ.*

*6. ՍԻՕՆ (ՎԱ՞ՆՔ է), մերձ Ամլորդւոյ կամ Ամրտօլոյ վանքին:*

*7. Ս. ՅԱԿՈԲ (ՎԱ՞ՆՔ է), Ամբ գիւղի մօտ:*

*8. ԱԻԵԽԻ Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔԷՆ զատ, կ՛յիշուի նաեւ ԱԻԵԽԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:*

*Շատ մօտէն տեղեակ եմ թէ Ազգ. Պատրիարքարանի պաշտօնեաներէն, Յովհաննէս էֆ. Թաթարեան տարիներէ ի վեր կ՚զբաղի Հայ Վանօրէից պատմութիւն մը գրելու. կարծեմ շատ ու շատ յառաջացուցած է իր աշխատասիրութիւնը քան զմեզ. թող օգնեն անոնք որ վանքեր պտտած են կամ անոնց մօտիկը կ՚բնակին, հաղորդելով անոնց վրայ*

*կատարեալ եւ ամփոփ տեղեկութիւններ. թո՛ղ ըլլայ այդ վանքը կանգուն, թող ըլլայ աւերակ. ի՞նչու չունենանք Հայ Վանորէից ցանկ մը, պատմութիւն մը, մի հատորի մէջ ամփոփուած, թո՛ղ ըլլայ համառօտ (Բէ-ւ., Թէ- 351, 1897, 20/ԺԲ-1/Ն.., 1898, էջ 1):*

*1900. Յունուար 1, Շաբաթ: Տօնախմբութիւն Սրբոց Բարսեղի Կեսարացւոյ եւ եղբօր նորա Գրիգորի Նիւսացիի, Սեղբեստրոսի (Հռովմայ հայրապետին), եւ Եփրեմի Խուրին Ասորւոյ:*

*Այս տեղ անցողակի ըսենք, թէ Մեծն Բարսեղ ծնաւ 329ին, եւ իր կրթութիւնն ստացաւ նախ ի Կ. Պոլիս եւ յետոյ յԱթենս: Երեսուն տարեկան հասակին Կեսարիա գալով, ժամանակ մը վերջ եկեղեցական հոգեւոր պաշտօնէութեան մէջ մտաւ, եւ Եւսեբիոս Եպիսկոպոսի մահուընէն ետքն ալ՝ 370ին Կեսարիոյ Եպիսկոպոսական աթոռը նստաւ: Վախճանած է 379ին:*

*Գրիգոր Նիւսացի՝ փոքր եղբայր Մեծին Բարսեղի, ծնած է 331ին. եկեղեցական պաշտօնէութեան մէջ զանազան նշանաւոր գործերով անուանի, յուսկ յետոյ Նիւսա քաղաքին Եպիսկոպոսական աթոռը բազմեցաւ, եւ ուր վախճանեցաւ 394ին: Այս երկու նշանաւոր սուրբերն հռչակուած էին «Կապադովկիացւոց եկեղեցական առաւօտները»: Հաւանականաբար ընիկ Սեբաստացի են, բայց մին Կեսարիոյ եւ միւսը՝ Նիւսա քաղաքին Եպիսկոպոսն ըլլալով, կոչուեցան՝ Բարսեղ Կեսարացի եւ Գրիգոր Նիւսացի (Նիւսա քաղաքն այժմեայ Նէվշէհիրն է, Գոնեայի կուսակալութեան ներքեւ): Երրորդ եղբայրնին ալ Պետրոս՝ Սեբաստիոյ աթոռին եպիսկոպոսն էր:*

*Մեր ծանօթութեան սահմանին մէջ որչափ գիտենք, Սեղբեստրոսի անուան կառուցեալ Հայ վանք մը չունինք: Յանուն Ս. Բարսեղի եւ Գրիգորի, ինչպէս նաեւ յանուն Եփրեմի կառուցեալ՝ թէեւ Հայ վանքեր ունինք, բայց ասոնք ալ բոլորովին միաւոր թիւերու շրջանակին մէջ են, եւ անցած են նաեւ ի շարս մեր շաբաթացեալ վանքերուն (Բէ-ւ., 1900, Թէ- 984, 5-17/Ն.., էջ 1):*

*Բ. Յունուար 15, Շաբաթ: Տօն է ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Քրիստոսի Տեառն մերոյ Մկրտչին՝ Յովհաննու Կարապետի անուան կառուցեալ Հայ վանքերը, ըստ մեր ծանօթագրութեան, յիսունի մօտ են: Ասոնք ժողովրդեան մէջ կրկին յորջորջումներ ունին, ոմանք՝ Ս. Յովհաննէսի կամ Ս. Յովհաննու վանք, ոմանք ալ Յովհաննու Կարապետի, կամ՝ Ս. Կարապետի վանք: Մենք այս անգամ պիտի ցուցակագրենք միայն Ս. Յովհաննէս կամ Ս. Յովհաննու յորջորջուածները, ուրիշ առթի թողլով Յովհաննու Կարապետ, կամ Ս. Կարապետ ա-*

*նուամբ կոչուած վանքերը*[1]*:*

*Գ. Յունուար 18, Երեքշաբթի. յիշատակ էր՝ Ս. Անտօնի... Պարսամայ... ճգնաւորաց: Յունուար 22, Շաբաթ. Սրբոյն Կիւրղի Հայրապետին, եւ Յունուար 24 Երկուշաբթի՝ Սրբոյն Կիրակոսի եւ մօրն նորա Յուղիդայի:*

*Յանուն Ս. Անտօնի կառուցեալ երկու, Ս. Կիրակոսի՝ չորս, եւ յանուն Պարսամայ, Կիւրղի հայրապետին, եւ ՍրբուՀին Յուղիդայի մէյ մէկ հատ՝ Հայ վանքեր ունինք, որոնց ցուցակն ալ կ՚ներկայացնենք այս տեղ, իւրաքանչիւրին վրայ տալով չատ համառօտ տեղեկութիւններ (Բիւզ., 1900, Թիւ 1008, 3 - 15/Բ., էջ 1):*

*Դ. Փետրուար 5, Շաբաթ, յիշատակ է Ս. Սարգսի... եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւն:*

*Յանուն Ս. Մարտիրոսին կառուցեալ Հայ Վանք չունինք, բայց յանուն Ս. Սարգիսի, ըստ մեր ծանօթագրութեան, տասնեւերկու վանքեր ունինք, հին եւ նոր, կամ չէն ու անչէն, որոց ցուցակն յառաջ կ՚բերենք այս տեղ*[2]*:*

*Ե. Փետր. 12. Շաբաթ, յիշատակութիւն է Ս. ՍաՀակայ Պարթեւի Հայրապետին, եւ Փետր. 17 Հինգշաբթի օրն ալ Սրբոց Վարդանանց եկեղեցական յիշատակութիւնն է:*

*Մեր ծանօթագրութեան սաՀմանին մէջ ո՛րչափ գիտենք, ՍաՀակայ Պարթեւ Հայրապետին անուան կառուցեալ միայն երկու, եւ յանուն յիշեալ սրբոց ալ Հինգ հատ Հայ վանքեր ունինք (Բիւզ., 1900, Թիւ 1027, 25/Բ. - 9/Գ., էջ 1):*

*Զ. 1900 Փետրուար 26, Շաբաթ, Յիշատակութիւն է Ս. Թէոդորոսի:*

*Յանուն Ս. Թէոդորոսի եւ կամ Ս. Թորոսի կառուցեալ եօթն հատ միայն հայ վանքեր ունինք, որոց ցուցակն ալ կ՚ներկայացնենք այս տեղ կարգաւ:*

*Երկու աւերակ վանքեր ալ կը յիշուին յանուն Ս. Թէոդորոսի, առաջինը՝ Դերձկի Ս. Թէոդորոսի վանք, եւ երկրորդը՝ Տիվրիկի մէջ Կուրասին անուն գիւղի մօտիկը Ս. Թորոսի վանք. թէեւ այս երկու վերջին վանքերու վրայ մասնաւոր տեղեկութիւններ չունինք, բայց մեք այն-*

[1] Հայ վանորէից վրայ թէեւ համառօտ, մեր տուած այս կերպ ծանօթութիւնները, եթէ հաճելի երեւին ազնիւ ընթերցողաց, կ՚խոստանանք շարունակել այսպէս հետզհետէ» (Բիւզ., 1900, Թիւ 1001, 26/Ա. - 7/Բ., էջ 1):

[2] Ս. Սարգսի վանք մ՚ալ կ՚յիշուի Մալաթիոյ Մուշովկայ անուն գիւղէն կէս ժամ հեռու, լերան մը ստորոտը, ձորի մը մէջ, բայց մեզի այնպէս կ՚թուի թէ սա՛ ուխտատեղի մը պիտի ըլլայ, քա՛ն թէ վանք յանուն Ս. Սարգսի, որովհետեւ գիտենք, թէ գրէթէ ամէն քաղաքի եւ գիւղի մէջ ուխտավայրեր կան շինուած յիշեալ պաշտպան զօրեղ սուրբի անուան, որ միշտ կ՚պաշտպանէ իրենները՝ ծոմապահ բարեպաշտները (Բիւզ., 1900, Թիւ 1019, 16 - 28/Բ., էջ 1):

պէս կը կարծենք, թէ ժամանակին ասոնք ուխտատեղի եղած ըլլալու են քան թէ վանք, եւ կամ թէ՝ հին եկեղեցւոյ մը աւերակները (Բիւզ., 1900, Թիւ 1043, 15-28/Գ., էջ 1):

Է. Մարտ 18. Շաբաթ, Յիշատակութիւն է Սրբոց Քառասուն Մանկանց:

Յանուն յիշեալ Քառասուն Մանկանց երկու հատ միայն Հայ Վանքեր ունէինք, մին՝ ի Սեբաստիա, եւ միւսն՝ ի Զարսանճագ, բայց այս երկու վանքերն ալ արդէն ի վաղուց անցած են ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից (Բիւզ., 1900, Թիւ 1049, 22/Գ.-4/Դ., էջ 1):

Ը. 1900 Մարտ 25, Շաբաթ, Յիշատակութիւն է Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին մուտն ի վիրապն:

Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ առաջին Լուսաւորիչ Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալներէն ետքը, երկրորդ Լուսաւորիչ Ս. Գրիգորի՝ պատուական հօրն մերոյ ժամանակակից՝ եւ նոյն իսկ իր ձեռօք, ըստ եկեղեցական պատմութեան եւ աւանդութեան, գիտենք թէ հարիւրաւոր Հայ վանքեր հիմնարկուած են զանազան գաւառներու մէջ, բայց յանուն իր սիրելի անուան, ըստ մեր ծանօթագրութեան, միմիայն 28 հատ Վանքեր ունինք, որոց ցուցակն ալ յառաջ կ՚բերենք այս տեղ (Բիւզ., 1900, Թիւ 1060, 4-17/Դ., էջ 1, Թիւ 1066, 12-25/Դ., էջ 1, Թիւ 1067, 13-26/Դ., էջ 1):

Ժ. Ապրիլ 9, Կիրակի, Զատիկ, հրաշալի Ս. Յարութիւնն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հայ Վանորէից մէջ յանուն Ս. Յարութեան երեք վանքեր միայն ունինք, միշտ ըստ մեր ծանօթագրութեան, որոց ցուցակն այս տեղ ներկայացնելէն առաջ, յիշատակենք հոս (Բիւզ., Թիւ 1074, 21/Դ.-4/Ե., էջ 1):

ԺԱ. Ս. Զատկին յաջորդող ներկայ Յինանց օրերուն մէջ յարմար դատեցինք հետզհետէ ներկայացնել մեր ազնիւ բանասէր-վանասէր ընթերցողաց այն Հայ վանքերու ցուցակը, որոց անունները կա՛մ իրենց տեղւոյն ու բնավայրին անուններովը մկրտուած են, եւ կամ՝ ի հարկէ մէյմէկ Սուրբի անուան թէեւ նուիրուած են, բայց առ այժմ մեծաւ մասամբ անծանօթ կմնան մեզ (Բիւզ., 1900, Թիւ 1083, 2-15/Ե., էջ 1):

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ [ԳՐՔԻ]

Մեր բազմաչարչար, սիրելի ու ազնիւ Հայ Ազգին ազգային եւ եկեղեցական պատմութիւնն ուսումնասիրողին քաջ ծանօթ է արդէն, թէ մեր Հայ Վանքերն՝ որ քաղաք եւ գիւղին մէջ ալ ըլլային, անցեալոյն մէջ

*ունեցած են փառաւոր կազմաւորութեամբ, կանոնաւոր եւ շատ բարեկարգ վիճակ, եւ աշխատասէր, ուսումնատենչ միաբանութիւններ:*

*Այս կազմակերպեալ վիճակով, եւ փառաւոր կացութեամբ, այդ ժամանակները մեր վանքերն Առաջնորդական Թեմերու կեդրոններ ըլլալով հանդերձ, եղած են եւ էին նաեւ կրօնքի ճշմարիտ վառարաններ, մէյմէկ դպրեվանքներ եւ ուսմանց կեդրոններ: Եւ այս վանքերու մէջ գումարուած էին մեղուաջան մշակներ եւ գործունեայ անձնաւորութիւններ, որոնք իրենց եկեղեցական բարձր դիրքովը եւ մեծամեծ ու արդիւնաւոր ջանքերովը, անխոնջ եւ տոկուն գործունէութեամբ, աննկուն եւ յարատեւ աշխատութեամբ, բազմաթիւ եւ բազմակերպ ծառայութիւններ մատուցած են մեր Առաքելական Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն, հայ ազնիւ ազգի համայնքին եւ, մանաւանդ, հայ գրականութեան եւ քաղաքակրթութեան:*

*Այս ազգային վանական փառաւոր հաստատութիւններու, ուսմանց այս փառաւոր կեդրոններու մէջ կը հաւաքուէին ամէն կարգի եւ աստիճանի եկեղեցականներ, ամէն կարգի եւ աստիճանի աշխարհական անձնաւորութիւններ, եւ հոն կ՚ուսանէին եւ իբր մեղու ժրաջան իրենց մտաւոր պաշարը կ՚աւելցնէին, եւ կ՚ըլլային կատարեալ մարդ, սրտով բարի, մտքով բարի, գործով բարի:*

*Քրիստոսի ոգւոյն արժանի այդ մշակները մի միայն վանքերու մէջ ալ չէին մնար, չէին սահմանափակեր իրենց ասպարէզ ու գործունէութիւններն, այլ իրենք զիրենք կը նուիրէին նաեւ Հայ Ազգին ամէն տեսակ պիտոյից, գիւղէ գիւղ, աւանէ յաւան, քաղաքէ ի քաղաք, միշտ եւ անդադար շրջելով, կը քարոզէին եւ կ՚ուսուցանէին Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւններն, Աւետարանի բարոյական վսեմ կրթութիւնը, եւ մասնաւորապէս ալ կը լուսաւորէին ամէն դասակարգի միտքերն եւ կը կրթէին զանոնք, սիրոյ, գեղեցկի, բարւոյ, ճշմարտութեան, հեզութեան ու խոնարհութեան ուսումով, ինչպէս որ ճշմարտապէս էին իրենք ալ:*

*Այսպէս այդ օգտաշատ հաստատութիւնները դարերով կեանք ունեցան, եւ այդ քրտնաջան ու մեղուաջան անձնաւորութիւններն ալ շարունակեցին եւ յարատեւեցին իրենց այդ մեծ ու արդիւնաւոր գործունէութիւններուն մէջ:*

*Բայց, դժբաղդաբար, այդ բազմաթիւ հայ վանքերու մէջէն, ներկայիս մէջ, ի բաց առեալ մեծ մայրավանքերն, որոնք փոքր ի շատէ սրտի սփոփանք մը կ՚ազդեն, իրենց կարգաւորեալ վիճակով, եւ իրենց մէջ ունեցած դպրեվանքներով ու վարժարաններով, միւս մնացեալ շատերուն վիճակն է անկերպարան, եւ մասնաւոր ազդեցիկ անհատներու անձնական օգտին ու շահուն բնակարան, շատ մեծ մասն աւերակ ու*

*շաբաթացեալ, բուերու եւեթ կայան, շատերն ալ՝ առանց ո՛ր եւ է մանանեխի չափ օգուտի, մի միայն իբր ուխտատեղի, կամ աւելի ճիշտն, ուրախութեան, զուարճութեան, օդափոխութեան, փանայիրի կայարան եղած են, «կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լե՛ր, հանգի՛ր եւ քնացիր»:*

*Ահաւասիկ այնպիսի փառաւոր վիճակէն ներկայ անկերպարան ու ցաւալի վիճակին հասած հայ վանորէից նոյն իսկ շատ համառօտ տեղագրութիւնը գրելու համար տոկուն գրիչ, դիմացկուն սիրտ, եւ չարտասուելու աստիճան ալ աչքեր կ՚ուզէ:*

*Մտի՛ր այժմեայ այդ Հայ վանքերէն միոյն մէջ, քննէ՛, զննէ՛ անոր ներկայ վիճակը, ներքին կազմաւորութիւն ու կացութիւնը, կարգն ու սարքը, եթէ, այդ վանքը միաբաններ ունի, անոնց կենակցութիւնն եւ ընթացքն ու վարմունքներն, կը կարծեմ թէ հոն պիտի տեսնես, որ ամենայն ինչ անկանոն է, ամէն ինչ անկերպարան, ամէն ինչ խառնաշփոթ, պիտի տեսնես, որ հազուագիւտ ու թանկագին ամէն անօթք, ծանրագին ամէն զգեստք եւ այլն. անփոյթ ձեռքերու տակ լքուած, մէյ մէկ կողմ նետուած են կամ փճացած, պիտի տեսնես, որ այդ մեր երանելի նախնեաց սուրբ ու նուիրական մատներով գրուած պատուական ու անթիւ ու անգին ձեռագիր մատեանք փոշիներու մէջ ցեցերու կեր եղած, եւ կամ կորսուած, կամ վաճառուած են, պիտի տեսնես որ հարիւրաւոր հազարաւոր արժէք ունեցող ընդարձակ, մշակելի հողեր ու արտորայք երեսի վրայ ձգուած են:*

*Այս ամէնը տեսնելով, քանի որ Հայ ես եւ զգայուն, ոչ թէ միայն պիտի զգածուիս, ու պիտի ցաւիս, այլեւ պիտի զայրանաս, եւ այդ վայրէն ինքզինքդ տրտում ու տխուր դուրս պիտի նետես, եւ ի սրտէ տրտմապէս ա՜խ մըն ալ քաշելով, պիտի ըսես, մե՜ղք, եւ գուցէ ասով ալ չի բաւականանալով, չի պիտի կրնաս ինքզինքդ բռնել, պիտի փղձկիս ու պիտի արտասուես, մեր այդ սուրբ եւ երանելի նախնեաց, այդպիսի անգին ու պատուական ձեռակերտներն, ու այդ կրօնի եւ կրթութեան վառարաններն՝ այդպիսի անկերպարան վիճակի մը մատնուած ըլլալուն համար, եւ ո՜վ գիտէ, կարելի է պիտի ուխտես ալ, որպէսզի միւս անգամ ուրիշ որեւէ Հայ վանքի մը չի հանդիպիս:*

*Եւ սակայն, ի՞նչ օգուտ ունի միայն լացն ու արտասուքն, ի՞նչ օգուտ ունի միայն զայրոյթն ու սոսկումն, ի՞նչ օգուտ ունի նաեւ անտարբեր աչօք նայելու համար ըլլալիք ուխտն, ինչո՞ւ, կը կրկնենք, ինչո՞ւ ամէնքնիս ձեռք ձեռքի տալով, ի մի բերան, ի մի սիրտ, եւ ի մի հոգի չի պիտի աշխատինք, Հայ Վանքերը, որոնք այժմ կանգուն են, գոնէ անոնց մեծագոյն մասը, առանց մեր անձնական շահն ի նկատի առնելու, եթէ ոչ իրենց նախկին վիճակին, այլ ժամանակին պահանջման համեմատ, յարմար վիճակի մը վերածելով, իր նուիրական նպա-*

*տակին ծառայեցնելու, քանի որ Հայ ազգը մեծագոյն մասամբ, իր բարեպաշտական ոգիով, դեռ նոյն սէրը, դեռ նոյն յարգանքն ու պատիւն ունի դէպի նուիրական այդ հաստատութիւններուն:*

*Ներկայ վանքերն աղօթատեղի եւ ուխտատեղի ըլլալով, եւ միայն այդ նպատակով պահելով հանդերձ, վերցնենք բանայիրի, զուարճութեան եւ օդափոխութեան եւ այլն ձեւերն, ու ընենք զանոնք՝ Հայ մանուկներու զարգացման սնարան, կամ ապագայ եկեղեցականներու կրթարան, կամ անփորձ եւ անհմուտ եկեղեցականներու մարզարան, եւ կամ աղքատ, անոք ու անպաշտօն որբերու պատսպարան:*

*Բայց, բա՛յց...*

*Գալով մեր այս գործին ու աշխատութեան, անկեղծօրէն կը խոստովանինք թէ, երբեք չե՛նք յաւակնիր ըսելու, «պատմութիւն» կամ «տեղագրութիւն Հայ վանորէից», այլ պարզապէս կ՚ըսենք ու ըսած ենք «Հայ Վանորայք», եւ այն ալ մեր ծանօթութեան եւ կարելիութեան, մանաւանդ մեր կարողութեան սահմանին մէջ համառօտակի տեղագրելով:*

*Սոյն գործին պատրաստութեան սկսած էինք Ս. Երուսաղէմի մէջ 1883 թուականին, ուր կը գտնուէինք այդ թուականներուն, եւ շարունակեցինք մինչեւ ցայժմ, մեր ձեռքին տակ ու աչքի առաջ ունենալով հին եւ նոր ազգային, եկեղեցական պատմական մատեանք «վանքերու մասին այլ ու այլ ժամանակներ տպագրուած գրեանք, տեղագրական պատմութիւնք, հին եւ նոր լրագիր ու հանդէսք. եւ գրչագիր ձեռագիրներու յիշատակարանք, մանաւանդ մեզ, մեր շատ մը հարցմանց պատասխանեցին եւ բաւականին տեղեկութիւններ հաղորդեցին բանասէր ու վանասէր անձնաւորութիւնք, որք են՝ Տեարք Գեղամ էֆ. Կարապետեան Մուշէն, Աւետիս էֆ. Խ. Սահակեան Շապին Գարահիսարէն, Ս. էֆ. Ամատեան Երզնկայէն, Լեւոն էֆ. Խաչիկեան Վանէն» [իմա՛ Խաչիկ էֆ. Լեւոնեան - Կ. Ա.]:*

*Ազնիւ ընթերցողները շատ լաւ գիտեն այսպիսի ծանր գործերու պատրաստութեան դժուարութիւններն, որ ամենակատարեալ ընել հնարաւոր չէ, մանաւանդ մեզ պէս տկարներու համար, հետեւաբար կը խնդրենք ներողամիտ աչքով նայիլ մեր այս գործին պակասութիւններուն ու սխալներուն վրայ, եւ աղօթել նաեւ մեզ հետ, որ «Դուռնք երկնանման տաճարաց չի փակուին, լոյսք եւ կանթեղք չի խաւարին, խունկ եւ նուէրք չի պակասին, ընթերցմունք Աւետարանաց, երգք Սաղմոսաց, աղօթք եւ պատարագք անմահ չի դադարին». ամէն:*

*ՏՐԴԱՏ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ*

*1914 Ապրիլ 25*
*ՄԱՂՆԻՍԱ*

## Ա. ԳԱՂԱՏԻՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

## Ա.

## ԳԱՂԱՏԻԱ = ԷՆԿԻՒՐԻ

*Գաղատիա-Էնկիւրի, ինչպէս ծանօթ է, արեւմտեան Փոքր Ամասիոյ մէջ հնագոյն Առաջնորդական վիճակի կեդրոններէն մին էր, այժմ իսկ կը շարունակուի: Իր առաջնորդական թեմերն են Գըրշէհիր գաւառին եւ Սիվրիհիսար գաւառակին հայաբնակ քաղաք եւ գիւղերը:*

*Գաղատիան այժմ կուսակալութեան ալ կեդրոն է, որուն ենթակայ է այժմ Գըրշէհիր, Եօզղատ եւ Ջորում գաւառները:*

### ԳԱՂԱՏԻՈՅ ՎԱՆՔԸ

### 1/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[1]*

*Որուն* Կարմիր Վաճք *ալ կ՚ըսուի, քաղաքին հիւսիսային կողմը, հազիւ կէս ժամու չափ հեռաւորութեամբ, դաշտին մէջտեղէն անցած գետակի մը եզերքը կառուցուած է շատ գեղեցիկ դիրքով մը:*

*Գաղատիոյ Առաջնորդական վիճակին մէջ, այս միակ վանքէն զատ, ուրիշ վանք չըկայ:*

*Վանքը պարսպապատ է, ունի արտաքին երեք դուռներ, երկուքը միաբանից եւ ուխտաւորաց յատուկ, իսկ երրորդն աշխատաւորաց ու արջառներու համար:*

*Վանքի առջեւէն անցնող գետակը եւ շուրջը գտնուած գրեթէ անտառաձեւ պարտէզները, եւ մանաւանդ գարնան ժամանակ, այդ մեծ դաշտի դալարեաց եւ գունաւոր զանազան ծաղիկներու տեսքը, զմայլելի փայլ մը կուտան վանքին, այնպէս որ այցելու մը, ուխտաւոր մը, գրեթէ չ՚ուզէր զատուիլ այդպիսի գեղեցկատեսիլ վայրէն:*

*Վանքի ներքին շէնքերը եւ ուխտաւորաց յատուկ թաղերը [որչափ տեսանք մենք 1892ին], որոնք գրեթէ երեսուն եւ երեսունը հինգ սենեակներէ կը բաղկանան, թէեւ հնաձեւ եւ նորոգութեան կարօտ են, բայց Առաջնորդարանը եւ ասոր քովի սենեակները իբրեւ հիւրանոց, նորաշէն եւ բաւականին ալ կոկիկ ու ընդարձակ են: Ասոնց մօտիկը վերջերս աւելցած է նոր շէնք մըն ալ – Վարժարան կամ Որբանոց – եւ սակայն կը կարծենք, թէ իր վախճանին չը հասաւ եւ մնաց անկատար:*

*Վանքի տաճարը բոլորաձեւ է եւ գմբեթաւոր, ու շատ հնաձեւ շինութիւն մըն է, նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի:*

*Կ՚աւանդուի, թէ հին ժամանակները մեհեան մըն էր, բայց Պօղոս Ս. Առաքեալի ձեռքով նուիրագործուած, եւ այն ատենէն իսկ սկսուած է պաշտօն մատուցուիլ ճշմարիտ Աստուծոյ:*

*Եւրոպացի հնագէտք, ինչպէս կ՚ըսուի, թէ մինչեւ երեք [չորս] հազար տարուան կը հանեն մի միայն սոյն Տաճարի շէնքին հնութիւնն, որ վերջէն Փոքր Ասիոյ մէջ հայոց վանքերէն մին եղաւ, եւ ԺԴ. կամ ԺԵ. դարու մէջ ալ, ա՛լ աւելի հաստատուած եւ կեդրոն եղած է Գաղատիոյ Հայ Առաջնորդութեան:*

*Տաճարը՝ ներքին կողմանէ իր նախկին բոլորաձեւութիւնը, թէեւ ակն յայտնի պահած է, բայց վերջէն հետզհետէ եղած շինութեանց յաւելումներով, արեւելեան մեծ դրան կողմանէ, եւ արտաքին կողմէ ալ շուրջանակի, կարծես այնպէս կերեւի, թէ կորսնցուցած է իր նախկին ձեւը, թէեւ ո՛չ, երբ զգուշութեամբ դիտուի:*

*Տաճարին Աւագ խորանը, ներքին պատերը եւ յատակը զարդարուած են, Քէօթահիայի հին յախճապակեայ գեղեցիկ քարերով՝ 1758 թուականին, որուն յիշատակարանը արձանագրուած է սեան մը վրայ:*

*Վանքը ներկայիս մէջ միաբանական կազմաւորութիւն մը չունի, հսկողութիւնը յանձնուած է Գաղատիոյ Առաջնորդին: Հին ժամանակներու մէջ այս վանքը ունէր կազմաւորեալ բազմաթիւ միաբանութիւն, եւ ունէր նաեւ ճոխ մատենադարան մը Գրչագիր եւ տպագիր գիրքերով լի, զոր կազմակերպած էին Ծծկեր անուն Կարապետ եպիսկոպոսի հետ, Յովհաննէս անուն վարդապետը: Այս հաւաքածոյ մատեաններէն թէեւ այժմ քիչ շատ մնացած են, բայց մեծաւ մասամբ, մանաւանդ թանկագին կարեւոր գրչագիրներ կորսուած, կամ փոշիացած ու փճացած են կ՚ըսուի: Եւ սակայն՝ այժմեայ՝ Գաղատիոյ բարեջան Առաջնորդը՝ Տ. Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսէրեան, մեծ փութաջանութեամբ հետամուտ եղած է, մնացեալ մասը ապահով վիճակի մէջ պահելու, վանքի նոր թանգարանին մէջ, եւ հետզհետէ հաւաքելու նաեւ աստ ու անդ գտնուած գիրքերն ու գրչագիրներն, եւ նաեւ կ՚աշխատէր, ինչպէս կը լսենք, գրչագիրներու ցուցակագրութիւնն ընելու ներկայ պահանջումին համեմատ: Մեծ փափաք կը ցուցնէ ու կ՚աշխատի նաեւ վանքը կազմաւորելու:*

*Վանքն ունի իր սեփական հողերն, որոնց ընդարձակութիւնն երեք հազար արտավարէն աւելի կը հաշուըուի, եւ որոնք մեծաւ մասամբ մշակելի են: Ունի բանջարեղինաց եւ պտղատու ծառերու պարտէզներ, որոնք ալ այժմ բաւականին արդիւնաւոր վիճակի մէջ են, եւ ա՛լ աւելի*

*արդիւնաւոր կրնան ըլլալ, եթէ վերին հսկողութիւն կատարուի կանոնաւորապէս:*

*Գերեզմանատունը՝ որ կից է վանքի արեւելեան պարսպին, շատ հին է, եւ կը կարծուի, թէ ունի իր ներքեւը մնացած բաւականին հնութիւններ կ'ըսուի, եթէ այս աւանդութիւնը ճշմարտութիւն մը ունի, եւ եթէ կարելի ըլլայ նիւթական զոհողութիւն, պէտք է որ կանոնաւոր պեղում մը կատարուի, կարող եւ հմուտ ձեռքի մը միջոցաւ:*

*Վանքի մէջ կը գտնուին բաւականին յիշատակարաններ, բայց մենք յառաջ կը բերենք միայն հետեւեալ հին յիշատակարաններն:*

*Ա. Տաճարի ներսի դրան վրայ.*

*«ՋԼԵ. (1486) ՆՈՐՈԳԵՑԱՒ ՈՐՄՆ ՏԱՃԱՐԻՍ, ՏՐՕՔ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԻՑՆ ԱՄԵՆԱՅՆԻ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՆԻԿԱԼԱՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ»:*

*Բ. խաչքարի մը վրայ.*

*«Մ՛Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԼԵՐ ՏՈՒՐՍՈՒՆԻՆ Ի ԹՈՒԻՆ ՋՁ. (1531)»:*

*Գ. ուրիշ խաչքարի մը վրայ.*

*«ՍՈ՛ՒՐԲ ԽԱՉ ԲԱՐԵԽԱՒՍ ԼԵՐ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ԻՐԻՑՈՒ. ՋՂՋ. (1547)»:*

*Այս վանքի Առաջնորդ-Վանահայրներու յաջորդութեան ցանկը, որչափ գիտենք, ամբողջութեամբ եւ իրենց մանրամասն պատմութեամբը կատարելու աշխատութիւնը յանձն առած էր այժմեայ Առաջնորդ-Վանահայր Գեր. Տ. Բաբգէն Ս. Եպիսկոպոսը, եւ գուցէ յաջողած ալ է, որուն վրայ տեղեկութիւն մը չունինք: Մենք միայն հին գրչագիրներու եւ այլ յիշատակարաններէն քաղած ենք հետեւեալներն, զորս յառաջ կը բերենք այստեղ:*

*1. Ներսէս Եպիսկոպոս 1450 թուականներուն:*

*2. Նիկողայոս Եպիսկոպոս 1469-1486ին:*

*3. Կարապետ Եպս. Ուլնեցի, Ծծկեր[1], 1677 եւ 1694 թուականներուն:*

*4. Ստեփան Եպիսկոպոս Զէյթունցի, «Սաչլը» մականուանեալ, 1670ին, եւ 1690ին, սա 1694 իր պաշտօնը ձգելով մեկնած է Զէյթուն, ուր վախճանած է 1697ին:*

*5. Յովհաննէս Վարդապետ 1700ին միջոցները:*

*6. Մովսէս Եպիսկոպոս 1726ին:*

---

[1] Կ'աւանդուի թէ Կարապետ Եպս. եօթնամեայ ծնած, եւ եօթը տարիներ ալ շարունակաբար մօրը կաթը ծծած ըլլալուն համար «Ծծկեր» մականուանած է: Գաղատիոյ Առաջնորդ-Վանահայրութեան միջոցին, վանքին մէջ բաւական շինութիւն եւ նորոգութիւններ կատարած է, եւ իր հոգեւոր զաւակ Յովհաննէս վարդապետի հետ կազմակերպած է վանքին մէջ գրեանց Մատենադարան մը, ինչպէս վերեւ յիշած ենք, եւ գրեանց ցուցակը պատրաստելով յանձնած է կ'ըսուի, իր ձեռնասուն աշակերտներէն Մովսէս վարդապետի, որ Եպիսկոպոս ձեռնադրուած էր 1727 ին Գաղատիոյ վրայ: Ծծկեր 1726 ին Կաթողիկոս եղած է Ս. Էջմիածնի, եւ 1729ին վախճանած է ի Ս. Էջմիածին:

7. Յակոբ Վարդապետ Նալեան, 1733ին, որ յետոյ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած է։

8. Մովսէս Վարդապետ Շիրինեան, 1734ին։ Վախճանած է 1735ին եւ թաղուած է վանքին մէջ։

9. Սարգիս Վարդապետ Սարաֆեան, 1736 թուականներուն։ Ինքը բնիկ Ակնցի է, եւ այդ թուականէն առաջ ալ Առաջնորդ-Վանահայր էր Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց։

10. Թովմաս Վարդապետ Թամզարալեան, 1741ին։

11. Պետրոս Վարդապետ Պահատուրեան, 1742ին։

12. Կարապետ Վարդապետ Էվէրէկցի։

Նորերէն ալ կը յիշատակուին։

1. Թադէոս Եպիսկոպոս, 1815ին եւ 1821ին։

2. Մկրտիչ Եպիսկոպոս։

3. Պետրոս Եպիսկոպոս, 1830ին։

4. Արիստակէս Եպիսկոպոս։

5. Պօղոս Վարդապետ, 1839ին։

6. Յակոբ Եպիսկոպոս, 1847ին։

7. Եղիշէ Վարդապետ Գալֆայեան, 1890-1893ին։

8. Տաճատ Վարդապետ։

9. Եզնիկ Վարդապետ Պապայեան։

10. Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան, 1905ին[2*]։

# Բ. ԿԵՍԱՐԻԱ = ԳԱՅՍԷՐԻ

Կեսարիա, Գաղատիոյ կուսակալութեան (Վիլայէթ) մէկ գաւառն էր (Սանճագ): Այժմ ներկայ 1914 թուականին եղաւ անկախ (միւսթագիլ) կառավարչութիւն եւ Հայ Առաջնորդական վիճակի ալ կեդրոնն է: Կեսարիոյ Առաջնորդութիւնը կազմուած կ՚երեւի ԺԲ. դարուն մէջ, որ ժամանակ եւ մինչեւ 1875 Առաջնորդները կը նստէին Ս. Կարապետի վանքին մէջ. յիշեալ թուականէն վերջ կը մնան Կեսարիոյ մէջ. վանքը կը կառավարուի փոխանորդով: Այժմ իր թեմերն են. Կեսարիոյ գաւառին հետ, Էվէրէկի (Տէվէլի) գաւառակին (Գազա) մէջ գտնուած Հայաբնակ 31 հատ քաղաք, գիւղաքաղաք եւ գիւղերն, որոնց մէջ կան այժմ չորս հատ չէն, եւ եօթը հատ աւերակ վանքեր:

Ասկէ առաջ իր թեմերն էին նաեւ Սարմըսագլը, որ Սեբաստիոյ Առաջնորդութեան, Գըրշէհիր՝ Գաղատիոյ Առաջնորդութեան, եւ Նիյտէ, Պօռ, Նէվշէհիր, Ագսարայ, Էրէյլի, Գօնիայի Առաջնորդութեան կցուեցան 1900 թուականէն ի վեր:

## ՎԱՆՈՐԱՅՔ ԿԵՍԱՐԻՈՅ

### 2/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[3*]

Կեսարիոյ հիւսիսային-արեւելեան կողմը, երեք ժամու չափ հեռաւորութեամբ, Էֆքէրէ անուն գիւղաքաղաքի հարաւային լեռնադաշտի արեւմտեան կողին վրայ կառուցուած է այս անուանի եւ հռչակաւոր մենաստանը, շատ գեղեցիկ ձեւով, սքանչելի դիրքով ու հիանալի տեսարանով մը: Ունի մաքուր եւ առողջարար օդ, վճիտ ու զով ջուր: Վանքը հռչակաւոր է նաեւ Կեսարիոյ գաւառի թուրք ժողովրդեան մէջ «Էֆքէրէ Պէօյիւք-Մանաստըր» անունով:

Վանքը շուրջանակի պարսպապատ է սրբատաշ քարերով, ունի երեք դուռներ, երկուքը արեւմտեան՝ երրորդը՝ հիւսիսային պարիսպին վրայ, այս վերջնոյն կ՚ըսուէր, «Էֆքէրէ գափուսու», բայց վերջերս ի հիմանէ նոր շինուած վարժարանի առաջին դուռը եղաւ:

Վանքին առջեւը, արեւմտեան կողմ, բարտիի եւ այլ ծառերով լեցուն ձոր մըն է, ուրկէ անմիջապէս անդին կը գտնուին վանքի սեփական եւ նաեւ մօտակայ գիւղերու յատուկ ընդարձակածաւալ պարտէզներն, այգիներն, ու արտորայքն: Հեռուէն կը տեսնուին Կեսարիա քաղաքն, Էրքիլէթ, Մունճուսուն, Գարախւյիւք եւ այլ գիւղերն ու անոնց

*ընդարձակ դաշտերը: Միւս կողմէն՝ Արգէոս (Էրճիաս) մեծ ու հռչակաւոր լեռը ձիւնապատ, մօտէն Ս. Դանիէլ Վանքը, Պալակասի անուն զուտ Հայաբնակ գիւղը, այլեւայլ լեռնադաշտեր, որոնք դիտողին շատ մեծ հիացում եւ զմայլում մը կը պատճառեն: Վանքի հարաւային կողմը նոյնպէս ձոր է, եւ կ'ըսուի* «Ֆրէնկ Տէրէսի»*, ուր կը գտնուին վիմափոր սենեակներ. ընդարձակ, ծեփուն եւ լուսաւոր, որոնց համար կ'աւանդուի թէ՝ Խաչակիրներուն բնակավայրներ եղած են:*

*Վանքի արեւելեան կողմը լեռնադաշտ է, որ կը կոչուի «Խաչ Տաղ», որուն եզերքը զետեղուած է մեծ խաչքար մը, որուն վրայ կը գտնուի հետեւեալ արձանագրութիւնը:*

*«ՅԻՇԱՏԱԿ Է Մ՛՛Բ ԽԱՉԸՍ ԳՈՋ ԳՐԻԳՈՐԻՆ, ՄԱՐՏԻՐՈՍ ՋԼՖԱ, ՌՄԼԵ. (1786) ՈԾՈՒՄԷՆ ՈՒԼԻՍԻ ԻԸ.»:*

*Արեւելեան այս լեռնադաշտը կը շարունակուի դէպի հիւսիս, որուն ծայրը ձոր մըն է, որուն երկու կողերուն վրայ տարածուած է Էֆքէրէ անուն գիւղաքաղաքն իւր հոյակապ եկեղեցիով, զանազան վիմափոր հնութիւններով եւ ուխտատեղիներով: Էֆքէրէն գրէթէ 500 հայաբնակ եւ 50 ի չափ թրքաբնակ տուներով բաւականին գեղեցիկ գիւղաքաղաք մըն է, այժմ ունի նաեւ ընդարձակ շուկայ մը:*

*Վանքին հիմնարկութեան բուն իսկ թուականը բոլորովին անծանօթ կը մնայ: Ինչպէս գիտենք Կեսարիոյ Տ. Ղեւոնդիոս Հայրապետի ժամանակ եւս կար այս վանքը, որուն մէջ կը հանգչի Անապատի Տատրակին՝ Յովհաննու Կարապետի եւ Մկրտչին Քրիստոսի Սուրբ Նշխարքը, յորմէ մաս մը նուիրուած է Ս. Գրիգոր Լուսաւորչին՝ Հայաստանեայց Հայրապետին, երբ ձեռնադրութեան համար եկած էր ի Կեսարիա:*

*Վանքի այժմեայ եկեղեցին, որ շինուած է Տ. Մատթէոս Գարամանեան եւ Տ. Ստեփաննոս Առաջնորդ Վանահայրներու օրով եւ իրենց աշխատութեամբ եւ ջանիւք եւ կը գտնուի Ս. Կարապետի գերեզմանին արեւելեան կողմը, յանուն Ս. Հրեշտակապետի է, միջակ մեծութեամբ, եւ բարձրացած է քարանկիւնաձեւ չորս սիւներու վրայ:*

*Երեք սեղաններն ամբողջ, եկեղեցւոյ ներքին պատերն ու սիւներն յատակէն երեք կանգուն բարձրութեամբ միայն Քէօթահիայի հին յախճապակեայ քարերով զարդարուած են, որոնք այժմ հնութեան կարգը կ'անցնին, եւ որոնց ծախքը ամբողջութեամբ հոգացուած է Կեսարացի Յարութիւն Ամիրայ Պաշպազիրկեանի որդի Յովհաննէս Ամիրայի կողմէն 1797 թուականին, որուն յիշատակարանը մարմարեայ քարի մը վրայ արձանագրուած, եւ դրուած է եկեղեցւոյն Ս. Կարապետի գերեզմանը երթալու փոքրիկ դրան միջեւը, որ է.*

*«Տ՛՛Ր Յ՛՛Ս Ք՛՛Ս Ա՛՛Ծ ԹՎ. ՌՄԽԶ. [1797] ՄԱՐՏ Ա.*

«ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ, ՈՐ ԱՂԲԻՒՐ ԲԱՐԻ,
ԵՀԵՂ ԶՍԷՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ,
Տ″Ն ՄԱՏԹԷԻ ԱՐՀԻ ՊԵՏԻ,
ՇԻՆԵԱԼ ԶՏՈՒՆ Տ″Ն ԱՄԵՆԻ։
ԱՅԼ ՅԱԽՃԱՊԱԿՆ Է ՅԻՇԱՏԱԿ,
ՔԱՋ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՆՃԱՐՈՒՆԱԿ,
ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆՈՒՆ ՆՈՐԱ,
ՊԱՇՊԱՋԻՐԿԵԱՆ ԱՆՈՒԱՆԻ ՆԱ,
ԶԵԿԵՂԵՑԻՍ ՊԵՏ ՀՐԵՇՏԱԿԱՑ,
Ի ԶԱՐԴ ՀՈԳԻՈՅՆ ԳԵՂԱԶԱՐԴԵԱՑ,
ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵԱՑ.
ԽՆԴԱԼ Ի ԽՆԱՄ ՏԵԱՌՆ ՓԱՌԱՑ։
ԿԵՆԴԱՆԻՆ Է ՔԱՋ ԱՄԻՐԱՅՆ,
ՄՀ″Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐՆ ՆՈՐԱՅՆ,
ՎԱՐԴԱԿՈԿԱՆ ԶԱՒԱԿՔ ՆՈՐԱՅՆ,
ԿԱՐԱՊԵՏ, ՍԱՐԳԻՍ ՄԱՀՏԵՍԻՔՆ ԱՅՆ,
ՄԱՀՏԵՍԻ ԿԻՆՆ ՕՐՀՆԵԱԼ ԵՒԱՅՆ,
ՏԱԼԻԹԱՅ ՄԱՐԻԱՄ ԴՍՏԵՐՔ ՆՈՐԱՅՆ,
ՀԱՆԳԵԱԼ ՊԱՊՔՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՍԱՐԳԻՍ,
ԿԱՐԱՊԵՏ, ՅԱԿՈԲ, ԵՒՍ Ի ՇԻՐԻՄՍ,
ՆԱԶԼՈՒ, ՀՌԻՓՍԻՄ, ԵՂՍԱ ԴՍՏԵՐՔ,
ՊԱՐՈՆ ՅԱԿՈԲ///
ԱՐԴ ՅԻՇԵՍՑԷ ՏԷՐՆ ՓԱՌԱՑ,
ԶԿԵՆԴԱՆԻՍ ԵՒ ԶՆՆՋԵՑԵԱԼՍ,
ԵՒ ՈՐՔ ՀՐՃՈՒԻՔ ԶԱՐԴԻՒՔ Ս. ՏԱՆՍ,
ԸՆԹԵՐՑԱՐՈՒՔ ՅԻՇԵՑՄԱՆ ՏԱՌՍ,
ԵՐԿՐՊԱԳՈՒՔԴ ՍԲ ԽԱՉԻ ՏԵԱՌՆ,
ՀԱՅՐ ՄԵՂԱՅԻՒ ՕՐՀՆԷՔ ԶՊԱՏՃԱՌՆ,
ՍՏԵՓԱՆ, ԿԱՐԱՊԵՏ, ԶԱՔԱՐԻԱՅ,
ՎԱՐԴԱՊԵՏՔ ԵՆ ՏԱՆՍ ԳՈՐԾՈՒՆԵԱՅ»։

Յախճապակեայ քարերէն վեր պատերը ամբողջ ծածկուած են ոսկեզօծ շրջանակուած պատկերներով՝ երկու կարգի վրայ, թէեւ հետզհետէ հիննալու վրայ են։ Երկու դասերուն մէջ եղած վարի կարգինները, համակ զգեստաւորուած մեր առաջին վեց Հայրապետներու, վերի կարգինները ու եկեղեցւոյ մէջինններն ալ Ս. Գրոց, Աւետարանական պատմութեանց նշանաւոր սրբոց պատկերները կը ներկայացնեն։ Ինչպէս ըսինք յախճապակիները, այս պատկերները, եւ իրենց շրջանակները, ինչպէս նաեւ խաչկալներու եւ ամպիոնի քանդակեալ զարդերը, կրնանք ըսել թէ այսօր եկեղեցական հնութեանց կարգն անցած են։

*Ս. Կարապետի՝ Յովհաննու Մկրտչին գերեզմանը կից է վանքի եկեղեցիին, առանձին եկեղեցիով եւ Մատուռով: Այս եկեղեցին, ունի միայն երկու փոքրիկ սեղաններ՝ աջակողմեան եւ ձախակողմեան, որոնց միջեւ է սատափեայ գեղեցիկ ու թանկագին դուռն, ուրկէ կը մտնուի Ս. Գերեզմանի յիշեալ Մատրան մէջ: Մատուռն ունի միակ սեղան մը:*

*Գերեզմանը մատրան հիւսիսային պատին կից է, ընտիր մարմարեայ տապանաքարով, եւ սեղանաձեւ երեք աստիճաններով, վրան շինուած է փառաւոր եւ ճարտարարուեստական զարդերով քանդակուած փայտեայ եւ ամբողջութեամբ ոսկեզօծեալ ամպհովանի մը, չորս սիւներու վրայ կանգնուած կաթողիկէիւ:*

*Տապանաքարին վրայ արձանագրուած է հետեւեալ յիշատակարանը, որ յօրինուած է Բաղիշեցի Կոլոտ Յովհաննէս եւ Զըմմառացի Նալեան Յակոբ Պատրիարքներու կողմէն, որք ուխտի եկած եւ ստուգած են Ս. Նշխարաց գոյութիւնն եւ շինել տուած են իրենց անձնական ծախիւք, նոյն տապանաքարն ու ամպհովանին: Ինչպէս պիտի տեսնուի, յիշատակարանը գրուած է ի դիմաց Սրբոյն՝ դիմառնական ոճով.*

*«ՈՐՔ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԸՂՁԻՆ [ւրԳր - Ր՝ ըշյէ–]՝ ՍԻՐՈՅ ԱՌ ԻՍ ԴԻՄԵՆ, / ՀԱՄԱՅՆ ԱԽՏԻՑ ՇՆՈՐՀԻՒ ՓՐԿՁԻՆ ԴԵՂ ԳՏԱՆԵՆ, / ԵՒ ՈՐՔ ԹԵՐԻ ՄՏՕՔ ԼՐԲԻՆ՝ ՁՈՒՐԿ ԵԼԱՆԵՆ, / ԶԻ ՋԱՐԱՋԱՐ ՍԻՐՈՎ ԽՆԴՐԵՆ ԵՒ ՈՉ ԱՌՆԵՆ: / ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՂԻՇԵՑԻՆ ՔԱՋԻՄԱՍՏ, / ԸՆԴ ՋԻՄԱՌՑԻ ՅԱԿՈԲ ՊԵՏԻՆ ՈՒ [ւրԳր - Ր՝ Որ ] ––] ՆՈՒԱՍՏ, / ՇԻՆՄԱՆ ՍՈՐԱ [ւրԳր - Ր՝ չէ՝ ––] ԵՒ ԻՄ ՊԱՐՏՈՒՑՍ ԵՂԵՆ [ւրԳր - Ր՝ Էղէ–] ՇԱՏ ՆՊԱՍՏ, / ՈՐ Ս՞Բ ՀՈԳԻՈՅՆ ԼԻՑԻ ՆՈՎԱՒ ԱՌԱԳԱՍՏ»[4]*:*

*Սատափեայ դրան վրայ եւս արձանագրուած է հետեւեալ յիշատակարանը.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԳԵՂԵՑԿԱՇԷՆ ԴՈՒՌՆ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՃԱՐԻՆ ՊԱՍՄԱՃԻ ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ, ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԲՕՐՆ ԵՍԱՅԵԱՅ, ԵՒ ՄՕՐՆ ԵՒԱՅԻ, Ի ԹՈՒԻՆ ՌՄԺ. (1761)»:*

*Մատրան յատակը եւ պատերը, եւ առջեւի եկեղեցւոյն չորս կողմերը նոյնպէս զարդարուած են հին յախճապակեայ քարերով, որոնք այժմ մէյմէկ հնութիւններ են իրօք թանկագին, մանաւանդ գերեզմանի ամպհովանին եւ սատափեայ դուռն:*

*Սոյն եկեղեցւոյ եւ գերեզմանի մատրան մէջ կը գտնուին հետեւեալ յիշատակարանք.*

*Հին յախճապակիի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՈՒՆԱՆԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՓԱՆՈՍԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆ ԱԲՐԱՀԱՄԻՆ ՀՈԳՈՅՆ Ի ԴՈՒՌՆ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ ՌՄԶ. [1757]»:*

*Մատուռի դրան վրայի արտաքին ճակատը երկու կողմ կը գտնուին հետեւեալ յիշատակարանը.*

*Աջակողմեան գրուածքը.*

*«ՀՐԱՒԷՐ ՍԻՐՈՅ ՑԻՆԷՆ ԱՌ ՁԵԶ, ՈՎ ՄԱՆԿՈՒՆՔ ԻՄ. / ՓՈՒԹԱՑԱՐՈՒՔ ՁՀԵՏ ԿՈՉՄԱՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԻՄ, / ՆՈՐՈԳԵՑԱՒ ՈՐՊԷՍ ԱՐԾՒՈՅ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԻՄ, / ՁԵՐԹ ՅՈՎՍԵՓԱՅ ՆՈՐ ԾԱՂԿԵՑԱՒ ՊԱՏՄՈՒՃԱՆ ԻՄ, / ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲԱՅ ԱՐՀԻ ՊԵՏ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՄ, / ՋԵՌԱՄԲ ՍՈՐԱ ՈՐ ԽՆԱՄԱԾՈՒ ՀՈՎՈՒԱՊԵՏ ԻՄ, / ՓՈՔՐ ԵՄ ԹԷՊԷՏ ԵՒ ԿՐՏՍԵՐ ՅԵՂԲԱՐՍ ԻՄ, / ԱՅԼ ԳԱՆՁ ՇՆՈՐՀԱՑ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՅ ՏԵՍ Ի ԾՈՑ ԻՄ, / ՅԱՄԻ ՀԱԶԱՐ ԵՒ ԵՐԿԵՐԻՒՐ ԹՈՒԱԿԱՆ ԻՄ, / ՅԱՒԵԼ ՁՀԻՆԳ ԵՒ ՁԻՆՆՍՈՒՆ Ի ՎԵՐԱՅ ԻՄ, / ՑՈՅՑ ՁՀԱՒԱՏ ՁՅՈՅՍ ՁՍԷՐ ՍԻՐԵԼԻ ԻՄ, / ՏՈՒՐ ԻՆՁ ԳՐԱՒ ԵՒ ԵՍ ՏԱՑ ՔԵԶ ԸԶՇՆՈՐՀՍ ԻՄ»:*

*Ձախակողմեան գրուածքը.*

*«/// ՁՀՈՏ ԽՄԲԻՑ ՔԱՂՑԵԱԼ ՍՈՎՈՒ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՔՈՅ /// (կէտադրութիւնք անընթեռնլի եղած են), ՀԱՅՐ ՄԵՐ ԲԱՐԻ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼ ՑՈՅՑ ՁՍԷՐ ՔՈՅ. ՈՐՔ ԵԿԵԱԼ ԵՄՔ /// ՇՆՈՐՀԻՒ ՔՈՅ. ԵՒ ՈՐ ՀԵՌՈՒՍՏ ԵՒ Ի ՄՕՏՈՅ ՁԱՒԱԿՈՒՆՔ ՔՈՅ, ՏՈՒՐ ՁԽՆԴԻՐ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ՔՈՅ. ԸՆԿԱԼ ՁՀԱՒԱՏ ՅՈՅՍ ՄԵՐ ԵՒ ՍԷՐ Ի ՅԱՒԱՆԴ ՔՈՅ. ՈՐՊԷՍ ՁԻՒՂՆ ՄԱՐԻԱՄՈՒ Ի ՊԱՏԻՒ ՔՈՅ /// ՁՈՏՍ ՍՐԲՈՅ ՔՈՅ, ՁԻ ՁՆՁԵՍՑԻՆ /// ՄԵՂԱՑ ԸՍՏ ԲԱՆԻ ՔՈՅ»:*

*Այս եկեղեցւոյ աջակողմեան փոքրիկ սեղանի պատկերի վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԵՐՁՆԿԱՑԻ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎԱԿԻՄԻ ԿՈՂԱԿԻՑ ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐԻԱՄԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս՞Բ ԷՋՄԻԱԾՆԻ. ԹՎ. 1235 [1786]»:*

*Գերեզմանի մատուռին մէջ խաչքարի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է Ս՞Բ ԽԱՉՍ ՁԱԿՆՑԻ ՄՀ՞ՏԻ ՄԻՆԱՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՁՓԱՐՎԱԶԻՆ, ՄՀ՞Ի ՍԵՂԲՈՍԻՆ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՄՀ՞Ի ՄԵՐԿԵՐԻՈՍ ՁԿՈՂԱԿՑԻՈՅՆ ԵՒ ՈՐԴԻՈՅՆ ՆԻԿՈՂՈՍԻՆ, ՄԱՐԻԱՄԻՆ, ԱՆՏՕՆԻՆ, ԿԱՏԱՐԻՆԷ ՅՈՎԱՆՆԷՍԻՆ, ԹՎ. ՌՄԲ. [1753], ԱՊՐԻԼԻ Ա. Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԻԲՐՈՒ ԴԷՏ ԴԱՒԻԹ ԼՈԿ ԱԲԵՂԱՅԷ ՋԵՌԱՄԲ ԵՂԵՒ ԾՐԵԱԼ»:*

*Նոյն տեղ ուրիշ խաչքարի մը վրայ.*

*«ԽՈՐԱՆՍ ԱՅՍ ՍՈՒՐԲ ԵՒ ԴՈՒՌՆ ԵՐԿՆԻ,*
*ԿԵՐՏԵՑԵԱԼ ՅԻՇԱՏԱԿ ԿԱՆԳՆԻ,*
*ԴՍՏԵՐ ԷՔՄԷՔՃԻ ՍԷՖԷՐԻ,*
*ՈՐ Է ԳԵՂՋԻՒ ՏԱՐՍԻԱԽՑԻ,*
*ՈՐՈՅ ԱՆՈՒՆՆ ԷՐ ՏԻՐՈՒՀԻ,*
*ՓՈԽԵՑԵԱԼ Ի ԿԵՆԱՑ ԱՍՏԻ,*
*ԵՒ ՄԱՐԻԱՄ ԻՒՐ ԴՍՏԵՐԻ,*
*ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՍԻ,*
*ԱՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՔ ԱՅՍՄ ՏԱՌԻ,*

ՄԻ ԴԱՆԴԱՂԻՔ ՍԻՐՈՎ ՍՐՏԻ,
ԽՆԴՐԵԼ ՀՈԳԻՈՑ ՍՈՑԱ ԲԱՐԻ,
ՋԱՐՔԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԱՆԵԼԻ:
ԹՎԻՆ ՌՃՀԸ. [1729]»:

Նոյն տեղ ուրիշ խաչքարի մը վրայ.

«ԿԱՆԳՆԵՑԱՒ Մ՛՛Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ՔՍ. ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՎԱՐԴԵՆԻԻՆ ԵՒ ՈՐԴԻՈՅՆ ՏԻՐԱՑՈՒ ՄԿՐՏՉԻՆ, ԹՎ. ՌՃՀԸ. [1729]»:

Յանուն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ ներքին գաւիթին մէջ շինուած է կանանց յատուկ փոքրիկ վերնատուն մը, որուն երկու կողմի պատերը զարդարուած են, շրջանակներու մէջ առնուած զանազան հին պատկերներով:

Այս վերնատան ներքեւ, գետինը դրուած երկու խաչքարեր կան, որոնց վրայ կը գտնուին հետեւեալ յիշատակարանները.

- «ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ Մ՛՛ՀԻ ՍՈՒԼԹԱՆ ՊԱԼԻՆ, ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՆԱՐ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՒ ՈՐԴՈՅՆ ԳԱԲՐԻԷԼԻՆ, ՍԱՐԳԻՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ԻՒՐՈՅ ԵՒ ՈՐԴԻՈՅՆ, ԱՄԵՆԱՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՅՆ ՀՈԳՈՅՆ Ի ԴՈՒՌՆ Մ՛՛Բ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆԻՑ. ԹՎ. ՌՃՀԸ. (1729)»:

- «ՅԻՇԱՏԱԿ Է Մ՛՛Բ ԽԱՉՍ ՏՕԼԿԷՐ ԵՈՒՍՈՒՖԻՆ ՈՐԴԻՆ ՍԱՐԳՍԻՆ... ՈՐԴԻՆ ՊԱՐԵԱՄԻՆ, ՆՆՋԵՑԵԼՈՑՆ Ի ԴՈՒՌՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ, ԹՎ. ՌՃՀԸ. (1729)»:

Այս գաւիթին մէջ, եկեղեցիի ներքին դրան քովիկը թաղուած են վանքի ամենաաշխատաւոր Առաջնորդ-Վանահայրներէն Թալասցի Տ. Մատթէոս Գարամանեան եւ Մունճուսունցի Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոսներն, որոնք, վանքին մէջ կատարած այլ եւ այլ շինութիւններէն զատ, ինչպէս ըսինք վերեւ, շինած են այս Ս. եկեղեցին եւս, որոնց անունները միշտ կը յիշատակուին ամէն Ս. Պատարագին. «Գոհութիւն եւ փառաբանութիւն» աղօթքին մէջ, ինչպէս կը յիշատակուին Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին մէջ՝ իր մեծանուն Պատրիարքներէն Պարոն-Տէր Գրիգոր, եւ Շղթայակիր Գրիգոր երկու արժանաւոր ու պատուական պատրիարքներու անուններն:

Ս. Եկեղեցւոյ արտաքին գաւիթին մէջ, Առաջնորդարան եւ միաբանական վերի յարկի սենեակները ելլալիք սանդուխներուն քով, երկաթեայ վանդակապատ փոքրիկ գերեզմանատան մէջ ալ թաղուած են, Եւդոկիացի Աւետիք Եպս., Երեւանցի Դաւիթ Եպս., Մունճուսունցի Աւետիս Եպս., Գաղատիացի Յակոբ Եպս. եւ Էֆքէրէցի Եղիա Եպս. Առաջնորդ վանահայրներն, որոնց տապանաքարերուն վրայ գտնուած յիշատակարաններն յառաջ պիտի բերենք իրենց կարգին:

Ս. Կարապետի այս վանքը, ներքնապէս ներքին միակ դռնով մը երկու մասի բաժնուած է՝ հարաւային եւ հիւսիսային: Հիւսիսային մասին

*մէջն է. Եկեղեցիք եւ Ս. Կարապետի գերեզմանը, միաբանական սենեակները՝ վերի եւ վարի յարկերով, Առաջնորդարանը իր սենեակներով, հիւրանոցը, չորատունը, Նոր Մատենադարանը եւն. եւն., որոնք թուով 25էն աւելի են: Այս յարկին մէջ է նաեւ նախկին Ճեմարանը եւ ննջարանը: Կան նաեւ մառաններ, խոհանոց, սեղանատուն, հացատուն եւն: Նոր Մատենադարանը այժմ կը պարունակէ 200է աւելի ձեռագիր Մատեանք եւ 2000է աւելի տպագիր գրեանք, որ հաստատուեցաւ 1890 թուականին:*

*Նոյն ճեմարանին դրան վրայ արձանագրուած է հետեւեալ յիշատակարանը.*

*«ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ, Ի ՀԻՄԱՆԷ ԿԱՌՈՒՑԱՒ ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱՆՍ ՀԱՆԴԵՐՁ ԳՐԱԴԱՐԱՆՕՔ, ԵՒ ՆՈՐՈԳԵՑԱՆ ՎԵՐԻՆ ՆՆՋԱՐԱՆ ԵՒ ԴԱՍԱՐԱՆՔ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՎԻՃԱԿԻՍ, ԵՒ ՄԵԾԱՒ ՋԱՆԻՒՔ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐ Տ. ՏՐԴԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱԼԵԱՆ ԹԱԼԱՍՑԻՈՅ, Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՈՅՆ 1888 ՄԱՅԻՍ 15. ՌՅԼԷ. [1888]»:*

*Հարաւային մասին մէջ է ուխտաւորաց սենեակներն, որոնք ութը թաղերու բաժնուած են. 1.* Սեղանճատաճ թաղ, *որ կը պարունակէ 7 սենեակներ, 2.* Սարմսագըլը թաղ՝ *13 սենեակներով, 3.* Թօխատ թաղ՝ *7 սենեակներով, 4.* Նոր թաղ՝ *14 սենեակներով, 5.* Գայսերի թաղ՝ *վարի եւ վերի յարկին մէջ 21 սենեակներով, 6.* Չէշմէ թաղ՝ *6 սենեակներով, 7.* Ջէյթուճ թաղ՝ *16 սենեակներով, [8.* Հաճըճ թաղ՝ *վեց սենեակներով]: Ասոնցմէ զատ կան նաեւ Փոխ-Վանահայրի սենեակ մը, սեղանատուն մը, խոհանոց, մայրապետանոց, վիմափոր մեծ ամբարանոց, մառան, երեք մանր սենեակներ, մեծ ջրամբար մը, եւ երկու մշտահոս աղբիւրներ: Յիշեալ եօթը [[illegible]] թաղերէն* Գայսերի *անուն թաղը եւ* Չէշմէ *թաղը ի հիմանէ նոր շինուեցան 1894-1900 թուականներուն,* Հաճըճ *եւ* Ջէյթուճ *թաղերն ալ գրեթէ ի հիմանէ նորոգուեցան 1890 թուականին:*

*Մեծ ջրամբարին մէջ հետեւեալ յիշատակարանը դրուած է.*

*«Ի ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲ ԲԱՐԵՐՋԱՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՅԻՇԱՏԱԿ Է ՄԱՀՍԷՆՍ ԷՎԷՐԷԿՑԻ ՂՇՔԷԼԷԿԵԱՆ ՊԱՐՈՆ ՏԷՏԷՅԻ ՎԱՍՆ ՀՈԳԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԱՀՏԵՍԻ ՀԱՆԷՍ ԱՂԱՅԻ ՀՕՐՆ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՄԱՅՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՑ. 1831»:*

*Վանքի հիւսիսային կողմը,* Էֆքէրէ գափուսու *անուանեալ դռնէն դուրս, պարապ գետնի վրայ, 150x50=7500 քառակուսի ճարտարապետական կանգուն տարածութեամբ տեղ մը, 1891 թուականին մեծ պարսպի մը մէջ առնուեցաւ շուրջանակի, որ արդէն այս գետնին մէջ էր վանքին գերեզմանատունը, փոքրիկ հին մատուռով մը:*

*Այս ընդարձակ գետնին վրայ ի հիմանէ շինուեցաւ Վանքի նոր վարժարանը, 1900-1903 թուականներուն, մեծ ու բարձր սրահով եւ 12 դասարան եւ տեսչարանով, գծագրատունով, հիւրանոցով, ուսուցչաց համար վեցական սենեակներէ բաղկացեալ երկու տուներով, երեք բարձրադիր եւ օդաւէտ ննջարաններով, երկու սալայատակուած զբօսավայրերով, ուսուցչաց եւ ուսանողաց սեղանատուններով, խոհանոցով, մշտահոս աղբիւրով մը, որոնք համակ քարուկիր են։ Արդէն 1888. Մայիս 1էն սկսեալ վարժարանը հաստատուած էր վանքին մէջ, այս նոր շէնքն փոխադրուեցան ուսանողք եւ ուսուցիչք 1903 Սեպտեմ. ամսոյ առաջին օրը։*

*Վարժարանը թօշակաւոր գիշերօթիկ աշակերտաց յատուկ է, պաշտօնապէս հաստատուած է Մէարիֆի Նախարարութենէն, իբրեւ Երկրորդական (*Իտատի*), եւ բարձրագոյն (*Ալի*) Վարժարան։ Սկիզբէն ձրի աշակերտներ կ՚ընդունուէին 20-25ի չափ. այժմ կընդունուի միայն 6-10 հատ, որքան որ ներէ վարժարանի եւ վանքի ելմտական վիճակը։*

*1888էն սկսեալ հինգ վեց տարիներ շարունակաբար, վարժարանին նիւթապէս եւ բարոյապէս աջակցած են պատուական եւ ճշմարիտ հայրենասէր, Գ. եւ Մ. Էսաեան հարազատք, եւ նոր վարժարանի շինութեան առեն Ս. Ս. Կիւլպէնկեան հարազատք եւ որդիք. որոնց այս աջակցութիւն եւ բարերարութիւնք անմոռանալի պիտի մնան։*

*Այս նոր շինուած վարժարանի առաջին դրան ճակտին վրայ դրուած է հետեւեալ յիշատակարանը.*

*«ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1903 ԹՈՒԻՆ, ՀԱՅՈՑ ՌՅԾԲ. ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՀԻՄԱՆԷ ՆՈՐՈԳ ԿԱՌՈՒՑԱՒ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՑ ՎԱՐԺԱՐԱՆՍ, ՀԱՆԴԵՐՁ ՍԵՆԵԿՕՔ, ՆՆՋԱՐԱՆՕՔ, ՍԵՂԱՆԱՏԱՄԲ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԶԲՕՍԱՎԱՅՐՕՔ, Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՈՅՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ԽՐԻՄԵԱՆ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ, ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՕՐՄԱՆԵԱՆ, ԵՒ ՆԱԽԱՁԵՌՆ ՋԱՆԻՒՔ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՎԻՃԱԿԻՍ ԿԵՍԱՐԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐ Տ. ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱԼԵԱՆ, ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՀԱՄԱՅՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ԿԵՍԱՐԻՈՅ, ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԹԱԼԱՍՈՒ ԿԻՒԼՊԷՅԵԱՆ ԱԶՆՈՒԱՏՈՀՄԻԿ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԵՐԿՈՒՑ ՀԱՐԱԶԱՏԱՑՆ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ՍԵՐՈՎԲԷ ԵՒ ՍԱՐԳԻՍԻ ԵՒ ԱՐԺԱՆԱԺԱՌԱՆԳ ՈՐԴԻՈՑ ՆՈՑԱ։ ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ, 1903. ՌՅԾԲ.»։*

*Այս նոր վարժարանի առաջին բակին արեւելեան կողմի մեծ պատին վրայ եւս գրուած է հետեւեալ յիշատակարանը.*

«ՅԱՄԻՆ 1903, ՎԱՆԱՀԱՅՐ ԷՐ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՑՍ ԿԵՍԱՐԻՈՅ, ՏՐԴԱՏ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ ԹԱԼԱՍՑԻ: ՄԻԱԲԱՆՔ ԷԻՆ՝ ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ԲԱՋՈՒՄԵԱՆ, ՍՄԲԱՏ ՎՐԴ. ՍԱԼՊԱՇԵԱՆ, ԹՕՄԱՐԶԱՑԻՔ, ԵՒ ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՋԱՐԴԱՐԵԱՆ ՖԷՆԷՍԷՑԻ 1903»:

Վանքը եկեղեցական անօթներու եւ զգեստներու կողմանէ գոհացուցիչ է, թէեւ շատ մեծ հարստութիւն մը չունի:

Բաւականին մշակելի հողեր ու կալուածներ ունի, երեք ջաղացքներ, մին Հէօնկէլէ ըսուած տեղը, որ երեք ժամ հեռաւորութիւն ունի վանքէն, մին՝ Տէնտիլ, միւսն ալ Պուրհան անուն գիւղերուն մէջ, որոնք բաւականին հասութաբեր են: Հողերը 5-600 արտավարի չափ, կէսը վանքին առջեւ, միւս կէսը Հէօնկէլէի ջաղացքին շուրջը, այս հողերուն մէջ կան քանի մը կտորներ որոնք անմշակելի են: Այգի մը եւ ճէհրինոց մը ունի Պայըր պաղ անունով, գեղեցիկ ընդարձակ պարտէզ մը՝ Խաս պախչէ անունով, եւ երեք ուրիշ ծառատունկ պարտէզներ իրարու գրեթէ կից, երկու բանջարանոց: Ունի նաեւ ձիթահան, գոմանոցներ, ուղտանոց, ձիանոց, հաւնոց, յարդանոցներ, եւ մշակներու յատուկ սենեակներ, այս վերջիններուն Սիւտլիւք անունը կը տրուի, եւ որք կը գտնուին յիշեալ պարտէզ ու բանջարանոցներու միջեւը:

Վանուցս մէջ կը գտնուին հետեւեալ յիշատակարաններն ալ.

Ս. Եկեղեցւոյ հարաւային կամարին վրայ.

«ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԱՅՍ ԴՐՈՒԱԳԻ: / ԼԻՑԻ ՅԱՅՏՆԻ ՀԱՐՑԱՆՈՂԻ: / ՅԱՄԻ ՀԱԶԱՐ ԵՐԿԱՐԻՒՐԻ: / ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ԵՕԹ ՎԵՐԱԲԱՐԴԻ: / ՇՆՈՐՀԻՒ ՏՆ. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ: / ԳԵՐԱՀԱՄԲԱՒ ՎԵՐԱՏԵՍՉԻ: / ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԱՐՀԻՊԵՏԻ: / Ի ՀԻՄԱՆԷ ԱՇԽԱՏՈՂԻ»:

Եկեղեցւոյ արտաքին դրան արեւելեան պատին վրայ.

«ՅԻՇԱՏԱԿ Է ԴՈՒՌՍ ԿԵՍԱՐԱՑԻ Ի ԳԻՒՂԷՆ ՎԱՆՔ ԳԻՒՂԷ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՖԱՅԻՆ, ՈՐ Ի ԹՎԻՆ ՌՃՀԶ. [1727], ԵԿՆ Ի ԿԵՍԱՐԻԱ ԹԳԿՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ՏԵՍԵԱԼ ԶՀՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՄ ՏԱՃԱՐԻՍ, ՈՒԽՏ ԵԴ ԱՆՁԻՆ ԻՒՐՈՒՄ ԹԷ Ի ԳԱԼՆ ՍՏԱՄՊՕԼ ԽՆԴՐԻՑԷ ՀՐԱՄԱՆ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՎԱՍՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՍՈՐԻՆ, ՈՐ ԵՂԵՒ ԻՍԿ ԵՒ ԿԱՏԱՐԵՑԱՒ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ: ԵՂԻՑԻ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՖԱՅԻՆ ԵՒ ՈՐԴԻՈՅՆ ՄԱՀՏԵՍԻ ԳԷՈՐԳԻՆ ԵՒ ՏԻՐԱՑՈՒ ԱԲՐԱՀԱՄԻՆ ԵՒ ՄՕՐ ՆՈՑԻՆ ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑՆ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՀԱՆՆԷՍԻՆ ԵՒ ՄԱՀՏԵՍԻ ՀԵՂԻՆԷԻՆ, ԹՎԻՆ ՌՃՀԸ. [1729]»:

Եկեղեցւոյ արտաքին պատին վրայ զետեղուած խաչքարի յիշատակարանը.

*«ԽԱՉՍ ԿԱՌՈՒՑԱՒ Մ″Բ ՆՇԱՆԻ, ԵՒ ԱՌ Ք″Ս ԲԱՐԵԽՕՍԻ, ՄՀ″Ի ԱՆՏՕՆԻ ՈՐԴԻ, ՏԻՐԱՑՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ, Է ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ, ՆՆՋԵՑԵԼՈՑՆ ԱՄԵՆԱՅՆԻ, ԲԱԶՄԱՇԽԱՏ ԵՂԵՒ ԱՅՍ ՄԵՆԱՍՏԱՆԻ, ՌՃՀԸ. [1729] ԹՈՒԱԿԱՆԻ»:*

*Նոյնին քով ուրիշ չորս խաչքարերու վրայ.*

*– «ՀԻՒՍՆ ՊԱՅԾԱՌ ՄԵԾԱՐԳՈՅԻ, / ՁԻ ՄՀ″Ի ՄԻՔԱՅԷԼ ԿՈՉԻ, / ՈՐ ՄԱԿԱՆՈՒԱՄԲ ՂԱՅԵԱ ՕՂԼԻ, / ԲԱԶՄԱՇԽԱՏ ԵՂԵՒ ԱՅՍ ՄԵՆԱՍՏԱՆԻ, / ՈՐ Է ԳԻՒՂԷՆ ՅԵՒՔԱՐԱՅԻ, / ԱՅՍ ԽԱՉՍ ՕԾԵԼ ԵՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ, / ՏԷՐՆ ՔՐԻՍՏՈՍ ՎԱՐՁԱՏՐԵՍՑԻ... ՀՐԱՇ ԴԱՏԱՍՏԱՆԻ, ՆՈՐՈԳԵՑԱՒ ՅԱՅՍՄ ԱՄԻ, / ԹՎ. ՀԱՅՈՑ ՌՃՀԸ. [1729]»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Ս. ԽԱՉՍ ԳԷՈՐԳԻ ՈՐԴԻ ՄԵՂԱՒՈՐ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՊԷՔ ՏԱՂԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է ԼՈՒՍԱՄՈՒՏՍ ԵՒՔԱՌԱՅԻ ՍԱՂԻՐ ՕՂԼՈՒ ՊԻՆԷԹ ՂԱԼՖԱՅԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑՈՅՆ ՄԱՐԻԱՄԻՆ»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ԵՍԱՅԻ ՈՐԴԻ ՅԱԿՈԲ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ԿԻՒԼՎԱՐԴԻՆ ՀՈԳԻՈՅՆ: ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ՏԱՇՃԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԼՖԱՅԻՆ ԾՆՈՂԱՑՆ ՀՈԳԻՈՅՆ, ԹՎԻՆ ՌՃՀԸ. [1729]»:*

*Ուրիշ հինգ խաչքարերու վրայ կը գտնուին նաեւ հետեւեալ յիշատակարանները.*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ՊԱԼԹԱ ՕՂԼԻ ՂԱՐԱՊԷԿԻՆ ՀՕՐՆ ԵՒ ՄՕՐՆ ՀՈԳԻՈՅՆ Ի ԴՈՒՌՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ, ԹՎ. ՌՃՀԸ. [1729]»:*

*– «/// ՔԱՐԱԹԵՒԻ, ՈՐ ԵՒ ՕԾԵԱԼ ԽԱՉ ԿԱՆԳՆԵՑԻ, ՇԻՆՈՒԱԾ ՄԵԾԻ ՀՌՅԱԿԱՊ ԱՐԱՄԱԶԵԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՌՃ. ԵՕԹԱՆԱՍՆԻ, ՈՒԹ Ի ՎԵՐԱՅ ՄԱՍԱՆՑ ԴԱՍԻ [1729], ԲԱԶՄԱՇԽԱՏ ԵՂԵՒ ԱՅՍ ՄԵՆԱՍՏԱՆԻ: ՏԷՐՆ ՔՐԻՍՏՈՍ ՎԱՐՁԱՏՐԵՍՑԻ, ՈՐ Է ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՈՐ Է ՅԵՐԿՐԷՆ ԿՈՒՌԻՆԵՑԻ, Է ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ, ՆՆՋԵՑԵԼՈՑՆ ԱՄԵՆԱՅՆԻ, ԸՆԴ ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՅԱՋԱԿՈՂՄԵԱՆ /// ԼԻՆԻ»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ՔԱՂԿՑԻ ՈՍԿԵՐԻՉ Մ″ՀԻ ՄՈՒՐԱՏԻՆ ՀՕՐՆ ԵՒ ՄՕՐՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀՈԳՈՅՆ Ի ԴՈՒՌՆ Մ″Բ ԿԱՐԱՊԵՏԱՑ, ԹՎԻՆ ՌՃՀԸ. [1729] ՆՈՐՈԳԵՑԱՒ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ՍԱՐԳԻՍԻ ՈՐԴԻ ՆԻԿՈՂՈՍԻՆ ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ Ի ԴՈՒՌՆ Մ″Բ ԿԱՐԱՊԵՏԻ»:*

*– «ՅԻՇԱՏԱԿ Է Մ″Բ ԽԱՉՍ ՊԻԹԼԻՍՑԻ ՄԻՆԱՍԻՆ, ԹՎ. ՌՄԳ. [1754]»:*

*Առաջնորդարանի ջրհորին վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՋՐՀՈՐՍ ԱՅՍ ԿԵՍԱՐԱՑԻ Մ″ՀԻ ԽԸՏԸՐԻՆ, ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՈՅՆ ՅԱԿՈԲԻՆ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻՆ, ԵՒ ՎԱՍՆ ՀԱՄԱՅՆ ԿԵՆԴԱՆԵԱՑՆ ԽԱՂԱՂ ԿԵՑՈՒԹԵԱՄԲ, ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՑՆ ՅԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ, Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՍՐԲՈՅ ՀՐԱՇԱԼԻ ՈՒԽՏԻՍ, ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԹԵՒԵԿԱՑՆ, ՅԱՒՈՒՐ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈ-*

ՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՄԾԵ. (1806) Ի ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՎԱՆՈՒՅՍ»:

Այս կողմը ճիթատան պահարանին պատը դրուած է կարմրագոյն քար մը, որուն վրայ քանդակուած է Ս. Աստուածածնի պատկերը՝ գիրկը Քրիստոս, յիշատակարանն է.

«Յիշատակ է այս պատկերս, Ղալէմքեար Մարգարս փորեաց, ի թուին ١٢٣٢ [1236՝ 1787]»:

Էֆքէրէ գաբուսու ըսուած դրան արտաքին վերի չեմին վրայ.

«ԸՆԴ ԱՐՄՍ ԱՅՍ Է /// ԱԻԱԳՈՅՆ ՄԵՆԱՍՏԱՆ Է, ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՐՋՈՐՋԻ, /// ՇԻՆՈՒԱԾ ՄԵԾԻ ՀՈՅԱԿԱՊԻ /// ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՂԵՒ ///» (չատ մը տեղերը անընթեռնլի):

Ուխտաւորաց թաղին մէջ եղած աղբիւրի յիշատակարանը.

«ՅԻՇԱՏԱԿ Է ԱՂԲԻՒՐՍ ՍՐԲՈՅՆ ԿԱՐԱՊԵՏԻ, ՁԵՌԱՄԲ ԿԵՍԱՐԱՑԻ ՇԻՐԻՆԵԱՆ Մ''ՀԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ, ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ Մ''ՀԻ ՀՌԻՓՍԻՄԷԻՆ ԵՒ ՈՐԴԻՈՑ Մ''ՀԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՒ Մ''ՀԻ ՆԱԶԱՐԻՆ, ՎԱՍՆ ԻՒՐՈՑ ԿԵՆԴԱՆԵԱՑ, ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ, 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1868»: «ՆՈՐՈԳԵՑԱՒ ՅԱԽՈՒՐՍ ՏՐԴԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ. 1891»:

Սարմսագլի թաղին մէջ, սենեկի մը վերին չէմին վրայ.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՍԱՐՄԸՍԱԽՑԻ Մ''ՀԻ ԱՌԱՔԵԼԻ ՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ ԿԱՌՈՅՑ ԻՒՐ ԱՐԹԵԱՄԲՔՆ. ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1848»:

Նոր թաղի յիշատակարանը.

«ԾԱԽՔ ՊԱՐՍՊԱԾ ՆՈՐԱԿԵՐՏԻՍ,
ԱՐԴԵԱՄԲ ՈՒԽՏԻՍ ՁԵՌԱՄԲ ԴԻՏԻՍ,
ԳԱՂԱՏԱՑՈՑ ԱՐՀԻ ՊԵՏԻՍ,
ՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԻՍ,
ԳՈՐԾ ՄԵԾԱԳՈՐԾ ԱՐԴԷՆ ՇԻՆԵԱԼ,
ՁՈՐԵՔՏԱՍԱՆ ՍԵՆԵԱԿ ԿԵՐՏԵԱԼ,
ՆԵՐՔԻՆ ՎԵՐԻՆ ՀԻՄԱՄԲՔ ՀԱՍՏԵԱԼ,
ՀՐԱՇԱԳԵՂ ՏԵՍԼԵԱՄԲ ՓԱՅԼԵԱԼ:
ԽԱՐՃԱԳՆԱՑ ԱՅՍ ՍԵՆԵԿԱՑ,
ՅԱԿՈԲ ՍՐԲԱԶԱՆ ՀՈԳԱՑ,
ԱՆՋՆՋԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԵԱՑ,
ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՓԱՌԱՑ:
1857 ՕԳՈՍՏՈՍ 25»:

Գայսէրի անուն նոր շինուած թաղին առաջին դրան վրայ.

«ՏՐԴԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԵԱՆ ԹԱԼԱՍՑԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՆԱՀԱՅՐ ԿԵՍԱՐԻՈՑ 1887»:

Եկեղեցական անօթներու, զգեստներու, վարագոյրներու, աշտանակ, կանթեղ եւ այլններու վրայ գտնուած յիշատակարաններն այստեղ ամ-

*բողջութեամբ յառաջ բերել՝ շատ երկար պիտի ըլլար, բայց միայն ԺԷ. եւ ԺԸ. դարերուն մէջ եղածներէն մէկ մասին յիշատակարաններն պիտի օրինակենք:*

*Սկիհի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԿԵՍԱՐԱՑԻ ՍԻՆԱՆՈՒ ՈՐԴԻ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ. ԹՎԻՆ ՌՀԲ. (1623)»:*

*Ուրիշ սկիհի մը վրայ.*

*«ՆՈՒԻՐԵՑԱՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՐԾԱՐԱՆ ՍԿԻՀՍ, Ի ՊԱՏԻՒ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ, Ի ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆԷ, Ի ԴՈՒՌՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ ՌՃՁԴ. (1735)»:*

*Սրբատուփի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԽՈՐՀՐԴԱՄԱՆՍ, ՏԷՇԼԷՔ ՊԱՊՈՒՆ, ԵՒ ԿՈՂԱԿՑՈՒՆ ՄԱՐԻԱՄԻՆ, ԽԱՄՊԱԿԷ ԹՈՒԻ ՏԱՐԻՆ, Ի ՁԵՌՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՆ ԹՎԻՆ ՌՃԼԹ.ԻՆ (1690)»:*

*Տապանակի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՏԱՊԱՆԱԿՍ ՍՈՒԼԷՅՄԱՆ ՓԱՇԱ ԽԱՆԻ ԵՂԵԱԼ ԿԵՍԱՐԱՑԻ ՔՐԻՍՏՈՆԷԻՑՆ, ՁԵՌԱՄԲ Մ՞՞ՀԻ ԳԱԲՐԻԷԼԻՆ, Ի ԴՈՒՌՆ ԿԵՍԱՐԻՈՅ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹՎԻՆ ՌՃՂ.ԻՆ (1741)»:*

*Քշոցի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԹՕԽԱԴՑԻ ՍԷԹԷՆՃԻ ՕՂԼՈՒ Մ՞՞ՀԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ, Ի ԴՈՒՌՆ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏԻ, ԹՎԻՆ ՌՄԽԷ. (1798)»:*

*Գանձանակի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է Տ՞Ն ՄԱՆՈՒԷԼԻ ՄԵՂԱՊԱՐՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ ԷՕՔՍԻՒԶԵԱՆ, ՎԱՍՆ ՀՈԳԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Մ՞՞ՀԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, Ի ԴՈՒՌՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ. ԹՎԻՆ ՌՄԽԶ. (1797)»:*

*Աշտանակի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԱՇՏԱՆԱԿՍ ՊԱՇՊԱՋԻՐԿԵԱՆ Մ՞՞ՀԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ, ԵՒ ՈՐԴԻՈՅՆ Մ՞՞ՀԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, Մ՞՞ՀԻ ՍԱՐԳՍԻՆ. Ի ԴՈՒՌՆ ԿԵՍԱՐԻՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆԻՑՆ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ՞Ն ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ Ի ԹՎԻՆ ՌՄԾ. (1801)»:*

*Գաւազանի մը վրայ.*

*«ԿԱԶՄԵՑԱՒ ԳԱՒԱԶԱՆՍ ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԹՈՒԻՆ ՌԾԲ. (1603) ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՈՂՈՐՄԵԱ ԱՇԽԱՏՈՂԱՑ ՍՈՐԱ. ԱՄԷՆ»:*

*Մասունք պարունակող խաչի մը վրայ.*

*«ՕԾԵԱԼ ԽԱՉԻՍ ՄԻՋԻ Ս՞Բ ՆՇԱՆՆ, ՄԱՍՈՒՆՔՆ Է ՄԾԲՆԱՅ ՅԱԿՈԲ Ս՞Բ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ Տ՞Ն ՄԱՏԹԷՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՓԱՌԱԿԵՑԻ Տ. ԻՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՅԻՇԱՏԱԿ ԵՏ ՀՐԱՇԱԼԻ ՎԱՆՔԻՆ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ, ՈՂՈՐՄԵՍՑԻ ՏԷՐ ԾՆՈՂԱՑՆ ՅԱԿՈԲԻՆ ԵՒ ԹԱՄԱՄԻՆ, ԹՎԻՆ ՌՄԽԱ. (1792) ԵՒ ՕԳՈՍ. 3 ՕՐՆ»:*

*Մեծ խաչի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ ԿԵՍԱՐԱՑԻ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, Ի ԴՈՒՌՆ ՍՐԲՈՑ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔԻՆ ՈՎ ՈՔ ԳՈՂԱՍՑԻ ԵՒ ԿԱՄ ՎԱՃԱՌԵՍՑԻ Ի ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ ՆՋՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ, ԹՎԻՆ ՌՄԽԴ.ԻՆ (1795)»:*

*Վարագոյրի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԳԵՂԵՑԿԱՇԷՆ ՎԱՐԱԳՈՅՐՍ, ՈՄԱՆՑ ՄԻԱԲԱՆԱՍԷՐ ՕՐՀՆԵԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԵՂԲԱՐՑ, ՎԱՍՆ ՍՐԲՈՑ ԽՈՐԱՆԻՆ ԾԵՐԻ ՍՐԲՈՅՆ ԴԱՆԻԷԼԻ, ՈՐ Ի ՔԱՂԱՔՆ ԿԵՍԱՐԻԱՑ ԵՒ Ի ԳԻՒՂՆ ՀԷՎԳԵՐԷՑԻ, ՍԱԿՍ ՀՈԳԻՈՑ ԻՒՐԵԱՆՑ, ԵՒ ԱՄԵՆԻՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ, ԿԱՏԱՐԵՑԱՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՔԷՐԷՍՏԷՃԻ ՄՀ՞ՏԻ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՐԴԻՈՑ ՏԻՐԱՑՈՒ ՄԱՐԳԱՐԻՆ Ի ԹՎԻՆ ՌՄԺԴ. [1765] ԱՊՐԻԼԻ Ա.ԻՆ»:*

*Սկիհի ծածկոցի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԾԱԾԿՈՑՍ ՊԱԼԱՏՑԻ ՏԻՐԱՑՈՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ ԿՈՂԱԿՑՈՅՆ ԵՐԱՆՈՒՀԻԻ... Ի ԴՈՒՌՆ ԿԵՍԱՐԻՈՑ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ ՌՄԺԴ. [1765]»:*

*Շուրջարի մը վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ՇՈՒՐՋԱՌՍ ԿԵՍԱՐԱՑԻ ԿԵՂՋԷՆ ԷՖՔԱՌԱՑԻ ՅԱՐԱՊ ՕՂԼՈՒ ԻՍՔԷՆՏԷՐԻ ՈՐԴԻ ՏԻՐԱՑՈՒ ՄՈՎՍԷՍԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս՞Բ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԹՎԻՆ ՌՄԱ.ԻՆ [1752]»:*

*Պէզճեան Յարութիւն Ղազազ Ազն. Ամիրայի բոլոր յիշատակներն, որոնց թիւը բազմաթիւ են, միայն կնիք մը կը կրեն, որուն մէջ գրուած է, «ՅԻՇԱՏԱԿ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՋՃԵԱՆ, 1830» եւ որոնք ամբողջութեամբ եւ զգուշաւորութեամբ կը պահպանուին ինչպէս նաեւ Տիւզեան Ամիրայներունը եւ այլ համայն անօթ եւ զգեստները:*

*Ինչպէս ըսած ենք սկիզբները, վիճակին թեմագլուխ քաղաքն է Կեսարիան, բայց Առաջնորդ-վանահայրներու կեդրոնն էր Ս. Կարապետի այս վանքը մինչեւ 1886, որմէ ետք առաջնորդները կը մնան ի Կեսարիայ, եւ վանքը կը կառավարուի փոխանորդ վարդապետով մը: Այս տեղ յառաջ պիտի բերենք Առաջնորդական յաջորդութեանց ցանկն ալ, որ կը սկսի ԺԲ. դարու վերջին քառորդէն, այն է՝ 1170 թուականէն, զորս մենք անձամբ կազմած ենք, մեր ձեռքէն անցած հայերէն գրչագիր մատեաններու յիշատակարաններէն, եւ վանքին մէջ գտնուած հրովարտակ եւ այլեւայլ թուղթերէն:*

*Ինչպէս պիտի երեւի ցուցակիս սկիզբները, 1170էն մինչեւ 1600 ամբողջական չէ, դեռ անուններ կը պակսին, բայց վերջին մասերը կը կարծենք թէ ամբողջական է, եւ եթէ՝ սխալմունք մը ըրած ենք ներողամտութիւն կը խնդրենք:*

*1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Իր Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին սկզբնաւորութեան բուն իսկ թուականն թէեւ անծանօթ կը մնայ, բայց Ազգային եկեղեցական պատմութենէն գիտենք թէ, Գրիգոր Տղայ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի օրովը, Հայոց ՈԻԸ. (1179) թուականին, Ս. Զատկէն ետքը Ապրիլ ամսոյն ի Հռովմկլայ գումարուած եկեղեցական ժողովոյն մէջ գտնուեցաւ ինչպէս միւս Առաջնորդ-Վանահայր Եպիսկոպոսները, որոնք թուով 32 էին, նոյնպէս Յովհաննէս Եպիս. ստորագրեց «Յովհաննէս Եպիս. Կեսարու Կապադովկեցւոց» ստորագրութեամբ այն թուղթն, որ Կ. Պոլսոյ յոյն պատրիարք Տ. Միքայէլ Եպիսկոպոսին ղրկուեցաւ:*

*2. ԱԶԱՐԻԱ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՈԾԵ. (1206) թուականին գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին մէջ, որուն մէկ մասը յառաջ կը բերենք այս տեղ. «...Գրեցաւ եւ ծաղկեցաւ Աստուածաբուղխ Սուրբ Աւետարանս Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ եւ փցուն [անիմաստ եւ յանցաւոր] գրչի՝ Գրիգոր քահանայիս ի Տումարծու, [որ անուամբ գոչիմ եւ ո՛չ գործօք], ի թուականութեանս Հայոց ՈԾԵ. (1206) յաւարտեցաւ, Յունվար ամսոյ Գ. (3), աւր ուրբաթ, ի գաւառս Կեսարիոյ Կապադովկեցւոց, ի հռչակաւոր անապատիս Սրբոյն Կարապետի Յովհաննու, եւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ Սրբոյն Թէոդորոսի եւ Սրբոյն Մեռկերիոսի եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, ի յԵպիսկոպոսութեան Տէր Ազարիա վերայտեսչի: Որոյ ցանկացող եղեալ այս փրկագործ սուրբ Աւետարանիս գհեզահոգի եւ զհաւատարիմ ծերունին զԽըտըրպաշին...»[5*]:*

*3. ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Իր Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին սկզբնաւորութեան բուն իսկ թուականն ծանօթ չէ, միայն ազգային Եկեղեցական պատմութենէն ծանօթ է, որ 1307 թուականին Կեսարիայէն մեկնեցաւ ի Սիս, ուր Կաթուղիկոսական ընտրութեան համար գումարուած եկեղեցական ժողովոյն ներկայ գտնուելու համար: Ինքն էր, որ ընտրուեցաւ, ամբողջ ժողովոյն համաձայնով, եւ ընդունեց նուիրական սոյն մեծ պաշտօնը, եւ կոչուեցաւ* «Կոստանդին Գ. Կեսարացի»*:*

*4. ՄԱՐԿՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՋՂԱ. (1342) թուականին գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ: Կը յիշուի նաեւ քսան եւ ինը Եպիսկոպոսներու շարքին մէջ, որք եկեղեցական ժողով գումարեցին ի Սիս, ուր տեղ պատրաստուած որոշման թուղթը ստորագրած է,* «Մարկոս Եպիսկոպոս Կեսարու Կապաթովկացւոց» *մակագրութեամբ:*

*5. ԹՈՐՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Ասոր մասին յիշատակարան մը կը գտնուի Ս. Երուսաղէմ, Ս. Յարութեան Տաճարի արտաքին միակ մեծ*

դրան մարմարեայ սիւնին վրայ փորագրուած: Կ'երեւի 1417 Թուականին Ս. Երուսաղէմ ուխտի գացած եւ ինքն իսկ անձամբ գրած ըլլայ նոյն յիշատակարանը, որուն ճիշտ օրինակն է, «ԹՕՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԵԻԿԱՌՈՒ ԵՒ ԿԵՍԱՐԻՈՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ, Ի ՔԵԶ ՅԱՆՁԻՆ. ԹՎ. ՊԿԶ. (1417)»:

6. ԿԻՐԱԿՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Տրապիզոնցի: Կը յիշատակուի ՋԺԸ. (1469) եւ ՋԽԴ. (1495) գրչագրուած երկու Յայսմաւուրքներու, եւ ՋԼ. (1481), ՋԼԳ.ին (1484) գրչագրուած երկու Ճաշոց մատեաններու յիշատակարանց մէջ:

Ասոր օրովը Կեսարիոյ Ներգէ գիւղի Ս. Գրիգոր Նիւսացիի վանքին մէջ ալ վանահայր կը յիշուին Անդրէաս եւ Ստեփան եպիսկոպոսներ:

Ճաշոց գիրքի յիշատակարանն է.

«Արդ գրեցաւ տարեգիրքս, ի Թուականիս Հայոց ՋԼ. (1481). ձեռամբ Տէր Յովհաննէս Նաղաշին, եւ աշակերտին իւրոյ Ստեփաննոս, ի գաւառս ի սուրբ ուխտս, որ է Աթոռ սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ... Ի Հայրապետութեան Տէր Ստեփաննոսի, եւ յԵպիսկոպոսութեան այսմ նահանգի Տէր Կիրակոսի եւ Տէր Անդրէասի...»:

Յայսմաւուրքի յիշատակարանն է.

«...Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղաւոր եւ անարժան եւ անպիտան փցուն գրչի Յովանէս աբեղի, ի Թվ. Հայոց յինն Ճ. եւ ի ԽԴ. (1495), ի գաւառս Կեսարիոյ ի գիւղս, որ կոչի Մանտիսօն ի դուռն Ս. Աստուածածնին եւ Ս. Խաչին եւ Ս. Թօրոսու, ի հայրապետութեան Տեառն Յովհաննիսի, եւ յԵպիսկոպոսութեան Տէր Կիրակոսի...»:

7. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Հըզնեցի: Կը յիշատակուի ՌԱ. (1552), ՌԺԹ. (1570), ՌԻԱ. (1572) եւ ՌԻԳ. (1574) Թուականներուն գրչագրուած երկու Աւետարաններու, Մայր Մաշտոցի, եւ Ճաշոց գիրքի մը յիշատակարաններու մէջ, որոնցմէ կը հասկնանք թէ սա 1552էն առաջ Թօմարզայի Ս. Աստուածածնի վանքին վանահայրն էր, նոյն Թուականին եկած է Ս. Կարապետի վանքը, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով, ժամանակ մը մնալէ ետք մեկնած է Թօմարզայ, 1572ին կ'երեւի կրկին անգամ եկած է Ս. Կարապետ միեւնոյն պաշտօնով, եւ այս անգամ ալ երկու տարի միայն մնալով վերջնականապէս մեկնած է նորէն Թօմարզա, ուր մնացած է մինչեւ իր վախճանը:

Ա. Աւետարանի յիշատակարանն է.

«...Գրեցաւ [եւ ծաղկեցաւ եւ զարդարեցաւ աստուածաբուխ սբ. Աւետարանս Քրիստոսի], ձեռամբ բազմամեղ եւ փծուն [անիմաստ եւ անցաւոր] գրչի Պաւղոսի Քաստօղանցւոյ, ի Թուականիս [Հայոց ի յինն] ՌԱ. (1552) ի գաւառս Կեսարիա Կապադովկացւոց, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Սարգսի [զաւրավարին] եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ Սրբոյն Մերկերիոսի [զինաւորին] եւ այլ բազմահա-

*ւաք սրբութեանց, ի յեպիսկոպոսութեան այսմ նահանգիս Տէր Յովհաննէս սրբասնեալ Արքեպիսկոպոսի...»:*

*Բ. Մաշտոցի յիշատակարանն է.*

*«...Գրեցաւ աւրհնութիւնաքեր ցուցակ այս, ի թուականիս Հայոց ՌԺԹ. (1570), ձեռամբ ամենամեղ եւ անարհեստ գրչի Խափլան Խտրի, որ էլվնի անուն Գրիգոր կոչի, ի գաւառս ի Տումարզայ ի դուռն Ս. Աստուածածնի եւ Ս. Պօղոսի Պետրոսի... յիշման արժանի արարէք զուսուցիչն իմ Աստուածատուր վարդապետն Մշեցին, եւ զմեր Եպիսկոպոսն Յովհաննէս Հըզնեցին...»:*

*Գ. Աւետարանի յիշատակարանն է.*

*«...Եւ կազմեցաւ Սբ. Աւետարանս ի գիւղաքաղաքն ի Տումարծայի ձեռամբ անարժան Գրիգոր քահանայիս... ի թվին Հայոց ՌԻԱ. (1572) ի դուռն Ս. Աստուածածնին եւ Ս. Պետրոսին ի յԱռաջնորդութեան Ս. Ուխտիս Տէր Յովհաննէս Եպիսկոպոսին եւ զուսուցիչն իմ զԱստուածատուր վարդապետին...»:*

*Դ. Ճաշոց գրքի յիշատակարանն ալ գրեթէ վերնոյն նման է:*

*8. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. ՄՇԵՑԻ.*

*9. ՂԱԶԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ.*

*10. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԶԷՅԹՈՒՆՑԻ:*

*Ինչպէս Յովհաննէս Եպս. Հըզնեցին, նոյնպէս Աստուածատուր Եպս. Մշեցին, Ղազար եւ Զէյթունցի Յովհաննէս Եպիսկոպոսները 1550-1600 թուականներուն, յիսուն տարիներ, երբեմն Թօմարզայի Ս. Աստուածածին վանքի Վանահայրութեան եւ երբեմն Ս. Կարապետի վանքի Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնները կատարած են՝ ինչպէս կ՚երեւի ու կը հասկցուի վերի եւ այլ գրչագիր մատեաններու յիշատակարաններէն, զորս զանց ըրինք այստեղ յառաջ բերել:*

*11. ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԵՐԿԱՅՆԱՀԱՍԱԿ. Կը յիշատակուի ՌՀ. (1621), ՌՀԸ. (1629), ՌՀԹ. (1630), եւ ՌՁԱ. (1632) թուականներուն գրչագրուած երկու Աւետարաններու, Շարական եւ Յայսմաւուրքի մը յիշատակարաններու մէջ: Սա ընիկ Կեսարացի է, եւ կը կոչուէր «Երկայնահասակ» իր հասակին երկայնութեանը պատճառաւ, եւ մականուամբ ալ Եաղուպեան: Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը, անուանական կերպով կը սկսի 1600էն եւ կը շարունակուի թէեւ մինչեւ 1632, բայց ժամանակ մը Երուսաղէմի նուիրակութեան եւ այլ պաշտօններով զբաղած եւ 1602էն սկսեալ 24 տարիներու շրջանին մէջ ալ, երեք անգամներ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած է: Նախ՝ 1602-1608, երկրորդ՝ 1611-1620, եւ երրորդ անգամ ալ 1623էն մինչեւ 1626: Ինչպէս կ՚ըսուի՝ բաւականին գործունէութեամբ անցուցած է իր օրերն եւ եղած է նաեւ Տա-*

*ղասաց եւ հեղինակ այլեւայլ գիրքերու, որ բաւականին կարողութեան տէր մէկն է եղեր:*

*Իր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան երկրորդ շրջանին, 1612ին, Մովսէս Տաթեւացին վարդապետ ձեռնադրած է, Տաթեւացին՝ Տաթեւի կամ Ստաթեւի հռչակաւոր վանքին Վանահայր կարգուած, եւ վանքը կրկին շէնցնել ու կանոնաւորելէ ետքը, սկսած է քաղաքէ քաղաք, գիւղէ ի գիւղ շրջիլ քարոզութեամբ, որ մեծ համբաւ շահած ու ապա Կաթուղիկոս եղած է Ս. Էջմիածնի:*

*Գրիգոր Երկայնահասակի առաջին Պատրիարքութեան օրերուն, այն է 1603ին Կեսարիա իր ամբողջ թեմերով Սիսի վիճակէն զատուած, Ս. Էջմիածնին անցած է, եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուած:*

*Գրիգոր Երկայնահասակ վախճանած է ի Կ. Պոլիս 1636ին, եւ թաղուած է ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցին, իր եղբօր որդին Տէր Յակոբ քահանան գրած է անոր մէկ կենսագրականը, զոր դրած ենք մեր «Հայ Աշուղներուն» հաւաքածոյին Բ. հատորին մէջ, եր. 202:*

*Ահաւասիկ մեր ձեռքն անցած յիշատակարաններն.*

*Ա. Յայսմաւուրքի մը.*

*«...Եւ արդ, գրեցաւ սուրբ գիրքս ի թվականին Հայոց Ռ. եւ Հ. (1621), ի մայրաքաղաքս Կեսարիա որ է Մաժակ, ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնին [եւ սրբոյն Բարսղի հայրապետին, Սբ. Սարգսի զաւրավարին եւ Սբ. Միւռկերիոսի զինաւորին], ի Հայրապետութեան մերոյ Տեառն մեծ Րաբունապետի Գրիգորին, որ է պայծառ ջահն Հայաստանեայց Ազգիս [եւ ի բռնակալութեան սուլթան Օսմանին, ի դառն եւ ի նեղ ժամանակի, որ հարկապահանջութեամբ ազգս տապալի]...»[6]*:*

*Բ. Շարականի յիշատակարանին մէջ.*

*«...Որ ետ տարտամ գրչիս Պարսամի եւ Պըլպուլի հասանիլ ի վերջ մեծ Շարականիս, ի գաւառն Կեսարիոյ Կապադովկացոյ, ի գեաւղն Տումարզայ, ընդ հովանեաւ Ս. Պօղոսի եւ Պետրոսի, ի թվին ՌՀԸ. (1629), ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի Տեառն Մովսէսի Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, եւ ի Հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Գրիգոր Վարդապետի եւ յԱռաջնորդութեան այսմ գաւառի Գրիգոր Ծերուն Եպիսկոպոսի...»:*

*Գ. Յայսմաւուրքի մը յիշատակարանին մէջ.*

*«...Եւ արդ, գրեցաւ Ս. Գիրքս որ կոչի Յայսմաւուրք ի մայրաքաղաքս Կեսարիա, ընդ հովանեաւ Ս. Սարգսին եւ Ս. Աստուածածնին... ի թվականիս Հայոց ՌՀԹ. (1630) ի հայրապետութեան Տեառն Մովսէս Կաթողիկոսին, եւ ի յԱռաջնորդութեան այսմ քաղաքիս Կեսարու եռամեծի եւ քաջ Րաբունապետի Գրիգոր Վարդապետի...»:*

Դ. Շարականի մը յիշատակարանին մէջ.

«...Հասանիլ ի վերջին գիծ շարականիս, ի գաւառն Կեսարու Կապադովկացւոց, ի գիւղն Տումարզա, ընդ հովանեաւ Ս. Պետրոսի եւ Պաւղոսի եկեղեցւոյս... ի թվին ՌՁԱ. (1632), ի Հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Մովսէսի Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, եւ ի յԱռաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարու Գրիգոր վարդապետի, որ իբրեւ զանշիջանելի ջահ վառեալ է ի պայծառութիւն Հայ. եկեղեցւոյ, եւ ի յԱռաջնորդութեան Ս. Ուխտիս մերոյ Աստուածածնայ Առաքել Աբեղայի...»:

12. ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԿՈՒՏԻՆԱՑԻ. Այնպէս կ՚աւանդուի թէ, Գրիգոր Կեսարացիի Կ. Պոլսոյ Պատրիարքութեան միջոցներուն, Յակոբ Եպս. Կուտինացին Ս. Կարապետի վանքի Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին վրայ գտնուած է եւ կամ իբր փոխանորդ ղրկուած է Գրիգոր Կեսարացիի կողմէն:

Վանքի եկեղեցւոյ գանձատանը մէջ, Կիսախաչ գաւազան մը կայ սեւ փայտէ, որուն թեւին մէկ երեսը գրուած է. «ԿԱԶՄԵՑԱՒ ԳԱՒԱԶԱՆՍ ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՌԾԲ. (1603) ԹՈՒԻՆ»: Միւս երեսն ալ գրուած է. «Տ՛՛Ր Ա՛՛Ծ Յ՛՛Ս Ք՛՛Ս, ՈՂՈՐՄԵԱ՛ ԱՇԽԱՏՈՂԱՑ ՍՈՐԱ. ԱՄԷՆ»: Սոյն գաւազանը կը կարծուի թէ Յակոբ Եպս. Կուտինացիին է, եւ հետը բերած է վանքը եկած միջոցին:

13. ԹՈՐՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Սսեցի, կը յիշատակուի ՌՁԵ. (1636) թուականին գրչագրուած ձեռագիր Մ[իխայէլ] Ասորի գիրքի մը մասնաւոր յիշատակարանին մէջ: Ասոր պաշտօնավարութեան սկզբնաւորութիւնը կ՚երեւի 1635 թուականն է, եւ պաշտօնավարած է երկու տարի միայն, եւ 1637ին Կաթողիկոս ընտրուած է թէեւ Կիլիկիոյ Աթոռին, բայց չենք գիտեր ինչ պատճառներով կը յետաձգուի այդ թուականին, եւ ապա 1643ին կը նստի Աթոռը, Թորոս Բ. Սսեցի անունով:

Ահաւասիկ մեր վերը յիշած յիշատակարանը.

«...Ի Թվին ՌՁԴ. (1635) ամին, ի ժամանակս խարանազգեաց Տեառն Փիլիպպոսի վերադիտողի Ս. Աթոռոյն Էջմիածնայ եւ դիտապետութեան նահանգի Տանն Կիլիկիոյ Տեառն Ներսէսի Սեբաստացւոյ, եւ Առաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարիոյ, որ է Մաժագ հին, Տէր Թօրոս վարդապետին, որ յետոյ Կաթողիկոս եղեւ ի Սիս...»:

14. ԴԱՒԻԹ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՁԶ. (1637) թուականին գրչագրուած Ճաշոց գրքի եւ ՌՁԷ. (1638) թուականին Շարակնոցի յիշատակարաններուն մէջ: Սորա պաշտօնավարութիւնը կ՚սկսի 1637ին եւ երեք տարի միայն կը տեւէ:

Ճաշոց գրքի յիշատակարանին մէջ.

«...Ցանկ եւ յաւարտ հանել սուրբ եւ ցանկալի գիրքս, ձեռամբ անարհեստ գծողի Բարսեղ քահանային... ի Թուականութեան Հայկազնեան տոմարիս ՌՁԶ. (1637), ի Հայրապետութեան Սրոյ Տեառն Տէր Սիմէոն Կաթուղիկոսի, եւ յԱռաջնորդութեան այսմ նահանգի Կեսարու Արհիեպիսկոպոսի Դաւթի...»:

Շարակնոցի յիշատակարանին մէջ.

«...Աւարտեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց... ի գաւառն Կեսարու Կապադովկացւոց ի գեաւղն Տումարզա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Պետրոսի եւ Պաւղոսի եկեղեցւոյն... ի թվին ՌՁԷ. (1638), ի Հայրապետութեան Սրոյ Տեառն Սիմէոն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, եւ ի Հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Դաւիթ Եպիսկոպոսի եւ ի յԱռաջնորդութեան այսմ գաւառի Առաքել Եպիսկոպոսի մերոյ...»[7*]:

15. ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին սկզբնաւորութեան թուականն է 1640, եւ քսան տարիներ կը շարունակէ: Ասոր մասին զանազան գրչագիրներու մէջ յիշատակարաններ կան, որոնցմէ մէկը Յայսմաւուրքի մը յիշատակարանէն՝ մաս մը յառաջ կը բերենք այս տեղ.

«...Եւ ես՝ Թօրոս գրիչս... յաւարտ ածի զսուրբ գիրքս, որ կոչի Յայսմաւուր... եղեւ զրաւութիւն գրոյս ի ՌՃԷ. (1658) թուականին [Հայոց]... ընդ հովանեաւ Ս. եկեղեցւոյս որ [անուամբ] կոչի Ս. Աստուածածին, ի Հայրապետութեան Տեառն Խաչատուր Կաթողիկոսի, եւ ի յԱռաջնորդութեան առաքելաշնորհ արհի երջանիկ Րաբունապետին մերոյ Գրիգորի վարդապետին...» [վերահրատ.՝ ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 848-9]:

16. ՄԱՐԿՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԺԱ. (1662). ՌՃԻԲ. (1673), ՌՃԻԴ. (1675) եւ ՌՃԼ. (1681) թուականներուն գրչագրուած Ճաշոցի մը, երկու Աւետարաններու եւ Շարակնոցի մը յիշատակարաններու մէջ:

Մարկոս Եպս., ինչպէս կ՚երեւի նոյն յիշատակարաններէն, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը սկսած է 1661ին. եւ ինչպէս ուրիշ յիշատակարաններէ ալ կը հասկցուի, չի գիտցուիր ինչ պատճառներով, 1664 թուականին կը քաշուի Տէրէվանքի Ս. Սարգիս վանքը, ուր կը մնայ մինչեւ 1668 թուականին վերջերը եւ ուրտեղ Վանահայրութեան պաշտօն ալ կը կատարէ, եւ ապա կրկին անգամ կուգայ Ս. Կարապետի վանքը եւ իր պաշտօնին գլուխը կ՚անցնի, եւ կը շարունակէ մինչեւ 1682:

Ա. Ճաշոց գիրքին յիշատակարանէն.

«...Արդ, եղեւ զրաւ գրչութեան սորա ի գիւղն Տումարզայի, ձեռամբ... Յովակիմ քահանայի, ի դուռըն Ս. Աստուածածնին եւ Ս. Պետ-

*րոսի Պաւղոսի… ի Թուականութեան ՌՃԻԱ. (1672) եւ ի Հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Յակոբայ Կաթողիկոսի եւ ի Հայրապետութեան այսմ նահանգի Կեսարու Մարկոս Եպիսկոպոսի եւ յԱռաջնորդութեան այսմ գաւառի Առաքել Եպիսկոպոսի…»:*

*Բ. Աւետարանի յիշատակարանէն.*

*«…Եւ արդ գրեցաւ սա ի Թուին մեր ՌՃԻԲ. (1673), ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի Տ. Յակոբ Կաթողիկոսի, եւ ի Հայրապետութեան այսմ նահանգի Կեսարիոյ Մարկոս Վարդապետի, եւ ի յԱռաջնորդութեան այսմ գաւառի Ովակիմ Եպիսկոպոսի, ի գիւղն Տումարզա, ի դուռն Ս. Աստուածածնի եւ Ս. Պետրոս եւ Պօղոս եկեղեցւոյ…»:*

*Գ. Շարակնոցի յիշատակարանէն.*

*«…Գրեցաւ սա ի գեաւղն Տօմարզայ, ի դուռն Ս. Աստուածածնի, Ս. Պետրոսի եւ Պօղոսի… ի Թվին ՌՃԻԴ. (1675), ի Հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Յակոբ Կաթողիկոսի Հայոց, եւ ի յԱռաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարու Մարկոս Վարդապետի, եւ ի յԱռաջնորդութեան գաւառիս Յովակիմ Եպիսկոպոսի…»:*

*Դ. Աւետարանի մը յիշատակարանէն.*

*«…Եւ արդ, գրեցաւ սա ի Թուականիս մերոյ ՌՃԼ. (1681), ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնայ Տեառն Յակոբ Կաթուղիկոսի Հայոց, եւ ի Հայրապետութեան այսմ նահանգիս Կեսարու Մարկոս Վարդապետի, եւ ի յԱռաջնորդութեան մերոյ գաւառի Յովակիմ Եպիսկոպոսի…»[8]*:*

*17. ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԼԲ. (1683) Թուականին գրչագրուած ձեռագիր Յայսմաւուրքի մը յիշատակարանին մէջ հետեւեալ կերպով.*

*«…Արդ, գրեցաւ լուսազարդ մատեանս այս, որ կոչի Յայսմաւուրք… ի Հայրապետութեան Տեառն Եղիազար Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի յԱռաջնորդութեան այսմ նահանգիս (Կեսարու) Գրիգոր քաջ Րաբունապետին եւ արհի Եպիսկոպոսին եւ աստուածաբան վարդապետի…»:*

*Ուրիշ մէկ ձեռագրի յիշատակարանին մէջ ալ յիշուած է «անմեղուկ» յորջորջումով: Սա կ'երեւի միայն երկու տարիի չափ պաշտօնավարութիւն ունեցած է:*

*18. ԱՒԵՏԻՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԼԴ. (1685) Թուականին գրչագրուած ձեռագիր մատեանի մը յիշատակարանին մէջ: Ասոր համար աւանդաբար կ'ըսուի, թէ վանքին մէջ քանի չափ սենեակներ, եւ նաեւ ջրհոր մը շինել տուած է[9]*:*

*19. ՅՈՎՍԷՓ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԽԲ. (1693) գրչագիր մատեանի, եւ ՌՃԾԴ. (1705) գրչագրուած Աւետարանի մը, եւ այլ*

*անթուական յիշատակարաններու մէջ: Սա ընիկ Սարմսագլը անուն գիւղէն է եղեր Աման օղլու մականունով:*

*Ա. Աւետարանի յիշատակարանէն.*

*«...Եւ արդ, գրեցաւ սա ի թուականիս մերում ՌՃԾԴ. (1705), Յունիս ամսոյ ԻԳ... եւ ի Հայրապետութեան [Սբ. Էջմիածնայ] Տեառն Նահապետ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի հայրապետութեան այսմ նահանգի Կեսարիոյ Աման օղլու Յովսէփ Վարդապետի, ձեռամբ... Ղազար քահանայի... ի գիւղն Տումարզայ»:*

*Բ. Անթուական յիշատակարան մը.*

*«...Ստացող գրոյս եւ մատենիս հարց սրբոց կանոնաց եւ դատաստանագրոց, Կեսարացի Յովսէփ Րաբունեաց պէտս դիտապէտ նոյն եւս Կեսարոյս...»:*

*20. ԴԱՒԻԹ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԾԸ. (1709) թուականին գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին մէջ: Կ'երեւի սորա պաշտօնավարութիւնը տեւած է միայն մէկ տարի:*

*21. ՅՈՎՆԱՆ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ էֆքէրէցի, կը յիշատակուի ՌՃԿ. (1711) թուականին գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին մէջ, որ է.*

*«...Արդ, գրեցաւ Սբ. Աւետարանս ի թուաբերութեան Հայոց, յոբելեան քսան երեք ամ տասն (1160 = 1711), ի Հայրապետութեան Սբ. Էջմիածնի Տեառն Աղեքսանդրի Կաթողիկոսին, եւ Սրբոյ Երուսաղէմայ Տէր Սահակ սրբազան Հայրապետի, եւ ի յԱռաջնորդութեան յայսմ նահանգիս Կեսարիոյ Կապադովկացոց, ընդ հովանեաւ Սբ. Ստեփաննոսիս... եւ ըսպասաւոր Սբ. Կարապետիս Յովնան Վարդապետի միջնորդութեամբ, ձեռամբ Յարութիւն իրիցի ի գիւղն Եւքարացի...»:*

*22. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌՃԿԶ. (1717) եւ ՌՃԿԸ. (1719) թուականներուն գրչագրուած Աւետարանի եւ Սաղմոսի մը յիշատակարաններու մէջ, Սահակ Աստուածաբան Վարդապետ յորջորջումով: Ասոր օրովը 1717 Ապրիլ 26ին Ուրբաթ օր առաւօտեան արշալոյսին մեծ երկրաշարժ մը եղած է Կեսարիոյ մէջ, եւ քաղաքին գրեթէ մէկ քառորդը փլած, երեք հազարի մօտ անձեր ալ փլատակներու տակ մնացած են, եւ Ս. Կարապետի վանքն ալ բաւական մեծ վնասի ենթարկուած է:*

*23. ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ.*

*24. ԵՍԱՅԻ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ.*

*Կը յիշատակուին ՌՃՀ. (1721), ՌՃՀԳ. (1724), ՌՃՀԴ. (1725) թուականներուն գրչագրուած ձեռագիր մատեաններու յիշատակարանաց մէջ:*

*Այս երկու Առաջնորդներուն պաշտօնավարութիւնը, կ'երեւի հազիւ մէկ տարի մը միայն տեւած է, եւ Եսայի վարդապետն ալ քաշուած է Տէրէվանքի Ս. Սարգիս վանքը, ուր Վանահայրութեան պաշտօնով իր օրերն անցուցած:*

*Ահաւասիկ ՌճՀ. (1721) թուականին գրչագրուած Աւետարանի յիշատակարանը.*

*«... Եւ արդ գրեցաւ Սբ. Աւետարանս ի Թուականութեանս Հայոց ՌճՀ., ի Հովուապետութեան Սբ. Էջմիածնայ Տեառն Աստուածատուր Կաթողիկոսի, եւ Սբ. Երուսաղիմայ Տէր Գրիգոր եւ Յովհաննիսի Հայրապետի, եւ ի յԱռաջնորդութեան յայսմ նահանգիս Կեսարիոյ Կապադովկացւոց Յակոբ վարդապետի, ընդ Սբ. Կարապետիս եւ Սբ. Ստեփաննոսիս եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ կան...»:*

*Ահաւասիկ նաեւ Եսայի վարդապետի համար եղած յիշատակարանն.*

*«...Արդ, եղեւ գրաւ սորա ի Թվին հայոց ՌճՀԹ. (1730) Սեպտեմբեր ԺԲ., ի մայրաքաղաքն Կեսարիա, ի վանքն Սրբոյն Սարգիսի, եւ յԱռաջնորդութեան սորա Տեառն Եսայի Վարդապետի ճարտասանի եւ նորին յաշակերտի մեղսասէր գրչի Արութիւնի եւ մականուամբ Ատանացի...»:*

*25. ՊԵՏՐՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի ՌճՀ. (1721), ՌճՀԶ. (1727) եւ ՌճՀԷ. (1728) թուականներուն գրչագրուած ձեռագիր մատենից յիշատակարաններուն մէջ:*

*ՌճՀ. թուականին յիշատակարանն է.*

*«...Արդ, գրեցաւ... Սաղմոսարանս ի Թվականիս ՌճՀ. (1721), յամսեանն Հոկտեմբերի, ի հովուապետութեան Սբ. Էջմիածնայ Տեառն Աստուածատուր Կաթողիկոսի, եւ սրբոյ Երուսաղէմայ Տեառն Գրիգորի Սրբազանի, եւ յԱռաջնորդութեան յայսմ նահանգիս Կեսարիոյ Տեառն Պետրոս Աստուածաբան վարդապետի...»:*

*ՌճՀԷ. թուականին յիշատակարանն է.*

*«...Վերստին կազմեցաւ եւ նորոգեցաւ Սբ. Գիրքս ձեռամբ յՆւզաբացի Աստուածատուր Իրիցի, որ բազում ջանիւ նորոգեցաւ ի Թվ. Հայոց ՌճՀԷ (1728) եւ Սբ. Էջմիածնին վերադիտողին Տէր Կարապետ Կաթողիկոսի, եւ յԱռաջնորդութեան յայսմ Նահանգի Տ. Պետրոս Աստուածաբան վարդապետի...»:*

*26. ՄԱՂԱՔԻԱ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Կը յիշատակուի հիճրէթի 1142 (1729) թուականին տրուած պէրաթի մը, եւ այդ թուականին ալ Կեսարիոյ Դատաւորին կողմէ տրուած Հէօճճէթի մը մէջ «րահիպ Մաղաքիա Աբրահամեան» մականունով[10]*:*

*Այս պէրաթը եւ հէօճճէթը կը պահուին այժմ վանքի մասնաւոր գրադարանին մէջ՝ ուրիշ կարեւոր թուղթերու հետ:*

*27. ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Մականուամբ Սարաֆեան, որդին է բնիկ Ակնցի սարաֆ Ալեքսանի, ինքը ծնած է ի Կ. Պոլիս, այս պատճառներով, երբեմն Ալեքսանեան եւ երբեմն ալ Կոստանդնուպոլսեցի մականունները կը կրէր:*

*Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով Կ. Պոլսէն 1730 թուականին կուգայ ի Կեսարիա եւ կը յաջորդէ Մաղաքիա Եպիսկոպոսին, 1734ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի ի Ս. Էջմիածին Աբրահամ Կաթողիկոսէն եւ անորմէ «Շնորհալի» մակդիրը կը ստանայ օծման ատեն: 1737 թուականին Կ. Պոլիս կ'երթայ եւ տարի մը կը մնայ հոն, եւ 1738ին կը հրաժարի իր պաշտօնէն գրեթէ ութը տարիներ պաշտօնավարելով:*

*Ժամանակ մըն ալ Գաղատիոյ Առաջնորդական պաշտօն ստանալով՝ տարիի մը չափ ալ հոն կը մնայ, եւ 1739 կամ 1740 թուականին կը մեկնի Իտալիոյ կողմերը եւ բնակութիւն կը հաստատէ Լիվոռնայ քաղաքին մէջ, ուր կը վախճանի 1773ին եւ կը թաղուի տեղւոյն Ս. Գրիգորի Լուսաւորչայ եկեղեցւոյն մէջ, որուն վրայի տապանաքարին գրուածքն է:*

*«Սոփեստ Արշի Մարզից» Կաճառ,*
*Շնորհիւ Ռակերտ Եզակ Անճառ,*
*Արթուն Քարոզ Ծագաց Պատճառ*
*Ներհուն Եզերց Իմաստս Պատրաստ,*
*Ռաբուն Պարթեւ Կայտառ Ամօք,*
*Որպէս Ինքեան Երկնէր Դասուք*
*Գթած Սատար Սըրտիւ Ողոք*
*Ռետոր Կրթեալ Ազնիւ Վարուք,*
*Ի ծագ Ուղեալ Ռոպէն Կասեալ,*
*Հաւատ Պայծառ Իւրոյ Երգեալ,*
*Սարաս Որդւոյն Ողկոյզ Արբեալ*
*ԱԼԻՔՆ Սպառեալ Յայս Յարկ Նընջեալ*
*յամի տեառն ՌՋՀԳ. (1773) հոկտ. Բ. Յովհաննէս Նարտին պաշտօնեայ բանին Յօրինեաց վերին յարգանս իւր պետին»[1]:*

*28. ԱՒԵՏԻՔ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Եւդոկիացի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնն ստանձնած է 1734 թուականին, պաշտօնավարած է 10 տարիներ, վախճանած է 1744ին եւ թաղուած վանքի Ս. Եկեղեցւոյն արտաքին գաւիթը գտնուած ու Առաջնորդներու յատուկ, երկաթեայ վանդակաւոր փոքրիկ գերեզմանատան մէջ:*

---

[1] Ընդօրինակեցինք Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթէն, գրուածքին բառերու սկզբնատառերը կը կազմեն. «Սարգիս Շնորհալի Արքեպիսկոպոս Մեծի Կեսարիոյ Կապադովկեայ»: Այս թուականներուն կ'ըսուի նաեւ թէ, Ս. Կարապետի վանուց Առաջնորդ-Վանահայր եղած են Վրթանէս եւ Կարապետ Եպիսկոպոսներ, բայց մենք կատարեալ համոզում գոյացուցած չ'ըլլալով, կարգին մէջ չը դրինք:

*Աւետիք Եպիսկոպոսը մեծ գործունէութիւն մը ունեցած է իր Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին վրայ. բաւականին շէնքեր աւելցուցած է վանքին մէջ, իր մասին բաւականին յիշատակութիւններ կան այլ եւ այլ ձեռագիրներու եւ պաշտօնական թուղթերու մէջ. կը յիշուի նաեւ ՌՃՁԸ. (1739) թուականին գրչագրուած երկու ձեռագիրներու յիշատակարանաց մէջ եւս, որոնց մին՝ Աւետարան եւ միւսը՝ Յայսմաւուրք:*

*Աւետիք Եպիսկոպոսի օրովը վանքին մէջ 16 միաբան վարդապետներ կան եղեր, որոնց անուններն են՝ Դաւիթ վ., Սամուէլ վ., Յովհաննէս վ., Սարգիս վ., Կարապետ վ., Խաչատուր վ., Գրիգոր վ. Պէնտուցի, Սարգիս վ., Մարտիրոս վ., Աստուածատուր վ., Յարութիւն վ., Մատթէոս վ., Պետրոս վ., Պետրոս վ. Էֆքէրէցի, Կարապետ վ., Յարութիւն վ.: Առաջին Դաւիթ Վարդապետը, մեծ ու կարեւոր գործակցութիւն մը ունեցած է, իր հոգեւոր հօր՝ Աւետիքի հետ, եւ ապա Առաջնորդ-Վանահայր եղած:*

*Ա. Ձեռագիր Աւետարանի յիշատակարանէն.*

*«...Եւ արդ, գրեցաւ սա ձեռամբ անիմաստ գրչի եւ մեղսաթաւալ Արութիւն Ատանացի կոչեցեալ, ի քաղաքս Կեսարիա, ի ոտս սրբոյն Սարգիսի զօրավարի, ի թուականիս մերոյ ՌՃՁԸ. (1739), Նոյմ. ամսոյ ԻԱ. ի Հայրապետութեան Տեառն Ղազար Կաթողիկոսի, եւ ի յԱռաջնորդութեան յայսմ նահանգիս տեառն Աւետիք վարդապետի...»:*

*Բ. Յայսմաւուրքի յիշատակարանէն.*

*«...Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ... գրչի, Աստուածատուր իրիցի, ի թվականութեան Հայոց ՌՃՁԸ. (1739) ի գաւառն Կեսարիոյ, ի գիւղն որ կոչի յԵւգառայ, ի դուռն Սբ. Ստեփաննոսի Նախավկային... ի Հայրապետութեան Տեառն Ղազար Կաթողիկոսի, եւ ի յԱռաջնորդութեան յայսմ նահանգիս Աւետիք քաջ Րաբունապետին...»:*

*Վանքի եկեղեցւոյ գանձատան մէջ ձեռագիր բոլորագիր Խորհրդատետր մը կը պահուի, իր պատկերներով ու նկարներով շատ թանկագին գործ, նոյնին յիշատակարանին վերջերը գրուած են հետեւեալք, որ յարմար դատեցինք յառաջ բերել այս տեղ.*

*«...Լուսահոգի Աւետիք վարդապետիս / Ննջումն եղեւ ՌՃՂԳ. (1744) թուականիս, / Ամսեան Ժ. Հոկտեմբերիս, / Աւուր պատկերս չորեքշաբթիս, / Իսկ շարագրող տաղաչափիս, / Սարգիս նուաստ բանասիրիս, / Որ յիշման ձեր չեմ արժանիս, / Խնդրեմ ի ձէնջ մի ողորմիս, / Ի դառնացեալ ժամանակիս, / Թվին հազար հարիւրեկիս, / Իննսուն եւ չորս վերաբերցիս, / Հոսեաց աղբիւրս ի մէջ վանքիս... Արդ՝ աղաչեմ, եւ երես անկեալ հայցեմ զտեարսդ իմ՝ որք հանդիպիք սոյն սուրբ գրքիս, յիշեցէ՛ք զինքն, զբազմահոյլ աշակերտքն հանգուցելոյն, որք են կեն-*

*դանի վարդապետքն, այսք (որոնց անունները քիչ մը վերը դրած ենք միեւնոյն կարգաւ), եւ ես՝ Դաւիթ լոկ անուամբ՝ յետին բանասիրաց եւ կրտսեր վարդապետաց, գործակցութեամբ եղբարց իմոց՝ կացի նոյն բանի ըսպասու: Իսկ յիշեմք գյիշատակ հանգուցելոյն, ոյք են, նախապէս մեծագնոյ բազում ծախիւք անսահման Աղբիւր մի՝ չորրորդ անկեան, ի մէջ վանից գոյ, Գ. միևն ի տնտես տանն, միևն ժամուն գաւթին, եւ միևն հասարակաց, եւ միևն արտաքին դրան, մերձ կամուրջին, եւ պատեաց սաւսուելի՝ հիանալի անյագելի հրեշտակաց եւ մարդկան, դարձեալ հոտ անուշ բուրեալ մասունքն արծաթոյ մեծագնոյ, որ յառաջ ենթակայն ժանգեալ թէնէքէի մէջ էր ի հնումն, եւ յետ նորա, բազում ագարակ գնեաց, եւ բազում այգիս, կցորդեաց Ամլորդւոյ սահմանացն: Սայ է պատճառ կրօնից կարգադրութեանն, սայ է պատճառ Ս. Դանիէլի (վանք) շինութեանն. սայ է պատճառ բազում ոչխարաց պահեցողութեանն, եւ մաճոյ բանից՝ մինչեւ ցայժմ, նաեւս ի դէմ գերեզմանին հայոց փարախ մի ոչխարաց եւս շինեաց: Ամենեցունցդ ձեզ կեանք լիցի, մի հայր մեղայիւ գնայ յիշէք: Դարձեալ եւս շինեաց զհասարակաց միաբանիցն սեղանատուն սպիտակածեփիւք, սայ է պատճառն աթուին եւ ամպիոնին, սայ է պատճառ լայնաձիք մեծափառ սինիոյ սեղանն, ի մէջ վանից փոքր պարտէզն, սայ եղեւ առիթ, որ երբեմն երբեմն տրտմեալ աբեղայքն զուարճանան ի մէջ պարտէզին, ծաղկօք եւ այլ ի բերոյ որթովք: Այլ գոն բազում անօթեղէնք, որ ոչ թուեմք, երեքտասան գեղեցիկ շապիք՝ առիթ նա եղեւ, թէպէտ բազում յիշատակք, յետ վաղխճանին, եղեւ հիմնարկութիւն բանին, նա եղեւ...»:*

*Աւետիք Եպիսկոպոսի տապանաքարին վրայի գրուածքն է հետեւեալն:*

*«(Տ)ԱՊԱՆՍ ՄԻ ՈՔ ԽԱԽՏԵՍՋԻՔ, ԵԻ ԹԷ... ԱՆԴԳՆԻՔ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՋԻՔ, ՋՈՒԹԱՅԻ ԵՐԵՍՈՒՆ ԱՐԾԱԹԻ ՄԱՍՆ ԼԻՋԻՔ, ՆՋՈՎԻՒՔՆ ՄԱՐԱՆԱԹԱՅԻ ԿԱՄՕՔ ԱՌ ՁԵԶ ԱՆՁՆԵՑԻՔ. Է. Ա. Ս. Ա. Վ. Յ. Ե. Զ. Ջ. Ր. Ք. Ո. Կ. Ք. Ա. Ա. Լ. Ե. Դ. Ք. Զ. Է: Թոխաթցի Աւետիք վարդապետն է:*

*ԵՍ ՔՈ ԾԱՌԱՅ ԴԱԻԻԹ ՈՐԴԻ, / ԶՏԱՊԱՆՆ ՔՈ ԶԱՐԴԱՐԵՑԻ, / ՄԵՌԵԼՈՒԹԻՒՆԴ ՔՈ ՏԱՐԱԾԵՑԻ, / ԶԱԻԱՆԴԵԱԼ ԳԼՈՒԽԴ ՔՈ / ԼԱԼԱԳԻՆ ԴԻՄՕՔ ԸՄԲՌՆԵՑԻ, / ԵԻ ՆՍՏԵԱԼ ԱԹՈՌԴ ԿԱԶՄԵՑԻ / ԵԻ ԶՈՏԻԿԴ ԱՆՈՒՇ ՀԱՄԲՈՒՐԵՑԻ, / ԵԻ ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆԴ ՆԿԱՐԵՑԻ, / ՀԱՆԴԵՐՁ ԶԳԵՍՏԻՒՔԴ ԶԱՂԱՇԱՐԵՑԻ, / ՊԱՏԿԵՐ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ / ԵԻ ՁԱՅՆ ՍՐԲՈՅ ԱՄԼՈՐԴԻ, / ԱՆԴԵՐՁ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԽԱՉԻ, / ԶՔԵԶ ՊԱՀԱՊԱՆ ԿԱՆԳՆԵՑՈՒՑԻ, / ԲԱԶՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՔԴ ՆՄԱՆ ՀՈԳԵՏԱՆՆ ԿԱՆԳՆԵՑՈՒՑԻ, / ԶԴԱԻԹԱՑ ՈՐԴԱԾԻՆ ԳԱՆՁՆ ՆՈՑԱ ԲԱՇԽԵՑԻ... ԿԱՆԹԵՂՔ ՎԱՌԵՑԻ, ԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՂԱՏ ԵԻ ՃԷԻԻ ԸՌԱ ԱՌ ԵԻՍ ԶԴԱՆ ԿՑՈՐԴ ՍՈՑԱ ԱՐԻ [1745]: ՆԱ ԵԻՍ ԱՂԵՐՍ ԻՄ ԸՆԴ ՁԵԶ*

ՈՐ ՏԵԱՐՔ ԻՄ ԵՒ ԹԷ ՈՔ ՀԱՆԴԻՊԻ ՉՏԱՊԱՆ... ՁՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՅԱՂՕԹՍՆ ՅԻՇԵՍՋԻՔ ԵՒ ՁԵՁ Ի ՀՈՂՈՅ ԳՈՅԱՑԵԱԼ... ՕԾԵԱԼ Է»:

29. ԴԱՒԻԹ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Երեւանցի, յաջորդած է Աւետիք Եպիսկոպոսին, իր հոգեւոր ծնողին, 1745-6ին, որուն աշակերտած ու աշխատակցած ալ էր, եւ կը մականուանէր «Հայր Դաւիթ»:

Դաւիթ Եպս. կը պաշտօնավարէ 32 տարիներ մեծ գործունէութեամբ, եւ կը վախճանի 1778ին ու կը թաղուի իր հոգեւոր հօր՝ Աւետիք Եպս.ի քովը: Իր օրովը կը յիշուի նաեւ Յովնան վարդապետ մը, որ կ'երեւի թէ փոխանորդութեան պաշտօն վարած է:

Դաւիթ Եպս. կը յիշատակուի, ՌՄԳ. (1754), ՌՄԴ. (1755) եւ ՌՄԺԸ. (1769) թուականներուն գրչագրուած ձեռագիր մատենից յիշատակարաններու մէջ:

Ա. Ժողովածոյ գրքի մը յիշատակարանէն.

«...Արդ, գրեցաւ... ձեռամբ յԵւքառացի Տէր Յովհաննէս անարժան Իրիցու... ի թուահաշուութեան մերում ՌՄԳ. (1754), ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի Աղեքսանդր Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի յԱռաջնորդութեան նահանգիս մերոյ Տէր Դաւթի Արքեպիսկոպոսի...»:

Բ. Շարականի մը յիշատակարանէն.

«...Աւարտեցաւ եղանակաւոր տաղս որ կոչի Շարակնոց... ի գաւառս Կեսարու Կապադովկացոց ի գեօղն յԵւգառայ... ի թվին ՌՄԴ. (1755), Յուլիս ամսոյ ԺԵ., ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի Տեառն Աղեքսանդրի Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի յԱռաջնորդութեան Նահանգիս Տեառն Դաւթի Արքեպիսկոպոսի...»:

Գ. «Անտառ նորագոյն մտածմանց» յիշատակարանէն.

«...Ի Թուականիս մերում ՌՄԺԸ. (1769), Յունվարի ԺԸ., ի Հայրապետութեան Ամենայն Հայոց Տեառն Սիմէօնի Ս. Կաթողիկոսին... ի Պատրիարքութեան Ս. Սաղիմայ եւ մեծին Պոլսոյ Տն. Կարապետի եւ Գրիգորի Աստուածաբան վարդապետացն եւ վերատեսչութեան քաղաքիս Կեսարիոյ Տն. Դաւթի ճգնազգեաց վարդապետի, ի նորակազմ գիրս այս որ կոչի Սէր Աստուծոյ, Կեսարացի զՅակոբ չնչին Երէցս, զոր կազմեցի զսա...»:

Դաւիթ Եպիսկոպոսի տապանաքարին վրայի գրուածքն է.

«ՍՐԲԱԶԱՆ ԴԱՒԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ., ՅՈՎՀ. ՎՐԴ., ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԷՎՔԷՐԷՑԻ, ԳՐԻԳՈՐ ՎՐԴ., ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ., ԵՐԿՐՈՐԴ ԳՐԻԳՈՐ ՎՐԴ., ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ., ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ., ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ., ՊԵՏՐՈՍ ՎՐԴ., ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ., ՌՄԻԷ. [1778]:

ՅԷՍԵԱՆ ՈՐԴԻՈՅ Ո ՀՈԳԵԽՕՍ ՔՆԱՐ՝ ԳՈՎԻՉ ՎԵՀԱԶԱՆՑ,
ԵԿ ԱՍՏ ԴՐՈՒԱՏԵԼ՝ ՔՈՒՄ ԱՆՈՒԱՆԱԿՑԻ՝ ՆԵՐԲՈՂ ԳԵՐԱԶԱՆՑ,
ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏԻՐ՝ ՀՈՎՈՒԱՊԵՏ ԱՐԹՈՒՆ՝ ՈՐ ԱՍՏ ՀԱՅԿԱԶԱՆՑ,

*Ի ՊԱՐՍ ԴԻՏԱՑ՝ ՍՐԲԱԶԱՆ ԴԱԻԹԻ՝ ՊԵՏԻ ՄԻԱՆՁԱՆՑ,*

*ՅԵՌԵԱԼ ՊՍԱԿ ՄԵԶ՝ ՄԵԾ ԵՐԵԻԱՆԱՑ՝ ԼՈՒՍԱՍՓԻՒՌ ԱԿԱՆՑ,*

*ԴԱ ԶՎԵՀԱՎԱՅՐՄ ԵԼԻՑ ԲԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՄԵԾԱԳՈՐԾ ԱՐԴԵԱՆՑ.*

*ԻԲՐ ՁԻԹԵՆԻՈՑ՝ ՕՐՀՆԱԲԵՐ ԸՆՁԻՒՂՄ ՍՈՒՐԲ ՀԱՐՑ ՄԵՏԱՍԱՆՑ*

*ՏԱԾԵԱԼ ԸՆԴ ԹԵԻՕՔ՝ ԽՄԲԷ ԵՒ ԶԾԱՂԿՈՒՆՄ ՄԻԱԲԱՆ ՄԱՆԿԱՆՑ.*

*Է ԵՒ ՄԻԱԿ ՊԱՏՃԱՌ՝ ՔԱՌԱՎԱԶ ԱՂԲԵՐՑ՝ ՋՐՈՑՆ ՀՈՍՄԱՆՑ.*

*ՆՄԱՆ ԵԴԵՄԱՑ՝ ՊՃՆԷ ԶԱՅԳԵՍՏԱՆՄ Ի ՏԵՍԻԼ ԱԶԱՆՑ.*

*ՈՐՈՑ Է ՇՔԵՂ՝ ՓՈՔՐ ՍԵՂԱՆՏԱՆ՝ ԿԵՐՏՈՒԱԾ Ի ՀԻՄԱՆՑ.*

*ԻԻԻՍԵԱԼ ԸՆԴ ՆՄԻՆ՝ ՇԷՆՍ ՇՐՋԱԿԱՅՍ ԵՒ ԶՓԱՌԱԽ ԳԱՌԱՆՑ.*

*Ի ԿԱՏԱՐ ԳՈՐԾՈՑ՝ ԱՊԱ ՀՐԱՒԷՐ՝ ՀԱՍԵԱԼ Ի ԲԱՐՁԱՆՑ.*

*ՐԱՄԻՑ ԶՈՒԱՐԹՆՈՑ՝ ՍՐԲԱՍՆԵԱԼ ՀՈԳԻՆ ՍԼԱՑԵԱԼ ԷԱՆՑ.*

*Ի ՊԱՀ ԹՈՂԵԱԼ ԱՍՏ՝ ՄԱՔՐԱՓԱՅԼ ՄԱՐՄԻՆՆ՝ ՕՐՀՆԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՐԱՆՑ»:*

*30. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Թալասցի, մականուամբ Գարամանեան, երբեմն նաեւ իր հօրը անունով Յովհաննէսեան: Յաջորդած է Դաւիթ Եպիսկոպոսին անոր կենդանութեան ժամանակ 1776 թուականին: Պաշտօնավարած է 22 տարիներ, իր աշխատութեամբ եւ ջանիւք շինուած է ի հիմանէ, վանքի այժմեայ Ս. Եկեղեցին, որ յանուն Ս. Հրեշտակապետի է. կատարած է նաեւ այլ եւ այլ շինութիւնք, իրեն միշտ գործակից ունենալով Մունճուսունցի Ստեփան վարդապետն, եւ որ իրեն հետ Ս. Էջմիածին տարած եւ միասին եպիսկոպոս ձեռնադրուած են:*

*Վանքին մէջ փոքրիկ վարժարան մըն ալ բացած է դպրաց եւ ժառանգաւորաց յատուկ, եւ հաւաքած է 8-10 աշակերտներ, գրագրութեան եւ ուսուցչութեան պաշտօնները կը կատարեն եղեր Կարապետ, Մանուէլ եւ Զաքարիա վարդապետները:*

*Մատթէոս Եպս. վախճանած է 1798ին եւ թաղուած է եկեղեցւոյ ներքին գաւթին մէջ ինչպէս առաջ ալ ըսինք: Իր տապանաքարին վրայի արձանագրութիւնն է.*

*«ԵՂԵԱԼՆԴ Ի ՅԱՅՍՄ ՇԻՐՄԻՍ*

*ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐՀԻ ՊԵՏԻՍ*

*ՆՈՐ Ի ՆՈՐՈՅ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ*

*Ի ՀԻՄԱՆԷ ԿԱՌՈՒՑՈՂԻՍ*

*ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՍՈՅՆՈՅ ՏԱՌԻՍ*

*ՄԻ ՀԱՅՐ ՄԵՐԻՒ ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻՍ*

*ՀԱՆԳՁԻԼ ՀԱՆԳԻՍՏՆ ՅԱԻԻՏԵՆԻՍ*

*ԼՈՒՍԵՂԻՆԱՑ ՍՐԲՈՑ ԳՆԴԻՍ [երգը-մ՝ դասի] գնդի]*

*ԹՈՒԻՆ ՌՄԽԷ.ԻՆ [1798]»:*

*31. ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Մունճուսունցի, մականուամբ Օֆլազան, յաջորդած է Մատթէոս Եպս.ին 1798ին, ինչպէս ըսինք իր վարդապետութեան ժամանակ ալ գործակից էր անոր. եւ իրեն հետ ալ եպիսկոպոս ձեռնադրուած էր: Պաշտօնավարած է 27 տարիներ մեծ ու գնահատելի գործունէութեամբ:*

*Ստեփան եպս.ի օրով է, որ Կ. Պոլսոյ նշանաւոր գերդաստաններէն Տիւզեանց երեք եղբայրներն, Կարապետ, Յակոբ եւ Պօղոս ամիրայք, Ս. Կարապետի վանքը աքսոր կուգան Սուլթան Մահմուտի օրով, որոնք մեծ պատիւներ կը տեսնեն Ստեփան Եպս.էն եւ շատ հանգիստ կ՛ընեն վանքին մէջ երեք տարիներ: Եւ երբ Գազազ Յարութիւն Ամիրայի միջնորդութեամբ հրաման կ՛ելլէ, կը մեկնին Կ. Պոլիս:*

*Մեկնելու միջոցնին, իրենց բնակած յարկաբաժնի մէկ սենեկի պատի ծեփին վրայ կը գրեն հետեւեալ ոտանաւորը:*

*«Յիշատակարան սենեկիս երից*
*աքսորականաց, Կարապետի, Յակովբայ*
*եւ Պօղոսի, Յամի Տեառն*
1823 ի Մարտի 18

*Յարափոփոխ՝ եւ կոյր բաղդին՝ թելադրելով,*
*Մեր հայրենիք՝ վտարեցին՝ զմեզ ազգով,*
*Մեր բարեկամք՝ ո՜հ մոռացան՝ սերտ կարծեցեալք.*
*Մե՜զ ոտընհարք՝ մե՜զ հալածողք՝ երախտընկալք:*
*Դու ո՞վ սենեակ՝ հաւատարիմ՝ բայց մեզ անծան,*
*Տարագրելոցս՝ եղեր սիրով՝ ասպնջական,*
*Մոռացուցիր՝ յոտարութեա՞ն՝ իցեմք բնաւ,*
*Ահա՜ մեկնիմք՝ այսօր ի քէն՝ մնա բարեաւ:*
*Սակայն անջինջ՝ քո յիշատակ՝ ցօրհաս մահու,*
*Զի եռամեայ՝ եղեր առ մեզ՝ հիւրընկալու,*
*Ծանեար զմեզ՝ ընդ յոգնադէմ՝ մարդկային… ախտ,*
*Զիք այն ի մեզ՝ բարեմոռաց՝ կեղտ ապերախտ:*
*Լե՜ր դու անկեղծ՝ սրտի մերոյ՝ թարգման արդար,*
*Առ Ստեփաննոս՝ Արհի տեսուչ՝ միշտ ազդարար,*
*Ըզմեր առ նա՝ յիշեա՜ կրկնեա՜, ըզգոհութիւն,*
*Զորդիական՝ ըզմեր գորով՝ ըզյարգութիւն:*
*Լուան երկինք՝ երկնապաղատ՝ իւր արտասուաց,*
*Կոչեմք ահա՝ այսօր ի յարկ մեր անձկալեաց,*
*Նոյն օճանաւ՝ յուսամք յապայս՝ մեզ զօրանալ,*
*Ըզմեր առ նա յայտնել արդեամբք սիրտ շնորհակալ»:*

*Հատ մըն ալ գրած են ուղղեալ Տ. Ստեփան Եպիսկոպոս Առաջնորդ-Վանահայրին, որուն օրինակն ալ հետեւեալն է.*

*«Ամենապատիւ եւ Գերապատիւ Տէր.*
*Բաղդն նենգող անագորոյն,*
*Յետ քեցելոյ զմեզ ուրոյն,*
*Ի մեր ծնողաց գորովաշատ,*
*Իւր դաւնութիւն ո՛չ ասաց չատ:*
*Յայտնի եւ գաղտ չինեաց ընդդէմ,*
*Ո՛չ թշնամիս խոժոռադէմ,*
*Այլ սիրելի՛ս բայց բանսարկուս,*
*Դիւրամոռա՛ց երախտաւուս:*
*Ջէ առ յագուրդ գերել գերփել,*
*Ջմեր դարպաս զմուտ եւ զել,*
*Այլ եւ եհար դիզեալ տիգաւ,*
*Ջսիրտ զլեարդ արիւնթաթաւ:*
*Վէ՛րք անկարկատ ըսպի՛ անբոյժ,*
*Մինչ ի տապան մեր մահագոյժ,*
*Յերից քշտեալ հարազատաց,*
*Բայց ոչ չիջաւ սիրտ մարդատեաց:*
*Վարեաց զմեզ յաշխարհ ի տար,*
*Ջի մի՛ առցուք ինչ մխիթար,*
*Գէ՛թ նշխարիւք ազգատոհմիս,*
*Նշխա՛րք սիրունք քան ըզմեր ոգիս:*
*Բայց տեսչութիւն զմեր մեղաց,*
*Ջարդար պատիժ տարեալ ի բաց,*
*Եբեր յանձնեաց յայս դէպ ձախող,*
*Հօրըդ գթած ի գիրկ գըգւող:*
*Որ հայրաբար գըրկեալ զմեզ,*
*Թէ եմք նշդեհ՝ մոռացայց մեզ,*
*Իւր քաղցրութիւն սիրամատոյց,*
*Ըզմեր բաժակ ամոքեցոյց:*
*Նոյն տեսչութիւն ձեր հայցուածօք,*
*Կարապետին եւ սքանչելեօք,*
*Որ աստ ի վանս առ ձեզ ննջէ,*
*Ի հայրենիս ըզմեզ կոչէ:*
*Բայց մեծ մորմոք սիրտք մեր զգան,*
*Վասն առ ի ձէնջ մեր բաժանման,*
*Խընդրեմք առնուլ սուղ զայս ըզքարտ.*
*Անլուռ արձան երախտապարտ:*
*Յուսամք մեք յաջ ամենազօր,*
*Ջեօք պարգեւել մեզ կար եւ օր,*

*Արդեամբք յայտնել՝ ո՛չ գըգուեցիք,*
*Անչնորհ՝ որդիս անարգասիք:*
*Ձերումդ Ամենապատիւ եւ Գերափառ տէրութեանդ ամենախոնարհ ծառայք՝*

| | |
|---|---|
| *Ի Կեսարիա* | *Կարապետ Տիւզեան,* |
| *ի վանս Ս. Կարապետի* | *Յակոբ Տիւզեան,* |
| *1823 ի Մարտ 18* | *Պօղոս Տիւզեան»:* |

*Այս գրութեանց փոխադարձ կը պատասխանէ, թէ սենեկի կողմէն եւ թէ գրեթէ Ստեփան եպիսկոպոսի կողմէն, վանքի այն ժամանակուայ գրագիր Պետրոս վարդապետը, հետեւեալ կերպով:*

*«Պատասխանին սենեկի առ ընծայեալ յիշատակարանս գերազնիւ Զէլէպիյից*

*Թելադրելով կուրի բաղդի բնականաբար,*
*Ձեզ պատուադիրք տարագրեցին անարգաբար,*
*Յիրաւի ո՛հ սերտ բարեկամք յոյժ մոռացան*
*Երախտընկալք ձեզ ոտնահարք երեւեցան:*
*Սակայն բարիք ձերոց նախնեաց ի յուշ եկեալ,*
*Ըզտեսչութիւն վերին առ ձեզ ի գութ շարժեալ:*
*Թէեւ հանեալ ի հայրենեաց յոյժ հեռացոյց*
*Սակայն ի տան Սուրբ Մկրտչին բնակեցոյց:*
*Ոսոխն չար թէ զսիրտս ձեր վիրաւորեաց,*
*Անծան սենեակս ըստ իւր կարի մխիթարեաց:*
*Ուստի յաւէտ զուարճացոյց զխս բաւական,*
*Յարդարելով ձեզ դիւցազանց բնակարան,*
*Զի կանխագոյն ես վարժարան էի կարգեալ,*
*Բայց մախանօք չարին յորմէ էի զըրկեալ:*
*Ի ներկայիս ձեօք պանծացայ լիաբերան,*
*Զի եռամեայ զձեզ գըգուելոյ եղէ արժան:*
*Այլ ցաւ է ինձ, զի ձեզ արժան ո՛չ շարժեցայ,*
*Զայն քաջ գիտէք զի չէր սրտիւ այլ յակամայ:*
*Յաւէտ քան զայն զխս աստանօր սուգ պաշարէր,*
*Ի մեկնիլ ձեր թէ սէրն անեղծ ոչ մնայցեր:*
*Բայց քաջ ծանեայ ո՛չ գոլ ի ձեզ կեղտ ապերախ,*
*Զյիշատակ ձեր յիս կրելով լինիմ ուրախ:*
*Եւս իմ անկեղծ սրտի ձերոյ թարգման հզօր,*
*Յիշել կրկնել զբարութիւն ձեր հանապազօր:*
*Առ Ստեփաննոս Արհի տեսուչ հաստչին իմոյ,*
*Այլ եւ համայն միաբանից ուխտին իմոյ,*

*Որք յարաժամ մաղթեն բարեօք ձեզ զօրանալ.*
*Քաջ գիտելով զի ոչ ունիք զիս մոռանալ:*
*Կարապետին սրբոյ Հայցմամբ փայլիլ ի կեանս,*
*Ջերամս նորին գըգուել սիրով մինչ յաւիտեանս,*
*Ի նուաստ գրագիր, Պետրոս վարդապետէ*
*Ի 1823 յամի Տեառն եւ Յուլիսի 3,*
*Ի Հրաշալի վանս Ս. Կարապետի Կեսարիոյ»:*

*Եւ յիրաւի, երբ կը մեկնին ու կը հասնին ի Կ. Պոլիս, ալ այնուհետեւ երբեք չեն մոռնար վանքը, նոյն տարին իսկ Առաջնորդը կը հրաւիրեն եւ իրենց տան մէջ կը հիւրընկալեն ու կը պատուեն երեք ամիսներ, եւ մանաւանդ վանքը կը ճոխացնեն իրենց յիշատակներով ու նուէրներով:*

*Ստեփան եպիսկոպոսի օրով, վանքին մէջ կան եղեր հետեւեալ միաբան վարդապետները: 1. Աւետիս Եպս. Մունճուսունցի, 2. Զաքարիա Վրդպ. Կէմէրէկցի, 3. Յարութիւն Վրդպ. Էֆքէրէցի, 4. Յովհան Վրդպ. Թօխաթցի, 5. Յակոբ Վրդպ. Գաղատացի, 6. Պետրոս Վրդպ. Թալասցի, 7. Յովհաննէս Վրդպ. Կեսարացի, 8. Կարապետ Վրդպ. Թալասցի, 9. Աւետիս Վրդպ. Վանեցի, 10. Փիլիպպոս Վրդպ. Թամզարացի, 11. Կարապետ Վրդպ. Էվէրէկցի, 12. Պօղոս Վրդպ. Էվէրէկցի, 13. Յակոբ Վրդպ. Էվէրէկցի, 14. Կարապետ Վրդպ. Կեսարացի, 15. Կարապետ Վրդպ. Գարապաղցի, 16. Յարութիւն Վրդպ. Կ. Պոլսեցի, 17. Գաբրիէլ Վրդպ. Կեսարացի, 18. Սարգիս Վրդպ. Թալասցի, 19. Սարգիս Վրդպ. Թօմարզացի:*

*Ստեփան եպիսկոպոսը վախճանած է 1824ին վերջերը, եւ թաղուած է նոյնպէս եկեղեցւոյ ներքին գաւթին մէջ, Մատթէոս Եպս. ի գերեզմանին քովը: Տապանաքարին վրայի գրուածքն է հետեւեալը:*

*«ՀՐԱՇԱԼԻ ՈՒԽՏԻՍ ՊԱՏՃԱՌ ՆՈՐՈԳՄԱՆ,*
*ՎԵՀԱՆՋՆԵԱՑ ԲՆՈՒԹԵԱՄԲ ԷՐ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ,*
*ՀԱՅՐ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱԻԵԼ ՆՄԱՆ,*
*ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԵՏ [ըԳր–մ՝ ՏԷՐ ] ՏԷՐ] ԱՐՀԻԱԿԱՆ:*
*ՎԱՍՆ ԵՐԱԽՏԵԱՑ ԱՐԺԱՆԻ ՅԻՇՄԱՆ,*
*ՈՐՔ ՀԱՄԲՈՒՐՈՎ ԱՍՏ ԱՄՓՈՓԵՑԱՆ,*
*ԶԻ ՈՐՔ ՄՏԱՆԵՆ ՅԱՅՍ ՍՈՒՐԲ ՔԱՒԱՐԱՆ.*
*ՄԻՈՎ ՀԱՅՐ ՄԵՐԻԻ ՋՈՂՈՐՄԻՍ ԿԱՐԴԱՆ,*
*Ի ԹԻԻ ՀԱՅՈՑ ՌՄՀԳ. [1824] Ի ՆՈՅԵՄԲ. Ա. [ըԳր–մ՝ ՌՄՀԳ. ի Նոյեմբ. ԻԸ.]»:*

*32. ԱՒԵՏԻՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Մունճուսունցի, կը յորջորջուի նաեւ «Հայր Աւետիս»: Յաջորդած է Ստեփան Եպիսկոպոսին 1825 թուականին, չորս տարի միայն պաշտօնավարելէ ետքը, վախճանած է*

1829 Ապրիլ 14ին, թաղուած է վանքի մէջ Առաջնորդաց յատուկ փոքրիկ գերեզմանատան մէջ:

Իր չորս տարուան պաշտօնավարութեան մէջ, բաւական նշանակելի գործունէութիւն մը ունեցած է:

Տապանաքարին վրայ եղած արձանագրութիւնն:

«ԱՀԵՂ ՎՃԻՌ ՎԵՐԻՆ ԿՈՉՄԱՆ,
ՀՐԱԻՐԵԱՑ ԶԻՍ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ,
ՏԷՐ ԱԻԵՏԻՍ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ,
ԶՈՐԵՔԱՄԵԱՑ ԴԷՏ ՀՈԳԵԿԱՆ:
ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՍՐԲՈՅ ՏԵՂԻՈՅՍ,
ԳԵՐԵԶՄԱՆԻ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅՍ,
ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻ ՆՆՋԵՑԵԼՈՅՍ,
ԶԻ ՀԱՆԳԻՑԷ ՅԱՐԿ ՎԵՐՆԱԼՈՅՍ,
ՌՄՀԸ. [1829] ԱՊՐԻԼ ԺԴ.»:

33. ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Գաղատացի, մականուամբ Աճէմեան, երբեմն Աւետիքեան եւ երբեմն ալ Աստուածատուրեան: Յաջորդած է Աւետիս Եպս.ին 1829 Յունիս 15ին, որ ատեն վարդապետ էր: Եպիսկոպոս ձեռնադրուած է ի Ս. Էջմիածին 1838 Նոյեմ. 6, Կիրակի օր:

Իր պաշտօնավարութիւնը թէեւ մեծ գործունէութեամբ անցած է, եւ սակայն բաւականին չարչարուած է ծանօթ Մանուկեան-Ֆրէնկեան կուսակցութեան երեսէն: Այս միջոցներուն տարի մը Մատթէոս անուն վարդապետ մը, երկու տարի Սեբաստացի Յովհաննէս վարդապետ մը, տարի մը Իսրայէլ անուն վարդապետ մը, տարի մը Մինթանճեան-Սուքիասեան Մեսրոպ վարդապետը, տարի մը Էվէրէկցի Հանէսեան Յակոբ Եպիսկոպոսը, իրարու վրայ, թէ վանք եւ թէ Կեսարիոյ մէջ նստած, փոխանորդութեան, կամ թէ ըսենք Առաջնորդութեան պաշտօններ վարած են եւ հետզհետէ մեկնած, այսուամենայնիւ ինքը Յակոբ Եպիսկոպոսն ալ առանց ձգելու իր պաշտօնը, առանց մեկնելու վանքէն, շարունակած է իր պաշտօնը, պաշտպանութեամբ Կիւլպէնկեան Կիւլապի չէլէպիի, նոյն իսկ յիշեալ վարդապետներու փոխանորդ կամ Առաջնորդութեան ժամանակներն ալ:

Յակոբ Եպիսկոպոսի այս հալածման եւ չարչարանքի միջոցներուն եւ այդ պատճառաւ, վանքը երկու երեք անգամներ պարտքի տակ ինկած է, առաջին անգամ պարտքը 100 հազար ղուրուշ վճարուած է բարեյիշատակ Գազազ Յարութիւն Ամիրայի կողմէն, երկրորդ անգամին վճարուած է վանքի սեփական անօթ եւ արծաթներով, իսկ երրորդ անգամին պարտքը վճարած է Թալասցի Յակոբ էֆէնտի Պէյլէրեանը:

Գազազ Յարութիւն Ամիրայն վանքի պարտքը վճարելէն զատ, շատ մեծ քանակութեամբ նուէր ու յիշատակներ ըրած է վանքի եկեղեցւոյն,

*որոնց ցանկը արձանագրուած եկեղեցւոյ գանձատան յատուկ տոմարին մէջ մի առ մի եւ մանրամասնաբար: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:*

*Վանքի ուխտաւորաց թաղին մէջ. «Նոր թաղը» որ 14 սենեակներով է, Յակոբ Եպս.ի օրովը շինուած է, նոյն իսկ իր եւ իր քրոջ ծախքով, որ արդէն յիշած ենք:*

*Յակոբ Եպս.ի օրովն ալ հետեւեալ միաբանները կը գտնուէին վանքին մէջ: 1. Յակոբ Եպս. Հանէսեան Էվէրէկցի, 2. Յովհաննէս Վրդպ. Մարկոսեան Կեսարացի, 3. Աւետիս Վրդպ. Պետրոսեան Վանեցի, 4. Փիլիպպոս Վրդպ. Պօղոսեան Թամզարացի, 5. Կարապետ Վրդպ. Ծարուկեան Էվէրէկցի, 6. Ղուկաս Վրդպ. Աբրահամեան Կէրմիրցի, 7. Պօղոս Վրդպ. Տէր Թօրոսեան Էվէրէկցի, 8. Սարգիս Վրդպ. Գալայճեան Թօմարզացի, 9. Եղիա Վրդպ. Ծընճըղեան Էֆքէրէցի, 10. Մարտիրոս Վրդպ. Գաբրիէլեան Թօմարզացի, 11. Կարապետ Վրդպ. Կեսարացի, 12. Յակոբ Վրդպ. Աբրահամեան Կէրմիրցի, 13. Գրիգոր Վրդպ. Առաքելեան Պէլէկիսիցի, 14. Դաւիթ Վրդպ. Գաղատացի, 15. Յովհաննէս Վրդպ. Նէվրուզեան Էվէրէկցի, 16. Մեսրոպ վրդպ. Խօրօզեան Պէլէկիսիցի:*

*Յակոբ Եպս. 36 տարիներ պաշտօնավարելէ ետքը վախճանած է 86 տարեկան հասակին մէջ, 1865 Ապրիլ 5ին եւ թաղուած է առաջնորդաց յատուկ փոքրիկ գերեզմանատան մէջ, իր տապանաքարին վրայի գրուածքն է հետեւեալն.*

*«Ի ԳԱՂԱՏԻՈՅ ՏՈՒՆԿ ԲԱՐԵՁԱՆ,*
*ԲՈՂԲՈՋԵԱԼ Ի ՄԵԾ ՋԱՐՄԷ ԱՃԷՄԵԱՆ,*
*ԱՄԲԱՐՁԵԱԼ ՏԷՐԱՄԲ ՅԱԹՈՌ ԿԵՍԱՐԵԱՆ*
*ՏԷՐ ՅԱԿՈԲ ԱՐՀԻ ՎԵՀ ՄԵՐ ՍՐԲԱԶԱՆ,*
*ՓԱՅԼԵԱԼ ՃՈԽ ԱՐԴԵԱՄԲ ՅԱՅՍ Ս. ՄԵՆԱՍՏԱՆ*
*ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾՈՎՔ ՋԱՆԱՁԱՆ,*
*ՅԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ԱՄԻ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ,*
*ՓՈԽԵՑԱՒ ՅԱՍՏԵԱՑ ՅԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐԱՆ,*
*ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Ի ՀԱՍԱԿԻ ՈՒԹՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ԱՄԱՑ*
*1865 ԵՒ ԱՊՐԻԼ 5 ՅՕՐ ՄԻԱՇԱԲԱԹԻ*
*ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ»:*

*34. ԵՂԻԱ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Էֆքէրէցի, մականուամբ Ծընճըղեան, կամ Դերձակեան, կամ հօրը անունով Սէֆէրեան, յաջորդած է Յակոբ Եպիսկոպոսին 1865ին, որ ատեն դեռ վարդապետ է եղեր, եւ տարիներ վերջը ստացած է եպիսկոպոսութեան աստիճանը ի Ս. Էջմիածին, 1879 Մայիս 29ին Գէորգ Դ. Վեհափառ Կաթողիկոսէն:*

*Ճշմարտութիւնը խոստովանելու համար, ըսենք, թէ որ եւ է նշանակելի գործ մը ունեցած չէ, վանքը բոլորովին երեսի վրայ ձգած, ինքն*

*ալ հանդարտ կը նստի եղեր վանքին մէջ, վանքը գրեթէ աւերակ դարձած է իր օրովը: Թէեւ գործունեայ մէկը չէ եղեր, այսուամենայնիւ իրօք շատ մաքրակրօն մէկն է եղեր, մանաւանդ զուգադիպութեամբ ծնած է Մայիս ամսոյ մէջ, Վարդապետ եղած է Մայիսին, Առաջնորդ եղած է նոյնպէս Մայիսին, Եպիսկոպոս ձեռնադրուած է Մայիսին եւ վախճանած է նաեւ Մայիս 8ին 1886 Թուականին, Թաղուած է Առաջնորդաց յատուկ գերեզմանատունը, իր Տապանաքարին վրայի գրուածքն է.*

*«ՌՄԿ. (1811) ԾՆՈՒՆԴ ՄԱՅԻՍ,*
*ԸՆՏՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ 1865 ՄԱՅԻՍ*
*ՁԵՌՆԱԴՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ 1879 ՄԱՅԻՍ,*
*ՅՈ՛ՒՇ, Ո՛ ԱՆՑՈՐԴ, ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿ*
*ԱՅՍ Է ԲԱԺԻՆ՝ ՎԵՀ ԱՆՅԱՏԱԿ,*
*ԿԵՆԱՑ ԲԱՆԻՆ ԱՆՁԱՅՆ ՔԱՐՈԶ,*
*ՏԷՐ ԵՂԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ,*
*ՀԱՅՐ ԻՒՐ ՍԷՖԷՐ, ՋԱՐՄ ԴԵՐՁԱԿԵԱՆ*
*ՔՍԱՆ ՄԻ ԱՄՍ ՅԱՅՍ ՄԵՆԱՍՏԱՆ*
*ՄԱՔՈՒՐ Ի ԿՐՕՆՍ ԱՅԼ ԵՒ ՆԵՐՀՈՒՆ*
*ԴԷՏ ԿԱՅԵԱԼ՝ ՋԻՒՐ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆ*
*ԿՆՔԵԼՈՎ՝ ՄԵԶ ԱԶԳԷ ԽՐԱԽՈՅՍ,*
*ԱՆԴՐ ԸՍՏ ՇԻՐԻՄ ՁԿՏԻԼ Ի ԼՈՅՍ*
*ՌՅԼԵ. [1886], ՎԱԽՃԱՆ 1886 ՄԱՅԻՍ 8»:*

*35. ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Կ. Պոլսեցի, մականուամբ Ռուսճուգլեան, իր Պատր. փոխանորդութեան ատեն 1886ին Առաջնորդ-վանահայր կ՚ընտրուի Կեսարիոյ Գաւ. Ընդհ. Ժողովոյ կողմէն, ինքն, Թէեւ ընդունած ըլլալով պաշտօնն, կը վաւերացուի Կեդր. Վարչութենէն, կ՚ստացուի նաեւ կայսերական պէրաթը, եւ կը տրուի նաեւ պատրիարքական կոնդակը, բայց տարիի մը չափ Կ. Պոլիս մնալէն եւ հեռուէն հեռու Առաջնորդական պաշտօնը վարելէն ետքը, վերջնականապէս կը հրաժարի:*

*36. ՏՐԴԱՏ ԵՊՍ. ԿԵՍԱՐԻՈՅ. Բնիկ Թալասցի, մականուամբ Պալեան, միաբան Ս. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանուց, Առաջնորդ-վանահայր կ՚ընտրուի Կեսարիոյ Գաւ. Ընդհ. Ժողովոյ կողմէն, 1887 Յուլիս ամսոյ մէջ: Ս. Երուսաղէմէն Կեսարիա կը հասնի 1887 Սեպտեմբերի 11ին եւ կսկսի իր պաշտօնին:*

*Հրաժարեցաւ 1911 Թուականին սկիզբը, հրաժարականը ընդունուեցաւ Ազգ. Կեդր. Վարչութեան կողմանէ, այժմ ինքը կը գտնուի Մաղնիսա, եւ իր հօրենական տունը կ՚ապրի քաշուած կեանքով:*

*(Գրեթէ 23 տարուան մեր այս պաշտօնավարութեան վրայ մենք չի պիտի կրնանք որ եւ է բան մը խօսիլ, պիտի Թողունք անոնց, որոնք Թէ՛*

*վանքը, թէ՛ վանքին ի հիմանէ նոր շինուած բարձրագոյն գիշերօթիկ վարժարանը, վանքին մէջ եղած նորոգութիւն եւ նոր թաղը, վանական գոյքերու, կալուածներու եւ արտօրէից յաւելումը եւ այլն տեսնող ու քննողները թող խօսին խղճմտօրէն ու անաչառապէս):*

*37. ԽՈՍՐՈՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՀՐԻԿԵԱՆ. Առաջնորդ ընտրուած է 1912ին, եւ միեւնոյն տարին սկսած է իր պաշտօնավարութեան, եւ կը շարունակէ ցայժմ:*

*Իր պաշտօնավարութեան վրայ որ եւ է տեղեկութիւն մը չունինք, այժմ հեռու գտնուած ըլլալով Կեսարիայէն*[11]*:

* * *

*Կեսարիոյ Առաջնորդական փոխանորդութեան կարգին մէջ ալ կը յիշուին Ղուկաս Վարդապետ, Յակոբ Վարդապետ, Գրիգոր Վարդապետ, Մարտիրոս Քահանայ եւ այլն: Ասոնք ալ ոչ թէ վանքին մէջ, այլ բուն իսկ քաղաքին մէջ ի Կեսարիա, փոխանորդութեան պաշտօններ վարած են, ժամանակ առ ժամանակ:*

## 3/2. Ս. ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔ[12]*

*Ս. Կարապետի վանքին հարաւային կողմը, հազիւ տասը վայրկեան հեռու, փոքրիկ ձորակի մը եզերքը հարթ տեղի մը վրայ կառուցուած է այս Ս. Դանիէլի վանքը պարսպապատ, որուն հիմնարկութեան թուականը ճշտապէս յայտնի չէ, բայց աւանդութեամբ կ՚ըսուի թէ, Սեբաստիոյ Ս. Նշան վանքի հիմնադիր, Վասպուրականի Սենեքերիմ արքայի եղբօրը (Դանիէլ) միջոցաւ շինուած է, ուրտեղ թաղուած էր իր որդին՝ Օշին իշխանը, հետեւաբար ժամանակակից է Ս. Նշան վանքին:*

*Ուրիշ մէկ աւանդութիւն ալ, այս վանքի հիմնարկութիւնը կուտայ Թադէոս Առաքելոյն, թէ ո՞րքան ստոյգ ու հաւանական է այս վերջին աւանդութիւնը, չենք կրնար որոշ բան մը ըսել:*

*Վանքի եկեղեցին յանուն Ս. Աստուածածնի է: Եկեղեցւոյ արեւմտեան դրան ճակատը հետեւեալ արձանագրութիւնը կ՚գտնուի, որ վերջին նորոգութեան ժամանակ դրուած է:*

*«ՏԵՍՁՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԱՅԻՆ Ի ԲԱՐՁԱՆՑ ԻՋԵԱԼ Ի ՅԱՅՑ, / ԶՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵԱՑ / ՅԱՆՈՒՆ Ս. ԴԱՆԻԷԼ ՔԱՋԱԶԱՐՄ ՍԵՐՆԴԻ, / ՔԱՋԱԶՈՒՆ ՕՇԻՆ ՎԵՀ ՄԵԾԱՆՈՒՆ ԻՇԽԱՆԻ:/ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՏՐՕՔ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԳՐՈՀԻ,/ ԵՒ ՋԱՆԻՒՔ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՍԱՀԱԿ ՋԳՕՆ ԴԵՏԻ,/ ՈՐ ՅԱՋՈՐԴ ԿԱՐԱՊԵՏ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻ,/ Ի ՁԱՐՄԷ ԴԱՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐԱՒ ԿԷՐՄԻՐՑԻ: ՅԱՄԻ ՌՄՂԱ. [1842], ՆՈՅԵՄԲԵՐ 14»:*

*Եկեղեցին չորս սիւներու վրայ կառուցուած է, փոքրիկ կաթողիկէիւ, ունի երեք սեղաններ: Օշինի եւ նոյն իսկ Դանիէլի գերեզմանը աջակողմեան դասի կողմը, հիւսիսային որմին կից է, վրան թէեւ արձանագրութիւն մը կայ, բայց գերեզմանաքարին երբեմն մասերը որմին մէջ մտած ըլլալով, այժմ ամբողջութեամբ չի կրնար կարդացուիլ, միայն ընթեռնելի մասն է հետեւեալը.*

*«Ի թվ. ՉՁէ. [1338., Գրէ--Մ՝ ՉՑԷ], ՓՈԽԵՑԱՒ ՈՇՆԻ/// ՆԱ ՈՐ ՁԱՍ ԿԻՐՍ ԿԱՐԴԱ /// ՀԱՐ ՄԵՐ ՈՐ ԵՐԿԻՆ ԱՍ /// ԻՐ ՀՈԳՈՒՆ ///»:*

*Սոյն գերեզմանաքարին վրայ կցուած է ուրիշ տապանաքար մըն ալ, որուն վրայ եւս կայ հետեւեալ արձանագրութիւնը.*

*«ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵԱՄԲ ՈՂՈՐՄԵԱ ԲԵԿԻ ՀՈԳՈՒՆ ///»:*

*Եկեղեցւոյն մկրտութեան աւազանի դրան վրայ.*

*«ԲԱՐՁՐԵԼՈՅՆ ԱՆՃԱՌ ՇՆՈՐՀ ՀԵՂԵԱԼ ՅԵՐԿՆԻՑ,/ ՆՈՐՈԳԵԱՑ ՁԱՅՍ ԿՆՔԱՏՈՒՆ ՍՐԲՈՑ ՎԱՆԻՑ: ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՄԵԾԱՀԱՐԱՏ ԱՄԻՐԱՅԻ, ՊԵՆՏՈՒՍԵՅԻ ՊՕՂՈՍ ԱՂԱՅ ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐԻ/ ՋԱՆԻՒՔ ՃԳԱՄԲ ՏԵԱՌՆ ԻՍԱՀԱԿԱՅ ՍՐԲՈՑ ՈՒԽՏԻ: / ԳԵՐԱԱՐԹՈՒՆ ՊԵՏԻ ՎՍԵՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ, ՅԱՄԻ ՀԱԶԱՐ ՈՒԹՆ ՀԱՐԻՒՐ ԹՈՒԱԿԱՆԻ, ԵՒ ՅԱՒԵԼՄԱՄԲ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԻՈՅ ԸՆՆԻ [1849]»:*

*Ս. Դանիէլի վանքը միաբանութիւն չունի, կը կառավարուի միակ փոխանորդ վարդապետով մը այժմ, կան քանի մը սպասաւոր մշակներ: Փոխանորդի եւ ուխտաւորաց յատուկ 30-35 սենեակներ կան վանքին մէջ, հատ մըն ալ բաւականին կոկիկ հիւրանոց մը, եւ սակայն բոլորն ալ նորոգութեան կարօտ:*

*Ունի վեց կտոր մշակելու արտօրայք 50 արտավարի չափ, որոնք վանքի առջեւ են, հատ մըն ալ քիչ մը հեռու Պէլէկլիսի գիւղին մօտ, եւ հատ մըն ալ մէկ ժամ հեռու Մանճըսըն գիւղի դաշտին մէջ, 50 արտավար տարածութեամբ, որ բաւականին արդիւնաբեր հող մըն է, ունի նաեւ վանքին առջեւը երկու ծառատունկ պարտէզներ:*

*Վանքի դրամական արդիւնքը, տարեկան հազիւ 40-50 լիրայի չափ է, որ կը գոյանայ ուխտաւորաց եւ օղափոխութեան համար եկող անձերու նուիրատուութենէն:*

*Այս վանքին համար, այնպէս կ՚աւանդուի թէ, ի սկզբանէ առանձին վանահայրութիւն է եղեր, թէեւ այս մասին գրաւոր որ եւ է յիշատակութեան մը պատահած չենք, բայց երկար տարիներ Ս. Կարապետի վանուց Առաջնորդ-Վանահայրներու հսկողութեան ներքեւ փոխանորդ վարդապետով մը կառավարուած է, եւ յետոյ 1798 թուականին, զանազան պատճառներով, առանձին վանահայրութեան կը վերածուի Կ. Պոլսոյ պատրիարքարանի որոշումով, եւ Մունճուսուն, Կէրմիր եւ Պէլէկլէսի*

*գիւղերն ալ վանքին կը կցուին իբրեւ Թեմորայք, եւ առաջին վանահայրը կըլլայ Կարապետ Եպս. Դաւթեան:*

*1. ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԴԱՒԹԵԱՆ. Բնիկ Կէրմիրցի, եկեղեցական մը, որ ունեցած է անթերի եւ կատարեալ ընթացք, կը յորջորջուի եղեր նաեւ «Տէտէ» մակդիրով, շատ սիրելի եւ համակրելի եղած է հայ ժողովրդեան եւ օտար համայնքին, պատկառանք ազդած է ամենուն ալ վրայ: Իր վանահայրութեան պաշտօնն, որ ստանձնած էր 1798ին, շարունակաբար տեւած է 40 տարիներ, բաւականին մեծ ու շինարար գործունէութեամբ, թէ վանքին մէջ եւ թէ վերոյիշեալ երեք գիւղերու մէջ: Այսչափ երկար տարիներու պաշտօնավարութեան միջոցին ունեցած է բաւականին ձեռնասուն վարդապետներ, որոնցմէ ոմանք մնացած են վանքին մէջ իբրեւ միաբան, եւ պարկեշտ ընթացքով ու խղճմտօրէն ծառայած են, եւ ոմանք վանահայրութեան պաշտօնին ալ հասած են:*

*Կարապետ Եպիսկոպոսի ծերութեան ժամանակները Մարտիրոս անուն վարդապետ մը փոխանորդութեան պաշտօնը կը վարէ եղեր: Կարապետ Եպս. վախճանած է 1839 Փետրուար 12ին, գրեթէ իննսուն տարեկան հասակին մէջ, եւ թաղուած է վանքի եկեղեցւոյն արեւմտեան դրան ներքին կողմը, իր վրայի տապանաքարին արձանագրութիւնն է.*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, / ԸՆՏԻՐ ՎԵՐԱՏԵՍՉԻ ԿԵՍԱՐԻՈՅ ՄԵԾԻ, / ՈՐ ՆՍՏԱՒ Ի ՍՈՒՐԲ ՎԱՆՍ ՔԱՌԱՍՈՒՆ ԱՄԻ, / ՏԵՂԵԱՒ Ի ԴԱՒԹԵԱՆ ԶԱՐՄԷ ԿԷՐՄԻՐՑԻ, / ԵՒ ՎԻՃՏԱՍԱՆ ՁԵՌՆԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԻ, / ԱՍՏԷՆ ՓՈԽԵՑԱՒ ԻՆՆՍՈՒՆ ԱՄԱՑ ԿԵՆԻ, / Ի 1839 ԱՄԻ ՓՐԿՉԻՆ ԵՒ ՓԵՏՐՈՒԱՐԻ ՅԵՐԿՈՏԱՍԱՆԻՆ»[13]*:*

*2. ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Կէրմիրցի եւ ձեռնասուն Կարապետ Եպիսկոպոսի, վանահայր կը կարգուի Կ. Պոլսոյ Աստուածատուր պատրիարքի 1841 Հոկտ. 1 թուական կոնդակով:*

*Ղուկաս Վրդպ. երկայնահասակ ու գեղեցիկ մարդ մըն է եղեր, բնութեամբ վառվռուն, ուսեալ ու գործունեայ, բայց վանահայրութեան պաշտօնը կը կատարէ միայն մէկ տարի եւ կը հրաժարի, եւ այլ եւ այլ պատճառներով ալ կը մեկնի վանքէն ու կը մտնայ Ս. Կարապետի վանքի միաբանութեան մէջ, ուրտեղ ալ այլ եւ այլ պաշտօններ վարելով մեծ գործունէութիւն ցուցուցած եւ գրեթէ օգնական ալ եղած է այն ժամանակի Առաջնորդ Վանահայր Գաղատացի Յակոբ Եպս.ին, եւ իր այս գործունէութիւնը հռչակ հանած ըլլալով՝ Կ. Պոլիս ալ կանչուած է իբրեւ Պատր. փոխանորդ, եւ քանի մը տարիներ վերջ վերադարձած է:*

*Վախճանած է 1860 թուականին, իր ծննդավայր Կէրմիրի մէջ, եւ թաղուած է տեղւոյն եկեղեցւոյ առջեւը եղած գերեզմանատան մէջ, իր տապանաքարին վրայի գրուածքն է.*

*«ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԱՐՈԶՈՂ ԲԱՆԻ,/ ԱՐԴԵԱՄԲՔ ՀԱՄԲԱՒԵԱԼ ՄԻՆՉ ԷՐ ԿԵՆԴԱՆԻ,/ ՓՈԽԵԱԼ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ ՅԱՅՍ ՏԱՊԱՆԻ,/ ԱՆՁԱՅՆ ՔԱՐՈԶԷ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ, ՉԼԻՆԵԼ ՎՍՏԱՀ ԱՆՁՆԻՒՐ ՀԱՍԱԿԻ,/ ԱՅԼ ԱՐԹՈՒՆ ՄՆԱԼ ՏԵԱՌՆԱԿՈՉ ՁԱՅՆԻ,/ 1860 ՅՈՒՆՈՒԱՐ 6, Ի ՀԱՅՐԵՆԻՒՆ Ի ԿԷՐՄԻՐ»:*

*3. ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Կէրմիրցի, մականուամբ Դաւիթեան, ձեռնասուն «Տէտէ» Կարապետ Եպիսկոպոսի, վանահայրութեան պաշտօնին կը կոչուի 1843ին, տասն եւ ինը տարիներ կը շարունակէ իր պաշտօնը, բաւականին մեծ գործունէութեամբ: Իր աշխատութեամբ նաեւ գրեթէ հիմնովին նորոգուած է վանքի եկեղեցին եւ աւելցած է պահարան մը, ուր կը գտնուի մկրտութեան աւազանը:*

*Իսահակ Վրդ. վախճանած է 1862ին եւ թաղուած է վանքի գերեզմանատունը, ցաւալի է, որ այս աշխատաւոր եկեղեցականի գերեզմանին վրայ, գոնէ պարզ տապանաքար մը անգամ դրուած չէ:*

*4. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Կէրմիրցի, մականուամբ Ալակէօզեան: Սա իր վարդապետութեան ժամանակ Կէրմիրի Ս. Ստեփաննոս եկեղեցիին գրեթէ ի հիմանէ վերաշինութեան մեծ ջանք ու աշխատութիւն տուած է:*

*Առաջնորդական պաշտօններ վարած է, Կիւրինի, Շապին Գարահիսարի, Մուշի, Բաղէշի, Կարինի, Կարսի եւ Արդուինի առաջնորդական վիճակներու մէջ:*

*Առաջնորդութեան միջոցին, Կ. Պոլսոյ Պատրիարք Մատթէոս Ս. Արքեպիսկոպոսի (ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց) փափաքանաց վրայ, Անի քաղաքն երթալով 1847 թուականին, մեծ աշխատութեամբ, այնտեղ գտնուած վանքերու եւ եկեղեցիներու տեղեկագիրը համառօտակի կատարելով, եւ ամէն յիշատակարաններն ալ ճշգրտօրէն ընդօրինակելով, մէկ օրինակը կը ղրկէ այն ժամանակ Տ. Մատթէոս Պատրիարքին, եւ մէկ օրինակն ալ իր քով կը պահէ, որոնք 12 տետրակներէ կը բաղկանան եղեր, 32 ական էջերով, ասոնց 10 տետրակները փճացած եւ ցեցերու կեր եղած, այժմ միայն երկու տետրակները մնացած են[14]*:*

*Կարապետ Եպս. Ալակէօզեան, այսպէս դուրսերը երկար տարիներ պաշտօնավարելէ ետքը կը վերադառնայ ի Կեսարիա, եւ կը մնայ Ս. Դանիէլի վանքին մէջ, իբրեւ նախկին միաբան, եւ Իսահակ Վարդապետի վախճանումէն ետքը, Վանահայրութեան պաշտօնը կը ստանձնէ 1863ին, եւ չորս տարի միայն պաշտօնավարելով, կը վախճանի 1867 Օգոստ. 17ին, եօթանասուն եւ հինգ տարեկան հասակին մէջ, եւ կը թաղուի վանքի եկեղեցւոյն արեւմտեան դրան առջեւ, «Տէտէ» Կարապետ Եպս.ի գերեզմանին մօտ, տապանաքարին վրայի գրուածքն է.*

*«ԱՍՏ ՀԱՆԳՉԻ, ԿԱՐԱՊԵՏ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՈՐԴԻ ՍԱՀԱԿԱՅ, ԶԱՐՄ ԱԼԱԿԷՕԶԵԱՆ, ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՄՍ ՀՈՎՈՒԵԱՑ ԶԱԶԳՍ ՀԱՅՈՑ, ՆԱԽ Ի ԿԱՐՄԻՐ Ի ՀԱՅՐԵՆԻՍ, ԶՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՆՈՐՈԳ ՇԻՆՄԱՆ ՎԱՐԵԱՑ ՊԱՇՏՕՆ:/ ԵՂԵՒ ԱՊԱ ԴԷՏ Ի ԿԻՒՐԻՆ ԵՒ Ի ԿԱՐԻՆ, ԿԱՐՍ, ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ, ԵՐԿԻՑՍ ՏԱՐՕՆ, ԲԱՂԷՇ, ԱՐԴՈՒԻՆ, ՁԻՒՐ ՀՈՎՈՒՈՒ-ԹԻՒՆ ՎԱՅԵԼԵՑԻՆ:/ ԿՆՔԵԱՑ ՑԱՅՍ ՎԱՆՍ ՀՈՒՍԿ ԱՊԱ ՁԻՒՐ ՄԱՀԿԱՆԱ-ՑՈՒՆ: ԻՍԿ ԵՍ ՆՈՐԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ԵՒ ՁԵՌՆԱՍՈՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀԻՆԵԱՆ ԶԱՅՍ ԱՐՁԱՆ ՏԽՈՒՐ ՆՇԱՆ ԿԱՆԳՆԵՄ ՍԻՐՈՅ ՈՐԴԻԱԿԱՆ:/ ԾՆՈՒՆԴ Ի ԿԱՐՄԻՐ 1792, ՄԱՀ Ի Ս. ԴԱՆԻԷԼ 1867 ՕԳՈՍՏՈՍ 17, Ի ՔՐԻՍՏՈՍԻ ԹՈՒԱԿԱՆ»:*

*5. ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Էրքիլէթցի, ձեռնասուն «Տէտէ» Կարապետ Եպիսկոպոս Դաւթեանի: Վանահայրութեան պաշտօնին կ՚անցնի 1867 հոկտ. ամսոյն մէջ, եւ կը պաշտօնավարէ ինը տարիներ:*

*Կ՚ըսուի թէ արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցած չէ, վախճա-նած է 1876ին եւ թաղուած վանքի գերեզմանատան մէջ:*

*6. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ. Պօզուգի գիւղերէն բնիկ Քէտիլէրցի: Վանահայրութեան պաշտօնին կ՚անցնի 1877ին, հինգ տարի միայն պաշտօնավարելով կը վախճանի 1881ին, եւ կը թաղուի նոյնպէս վանքի գերեզմանատունը: Այս եւ վերի Ստեփան Վարդապետի գերեզմաննե-րուն վրայ եւս տապանաքար դրուած չէ:*

*Յովհաննէս Վարդապետի վախճանումէն ետքը, քանի մը տարիներ վանքը առանց վանահայրի կը մնայ, եւ սակայն Դաւիթ անունով միա-բան վարդապետ մը, իբր փոխանորդ վանքի գործերուն վրայ կը հսկէ, եւ 1883ին կը ձգէ իր գործը եւ կը քաշուի Թօմարզայի վանքը, ուր կը վախճանի:*

*7. ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ. Բնիկ Պրուսացի, միաբան Ս. Էջ-միածնի, որ իբրեւ հիւր... կը մնար Թօմարզայի վանքին մէջ, վանահայ-րութեան պաշտօնին կը կոչուի 1885ին, եւ առանց որեւէ գործունէու-թեան մը 25 տարիներ պաշտօնին վրայ մնալէ ետքը կը վախճանի 1910ին, եւ կը թաղուի վանքի գերեզմանատան մէջ:*

*Այս վերջին թուականէն ետքը վանքը եւ իր թեմերը եղած երեք գիւղերն ալ Ազգ. Պատրիարքարանի վերջնական տնօրէնութեամբ վերս-տին յանձնուեցան Ս. Կարապետի Առաջնորդ-Վանահայրութեան, Վան-քը այժմ կը կառավարուի փոխանորդ վարդապետի մը միջոցաւ:*

*Վանքը այժմ գրեթէ աւերակ վիճակ մը ունի, եւ եկեղեցական անօթ եւ զգեստներն ալ, եթէ մնացած քանի մը կտորներ կան, անոնք ալ գրե-թէ անարժէք եւ հինցած են: Ունի նաեւ առանձին դարակի մը մէջ զե-տեղուած եօթանասունի մօտ գրչագիր մատեաններ, որոնք ներկայ պա-հանջման համեմատ ցուցակագրուած են մեր կողմէն:*

Ս. Եկեղեցւոյն մէջ գտնուած պատկերներու վրայ կը գտնուին հետեւեալ յիշատակարանները: Աւագ խորանի պատկերին վրայ.

«ՅԻՇԱՏԱԿ Է ԷՎՔԱՐԱՑԻ ԱՐԱՊ ՕՂԼԻ Մ՛՛ՀԻ ԻՍԿԷՆՏԷՐԻ ՈՐԴԻ Մ՛՛ՀԻ ՄՈՎՍԷՍԻՆ Ի ԽՈՐԱՆԻ Ս՛՛Բ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔԻՆ»:

Ուրիշ պատկերներու վրայ.

(Ա.) «ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ ՄԵԾԿԵՐՏՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐ՛՛ՊԻՆ ԵՒ ՀՕՐՆ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԻՆ ԵՒ ՄՕՐՆ ԽԱԹՈՒՆԻՆ ՄԱՆՈՒՇԱԿԻՆ, ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՋԱՐՄԻՑ Ի ԴՈՒՌՆ Ս՛՛Բ ԴԱՆԻԷԼԻ ԹՎ. ՌՄԾԵ. (1806)»:

(Բ.) «ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱԼԱՍՑԻ ՈՒՄՈՒՐ ՕՂԼԻ Մ՛՛ՀԻ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՐԴԻ ԹՈՐՈՍԻՆ, Ի ԴՈՒՌՆ Ս՛՛Բ ԹՈՐՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ, ԹՎ. ՌՄԾԵ» [1806]:

(Գ.) «ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ Ս՛՛Բ ՎԱՆՈՒՑՍ ԴՌՆԱՊԱՆ ՊԷԼԷԿԷՍԻՑԻ ԿԻԽԼԱՊԵԱՆ ՅԱԿՈԲԻՆ, ԹՎ. ՌՄԾԹ. [1810]»:

(Դ.) «ՅԻՇԱՏԱԿ Է ԿԷՍԱՐԱՑԻ ՋԷՐՋԻ ԱՅԱՆ ՕՂԼԻ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍԻ, Ի ԴՈՒՌՆ Ս՛՛Բ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔԻՆ, ԹՎ. ՌՄԾԸ. [1809]»:

(Ե.) «ՅԻՇԱՏԱԿ Է Ս՛՛Բ ԴԱՆԻԷԼԻ ՄԻԱԲԱՆ ՍՊԱՐԴԱՑԻ Մ՛՛ՀԻ ԳԷՈՐԳԻՆ, ԹՎ. ՌՄԾԵ. [1806]»:

Վերեւ յիշուած Փոխանորդ Մարտիրոս Վարդապետի գերեզմանի տապանաքարին վրայ եւս հետեւեալ արձանագրութիւնը կայ:

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՓՈԽԱՆՈՐԴ ՎԱՆՈՒՑ ՍՐԲՈՑ ԴԱՆԻԷԼԻ... ՓՈԽԵՑԱՒ Ի ՔԱՌԱՍՈՒՆ ՎԵՑ ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ, Ի 1833 ՓՐԿՉԻՆ ԱՄԻ, ԵՒ 21 ՓԵՏՐՈՒԱՐԻ»[15*]:

## 4/3. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՎԱՆՔ[16*]

Ս. Կարապետի վանքին արեւելեան կողմը, գրեթէ երեք քառորդ ժամու չափ հեռաւորութեամբ, Տարսիախ (=յն. Տաքսարիօն) անուն գիւղի մէջ կառուցուած էր Ս. Գրիգոր Նարեկացիի վանքը:

Տարսիախը հին ժամանակին մէջ թերեւս գիւղ չի կազմուած, սոյն վանքը չէն եւ ունի եղեր նաեւ կազմաւորեալ միաբանութիւն: Այս վանքի մօտերը կը գտնուի նաեւ Յունական վանք մըն ալ Տաքսիարիօն (=Հրեշտակապետ) անունով, որուն «Եանար տաշի» վանք ալ կ՚ըսուի, եւ կը մնայ մինչեւ ցայսօր:

Երբ գիւղը կազմուած է, որուն բնակիչներն եղած են նախ Յոյնք, իր անունը առած է յիշեալ Յոյն վանքի անունէն, եւ ապա աղաւաղեալ ձեւով կոչուած է Տարսիախ: Բայց երբ այս գիւղին մէջ Հայերն ալ սկսած են բնակութիւն հաստատել եւ բազմացեր են, Հայ վանքը թողուեր է ժողովրդեան իբրեւ եկեղեցի:

*Երկար տարիներէ վերջը, դժբախտաբար այժմ եկեղեցին ալ գոց կը մնայ, գիւղին մէջը հազիւ հինգ կամ վեց տուն աղքատիկ Հայ բնակիչ միայն մնացած ըլլալուն համար, որոնք իրենց եկեղեցական պարտականութիւններն կատարելու համար կը դիմեն տասը վայրկեան անդին Նիրզէ գիւղի եկեղեցիին:*

*Գրիգոր Նարեկացիի վանքին տաճարը յանուն Ս. Աստուածածնի է, որուն երկրորդ նորոգութեան, արեւմտեան դրան ճակատը դրուած է հետեւեալ արձանագրութիւնը.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՏԱՐՍԻԱԽՈՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ, / ԱԻԱԳ ԽՈՐԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, / ԱՋԱՄԲ ՄԵԼՔՈՆ ԳԱՍՊԱՐ ՊԱՂՏԱՍԱՐԻ, / ԱՀԵԱԿՆ ԱՆԴՐԷԱՍ ԱՌԱՔԵԱԼԻ, / ՂՈՒՇԼՈՒԽՑԻ ՕՂԼՈՒ ՍԱՐԳՍԻ, / ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՄԱՐԻԱՄԻ ՈՐԴԻՈՅՆ ՄԱՀՏԵՍԻ, / ՄԵԼՔՈՆԻՆ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՄԱՀՏԵՍԻ ՆԱՁԼՈՒԻ, / ՈՐԴԻՆ ՄԱՀՏԵՍԻ ԳՐԻԳՈՐԻ: / ՇԱՐԺԷ ՔԱՅՔԱՅ ԵՂԵՐ ԵԿԵՂԵՑԻ, / ԱՋԴ ԵՂԵԻ Ի ԿՈՍՏԱՆԴԻՆԱՊՕԼՍԻ, / ԱՌ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՋԱՐՄԻ, / ՈՐՈՅ ԱՆՈՒՆ ՄԱՀՏԵՍԻ ՄԵԼՔՈՆ ԿՈՋԻ, / ԵՂԵԻ ՊԱՏՃԱՌ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՅՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ, / ՅԻՇԱՏԱԿՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ, / ՈՎ ՀԱՆԴԻՊԻ ԱՅՍ ՄԱՏՈՒՌԻ, / ՄԻՈՎ ՀԱՅՐ ՄԵՂԱՅԻ ՅԻՇԵՍՑԻ ՍՈՐԱ ՀՈԳԻ, / ՀԻՄՆԵԱԼ ԵՂԵԻ ՌՃԿ. (1711) ԹՈՒԱԿԱՆԻ, / ՅՈՒԼԻՍ ԱՄՍՈՅ ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԻ»[17]*:*

## 5/4. Ս. ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻԻ ՎԱՆՔ[18]*

*[Կեսարիայէ երեք ժամ հեռու, հարաւ-արեւելեան կողմը Նիրզէ գիւղին մէջ], Վերեւ յիշուած Տարսիախ գիւղէն, տասն եւ տասն եւ հինգ վայրկեան հեռու, Նիրզէ անուն գիւղի արեւելեան ծայրը կը գտնուի Ս. Գրիգոր Նիւսացի անուն վանքը, որ 70-75 տարիներէ ի վեր գրեթէ ամայի մնացած, եւ ներքին կողմն ալ կիսովին փլած ու աւերակ եղած է: Կանգուն կը մնան վանքի պարիսպն եւ եկեղեցին, որ շատ փոքրիկ ու գրեթէ Մատուռի մը ձեւն ունի:*

*Վանքի արեւմտեան կողմի պարսպի տակէն դուրս ջուր մը կը բղխէ մեծ քանակութեամբ, որուն բուն իսկ ակը վանքին տակն է, ուր կ՚իջնուի վանքին մէջէն 15-20 աստիճան քարաշէն սանդուխներով:*

*Վանքի արտաքին երկաթեայ միակ դրան բանալին յանձնուած է Նիրզէ գիւղի քահանային, որ երբեմն բարեպաշտ ուխտաւորներուն կը բանայ յուխտ եւ յերկրպագութիւն:*

*Վանքի եկեղեցիին մէջ, սեղանին վրայ պատկեր մը կայ, մէկ կողմը Ս. Աստուածածին, միւս կողմը Ս. Գրիգոր Նիւսացին նկարուած, բաւականին գեղեցիկ գործ, որուն ստորեւ կայ հետեւեալ յիշատակարանը.*

*«Ս՞Բ ԳՐ. ՆԻՒՍԱՑԻՆ, ՀԱՅՑԱԿԱՏԱՐ Ս՞Բ Ա՞Ծ՞ԾԻՆ ԿՈՅՍ.*

*ՅԻՇԱՏԱԿ Է, ԷՖՔԱՐԱՅԻ, ԱՐԱՊ ՕՂԼԻ, ՄԱՀՏԵՍԻ, ԻՍԿԷՆՏԷՐԻ ՈՐԴԻ, ՄԱՀՏԵՍԻ ՄՈՎՍԷՍԻՆ, ՆԻՐՁԷԻ ՎԱՆՔՆ, Ս՞Բ ԳՐԻԳՈՐԻ ԱԾԱԲԱՆԻՆ, ԹՈՒԻՆ ՌՄԻԱ. (1772), ԱՊՐԻԼ Է., ՕՐ Է., ՁԱՏԻԿ ԵՒ ՕՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ»:*

*Գր. Նիւսացիի այս վանքին վանահայրներու յաջորդական ամբողջ ցանկը կազմել անհնար եղաւ մեզ համար, միայն ծանօթացանք հետեւեալներուն.*

*1. ԱՆԴՐԷԱՍ ԵՊՍ. որ կը յիշատակուի ՋԼԳ. (1484) թուականին գրչագրուած ձեռագիր Ճաշոցագիրքի մը յիշատակարանին մէջ, որուն ժամանակը Ս. Կարապետի վանուց Վանահայրն ալ էր Կիրակոս Եպս. Տրապիզոնցին:*

*2. ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. Կը յիշատակուի ՋԼԵ. (1486) թուականին:*

*3. ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. Ասոր պաշտօնավարութեան սկզբնական թուականը անծանօթ կը մնայ, միայն Ս. Կարապետի վանքին մէջ պահուած, եւ 1177 հիճրէթի թուականն կրող հրովարտակէն կը հասկնանք, թէ վախճանած է 1176 հիճրէթի թուականին, եւ իրեն կը յաջորդէ, ինչպէս յիշուած է նոյն հրովարտակին մէջ՝ Կարապետ վրդպ.:*

*4. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ Բնիկ Զմշկածագցի է եղեր, ո՞րքան կը տեւէ իր պաշտօնավարութիւնը, անծանօթ կը մնայ մեզ[19*]:*

## 6/5. Ս. ՊԱՐՍԱՄԱՅ ՎԱՆՔ[20*]

*[«Կեսարիոյ արեւելեան հարաւային կողմը, երեք ժամ հեռու, Պալակասի...»] Վերեւ յիշուած Պէլէկիսի անուն զուտ Հայաբնակ գիւղի քովի ձորակին հիւսիսային լեռնադաշտին վրայ կը գտնուի այժմ Ս. Պարսամայ ամայի եւ բոլորովին աւերակ վանքին տեղը, որ ժամանակին ընդարձակ եւ չէն վանք մըն է եղեր, որուն հիմնարկութեան, ինչպէս նաեւ ամայութեան թուականներն անծանօթ կը մնան. ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից:*

*Վանքի շրջապարիսպէն մաս մը, եւ ներքին հիմերէն ալ բաւական տեղեր այսօր իսկ կ՚երեւին, որ ուխտատեղի եղած է այժմ, մասնաւորապէս նոյն գիւղացւոց, ուր տարին անգամ մը ուխտի կ՚երթան եւ մատաղներ կը մատուցանեն:*

## 7/6. Ս. ԱՂՕԹԻԿԻ ՎԱՆՔ[21]*

*[«Կեսարիայէն երեք ժամ հեռու, դէպի հիւսիսային արեւելք, ...»] Նոյնպէս Պէլէկլիսի գիւղի հարաւային կողմը, կէս ժամու չափ հեռաւորութեամբ «Աւետիք» կամ «Աղօթիկ» ըսուած մեծ եւ ընդարձակ, եւ բնականէն գեղեցկադիր ձորին հիւսիսային կողին վրայ շինուած է եղեր այս վանքը, որուն ինչպէս հիմնարկութեան թուականը, նոյնպէս ամայութեան ժամանակը յայտնի չեն, [ինչպէս աւանդաբար կ՚պատմեն ծերունիք], եւ արդէն ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ եւ ամայացեալ Հայ վանորէից, այժմ միայն վանքի պարիսպին, եկեղեցիի եւ ներքին շէնքերու հիմերը կ՚երեւին հին ու մեծամեծ քարերով:*

*Այս շատ հին եւ բոլորովին այժմ աւերակ վանքի մօտ կը գտնուի լայնատարած հաստատուն ապառաժ քար մը, որուն մէկ երեսին վրայ փորագրուած են զանազան նշանագիրներ, որոնց համար չենք կրնար ըսել, թէ Հաթեան նշանագիրներ են, եւ սակայն շատ հետաքրքրական ըլլալուն հարկ համարեցինք օրինակել եւ դնել այս տեղ.*

*Առաջին մասը՝*



*Երկրորդ մասը՝*



*Այս «Աւետիք» կամ «Աղօթիկ» ըսուած ձորին մէկ կողմը հին գիւղի մը աւերակները կան, եւ ձորին մէջ ալ տեղ տեղ վիմափոր, բայց զարմանալի այրեր կը գտնուին, որոնք բաւականին լայնութեամբ շատ երկար են, ասոնցմէ զատ քանի մը եկեղեցիներու փլատակներն ալ կը նշմարուին: Ձորին միւս մէկ կողմն ալ, այժմ դատարկ գերեզմաններու տեղեր կ՚երեւին: Այս ամէնը մէյ մէկ հնութիւններ են ըստ մեզ, այցելու հետաքրքիրներու համար:*

*Յիշեալ եկեղեցիներուն մէկուն, Պէլէկէսիի եւ մօտակայ գեւղերու Հայերը* Ծըգնարան *անունը կուտան, որուն արեւմտեան պատը եւ դուռը կանգուն կը մնան մինչեւ ցայժմ: Դրան ձախակողմը մէկ ու կէս կանգուն բարձրութեան վրայ, պատին մէջ փորուած գերեզման մը կայ, մէկ կանգուն լայնութեամբ եւ երկուք ու կէս կանգուն երկայնութեամբ, եւ երեք քառորդ կանգուն ալ խորութեամբ, բայց մէջը պարապ: Այս եւ միւս գերեզմաններուն մէջ մարդկային աճիւններ կան եղեր այրած ու փոշիացած, բայց գիւղացի ռամիկ ժողովրդեան տղայոց կողմէն ոչնչացած են:*

*Նոյն տեղ գերեզմանի մը կափարիչ քարին վրայ եւս հետեւեալ նշանագիրներն կան:*



Վանքի տեղւոյն վարի կողմն ալ ինքնաբուղխ ջուր մը կայ, որ փոսի մը մէջէն դուրս կուգայ առանց վազելու եւ առանց հատնելու, որչափ որ ալ առնուի ջուրէն եւ կամ խմուի:

Այս ջուրը, մօտակայ Հայ, Թուրք եւ յոյն գիւղացի ժողովրդեան կողմէ կը կոչուի Հայաթ կամ Էօմիւր սուլու:

## 8/7. ՏԷՐԷ ՎԱՆՔ, ԿԱՄ Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[22*]

Կեսարիոյ քաղաքին արեւելեան կողմն, եւ մէկ ու կէս ժամու չափ հեռի, ձորի մը մէջ գտնուած, Տէրէ վանք անուն բոլորովին հայաբնակ գիւղի, գրեթէ դիմացը լեռնադաշտի մը հարաւային կողին վրայ կառուցուած է Ս. Սարգիսի վանքը, [որուն համար կ՚ըսուի նաեւ «Տէրէվանքի Ս. Սարգիս]: Տեսարանը ակնապարար, դիրքը վայելուչ, օդաւէտ եւ ջուրն ալ բարեհամ:

Տէրէ վանք գիւղը՝ կը կարծուի թէ իր անունը առած է վանքէն գուցէ ԺԲ. դարէն սկսեալ: Ինչպէս ըսինք գիւղը ձորի մը մէջ է, եւ կը տարածուի նաեւ հիւսիսային լեռնադաշտի կողին վրայ, ուրտեղ վերջերս գտնուեցաւ շատ հին եկեղեցիի մը աւերակներն: Գիւղին բնակչութիւնը կը բաղկանայ հարիւր տասը հարիւր քսան ընտանիքներէ, ամբողջն ալ Հայ:

Վանքին հիմնարկութեան բուն իսկ թուականն անծանօթ կը մնայ թէեւ, բայց ըստ աւանդութեան եւ ըստ հայերէն գրչագիր մատենից յիշատակարաններու, Կեսարիոյ շատ հին վանքերէն մին ալ այս է, մինչեւ անգամ կերթայ Ղեւոնդիոս Հայրապետի ժամանակին եւ աւելի անդին:

Այս աւանդութիւնը կրնայ հաստատել, վանքին մէջ այժմ իսկ գտնուած շատ հին վիմափոր սենեակներն, եւ վանքի եկեղեցիի առջեւ, դէպի հարաւ երկարած 10 կանգուն լայնութեամբ 100 կանգունէն աւելի երկայնութեամբ մութ գաւիթը. եւ որ մանաւանդ եկեղեցին, որք միակտուր վիմափոր են, այնպէս որ ամէն այցելու հնագէտք մեծ զարմացումով եւ շատ ալ հետաքրքրութեամբ կը դիտեն:

Եկեղեցին եւ կողմնակի երկու պահարանները բաւականին լուսաւոր են, արեւելեան երեք փոքրիկ պատուհաններէն առած լուսով: Եկեղեցւոյ մէջ այս երեք պատուհաններէն զատ, ուրիշ որ եւ է լուսամուտ չիկայ: Վանքը ու եկեղեցին, եկեղեցական անօթ ու զգեստներէ աղքատիկ է, միայն ունի իր մասնաւոր գրադարանին մէջ 12 կտոր Հայերէն ձեռագիրներ:

Եկեղեցւոյ գաւիթին արտաքին դրան քով, փոքրիկ մատուռ մը եւս կայ, յանուն Ս. Գէորգայ, յորմէ քիչ մը առաջ ալ փոքրիկ զանգակա-

տուն մը, նոր, որուն վրայ հետեւեալ յիշատակարանը կայ.

«ԿԱՆԳՆԵՑԱՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ ԱՅՍ ԹԱԼԱՍՑԻ ԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ Կ. ՄԻԼՕՇԵԱՆ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԼՈՒՍԱՒՈՐԷ ԶՀՈԳԻՍ ՀԱՄԱՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ, 1887 ՄԱՐՏ 1»:

Վանքը հին ժամանակներու մէջ, թէեւ կը կառավարուէր եղեր անկախօրէն վանահայրի մը միջոցաւ, բայց գրեթէ հարիւր տարիներէ ի վեր յանձնուած է Ս. Կարապետի վանուց Առաջնորդ-Վանահօր վերին հսկողութեան, որուն կողմէ նշանակուած Տեսուչ վարդապետ մը կը կառավարէ այժմ [Այժմեայ տեսուչն է Ներսէս Վ. Ըշըգլեան]:

Տեսչարան մը, եւ ուխտաւորաց յատուկ բաւականին կոկիկ ու օդաւէտ տասն եւ հինգի չափ քարաշէն, եւ հինգ հատ ալ փիմափոր սենեակներ կան վանքին մէջ: Ունի երկու պարտէզներ եւ 20 արտավարի չափ ալ վեց կտոր մշակելի արտորայք գիւղին մէջ, եւ նաեւ աստ ու անդ անպտղաբեր ծառեր, որոնցմէ կը հայթայթուի վանքին վառելանիւթը:

Տարեկան հասոյթը կը գոյանայ ուխտաւորաց նուիրատուութենէ, արտօրէից ու պարտէզներու աննշան վարձքերէ եւլն., որոնց ամբողջ գումարը կը հասնի 30-35 ոսկիի: Տեսուչ վարդապետը տարեկան արդեանց եւ ծախուց հաշիւը կը ներկայացնէ Առաջնորդ-Վանահօր Ս. Կարապետի վանուց:

Վանքին մէջ կը գտնուին հետեւեալ յիշատակարանք:

1. Գերեզմանի մը տապանաքարին վրայ.

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ, ԹՎԻՆ ՌՃՀԱ. [1722]: Ի ՍՈՅՆ ՏՐ. ՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԵՍԱՐԱՑԻ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՐՄԻՆՆ ԿԱՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ, ԹՈՒԻՆ ՌՄԿԱ. [1812]»:

2. Սենեկի մը դրան վրայ.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՔԱՂՑՐԱՕԴ ԵՒ ԳԵՂԵՑԿԱՇԷՆ ՍԵՆԵԱԿՍ ԿԵՍԱՐԱՑԻ ՋԷՐՋԻ ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ ԸՆԿԵՐ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԻՑ ՊԱՐՈՆ ԴԱՆԻԷԼԻՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵԱՑՆ, ՎԱՍՆ ՀՈԳԻՈՅՆ, ՋԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԹՈՒԻՆ ՌՄՀԵ. [1826]»:

3. Վանքի պարտէզին դրան վրայ.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՐՏԷԶՍ ԱՅՍ Ի ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՎԱՆՍ, ԹԱԼԱՍՑԻ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԱՐԴԵԱՄԲ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՌՄԽԷ. [1798]»:

Այս վանքին վանահայրներէն կը յիշուին.

1. Սարգիս Եպիսկոպոս, 1660ին:

2. Եսայի Եպիսկոպոս, 1730ին:

Տեսուչ վարդապետներէն կը յիշուին.

1. Զաքարիա Վարդապետ Կէմէրէկցի, 1800ին:

2. Գէորգ Վարդապետ Կեսարացի, 1810ին:

3. Կարապետ Վարդապետ Թալասցի, 1820ին:

*4. Սարգիս Վարդապետ Թալասցի, 1825ին:*

*5. Յակոբ Վարդապետ Պոլսեցի, 1827ին, սա վախճանած է վանքին մէջ 1837ին:*

*6. Կարապետ Վարդապետ Թալասցի, երկրորդ անգամ, այս ալ վախճանած է 1844ին:*

*7. Փիլիպպոս Վարդապետ Պօղոսեան Թամզարացի, 1847ին:*

*8. Գաբրիէլ Վարդապետ Մկրտիչեան Կեսարացի:*

*9. Մեսրոպ Վարդապետ Խօրօզեան Պալակէսիցի:*

*10. Դանիէլ Վարդապետ Աշըգեան Տէրէվանքցի:*

*11. Սարգիս Վարդապետ Միքայէլեան Թօմարզացի[23]*:*

## 9/8. Ս. ԲԱՐՍԵՂԻ ՎԱՆՔ[24]*

*Կեսարիոյ Թալաս գիւղաքաղաքի հարաւային գրեթէ անմիջական կողմը եղած եռագագաթ «Բարսեղ Հայրապետ» անուն լեռան (որուն կ'ըսուի նաեւ* Ալի տաղ*) գրեթէ արգանդին վրայ կը գտնուի «Բարսեղ Հայրապետ» անուն այս վանքը, որուն շինութեան եւ հաստատութեան բուն իսկ թուականն անծանօթ կը մնայ, եւ որ նաեւ անյայտ թուականաւ բոլորովին ամայացեալ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանօրէից:*

*Աւանդութեամբ միայն կ'ըսուի, թէ ի սկզբան երկու եւ երեք վիմափոր սենեակներով ճգնարան մը եղած է, որոնք մինչեւ ցայժմ ալ կը մնան աւերակաց կոյտերուն ներքեւ [ինչպէս կ'հաստատեն ականատես անձինք, որոնցմէ մին է ներկայ տողերը գրողը], եւ հետաքրքիրք միշտ կը մտնեն՝ կոյտերը մէկ կողմ առնել տալով: Այս վիմափոր սենեակները կը յորջորջուին եղեր «Ս. Կարապետի ճգնարան», Կեսարիոյ Բարսեղ Հայրապետն ալ իր ժամանակին շատ անգամներ այս այրերուն մէջ բնակած ու ճգնած է եղեր, եւ յետոյ նոյն այրերուն քովիկը հոյակապ Տաճար մը աւելցնելով՝ կը կոչուի «Բարսեղ Հայրապետի վանք», [ինչպէս լեռն ալ՝ «Ս. Բարսեղ Հայրապետի լեռ»]:*

*Այս վերջի շինութիւնն ալ միեւնոյն բախտին վիճակած է, այսօր մեր աչքին առջեւ են միայն աւերակաց կոյտերը, մէկ կողմը մնալով միակ կամարվ մը կիսականգուն, եւ որ հետզհետէ փլչելու վրայ է: Այս կամարին արեւելեան կողմը այժմ կ'երեւի Տաճարի սեղանին տեղը, որ այժմ երկուքի բաժնուած է, որուն մին Հայոց եւ միւսն Յունաց կը պատկանի, ուրտեղ տարին մէկ երկու անգամներ, ամառ ժամանակ, Հայերն ու Յոյները պատարագ կը մատուցանեն, իրենց յատուկ սեղաննե-*

*րու վրայ: Երկու ազգերու կողմէն պատարագ մատուցուած օրը մատաղներ ալ կը պատրաստուին եւ կը բաժնուին աղքատաց*[25]*:

## 10/9. Ս. ՄԵՐԿԵՐԻՈՍԻ ՎԱՆՔԸ[26]*

*Կեսարիայէն դէպի արեւելք, կէս ժամու չափ հեռաւորութեամբ, բլրակի մը առջեւ տափարակ տեղւոյ մը վրայ կառուցուած էր Ս. Մերկերիոսի վանքը, եւ որ ի վաղուց աւերակ եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից:*

*ԺԲ. դարուն մէջ կազմաւորեալ շատ չէն վանք մըն է եղեր, ինչպէս կը յիշատակուի հին յիշատակարանաց մէջ, անապատ Ս. Թէոդորոսի եւ Ս. Մերկերիոսի անունով:*

*Վանքին ընդարձակ հիմերը, մեծամեծ քարերով մինչեւ ցայժմ կը մնան, մեծ ընդարձակութիւն ունեցող այդ տեղն ալ այժմ մեր Հայոցս սեփականութիւնն է, եւ եղած է գրեթէ գերեզմանատուն, ուր երբեմն կը թաղուին Հայ ննջեցեալք, ինչպէս նաեւ թաղուած են 1895ի մեծ ջարդէն զոհուող 350 նահատակներն:*

*Տարին անգամ մը, Ս. Մերկերիոսի տօնին օրը, Կեսարիայէն եւ շրջակայ Հայ գիւղերէն, մեծաւ մասամբ իգական սեռը, ուխտի կ՚երթան հոն, իրենց մատաղ ու մոմերը նուիրելու, եւ յատկապէս քահանայ մը եւս կը գտնուի, աղօթք եւ հոգեհանգստեան պաշտօն կատարելու համար:*

*Այս Ս. Մերկերիոսի վանքի մասին ԺԳ. դարու սկիզբները գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք հետեւեալն:*

*«...Գրեցաւ եւ ծաղկեցաւ Աստուածաբուղխ սուրբ Աւետարանս Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ եւ փցուն, անիմաստ եւ յանցաւոր գրչի Գրիգոր քահանայիս ի Տումարծու, որ անուամբ գոչիմ եւ ո՛չ գործօք, [ի թուականիս Հայոց] ՈԾԵ. (1206) յաւարտեցաւ Յունվար ամսոյ Գ. աւր շաբաթ, ի գաւառս Կեսարիոյ Կապադովկեցւոց, ի հռչակաւոր անապատիս [Սրբոյն Կարապետի Յովհաննու եւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ] Սրբոյն Թէոդորոսի եւ Սրբոյն Մեռկեռիոսի Զինաւորի, եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, ի յեպիսկոպոսութեան՝ Տէր Ագարիա վերայտեսչի...»*[27]*:*

## 11/10. Ս. ԲԱՐՍԵՂԻ ՎԱՆՔ[28*]

*Կեսարիոյ քաղաքի հարաւային կողմի ծայրի տուներու հանդիպակաց, գրեթէ չորս կամ հինգ վայրկեան հեռաւորութեամբ գետնի մը վրայ կը գտնուի Ս. Բարսեղի այս վանքն ալ, որ ի վաղուց աւերակ՝ ու անցած է ի շարս շաբաթացեալ հայ վանորէից:*

*Այս վանքին ալ հաստատութեան սկզբնաւորութիւնը անծանօթ կը մնայ, ինչպէս նաեւ ամայութեան ու աւերակութեան թուականներն: Այժմ միայն կը մնան հին շէնքին ընդարձակ հիմերն ու կիսափուլ կամարներն: Կեսարիոյ եւ շրջակայից Յոյն ժողովուրդն ալ, այս տեղւոյն «Այ Վասիլի» անունը կուտան[2]:*

## 12/11. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ԹՕՄԱՐԶԱՅԻ[29*]

*Կեսարիայէն եօթը ժամու չափ հեռու, դէպի արեւելեան հարաւ, Տաւրոս լերանց սահմանին, Կէօստէրէ կամ Կիզիստրէ գաւառակին, Թօմարզա, կամ Տումարզա եւ կամ Տումարծայ հայաբնակ գիւղին արեւելեան ծայրը կառուցուած է Ս. Աստուածածնի ընդարձակ ու անուանի*

---

[2] Կեսարիոյ եւ իր թեմորէից մէջ, վերեւ յիշուած վանքերէն զատ կան նաեւ հետեւեալ ուխտատեղիք, որոնք միշտ կունենան իրենց բարեպաշտ ուխտաւորներն, արք եւ կանայք:
Ա. Թալաս գիւղաքաղաքին մէջ.
1. Ս. Յակոբ. Արդեօ՞ք այս ուխտատեղին այն վանքն է, որ կը յիշուի հին Մազաքայի (Մաժակ) մէջ վանք մը, յանուն Ս. Յակոբայ, չենք կրնար որոշ բան մը ըսել:
2. Ս. Յարութիւն, ուխտատեղի.
3. Պաթման գաեա, ուխտատեղի.
4. Ս. Մինաս: Այս ուխտատեղին Թալասի Բարսեղ Հայրապետի, կամ Ալի Տաղ լերան ստորոտը կը գտնուի: Այս ուխտատեղւոյն համար ալ, կ'աւանդուի, թէ ժամանակին վանք մըն է եղեր, վիմափոր սենեակներէ բաղկացած: Այժմ իսկ կերեւի երկու վիմափոր սենեակներն ու փոքրիկ դիրքով ալ միակ մատուռ մը, ուր յաճախ կը դիմեն, Թալասու եւ մօտակայ հայ գիւղորէից բարեպաշտ ժողովուրդն:
Բ. Տէրէվանք գիւղին մէջ.
1. Քսան սուրբ, ուխտատեղի,
2. Ս. Ծերուն, ուխտատեղի,
Գ. Կէրմիր գիւղին մէջ.
1. Ս. Գէորգ, ուխտատեղի,
Դ. Էֆքէրէ գիւղին մէջ.
1. Ս. Գէորգ, ուխտատեղի,
2. Ս. Աստուածածին, ուխտատեղի.
3. Ս. Աննա, ուխտատեղի.
4. Ս. Սարգիս, ուխտատեղի.
5. Ս. Եղիա, ուխտատեղի:
Ե. Մանճըսըն գիւղին մօտերը.
1. Ս. Թորոս, ուխտատեղի.
Զ. Մունճուսուն գիւղին մէջ.
1. Ս. Աստուածածին, ուխտատեղի:
Այս ուխտատեղւոյն կը դիմեն նոյն իսկ թուրք ժողովուրդն ալ, եւ կ'անուանեն «Գարաղաճ»:
Է. Էրքիլէթ գիւղին մէջ.
1. Ս. Գէորգ = Այօս Խըտրէլլէզ:

վանքը: Կէօստէրէ գաւառակին մօտերէն կ՚անցնի նաեւ Զամանթը կամ Ծամնդաւ մեծ գետը:

Թօմարզայի Ս. Աստուածածնի այս վանքը, հայկական շատ հին վանքերէն մին կը համարուի, եւ որուն հիմնարկութիւնը կը տրուի աւանդութեամբ Թադէոս Ս. Առաքեալին, այս աւանդութիւնը կը յիշատակուի նաեւ 200 տարիներ առաջ, Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանէն, այն ժամանակուայ վանքին վանահայր-առաջնորդներու տրուած կոնդակներու մէջ ալ:

Վանքին հին եկեղեցին կը մնայ մինչեւ ցայժմ, որ յանուն Ս. Աստուածածնի է, թէեւ փոքր եւ հին շինուածք մըն է: Այս հին եկեղեցիին մէջ կը մնայ դեռ շատ հին ժամանակներէ ի վեր զետեղուած մեծ քար մը, որուն վրայ հին ճարտարապետական արուեստիւ քանդակուած են ութը հատ խաչեր: Այս քարին համար ալ կ՚աւանդուի, թէ օծած է Թադէոս Ս. Առաքեալը:

Վանքի նոր եկեղեցին յանուն Ս. Խաչի է, շինուած է հին եկեղեցւոյ քով եւ կից անոր: Այս նոր եկեղեցւոյ շինութիւնը ի հիմանէ եղած է եւ սկսած 1849 թուականին, եւ երկու տարիէն ամբողջացած: Եկեղեցին բաւականին ընդարձակ, լուսաւոր, հաստատուն շէնք մըն է եւ ունի գեղեցիկ կաթուղիկէ մը:

Եկեղեցւոյ շինութեան ամբողջ ծախքը հոգացած է Կեսարացի Յովհաննէս աղա Եազըճեան, ջանիւք եւ աշխատութեամբ Թօմարզացի Բարսեղ վարդապետի, որ այն ժամանակ վանքին Տեսուչ վանահայրն էր: Այս նոր եկեղեցւոյն պատերուն արտաքին կողմը 15-16 կանգուն երկայնութեամբ եւ 2 կանգուն լայնութեամբ շատ հաստ քարեր զետեղուած են:

Այս նոր եկեղեցւոյ մեծ դրան ճակատը գրուած է հետեւեալ յիշատակարանը:

«ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱ ԲԱՐԵԼԻ ՎԱՐՈՒՔ,
ԵԱԶԸՃԵԱՆ ԿՈՉԵԱԼ ՄԵԾԱԶԳԻ ՆԱԽՆԵՕՔ,
Ի ԿԵՍԱՐԻԱ ԳՈՂՈՎ ՀԱՅՐԵՆԵՕՔ,
ԲՆԱԿԻ Ի ՊՕԼԻՍ ՇՔԵՂ ՅԱՐԳԱՆՕՔ:
ՋԵՐՄԵՌԱՆԴ ՈՒԽՏԻՒ ԱՐԴԵԱՄԲ ԱՌԱՆՁԻՆ,
ՓՈՒԹԱՑԱՒ ԼՆՈՒԼ ԶՓԱՓԱՔ ԻՒՐ ՍՐՏԻՆ,
ԿԱՌՈՅՑ ԱՅՍ ԶՔՆԱՂ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ,
ՅԱՆՈՒՆ ԶԱՐԽԱՓԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ:
ՅԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿ ԱԶՆԻՒ ԻՒՐ ԱՆՁԻՆ,
ԵՒ ԲԱՐԵԺԱՌԱՆԳ ՈՐԴԻՈՑ ԵՒ ԶԱՐՄԻՆ,
ՋԱՆԱՑ ՄԵԾԱՊԷՍ Ի ՇԻՆՈՒԱԾ ՍՈՐԻՆ,
ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԸՆՏԻՐ ՐԱԲՈՒՆԻՆ:
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1850»:

*Յանուն Ս. Աստուածածնի եղած հին եկեղեցիին հարաւային կողմը փոքրիկ նոր շինուած մատուռ մը եւս կայ, յանուն Ս. Կարապետի:*

*Վանքը այժմ խսկ չէն է, եւ հետզհետէ կ'ունենայ նաեւ յաւելումներ եւ նոր շինութիւններ, կը կառավարուի Տեսուչ վարդապետի մը միջոցաւ եւ վերին հսկողութեամբ Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Առաջնորդ-վանահօր: Ունի միաբան վարդապետներ, աշխատաւորներ, դռնապան, սննեկապան եւ մշակութեան սպասաւորներ: 1896 թուականին ալ բացուեցաւ նախակրթարան վարժարան մը, երկու ուսուցիչ եւ 18-20 ուսանողներով, մաս մը ձրի եւ մաս մըն ալ կը վճարեն տարեկան փոքրիկ թոշակներ:*

*Վանքը գեղեցիկ հիւրանոցէ մը զատ, որ կը բաղկանայ երկու սրահ եւ վեց սենեակներէ, ունի նաեւ միաբանից եւ ուխտաւորաց յատուկ թաղեր ու սենեակներ, ունի շտեմարաններ, մառան, խոհանոց եւ սեղանատուն մը: Կենդանիներու համար յատուկ ախոռներ եւ գոմանոցներ:*

*Մշակութեան գործը եւ մեղուաբուծութիւնը բաւական յառաջ գացած է այս վանքին մէջ: Վանքի սեփական 20 կտոր 300-350 արտավար մշակելի հողեր կան, ունի պարտէզ մը բանջարեղինաց, երկու ջաղացք, եւ երկու խանութ գիւղին մէջ, եւ կը պահուին նաեւ բաւականին ոչխարներ եւ դուար:*

*Դրամական արդիւնքն կ'ըլլայ տարեկան գրեթէ տասը հազար ղուրուշ ողջ դրամ, որ կը գոյանայ ուխտաւորաց նուէրներէն եւ ջաղացքի ու խանութներու տարեկան վարձքերէն: Ցորեն, ճոն (հաճար), գարի, պանիր, կաթ, միս եւլն. առաջ կուգան, արտերէն եւ ոչխարներէն եւ կը ծախսուին վանքին մէջ միաբանութեան պիտոյքին համար, որով տարեկան ծախսը կը գոցուի:*

*Վանքի եկեղեցւոյն մէջ կայ նաեւ փոքրիկ գրադարան մը, որուն մէջ կան տպագրեալ գրեանք, եւ քառասուն հատ ալ ձեռագիր մատեանք:*

*Վանքին մէջ բաւական յիշատակարաններ կան, զորս հարկ համարեցինք դնել այստեղ, այն կտորներն միայն, զորս ընդօրինակելու միջոց ունեցանք, որչափ որ ժամանակնիս ներեց հոն գտնուած միջոցնիս:*

*1. Յանուն Ս. Աստուածածնի հին եկեղեցւոյ խորանը, հնութիւնը ակներեւ թանկագին պատկեր մը կայ, որուն վրայ գրուած է.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԻՆ, ՎԱՐԴՈՒԿԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ՄԱՐԻԱՄԻՆ, ԵՒ ՈՐԴԻՈՅՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՅՆ ԿՈՒՀԱՐԻՆ, ԵՒ ՇԻՐԻՆ ԽԱԼՖԱՅԻ ՈՐԴԻՈՅՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ, ՆԻԿՈՂՈՍԻՆ ԵՒ ԻՒՐԵԱՆՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՈԳԻՈՅՆ ԱՄԷՆ, ԹՈՒԻՆ ՌՃԻ. (1671)»:*

*2. Նոյն եկեղեցւոյ սեղանի վէմքարին վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է Ս՟Բ ՎԷՄՍ Ի ՏԷՐ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՀՕՐՍ ՆԱՋԱՐՇԱ-*

*ՀԻՆ, ՄՕՐՍ ՂԱՏԷՄԻՆ, ԵՂԲՕՐՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ, ԱՆԴՐԻԿԻՆ, ԳՐԻԳՈՐԻՆ...» (մնացեալ մասն անընթեռնելի, քարին տակը մնացած ըլլալուն համար):*

*3. Նոյն եկեղեցւոյ դրան ճակատի յիշատակարանը.*

*«ԿԱՄԱՐԱՅԱՐԿ Մ՟Բ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՌԱՔԵԼԱՇԷՆ Մ՟Բ ԵԿԵՂԵՑԻՆ ԳՄԲԷԹԱՅԱՐԿ ՆՈՐՈԳԵՑԱՒ ԹԱԼԱՍՈՒ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿԵՆ-ԴԱՆԵԱՑ ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՈԳԻՈՅՆ, ՋԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆՑ ԱՋՆՈՒԱՏՈՀՄ ՋԱՐՄԻՑ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1870 ՄԱՅԻՍ 25»:*

*4. Ս. Կարապետի մատրան յիշատակարանը.*

*«ՆՈՐՈԳ ՇԻՆԵԱԼ ԱՅՍ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐ,*
*ԱՐԴԵԱՄԲ ՈՒՐՈՒՔ ԲԱՐԵՀԱՆՃԱՐ,*
*ԿԵՍԱՐԱՑԻ ՂԱՊԱ ՍԱԽԱԼԵԱՆ,*
*ՕՐՀՆԵԱԼ ՅԱԿՈԲ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ,*
*ՋՇԱՏ ԱՇԽԱՏԱՆՍ Ի ՍՄԱ ԿՐԵԱԼ,*
*ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՍԵՂԱՆ ԿԱՆԳՆԵԱԼ,*
*ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ Ի ՍՈՒՐԲ ՏԵՂԻՍ,*
*ԽՆԴՐԻ Ի ՁԵՆՋ ՄԻ ՈՂՈՐՄԻՍ, Ի ԹՈՒԻՆ ՌՄՀԱ. (1822)»:*

*5. Ս. Խաչ նոր եկեղեցւոյ ներքին երկու ամպիոններու յիշատակարանը.*

*Ձախակողմեան ամպիոնին.*

*«ԴՇԽՈՅԻՆ ԵՐԿՆԻՑ Ս. ՎԱՆՈՒՑՍ ՍԱՏԱՐ,*
*ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՈՒԽՏԻՍ ԿԱՄԱԿԱՐ,*
*ԴԵՐՁԱԿԵԱՆ ՋԱՐՄԷ ԵՂԻԱՍ ՍԵՒԱՏԱՐ,*
*ՁՕՆԵԱՑ ՁԱՄՊԻՈՆՍ ԱՅՍ ԿՐԿՆԱՅԱՐՄԱՐ:*
*Ի ԹԻՒ ՀԱՅՈՑ 1 ԴԵԿՏ. ՌՅԴ. (1855)»:*

*Աջակողմեան ամպիոնին.*

*«ԱՌ ԸՆԿԱԼ ՍԻՐՈՎ ԴՇԽՈՅ ԳԵՐԱՓԱՌ,*
*ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋԻՆՋ ՅԱՆՈՒՆ ՔՈ ՊԱՅԾԱՌ,*
*ԱՄՊԻՈՆ ԿՐԿԻՆ ԳԵՐ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՎԱՌ*
*ՁՕՆԵԱԼ ՅԵՂԻԱ ՍԵՒԱԿՐԷ ՀԷՎԿԱՌ[3]»:*

*6. Աւագ խորանի պատկերին վրայ.*

*«ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ ԹՕՄԱՐՋԱՑԻ ՂԱՐԱԿԷՕԶԵԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Ա-ՌԱՔԵԼԻ ՈՐԴԻ Մ՟ՀԻ. ՎԱՐԴՈՒԿԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ՆՆՋԵՑԵ-ԼՈՑՆ: ԹՕՄԱՐՋԱՑԻ ՊԱՏԿԵՐՀԱՆ ԵՐԵՄԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ. 1865»:*

*7. Վանքի արեւմտեան արտաքին մեծ դրան ճակատը գրուած է.*

*«ԲԱՆ ԵՒ ԾՆՈՒՆԴ ՀՕՐ ՄԻԱԾԻՆ ԱՍՏՈՒԱԾ*
*ՇՔԵՂ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ Ի ԳՄԲԵԹ ՆՈՐՈԳԵԱՑ,*
*ՅԱՆՈՒՆ ԱՌԱՋՆՈՅՆ ՏԻՐԱՄԱՅՐ ԿՈՉԵԱՑ,*

---

[3] Եղիա սեւատար, սեւակիր: Եղիա վրդ. Դերձակեանն է, Առաջնորդ-Վանահայր Ս. Կարապետի վանուց Կեսարիոյ Հեվքաո՝ Էֆքէրէ, էֆքէրեցի:

*ԵՐԿՐՈՐԴԻՆ ԱՆՈՒՆՆ Է ՍՈՒՐԲ ԽԱՉ ԿԵՆԱՑ,*
*ՋԱՆԻՒՔ ԵՒ ՏՐՕՔ ԳԻՒՂԻՍ ՀԱՅԿԱՋԱՆՑ,*
*ՕՐՀՆԵԱԼ ԹՕՄԱՐՋԱ ՔԱՋ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՑ,*
*Ի ՅԱՋՈՐԴՈՒԹԵԱՆՍ ԸՆՏԻՐ ՐԱԲՈՒՆԵԱՑ,*
*ՏԵԱՌՆ ԲԱՐՍԵՂԻ ԵՒ ՍԱՐԳՍԻ ՏԵՍՉԱՑ:*
*ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1850 ՍԵՊՏ. 1»:*

*Ս. Աստուածածնի անուն հին եկեղեցւոյ, 1870 թուականին նորոգութեանը ժամանակ, նոյն տեղւոյն վրայ գտնուեցան հինգ հատ տապանաքարեր, որոնք դրուեցան, առաջինը՝ նոյն եկեղեցւոյ տանիքը, եւ միւսներն արեւելեան պատին արտաքին երեսը.*

*Ա. Տապանաքարը կը կրէ հետեւեալ մենագրերը.*

Օ Կ Ը Մ Վ

*Միւս տապանաքարերու վրայի գրուածներն են.*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՔԱՅԽԼԵՐՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՈՐ ՍՊԱՆԱՒ Ի ՅԱՆՕՐԻՆԱՑ Ի ԹՈՒԻՆ ՌԾԷ. [1608]»:*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՃԸՆՑԻ ՎԱՍԻԼ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ, ՈՐ ՍՊԱՆԱՒ Ի ՅԱՆՕՐԻՆԱՑ Ի ԹՈՒԻՆ ՌԾԶ. (1607)»:*

*«ԵՍ ՄԻՔԱՅԷԼ ՆԱԽԱՇ ՍԱՐԿԱՒԱԳ ԷԻ, ԱՒՐՀՆԵՑԱՅ ԹՎԻՆ ՌՃԺԶ. (1667) ՓԵՏՐ. ԻԴ. ԱՒՐ ԿԻՐԱԿԻ»:*

*«ԵՍ ՄԵՂԱՒՈՐ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱԲՐԻԷԼ ԴՊԻՐՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՒՐՀՆԵՑԱՅ Ի ԹՎ. ՌՃԻ. (1671)»:*

*Թօմարզայի Ս. Աստուածածնի այս վանուց ամենահին վանահայրներու անուան յիշատակութեան հանդիպած չենք, միայն կը յիշուին գրչագիր յիշատակարաններու մէջ հետեւեալ հին վանահայրներու անունները:*

*1. Յովհաննէս Եպս. Հզնեցի, 1570ին.*

*2. Աստուածատուր Եպս. Մշեցի, 1579ին.*

*3. Ղուկաս Եպս., 1581ին.*

*4. Յակոբ Վարդապետ, 1594ին.*

*5. Յովհաննէս Եպս. Զէյթունցի, 1600ին.*

*6. Գրիգոր Վարդապետ Ծերուն, 1629ին.*

*7. Առաքել Եպս. Աբեղայ, 1632-1662ին.*

*8. Յովակիմ Եպս., 1673-1698ին.*

*9. Բարսեղ Վարդապետ Ալլահվէրտեան Էվէրէկցի, 1784-1791ին: Ասիկայ ունի տապանաքար մը, որուն վրայի գրուածքն է.*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԷՎԷՐԷԿՑԻ ՈՍԿԵՐԻՉ Մ՞ՀԻ ԱԼԼԱՀՎԷՐՏԵԱՆ ՏԵԱՌՆ ԲԱՐՍԵՂ ԴԵՏԻ ԵՒ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՀԱՆԳՈՅ ՏԷՐ ԵՒ ԸՆԿԱԼ ՁՀՈԳԻՍ ՍՈՑԱՅ, ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՄԽ. (1791)»:*

*Նորերէն ալ կը յիշատակուին հետեւեալք.*

1. Բարսեղ Վարդապետ Թօրոսեան Թօմարզացի, 1840-1852ին: Ասոր տապանաքարին ալ վրայի գրուածքն է.

«ՆՆՋԷ Ի ՇԻՐՄԻՍ ՎԵՀԱԳՈՅՆ ՈԳԻՆ,
ՏԵԱՌՆ ԲԱՐՍԵՂԻ ԸՆՏԻՐ ՐԱԲՈՒՆԻՆ,
ՆՄԱՆԵԱԼ ՎԱՐՈՒՔ ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻՆ,
ԿԵՐՏԵԱՑ ԱՅՍ ՏԱՃԱՐ ՏԵՂԻ ԱՆԵՂԻՆ,
ԹՈՂԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ ՋՓԱՓԱՔ ՍՐՏԻՆ,
ԸՆԿԱԼԱՒ ԱՆՇՈՒՇՏ ՊՍԱԿ ԱՆՄԱՀԻՆ 1852»:

2. Սարգիս Վարդապետ Գալայճեան, Թօմարզացի.

3. Յովհաննէս Վարդապետ Բարաղամեան, Թօմարզացի.

4. Կարապետ Վարդապետ Շահինեան, Կէրմիրցի.

5. Կարապետ Վարդապետ Նազարեան, Թօմարզացի:

[Տումարզայի կամ Թօմարզայի վանուց եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնայ եւ գիւղի եկեղեցին յանուն Ս. Պօղոսի եւ Պետրոսի է, գիւղէն դուրս, հինգ վայրկեանաւ հեռի, հին եկեղեցւոյ չէնք մը եւս կայ յանուն Ս. Աստուածածնայ, որ է ի ձեռս մեր եւ որուն վերին երեսը շուրջանակի արձանագրութիւնք կան, լատինական տառերով եւ լեզուաւ: Վերջին յիշատակարանի (տես ստ, յիշատ.՝ 1579 թ.) մէջ յիշուած Մշեցի Աստուածատուր եպիսկոպոսն նոյն է թիւ 5 [Հմր 17] Աւետարանի գլխաւոր յիշատակարանի մէջ յիշուած Աստուածատուր եպիսկոպոսի հետ, որ Տումարզայի (Թօմարզայ) վանուց վանահայր կամ առաջնորդ էր այդ թուականներուն: Որովհետեւ եղած է ժամանակներ որ ի Կեսարիայ չորս վանորէից մէջ առաջնորդք կամ վանահայրք նստած են՝ ա. ի Ս. Կարապետ, բ. ի Ս. Դանիէլ, գ. ի Ս. Գրիգոր Նիւսացւոյ վանս որ ի Ներգէ, եւ՝ դ. ի Ս. Աստուածածնայ վանս, որ ի Տումարզայ][30]*:

Թօմարզայի այս Ս. Աստուածածնի վանքէն[31]* քիչ հեռու, արեւելեան կողմ, փոքր լերան մը ստորոտը, այժմ բոլորովին աւերակ վանքի մը տեղը կայ, որուն շրջակայ գիւղացիք աւանդութեամբ կ՚ըսեն թէ, յանուն «Ս. Բարսեղի» վանք մըն էր:

Նոյնպէս Թօմարզայի վանքէն մէկ ժամու չափ հեռու, դէպի արեւելք, դաշտի մը վրայ, երբեմն «Գիրգովր» անուն Հայաբնակ գիւղին մէջ, կայ եղեր Վանք մըն ալ, յանուն «Հայր Աբրահամի»:

Գիւղն ի վաղուց ամայացած, գիւղացիք Թօմարզայ հաստատուած են, եւ վանքն ալ անցած է ի շարս շաբաթացեալ հայ Վանորէից, որոնց հիմերը մինչեւ ցայժմ կ՚երեւին:

Թօմարզացիք եւ շրջակայ Հայ գիւղացիք տարին անգամ մը ուխտի կ՚երթան այս երկու վանքերուն ալ եւ կատարելով իրենց ուխտը, մատաղներ կ՚ընեն ու կը բաժնեն ներկայ ուխտաւոր ժողովրդեան:[32]*

# Գ. ՍԵԲԱՍՏԻԱ = ՍԸՎԱԶ

*Սեբաստիա, որ այժմ կուսակալութիւն է, եւ Հայ Առաջնորդական վիճակին ալ կեդրոնը, որ հնագոյն Առաջնորդական կեդրոններէն մին է արդէն, երբեմն նստած ու գտնուած են կաթողիկոսներ ալ: Առաջնորդը կը նստի քաղաքին մէջ, եւ շատ անգամներ ալ ըստ սովորութեան Ս. Նշանի վանքը:*

*Սեբաստիոյ Առաջնորդական իրաւասութեան ենթարկեալ են այժմ Սըվազի սանճագին հետ Ազիզիէ, Հաֆիք, Գօչկէր Ենի խան, Պիւնեանը համիտ գազաներն իրենց հայաբնակ գիւղերով: Կուսակալութեան են-թակայ գտնուող Գարահիսարը Շարգի = Շապին Գարահիսար, Ամա-սիա, եւ Եւդոկիա = Թոխաթ սանճագներն իրենց գազաներով, առանձին առանձին առաջնորդական վիճակներ կը կազմեն, եւ Կիւրին, Մանճը-լըգ, Թօնուզ, Տիվրիկ, Տարէնտէ-Ղանղալ գազաներն ալ, թէեւ առանձին Առաջնորդական վիճակներ են, բայց ենթարկեալ են Կիլիկիոյ կաթողի-կոսութեան:*

## ՎԱՆՈՐԱՅՔ ՍԵԲԱՍՏԻՈՅ[1]

### 13/1. Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ[33*]

*Սեբաստիոյ հիւսիսային կողմը, հազիւ քսան վայրկեան հեռաւո-րութեամբ «Մէրէգում» ըսուած մեծ բլուրի մը մէկ կողմի ծայրին վրայ շինուած է վանքը, բաւական գեղեցիկ դիրքով:*

*Վանքի հիմնարկութեան թուականին վրայ երկու աւանդութիւններ կան, մին այն է, թէ երբ Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիայէն Սեբաստիա*

[1] Բիւզանդիոն, 1900, թիւ 1264, 29/ԺԱ.-12/ԺԲ., էջ 1՝ «Պատուական «Բիւզանդիոն»ի Յունուարէն սկսեալ մինչեւ Յուլիս ամսոյ թերթերուն մէջ, ԺԴ. յօդուածներով, 156 հատ Հայ վանքերու ցանկը տուած էինք, իրենց համառօտ նկարագրութիւններով, ինչպէս յայտնի է Սրբոց տօնախմբու-թեանց անուններու կարգով: Վերջին օրեր քանի մը վանասէր բարեկամներ փափաք յայտնեցին մեզ մասնաւոր նամակներով թէ - «Վանորէից շարքը փոխանակ Սրբոց անուան կարգով նկարա-գրելու, աւելի յարմար կ՚ըլլար, եթէ քաղաքներու կարգին վրայ գրուէին, որպէսզի դիւրաւ գիտ-ցուին թէ ո՛ր քաղաքին մէջ ո՛րքան հայ վանքեր կային ու կան: Համակերպիլ ուզեցինք այս փա-փաքին, եւ այս անգամ կ՚սկսինք այն կարգաւորութեամբ ցանկել հայ վանքերն սկսելով Սեբաս-տիայէն»: Ահաւասիկ Սեբաստիոյ հայ վանորէից ցանկն, իրենց շատ համառօտ նկարագրու-թեամբ, որոնք ինչպէս կը տեսնենք, ըստ մեր ծանօթագրութեան, թուով միայն տասներկու հատ են»:

*կ՚անցնի, վանքին հիմնարկութիւնը ընելով, գետեղած է, կ՚ըսուի, մաս մը Ս. Կարապետի նշխարէն, որ նուէր առած էր Ղեւոնդիոսէն: Երկրորդը՝ ԺԱ. դարուն մէջ, Վասպուրականի Սենեքերիմ արքային կը տրուի հիմնարկութիւնը, եւ անունն ալ դրուած է «Ս. Նշանի վանք» ի յիշատակ Վարագայ Ս. Նշան վանքին, որ ի Վան:*

*Սեբաստիոյ այս վանքին «Արեգակ Ս. Նշան» անունն ալ կը տրուի:*

*Թէեւ վանքը այժմ եկեղեցական միաբաններ չունի, բայց Սեբաստիոյ եւ իր շրջակաները գտնուող միւս վանքերուն առաջինն է. եւ 1912ին ալ «Սանասարեան» վարժարանը Կարինէն փոխադրուեցաւ այս վանքին մէջ, եւ վարժարանն սկսաւ ի հիմանէ շինուիլ:*

*Վիճակին Առաջնորդն, իբրեւ Վանահայր նաեւ շատ անգամներ վանքին մէջ կը բնակի, որուն իրաւասութեան ենթարկուած են միւս վանքերն ալ:*

*Վանքն ունի իր մէջ երեք տաճարներ քովէքով. Առաջինը՝ յանուն Ս. Նշանի է, խաչաձեւ եւ գմբէթաւոր, Բիւզանդական եւ ճարտարապետական հին ոճով շինութիւն մըն է: Տաճարին ներքին որմերն ու սիւները, կէսէն վար, Քէօթահիայի հին յախճապակիներով, եւ կէսէն վեր ալ զանազան սրբոց պատկերներով զարդարուած են: Աւագ խորանին երկու կողմերը կը գտնուին երկու մթին աւանդատուներ, յանուն Ս. Պօղոսի եւ Ս. Պետրոսի: Դրան կողմն ալ երկու խորաններ կան, յանուն Ս. Կարապետի եւ Ս. Գլխադրի:*

*Ս. Նշանի այս Տաճարին մէջ գտնուած մարմարեայ սեղաններու եւ սիւներու, խաչկալներու, փայտեայ շրջանակներու քանդակեալ գործուածներն ու զարդերը, կրնանք ըսել թէ, այսօր ամբողջութեամբ անցած են հնութեանց կարգը:*

*Երկրորդ եկեղեցին, յանուն Ս. Կարապետի է. մեծ եւ ընդարձակ: Այս եկեղեցին նորոգուած է 1857 թուականին, ջանիւք եւ աշխատութեամբ Էվէրէկցի Գալֆայեան Կարապետ Արքեպիսկոպոսի, որ այն ժամանակները Առաջնորդ էր Սեբաստիոյ եւ Վանահայր վանքին, եւ վախճանած է նաեւ հոն:*

*Երրորդ եկեղեցին, յանուն Ս. Աստուածածնի, թէեւ փոքրիկ, բայց սիրուն ու գմբէթաւոր: Այս եկեղեցւոյ մէջ են. Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի եւ Թէոդորոս աբեղայի գերեզմանները, այս վերջինը որդին էր Ս. Գոհարինէի, ինչպէս կը յիշատակուի Յայսմաւուրքի մէջ Յունիս 7ին, եւ քիչ մը անդին ալ Անանիա Կաթողիկոսի գերեզմանը, որուն տապանաքարին վրայ գրուած է հետեւեալ արձանագրութիւնը.*

*«ՅԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆԻՍ, ԵԴԻՆ ԶՄԱՐՄԻՆ,*

*ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱ, ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ,*

*ՈՐ ՕԾԵԱԼ ՆՍՏԱՒ, ՎԵՀԱՊԵՏ ԱԶԳԻՍ,*

*Ի ԳԵՐԱՀՌՉԱԿ, ՍՈՒՐԲ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ,*

*ՍԱ ԷՐ ԱՋԳԱԿԱՆ, ՊԵՏՐՈՍԻ ՄԵԾԻՆ,*

*ԳԵՏԱԴԱՐՁ ԿՈՉԵԱԼ, ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ,*

*ԺԱՄԱՆԵԱՑ ՎԱԽՃԱՆ, ՍՈՒՐԲ ԿԵՆԱՑ ՆՈՐԻՆ,*

*ԹՈՒԻՆ ՎԵՑ ՀԱՐԻՒՐ, ՅԻՍՈՒՆ ԵՒ ՎԵՑԻՆ [1207]»:*

*Վանքի թաղերը գլխաւորաբար երեք մասի բաժնուած են, 1. Միաբանից թաղ, 2. Ուխտաւորաց թաղ, 3. Սեղանատան կամ Որբանոցի թաղ, որոնք ամբողջութեամբ գրեթէ կրկնայարկ են:*

*Միաբանից թաղին մէջ ամենէն վայելուչ եւ ընդարձակն է Առաջնորդարանը, եւ այս երեք թաղերու մէջ ալ կը գտնուին մշտահոս չորս աղբիւրներ:*

*Վանքին հողային հարստութիւնը բաւական ընդարձակ է, որք են յիսուն կտորէ աւելի մշակելի արտորայք, ունի մեծ պարտէզ մը չրջապատով, անտառակ մը ուռենիի եւ սօսիի ծառերով, քաղաքին մէջ տասնէն աւելի խանութներ եւ նաեւ երկու ջրաղացներ:*

*Առաջնորդ-Վանահայր հանգուցեալ Պետրոս եպս. Թահմիզճեանի անձնականին յատուկ, եւ նաեւ վանքին սեփական 250-300էն աւելի հայերէն հին ձեռագիր կարեւոր մատեանք եւ հնութիւնք կային վանքին մէջ, ասոնք այժմ ինչպէս կը պահուին՝ տեղեկութիւն մը չ՛ունինք:*

*Ս. Նշանի այս վանքն, որ նշանաւոր ծառայութիւններ մատուցած է անցեալոյն մէջ Հայ ազգին, կրնայ նաեւ նոյնը ընել ներկայիս մէջ ալ Սանասարեան բարձր. վարժարանով, եթէ ըստ ամենայնի անձնուէր, լրջախոհ եւ կարող ձեռքերու յանձնուին:*

*Որչափ որ հին ձեռագիր մատեաններու յիշատակարաններէն ձեռք անցուցած ենք, ծանօթ եղած են մեզ Ս. Նշան վանքի Առաջնորդ-Վանահայրներէն հետեւեալքն միայն:*

*1. Բարսեղ Վարդապետ, 1187ին:*

*2. Ստեփաննոս Եպս., 1384ին վախճանած է:*

*3. Արիստակէս Վարդապետ, միաբան Ս. Երուսաղէմի, 1828 ի միջոցներուն:*

*4. Յովհաննէս Եպս., 1830 ի միջոցները:*

*5. Կարապետ Եպս., 1839 ի միջոցներուն:*

*6. Յեսու Վարդապետ, միաբան Ս. Երուսաղէմի, 1841ին միջոցները:*

*7. Համբարձում Եպս., 1842ին:*

*8. Ամբակում Վարդապետ:*

*9. Կարապետ Վարդապետ, 1848ին:*

*10. Նիկողոս Եպս., 1851ին:*

*11. Դաւիթ Վարդապետ, 1855ին:*

*12. Կարապետ Եպս. Գալֆայեան, Էվէրէկցի, 1857ին:*

*13. Շմաւոն Վարդապետ, 1863ին:*
*14. Ներսէս Եպս., 1866ին:*
*15. Պետրոս Եպս. Թահմիզճեան, 1871ին:*
*16. Թորգոմ Եպս. [Գուշակեան]*[34]*:

## 14/2. ԱՆԱՊԱՏԻ ՎԱՆՔ[35]*

*Անապատի այս վանքը կը գտնուի Ս. Նշան վանքի արեւմտեան կողմը, եւ գրեթէ տասը վայրկեան հեռու, Դաւրա անուն հայաբնակ գիւղին վարի ծայրը:*

*Վանքը թէեւ դիրքով փոքր, բայց շատ հին վանքերէն է, տեղն օդաւէտ, տեսարանը գեղեցիկ, ունի մշտահոս աղբիւր մը, անուշ ու առողջարար ջուրով:*

*Վանքի տաճարը փոքր է, եւ նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի, եւ այս պատճառաւ կը կոչուի նաեւ «Ջարխափան Ս. Աստուածածնի վանք»:*

*Վերջերս գրեթէ ի հիմանէ նորոգեցաւ, հաստատուն եւ սրբատաշ քարերով: Ունի ուխտաւորաց համար քանի մը սենեակներ եւ փոքրիկ պարտէզ մը:*

*Վանքի պարսպին տակէն կ՚անցնի գետակ մը կամ մեծ առու մը, ուռենիներով եւ այլ ծառերով շրջապատուած: Վանքի քովերը կան քանի մը քարայրներ, որոնք կը կարծուին, թէ ժամանակին ճգնարաններ եղած են եւ բնակած անապատաւորներ: Հին գերեզմաննոց մը եւս կայ, որուն մէջ մինչեւ ցայժմ կը մնան մեծամեծ գերեզմանաքարեր:*

*Բարեպաշտ ժողովուրդն, արք եւ կանայք, գրեթէ միշտ ուխտի կ՚երթան այս վանքին, իրենց աղօթքն ու մոմը նուիրելու համար տաճարին, եւ նոյն սրբազան վայրերուն:*

*Այս վանքի մասին ձեռագիր Յայսմաւուրքի մը, որ կը գտնուի այժմ Արղնոյ Ս. Աստուածածնի Բարձրահայեաց վանքը. (տե՛ս Թորոս Աղբար, Բ., եր. 391) յիշատակարանէն կը քաղենք հետեւեալ մասն:*

*«Գրեցաւ մատեանս ի Զ.Լ.Գ. (1284) թվին, ի Հայրապետութեան Յակոբայ, եւ ի թագաւորութեան Լեւոնի, ի մայրաքաղաքն Սեբաստիա, ի ձեռն Ռուբինեայ, ի վանս Անապատ կոչեցելոյ»*[36]*:

## 15/3. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ[37]*

*[Սեբաստիոյ հիւսիսային կողմը, մէկ ժամ հեռաւորութեամբ] վերոյիշեալ Դաւրայ անուն հայաբնակ գիւղին ծայրն ալ,* «Մերեգում» *ըսուած լեռնաշղթայից ստորոտը բլրակի մը վրայ շինուած է Ս. Յակոբայ այս վանքը, որ գեղեցիկ տեսարանով, օդաւէտ լաւ դիրք մը ունի:*

Հին ժամանակները վանքը կը բաղկանար միակ մատուռէ մը, եւ վանականներու յատուկ մէկ երկու սենեակներէ, բայց վերջին ժամանակներու մէջ, Արհեստաւորաց ընկերութեան եւ բարեպաշտ ժողովրդեան նիւթական օգնութեամբ ու աշխատութեամբը, որոնց գլուխը կանգնած էր Զատրճեան Պետրոս անուն արհեստաւորը, չորս կողմերը չուրջանակի հաստատուն պարիսպով հիւսուեցաւ, եւ վանքը ընդարձակուելով, շատ աւելի շքեղ դիրք եւ երեւոյթ մը առած եւ կատարեալ վանք մը եղած է, աւելցուելով նաեւ սենեակներ ուխտաւորաց յատուկ:

Վանքի Տաճարն ալ նուիրուած է յանուն Ս. Յակոբայ, բաւականին գեղեցիկ, ունի կաթողիկէ մը՝ վրան քառաթեւ խաչով, տօնախմբութեան ժամանակն է «Գիւտ Նշխարաց Ս. Լուսաւորչի» տօնին օրը:

Վանքի անմիջապէս մօտիկը նորերս ծաղկեցուցած են պարտէզ մը, որ բաւականին ընդարձակ եւ ամէն տեսակ ծառերով ճոխացած:

Վանքէն փոքր ինչ հեռու, զառիվայրի մը գագաթը քարայր մը կայ, որուն համար աւանդութեամբ կ՚ըսուի, թէ Ս. Վառվառէի սրբավայրը կամ ճգնարանը եղած է, այս տեղը, 1889ին Յոյները աշխատեցան Հայոց ձեռքէն խլելու, բայց չի յաջողեցան, այժմ քարայրին չուրջը Հայոց կողմէ պարսպուած եւ ուխտատեղի եղած է:

Ասոր մօտերը կը գտնուի ուրիշ ընդարձակ քարայր մը եւս «Զաթալ Ս. Սարգիս» անունով, որ գետնէն քանի մը մէթր բարձր ապառաժի մը մէջ փորուած է, դարակներով, պահարաններով, խորաններով, ու խաչերով, եւ հին գերեզմաննոց մը եւս կայ ապառաժին տակը:

Այս վայրերն, ըստ աւանդութեան, Վասպուրականի Սենեքերիմ Արծրունոյ արքայի որդի Դաւիթ Արծրունոյ ամարանոցի տեղերն են եղեր, որուն հնութեան նմոյշները մինչեւ մօտ ժամանակներս կը տեսնուէին:

## 16/4. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ[38*]

Սեբաստիոյ Ս. Նշան վանքին քովերը, Հող-Դար ըսուած թաղին մօտ, ապառաժի մը վրայ շինուած է եղեր այս Ս. Յովհաննէսի վանքը:

Անորոշ ժամանակէն ի վեր անցած է Թուրքաց ձեռքը, որ այժմ աղօթատեղի ըրած են, եւ անունն ալ դրած են «Ապդլ Վահապ Ղազի»: Հայերը մինչեւ ցայժմ ալ կը կոչեն Ս. Յովհաննէսի Վանք[39*]:

## 17/5. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ[40*]

Սեբաստիոյ քաղաքին արեւմտեան ծայրն ընդարձակ Հայոց սեփական գերեզմանատուն մըն է: Այս գերեզմանատան մէկ կողմն այժմ կոյտ մը կայ խաչ քարերով եւ կոտրած սիւներով լիք: Այս տեղ հին ժա-

*մանակները հոյակապ տաճարով ընդարձակ վանք մը շինուած էր յանուն Քառասուն Մանկանց, որոնց գերեզմանն ալ Տաճարին մէջ էր[2]:*

*Վանքը բոլորովին աւերեցաւ ու կործանեցաւ Թուրքաց ձեռքով գրեթէ վեց դարեր առաջ, այն է՝ 1384ին, եւ Սեբաստիոյ Ստեփաննոս Եպս.ն, եւ իր երկու ձեռնասուն աբեղայ վարդապետները նահատակուեցան նոյն Թուականին, միեւնոյն օրուան մէջ, եւ Թաղուեցան նոյն գերեզմանատունը:*

*Այս գերեզմանատան մէջ կան նաեւ քանի մը երկայն մուԹ եւ լերջ քարեր, առանց խաչի եւ յիշատակարանի, զորս կ՚անուանուին «Քաջանց Գերեզմանք»:*

*Վիեննայի ՄխիԹարեանց մատենադարանի ձեռագիրներու կարգին ԺԷ. կամ ԺԸ. դարուն մէջ գրչագրուած Թիւ 417 հաւաքածոյ գրքին հատակոտոր մասերուն մէջ, այս վանքի մասին, հետեւեալ յիշատակութեան կը հանդիպինք.*

*«Թուին ՊԼԳ. (1384)... Բուրղան Ղատին եսպան զսէրն[41*] Սեբաստիոյ զՍտեփաննոս Եպիսկոպոս նահատակեաց եւ զՔառասնից վանքն քակեաց...» (տե՛ս Տաշեան, Ցուցակ, եր. 871)[42*]:*

*Այժմ ներկային մէջ Հայ եկեղեցականք երբեմն վրանի տակ, պատարագելու կուգան այս տեղ, երբոր բարեպաշտ ժողովրդեան կողմէ փափաք յայտնուի[43*]:*

## 18/6. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[44*]

*Սեբաստիոյ վանքերէն մին էր, բայց վանքի բուն տեղը չենք կրնար որոշել, որովհետեւ ի վաղուց անցած է ի չարս շաբաԹացեալ Հայ վանորէից:*

*Սեբաստիոյ Ս. Սարգիս եկեղեցւոյն մօտերը, հնաշէն փոքրիկ ուխտատեղի մը կայ, որուն համար Թէեւ կ՚ըսուի Թէ, այս է Ս. Լուսաւորչի վանքն, եւ շինուած էր նաեւ ի յիշատակ գալստեան Ս. Գր. Լուսաւորչին, ի Սեբաստիա, բայց մենք հաստատուն ապացոյց մը չունինք եւ չենք կրնար բուն իսկ տեղն որոշել: [Միայն Թէ Սեբաստիայէն ինը ժամ հեռու Պաղչէճիք գիւղի մօտ լերան մը վրայ, աւերակ հին վանքի մը տեղը կայ, որուն համար, առանց հաստատուԹեան եւ տարակուսանօք, կ՚ըսենք Թէ գուցէ այս ըլլայ]: Կը փափաքինք, որ Սեբաստիոյ բանասէր-վանասէրներն, եԹէ կարելի է հաճին որոշել այս վանքին տեղը:*

---

[2] «Քառասուն Մանկանց» շաբաթացեալ վանքէն քսան վայրկեան հեռի, դէպի հարաւ, Ալիս գետի մօտերը, ընդարձակ բլուրի մը մէկ ծայրը, յանուն Ս. Թորոսի, կամ գիւղացիք ինչպէս կ՚ըսեն «Սըբ Թըրիչի» վանք մըն ալ կայ եղեր, որ կործանուէր է Լէնկթիմուրի հրամանաւ: Վանքի աւերակաց մնացորդները մինչեւ ցայժմ կը մնայ եղեր, ինչպէս կը ծանօթացնեն մեզ:

Այս Ս. Լուսաւորչի վանքի անունը յիշատակուած է նաեւ Հայերէն ձեռագիրներու յիշատակարանաց մէջ, որոնցմէ երկուքը յառաջ կը բերենք (տե՛ս նաեւ Տաշեան ցուցակ, եր. 870 եւ 1005):

Ոսկեփորիկ անուն ձեռագրի մը յիշատակարանէն:

Ա. «...Որ ետ կարողութիւն տկար ու տարտամ անձին իմոյ Մարտիրոս մեղսամած երիցու, հասանել յաւարտ Սուրբ գրոցս, որ կոչի Ոսկեփորիկ, ի թվին ՌԻ. (1571), ի քաղաքն Սեբաստիոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Լուսաւորչին...» [տե՛ս Տաշեան Ցուցակ, եր. 1005]:

Բ. «Թվին ՌԽԱ. (1592), Սեբաստիոյ տաճիկն չարեցաւ առաւ զՍուրբ Լուսաւորչի վանքն...» (տե՛ս Տաշեան Ցուցակ, եր. 870)[45*]:

## 19/7. ԽՈՆԸՐԿՏՈՒՐ ՎԱՆՔ[46*]

Սեբաստիոյ արեւմտեան կողմը, մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ Մայրագոմի վարի ծայրը, ընդարձակ ձորին աջակողմը շինուած է վանքս, որուն հիմնարկութեան թուականն անծանօթ է:

Վանքի մատուռը նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի: Մատուռը, ինչպէս նաեւ ուխտաւորաց յատուկ քանի մը սենեակները, թէեւ խարխուլ էին, բայց վերջերս փոքր ինչ նորոգութիւններ կատարուելով որբանոցի յատկացուած է, սակայն այժմ տեղեկութիւն մը չունինք, թէ որբանոցը կը շարունակուի՞, թէ ոչ:

Վանուցս տեղւոյն օդը սքանչելի, եւ առողջարար ջուրն ալ վճիտ ու անուշ առատ աղբիւրներով: Տօնախմբութեան օրն է, Ս. Աստուածածնի վերափոխման տօնին: Քաղաքացիք օդափոխութեան կուգան այս տեղ եւ վրաններ չարելով կը մնան քանի մը ամիսներ: Վանքն ունի 15 արտավարի չափ երեք կտոր արտորայք միայն:

Տեղացիք ոմանք, այս վանքը կ՚անուանեն նաեւ «Խնդրակատար Վանք», [իբր թէ ուղղելով Խոնըրկտուրն][3], բայց այսպիսի տառադարձութիւն մը որ աստիճան իրաւացի է, չենք կրնար բան մը ըսել, այլ միայն տեղացի առհասարակ, եւ դրացի միւս ժողովուրդներն այս վանքին կ՚ըսեն նաեւ «Խուլ քէսէն քիլիսէ» = խոնրկտուրի, որոնք ալ միշտ կը դիմեն այս վանքը բժշկութիւն գտնելու եւ առնելու համար[47*]:

---

[3] Ուխտատեղի մըն ալ կայ, Խոնրկտուր վանքին վերեւ, Մայրագոմի ժայռերուն վրայ բացուած: Այրերէն միոյն մէջ քանդակուած ձեռք մը կայ, որուն «Աստուածածնայ ձեռքի մաղարայ» կ՚ըսուի, ուր միշտ բարեպաշտ ժողովուրդը կը դիմէ, եւ իրենց հետ կը տանին նոր ոտք ելած տղաքները, եւ երեք անգամներ կը պտտցնեն հոն:

## 20/8. ՍՈԽԱԿԵՐԱՑ ՎԱՆՔ[48]*

[Կամ Սոխկերոյ վանք, որ] Սեբաստիայէն երեք ժամու չափ հեռի, բայց վանքի տեղը չենք կրնար որոշակի ցոյց տալ, որովհետեւ Սեբաստիոյ ի վաղուց ամայացած եւ անցած ի չարս չաբաթացեալ վանքերէն մին ալ այս է:

Կ'աւանդուի թէ, այս վանքին մէջ, որ սեննկաձեւ քարայրներէ կը բաղկանայ եղեր, իր ժամանակին միաբանները, մէյ մէկ խստապահանջ ճգնաւորներ, ամբողջ տարւոյն մէջ ամառ ձմեռ, առաւօտ եւ երեկոյ, կամաւոր ուխտադրութեամբ, միշտ սոխ ու հաց կ'ուտեն եղեր, եւ այս պատճառաւ ըսուած է կ'ըսեն, վանքին «Սոխակերաց» կամ «Սոխակերոյ» վանք:

## 21/9. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ

Սեբաստիոյ, ի վաղուց աւերակ, եւ ի չարս չաբաթացեալ Հայ Վանորէից անցած վանքերէն մին ալ այս է [Ս. Առաքելոց վանքը], որուն այժմեայ տեղւոյն եւ վիճակին վրայ մասնաւոր որոշ տեղեկութիւն մը չկրցինք ստանալ:

Միայն թէ «Գըլխըտեղ» ըսուած բլուրի ուխտատեղին, որ Սեւերիանոսի ճգնութեան վայրն է, եւ կը գտնուի նոյնպէս Գըլխըտեղ անուն գիւղին վրայ, վանքը այս ճգնարանին մօտերը կը գտնուի եղեր, կ'ըսեն:

## 22/10. Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔ[49]*

Սեբաստիայէն հինգ կամ վեց ժամու չափ հեռաւորութեամբ, Աղտու կամ Տուզասար կամ Թուզլասար անուն գիւղի մօտ, բարձր բլուրի մը, կամ լեռնակի մը լայնանիստ բարձրաւանդակին վրայ շինուած է վանքս, որ ժողովրդեան բերնին մէջ կ'ըսուի նաեւ Յաղթու Ս. Հրեշտակապետի վանք:

Ակնապարար եւ սքանչելի տեսարան մը ունի վանքս, ու կը տիրէ Ալիս (Գըզըլ ըրմագ) գետին եւ շրջապատ լեռներուն, որոնց գեղեցկադիր դիրքերը նկարագրել դժուարին է մեզ համար, Վանքի առջեւը կը տարածուին նաեւ հովիտը եւ հովիտի մէջ եղած բոլոր գիւղերը:

Վանքի միակ Տաճարը, որ նուիրուած է յանուն Ս. Հրեշտակապետի, թէեւ փոքրիկ, բայց շատ գեղեցիկ եւ սիրուն դիրքով շէնք մըն է:

Երկար տարիներ, մինչեւ 1887 թուականին վանքի վանահայր եղած է Զառայ գիւղացի Մովսէս վարդապետ, եւ անխոնջ աշխատած է վանքին նորոգութեան եւ շէն մնալուն, բայց դժբախտաբար, Տուզասարցիք

*հակառակելով վարդապետին, այդ թուականին ապերախտաբար վանքէն դուրս հանած են, եւ ատկէ ի վեր վանքը իր շէնութիւնը օրըստօրէ կորսնցնելու վրայ է:*

*Միաբանից եւ ուխտաւորաց յատուկ՝ երեսունի չափ մեծ ու փոքր սենեակներ կան, բայց ինչպէս ըսինք, այժմ միաբան վարդապետ չունի, մատակարարութիւնը յանձնուած է Հոգաբարձութեան մը, որ իբր թէ տարեկան հաշիւը ու համարը կը ներկայացնէ Սեբաստիոյ Առաջնորդին:*

*Սեբաստիոյ մէջ գտնուած վանքերուն մէջ, ամենէն շատ հողային հարստութիւն ունեցող վանքերէն մին է, կ՚ըսուի, այս Ս. Հրեշտակապետի վանքին համար, բայց ինչպէս կը լսենք, այդ արդիւնաբեր հողերը ձգուած են եղեր երեսի վրայ:*

*Վանքն ունի եղեր, 50 [50-60] կտորի չափ ալ հայերէն հին ձեռագիրներ, որոնք Սեբաստիոյ Ս. Նշան վանքը փոխադրուած են կ՚ըսուի:*

*Վանքին մօտերը գերեզմաննոց մը կայ, որ «Խաչ Բլուր» կ՚անուանուի, այս գերեզմանատան մէջէն 1871 թուականին գտնուեցաւ, Ս. Գոհարինեաց նշխարները արկղաձեւ չարուածքի մը մէջ զետեղուած, որոնց վրայ իբրեւ կափարիչ կար սպիտակ կճեայ քար մը, եւ որուն երկու երեսներն ալ փորագրուած էին հայերէն հետեւեալ յիշատակարանները:*

*Քարին առաջին երեսին վրայ.*

*«ԱՅՍ ՆԱՀԱՏԱԿՔ ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՍՐՈՎ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՌԱՏԻԿՈՍ [ՌԱՏԻՈՍ] ԵՒ ԳՈՀԱՐԻՆԷ ՏՆԿԻԿ ԵՒ ԾԱՄԻԴԷՍ»:*

*Երկրորդ երեսին վրայ.*

*«ԵՒ ԵԴԱՆ ՅԱՅՍՄ ՏԵՂԻՈՋ Ի ՁԵՌՆ Ս. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՐՍՂԻ, ԹՈՒԱ, ՈԼԸ. (1187) [ՈԼԶ.]»:*

*Գոհարինաց այս նշխարները փոխադրուելով, նոյն 1871 թուականին, ամփոփուեցան վանքի[50]* Տաճարին մէջ յաջակողմեան պատին Ս. Հրեշտակապետի մեծ պատկերին տակը, ուր հաստատուն կերպով զետեղուեցաւ նաեւ, վերոգրեալ յիշատակարանները պարունակող սպիտակ կճեայ կափարիչ քարն ալ[4]:*

---

[4] Այս Հրեշտակապետի վանքի անունը, ԺԲ. դարուն մէջ, գուցէ կը կոչուէր Ս. Նիկողայոսի անապատ, եւ կամ այս վանքի մօտերը կար ուրիշ վանք մըն ալ յանուն Ս. Նիկողայոսի: Այս կարծիքը յառաջ կը բերենք մենք Յաղթու, կամ Աղտու կամ Աղտից անունէն: Որովհետեւ Մշոյ Ս. Յովհաննու վանքին մէջ մագաղաթեայ երկաթագիր Աւետարան մը կայ ԺԲ. դարուն գրչագրուած, որուն յիշատակարանին մէջ կայ հետեւեալը. «...Գրեցաւ Աստուածատառ մատեանս... ի Սեբաստիա, յամի Ո.Ի.Ե. (1176), ի լեռինս Աղտից, ի դաշտահայեաց անապատիս, յանուն Հայրապետին Նիկողայոսի, ձեռամբ Կոստանդեայ մեղաւորի եւ անպիտան կրաւնաւորի, արդեամբ Քրիստոսասէր, արծաթագործ Կունելիոսի, որ Առաքել յորջորջիւր, հանդերձ զուգակցաւ իւրով Մանդուկի...» [Վերահրատ.՝ տե՛ս Գ. Յովսէփ., Յիշ., էջ 463-4]:

## 23/11. Ս. ԹԱԴԱՒՈՐԻ ՎԱՆՔ[51*]

*Սեբաստիայէն տասը ժամու չափ հեռու, Զառայ անուն մասամբ Հայաբնակ գիւղաքաղաքին մօտերը, կէս ժամու միջոցաւ բլուրի մը ստորոտը շինուած է Ս. Թադաւորի այս վանքը, որ ժամանակին Նշանաւոր վանքերէն մին էր կ՚ըսուի:*

*Այս վանքը երկար տարիներ աւերակ ու ամայի մնալէն ետքը, 1889ին նորոգութիւն մը տեսաւ ջանիւք Սեբաստիոյ Առաջնորդ հանգուցեալ Տ. Պետրոս Արքեպս. Թահմիզճեանի, եւ աշխատակցութեամբ բնիկ Զառացի Տ. Մովսէս վարդապետ Մատոյեանի, որ այն ժամանակ Զառայի մէջ Առաջնորդական փոխանորդ էր եւ վանքին ալ վանահայր:*

*Վանքն ունէր իր սեփական եւ բաւականին ալ արդիւնաւոր հողային արտորայք ու կալուածներ, բայց այժմ որեւէ բան չէ մնացած. միայն կը կառավարուի ուխտաւորաց նուէրներով: Ս. Հրեշտակապետի վանքի լքուած վանահայրը, Մովսէս վարդապետ 1912ին վախճանելով այս վանքին մէջ թաղուած է[52*]:*

## 24/12. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[53*]

*Սեբաստիայէն տասը ժամու չափ հեռու, եւ Զառայ անուն գիւղաքաղաքէն ալ մէկ ժամ հեռաւորութեամբ, Խօճասար, կամ Ղօչհիսար, կամ՝ Պետրոսի, կամ՝ Տէվէսէ անուն գիւղին մէջ շինուած է «Ս. Գէորգայ վանքը», որուն կ՚ըսուի նաեւ Տեւօծի, Դեւօճայի կամ՝ Դեւօճկայի, Տէվէկսէի (Տէվէքսէի), Տայօցայի կամ՝ Տէվէսէկի, Տէվէրիկի Ս. Գէորգայ վանք:*

*Վանքն ի վաղուց ամայի մնացած է, միակ պահապան մը կայ ինչպէս կը ծանօթագրեն մեզ, եւ չունի եղեր այժմ որեւէ միաբան վարդապետ մը իսկ:*

*Այս վանքի մասին ժողովրդեան մէջ կը պատմուի հետեւեալ աւանդութիւնը:*

*«Վանքի մօտերն իբր թէ թեւաւոր օձ մը բոյն դրած, երբեմն իր շուրջը սարսափ ազդելով կուգայ եղեր վանքը, ուրտեղ կով մը, կամ եզ մը եւ կամ ոչխար մը կը խեղդէ ու կուտէ եղեր հանդարտօրէն: Վանքի միաբաններն՝ եկեղեցական ու աշխարհական, իրենց վախէն կը քաշուին եղեր իրենց սենեակները դուռները փակելով:*

*Մի ժամանակ խստակրօն վարդապետ մը վանահայրութեան պաշտօնին կը կոչուի, որուն առաջին օրերուն, երբ օձը իր սովորական գործը կատարելու համար բոյնէն կ՚ելլէ, վանքի մշակներէն մին աճապարանօք լուր կուտայ Վանահօր եւ անմիջապէս կը փախչի իր սենեակը պահուըտելու համար:*

*Վանահայր վարդապետն անվախ դուրս կ՚ելլէ, եւ կը տեսնէ, որ իրօք ահագին թեւաւոր օձ մը, ժայռի մը վրայէն սողոսկելով դէպի վանք կուգայ, վանահայրը դէպի օձ կ՚աղօթէ եւ կը խաչակնքէ իր ձեռքը բռնած խաչով, որով օձն իսկոյն քար կը կտրի ժայռին վրայ, որուն նկարը մինչեւ ցայժմ կ՚երեւի այդ ժայռին վրայ»:*

*Ահաւասիկ, այս պատճառաւ է, որ կ՚ըսեն գիւղացիք, վանքին անունը կը յորջորջուի «Դեւօձկայի վանք»*[54]*:

* * *

*Սեբաստիայէն ինը ժամու չափ հեռի, Պաղչեճիք անուն գիւղին մօտերը լերան մը վրայ, հին վանքի մը աւերակներն ալ կը նշմարուին, բայց այս տեղւոյն վրայ որեւէ ծանօթութիւն մը չի կրցանք ստանալ, այնպէս կը կարծենք թէ, եթէ վանք չէ, գուցէ ուխտատեղի մըն է*[55]*:

# Դ. ԱՁԻՁԻԷ

*Ինչպէս ըսինք, Ազիզիէ Սեբաստիոյ կուսակալութեան ենթակայ գաւառակ (գազա) մըն է:*

*Ունի բաւական ընդարձակութիւն մը, եւ սահմանն է արեւմուտքէն՝ Կեսարիոյ գաւառը, արեւելքէն՝ Կիւրին, հիւսիսէն՝ Թօնուզ, հարաւէն՝ Ջահան գաւառակները:*

*Ազիզիէն հին անունով կը կոչուէր Բունար պաշի, իր անմիջական վերեւը գտնուած հովիտի անունով:*

## ՎԱՆՈՐԱՅՔ ԱԶԻԶԻԷ ԳԱՒԱՌԱԿԻՆ

### 25/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[56]*

*Կ՚աւանդուի թէ յիշեալ Բունար պաշի անուն հովտին մէջ, որ պարսպուած է եղեր հովիտը մեծ բարձրութեամբ մը, շինուած է եղեր այս վանքն, եւ կը կոչուի եղեր նաեւ «Ս. Կարապետի վանք Կոմանայի», ուր սուրբին նշխարներէն մաս մը կը պահուին եղեր վանքին մէջ ըստ վկայաբանութեանց:*

*Անյիշատակ ժամանակէ մը ի վեր հովտին մեծ պարիսպն ինկած, եւ վանքն ալ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից, բայց նոր ի նորոյ եղած պեղումներէն, հովտին մէջ ի յայտ կուգան վանքի մը եւ եկեղեցւոյ մը հիմեր, եւ կը տեսնուին կոփածոյ սեւորակ քարեր, մարմարեայ սիւներ, հրեշտակներու դէմքեր քանդակուած խոյակներ, որք կը հաստատեն աւանդութիւնը, եւ վանքի մը գոյութիւնը:*

### 26/2. ԽՆՁՈՐԻ ՎԱՆՔ[57]*

*[«Սեբաստիոյ նահանգին Բունարպաշի՝ նոր անուամբ Ազիզիէ կոչուած գաւառակին ենթակայ, Էքրէկ հայաբնակ գիւղէն երկու ժամ հեռու Սըվդըն...»] Ազիզիէ գաւառակին ենթակայ Սըվզըն անուն հայաբնակ գիւղի մէջ է Խնձորի վանքը, ինչպէս կը պատմեն այդ կողմի գիւղացիք աւանդութեամբ:*

*Ո՞ր ժամանակին հիմնարկուած եւ մինչեւ երբ շէն էր վանքն, այս մասին պատմական կամ աւանդական որ եւ է տեղեկութիւն մը չի կայ,*

*բայց ի վաղուց աւերակ ու ամայի, նոյնպէս անցած է ի չարս չաբաթացեալ Հայ Վանորէից[1]:*

*Վանքի շրջապատն ու հիմերը կը մնային մինչեւ մօտ ժամանակներս, որոնց քարերն գիւղացիք հանելով գործածած են իրենց պիտոյից, եւ միշտ կը գործածեն շարունակաբար[58]*:*

## 27/3. ՊԻՋՈՒԻ ՎԱՆՔ[59]*

*Պիզու, Կապադովկիոյ մէջ քաղաք մըն էր, ուր կար վանք մըն ալ «Պիզուի վանք» անունով, որ թէ քաղաքն եւ թէ վանքը հաստատուած եւ շինուած էր ԺԱ. դարուն մէջ, Բագրատունեաց վերջին թագաւոր Գագիկ երկրորդի կողմէն:*

*Գագիկ իր աքսորանաց վայրին մէջ ի Կապադովկիա-Կիզիստրայ, Յունաց Մետրոպոլիտին Հայոց դէմ բռնած մէկ յոռի ընթացքին համար ըրած յանդիմանութեան ու համարձակ խօսքերուն վրայ, օր մը Յոյներու կողմէ իբր թէ հաշտութեան հրաւիրուեցաւ, ի Տէվէլի Գարահիսար՝ Էրճիաս լերան վարի կողմը եղած բերդը, ուրտեղ յանկարծակի յարձակումի ենթարկուեցաւ Յունաց կողմէ, եւ բերդէն վար կախուելով՝ սպաննուեցաւ, եւ միւս օրն ալ թաղուեցաւ, բերդէն դուրս տեղւոյ մը վրայ:*

*Ժամանակ մը վերջը, Բանիկ անուն անձնաւորութեան մը միջոցաւ, գիշերանց գաղտնապէս հանուելով Գագիկի մարմինը իր տեղէն, տարուեցաւ իր Պիզու քաղաքն, եւ թաղուեցաւ հոն Պիզուի վանքին մէջ, ինչպէս կը յիշատակեն Ազգ. Եկեղեցական պատմագիրք, Վարդան վարդապետ, Մատթէոս Ուռհայեցի, աւելցնելով միանգամայն, թէ քաղաքին տեղը՝ նոյնպէս վանքն անյայտ են:*

*Այժմ շատերը Պիզու քաղաքը կը համարեն Թօմարզայ գիւղաքաղաքը, եւ վանքն ալ նոյն տեղի Ս. Աստուածածնի վանքը, բայց մենք, այս մասին քիչ մը տարակարծիք ենք, եւ թէեւ առանց որ եւ է ապացոյցի, մի միայն ենթադրութեամբ կ՚ըսենք, թէ Ազիզիէ գաւառակին ենթակայ եւ տակեց գրեթէ երեք ժամ հեռու, դէպի Թօմարզայ, Կապադովկիոյ մէջ Ծամնդաւ = Զամանթը գետին մօտերը, Էքրէկ անուն հայաբնակ գիւղն էր գուցէ Պիզու քաղաքն եւ նոյն գիւղի վրայի կողմ եղած այժմ ընդարձակ հին գերեզմանատունն ալ Պիզուի վանքը:*

---

1 Վերը յիշուած Սըվզըն անուն գիւղէն մէկ ու կէս ժամու չափ հեռու, դէպ ի հարաւային կողմ, բարձր դիրքի մը վրայ շինուած Բանլը անուն թուրքաբնակ գիւղին վերեւը կը գտնուի «Ս. Կոյս Մարիամի» ուխտատեղին, թէեւ հայ գիւղացիք, ըստ աւանդութեան «Ս. Կոյս Մարիամու Վանք» կ՚ըսեն, եւ տեղն ալ կը ցուցնեն, միշտ ուխտի կ՚երթան, եւ յանուն Ս. Կոյս Մարիամի հոն շինուած աղբիւրի ջուրէն ալ խմելու, որ մինչեւ ցայժմ կը վազէ:

Էքրէկ գիւղը մօտիկ է Կիզիսդրայի, եւ այդ կողմի 60-70 ի չափ, մեծաւ մասամբ Հայաբնակ գիւղերը կը կոչուին Պօզուքի գիւղեր, Էքրէկը այս գիւղերուն առաջինն է, ո՞ գիտէ, Պիզու անունը եղած է Պիզուկ եւ ապա ժողովրդեան բերնին մէջ փոխուած է Պիզուկի եւ այսպէսով ամբողջ գիւղերը կոչուած ըլլան Պօզուքի գիւղեր, կը կարծենք, թէ նկատողութեան առնուելու կէտ մըն է այս ալ:

Գերեզմանատունն, այսօր իսկ, վանքի մը աւերակները կը յիշեցնէ, իր չուրջը եղած պարսպի դիրքովը, եւ իր մէջ ունեցած մեծամեծ քարերով, եւ գերեզմանաքարերով, մանաւանդ մատրաձեւ բայց աւեր գերեզմանով մը, որուն շինութեան կերպն ամէն հնութիւն ու գեղարուեստ ունի ի վերայ:

Այս հին գերեզմանատան մէջ էր նաեւ այն մեծ քարն, որուն վրայ Հաթեան արձանագրութիւն մը կար: Այս քարը այժմ փոխադրուած է ի Կ. Պոլիս օսմ. միւզէխանէին, ինչպէս կը լսենք:

Քարին վրայի արձանագրութիւնը մենք օրինակելով հրատարակած էինք Վիէննայի Մխիթարեանց «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթի 1894 եւ 1896 թուականներուն, որուն մէկ նոր ու ճշգրիտ օրինակն յարմար դատեցինք այս տեղ ալ դնել: Աւելցնելով հոս թէ, քարին վրայի խաչերը, կ՚երեւի վերջէն քանդակուած, եւ քարն ալ դրուած ըլլայ Հայ մեռելի մը գերեզմանին վրայ:



Կուզենք նաեւ դնել, այդ հին գերեզմանատան մէջ գտնուող քանի մը հին տապանաքարերու եւ խաչքարերու վրայի արձանագրութիւնները, որոնք տեղ տեղ անընթեռնելի եղած են, առանց ազատ մնալու ժամանակի մաշող ձեռքէն:

*1. «Ի Թուակի, ԷՃ. ու ԻԴ. [1275], կանգնեցաւ Սբ. Նշան Հայոցին ի բարեխաւս...»:*

*2. «Ի Թուի ՇՃԽԱ. [1392] Կանկ (նեցաւ) Սբ. Նշանս ի բարեխաւս... ՈՒ ...»:*

*3. «Խաչատուր ի Թո...ի ԷՃԾԷ. [1308]. Կանկնեցաւ Սբ. Նշանս ի բարեխաւսութիւն տշաւ ի կնաս... սերեց որ զՍբ. Նշանս կանգնեց, Ք՛՛ս Ա՛՛ծ ողորմի»:*

## Ե. ԵՒԴՈԿԻԱ = ԹՕԽԱԹ

*Եւդոկիա կառավարչութիւն (սանճաք) է եւ իր գաւառներով ենթակայ է Սեբաստիոյ կուսակալութեան: Առանձին Առաջնորդական վիճակ, իր Առաջնորդ-Վանահայրական կազմութեամբ դուցէ ԺԲ. դարու պատկանի: Թէեւ երբեմն Եւդոկիան Կիլիկիոյ վիճակ եղած է, բայց այժմ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթակայ է եւ ունի առանձին Առաջնորդ:*

### Ե. ՎԱՆՈՐԱՅՔ ԵՒԴՈԿԻՈՅ

### 28/1. ՅՈՎԱԿԻՄ ԱՆՆԱՅԻ ՎԱՆՔ[60]*

*Եւդոկիոյ դէպի արեւելեան հարաւակողմ, մէկ ու կէս ժամու չափ հեռաւորութեամբ, Պիսկէնի անուն գիւղին մօտիկը, Եայլաճըգ ըսուած գեղատեսիլ բլուրի մը բարձրադիր կողին վրայ կառուցուած է Յովակիմ Աննայի այս վանքը. շատ փառաւոր դիրքով եւ հիանալի տեսարանով: Վանքին մօտ է նաեւ Կէճսի = Կոկիսոն գիւղն ալ: Օտարները այս վանքը կը կոչեն Պիսկէնի մանասթըր, վերեւ յիշուած գիւղին անունովը:*

*Վանքի հիմնարկութեան բուն թուականը ծանօթ չէ, աւանդութեամբ Թադէոս եւ Բարդուղիմէոս Առաքեալներուն կը տրուի վանքի հիմնարկութիւնը:*

*Շատ գեղեցիկ եւ արուեստական զարդ ու դրուագներով քանդակուած երկփեղկեայ փայտէ դուռ մը, որ այժմ վանքին մէջ մասնաւոր խնամքով կը պահուի, եւ որ հաւանական կը կարծուի, թէ վանքի երբեմնի եկեղեցւոյն դրան կը վերաբերէր, յիշատակարան մը ունի հետեւեալ կերպով:*

*«Ի ԹՈՒԻՆ ՋԻԸ. (1479), ԿԱՋՄԵՑԱՒ ԴՈՒՌՍ Մ՛՛Բ ՏԱՃԱՐԻՍ, ՅԻՇԱՏԱԿ Տ. ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ Տ. ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑՆ Ի ՔՐԻՍՏՈՍ, ՈՐ ԵՂԵՒ ՊԱՏՃԱՌ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ, ԵՒ ԱՅԼ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԱԽՏԱՒՈՐԱՑ ՀԱՅՈՑ ԱԶԳԻՍ, ԵՒ ՄԻԱԲԱՆԻՑՍ ԵՒ ԱՇԽԱՏՈՂԱՑՍ... (ԱՆԸՆԹԵՌՆԵԼԻ), ՁԵՌԱՄԲ ԱՆԱՐՀԵՍՏ ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻՈՅ ՇԻՆԵՑԱՒ...»:*

*Այս յիշատակարանին յենլով, կրնանք ըսել թէ, նոյն 1479 թուականէն շատ տարիներ առաջ, մանաւանդ այդ թուականին, այն է ԺԵ. դարու սկիզբները վանքին կազմակերպեալ վիճակ ունենալը երկբայութենէ զերծ իրողութիւն մըն է:*

Վանքը 1654 թուականին գրեթէ ամայացած է, բայց հինգ տարի վերջը, 1659ին թէեւ նորոգութիւն մը տեսած եւ միաբանութիւն եւս կազմուած է, եւ սակայն քիչ ժամանակ վերջ, կրկին ամայացած եւ այնպէս ալ մնացած է մինչեւ 1720 [ուղղ.՝ 1710] թուականին, որ ժամանակ ի հիմանէ մեծ նորոգութիւն մը տեսած է, Տ. Մարտիրոս անուն քահանայի մը աշխատութեամբ եւ ժողովրդական նպաստիւք: Ամենէն վերջին նորոգութիւնն ալ եղած է Զմիւռնիացի Գէորգ եպիսկոպոսի ձեռօք 1828ին, ինչպէս պիտի տեսնուի վարը յառաջ բերուելիք յիշատակարանէն:

Վանքը պարսպապատ է, եւ այժմեան դիրքովը շրջապատուած է նուշի, տանձի, խնձորի եւ այլ զանազան պտղատու եւ անպտուղ ծառերով: Պարսպին մեծ դուռը դէպի հիւսիս է, երկրորդ փոքրիկ դուռ մըն ալ կայ, դէպի արեւմուտք:

Ներքին շէնքերը գրեթէ ամբողջութեամբ երկյարկանի են, միաբանութեան եւ ուխտաւորաց յատուկ քսան եւ հինգէ աւելի սենեակներ կան, ունի նաեւ Առաջնորդարան, հիւրանոց մը, վարժարանի յատուկ մասնաւոր շէնք մը Ճեմարան անունով, սեղանատուն մը, խոհանոց մը, մառան մը եւ ամբարանոց: Դուրսը, վանքին մեծ դրան դիմացն ալ փոքրիկ տուն մը, որ «Չիֆթլիկ» կ՛անուանուի:

Վանքի դիրքը ու տեսարանը, ինչպէս ըսինք, հիանալի է, օդը գեղեցիկ ու առողջարար, ջուրը մաքուր եւ առատ, մշտահոս աղբիւրներով զարդարուն, ունի բաւականին մեծ աւազան մըն ալ:

Գազօվայի լայնատարած հովիտը, գեղեցիկ լեռները, Իրիս գետը, Պիսկէն եւ այլ գիւղեր, իրենց դաշտերով ու այգիներովը կը տարածուին վանքին առջեւը, որոնք զմայլում եւ հրճուանք կ՛ազդեն դիտողի մը, եւ այցելու մը գրեթէ զատուիլ չուզէր այդպիսի գեղեցիկ տեսարանէն:

Վանքի եկեղեցին թէեւ փոքրիկ, բայց քարաշէն, պայծառ ու ճաշակաւոր է, եւ կը գտնուի վանքին ճիշտ մէջտեղը: Եկեղեցւոյ դրան ճակտին վրայ քանդակուած է հետեւեալ յիշատակարանը:

«ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍՈՒՐԲ ՈՒԽՏՍ Ի ՀԻՄԱՆԷ, ՀԱՆԴԵՐՁ ՍԵՆԵԿՕՔ ԵՒ ՇՐՋԱՊԱՏ ՊԱՐՍՊՕՔ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՇԻՆՈՒԱԾՈՎՔ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1828, ՍԿՍԵԱԼ Ի ՍԿԻԶԲՆ ԱՊՐԻԼԻ ԵՒ ԱՒԱՐՏԵԱԼ Ի ՎԵՐՋՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ [ուղղ.՝ աշխատասիրութեամբ] ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՏՐՕՔ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵՒ ԻՒՐՆ ԵՒ ԻՒՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Վանքն ունի բաւականին եկեղեցական անօթք եւ զգեստներ, կահ կարասիներ, ձեռագիր եւ տպագիր այլ եւ այլ գրեանք: Ունի նաեւ սեփական 25 կտոր կամ 500 արտավարի չափ մշակելի բարեբեր հողեր,

*երկու ծեհրիլիք, այգի մը եւ պարտէզ մը, եւ Եայլաճըգ ըսուած վայրին մէջ արօտատեղի մը, եւ Թօխաթի մէջ ալ երկու խանութներ:*

*Իր անուան տօնախմբութեան օրէն ի զատ, գարնան եւ ամրան եղանակին, միշտ կուննեայ ուխտաւորներ, որոնցմէ մաս մը շատ անգամներ երկու երեք ամիս կը մնան օդափոխութեան համար:*

*Յիշատակարան մը եւս կայ վանքի մէջ դրան մը ճեղունին վրայ, որուն սկիզբը պակաս է:*

*«… … … … … … …*
*ԿԱՄԱՐԱՋԵՒ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ,*
*ԲԱՐՁՐԱՊԱՐԻՍՊ ԲՈԼՈՐՈՎԻՆ*
*ԵՒ ԱՂԲԵՐԱՑ ԲԵՐՈՂ ՍՈՐԻՆ,*
*ԲԱԶՄԱՋԱՐՋԱՐ ԱԽԱՐՏՈՂԻՆ*
*ԶՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՏԷՐ ՎԵՐԻՆ,*
*ՀԱԶԱՐ ՀԱՐԻՒՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԹՈՒԻՆ,*
*ԵՒ ՆՆՋՈՒՄՆ ԷՐ ՕՐ ՇԱԲԱԹԻՆ*
*ՄԱՅԻՍ ԱՄՍՈՅ ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԻՆ,*
*ՈՎ ՈՐ ԿԱՐԴԱՅ ԵՒ ՈՂՈՐՄԻՆ*
*ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՍՑԻՆ»:*

*Վանքի գերեզմանատան մէջ ալ կայ տապանաքար մը, վրան յիշատակարանով, որուն համար Թօխաթի բերդին ներքեւ, այժմ «Ժամբակ» կոչուած Ս. Նիկողոս եկեղեցւոյ աւերակներէն փոխադրուած է կ՚ըսուի:*

*Յիշատակարանն է, քարին մէկ երեսին վրայ.*

*«ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾ ԹՈՂՑԷ ՂԱՆՄՐԴՈՒՆ ՅԱՆՑԱՆՔՆ ՈՐ ՄԵՐ ԱՐԵՒԻՆ ՅԱՆՑԱՆԱՑՆ ԹՈՂՈՒԹԻՒՆ ՈՒԶԷ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑՆ ՈՐ ՅՈՒՍԱՒ Ի ՔՐԻՍՏՈՍԷՆ ՆՆՋԵՑԵԼ»:*

*Քարին միւս երեսին վրայ.*

*«Ի ԱՍՏՈՒԱԾ ՓՈԽԵՑԱՒ ՄԵՐ /// ՊՐՆ. ՎԱՐԴԵՐԻՆ ՈՐԴԻՆ ՈՐ ՄԱՆՈՒԿ ԻԵ. ՏԱՐՈՒՆ ՈՐ ՓԵՍԱՅ ԷՐ ԴԵՌ ԶՓԵՍՈՒԹԵԱՆ ՂԱԼԱԹԻՆ ՉԷՐ ՄԱՇԵԼ, ՅԱՍՏՆՎՈՐԷՍ ՀԱՍՐԱԹ ԳՆԱՑ, ԳՐԵՑԱՒ Ի ԹՎ. ՉԿԳ. (1314) ՅՆՎՐԻ. Ի.»:*

*Նոյն գերեզմանատան մէջ ուրիշ տապանաքարի մը յիշատակարանն է.*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏ. ՓԱՇԱԽԱԹՈՒՆԻՆ ՈՐ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ. ԹՎ. ՋԺԷ. [1468]»:*

*Եղած է երբեմն ժամանակներ, որ այս վանքն աշխարհական տեսուչներու ձեռօք մատակարարուած է, որոնց մէջ թէեւ ամենազդեցիկը եղած է Յովհաննէս Սուքիասեան անուն անձը, բայց ինչ որ ալ ըլլայ, վանքը այս աշխարհական տեսուչներու ժամանակ կորսնցուցած է իր փայլը եւ նիւթական կորուստներու ենթարկուած:*

*Եկեղեցական վանահայրներէն կը յիշուին միայն հետեւեալք:*

*1. Յակոբ վարդապետ Երուսաղէմացի, հաւանակաբար 1479ին.*

*2. Յովհաննէս վարդապետ 1660ին, սա վախճանած է 1673ին, եւ թաղուած վանքի հողերու սահմանագլխին վրայ, որուն տապանաքարին վրայ գրուած է հետեւեալը.*

*«Ի ԹՈՒԻՆ ՌՃԻԲ. [1673], ՆՈՅՄ. Է., ՆՆՋՈՒՄՆ ԵՂԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԱՀԱՆԳԻՍ ԵՒԴՈԿԻՈՅ»:*

*3. Տ. Մարտիրոս Քահանայ, 1710ին: Այս քահանային տապանն ալ վանքին գերեզմանատան մէջ է. վրայի յիշատակարանն է.*

*«ՇԻՆՈՂ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԱՆՆԱՅԻ ՎԱՆՈՒՑ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅՆ, ՈՐ ՀԱՆԳԵԱՒ ՌՃՀ. [1721], ՄԱՅԻՍ ԺՋ.»:*

*4. Երեմիա Եպս. Կ. Պոլսեցի.*

*5. Գէորգ Եպս. Զմիւռնիացի.*

*6. Յակոբոս Եպս. Սերոբեան, Մարզուանցի, որ եաքը Կ. Պոլսոյ պատրիարք եղած է, առաջին անգամ 1839ին, երկրորդ անգամ՝ 1848-58ին.*

*7. Գալուստ վարդապետ Պօնճուգեան, Թօխաթցի.*

*8. Եփրեմ վարդապետ.*

*9. Մարտիրոս վարդապետ.*

*10. Յակոբ Եպս. Ճգնաւորեան Թօխաթցի.*

*11. Ներսէս վարդապետ Մկրտիչեան:*

*Ասոնք միայն ծանօթ են մեզ առայժմ:*

*[Գէորգ եպիսկոպոսի եւ Գալուստ վարդապետի գերեզմանները Տաճարի դրան դիմացն են՝ կապոյտ մարմարեայ տապանաքարերով: Գէորգ եպիսկոպոսի վանահայրութեան օրով միաբանք կ՚յիշուին, Յովհաննէս վարդապետ (որ յետոյ Ակնայ Առաջնորդ եւ եպիսկոպոս եղած է). Զաքարիա, Եսայի, Գալուստ, Գաբրիէլ, Ներսէս, Յովհաննէս, եւ Թադէոս վարդապետներ][61]*:*

## 29/2. [Ս. ՆՇԱՆԻ կամ] ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՎԱՆՔ[62]*

*Եւդոկիայէն չորս ժամու չափ հեռաւորութեամբ Պիգեռի [[illegible]] անուն Թրքաբնակ գիւղի անմիջական մօտն է, լայնանիստ դիրքով մը, որուն հիմնարկութիւնը եղած է ԺԱ. դարուն մէջ [ժամանակակից Սեբաստիոյ Ս. Նշան վանքի], եւ անուանուած է Ս. Նշանի Վանք:*

*Վանքի հիմնադիրներն, որք ըստ աւանդութեան, Վասպուրականի Սենեքերիմ արքայի երեք մեծահոգի զաւակներն են եղեր, վանքի եկեղեցւոյն մէջ երեք խորաններ կառուցած են, իրենց յիշատակին համար: Աւագ խորանը նուիրած են յանուն Ս. Նշանի, որով վանքն ալ կոչուած է Ս. Նշանի վանք, միւս երկու սեղաններէն մին յանուն Ս. Գրիգորի, եւ միւսն՝ յանուն Ս. Կարապետի [նուիրուած են]:*

*Վանքի հիմնարկութենէն քիչ ժամանակ վերջ, հիմնադիր իշխաններու հայրը Սենեքերիմ արքայն, Կոկիսոնէն կամ Կոմանայէն բերել տուած է, Յովհան Ոսկեբերան Հայրապետի տապանաքարը, եւ զետեղած է եկեղեցւոյ ձախ կողմը որմին կից, եւ այս պատճառաւ ալ վանքը կոչուած է «Ս. Յովհան Ոսկեբերանի վանք»: Ոսկեբերանի գեղեցկապէս քանդակագործուած տապանը եւ կափարիչը կապոյտ կանանչ մարմարիայ քարէ են, որոնք այժմ Թանկագին հնութիւն մը կրնան համարուիլ:*

*Վանքը՝ զանազան ժամանակներ եղած նորոգութիւններէ զատ, 1842 Թուականին հիմնական նորոգութիւն մը տեսած է, աշխատութեամբ եւ ջանիւք Մարզուանցի Յակոբոս Եպս. Սերոբեանի: Այս վերջին նորոգութեան ատեն, յիշեալը Ս. Նշանի խորանը միացուցած է Ս. Գրիգորի սեղանին հետ, վերցնելով մէջտեղէն միջնորմը, եւ հին գաւիթն ալ փլցնելով, ի հիմանէ նոր եկեղեցի մը շինած է, անուանելով զայն Ս. Յովհան Ոսկեբերանի եկեղեցի: Տաճարի մեծ դրան շէմին վրայ դրած է հետեւեալ յիշատակարանը.*

*«ԲԵՐԱՆԴ ՈՍԿԻ ՓԱՌՔ ՔԵԶ ԱՍՏՈՒԱԾ ՄԻՇՏ ԱՍԷՐ, / ԱՇԽՈՅԺԴ ԲԱՐԻ ՎԵՐԸՆԾԱՅԵԼ ԸՍՏԻՊԷՐ, / ԶԱՅՆ [ճԳր-Մ՝ ւայ] ԶՍՏԱՆԱՅՐ ՅԱԿՈԲՈՍ ԴԷՏ, / ՄԻՆՉ ՅԱԹՈՌ ՔՈ ԴԵՌ ՆՍՏԷՐ, / ԶՈՐՈՅ ԵՐԿՈՒՆՍ ՃԸԳԱՆՑ Ի ՍՄԱ՝ Ի ՀԱՃՈՅՍ ՔՈ ԸՆԿԱԼ ՏԷՐ:*

*ՇԻՆԵՑԱՒ Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՏԱՃԱՐՍ ԲՈԼՈՐ ՇՐՋԱՊԱՏ ՊԱՐՍՊՕՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՇԻՆՈՒԱԾՈՎՔ, ԵՒԴՈԿԻՈՅ ԵՒ ՎԻՃԱԿԱՑ ՆՈՐԱ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՊԱՇՏ ՕՐՀՆԵԱԼ ԺՈՂՈՎՐԴՈՑ ՏՐՈՎՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ, 1842, ՌՄՂԱ.»:*

*Տաճարին հարաւակողմը կ'իյնայ Առաջնորդարանը, եւ միաբան վարդապետ ու աշխատաւորներու յատուկ 10-12 [14-15] սենեակներ, որք գրեթէ կրկնայարկ ու գեղեցիկ շինուածքներ են, մասնաւորապէս աւելի աչքի կը զարնէ Առաջնորդարանն իր ընդարձակութեամբը:*

*Ուխտաւորաց Թաղը, Տաճարի հիւսիսային կողմը կ'իյնայ, եւ կը բաղկանայ 25-30 սենեակներէ, որոնք բաւականին կոկիկ ու մաքուր են, ունի մշտահոս երկու աղբիւրներ եւ մեծ աւազան մը: Խոհանոցը, մառանը, ամբարանոցը շինուած են առանձին առանձին տեղեր:*

*Վանքն ունի սեփական 40 կտորէն աւելի մշակելի արտօրայք, պարտէզ մը եւ այգի մը: Եւդոկիոյ մէջ տուն մը եւ երկու խանութներ, Կ. Պոլսոյ մէջ մէկ սենեակ, Պիզեռի անուն գիւղին մէջ ձիթահան մը, վանքին պարիսպէն դուրս Չիֆթլիք անուանեալ տեղ մը, եւ ասոր մօտիկը Կէօմրիւք ըսուած շէնք մը ութը սենեակներով, որ եւ առանձին վարձու կը տրուի:*

*Այս վանքն ալ կառավարած են երբեմն աշխարհական տեսուչներ, եղած է ժամանակ մըն ալ, որ մատակարարութիւնը տեսչուհիի մը յանձնուած է, բայց վերջին ժամանակներս միաբան Օհան վարդապետի յանձնուած էր մատակարարութիւնն, այժմ ինչ վիճակ ունի, տեղեկութիւն չունինք:*

*Վանքի ուխտաւորութեան օրերն են, Ս. Աստուածածնի, Ս. Խաչի տօներուն, եւ Մեծի Պահոց Աւագ ուրբաթի օրն [օրերը], որ ժամանակներ կը դիմեն շրջակայ քաղաք ու գիւղերէն բարեպաշտներու բազմութիւն մը յուխտ եւ երկրպագութիւն*[63*]*:*

# Զ. ԱՄԱՍԻԱ-ՄԱՐԶՈՒԱՆ

*Ամասիա կառավարչութիւն (սանճագ) է, Սեբաստիոյ կուսակալութեան ենթակայ, եւ Մարզուանն ալ գաւառակ (գազա) է, Ամասիոյ կառավարչութեան ներքեւ:*

*Առաջնորդական վիճակ է Ամասիա-Մարզուան, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթակայ, որ կը շարունակուի ԺԴ. դարէն ի վեր: Առաջնորդը կը նստի երբեմն Ամասիա եւ երբեմն ալ Մարզուան, Ս. Աստուածածնի վանքը:*

## ԱՄԱՍԻՈՅ-ՄԱՐԶՈՒԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ

### 30/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[64*]

*Մարզուանի դէպի հարաւային կողմը, մէկ ժամու չափ հեռաւորութիւն ունեցող Լիճ անուն գիւղին արեւելեան կողմը գտնուած դաշտավայրի մը վրայ կառուցուած է Ս. Աստուածածնի վանքն, որուն «Ջարխափան Ս. Աստուածածնի վանք» ալ կ՚ըսուի: Շատ վայելուչ, գեղեցիկ ու չքնաղ դիրք մը ունի վանքն, եւ հռչակաւոր է նաեւ իր հոյակապ Տաճարին գեղեցկակերտ հնութեամբն:*

*Վանքին հիմնարկութիւնը աւանդութեամբ կ՚ընծայուի Անդրէաս Ս. Առաքելոյն: Նախկին ժամանակներու մէջ վանքն երբեմն ամայացած, երբեմն շէնցած, եւ երբեմն աւազակներու կողմէն հրդեհի տրուած, եւ այդպէս ամայութիւնը շարունակուած է մինչեւ ԺԸ. դարու կէսերն, այսու ամենայնիւ Համատանցի կամ Պաղտատցի Յովհաննէս Եպիսկոպոսի (որ 1782ին տարի մըն ալ պատրիարք եղած է Կ. Պոլսոյ) Մարզուան-Ամասիոյ Առաջնորդութեան օրերուն, եւ նոյն իսկ իր ջանիւք (1783-1794) կը նորոգուի վանքն, եւ ի հիմանէ կը կառուցուի այժմեայ գեղեցիկ Տաճարը, վերջին նորոգութիւն մըն ալ կ՚ըլլայ [1843-5ին] Յակոբոս Եպս. Սերոբեանի[65*] օրովը, աւելցուելով նաեւ ուխտաւորաց թաղերէն զատ միաբանական թաղ մը, Առաջնորդարան եւ հիւրանոց մը:*

*Վանքի բոլոր շէնքերը, բացի Տաճարէն, աղիւսով եւ հողով շինուած են: Մշտահոս եւ մեծաքանակ ջուր մըն ալ ունի, զոր բերել տուած է, Յովհաննէս Եպս. Եդեսեան:*

*Տաճարը քարաշէն է, կամարակապ եւ չորս սիւներու վրայ: Աւագ խորանը նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի, աջակողմեանը յանուն Ս. Լուսաւորչի, եւ ձախակողմեանը յանուն Ս. Նշանի: Երկու փոքր մա-*

*տուռներ ալ կան եկեղեցւոյն երկու կողմերը, մին յանուն Անդրէաս Ս. Առաքելոյ, միւսը յանուն Ս. Կարապետի, որոնց դուռներն եկեղեցւոյ մէջ կը բացուին: Կ՚աւանդուի, թէ Անդրէաս Ս. Առաքելոյն մատուռը հիմնարկուած է նոյն իսկ յիշեալ Ս. Առաքեալէն, որուն Ս. Աջը կը պահուի այժմ նոյն մատրան մէջ:*

*Ս. Կարապետի մատրան առջեւը, բակին մէջ երկու գերեզմաններ [աշխ.-ի՝ շիրիմներ] կան, մին պաղտատցի Յովհ. Եպս.-ի, միւսը՝ Ս. Էջմիածնի նուիրակ Որբերեան Աբրահամ Եպս.-ի, որոնք երբեմն Պատրիարք ալ եղած են Կ. Պոլսոյ:*

*Տաճարին դրան ճակատը քանդակուած է հետեւեալ յիշատակարանը:*

*«ՁԱՐԽԱՓԱՆ ՎԱՆՔՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ,*
*ԱՅՆ ՈՐ ԳԹԱԾՆ Է ՈՂՈՐՄԻ [աշխ.՝ այս տողը չկայ],*
*ՆԱԽԱՀԻՄՆԵԱԼՆ ԱՆԴՐԷԻ,*
*ՅԱՒԱՋԱԿԱՑ ԱՅՐԵԱԼ ՔԱԿԻ [աշխ.՝ այս տողը չկայ],*
*ՄՆԱՑ ՅԻՍՈՒՆ ԱՄ ԱՄԱՅԻ,*
*Ի ԼԻՆՈՊՈՆՏԵԱՑ ԳԱՒԱՌԻ:*
*ՅԱՄԱՍԻՈՅ ՀՈՒՊ ՆԱՀԱՆԳԻ,*
*Ի ՎԵՐԱՅ [աշխ.-ի՝ Վանայ ] ի վերայ] ԱՐՋԱԿ ԴԱՇՏԻ,*
*ԵՒ Ի ԳԵՂՋՆ ՈՐ ԼԻՃ ԱՍԻ,*
*Ի ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԱՐՀԻՈՅ ԴԻՏԻ [աշխ.-ի՝ առաջնորդութեան ] առաջնորդ Դիտի],*
*ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ,*
*ԵՐԲԵՄՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ,*
*ՊԱՂՏԱՏՑԻ ԱՆՈՒԱՆՈՒՈՂԻ [աշխ.-ի՝ մականուանողի ] անուանողի],*
*Ի ՇԻՆՄԱՆ ՍՈՐԻՆ ՀՐԱՄԱՆ ԼԻՆԻ,*
*ՋԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ՍԿՍԱՆԻ,*
*Ի ՀԻՄԱՆԷ ՆՈՐ ՆՈՐՈԳԻ,*
*ՔԱՋ ԾԵՐՈՒՆԵԱՑ ՎԵՐԱԿԱՑՈՒԻ,*
*ՅԻՇԱՏԱԿ ՄԵԾ ՅԵՏ ԹՈՂԱՆԻ,*
*ԱՌԱՏ ՏՐՈՎՔ ԻՒՐ ՎԻՃԱԿԻ,*
*ՅՈԼՈՎ ՋԱՆԻՒՔ ՀԱՅԿԱՅ [աշխ.-ի՝ Հայ ] ՍԵՌԻ,*
*Ի ՄԵՐ ՀԱՅՈՑ [աշխ.-ի՝ տոմարական ] մեր Հայոց] ԹՈՒԱԿԱՆԻ,*
*ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՍ ՅՈԲԵԼԵԱՆԻ,*
*ՔԱՌԱՍՈՒՆԵՐՈՐԴՆ [1791] ՀԻՄՆ ԱՐԿԱՆԻ,*
*Ի ՉՈՐՐՈՐԴՈՒՄՆ [1795] ԱՒԱՐՏԻ [աշխ.-ի՝ վերջին երկու տողը չկայ]»:*

*Վանքն ունի սեփական բազմաթիւ արտորայք ու կալուածք, որոնց թիւը 60 կտորի կը հասնի կ՚ըսուի, պարտէզ մը եւ երկու այգիներ, գրեթէ 2-3 ժամու չափ շրջապատով ընդարձակ արօտատեղի մը, Թավշան*

*տաղի ըսուած տեղը, որ վանքէն գրեթէ չորս ժամու չափ հեռու է*[1]*:*

*Վանքին մէջ եղած գրատունն եւ վարժարանի տեղն, 1890 թուականներուն որբանոց եղած էր, 15-20 ի չափ որբ տղաքներ հաւաքուելով, որոնց ծախքը տեղական միջոցներով կը հայթայթուէր, այժմ ալ կը շարունակուի՞ թէ ոչ, որեւէ տեղեկութիւն մը չունինք:*

*Ամասիոյ-Մարզուանի Առաջնորդ-վանահայրներու յաջորդութեանց ցուցակն ալ կը դնենք այս տեղ, բայց ըստ մեր ծանօթութեան, ինչպէս պիտի երեւի, 1745 թուականէն անդին չանցնիր:*

*Մարզուանի Ս. Աստուածածնի վանքին մէջ նոյն թուականէն առաջ պատահած էր մեծ հրդեհ մը, եւ այս հրդեհը տեղի ունեցած էր աւազակներու կողմէ, որուն երեսէն այրած եւ գրեթէ աւեր վիճակի մը մատնուած էր Վանքը:*

*Մեր այս ցուցակը, հետեւաբար կը ներկայացնէ այն Առաջնորդ-Վանահայրներու անունները միայն, որոնք այդ հրդեհէն ետքը սկսած են պաշտօնավարել:*

*Այս ցուցակին կազմութեան ժամանակ, մենք քիչ շատ օգտուած ենք նաեւ Մարզուանցի Արժ. Տ. Մամբրէ քահանայ Թէփիկեանի մէկ օրագրութենէն, զոր համառօտակի ընդօրինակելով ղրկած է մեզ 1907 թուականին Կեսարիա:*

*1. ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ. Առայժմ ասոր ծննդավայրն ու մականունն անծանօթ կը մնան: Առաջնորդ-Վանահայրութիւնը կ'ընդունի*

---

[1] Վերեւ յիշուած Թավշան տաղի ըսուած տեղը, ուր Ս. Աստուածածնի վանքը արօտատեղի մը ունի, այդ լերան շղթայից միոյն վրայ, որ ըստ բաւականին ընդարձակ լեռնադաշտ մըն է, հովա-կաւոր ուխտատեղի մը կայ Խաչին լեռը անունով:

Աննման ու զով օդովը, ջինջ ու պաղ ջուրովը, անտառոտ եւ ծաղկաւէտ ու գեղեցիկ դիրքովը անուանի է վայրս:

Թէ՛ Մարզուանէն եւ թէ՛ վանքէն տեղւոյս ճանապարհը գրեթէ լեռնային է եւ շատ դժուարին, դէպի զառիվեր մանուածապատ անցքեր, այսու ամենայնիւ ամառ ատեն, Մարզուանի եւ գաւառի ամէն կողմերէն շատերը կ'երթան, եւ քանի մը ամիսներ ժամանակ կ'անցընեն, այս հովասուն եւ զբօսալի վայրին վրայ:

Այս ճանապարհին եւ ասկէ վեր կը գտնուի նաեւ Գօճայ Եօգուշ, Փալան Դէօքէն ըսուած վայրերն ալ, եւ սակայն ասոնց ելքը ալ աւելի դժուարին է:

Խաչին լեռը ուխտատեղւոյն վրայ աւանդութիւն մը կայ ժողովրդեան մօտ, թէ Անդրէաս Ս. Առաքեալն երբ կը վերադառնար Պոնտոսէն, այս տեղ կը նստի քիչ մը հանգստանալու համար, եւ Յիսուս Խաչ ի ձեռին մանկան մը կերպարանքով կը տեսնուի, կը խրախուսէ իր աշակերտն, եւ նոյն տեղէն ալ ջուր մը կը բղխեցնէ, ջուր մը, որ բժշկութիւն կուտայ հաւատքով իրեն դիմող ամէն տեսակ հիւանդներու:

Այս տեղւոյն վրայ, Մարզուանի Ս. Աստուածածնի վանքին արձանագրութիւններուն մէջ ալ գրուածք մը կայ հետեւեալ կերպով:

«Տավշան տաղիի վրայ, որ Խաչի լեառն ալ կ'ըսուի, Սուքիաս ճգնաւորը բաւական ժամանակ ճգնութիւն ըրած եւ իջած է Ս. Վանքը շինելու, որու ճգնած անտառի վրայէն տասը մասուրայի չափ մաքուր ջուր կը բղխի, եւ ամէն տարի Վարդավառի տօնին շրջակայ քաղաք եւ գիւղերէ ուխտաւորներ կ'երթան, եւ հոն պաշտօն ու պատարագ կը մատուցուի, եւ այս տեղէն երկու հազար կանգնոյ չափ հեռու դէպի արեւմտեան հարաւային կողմ կայ գերեզման մը, որուն Բարադամ ճգնաւորի գերեզման է կ'ըսուի»:

*1745ին եւ նոյն թուականին կը ձեռնարկէ իր պաշտօնը, մնալով քաղաքին մէջ եւ երբեմն ալ վանքը, միայն չորս տարի պաշտօնավարելէ ետքը, առանց որեւէ նշանաւոր գործունէութեան մը 1749ին սկիզբները կը ձգէ իր պաշտօնը եւ կը մեկնի:*

*2. ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Երզնկացի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով կուգայ Ամասիա-Մարզուան 1749 թուականին, եւ կը պաշտօնավարէ տասն եւ ութ տարիներ, շատ արդիւնաւոր կերպով, միայն թէ 1763ին միջոցները Ստեփան անուն Եպիսկոպոս մը կուգայ Ամասիա, որուն արդէն ժողովրդեան կողմէ «Գաւազան կիւգէլի» մակդիրը տրուած է եղեր, Առաջնորդական պաշտօնը ձեռք կ՚անցնէ, հակառակելով ու հալածելով Գրիգոր վարդապետին, մեկուսացնելով զայն, եւ սակայն Եպիսկոպոսը տարի մը միայն հազիւ կը յաջողի մնալ այդ պաշտօնին վրայ եւ ապա կը մեկնի ամօթահար, եւ Գրիգոր վարդապետը կրկին կ՚սկսի շարունակել իր օգտակար ու արդիւնաւոր պաշտօնավարութեան մինչեւ 1768 թուականին վերջերը, եւ նոյն թուականին ալ կը վախճանի եւ կը թաղուի վանքին մէջ: Կը կարծենք, թէ այս արդիւնաւոր վարդապետին գերեզմանին վրայ որեւէ տապանաքար ու տապանագիր չիկայ:*

*3. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Սեբաստացի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնին կ՚անցնի 1769ին: Սա եւս մեծ ու արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցած ըլլալուն, սիրուած է ժողովուրդէն եւ վիճակին ամբողջ ժողովրդեան փափաքին վրայ 1773ին Եպիսկոպոսութիւն ստանալու համար կ՚երթայ Ս. Էջմիածին, եւ Կարնեցի Ղուկաս Ա. Ամենայն Հայոց վեհ. Կաթողիկոսէն ձեռնադրութիւնը ստանալով կը վերադառնայ իր վիճակն, եւ իր պաշտօնն եօթը տարիներ եւս արդիւնաւոր կերպով կը շարունակէ, եւ չի գիտցուիր ի՛նչ պատճառաւ 1780ին կը մեկնի այլուր: Ասոր մեկնումէն ետքը, երկու տարիներ շարունակաբար առանց Առաջնորդի կը մնայ Ամասիա-Մարզուանը:*

*4. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Պաղտատցի կամ Համատանցի: Սա միաբան է Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանուց. 1780-81ին, տարի մը Առաջնորդ եղած է Պրուսայի, եւ 1781-82ին տարի մըն ալ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած էր: Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով ալ Ամասիա-Մարզուան եկած է 1783ին: Իր պաշտօնին սկսած օրէն առաջին փափաքը եւ գործը կ՚ըլլայ Մարզուանի այրած վանքը հիմնովին նորոգել, եւ կը յաջողի ալ երկար տարիներու քրտնաջան վաստակօք ու աշխատութեամբ եւ բարեպաշտ ժողովրդեան առատ տրօք, 1795ին լրացնելով շինութեան եւ նորոգութեան գործն իր ամէն մանրամասնութիւններով, նոյն տարին իսկ վանքի Տաճարին օծման արարողութիւնը կը կատարէ, յանուն Զարխափան Ս. Աստուածածնի:*

*Յովհաննէս Եպս. Պաղտատցիի Առաջնորդութիւնը, շատ արդիւնաւոր եղած է թէ՛ վիճակին եւ թէ՛ վանքին համար, սիրելի եղած էր ինքն ալ իր սուրբ եւ անարատ կեանքով եւ մաքուր ընթացքով, ժողովրդեան ջերմ սէրն ու համակրութիւնը շահած, ամէն անհատ ու անձ պատկառանօք կը դիմէր իրեն: Այսպէս տասն եւ երեք տարիներ շարունակաբար պաշտօնավարելէ ետք, վախճանած է 1796ին եւ թաղուած է վանքին մէջ, իր գերեզմանը կը գտնուի Տաճարին հարաւային արտաքին որմին առաջը գեղեցիկ տապանաքարով մը եւ հետեւեալ տապանագիրով.*

*«Ի ՆԵՐ ՎԻՄԻՍ Է ՍՈՒՐԲ ՄԱՐՄԻՆ,*
*ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՀԻՈՅ ԴԻՏԻՆ,*
*ԱՄԱՍԻՈՅ ՎԵՐԱՏԵՍՉԻՆ,*
*ԵՐԲԵՄՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ,*
*ՍՈՅՆ ՋԱՐԽԱՓԱՆ ՎԱՆՍ ՇԻՆՈՂԻՆ,*
*ԲԱՐԻ ԿԱՐԳՕՔ ՀԱՍՏԱՏՈՂԻՆ,*
*ՅԱՆԱՊԱՏԻ ՎԱՐՍ ԿՐԹՈՂԻՆ,*
*ՊԱՂՏԱՏՑԻ ՄԱԿ ՎԵՐՋԱՅՆՈՂԻՆ,*
*ՍՈՒՐԲ ՍԱՂԻՄԱՅ ՄԵԾ ԾԱՌԱՅԻՆ,*
*Ի ՀԻՆՏ [կարդա՝ Հնդկաստան] ԵՐԹՈՂ ՆՈՒԻՐԱԿԻՆ,*
*ԷՋՄԻԱԾՆԱՅ ՍԵՐՏ ՄՏԵՐՄԻՆ,*
*ԱՇԽԱՐՀԱԼՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,*
*ՍԱ ՓՈԽԵՑԱՒ Ի ՄԵՐ ԹՈՒԻՆ,*
*ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՍ ՅՈԲԵԼԻՆԻՆ,*
*Ի ՄՏԱՆԵԼ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀՆԳԻՆ [1796],*
*ՅՕԳՈՍՏՈՍԻ ՔՍԱՆ ԵՒ ՈՒԹԻՆ,*
*Ա՛ՐԴ ԼՈՒԱՐՈՒՔ ՍՈՅՆ ԳՈՉՈՂԻՆ,*
*ԱՂԱՂԱԿԻ ԱՆՄՌՈՒՆՋ [կարդա՝ անմռունչ] ՁԱՅՆԻՆ,*
*Ո՛, ԱՆՁԱՒՈՐՔ [կարդա՝ անձաւորք] ԱԶԳՔ ՄԱՐԴԿԱՆ [կարդա՝ մարդկային],*
*ԱՌ Ի ԳԹԱԼ ՏԱԼ ՁՈՂՈՐՄԻՆ»[66]*:*

*5. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ. Սա արդէն իր վարդապետութեան ժամանակ ալ Առաջնորդ-Վանահայր էր Ամասիոյ-Մարզուանի, եւ իր պաշտօնը ձգելով մեկնած էր 1780 թուականին ինչպէս վերեւ յիշատակեցինք: Այսպէս տասն հինգ տարիներ այլուր գտնուելէ եւ Եպիսկոպոսական աստիճանին բարձրանալէ ետքը, 1796 թուականին կրկին անգամ կուգայ Ամասիա-Մարզուան, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով, եւ այս անգամ երկու տարի միայն պաշտօնավարելով կը վախճանի, եւ կը թաղուի Ամասիոյ Սավայիտ թաղի ի Ս. Աստուածածին եկեղեցին:*

*6. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Զմիւռնիացի, եւ ձեռնասուն աշակերտ Ամասիոյ-Մարզուանի նախկին Առաջնորդ Պաղտատցի Յովհաննէս Եպիսկոպոսի: Առաջնորդ-Վանահայրի պաշտօնով կուգայ Ամասիա, 1800 թուականին: Բարի վարուք օժտեալ մէկն է եղեր, սա եւս սիրելի եւ համակրելի կը դառնայ ու պատկառանք կազդէ ժողովրդեան եւ մեծ գործունէութիւն կը ցուցնէ:*

*Իր ջանիւք եւ աշխատութեամբ Ամասիոյ երեք թաղերու մէջ կ՚սկսին շինուիլ երեք եկեղեցիներ, որոնց երեքին ալ հիմնաքարերու օծումն անձամբ կը կատարէ, եւ մեծ ջանք կը ցուցնէ այդ երեք եկեղեցիներու շինութեան լրումին, եւ սակայն առանց հասնելու իր սիրելի փափաք ու բաղձանքին, կը վախճանի 1805ին, գրեթէ հինգ տարի պաշտօնավարելէ ետքը, եւ կը թաղուի Մարզուանի Ս. Աստուածածնի վանքին մէջ: Իր գերեզմանը կը գտնուի, իր հոգեւոր հօր, Յովհաննէս Եպիսկոպոս Պաղտատցիի գերեզմանին ճիշտ քովը, որու տապանաքարին վրայ գրուած է հետեւեալ կերպով.*

*«ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1805 ՅՈՒՆԻՍ 22*
*ՄԵԾԱՆՈՒՆ ՈՒԽՏԻՍ ՇԻՆՈՂ ՐԱԲՈՒՆՈՅՍ,*
*ԱՇԱԿԵՐՏ ԸՆՏԻՐ ՇՆՈՐՀԻՒ ԳԵՐԱԼՈՅՍ,*
*ՍՏԵՂԾԵԱԼ ԶՄԻՒՌԻՆ ԾԱՂԻԿ ՇՆՈՐՀԱԲՈՅՍ,*
*ԳԷՈՐԳ ՊԱՆԾԱԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:*
*Ի ՀԱՆԴԷՍ ԶՔՆԱՂ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՒԹԵԱՆ,*
*ՅՈՒՑԱՒ ԱՆԱՂՕՏ ԱՐՓԻԱՆՄԱՆ,*
*ԸՆՏՐԵՑԱՒ ԱՅՍ ԳԱՀ ՅԱԶՈՐԴ ՀԱՅՐԱԿԱՆ*
*ԳԷՈՐԳ ՊԱՆԾԱԼԻ ՀՈՎԻՒ ԱՐԹՆԱԿԱՆ:*
*ԴԱՐՄԱՆԵԱՑ ԶՀՕՏՍ ՅԱՐՕՏ Մ՛՛Բ ԳՐՈՑ,*
*ԶՈՎԱՑՈՅՑ ՇՆՈՐՀՕՔ ԶՀՈԳԻՍ ՊԱՍՔԵԼՈՑ*
*ՅԱՅՍ ՊԱՇՏՕՆ ՃՔՆԵԱԼ ՅԵՕԹՆԱՄԵԱՑ ՄԻՋՈՑ*
*ԳԷՈՐԳ ՊԱՆԾԱԼԻ ՔԱՐՈԶ ԶԵՐԿՆԱՅՆՈՑ:*
*ԿԱՆԽԱՀԱՍ ՄԱՀՈՒԱՄԲ ՄԱՐՄԻՆԻ ՀՈԳԻՈՅ,*
*ԻԲՐ ԶՃՐԱԳ ՇԻՋԱՒ Ի ԼՈՒՍՈՅ,*
*ՎԱՌԵԼ ԿԱՅ ՅԵՐԿԻՆՍ ԱՆԴՐԷՆ ԸՍՏ ՀՈԳԻՈՅ,*
*ԳԷՈՐԳ ՊԱՆԾԱԼԻ ՐԱԲՈՒՆ ԳԵՐԱՐԳՈՅ»:*

*7. ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Սեբաստացի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը 1806ին ընդունելով կուգայ յԱմասիա, եւ միայն հինգ տարիներ պաշտօնավարելէ ետքը, 1811ին կը ձգէ պաշտօնն եւ կերթայ այլուր, առանց նշանաւոր գործունէութիւն մը ցցունելու թէ վիճակին եւ թէ վանքին մէջ:*

*8. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ. Բնիկ Զարշամպացի, 1812 թուականին կը ղրկուի Ամասիա, այլ եւ այլ պատճառներով, ուր կը մնայ ժա-*

*մանակ մը վանքին մէջ: Առաջնորդ-Վանահայր Պօղոս վարդապետ Սեբաստացին ալ արդէն մեկնած ըլլալով, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը կը յանձնուի Արիստակէս վարդապետին եւ երեք տարիներ միայն պաշտօնավարելէ ետքը, 1815ին կը վախճանի ի Մարզուան, եւ կը թաղուի վանքի գերեզմանատան մէջ:*

*9. ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Երեւանցի, Օրպէլեան ցեղէն եւ Մելիքեան տոհմէն, երբեմն վանահայր՝ Երեւանայ Տաթեւի կամ Ստաթեւի հռչակաւոր վանքին, եւ երբեմն Պատրիարք (1813-1815) Կ. Պոլսոյ, նշանակուած Աբրահամ Գոլեան Տաթեւացի անունով, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով ալ կուգայ յԱմասիա-Մարզուան 1816ին, եւ միայն երեք տարիներ պաշտօնավարելէ ետքը կը վախճանի 1819ին հազիւ յիսուն տարեկան հասակին մէջ, եւ կը թաղուի վանքը, Պաղտատցի Յովհաննէս Եպս. ի գերեզմանին քով, իր տապանաքարին վրան կայ հետեւեալ տապանագիրն.*

*«ԱՄՓՈՓԵԱԼ ՊԱՏՈՒՈՎ ԱՍՏ ՆՆՋԷ Ի ՔՈՒՆ,*
*ՄԷԼԻՔԵԱՆ ԶԱՐՄԷՆ ԱԲՐԱՀԱՄ ՐԱԲՈՒՆ,*
*ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԷ ՍՆՈՒՆԴ ՎԵՀԱԶՈՒՆ,*
*ՏԱԹԵՒԱ ՎԱՆՈՒՑ ԴԻՏԱՊԵՏ ԱՐԹՈՒՆ*
*ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇՆՈՐՀԻՒ Ս. ՀՈԳԻՈՅՆ,*
*Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՒԻՐԱԿ ԾԱՅՐԱԳՈՅՆ,*
*ԸՆՏՐԵԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅՆ,*
*ԱՊԱ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՂԻՈՅՍ ԳԵՐԱԳՈՅՆ,*
*ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ՄԱՀՈՒՆ ԱՄԱՑ ԻԲՐ ՅԻՍՈՒՆ,*
*ՍՈՒԳ ԱՌԵԱԼ ՈՂԲՈՑ ՀԱՄԱՅՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ,*
*ՓՈԽԵՑԱՒ Ի ՊԱՐՍ ԵՐՋԱՆԿԱՑ ԴԱՍՈՒՆ,*
*ԲԱՐՁԱՒ ՅԱՋԳԷՍ ՏԵՍՈՒՋ ԻՄԱՍՏՈՒՆ:*
*ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1819 ՓԵՏՐ. 1»:*

*10. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Պալաթցի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով կուգայ 1819 Յունիս ամսոյն մէջ, եւ գրեթէ երկուքուկէս տարի պաշտօնավարելէ ետքը Կ. Պոլսոյ պատրիարք կ՚ընտրուի, եւ կը մեկնի 1822ին վերջերը:*

*11. ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՈԲԵԱՆ. Կարապետ Եպս. Պալաթցիի կողմէն Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով կը ղրկուի յԱմասիա 1823 Թուականին, եւ չորս տարիներ արդիւնաւոր կերպով պաշտօնավարելէ ետքը 1827 Թուականին պատճառաւ մը կը ղրկուի Գաղատիա, ուր Ս. Աստուածածնի վանքին մէջ տարի մը մնալով 1828ին կը վերադառնայ իր պաշտօնատեղին: Այս միջոցներուն Մարզուանի մէջ, մեծ եւ ընդարձակ եկեղեցւոյ մը շինութեան փափաքը կ՚ունենայ, եւ 1832ին կայսերական արտօնագիրն առնելով կ՚սկսի շինութեան, երկու կամ երկու-*

քուկէս տարիներ անդուլ ու անդադար աշխատելով կը լրացնէ ամբողջական կերպով, եւ 1835 Սեպտ. ամսոյ 8ին օծման հանդիսաւոր արարողութիւնն ալ կը կատարէ, եւ իրաւամբ անմոռանալի յիշատակ մը կը թողու Մարզուանի Հայ ժողովրդեան: Եկեղեցին սիւներով զարդարուած, ընդարձակ ու փառաւոր դիրք մը ունի, որուն նմանը իր շրջակայ քաղաքներուն մէջ չի գտնուիր, այցելու հիւրեր, որք կուգան ի Մարզուան, հիանալով կը դիտեն եւ երանի կուտան Մարզուանցւոց այդպիսի փառաւոր եկեղեցի մը ունեցած ըլլալնուն համար: Ամէն տարի Սեպտ. 8ին եկեղեցւոյ տարեդարձը կը կատարուի մեծ հանդիսաւորութեամբ, Ս. Պատարագ կը մատուցուի, եւ հանգստեան աղօթք կը կատարուի, ի հանգիստ հոգւոյ Յակոբոս Եպս. Սերոբեանի: Եկեղեցւոյ արեւմտեան մեծ դրան ճակատը, զետեղուած մեծ քարի մը վրայ ոսկեզօծ տառերով գրուած է հետեւեալ յիշատակարանը.

«ՍԿՍԵԱԼ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1833 ՕԳՈՍՏ. 21,
ՀԱՐՍՆ ԻՄ ԱՆԵՂԻՆ ՏԱՃԱՐ ՄՕՐ ԲԱՆԻՆ,
ԳԵՂ ԶՈՒԱՐՃԱԼԻ Ի ՅԻՍ ՏԵՍԱՆԻՆ,
ԶՈՅԳ ԸՆԴ ԶՈՅԳ, ԴՐՈՒՆՔ ՄԱՏՈՒՌՔ ԶՈՐԵԿԳԻՆ,
ԳԵՂԱՊԱՆԾ ՅՕՐԻՆԻՆ ԶԻՄ ՋԵՒ ԳԼԽՈՎԻՆ,
ԱՆԽՈՆՋ ՋԱՆՔ ԵՐԿԱՆՑ ՅԱԿՈԲԱՑ ԴԻՏԻՆ,
ՏՈՒՐՔ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՂԻՈՅՍ ՀԱՅ ԱԶԳԻՆ,
ԶԱՅՍ ՅԱՐԿ ՄԵԾԱԾԱԽՍ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑԻՆ,
ՈՐՈՑ ՅԵՐԿՈՒՍ ԿԵԱՆՍ ԲԱՐԻՍ ՀԱՏՈՒՑԻՆ,
ԵՒ ԱՒԱՐՏԵԱԼ 1835 ՍԵՊՏ. 8»:

Յակոբոս Եպս. Սերոբեան, 1839ին Կ. Պոլսոյ Պատրիարք կ՚ընտրուի, եւ նոյն թուականին կը մեկնի ի Կ. Պոլիս, բայց այս առաջին անգամ պատրիարքական պաշտօնն երկու տարիներ միայն կը շարունակէ, եւ հրաժարելով 1841ին կրկին անգամ կուգայ Ամասիա-Մարզուան, մի եւ նոյն ատեն ստանալով նաեւ Եւդոկիոյ Առաջնորդական պաշտօնն ալ, այս անգամ ալ կը մնայ եօթը տարիներ, եւ այս ժամանակամիջոցին մէջ ալ նորոգել կուտայ Ս. Յովհան Ոսկեբերանի վանքը, եւ կը շինուին նաեւ Ամասիոյ, Եւդոկիոյ, Հաճիգիւղի, Վէզիր քէօփրիւյի, Լատիկու եւ Պաֆրայի եկեղեցիներն, ամենքն ալ քարուկիր: Սամսոնի եկեղեցիին համար ալ կ՚ըսուի թէ Նորին Սրբազնութեան օրով, եւ ջանիւքը շինուած է:

Երկրորդ անգամ, 1848ին, Պատրիարքութեան պաշտօնով Կ. Պոլիս կ՚երթայ, այս անգամ ալ ութը տարիներ կը մնայ շարունակաբար, 1856ին կը հրաժարի, եւ կը մեկնի ի Ս. Երուսաղէմ, յուխտ եւ երկրպագութիւն Ս. տեղեաց, հոն կը մնայ տարիի մը չափ, եւ հիւանդանալով չի կրնար վերադառնալ, եւ կը վախճանի 1862ին, ու կը թաղուի Ս.

*Փրկչայ վանքին մէջ, որուն գերեզմանին վրայ դրուած է տապանաքար մը, եւ տապանագիրն է հետեւեալն.*

*«ԱՅՍ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ*

*ՅԱԿՈԲԱՅ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱԽԿԻՆ*

*ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՈԼՍՈՅ ՈՐ ԵԿԵԱԼ ՅՈՒԽՏ*

*ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՑ ՀԱՆԳԵԱՒ Ի*

*ՏԷՐ ՅԱՄԻ 1862 Ի 6Ն ՆՈՅԵՄԲԵՐԻ»:*

*Յակոբոս Եպս. Սերոբեանի Կ. Պոլսոյ առաջին Պատրիարքութեան ժամանակ երկու տարիներ, եւ երկրորդին՝ երեք տարիներ Ամասիոյ-Մարզուանի Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնը, կ'երեւի փոխանորդներով կը կառավարուէր, որովհետեւ այդ ժամանակամիջոցներուն Առաջնորդներու անուան յիշատակութիւն մը չիկայ:*

*12. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Բնիկ Սամաթիացի, ձեռնասուն աշակերտ Յակոբոս Եպս. Սերոբեանի, Առաջնորդ-Վանահայրութեան պաշտօնով կուգայ Ամասիա-Մարզուան 1851 թուականին, որ ժամանակ վարդապետ էր: Տարի մը պաշտօնավարելէ ետքը, 1852ին, համայն ժողովրդեան փափաքանաց վրայ կ'երթայ Ս. Էջմիածին, ուր Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոս Տ. Տ. Ներսէս Ե. Աշտարակեցիէն Եպիսկոպոսական աստիճանն ընդունելով, կը վերադառնայ իր վիճակն ու կ'սկսի շարունակել իր պաշտօնն:*

*Այսօր օրովը Մարզուանի Ս. Աստուածածնի վանքին մէջ կը գտնուէին հետեւեալ միաբան վարդապետները. 1. Մատթէոս Վարդապետ Հաճըգիւղցի, 2. Զաքարիա Վարդապետ Մարզուանցի, 3. Սահակ Վարդապետ Ամասիացի, 4. Ներսէս Վարդապետ Ասլանեան Սամաթիացի, 5. Յակոբ Վարդապետ Շատարեւեան Մարզուանցի, 6. Յովհաննէս Վարդապետ Սինանեան Մարզուանցի:*

*Գէորգ Եպիսկոպոսն ալ, իր գործունէութեամբ եւ աշխատասիրութեամբ փայլուն դիրք մը գրաւած էր վիճակին մէջ, բայց վարժարանի մը չինութեան առթիւ, Մարզուանի մեծ նոր աղաները, իրեն համամիտ չեն գտնուիր, եւ կ'սկսին բողոքներ տեղացնել Ազգային Պատրիարքարանին, այս բողոքներու եւ գանգատներու վրայ քննութիւն մը կատարելու համար, 1865ին, Զարշամպայի Առաջնորդական փոխանորդ Մեսրոպ Վարդապետ Սուքիասեան, Ամասիա-Մարզուան կը ղրկուի Պատրիարքարանի հրամանագրով, եւ Գէորգ Եպս. ն ալ, Կ. Պոլիս կը կանչուի:*

*Երբ Մեսրոպ Վարդապետ իր քննութեան անաչառ արդիւնքը կը տեղեկագրէ Պատրիարքարանին, ասոր վրայ նոր գգացումով տոգորուած մեծ աղաներն, այս անգամ ալ, ծանր նախատինքներով Մեսրոպ Վարդապետին վրայ կը խուժեն ու կը հեռացնեն զայն եւս, եւ կը շա-*

րունակեն իրենց բողոք ու ամբաստանութիւնները Գէորգ Եպս. ի մասին, եւ սակայն այս յերիւրական բողոքներուն կարեւորութիւն չի տրուիր Պատրիարքարանի ժողովոց կողմէն, եւ Եպիսկոպոսը կրկին կը ղրկուի իր վիճակը 1866ին:

Իրարու մէջ հաշտութիւն գոյացունելու համար, Գէորգ Եպս. ը պէտք եղած զոհողութիւնները թէեւ կ'ընէ բայց երբէք գիջում չ'ըլլար Մարզուանի այդ նոր մեծ աղաներու կողմէն, նոյն իսկ գիտնալով հանդերձ, թէ անիրաւ են: Ասոր վրայ Եպս.ը ծանրապէս վիրաւորուելով կը քաշուի յԱմասիա, ու իր օրերն կ'անցնէ վիշտերով ու տառապանքով, որ մըն ալ յանկարծ կը հիւանդանայ իջուածք մը ունենալով, եւ կը վախճանի 1867 Մարտ 2ին եւ կը թաղուի Ամասիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ գաւթին մէջ:

13. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԵԴԵՍԵԱՆ. Ամասիոյ-Մարզուանի Առաջնորդ-Վանահայր կ'ընտրուի 1868ին: Ընտրութեան կանոնաւորութիւնը Ազգ. Պատրիարքարանէն հաստատուելով, Կայսերական պէրաթը կ'ստացուի, եւ Եդեսեան սրբազան 1868 Ապրիլ 25ին կը հասնի Ամասիա եւ կը ձեռնարկէ պաշտօնին:

Եդեսեան թէեւ անհանդարտ բնաւորութեան տէր մէկը, բայց անաչառ եւ ուղղամիտ, ոչ քծնող, մանաւանդ ուր որ ալ ըլլայ, նոր աղաները եկեղեցական, կրթական, վանական գործերէն հեռու պահելու սկզբունքին հետեւող, Ամասիա-Մարզուան ալ մտած օրէն կը հետեւի իր այդ ուղղութեան, եւ երբէք չի թոյլատրէր, որ ատոնք այդ գործերու միջամտեն, եւ հասոյթներն ալ իրենց հաճոյքին համեմատ գործածեն ու ծախսեն, ասոր ալ հետեւանքը կ'ըլլայ, տեղւոյն Հայ համայնքին մէջ, Եդեսեան-Հակաեդեսեան բաժանումը, որ դժբախտաբար կը տեւէ երկար տարիներ, գրեթէ Եդեսեանի մինչեւ մահը:

Եդեսեան-Հակեդեսեան կուսակցութիւնը մեծ ծաւալ կ'առնէ 1872էն սկսեալ, եւ Ազգ. Պատրիարքարանը կ'ստիպուի միջամտել, քննիչներ կը ղրկուին, Եդեսեան երբեմն Կ. Պոլիս, երբեմն Իզմիր կը մնայ, եւ դարձեալ կուգայ իր վիճակն եւ առանց կարեւորութիւն տալու այն անձերու հակառակութեան կը շարունակէ իր պաշտօնը:

Եդեսեանի գործունէութիւնը շատ օգտակար եղած է Ամասիա-Մարզուանի մէջ, եկեղեցական ու կրթական տեսակէտով: Իրաւ է, որ վանական եւ եկեղեցական իրեր եւ գոյքեր վաճառած, բայց յատկացուցած այդ գումարները, նորանոր կալուածներու գնման ու շինութեանց, հիներու նորոգութեանց, որոնք այժմ եկեղեցւոյ սեփական են եւ արդիւնաւոր: Կատարած է նաեւ վանքին մէջ զանազան նորոգութիւններ, միաբանական կարգադրութիւններ, մասնաւորապէս մեծ ծախքով, վանքի պայծառութեան եւ արտօրէից մշակման արդիւնաւորութեան համար

*յատուկ ջուր բերել տալով, աղբիւրներ շինել տալով եւն, որոնք կը յիշուին եւ կը յիշատակուին իր անունով մինչեւ ցայժմ:*

*Եղեսեանը մեծ ցաւ զգալով, 1877ին կը քաշուի Մարզուանի Ս. Աստուածածնի վանքը, ուր կը նստի շարունակ եօթը տարիներ, քաշուած կեանքով, 1884ին Ամասիա կերթայ օդափոխութեան համար, բայց նոյն տարւոյ Յուլիս ամսոյն սկիզբները անկողին կիյնայ, եւ կարճատեւ հիւանդութենէ մը ետքը Յուլիս 29ին կը վախճանի 75 տարեկան հասակին մէջ, վերջին վայրկեանին կատարեալ ներողութիւն տալով իրեն հալածողներուն եւ հակառակորդներուն:*

*Եղեսեան կը թաղուի ամենամեծ հանդիսաւորութեամբ Ամասիոյ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մէջ, իր վրան կը շինուի գեղեցիկ շիրիմ մը, երկաթեայ ճաղերով շրջապատուած: Մեր համայնքին մէջ, այո՛, մարդու մը արժանիքը կը գնահատուի եւ կը յարգուի իր մահուընէ ետքը, այսպէս ալ կ՚ըլլայ Եղեսեանի համար Ամասիոյ-Մարզուանի մէջ: Այդքան հալածումներէ, հակառակութիւններէ, զրպարտութիւններէ, նիւթական ու բարոյական վնասներէ, այդպիսի ուղղամիտ, անաչառ, Հայ Առաքելական եկեղեցւոյ, ծիսից, կանոնաց, աւանդութեանց, եւ հիմնական աբարողութեանց պաշտպան, կարող անձի մը տառապանքներ քաշել տալէ ետքը, մահուան օրէն սկսեալ, մինչեւ ցայսօր մեծ դրուատանօք կը խօսուի իր վրայ, եւ մինչեւ անգամ ի սրտէ կը խոստովանին, թէ «Եղեսեանը մեռաւ եւ Ամասիոյ-Մարզուանի Առաջնորդութիւնն ալ հետը տարաւ»: Այսչափ ալ չէ, Ամասիոյ Հայ բարեպաշտ ժողովուրդը, անոր շիրիմը այնչափ գեղեցիկ կերպով շինել տալէ ետքը, վրան ալ մշտավառ կանթեղ մը կախել տուած է, եւ բարեպաշտք միշտ ուխտի կը կայնին անոր վրայ յարգանօք եւ մեծարանօք:*

*Կ՚աւելցնենք թէ, Եղեսեանի կեանքին, այլ եւ այլ տեղեր իր զանազան գործառնութեանց ու գործունէութեանց, Ամասիոյ-Մարզուանի Առաջնորդութեան պաշտօնին մէջ հոն ծագում առած հակառակութեանց վրայէն շատ համառօտակի անցանք, յարմար առթիւ մը, առանձին տետրակով մը կը յուսանք ամբողջացնել, եթէ մասնաւոր քանի մը տեղեկութիւններ եւս ստանանք:*

*Եղեսեանի Առաջնորդական պաշտօնէն հեռացուած, եւ քաշուած միջոցներուն Ամասիա-Մարզուան Առաջնորդական տեղապահի եւ փոխանորդի անունով եկած են.*

*1. Ստեփան Վարդապետ Արզումանեան, 1877ին.*

*2. Մկրտիչ Եպս. Տիգրանեան, 1878ին.*

*3. Սահակ Վարդապետ Պարթեւ Ամասիացի, 1879ին.*

*4. Մուշեղ Վարդապետ, 1880ին:*

*Եղեսեան Յովհ. Եպս.ին տապանին վրայի տապանագիրն է.*

*«ԵԴԵՍԵԱՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ,*
*ԵԴԵՍԵԱՆ ԿԸ ՀԱՆԳԻ ՅԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ,*
*ՄԵՐԹ ԷՐ ՔԱՋ ՀՈՎԻՒ ՊԱՇՔԷՍԻՐ ՎԻՃԱԿԻ,*
*ԱՊԱ ԱՄԱՍԻԱ ՄԱՐԶՈՒԱՆ ԿՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԻ,*
*ՄԵԾ ԵՐԱԽՏԻՍ ԳՈՐԾԵԱՑ ԱԶԳԻՆ ԱՇԽԱՐՀԻ:*
*ԷՐ ԵՒ ՊԱՇՏՊԱՆ ԻՐԱՒԱՆՑ ԱԶԳԻՆ,*
*ՈԽԵՐԻՄ ԹՇՆԱՄԻ ՀԱՄԱՅՆ ԱՆԻՐԱՒԻՆ,*
*ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՋԵԱՑ ՑՕՐՆ ՎԱԽՃԱՆԻՆ,*
*ԿԱՏԱՐՈՒՄՆ ՅԱՆՁՆԵԱՑ ԱՆԱՉԱՌ ԴԱՏԱՒՈՐԻՆ,*
*Ո՜ ՏԷՐ ԱՐԱՐԻՉ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ ԱՐԴԱՐ,*
*ՏՈՒՐ ՍՄԱ ՀԱՆԳՉԻԼ ՅԵՐԿՆԻՑ ՔՈ ՏԱՃԱՐ,*
*ԲԱՐԵԿԱՄՔ ԵՒ ՍԻՐԵԼԻՔ ԻՒՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ,*
*ՀԱՅՐ ՄԵՐԻՒ ՅԻՇԵՄՔ ԶԱՆՈՒՆՆ ԱՆԴԱԴԱՐ:*
*ՀԱՆԳԵԱՒ 75 ԱՄԵԱՑ*
*29 ՅՈՒԼԻՍ 1884 ՅԱՄԱՍԻԱ»:*

*14. ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՕԼՏԱՄԵԱՆ. Յովհ. Եպս. Եդեսեանի քաշուած կեանքով ապրած միջոցին, 1883ին, թէեւ իբրեւ Առաջնորդ կուգայ Ամասիա-Մարզուան, բայց նոյն տարուոյ Դեկտ. 14ին կը հրաժարի եւ կը մեկնի ի Կ. Պոլիս:*

*Յովհ. Եպս.ի մահուընէն ետքը, 1884 դեկտ. 3ին կրկին անգամ կուգայ, Առաջնորդական պաշտօնով. բայց այս անգամ ալ, առանց որեւէ գործունէութեան մը, գրեթէ տարի մը միայն մնալով, վերջնականապէս կը հրաժարի եւ կը մեկնի դարձեալ ի Կ. Պոլիս:*

*15. ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻՒՐՈՅԵԱՆ. Ազգ. Պատրիարքարանի կողմէն Առաջնորդական Տեղապահի պաշտօնով կը ղրկուի 1886ին: Հազիւ տարիի մը չափ մնալով, կը հրաժարի ու կը մեկնի ի Կ. Պոլիս:*

*16. ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԶՆՈՒՆԻ. Բնիկ Բաղիշեցի, իր աշխարհականութեան ժամանակ դասատուութեան պաշտօնով եկած էր Մարզուան: Ժամանակ մը անցնելէն վերջ վարդապետ կը ձեռնադրուի Յովհ. Եպս. Եդեսեանէ, իբրեւ միաբան Ս. Աստուածածնի վանքին, քանի մը տարի վերջը Եւդոկիա կերթայ Առաջնորդական Տեղապահի պաշտօնով, 1887ին հրաժարելով եկած էր վանքը: 1888 Յունուար 30ին Ազգ. Պատրիարքարանի կողմէն Առաջնորդական Տեղապահ կը կարգուի Ամասիոյ-Մարզուանի, բայց հազիւ վեց ամիս կը շարունակէ, եւ հրաժարելով կրկին կը քաշուի վանքը:*

*17. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ. Մամբրէ Վարդապետ Բզնունիի հրաժարումէն անմիջապէս ետքը, 1888 Օգոստոս 1ին իբր Պատր. փոխանորդ, Ամասիա-Մարզուան, կը ղրկուի Եղիշէ վրդ. Այվազեանը, որ Եւդոկիոյ վիճակն ալ միացնելով, կը ձեռնարկէ իր պաշտօնին:*

Այվազեան վարդապետը թէեւ վեց տարի կը մնայ իր պաշտօնին վրայ, բայց այնչափ կարճ միջոցին մէջ իր գործունէութիւնը միշտ յիշատակելի մնացած է Ամասիա-Մարզուանի եւ իր շրջակայից Հայ համայնքին մէջ: Աղջկանց վարժարան մը շինել տուած է Մարզուանի մէջ, բաղնիք մը Հաճը գիւղի մէջ եւ սեփականած նոյն գիւղի վարժարանին, Զիլէի մէջ ալ Պէզէսթէն մը, նոյն քաղաքի Ս. Եկեղեցւոյն սեփական: 1894ին միջոցները հրաժարելով մեկնած է ի Կ. Պոլիս:

18. ՆԻԿՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՖՐԱՆԿԻՒԼԵԱՆ. Բնիկ Մարզուանցի, միաբան Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանուց, սա իբր հիւր եկած կը մնար վանքին մէջ: Ամասիոյ-Մարզուանի ժողովուրդն եւ Գաւ. Ժողովները տեսնելով իրեն գործունէութեան ու աշխատասիրութեան փափաքը վանքին մէջ, պաշտօնապէս կը խնդրեն Ազգ. Պատրիարքարանէն, որպէսզի Առաջն. Տեղապահ կարգուի Ամասիոյ-Մարզուանի վիճակին, եւ 1897ին կ'սկսի իր պաշտօնին: Երկու տարի միայն շարունակելով, վանական ու կրթական բաւական գործունէութենէ մը ետքը 1899ին կը հրաժարի, եւ Ազգ. Պատրիարքարանի որոշմամբ եւ պաշտօնագրով Բալու կ'երթայ, իբրեւ Առաջն. Տեղապահ, ու քիչ ժամանակ վերջը, կը մեկնի անկից ալ եւ կը մտնէ կրկին Ս. Երուսաղէմի միաբանութեան մէջ:

19. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊՍ. ՎԱՆՔԵԱՆ. Բնիկ Պրուսացի, նախ Առաջն. Տեղապահի պաշտօնով կուգայ Ամասիա, 1899 Օգոստ. 10ին: Տարի մը պաշտօնավարելէ ետքը, Ամասիոյ-Մարզուանի Գաւ. ընդհ. ժողովը մեծամասնութեամբ Առաջնորդ-Վանահայր կ'ընտրէ, եւ 1902ին ալ Կ. Պոլսէն եղած յանձնարարականներու եւ պաշտպանութեան վրայ եպիսկոպոսութեան վկայական կը տրուի, եւ նոյն թուական Մարտ 20ին Ազգ. Պատրիարքարանի որոշմամբ կը մեկնի ի Ս. Էջմիածին, եւ ընդունելով Եպիսկոպոսութեան աստիճանը կը վերադառնայ իր վիճակն:

Արիստակէս Եպս. պաշտօնավարած է իր վիճակին մէջ, մինչեւ 1904 Յունիս, որ ատեն կը մեկնի ի Կ. Պոլիս օդափոխութեան համար, ու այլեւս չի վերադառնար իր վիճակն: Ամասիա-Մարզուանի իր Առաջնորդական պաշտօնին մէջ, միակ գործունէութիւնը եղած է կ'ըսեն, քահանայի մը ձեռնադրութիւնը, եւ այն ալ մեծ աղմուկով:

20. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՏԱՊԱՇԵԱՆ. Բնիկ Սեբաստացի, աշակերտ Արմաշու Դպրեվանքին: Սեբաստիոյ հանգուցեալ Առաջնորդ Պետրոս Եպս. Թահմիզճեանի կենդանութեան ժամանակ փոխանորդութեան պաշտօն կը վարէր ի Սեբաստիա:

Դպրոցական ու վարժապետական ծագում առած խնդրոյ մը վրայ Ամասիա ղրկուեցաւ իբր քննիչ. եւ ապա Առաջն. Տեղապահ կարգուեցաւ 1905 Նոյ. 12ին:

*Իր կարողութեան, դպրոցասիրութեան եւ աշխատասիրութեան համար սիրուած է վիճակի Հայ համայնքէն, եւ կը շարունակէ իր պաշտօնը ամենայն գործունէութեամբ որ շատ գովելի է*[67]*:

## 31/2. Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍԻ ՎԱՆՔ[68]*

*Ամասիոյ Զիլէի դէպի հարաւային կողմը, երկու ժամու չափ հեռաւորութեամբ կը գտնուի Չէլթէկ անուն տեղ մը, որուն Արիստակէս հայրապետ կ՚անուանեն տեղւոյն հայ ժողովուրդը: Կ՚աւանդուի, թէ այս տեղը ժամանակին վանք եղած է յանուն Ս. Արիստակէսի, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից, միայն տեղւոյն վրայ այժմ իսկ կ՚երեւին քարէ սիւներ, խաչքարեր, որոնց քանի մը կտորներուն վրայ արձանագրութիւններ ալ կան եղեր:*

# Է. ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ = ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՐԳԻ

*Գարա Հիսարը շարգի, կամ Շապին Գարահիսար կառավարչութիւն (սանճագ) է, Սեբաստիոյ կուսակալութեան ենթակայ, իր գաւառակներն (գազա) են, Կիւրիւն, Թօնուզ, Տիվրիկ (Մանճըլըգ գիւղ), եւ Առաջնորդական վիճակ է, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ, Առաջնորդը կը նստի Շապին Գարահիսարի մէջ:*

## ՎԱՆՈՐԱՅՔ ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ

### 32/1. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[69]*

*Շապին Գարահիսարէն գրեթէ կէս ժամու չափ հեռաւորութեամբ, Թամզարայ անուն գիւղէն դէպ ի հիւսիսային արեւմուտք, բարձունքի մը վրայ կը գտնուի Ս. Գէորգայ վանքը փառաւոր դիրքով մը:*

*Քառասուն յիսուն տարի առաջ պատահած հրդեհի մը պատճառաւ մասամբ այրած է վանքն, եւ բաւական տարիներ ալ մնաց այնպէս ամայի, բայց վերջէն Սեբաստիոյ հանգուցեալ Առաջնորդ Տ. Պետրոս Եպս. Թահմիզճեանի նախաձեռնութեամբը եւ ժողովրդեան նպաստիւք կարելի եղածին չափ բաւականին նորոգութիւն մը տեսաւ, եւ այժմ բարեպաշտ ուխտաւորք միշտ կը դիմեն վանքը, Ս. Գեղարդայ [ւԳր–Մ՝ ••–րֆին ] Ս. Գեղարդայ] տօնախմբութեան օրը յուխտ եւ երկրպագութիւն:*

*Վերջին նորոգութեան ժամանակ վանքի տաճարի խորանին աջակողմը ծեփին տակէն արձանագրութիւն մը գտնուեցաւ, քարի մը վրայ քանդակուած, որուն թուականին վերջին գիրերն թէեւ աւրուած են, բայց Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունին որոշ ընթերցումէն կը հասկցուի, թէ վանքը ԺԸ. դարուն սկիզբներն ալ, այն է՝ 1720 թուականներուն ալ նորոգութիւն մը տեսած է, որով կրնանք ըսել, թէ վանքի հիմնարկութեան ժամանակը աւելի հին է:*

*Ահաւասիկ արձանագրութիւնը.*

*«ԿԱՄԱՒՔ ՀՕՐ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱԶՕՐ ՀՈԳՒՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ԵՂԵՒ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ ՏԱՃԱՐՍ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ[1] ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԶԱՔԱՐԻԱ*

[1] Ծնթ. ի «Բիւզ.». «Ամենայն Հայոց կաթողիկոսն Աստուածատուր Համատանցի՝ նստաւ յԱթոռ Կաթողիկոսութեան 1715ին եւ վախճանեցաւ 1725ին»:

*ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՅԼ ԻՇԽԱՆԱՑՆ [ԱրԳր-մ՝ եւե-ելեացն] իշխանացն] Ռ...»:*

*Վանքի տաճարը գեղեցիկ է եւ գմբէթաւոր, փոքրիկ զանգակատուն մը եւս ունի: Վանքի պարսպին կից է գերեզմանատունը, որ թթենիներով եւ բարտիի ծառերով զարդարուած է: Վանքի բակին մէջ կայ աղբիւր մը մշտահոս ջուրով: Ունի 10-12 նորաշէն սենեակներ ուխտաւորաց յատուկ, եւ տնտեսատուն մը, որ կիյնայ Տաճարին հարաւային կողմը:*

*Վանքը ունի սեփական քսան եւ ութ կամ երեսունի չափ մշակելի արտորայք, այս հողերը կը մշակուի՞ն թէ ոչ, տեղեկութիւն մը չունինք: Ունի նաեւ երկու պարտէզներ, որուն մէկը կը կոչուի «Խնուս պաղչէ» անունով:*

*Այս վանքին մէջ գրեթէ վաթսուն կամ վաթսուն եւ հինգ տարի առաջները յարձակումի մը ենթարկուեցան, Հոգեգալստեան Կիրակի օրը, Կեսարիոյ Ս. Կարապետի վանքի միաբաններէն Կիւլպէնկեան Պետրոս Եպս. եւ Թիւրապեան Կարապետ վարդապետն, որոնք սպաննուեցան եւ վանքի տաճարին առջեւ թաղուեցան. իրենց վրայ տապանաքար դրուած չ՚ըլլալուն, այժմ գերեզմաններուն տեղերը անյայտացած են:*

## 33/2. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ[70]*

*Շապին Գարահիսարի Ածպտեր անուն գիւղին մէջ, որուն կ՚ըսուի նաեւ Կարմրակ Ս. Նշանի վանք: Թէեւ շատ հին վանքերէն մէկը, բայց բուն իսկ հիմնարկութեան ժամանակը անծանօթ է:*

*Վանքի այժմեայ վիճակը բոլորովին աննախանձելի, եւ սակայն իբրեւ ուխտատեղի բարեպաշտ ժողովուրդը միշտ կը դիմէ, իրենց խունկն ու աղօթքը նուիրելու համար հոն:*

*Ունի հարիւր արտավարի չափ մշակելի հողեր, այգի մը եւ ջաղացք մը, որոնց մասին կ՚ըսուի, թէ որ եւ է խնամք չի տարուիր, եւ հողերը չեն մշակուիր:*

## 34/3. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔԻ ՎԱՆՔ[71]*

*Շապին Գարահիսարէն կէս ժամու չափ հեռու, Ծիպերի անուն հայաբնակ գիւղին մէջ կառուցուած էր շատ հին ժամանակներուն, եւ թէեւ այժմ ալ կանգուն, բայց նոյն գիւղացւոց իբրեւ եկեղեցի կը ծառայէ:*

*Այս վանքն իր նախնական վիճակին եւ անուանակոչութեան վրայ մինչեւնոյնը մնացած չէ, քանիցս նորոգուած եւ փոփոխմամբ վերաշինուած է, երբեմն կոչուած է Ս. Յակոբայ վանք, երբեմն Մծբնայ վանք, եւ երբեմն ալ Քառասուն Մանկանց վանք, ինչպէս այժմ ալ կը յիշուի:*

*ԺԷ. դարուն գրչագրուած ձեռագիր Յայսմաւուրքի մը, որ կը գտնուի ի Շապին Գարահիսար, յիշատակարանին մէջ կը յիշատակուի այս վանքն, որ ընդօրինակելով ղրկած է մեզ տեղւոյն Առաջնորդարանի Դիւանապետ Մեծ. Աւետիս էֆէնտի Տ. Սահակեան, եւ որ արժան կը համարենք դնել այստեղ.*

*«...Արդ, ես մեղապարտ տիրացու Կարապետ Ղարասարցի եւ ի գեղջէն Ծիպեռու, ի վաղնջուց հետէ ցանկայի յիշատակի յաւիտենականի դնել ի Սիօն ըղձմամբ փափաքանօք, աղօթիւք եւ արտասուօք հայցէի յԱստուծոյ եւ ետու ի հալալ արդեանց իմոց... Եւ ետու գրել սուրբ մատեանս եւ եդի յիշատակ ի գեօղն Ծիպեռի եւ ի դուռն սուրբ Քառասնիցն եւ այլոց դամբարանաց, որ անդ կան, ի վայելումն Տէր Գրիգորին եւ Տէր Յովհաննէսին, Տ. Թադէոսին, Տ. Պետրոսին, Տ. Մելքոնին, Տ. Ղազարին...*

*Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց, մեղանչական [Ձգր-մ՝ մեղանչական] անմեղաց, անկատար [Ձգր-մ՝ անկատար] ի կատարելոց, ծոյլս ի գաստից, յարտաքսեալս յընկերաց, պարսաքարեալս ի դիւաց, անյիշելիս ի գրչաց, պիտակ անուն Պետրոս երէցս, տեսի զսէր եւ զփափաք ի հեռաստանէ իբրեւ ի մօտոյ Կարապետ տիրացուի [Ձգր-մ՝ տիրացու-ին], զոր ունէր առ հոգեւորսն, եւ ըստ իմում անարժան եւ տկար անձամբ [Ձգր-մ՝ անյամբ] յանձն առի, եւ ամենակարող զօրութեամբ Ս. Հոգւոյն յանգ հանեալ աւարտեցի զսուրբ գիրքս զայս ի թուաբերութեան կենարարին ՌՂՃՁԹ. [1689] եւ ՌՃԼԸ. [1689] տօմարի Նոյեմբեր ամսոյ ԺԷ.երրորդի աւուր, ի Հայրապետութեան Տեառն Եղիազարայ Ս. Կաթողիկոսի Հայոց, ի յառաջնորդութեան Ծիպեռոյ գեղջին Սիմէոն Եպիսկոպոսի, ի գաւառս Խաղտեաց որ այժմ ասի Բաբերդ, ընդ հովանեաւ Ս. Յովհաննու Աւետարանչին, Ս. վկային Օգսէնտի»:*

## 35/4. Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[72]*

*Շապին Գարահիսարէն գրեթէ ութ ժամու չափ հեռու, Սիս անուն գիւղի մօտերն է Ս. Առաքելոց վանքն, որուն կ՚ըսուի նաեւ Երկոտասան Առաքելոց վանք:*

*Վանքի հիմնարկութեան թուականը ծանօթ չէ, չուրջանակի պարսպապատ է, եւ ունի ուխտաւորաց յատուկ մեծ ու փոքր տասնի չափ սենեակներ:*

*Կը պատմուի, թէ եղած է ժամանակ մը, որ այս վանքը շատ փառաւոր ու կազմակերպեալ վիճակ մը ունեցած է, բայց այժմ աննախանձելի է: Ունի 100-120 արտավարի չափ սեփական արտորայք, խանութ մը եւ սրճարան մը գիւղին մէջ, [ասոնք ալ ապարդիւն եւ երեսի վրայ ձգուած են կ՚ըսուի]:*

## 36/5. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[73*]

*Շապին Գարահիսարէն վեց ժամու չափ հեռու, Էսկիշէհիր անուն գիւղի արեւելեան հիւսիսային կողմն է, գիւղէն հինգ վայրկեան հեռաւորութեամբ, եւ հռչակաւոր է նաեւ Վանքիկ անունով:*

*Անցած է ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից, այժմ վանքին հիմե-րը միայն կ'երեւին, այն պատճառաւ, որ վանքի մնացորդ շէնքերու քարերը գիւղացիք քակելով, իրենց գիւղի եկեղեցիի շինութեան գործածած են:*

## 37/6. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔ[74*]

## 38/7. Ս. ԹԷՈԴՈՐՈՍԻ ՎԱՆՔ[75*]

*Այս երկու վանքերն ալ այժմ անցած են, ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից, որոնց միմիայն աւերակները կ'երեւին:*

*Առաջինը՝ Ս. Խաչի վանքը կը գտնուէր նոյնպէս Էսկիշէհիր գիւղի արեւմտեան կողմը, հինգ վայրկեան հեռաւորութեամբ: Երկրորդը՝ Ս. Թէոդորոսի վանքը կը գտնուէր Բիւրկ անուն հայաբնակ եւ համբաւաւոր գիւղէն քիչ մը հեռու, Չիֆթլիք ըսուած տեղը:*

*Այժմ իսկ այս Ս. տեղեաց ուխտաւորներն անպակաս են*[2]*:*

---

[2] Շապին Գարահիսարը ունի նաեւ հետեւեալ ուխտատեղիները.

1. *Ասպասա* անուն ջուրը.
2. Ս. Սարգիս եւ Ս. Եղիայի քարերը.
3. Արտին Աստուածամայրը.
4. Քարին Աստուածամայրը.
5. Հազին աղբիւրը, եւլն:

Ասոնք կը գտնուին քաղաքին մէջ, այգիներու, բլուրներու եւ դաշտին մէջ:

*Ասպասա* իբր թէ ըսել է եղեր, *Աստուած պահէ սա:*

## Ը. ԿԻՒՐԻՆԻ ՎԱՆՔԵՐԸ

*Կիւրին գաւառակը (գազա), Սեբաստիոյ կուսակալութեան ենթակայ: Առաջնորդական վիճակ, Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքեւ:*

### 39/1. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ[76]*

*[Կիւրին գաւառակին մէջ՝ Կիլիկիոյ վիճակներէն], Կիւրինի Մանճըլըգ անուն գիւղի մօտերը, բարձրաւանդակի մը վրայ շինուած է Ս. Թորոսի վանքը, որ շատ հին վանքերէն մին եւ ժամանակակից է Սեբաստիոյ եւ Թօխատի Ս. Նշան վանքերուն:*

*Վանքի շրջապատին երկու արտաքին մեծ դուռներէն մին, որ դէպի հիւսիս կը նայի, այժմ հիւսուած է: Ներքին վիճակը գրեթէ աննախանձելի է, բայց անցեալ 1900 թուականին, որբանոցով մը օժտուած էր, Ազգ. Պատրիարքարանի տնօրէնութեամբ եւ Մոսկուայի Որբախնամներու ծախիւք, բայց այժմ ալ կը շարունակուի՞, թէ ոչ, որ եւ է տեղեկութիւն մը չունինք:*

*Վանքը ունի քսան կտորի չափ սեփական մշակելի հողեր, երկու պարտէզ, մէկ ջաղացք եւ 20 արտավարի չափ ալ մարգագետին:*

### 40/2. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ

*Այս վանքին համար կ՚ըսուի թէ, Մանճըլըգ գիւղի քովերն է, բայց բոլորովին աւերակ ու ամայի, եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից[1]:*

### 41/3. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ[77]*

*[Սեբաստիոյ կուսակալութեան ներքեւ], Կիւրինի Տէրէնտէ անուն գիւղաքաղաքէն մէկ ու կէս ժամու չափ հեռու կը գտնուի Աշոտի անուն Հայաբնակ գիւղը, որ շինուած է բարձրադիր ժայռերու վրայ, շատ գեղեցիկ դիրքով մը: Այս Աշոտի գիւղին մօտերն է Ս. Յակոբայ վանքը,*

---

[1] Մենք անձնապէս կը կասկածինք, թէ այս վանքը, վարը յիշուելիք, Տէրէնտէի Աշոտի գիւղի Ս. Յակոբայ վանքին հետ միեւնոյն ըլլայ, եւ գուցէ շփոթած ըլլայ, այս վանքի մասին մեզի տեղեկութիւն տուող անձը:

*կէս ժամու չափ հեռաւորութեամբ, թէեւ շատ հին ժամանակներու մէջ հաստատուած, բայց բուն իսկ հիմնարկութեան թուականը ծանօթ չէ:*

*Վանքը թէեւ չէն չէ այժմ, եւ ոչ ալ միաբան վարդապետ ունի, բայց ամէն տարի բարեպաշտ ուխտաւորաց խուռն բազմութիւն մը կը դիմէ հոն յուխտ եւ երկրպագութիւն, եւ նուիրելու համար նաեւ իրենց մատաղները, խունկն ու մոմը:*

## Թ. ՏԻՎՐԻԿԻ ՎԱՆՔԵՐԸ

*Սեբաստիոյ նահանգին մէջ գաւառակ (գազա) է Տիվրիկը, եւ Առաջնորդութիւնը ենթակայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւասութեան:*

### 42/1. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[78]*

*[Ս. Կիւրղի անապատ, կամ Ս. Լուսաւորիչ կամ Խուռնաւուլայ վանք. Սեբաստիոյ նահանգին մէջ, Կիլիկիոյ վիճակներէն] Տիվրիկի արեւելեան կողմը, երկու ժամու չափ հեռաւորութեամբ, Խուռնաւալ կամ Խուռնաւիլ [Խուռնաւուլ կամ Խռնաւուլ] անուն գիւղի մօտ, կիրճերով բռնուած նեղ տեղ մը, ցածկեկ բլրակի մը վրայ կառուցուած է Ս. Լուսաւորչի վանքը, Կեւրեղ անուն Հայէ մը, որուն կ՚ըսուի նաեւ Խուռնավուլայ վանք, համանուն գիւղի մօտ ըլլալուն, եւ Կիւրղի անապատ ալ կ՚ըսուի, հիմնադրին անունով:*

*Վանքին տեղը Թերակղզիի մը ձեւն ունի, երեք կողմէն եղած հեղեղատներու եւ փոսերու պատճառաւ, եւ դիրքն ալ սքանչելի եւ հիանալի է, չորս կողմէն անտառներով, ծառերով ու պարտէզներով շրջապատուած ըլլալուն համար:*

*Ներքին շէնքերը բազմաթիւ են եւ բաւականին ճաշակաւոր, Առաջնորդարանը բաղդատմամբ միւս շէնքերուն, ալ աւելի ճաշակաւոր շինութիւն մըն է, լուսաւոր եւ հովասուն, եւ կը նայի պարտէզին վրայ: […բայց ներքին շէնքերը բոլորովին անշուք են. միայն Առաջնորդարանը բաղդատմամբ բաւականին ճաշակաւոր շինութիւն մ՚է կրնայ ըսուիլ…]:*

*Վանքի եկեղեցին փոքր է եւ անլոյս, ունի երկու մատուռներ, մին՝ յանուն Ս. Աստուածածնի, միւսը՝ յանուն Ս. Լուսաւորչի, ուր կը գտնուի Լուսաւորչի մէկ փոքր մասունքը, որուն տուփը ութ հարիւր տարուան հնութիւն մը ունի, կ՚ըսուի:*

*Եկեղեցւոյ գաւթին դրան ձախ կողմը կը գտնուին երեք գերեզմաններ, որոնցմէ առաջինը Եղիազար Վարդապետ Ամասիացիի, երկրորդը՝ Յարութիւն Վարդապետ Ջմառացիի, եւ երրորդն ալ Յարութիւն Վարդապետ Մարաշցիին, որոնք վանքի վանահայրներ եղած են ժամանակին:*

*Ժամանակին շատ կազմաւորեալ միաբանութեամբ շէն վանք մը եղած է, գրասէր ու կրթասէր շատ մը միաբան վարդապետներ հասուցած, որոնք միշտ կը զբաղէին գիրքեր գաղափարել, եւ գրչագիր գրեանք ըն-*

դօրինակելով տարածել ժողովրդեան մէջ: Այժմ իսկ այդ հին փառքի բեկորներէն, բաւական թուով հին ձեռագիր մատեաններ մնացած են վանքին մէջ, ինչպէս կը տեղեկանանք, բայց ինչպէ՞ս կը պահուին այդ անգին գանձերը, տեղեկութիւն մը չունինք:

Վանքը թէեւ այժմ Տիվրիկի Առաջնորդութեան հսկողութեան ներքեւ կը գտնուի, բայց միաբանութիւն չունի, միայն [կը գտնուին վանքին մէջ] քանի մը տնտես ու մշակներ: Ուխտաւորութեան օրն է Ս. Նշխարաց գիւտի տօնին օրը:

Վանքի սեփական կալուածներն են տասն արտավարի չափ հող, պարտէզ մը, ծառաստան մը, եւ երկու խանութներ Տիվրիկի մէջ:

Վերջերս 1898ին վանքին մէջ բացուեցաւ Որբանոց մը, Ազգ. Պատրիարքարանի աջակցութեամբ, եւ մեծանուն Ճանշիանցի [Ջանշեանցի] բարերարութեամբ, բայց չենք գիտեր այժմ թէ, կը շարունակուի Որբանոցն, թէ ոչ:

Այս վանքի մասին, 1485 թուականին գրչագրուած ձեռագիր Գանձարանի մը յիշատակարանէն կը քաղենք հետեւեալն.

«...Արդ, գրեցաւ գանձարանս ի լաւ եւ յընտիր աւրինակէ ձեռամբ բազմամեղ եւ անիմաստ Սարգիս սուտ անուն կրաւնաւորի. ի թուականութիւն [Հայոց] ՋԼԴ. (1485), ի Մայիս ամսոյ ի յինն, ի գաւառիս Թիւրիկոյ, ի յանապատս որ Կիւրղի վանք կոչի, ի դուռն Սուրբ Աստուածածնին, եւ կենսաբեր Սուրբ Նշանին, եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին եւ Սուրբ Յակոբի եւ Սուրբ Յովհաննէս աւետարանչի եւ այլ սրբոցս որք աստ են հաւաքեալ, ի յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս Կարապետ վարդապետին վերադիտաւղի այսմ նահանգի...» (տե՛ս Տաշեան, ցուցակ, եր. 760 [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 75]):

Աւելի հին, ՉԻԹ. (1280) թուականին գրչագրուած ձեռագրի մը յիշատակարանին մէջ ալ կը կարդանք հետեւեալն.

«Գրեցաւ ի դուռս Սուրբ Աստուածածնի, Սուրբ Յովհաննու աւետարանչի ի յանապատիս, որ Խուռնաւուլայ վանք կոչի»[79*]:

## 43/2. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ[80*]

Տիվրիկի արեւմտեան կողմը, գրեթէ երեք ժամու չափ հեռաւորութեամբ, Յակոբայ անուն հայաբնակ գիւղի մօտերը, բարձր դիրքի մը վրայ շինուած է, Ս. Յակոբայ այս վանքը, յանուն Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին:

Հարիւր յիսուն տարիի չափ առաջ, Քահանայ մը Վանահայր կարգուած, եւ իր ընտանիքով վանք փոխադրուած եւ երկար տարիներ վանքին մէջ մնացած ըլլալուն, առ հասարակ ամէն ժողովրդեան մէջ, այս վանքը կոչուիլ սկսեր է նաեւ «Եալընըզ քէշիշ վանքը»:

*Վանքն իր շուրջը ունէր սեփական բազմաթիւ արտեր, արօտավայրեր, պարտէզներ եւ քաղցրահամ ջուրերով աղբիւրներ, որոնք այժմ յիշեալ գիւղի Հայ ժողովրդեան ձեռքը կը գտնուին եղեր:*

*Այժմ ալ վանքը, թէեւ չէն է, կանգուն է նաեւ Ս. Եկեղեցին, ունի նաեւ քանի մը սենեակներ եւ այլն. բայց միաբանութիւն չունի, միայն Ս. Յակոբայ տօնին օրը Տիվրիկէն եւ մօտակայ գիւղերէն բաւական ուխտաւորներ կուգան, որոնց տուած նուէրներն, յիշեալ քահանային սերունդէն առաջ եկած նոյն գիւղացիք, որոնք այժմ 15 կամ 18 ընտանիք կը կազմեն, իրենց մէջ կը բաժնեն եղեր:*

*Բարի վայելում:*

## 44/3. ՓԱՑԼԵՎԱՆՔ[81]*

*Տիվրիկի Վօղըր կամ Օտուռ անուն գիւղի մօտերը, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից, որուն այժմ հին պարիսպն ու աւերակները կ՚երեւին:*

*ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ, այս վանքի մասին հետեւեալ յիշատակութիւնը կը գտնուի.*

*«...[Արդ], գրեցաւ սա ի թուա[կանութեանս] Հայոց Ջ. եւ ԺԸ. (1469), ի յերկրիս որ Տիւրիկի կոչի, ի վանքն Վաւոըր գեղջին, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Յակովբայ, Նշանին, եւ Յովհաննու, եւ այլ սրբոց որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութեան Տէր Մկրտչին եւ Տէր Բարսեղին, [զոր տէր Աստուած զփոխարէնն բարի հատուսցէ յիւր միւսանգամ գալստեան. ամէն: Եւ արդ, գրեցաւ] ձեռամբ [յոգնամեղ եւ ախմար գրչի] Ստեփաննոսի՝ անուամբ միայն կոչեցեալ հայրապետի...» (տե՛ս Թորոս աղբար Բ., եր. 363)[82]*:*

## 45/4. ԱԻԹՄՆԱՑ ՎԱՆՔ[83]*

*Այս վանքը, նոյն իսկ Տիվրիկ գիւղաքաղաքի մէջն էր: Վանքի Եկեղեցին, որ նուիրուած էր յանուն Ս. Աստուածածնի, եւ սակայն դժբախտաբար ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից:*

*Այս Վանքի մասին ալ, ԺԴ. դարուն մէջ գրչագրուած Մաշտոցի մը յիշատակարանին, հետեւեալ մասն յառաջ կը բերենք.*

*«...Գրեալ ի գաւառին Տիվրիկոյ, ի վանքն, որ կոչի Աւթմնայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ... Ներսիսի, ի թուականութեան Հայոց ՉՂԷ. (1348), ի Սեպտեմբերի Ժ. (10): Արդ, աղաչեմ չմեղադրել սղալանացս...» [Թորոս Աղբար, Բ., էջ 307][84]*:*

## 46/5. Ս. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔ[85]*

*Տիվրիկէն եօթ ժամու չափ հեռու Զիմմառայ անուն գիւղի մօտերը կը գտնուի եղեր այս վանքը, յանուն Ս. Պօղոսի եւ Պետրոսի, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից: Այժմ միայն փլատակները կ'երեւին:*

## 47/6. Ս. ՆԻԿՈՂՈՍԱՅ ՎԱՆՔ[86]*

*Զիմմառայ գիւղին մօտերն է եղեր այս վանքն ալ, որ ի վաղուց աւերակ ու ամայի, եւ անցած ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից: Այս վանքի փլատակներն ալ մինչեւ հիմայ աչքի առջեւ կերեւին, կ'ըսուի[1]:*

## 48/7. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ

## 49/8. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ[87]*

*Առաջինը[88]* կը յիշուի, Տիվրիկի Օղուռ գիւղին մօտերը, եւ երկրորդը Կուրասին անուն գիւղին մօտերը:*

*Այս երկու վանքերու վրայ մենք մասնաւոր տեղեկութիւն մը չի կրցանք առնել, բայց եւ այնպէս կը կարծենք թէ, գուցէ ասոնք ալ ուխտատեղիք եղած ըլլան ժամանակին:*

* * *

*[Երկու աւերակ վանքեր ալ կը յիշուին յանուն Ս. Թէոդորոսի, առաջինը՝ Դերձկի Ս. Թէոդորոսի վանք[89]*, եւ երկրորդը՝ Տիվրիկի մէջ Կուրասին անուն գիւղի մօտիկը Ս. Թորոսի վանք. թէեւ այս երկու վերջին վանքերու վրայ մասնաւոր տեղեկութիւններ չունինք, բայց մեք այնպէս կը կարծենք թէ ժամանակին ասոնք ուխտատեղի եղած ըլլալու են քան թէ վանք, եւ կամ թէ՝ հին եկեղեցւոյ մը աւերակները: Բիւզ., 1900, էջ 1043]:*

---

[1] Զիմմառայ գիւղին համար կ'ըսուի նաեւ, թէ ունի եղեր 30էն աւելի ուխտատեղիներու աւերակներ:

## Ժ. ԴՐԱՊՈՒԶՕ = ՏՐԱՊԻԶՕՆ

*Դրապուզօ = Տրապիզօն, կամ նախնեաց Պօնտոսը, այժմ Կուսակալութիւն (վիլայէթ) է, եւ իր իրաւասութեան ներքեւ կը գտնուին, Լազիսթան, Կիւմիւշխանէ, եւ Սամսոն = Ճանիկ գաւառներն (սանճագ) իր գաւառակներով:*

*Տրապիզօն եւ Վանքը Հայ Առաջնորդական վիճակին ալ կեդրոնն է, որ ԺԴ. դարէն ի վեր կանոնաւորապէս կը շարունակուի Առաջնորդութիւնը, որ այդ ժամանակները վանքին մէջ կը մնային, բայց այժմ երկար ժամանակէ մը ի վեր Առաջնորդը կը նստի քաղաքին մէջ:*

*Իր իրաւասութեան ենթարկեալ են, Տրապիզօնի սանճագին հետ, Լազիսթան, Կիւմիւշխանէ սանճագներու հայաբնակ գիւղերը, միայն Ճանիկ = Սամսոն սանճագը Հայ Առաջնորդական վիճակին կեդրոնն է այժմ առանձին:*

### ՏՐԱՊԻԶՈՆԻ [ՀԱՅ] ՎԱՆՔԵՐԸ

### 50/1. Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆՔ[90]*

*Տրապիզոնի արեւելեան կողմը, մէկ ժամու հեռաւորութեամբ, Աղճապատու մօտերը, բարձրադիր ու լայնանիստ բլուրի մը վրայ հաստատուած է Ամենափրկչի Ս. Վանքը, մէկ կողմէն գետահայեաց, միւս կողմէն ծովահայեաց, որուն կ՚ըսուի նաեւ* «Գայմագլը Մանասթըր», *եւ նաեւ* «Ծէմսէտտինի Վանք», *վերջէն վանքի Տաճարը նորոգող Համատանցի Ստեփաննոս Շէմսէտտին անուն Հայու մը անունով:*

*Ո՞ր ժամանակ հաստատուած ու կառուցուած է այս վանքը, ճշդապէս ծանօթ չէ մեզի, միայն պատմական քանի մը տեղեկութիւններէ կը ծանօթանանք, թէ ԺԱ. դարուն մէջ անուանի եւ նշանաւոր էր, եւ ունէր կանոնաւոր ու կազմաւորեալ միաբանութիւն:*

*Այժմեայ Տաճարի դրան ճակատը, յանուն վերոյիշեալ Ստեփաննոսի, մարմարեայ քարին վրայ եղած յիշատակագրութենէն, զոր առաջ պիտի բերենք վարը, կը հասկնանք, թէ վանքի շէնքը 1424 թուականէն սկսեալ, մեծ փոփոխութիւններ կրած է, եւ գրեթէ ի հիմանէ նորոգուելով, ստացած է նաեւ իր նախկին կարեւորութիւնը եւ միաբանական կազմակերպութիւնը:*

*ԺԹ. դարու սկիզբէն ի վեր այլ եւս չի յիշատակուիր միաբանական գոյութիւն, որ հետզհետէ ինկած է իր պայծառութենէն: Վանքը կը կա-*

*ռավարուի այժմ, կ՚ըսեն, յատուկ Հոգաբարձութեան մը միջոցաւ, ուխտաւորութեան օրն է Զատկի Նոր Կիրակին:*

*Վանքի Տաճարը քարաշէն է եւ ընդարձակ, իր վրայ ունի հնութեան տեսքը, յատակը կոփածոյ քարերով զարդարուած ու յատակուած է, մէջը ինքնաբուղխ հոր մը կայ անուշ ջուրով:*

*Բուն իսկ Տաճարէն զատ վանքին մէջ կային նաեւ երեք մատուռներ, մին՝ յանուն Ս. Աստուածածնի, միւսը՝ յանուն Ս. Երրորդութեան, եւ երրորդը՝ յանուն Ս. Յովհաննէսի[91]*: Այս երեք մատուռներն ալ այժմ կանգուն կը մնա՞ն թէ ոչ, որ եւ է տեղեկութիւն մը չի կրցինք ստանալ:*

*Վանքն ունի բաւական սենեակներ ուխտաւորաց յատուկ, աղբիւր մը, որուն կ՚ըսուի «Կաթաղբիւր», իր վճիտ ու անուշ ջուրին պատճառաւ: Ունի իր շուրջը կէս ժամու չափ լայնութեամբ եւ երկայնութեամբ մշակելի հողեր, որ այժմ վարձու կը տրուի եղեր գիւղացիներուն, շատ քիչ վարձքով մը:*

*Ունէր նաեւ անտառ մըն ալ, որ բաւական տարիներ առաջ այրեցաւ յառաջ եկած պատահական հրդեհէ մը:*

*Տաճարի դրան ճակատը դրուած մարմարեայ քարին յիշատակարանն է.*

*«ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ,*

*ՅԵՐԿՐԻ ԴՐԱԽՏ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ,*

*ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ,*

*Ի ՅՈՒԹ ՀԱՐԻՒՐ ԹՈՒԱԿԱՆԻՆ,*

*ՅՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԵՔԻՆ,*

*Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻՆ [ՄԵԾԱՑ]*

*ՏԷՐ ՊԱՒՂՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌԻՆ,*

*Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐԵՊԱՇՏԻՆ,*

*ԿԻՐ ԱԼԵՔՍԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ,*

*ԽՕՃԱՅ ՍՏԵՓԱՆՆՈՍՆ ՊԱՏՈՒԵԼԻ,*

*ՇԻՆԵԱՑ ԶՏԱՃԱՐՍ ՀՐԱՇԱԼԻ,*

*ՅԻՒՐ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ,*

*ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ԻՒՐ ԿՐԿՆԱԿԻ,*

*ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԻՒՐՈՅ ՄԵԼԻՔԱՅ ԽԱԹՈՒՆԻ,*

*ԵՒ ԶԱՒԱԿ [illegible] ԻՒՐԵԱՆՑ ՄԵԾԻ ԵՒ ՓՈՔՐԻ[1] [illegible]»:*

*«ԱՐԴ, ԵՍ ԽՕՃԱՅ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ ՍՏԱՑԱՅ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ ԶՏԵՂԻ ՎԱՆԱՑՍ ԻՒՐ ԱՆԴԱՍՏԱՆԱՒՆ, ԵՒ ՇԻՆԵՑԻ ԶԼՈՒՍԱԶԱՐԴ ՏԱՃԱՐՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՒՈՑ ԻՄՈՑ, ԵՒ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄԱՆԿԱՆՑ ՍԻՈՎՆԻ»:*

---

[1] Տե՛ս Պատմութիւն Պոնտոսի, եր. 83:

*«ԵՒ ԵՏՈՒ ՄԻԱԲԱՆԻՑ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ, ԵՍ ԽՕՃԱՅ ՍՏԵՓԱՆՆՈՍՍ ԵՒ ԻՄ ՈՐԴԻՔՍ, ԶԻ ՀԱՍԱՐԱԿ ԱՄԵՆԱՅՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ Է ՎԱՆՔՍ, ԵՒ ԿՐԱՒՆԱՒՈՐԱՑ, ՈՐՔ ԲՆԱԿԵԱԼ ԵՆ Ի ՍԱ, ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆ, ԵՒ ՈՉ ՈՔ ԶՕՒՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ՝ Ո՛Չ ՅԻՄՈՅ ԵՒ Ո՛Չ ՅՕՏԱՐԱՑ, ԻԲՐԵՒ ԶՄԱՐՄՆԱՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԻՇԽԵԼ Ի ՎԵՐԱՅ ՎԱՆՈՒՅՍ, ԱՅԼ ԱԶԱՏ Է ԱԶԱՏ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ԶԽՆԱՄՍ ՏԱՆԵԼՈՎ, ԵՒ ԶԱՄԵՆԱՅՆ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԿԱՐԻՔ ՍՈՒՐԲ ՎԱՆԱՅՍ ԿԱՏԱՐԵԼՈՎ»:*

*«ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ ՅԻՇԱՏԱԿ Է ԽՕՃԱՅ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԻՒՐՈՅ ՊԱՐՈՆ ՄԿԸՐՏՉԻՆ»:*

*«ԵՍ ՄԿՐՏԻՉ՝ ՈՐԴԻ ԽՕՃԱՅ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ, ՀՐԱՄԱՆԱՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ Ի ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ, ԵՒ ՄԱՏՈՒՌ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԵՒ ՇՈՒՐՋԱՊԱՏ ԻՒՐ ՊԱՐՍՊՈՎ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՋ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԱԿԱՆԱՑ»:*

*Համառանցի սոյն Ստեփաննոս Շէմսէտտինի, վանքի վերանորոգողին գերեզմանը կը գտնուի Տաճարին դուրսը, որ մէկ մէթրի չափ բարձրութեամբ մարմարեայ գերեզման մըն է, երկաթեայ վանդակով շրջապատուած:*

*Վանքի զանգակատունը փլած է այժմ, եւ մնացած է կիսաւէր: Ժողովրդեան կողմէ այս աւեր տեղւոյն կ՚ըսուի «Կանճապուճ», զոր տեղացիք կը ստուգաբանեն «Զանկապուրկ», թէեւ ըստ մեզ անհաւանական: Կանճապուճ-ը կը նայի ճիշդ ջրօրհնէք կատարուած տեղւոյն վրայ, որուն կ՚ըսուի այժմ «Տէյիրմէն Տէրէսի»:*

*Այս վանքի եւ Տրապիզոնի Առաջնորդ-Վանահայրներու յաջորդութեանց ցուցակը, հրատարակած էր, այժմ Կեսարիոյ Առաջնորդ Տ. Խոսրով Ծ. Վ. Պէհրիկեան, 1901ին, Կ. Պոլսոյ «Արեւելք» օրաթերթի հինգ թիւերուն մէջ, որ ընդօրինակելով կը դնենք այստեղ, թէեւ սկիզբները, յաջորդութեան պակաս անուններ ալ ըլլան[92]*:*

*1. ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. 1342ին, իբր առաջին Առաջնորդ Տրապիզոնի Հայոց, այս միայն կը գտնենք յիշատակագրին մէջ, որուն համաձայն՝ 1342ին ներկայ կը գտնուի Սիսի մէջ գումարուած ժողովին, Մխիթար Կաթողիկոսի ժամանակ, մեր եկեղեցւոյ դէմ եղած ամբաստանութեանց մասին կարեւոր պատասխանը գրելու համար Հռովմի Պապին:*

*Ըստ այսմ վկայութեան, 1342էն առաջ Հայեր կը գտնուէին, ուրեմն Տրապիզոնի մէջ, ունենալով իրենց հովիւները եւս, որոնց մասին դժբախտաբար տեղեկութիւններ կը պակսին, ինչպէս նաեւ Ստեփան Եպս. ի անմիջական յաջորդներու վերաբերութեամբ:*

*2. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ. 1462. - Երջանկայիշատակ Սուլթան Մէհմէտ Բ. ի որդին Սուլթան Պայազիտ, Տրապիզոնի Ս. Փրկիչ վանքին շնորհած հրովարտակին մէջ կը յիշէ Մկրտիչ Վրդպ.ին անունը իբր Ա-*

*ռաջնորդ, Գարատօնցի Տ. Ստեփաննոս եւ Տ. Յովհաննէս քահանայներուն հետ, որոնց իր հայրը հրովարտակ մը շնորհեր է, վանքին ապահարկ ըլլալու մասին:*

*3. ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ. 1593. - Ասոր Առաջնորդութեան միջոցին Ս. Փրկիչ վանքը ինչ ինչ նորոգութիւններ կը կրէ, որուն արձանագիրը կը գտնուի հանդերձ թուականով, սեղանին կիսաբոլորակ շրջանին մէջ, ահաւասիկ այդ արձանագիրը.*

*«ԾԱՂԿԵՑԱՒ ԼՈՒՍԱՁԱՐԴ ԽՈՐԱՆՍ ԹՎԻՆ ՌԽԲ. (1593), ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ»:*

*Ասոր անունը կը գտնուի, Սուլթան Մէհմէտ Գ.ի շնորհած հրովարտակին մէջ եւս:*

*4. ԱՒԵՏԻՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ. 1622. - Սա արձանագրին մէջ կը կոչուի Մետրոպոլիտ, որ իր նախորդին նման հոգ կը տանի վանքին Տաճարին վայելչութեանը, եւ անոր կիսաւարտ թողած մասերը կ'ամբողջացնէ, գլխաւորապէս եկեղեցիին մէջը նկարել կուտայ յունական ոճով, ինչպէս նաեւ Աւագ խորանը, որոնց հետքերը ցարդ կը տեսնուին: Այս շինութիւնն ալ ունեցած է իր յիշատակարանը վանքին մէջ:*

*«ԾԱՂԿԵՑԱՒ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՁՆՁԵԼԻ ԱՒԵՏԻՔ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԻՆ, ԹՎԻՆ ՌՀ.ԻՆ ԵՒ ՄԷԿ ԱՒԵԼԻ (1622)»:*

*Աւետիք Եպիսկոպոսի մահուանէն վերջ, կ'երեւի թէ վանքը ժամանակի մը համար անջատ առաջնորդարանէն, կ'ունենայ իր Վանահայրերը, որովհետեւ արձանագիրին մէջ կը գտնուին Աւետիք Պարոնտէրը եւ Աստուածատուր սրբազան, որոնք վանքին վանահայրներ եղած են:*

*«Ի ԹՈՒԻՆ ՌՂԷ. (1648) ՎԱԽՃԱՆԵՑԱՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՐՈՆՏԷՐՆ ԵՒ ՅԱՋՈՐԴԵԱՑ ՋՏԵՂԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱԲԵՂԱՅՆ»:*

*5. ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ. 1698. - Ասոր անունը քանիցս յիշուած կը գտնենք Յովհաննէս վարդապետի մը հետ կայսերական հրովարտակներու մէջ:*

*(Յովհաննէս Եպս. Թութունջի, որ Կ. Պոլսոյ Պատրիարք է եղած 1665ին, իր գերեզմանը Տրապիզոնի Ջարխափան եկեղեցւոյ բակը կը գտնուի, վախճանած է ՌՃԾԳ. (1704):*

*6. ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ. Բերիացի, Թուական Առաջնորդութեան անյայտ, ըստ պատմաբանից իր առաջնորդութեան ատեն կը գատուի իր եկեղեցիէն եւ 1715ին Օգոստոս ամսոյ 4ին կ'երթայ Լիբանանոյ վանքը եւ հոն կրօնաւորաց վանք սահմանելով, Պապին հրամանաւ կ'ըլլայ լատին Հայոց կաթողիկոս:*

*7. ՄԱՐԳԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՄԱՐՄԻՆ. Անմիջական յաջորդ նախորդին, իր օրով Հայոց եւ Հայ Հռովմէականաց միջեւ խուլ ատելութիւն մը կը տիրէ, շատ կ'աշխատի տիրող խռովութիւնը վերցնելու, բայց չի*

*յաջողելով, Սիւրմէնէի Հայոց մօտ կ՚երթայ, ուր կը վախճանի ու կը թաղուի:*

*8. ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ. Անմիջական յաջորդ Մարգար Վարդապետին, իր մայրենի եկեղեցիէն բաժնուելով, Վենետիկի վանքը կ՚երթայ կրօնաւորելու, ուր կը մնայ մինչեւ իր մահը:*

*9. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Գեղեցիկ քարոզելուն համար Գաւազանի կիւզէլ կոչուած շուշտակ վարդապետ է եղեր, Եդեսիոյ առաջնորդութենէ հրաժարելով կ՚ընդունի Տրապիզոնի առաջնորդութիւնը: Իր օրով եւս քան զեւս կը սաստկանայ Հայոց եւ Հայ հռովմէականաց միջեւ տիրող վէճը, մասամբ իւիք վերջ տալու համար բուռն պայքարին, Հայոց մայր եկեղեցին՝ Ս. Աստուածածինը կաթոլիկներուն կը յատկացնէ: Յովհաննէս Եպս. մինչեւ իր մահը կը վարէ առաջնորդութիւնը, եւ վախճանելով կը թաղուի Զարխափան եկեղեցւոյ բակում, որուն տապանաքարին վրայ հետեւեալ արձանագրութիւնը կը տեսնուի:*

*«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԱԻԱԶԱՆԻ ԿԻՒԶԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՈՒԻՆ ՌՄԻԱ. [1772]»:*

*10. ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՃՆՃՂՈՒԿ. Իր մասին տեղեկութիւններ կը պակսին դժբախտաբար:*

*11. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՒՍԿԻՏԱՐՑԻ. Հայոց եւ Հայ հռովմէականաց վէճերուն պատճառաւ Հալէպ կ՚աքսորուի:*

*12. ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒԴՈԿԻԱՑԻ. 1795-1803: Ասիկա կը գնէ հին առաջնորդարանին տեղը, (այժմեայ Ռուսիոյ հիւպատոսարանը): Իր օրով Տրապիզոն կուգայ Էջմիածնի նուիրակ Օշականցի Գրիգոր Եպիսկոպոսը, որմէ հինգ ընկերներով Քահանայ կը ձեռնադրուի, Տ. Մելքոն քահանայ Համբարձումեանը, Հայր Տ. Համբարձում պատուական քահանային († 1889): Գրիգոր Եպիսկոպոս երկու կրօնական հատուածներու ծանօթ վէճին տալու մտօք կրօնական կանոններ կը պատրաստէ:*

*13. ԻՍՐԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1803-1809. - Մշոյ Ս. Կարապետի վանքին նուիրակ, ամբողջ վեց տարիներ Տրապիզոնի Առաջնորդութիւնը վարելով, կը հրաժարի եւ Արտազու Ս. Թադէոս Առաքեալին վանքի Առաջնորդ կ՚ըլլայ, ուր եւ կը վախճանի:*

*Իսրայէլ Վարդապետի ժամանակ մերազնեայք սակաւաթիւ ըլլալով, երեք եկեղեցիներէն մէկուն, Ս. Ստեփաննոսի (Զարխափան) մէջ ժամերգութիւն կը կատարուի, միւս երկու եկեղեցիները փակ կը մնան, Առաջնորդին յորդորմամբը Խաչատուր Յարութիւնեան անուն բարեպաշտ անձը, երկու փակ եկեղեցիները կը նորոգէ վայելչօրէն, որոնց մէջ եւս սովորական ժամերգութիւններ կը կատարուին: Այս բարեպաշտ անձը Ս. Յովհաննէս եկեղեցւոյ նորոգեալ որմին վրայ կը կանգնէ հետեւեալ յիշատակարանը:*

*«ԴՈՒՌՆ ԿԵՆԱՑ Է ՄԻՇՏ ԲԱՐԻ,*
*ՆՈՐՈԳԵՑԱՒ Ի ՅԱՅՍ ՏԱՐԻ,*
*ՋԱՆԻՒՔ ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ,*
*ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ,*
*ՀՈԳԻՈՑ ՍՈՑԻՆ ՏԷՐ ՈՂՈՐՄԻ,*
*ՌՄԾԴ. [1805] ՕԳՈՍՏՈՍ,*
*... ... ... ... ... ... .»:*

*14. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՄԻՒՌՆԻԱՑԻ. 1815-1820 - Իսրայէլ Վրդ. ի անմիջական յաջորդը, ո՛վ ըլլալը անծանօթ է, կ'երեւի թէ այդ վեց տարուան միջոցին մէջ փոխանորդ քահանայներ պաշտօնավարած են: Ստեփաննոս վարդապետը հինգ տարիի չափ հազիւ կը պաշտօնավարէ, զինքը կը հրաժարեցնեն, ինքն ալ ի հեճուկս բաժնուելով իր եկեղեցիէն, Հռովմէական լուծը կ'ընդունի եւ կը միաբանի Վենետիկի վանքին: Սակայն, ասոր մասին Յարութիւն Պատուելի Պետրոսեանը հետեւեալը կը գրէ. «Երկուցեալ ի տարագրութենէ հապտէպ խոյս տայ ի Ս. Էջմիածին»:*

*15. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՇԵԱՆՑ. 1820-1834 - Պոլսոյ Գատը գիւղէն, տակաւին վարդապետ, առաջնորդ կը կարգուի, ճանչցուած է իբր անյիշաչար եւ հեզաբարոյ, կրթական գործին մեծ զարկ կուտայ, տղայոց վարժարան մըն ալ շինելով, դպրոցական գիրքերու համար կը դիմէ մեծահամբաւ Յարութիւն Ամիրայ Պէզճեանին, որմէ կ'ընդունի բաւականաչափ գիրքեր:*

*1829ին Օգոստ. ամսոյն մէջ, վիճակին վրայ Եպիսկոպոս կը ձեռնադրուի Կարբեցի Յովհաննէս Կաթողիկոսէն: Յարութիւն Պատուելին այս առթիւ միջադէպ մը կը յիշէ, ըստ որում՝ Գրիգոր Վարդապետ իրեն ժամանակակից Էտիրնեցի Կարապետ Պատրիարքէն ընդունած ըլլայ Եպիսկոպոսութեան աստիճանին բարձրանալու վկայականը, եւ թէ՝ դեռ չեպիսկոպոսացած Կարապետ Պատրիարք հրաժարած ըլլայ, եւ անոր յաջորդած Ստեփաննոս Աղաւնի, ինքը վստահելով նախորդ Պատրիարքին վկայականին, ուղղակի կը դիմէ Էջմիածին, ուր կ'ընդունի Եպիսկոպոսութիւնը: Աղաւնի Պատրիարք զայս լսելով, անմիջապէս կը հրամայէ Գրիգոր Եպիսկոպոսին որ վիճակէն հեռանալով Եւդոկիա երթայ իբր աքսոր, սակայն ինքն արդէն հիւծախտաւոր կը վախճանի Տրապիզոնի մէջ 1834 Յունվար 20ին, շաբաթ օր ցերեկին ժամը եօթուկէսին, եւ կը թաղուի Ս. Օգսէնտ եկեղեցւոյ գերեզմանատունը, որուն վրայ մարմարեայ քար մը դրուած է, հետեւեալ արձանագրութեամբ.*

*«ԱՀԱ ՄԵՐԱՁԵԱՆ ԱՐԹՈՒՆ ՀՕՏԱՊԵՏ ԱՐՔԵՊՍ,*
*Տ. ԳՐԻԳՈՐ ԱՆՈՒՆ ՄԱՔՐԱՓԱՅԼ ՎԱՐՈՒՔ ՔԱՐՈԶ ՊԵՐՃԱԽՕՍ,*
*ԱՀԱ ԵՐԿԸՆԹԱՑ ՆԱԽԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ Ի ՊՈՆՏՈՍ,*

ՈՒՐ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ՔՄԱՑ ԽՕԹՆԱՐՓԵԱՑ ՑԱՂԲԻՒՐ ՔԱՂՑՐԱՀՈՍ:
ՄԻՆՉ ՀՈՎՈՒԷՐ ԶՄԵԶ ԶԱՄ ԵՐԵՔՏԱՍԱՆ ԸՆԴ ՍՐԲՈՑ ՇԱՒՂԱՑ,
Ի ԴՈՒԳՍ ԲԱՂԿԱՑ ՈՐ ՀԱՆԳԵԱՒ ՄԱՀՈՒ ԳՈՐԾՈՎ ԲԱՐՈՒԹԵԱՆՑ,
ԾԱԾԿԵԱԼ ՅԱՅՍ ՄԹԱՆ ՎԻՄԻՆ ՍՏՈՒԵՐՕՔ ԶԻՒՐ ԿՈՅՍ ՈՍԿԵՐԱՑ,
ՃԱԽՐԷ ՅԵՐՋԱՆԿԱՑ ԵՐԿՆԱՃԵՄ ԽՈՐԱՆ Ի ՅԵԼՍ ՈՍՏԵԱՑ,
ԶՕՐԷՆ ԱՐԵՒՈՒ ՎԱՂԱՌԵԱԼ ՎԱԽՃԱՆ ՍՐԱ ՅԱՒ ՅԱՉԱՑ,
Ի ԴԱՇՏ ԴԱՄԲԱՆԱՑ ԶԱՆԴԱՐՉ ԻՒՐ ՎՃՌՈՅՆ, ԶԱՅՍ ԱՐՁԱՆ ԿԱՆԳ-
ՆԵԱՑ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1833 ԴԵԿՏ. 12»:

16. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԻՒՐԷՔՃԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1834-1839 - Ըստ իր յետագայ ձեռագիր վկայութեան, Առաջնորդ կը կարգուի 1834 Մայիս 14ին:

«Շնորհիւ Սրբոյ Հոգւոյն ընկալայ զԱռաջնորդութիւն Տրապիզոնի եւ Կիւմիւշխանու, յամի Տեառն 1834 եւ ի Մայիսի 14ի, ի Պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի Ս. Արքեպիսկոպոսի: Ես Յովհաննէս Վարդապետ Քիւրէքճեան Կոստանդնուպոլսեցի միաբան Ս. Էջմիածնի»:

Սա հինգ տարիի չափ, դժուարին պարագայներու մէջ պաշտօնավարելով, կը հրաժարի ինքնայօժար կամօք, եւ Պոլիս գալով կ՚ըլլայ Պատր. Փոխանորդ:

Յովհաննէս Վարդապետ ամուսնական կեանքի եւ հարսանիքի սովորութեանց վերաբերութեամբ հեղինակած է կանոններ, եւ կոնդակներով ցրուած է քաղաքին եւ թեմօրէից ժողովրդեան:

17. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ. 1839-1842 - Առաջնորդ կը կարգուի Յակոբոս Պատրիարքին հրամանաւ, 1839 Մայիս 17ին ըստ իր ձեռագիր վկայութեան.

«Ի 1839 Մայիս 17, հրամանաւ Յակոբոս Ս. Պատրիարքի կարգեալ Տեսուչ օրհնեալ քաղաքացն Տրապիզոնու եւ Կիւմիւշխանէի եւ բոլոր վիճակացն, եւ եկեալ ընդ գրչաւ արկի ի ներկայութեան բոլոր քահանայից, եւ երեւելի արանց զամենայն կահս եւ զկարասիս Առաջնորդարանին եւ Ս. Փրկչայ վանուցն եւ երից սրբոց եկեղեցեացն, որոց եւ չորեցունց արս հաւատարմս եւ վերակացուս եւ կառավարիչս կացուցեալ ընտրութեամբ բոլոր գլխաւորացն... Այս կանոն յաւիտեան մնալոյ աղագաւ աստանօր ի գիր արձանագրեալ ստորագրեմ ես Սրբազանի փոխանորդ եւ այցելու եւ վերատեսուչ նուաստ ծառայ ծառայիցն Աստուծոյ, Ս. Երուսաղէմի միաբան Կարապետ վարդապետս Կեսարիու Էվէրէկ գեղջէ մահտեսի Կարապետ Ղալֆայեան Քիւքճի զատէ»:

Կարապետ վարդապետի օրով թեմական կուսակցութիւնները կը զօրանան, այնպէս որ՝ ամբողջ երկու տարի եկեղեցական գործերը կը խանգարուի եւ այս վրդովման եւ երկպառակութեան պատճառ տուած

կ՚ըլլայ նոյն ինքն Առաջնորդը, որու մասին Պատրիարքարանի դիմումներ կ՚ըլլան, եւ Պատրիարքարանը կը հրամայէ Առաջնորդին հեռանալու, բայց ինքը կը...[93]* վիճակընկեցութեան հրամանը:

Այս յուզման միջոցներուն, պատահմամբ հոն կը հանդիպի Փիշմիշեան Յովհաննէս Ամիրայն, «որոյ յերկոցունց կողմանց հակառակորդաց առեալ կազմեալ մեղսամակարդ գտանէ զկղերս, եւ ընդ իւր առնէ ի Կ. Պոլիս»:

Աբէլ Վարդապետ Մխիթարեան եւս նպաստաւոր չի խօսիր Կարապետ Վարդապետի վրայ «Հազիւ թէ երկու տարի վարելով առաջնորդութիւն, չփոթութիւն ձգեց եւ ելաւ 1842 թուին»:

18. ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1842-1844 - Սա աւելի ծանօթ է Ֆիզիքա անուամբ աշակերտութենէն Փեշտիմալճեան Գրիգոր Պատուելիի, ժամանակին մեծ հռչակ հանած է իբրեւ բնագէտ եւ նշանաւոր ատենախօս, բայց իր արտասովոր արբեցութիւնը, գրեթէ, համայնքին տաղտուկ պատճառելով, իր Եւդոկիա տարագրուելուն մէջ մեծ բաժին կունենայ:

19. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՐՈԽՍԱՑԻ. 1845-1848 - Արմաշու վանքին միաբանութենէն, եւ այս պատճառաւ զինքը թէ՛ Արմաշցի, եւ թէ միանգամայն Նիկոմիդիացի կը յորջորջեն:

Կարապետ Վարդապետ ընդհանրապէս ճանչցուած է գործունեայ, խոհական եւ անյիշաչար մէկը, բայց կ՚ըսուի, թէ իր չափազանց արծաթսիրութիւնը զինքը երկար ատեն չէ կրցած պահել իր պաշտօնին մէջ: Կարապետ Վարդապետի օրով, 1847ին, գօլէրան մուտք կը գտնէ առաջին անգամ ի Տրապիզոն, «որ բնաւ լսուած չէր ի հարց անտի», կըսէ ականատես մը, Օգոստ. 25էն մինչեւ Նոյեմբ. ի սկիզբը բաւական մահեր կը պատահին, Տրապիզոնի մէջ կը մեռնին երկու հազար անձեր, որոնցմէ 105 ը միայն Հայ, շրջակայ գիւղերը գերծ կը մնան այդ համաճարակ ախտին տխուր հետեւանքներէն:

20. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐԱՇՑԻ. Գրեթէ տասը ամիսի չափ միայն իբր փոխանորդ պաշտօնավարելէն յետոյ, իւրովի հրաժարելով, կ՚երթայ ի Կիլիկիա իբր միաբան նոյն աթոռին: Ճանչցուած է իբր «այր հեզաբարոյ, բայց անկարող ի հովուութիւնս եւ յատենաբանութիւնս»:

21. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎԻՒԵԱՆ, ԹԱՄԶԱՐԱՑԻ. 1850-1852 - Ասոր օրովը կը սկսին շինուիլ Առաջնորդարանը (հինը), տղոց հոյակապ վարժարանը, եւ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ կից գտնուող կրպակները: Առանց պատճառի ինքնայօժար հրաժեշտ տալով իր հայրենիքը Թամզարայ կը մեկնի:

22. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՆԹԱՆՃԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. Զարշամպայի վիճակին Առաջնորդութենէն գալով 1852ին, կ՚ընդունի Տրապիզոնի

վիճակին Առաջնորդութիւնը, սակայն քիչ մը ժամանակ պաշտօնի գլուխ մնալէն յետոյ, հրաժարելով կ՚ընդունի Կեսարիոյ Առաջնորդութիւնը:

23. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎԻԻԵԱՆ, ԹԱՄԶԱՐԱՑԻ. 1853 - Փոխանորդութեան պաշտօնով, երկրորդ անգամ կուգայ Տրապիզոն, եւ այս անգամ եւս ինքնաբերաբար հրաժարելով կ՚երթայ իր հայրենիքը եւ հոն կը վախճանի:

24. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՆԹԱՆՃԵԱՆ. 1854-1856 - Երկրորդ անգամ Առաջնորդութեան պաշտօնով կուգայ Տրապիզոն, Յակոբոս Պատրիարքին հրամանաւ 1854 Հոկտ. 5ին, բայց այս անգամ Տրապիզոնի եւ Զարշամպայի վիճակները միացնելով, երկուքին միանգամայն Առաջնորդ կ՚ըլլայ, իբր «Պոնտոսեան վիճակաց»:

Մեսրոպ Վարդապետ այս անգամ եւս երկարատեւ պաշտօնավարութիւն մը չունենար, եւ իր անկման պատճառ կը համարուի, յետագայ միջադէպը.

Հովիւեան Յովհ. Վարդապետի օրով սկսուած շինութիւնները գլուխ հանելու համար, Յանձնաժողովը Յակոբոս Պատրիարքին հետ վաթսուն հազար դահեկանի փոխառութիւն մը կը կնքէ, որ երկար ատեն չի վճարուելով, տոկոսով միասին կը բարձրանայ իննսուն հազարի, Յակոբոս Պատրիարք իր պահանջը ուզելով, Յանձնաժողովը կը խնդրէ, որ գէթ մեծագումար տոկոսը իրենց շնորհուի, միմիայն դրամագլուխը ընդունելով: Մեսրոպ Վարդապետ գաղտնի նամակագրութեամբ, որպէս թէ գրգռած ըլլայ Պատրիարքը, որ դրամագլուխին հետ տոկոսն ալ անպատճառ պահանջէ: Այս պարագայն լսուելով, իր պաշտօնանկութիւնը կը փութացնէ:

Մեսրոպ Վարդապետ Զարշամպայ երթալով, մինչեւ իր մահը, միայն այդ վիճակին Առաջնորդութիւնը կը վարէ:

25. ԱԲԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ, ՏՓՂԻՍԵՑԻ. 1856 - Իբր այցելու հովիւ ժամանակ մը կը մնայ այս կողմերը, որովհետեւ՝ «յանցանօք իւիք փախուստ տուեալ էր ի ձեռաց Աշտարակեցի Ներսէս Սրբազնագոյն Կաթողիկոսի Հինգերորդի, եւ թափառէր աստ եւ անդ, բայց աղերսանօք բազմօք առ Կաթողիկոսն վերստին փութայ ի Տփղիս եւ անտի յէջմիածին»:

26. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ, ԿԱՐՃԱՀԱՍԱԿ. 1858 - Յակոբոս Պատրիարքի հրամանաւ իբր փոխանորդ Տրապիզոն կուգայ, 1858 Օգոս. 7ին, սակայն քիչ մը ատեն մնալէ յետոյ Պոլիս կը մեկնի:

27. ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԿԱԻԱԳԵԱՆ, ԶՈՐԼՈՒՑԻ. 1859-1862 - Երուսաղէմի միաբանութենէն, որ ծանօթ է աւելի Պիւլպիւլ մականուամբ, հրամանաւ Գէորգ Պատրիարքին, իբր Առաջնորդ Տրապիզոն կուգայ 1859 Դեկտ. 5ին:

Աբրահամ Վարդապետի պաշտօնավարութիւնը շատ աղմկայոյզ է եղած եւ մտքերը այնչափ զբաղեցուցած, որ ցարդ հիները չեն մոռցած այն ցաւալի պատահարները եւ աննկարագրելի յուզումները, որոնց թատր եղաւ Տրապիզոնի եկեղեցական գործերը բովանդակ երկու տարի: Պատրիարքարանը իր կողմէ իբր քննիչ եւ խաղաղարար կը ղրկէ Յովհ. Վարդապետ Զըպուղեանը, որ Աբրահամեան խուժանէն կը վտարուի եւ երկիւղէն կը դառնայ Պոլիս, ապա Պատրիարքական բուռն զօրութեամբ, «սոյն խռովեալ կղեր բարձեալ լինի ի վիճակէ աստի», կ՚ըսէ Յարութիւն Պատուելին:

28. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ, ԿԱՐՃԱՀԱՍԱԿ. 1863 - Կրկին անգամ փոխանորդութեան պաշտօնով Տրապիզոն կուգայ, բայց Աբրահամեանք հաշտ աչքով չեն նայիր իրեն եւ նոյն իսկ անոնցմէ յարձակում ալ կը կրէ, յուսահատօրէն հեռանալով ասկէ, կ՚երթայ Բաբելոնի կողմերը:

29. ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԵՑԻ. 1864-1869 - Առաջնորդութեան առաջին տարին կ՚եպիսկոպոսանայ Մատթէոս Կաթողիկոսէն, եւ մինչեւ 1869 կը պաշտօնավարէ, ապա հրաժարելով կ՚ընդունի Եգիպտոսի Առաջնորդութիւնը:

Մեսրոպ Եպս.ի օրով Զարչամպայ կրկին կը միանայ Տրապիզոնի եւ այդ միացումը շարունակուեց գրեթէ մինչեւ մեր օրերը:

30. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ, ՎԱՆԵՑԻ. 1870 - Ծանօթ աւելի Պլուզ մականունով, իբր Առաջնորդական Տեղապահ Տրապիզոն կը մտնէ 1870 Յունվ. 11ին, եւ մինչեւ ցընտրութիւն յաջորդին կը վարէ տեղւոյն գործերը:

31. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1871-1884 - Միաբան Երուսաղէմի, նախ Պատր. փոխանորդութեան պաշտօնով կուգայ Տրապիզոն 1871 Օգոստ. 4ին, ապա 1872 Մայիս 10ին Առաջնորդ կ՚ընտրուի, եւ 1879ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի Գէորգ Դ. Կաթողիկոսէն, եւ կը վախճանի Տրապիզոնի մէջ 1884 Յունվ. 18ին, կը թաղուի Առաջնորդարանի բակում, որուն վրայ դրուած է մարմարեայ գեղեցիկ տապանաքար մը սա արձանագրութեամբ.

«ՄՈՒՏՔ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱԶԱՐԵԱՆՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՐԳԵԱԼ ՀՈՎԻԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑՆ ՊՈՆՏՈՍԻ ԶԱՄՍ ՄԵՏԱՍԱՆ ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ 1884 ՅՈՒՆՈՒԱՐ 18 Ի ՏՐԱՊԻԶՈՆ»:

Մատթէոս Եպս. ի Առաջնորդութիւնը շատ մը տեսակէտներով նշանաւոր է եղած, թէեւ իր դէմ ունեցած է շարունակ հակառակորդ տարր մը, այսուհանդերձ կրցած է բաւական երկար ատեն հոն մնալ: Իր օրովը շինուած են ազգային գերեզմանատունը՝ Ս. Փրկչի վանուց արտօրէից

*մէջ, Առաջնորդարանը եւ ասոր կից գտնուող խանութները եւ աղջկանց վարժարանը: Այս շինութեանց մէջ կարեւոր բաժին մը ունեցած է Մհտ. Սիմօն էֆ. Ֆէթվաճեան († 1900):*

*32. ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՇԷՃԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1884-1885 - Մատթէոս Եպս. իր կենդանութեանը սոյն վարդապետը իբր օգնական իր մօտ բերել տուած էր, իր մահուընէն վերջ Գաւ. Խառն Ժողովի որոշմամբ Տեղապահ կը կարգուի 1884 Յունուար 29ին:*

*33. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, ՎԱՆԵՑԻ. 1885-1888 - Ընդհանուր ժողովը զինքը Առաջնորդ կ'ընտրէ 1885 Մայիս 12ին, նոյն տարւոյն Յուլիս 8ին Տրապիզոն կը մտնէ, եւ 1886ին վիճակին վրայ Եպիսկոպոս կը ձեռնադրուի Մակար Ս. Կաթողիկոսէն:*

*Իր պաշտօնավարութեանը ժամանակ շինուած են Գլիւպը եւ անոր տակի կրպակները, ինքն է դարձեալ Առաջնորդարանի դիւանատունը կարգի կանոնի դնողը: Տեղական գործերու կարգադրութեան համար հրաւիրուած է Պատրիարքարանի կողմէ, 1888 Մարտ 7ին մեկնած է այլ եւս չի վերադառնալու պայմանով:*

*34. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍԼԱՆԵԱՆ, Կ. ՊՈԼՍԵՑԻ. 1888-1889 - Ի բացակայութեան Գարեգին Եպս. ի, Պատր. փոխանորդի պաշտօնով Տրապիզոն կուգայ 1888 Ապրիլ ամսուն եւ կը մեկնի 1889 Մայիս 29ին:*

*Յարութիւն Պատուելի ասոր մասին, հետեւեալը կը գրէ, «որոյ (Ներսէս Վարդապետի) զգացեալ ոմանց ակնկալութեանն առ Գարեգին վերստին, առանց յայտնելոյ պատճառ ինչ փութայ ի Կ. Պոլիս, եւ անդ վերապատուի Պատր. փոխանորդութեամբ»:*

*35. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ, ՎԱՆԵՑԻ. 1890-1892 - Ծանօթ Պլուզը, Գարեգին Եպս. ի առաջարկութեամբ, եւ տեղւոյն Խառն Ժողովի հաւանութեամբ Տեղապահ կը կարգուի 1890 Սեպ. 27ին եւ կը մեկնի 1892 Յունիսի 2ին:*

*36. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ, ԱՐՄԱՇՑԻ. 1892-1895 - Միաբան Արմաշու վանուց, Առաջնորդ կ'ընտրուի 1892 Մայիսի 31ին, Տրապիզոն կը մտնէ Սեպտ. 8ին: 1895 Մայիսի 16ին պատուհանավէժ կը վախճանի իբր հետեւանք մտային խանգարման եւ կը թաղուի Առաջնորդարանի բակը, առընթեր Մատթէոս Եպս. ի, որուն վրայ մարմարեայ քար մը դրուեցաւ հետեւեալ արձանագրութեամբ:*

*«ՄԱՀԱՐՁԱՆ Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՅՎԱԶԵԱՆ ԱՐՄԱՇԱՑԻՈՅ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ԾՆԵԱԼ 1852 ԴԵԿՏ. 10, ՎԱԽՃԱՆԵԱԼ 1895 ՄԱՅԻՍ 16»:*

*37. ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ, ԿԱՐՆԵՑԻ. 1896 - Իբր Պատրիարքական փոխանորդ Տրապիզոն կուգայ 1896 Մայիս ամսուն,*

*եւ կը մեկնի Կ. Պոլիս Սեպտեմբեր ամսուն, որով հինգ ամիսներ միայն պաշտօնավարած կ՚ըլլայ:*

*38. ԽՈՍՐՈՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՀՐԻԿԵԱՆ, ԶԱՐԱՑԻ. 1897-1901 - Միաբան Արմաշու Դպրեվանքին, Կեդր. վարչութեան Խառն ժողովոյ որոշմամբ Տեղապահ կը կարգուի եւ 1897 Հոկտ. 3ին Տրապիզոն մտնելով պաշտօնին կը ձեռնարկէ եւ հրաժարելով Պոլիս կը մեկնի 1901 Յունվար 13ին[2]:*

*Այս անգամ Զարշամպայի կամ Ճանիկի վիճակը վերջնականապէս կը բաժնուի Տրապիզոնէն, եւ կ՚ըլլայ ուրոյն Առաջնորդական վիճակ, իրենց Առաջնորդանիստ քաղաք ունենալով Սամսոնը[94]*:*

## 51/2. Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՎԱՆՔ

*Տրապիզոնի, եւ Ս. Ամենափրկչի վանքին միջեւ գտնուած բլրակի մը վրայ կը գտնուի այս վանքը, տասը կամ տասն եւ հինգ տարիներէ ի վեր սկսուած է չէնցուիլ, եւ վանքը պատով մը կը շրջապատուի:*

*Ս. Համբարձման տօնին օրն է, որ ժողովուրդը կ՚երթայ հոն ուխտի:*

## 52/3. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ

*Տրապիզոնի Քէլքիթ անուն գիւղին մէջ, [որ անցած է բոլորովին ի չարս ամայի Հայ վանորէից, ինչպէս ծանօթագրած են մեզ (Բիւզ., 1900, թիւ 1067, էջ 1):*

## 53/4. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ[95]*

*Նոյնպէս նոյն Քէլքիթ անուն գիւղի մօտերը, [այժմ, ինչպէս ծանօթացած ենք, ամայի ու աւերակ (Բիւզ., 1900, թիւ 1019, էջ 1):*

## 54/5. Ս. ՎԱՐԴԱՆԱՑ ՎԱՆՔ [ՍՐԲՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԱՆՔ][96]*

*Տրապիզոնի Սիւրմէնէ անուն գիւղին մէջ, [փակեալ եւ ամայի, հինաւուրց վանք մը (Բիւզ., 1900, թիւ 1027, էջ 1):*

## 55/6. Ս. ԳԷՈՐԳԱՑ ՎԱՆՔ[97]*

*Տրապիզոնի ենթակայ Կօհանայի մէջ:*

---

[2] Խոսրով Վարդապետ Պէհրիկեանէ ետքը, Տրապիզոն Առաջնորդական պաշտօնով գացած են նաեւ, Եզնիկ Վարդապետ Պապայեան, Ասլանեան Եպս., Էմմանուէլ Վարդապետ Պալեան, եւ Սերովբէ Վարդապետ Սամուէլեան:

## 56/7. Ս. ՂՈՒԿԱՍԱՅ ՎԱՆՔ[98*]

*Նոյնպէս Կօհանայի մէջ:*

## 57/8. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔ[99*]

*Ասամուտի մէջ:*

## 58/9. ԳԵՏԱԴԱՐՁԻ ՎԱՆՔ[100*]

*Կէմախլըյի մէջ:*

## 59/10. Ս. ՎԱՐՁԵՆՑ ՎԱՆՔ

*[Տրապիզոնի գաւառին մէջ, ի վաղուց անցած է ի չարս ամայի եւ աւերակ Հայ վանորէից (Բիւզ., 1900, թիւ 1103, էջ 1]:*

## 60/11. Ս. ԽԱՉԱՎԱՆՔ

## 61/12. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ[101*]

*Այս վերջին տասը վանքերը, որոնք Թէեւ կը յիշուին, Թէ Տրապիզոնի նահանգին մէջ են, բայց մենք այս վանքերու վրայ մասնաւոր ո՛ր եւ է ծանօԹուԹիւններ չունինք, եւ չի կրցանք ալ ստանալ, միայն կը կարծենք, Թէ ի վաղուց անցած պիտի ըլլան ի չարս չաբաԹացեալ ու ամայացեալ [հանգած] Հայ Վանորէից, եւ մոռցուած [ԸԳր - Մ՝ Մնացած են միայն ]մոռցուած] պիտի ըլլան իրենց յիշատակները[102*]:*

# ԺԱ. ԿԻՒՄԻՒՇԽԱՆԷ

*Ինչպէս ըսինք, Կիւմիւշխանէ Տրապիզոնի Կուսակալութեան ենթակայ կառավարչութիւն (սանճագ) է, Տրապիզոնէն հեռու է մէկ օրուան ճանապարհով: Կիւմիւշխանէն Տրապիզոնի Առաջնորդութեան թեմերէն մին է:*

## ԿԻՒՄԻՒՇԽԱՆԷԻ [ՀԱՅ] ՎԱՆՔԸ

### 62/1. Ս. ՓՐԿՉԱՅ ՎԱՆՔ[103*]

*Կիւմիւշխանէէն կէս ժամու չափ հեռաւորութեամբ ձորի մը մէջ կառուցուած է Ս. Փրկչայ վանքը, գեղեցիկ եւ վայելուչ դիրքով մը, կ՚ըսուի նաեւ Ամենափրկչայ վանք:*

*Վանքը իր շէնքերով, ծառաստանով, վճիտ ու առողջարար ջուրերով, շա՜տ գեղեցիկ վայր մը կրնայ համարուիլ:*

*Վանքի եկեղեցին շատ սիրուն եւ լուսաւոր է, եկեղեցական անօթներու եւ ընտիր զարդերու կողմանէ ալ բաւական գոհացուցիչ է կ՚ըսուի:*

*Սեփական թէեւ վաթսուն կտորէն աւելի հողային արտորայք ունի, բայց ամենն ալ անջրդի, եւ ոչ այնքան ալ արդիւնաւոր: Ունի նաեւ արօտատեղի մը, բաւականին ընդարձակ անտառ մը, պարտէզ մը, եւ ջաղացք մը:*

*Իր թեմերն են Քըսանթայ, Պալախոր, Նիվ, Բնջրկայ, Խնծավիրան, Քերտեսի եւ Զախմանց գիւղերն, որոնցմէ պտղի հաւաքելու իրաւունքն ունի վանքը:*

*Վանքի մէջ երբեմն միաբան վարդապետներ կը գտնուէին, եւ այս վարդապետներէն մին ալ իբրեւ վանահայր կը պաշտօնավարէր, բայց երկար տարիներէ ի վեր միաբան վարդապետ չունի վանքը դժբախտաբար, եւ այս պատճառաւ այժմ վանքը անցած է աշխարհական քանի մը անձերու ձեռքը, իբր հոգաբարձու, որոնք կը կառավարեն կ՚ըսուի վանքը*[104*]*:*

## (ՑԱԻԵԼՈՒՄ)

## ԻԿՈՆԻԱ = ԳՕՆԻԱ

*Իկոնիա = Գօնիա կուսակալութիւն (վիլայէթ) է, իր գաւառ ու գաւառակներն են, Ագշէհիր, Ատալիա, Պուրտուր, Նիյտէ, Էրէյլի, Նէվշէհիր (=Նիւսա), Պօռ եւ այլ քաղաք եւ գիւղաքաղաքները:*

*Իկոնիոյ Հայ Առաջնորդներ թէեւ կը յիշատակուին ԺԴ-ԺԶ. դարերուն մէջ, բայց անկէց վերջ, անցած էր իբր Թեմ Զմիւռնիոյ Առաջնորդական վիճակին: Երկար տարիներ այսպէս շարունակուելով, վերջին ժամանակներս, 1904 թուականէն սկսեալ կրկին Հայ Առաջնորդական կեդրոն եղաւ, եւ Նիյտէի գաւառը, Պօռ, Էրէյիլ, Նէվշէհիր, Ագսարայ գաւառակներն ալ, որոնք Կեսարիոյ Առաջնորդական վիճակին թեմերն էին, յանձնուեցան Գօնիայի Առաջնորդութեան:*

## 63/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ՆԻՅՏԷԻ

*Նիյտէ քաղաքին մէկ ծայրը կը գտնուի Ս. Կարապետի վանքը, դիրքով փոքրիկ, եւ այժմ գրեթէ բոլորովին ամայի, եւ միակ մատուռ մը մնացած եւ երկար տարիներէ ի վեր ալ եղած է ուխտատեղի:*

*Տարին մի անգամ Նիյտէի Հայ ժողովրդեան փափաքանաց վրայ, տեղւոյն քահանայն, կերթայ այնտեղ, մատուռը եւ շուրջը մաքրել տալով, Ս. Պատարագ կը մատուցանէ, հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ, եւ բարեպաշտ ժողովուրդն ալ կը կատարէ իր ուխտն, եւ կը նուիրէ իր մոմն ու նուէրն:*

*Այս Ս. Կարապետ վանքին մօտերը, այն է՝ Նիյտէ քաղաքին մէկ կողմն եղած ձորին մէջէն, Կեսարացի Թուրք ճամբորդ մը անցած ժամանակը, ձորին մէջ նետուած կճեայ քար մը կը տեսնայ, եւ իբր մարմարիոն կ՚առնէ եւ, իր սայլին մէջ դնելով, կը բերէ Կեսարիա եւ կը ձգէ իր այգիին մէջ՝ յառաջիկային շինելիք սենեակի մը դրան ճակատը դնելու համար:*

*Երկար տարիներ կը մնայ քարը այգիին մէջ, մարդը սենեակը չի կրնար շինել տալուն համար, օր մը իր դրացի այգետէր ոստիկան Օսման չավուշ կը տեսնէ այգիին մէջ քարը, եւ կ՚առնէ կը բերէ այդ ժամանակի Կեսարիոյ Կառավարիչ Վսեմ. Նազըմ փաշային, իբր ճամբու ծախք փոխարէն ստանալով վեց մէճիտ:*

*Անձամբ տեսանք նոյն քարը, որուն արձանագրուած էին Հաթեան նշանագիրեր: Խնդրեցինք Կառավարիչէն, որպէս զի մէկ օրինակը առ-*

*նենք Թուղթի վրայ, արտօնեց, եւ ճշդութեամբ օրինակեցինք, որուն մէկ օրինակն ալ կը դնենք այստեղ:*



*Արձանագրութեան երկու կողմն եղած մեծ սեւ կէտերը անոր համար դրինք, որովհետեւ քարը այդ երկու տեղերէն այնչափ կոտրած էին:*

*Այս Հաթեան արձանագրութեան մէկ օրինակն 1900 թուականին հրատարակած էինք, Ս. Էջմիածնի Արարատ ամսաթերթին մէջ ալ:*

*Քարը այդ ժամանակ վնեմ. Կառավարիչին կողմէ ղրկուեցաւ Կ. Պոլսոյ Օսմ. Միւզախանէն, որ կը կարծենք թէ, ուշադրութեամբ կը պահուի հոն, ինչպէս նաեւ Ազիզիէի Էքրէք անուն գիւղէն տարուած մեծ քարը*[105]*:*

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ

# ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

# ԺԲ. ԿԱՐՆՈՅ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բն–ւ., 1901, Յն– 1447, 3–16/Է., էջ 1. Թն– 1448, 4–17/Է, էջ 1*

## 64/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[106]*

*Կարնէն չորս ժամու չափ հեռի, դէպ ի արեւմտեան հիւսիս, Հինձք անուն գիւղի մօտերը եւ Հուիփսիմէ ըսուած ձորակին մէջ եղած բլուրներէն միոյն կուշտը շինուած է այս Կարմիր կամ Կարմրու Ս. Աստուածածնի համակ պարսպապատ վանքը, հոյակապ եւ փառաւոր դիրքով, սքանչելի եւ ակնապարար տեսարանով մը, եւ կ՚տիրէ նաեւ ամբողջ դաշտին եւ գիւղերուն վրայ: Կ՚ըսեն թէ Հինձք գիւղը մօտ ըլլալուն համար, վանքը կոչուած է Հնձուց վանք, եւ վանքին եկեղեցւոյ գմբէթը կարմրագոյն քարերէ շինուած ըլլալուն համար ալ՝ Կարմիր վանք Ս. Աստուածածնի:*

*Աւանդութիւնն այս վանքին շինութիւնը կ՚հանէ մինչեւ չորրորդ դարու կիսուն, եւ հիմնարկութիւնն ալ կուտայ Մեծն Ներսէս Պարթեւ Հայրապետին, որ անձամբ կատարած ու Տաճարը նուիրած է յանուն Ս. Աստուածածնի, եւ առաջին վանահայր եւ վերատեսուչ նշանակած է նաեւ ծննդեամբ Կարնեցի Խադ Սարկաւագը: Աւանդութիւնն հիմնական ըլլայ թէ ոչ, բայց գիտենք թէ այս վանքը տասներորդ դարուն մէջ[107]*, եւ ապա մէկ-երկու դարեր, հռչակաւոր ու անուանի էր իբրեւ դպրեվանք եւ իբրեւ կեդրոնավայր կրօնից եւ ուսմանց, ուր բնակած, ուսած եւ ուսուցած են Անանիա Նարեկացի, Խոսրով Անձեւացի, Գրիգոր Նարեկացի եւ այլ եկեղեցականներ տասներորդ դարուն մէջ, Գրիգոր Մագիստրոս, Պետրոս Գետադարձ, Գրիգոր Վկայասէր, Արիստակէս Լաստիվերտցի եւ այլ պատուական հայրերն ալ տասնեւմէկերորդ դարուն մէջ, որք արդէն անուանի եւ ծանօթ են իրենց եկեղեցական մատենագրութիւններով:*

*Այլ եւ այլ ժամանակներ պատահած երկրաշարժներէն զատ, 1770 թուականին տեղի ունեցած մեծ երկրաշարժէն վանքը գրեթէ բոլորովին վնասուեցաւ եւ ամայացաւ, եւ այս ամայութիւնը տեւեց գրեթէ երեսուն տարիներ, եւ ապա Յակոբ եւ Մկրտիչ անուն վանահայր¬միաբան վարդապետներու ջանիւք եւ աշխատութեամբ, կրկին անգամ նորոգուեցաւ, եւ տաճարն ալ շինուեցաւ հնոյն արեւելեան կողմը: Այս վերջին շինութեան մանրամասնութիւնը բացայայտ կերպիւ ի վեր կը հանեն տաճարին այժմեայ դրան (որ հին տաճարի աւագ խորանի տեղն էր),*

*երկու կողմերը մարմարեայ քարերուն վրայ քանդակուած հետեւեալ երկու արձանագրութիւնները:*

*Առաջինը՝ – «ՀԱԶԱՐ ԵՐԿԵՐԻՒՐ ԺԹ. ԹԻՒ [1770] ԼԵԱԼ. / ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ԳԵՏԻՆՆ ՇԱՐԺԵԱԼ. / ՍՈՒՐԲ ՎԱՆՔՍ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՓԼԵԱԼ. / ՅԱԿՈԲ ԱՐՀԻՆ ԶՊԱՐԻՍՊՆ ՇԻՆԵԱԼ. / ՈՄՆ ՄՈՎՊԵԴ ՅԱՍՄԱՄԲ ՏՈՒԳԱՆԵԱԼ. / ՈՅՐ ՎԱՍՆ ԶԴՈՒՌՆ Ի ՎԵՐ ՇԱՐԺԵԱԼ. / ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ԱՄԱՅԱՑԵԱԼ. / ՂԵՒՈՆԴ Ի ՊՈԼՍՈՅ ՀՐԱՄԱՆ ԲԵՐԵԱԼ. / ԱՅԼ ԵՒՍ ԶԻՆՉ ԻՆՉ ՏԵՂԻՍ ՇԻՆԵԱԼ. / ԲԱՅՑ ՏԱՃԱՐՆ ԱՅՆՊԷՍ ՄՆԱՑԵԱԼ. / ՇԱՐԺԷՆ ԵՐԵՍՈՒՆ ԱՄ ԱՆՑԵԱԼ»:*

*Երկրորդը. – «[ՌՄԽԹ.] 1249 (1800) ՀՈԿՏԵՄԲԵՐ ԻԷ. (27) / ՄԱՅՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ [ԱՐԴ] ԳԹԱՑԵԱԼ / ՀՐԱՄԱՆ ՇԻՆՄԱՆ ԻՍԿ ՅԱՋՈՂԵԱԼ. / ՏՐՕՔ ԱԶԳԻՍ [ՀԱՅՈՑ] ՕԳՆԵԱԼ. / ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ ՇՔԵՂ ՇԻՆԵԱԼ. / ԳՄԲԷԹԱՅԱՐԿ ԿԱՐՄՐԱԶԱՐԴԵԱԼ. / ՅԱՒՈՒՐ ՕԾՄԱՆՆ ԼՈՒՍԱՓԱՅԼԵԱԼ. / ԴԵՏՆ ՄԿՐՏԻՉ, ՊԵՏՆ ԱՇԽԱՏԵԱԼ. / ԵՐԿՈՒ ԲԱՐԵՍԷՐՔ ԹԻԿՈՒՆՍ ՀԱՍԵԱԼ. / ՄՈՄՃԻ ԿԱՐԱՊԵՏՆ ԱՐԻԱՑԵԱԼ. / ՂԱՍԱՊ ՅԱԿՈԲԻՒ ՋԱՆԱՍԻՐԵԱԼ. / ԱՅԼ ԵՒ ԶԴՈՒՌՆ ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐԵԱՆՑ ՍՏԱՑԵԱԼ. / ԲՈԼՈՐ ԽԱՐՃԻՒՔՆ ՅՈՐ ՊԱՏՇԱՃԵԱԼ»:*

*Վանքին այժմեան վիճակը բաւական կանոնաւոր է, եւ 1896ին Որբանոց մըն ալ բացուեցաւ, ուր կ՚խնամուին ու կ՚կրթուին ութսունի չափ որբեր, Բեդերսպուրկի որբախնամներու ծախքով: Ունի միաբանից եւ ուխտաւորաց յատուկ երեսունի չափ կոկիկ սենեակներ, գաւթին մէջ աղբիւր մը քաղցրահամ ջրով, ունի նաեւ ամբարանոց, մառան, փարախ, ախոռներ եւն.: Սեփական 15 կտորի չափ մշակելի հողեր, եւ 42 կտորի չափ անմշակելի խոպան տեղեր: Կալի տեղ մը եւ երկու մարգագետին, եւ ջրաղացք մը:*

*Այս վանքի վերջին ժամանակներու Վանահայր ու փոխվանահայրներէն հետեւեալները ծանօթ են մեզի.*

*Յակոբ Վարդապետ Արհի կոչեցեալ 1770ին.*

*Առաքել Վարդապետ 1736ին.*

*Եղիա Վարդապետ 1739ին. այս երկուքին գերեզմանները վանքի մէջ են տապանաքարերով եւ արձանագրութեամբ.*

*Տիրատուր Վարդապետ.*

*Տ. Պետրոս ոմն Քահանայ.*

*Կարապետ Եպիսկոպոս Հուչակաւոր, որ պանդխտեցաւ.*

*Կարապետ Եպիսկոպոս Էլէկէօզեան Կէրմիրցի.*

*Յովհաննէս Վարդապետ 1874ին:*

*Մօտ ատեններս ալ՝*

*Վեհապետեան եւ Օրմանեան Սրբազաններ.*

*Կորիւն Վարդապետ Էլլիտիրհէմեան.*

*Մկրտիչ Վարդապետ Մկրտիչեան Կիւմիւշխանեցի.*

*այժմ ալ՝ Զաւէն Ծ. Վարդապետը*[108]*:

## 65/2. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[109]*

*Կարինէն մէկ ու կէս ժամու չափ հեռի, Մուտուրկայ կամ Մատուրկայ անուն հայաբնակ գիւղին մօտերը, եւ այս պատճառաւ կ՚ըսուի նաեւ «Մատուրկայ վանք Ս. Լուսաւորչի»: Թէեւ շատ հին վանքերէն մին, բայց բուն իսկ հիմնարկութեան թուականն անծանօթ: Ունի երեք եկեղեցի, մին՝ բաւական ընդարձակ է եւ նուիրուած յանուն Ս. Լուսաւորչի. երկրորդը կ՚անուանի Խորվիրապ, նմանութեամբ Արտաշատի Ս. Խորվիրապին, որ իր կարգին յիշատակեցինք, եւ երրորդն՝ նուիրուած է յանուն Ս. Սարգիսի. վերջին երկու եկեղեցիները շատ փոքրիկ են եւ կ՚համարուին մէյմէկ մատուռներ: Այս երեք եկեղեցիներն ալ նորոգութիւն տեսած են երեք տարի առաջ՝ 1898ին՝ Կարնեցի քանի մը բարեպաշտ ազգայիններու նուիրատուութեամբը: Վանքին մէջ կան միաբանից եւ ուխտաւորաց յատուկ քառասունի չափ սենեակներ բաւականին կանոնաւոր: Ունի սեփական մշակելի ագարակ մը 250 արտավարի չափ, եւ ուրիշ 40 կտորի չափ այլեւայլ արտեր 300 արտավարի չափ, որոց մեծագոյն մասն անմշակելի եւ խոպան են կ՚ըսուի, եւ արօտատեղի մը բաւական ընդարձակ, Կարնոյ մէջ ալ սափրիչի եւ պէզազի երկու խանութներ: Վանքի տարեկան արդիւնքն հազիւ տասն հազար ղրուշի կը հասնի եղեր: Իր թեմերն են մօտակայ դաշտին մէջ գտնուած Մատուրկայ գիւղէն սկսեալ 14 կամ 15ի չափ այլ գիւղեր: Երկու տարի առաջ վանահայրական պաշտօնը յանձնուած էր Մատուրկայ գիւղի քահանային, այժմեայ մատակարարութեանը վրայ տեղեկութիւն մը չունինք (Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1)[110]*:*

## 66/3. ԽԱՉԿԱՑ ՎԱՆՔ[111]*

*Կարնոյ մօտերն եօթներորդ դարու մէջ հիմնարկուած վանքերէն մին է: Կ՚ըսուի նաեւ՝ ինչպէս պատահած ենք ձեռագիր յիշատակարաններու մէջ. Խաչավանք կամ Խաչովանք, երբեմն ըսուած է նաեւ Ս. Խաչ: Մեք մինչեւ ցայսօր մասնաւոր ծանօթութիւն մը չկրցինք ստանալ այս վանքի ներքին եւ այժմեայ վիճակին վրայ, միայն թէ ունի եղեր 20ի չափ արտորայք 120 արտավարի չափ, եւ արօտատեղի մը, վանքն ալ կ՚մատակարարուի եղեր ժողովրդեան պտղիով[112]*:*

## 67/4. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ[113]*

*Կ՚յիշատակուի Կարնոյ մօտերը: Այս վանքի վրայ ալ մասնաւոր ծանօթութիւն մը չկրցինք ստանալ մինչեւ ցայսօր, բայց կ՚երեւի ի վա-*

*ղուց անցած է ի չարս ամայացեալ Հայ Վանորէից (Բ՝ե–ղ., 1900, Թ. 1019, էջ 1)*[114]*:

## 68/5. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[115]*

*Կարինէն երկուք ու կէս ժամու չափ հեռի, Օձնի անուն գիւղի մէջ, այս պատճառաւ կ'ըսուի նաեւ Օձնիի Ս. Յովհաննէս, որ ի վաղուց հանգած եւ քովերն ալ եղած է գիւղին գերեզմանատունը, որուն մէջ այժմ կ'երեւին միայն վանքին աւերակները:*

*Թէեւ անհաւանական, բայց այս աւերակ վանքի համար աւանդութեամբ կ'ըսուի, թէ հիմնադիրն եղած է ութերորդ դարուն մէջ Օհան Իմաստասէր կամ Օձնեցի, որ իր անունով վանքը կոչուեցաւ կ'ըսեն «Ս. Յովհաննու վանք», եւ գիւղն ալ «Օձնի»: Անհաւանական է ըսինք, որովհետեւ ծանօթութիւն ստացած ենք, թէ յիշեալ Օձնի գիւղին*[116]* մօտերն առանձինն ուխտատեղի մ'ալ կայ «Օձտեղի Ս. Օհան» անունով, գուցէ այս է, որ յանուն Օձնեցիին նուիրուած կամ շինուած ըլլայ, եւ յետոյ վանքն ալ միեւնոյն անունն առած*[1]*:*

** Խաչիկ էֆ. Լեւոնեան Վանայ մէջ տեսած է 1188 թուականին գրչագրուած Աւետարան մը*[117]**, որուն յիշատակարանին մէջ կ'յիշատակուի Խանդամլուց անունով վանք մը, ի Կարին, նուիրեալ յանուն Ս. Ստեփաննոսի: Մեք պատահած չէինք այսպիսի վանքի մը անուան, միայն գիտենք թէ Կարնոյ նահանգին մէջ, Բաբերդէն հինգ ժամու չափ հեռի դէպ ի Արեւմտեան կողմ, Օձտեղ անուն գիւղի հիւսիսային հովիտներէն միոյն կողին վրայ վանքի մը տեղը կայ, որուն կ'ըսուի «Վաղչէնի վանք Ս. Ստեփաննոսի», եւ որ շատ հին վանքերէն մին էր, եւ ԺԶ. դարուն մէջ անմարդաբնակ դարձած էր, բայց 1610 թուականին Օձտեղցի Սրապիոն անուն վարդապետ մը վերստին նորոգեց եւ շէնցուց, ծախսելով մինչեւ անգամ երեք հազար «մառչիլս» ինչպէս ինք կ'ըսէ. թէեւ շատ կասկածանօք՝ բայց կրնա՞նք արդեօք ըսել թէ այս Վաղչէնի վանքը հին ժամանակ կ'կոչուէր Խանդամլուց, եւ ապա ԺԷ. դարէն յետոյ ըսուեցաւ Վաղչէնի վանք, վերստին ի հիմանէ նորոգուած ըլլալուն համար, եթէ չէ՛, Խանդամլուց վանքն ալ զատ վանք մ'է, եւ մեր կարծեօք շատ հետաքրքրական կ'ըլլայ տեղն որոշել: Ի՛նչ որ ալ ըլլայ, մեր խորին շնորհակալութիւնը Խաչիկ էֆ. Լեւոնեանին՝ որ իր շնորհիւ մեր վանորէից ցուցակին մէջ անուն մ'ալ աւելցուցինք*[118]**:*

---

[1] Կարնոյ մօտերը «Ս. Եղիա» եւ «Թօմնայի Ս. Մինաս» կամ «Յովհաննէս Աւետարանիչ» անուններով եւն. ուրիշ ուխտատեղիներ ալ կ'յիշուին (*Բ՝ե–ղ., 1900, Թ. 1001, էջ 1*):

# ԺԳ. ԲԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բէ-ւ., 1901, Բէ-1500, 3-16/Թ., էջ 1. Թէ-1502, 5-18/Թ., էջ 1*

## 69/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ԽԱՂՃԱՆԵԱՑ[119]*

## 70/2. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ ԽԱՂՃԱՆԵԱՑ-ԽԱՂՃԱՆԵԱՑ ՎԱՆՔ Ս. ԹՈՐՈՍԻ[120]*

*Բաբերդի մէջ: Քաղաքին հիւսիսային կողմն երկու ժամ հեռու, Թօմնայ անուն գիւղի յենարան եղած լերան մը ստորոտն է Ս. Թէոդորոսի վանքը, եւ լերան վերի կողմն է Ս. Աստուածածնայ վանքը, որոց երկուքին ի միասին կ'ըսուի Խաղճանեաց կամ Խաղճեանեաց[1] վանք Ս. Աստուածածնի եւ Ս. Թորոսի: Թէեւ ժամանակին չէն վանքեր, բայց ներկայիս մէջ երկուքն ալ ամայի եւ փլած: Այս վանքին մասին 1382 թուականին գրչագրուած Աստուածաշունչ մատենի մը յիշատակարանին հետեւեալ երկու կտորներն յարմար կ'տեսնենք յառաջ բերել այս տեղ.*

*Առաջինը. «Յիշեսջիք գքաջ հովիւն… զՏէր Յովհաննէս, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց եւ եդ ի վանս իւր, որոյ անուն կոչի Խաղճան, ի դուռն Ս. Աստուածածնին եւ Ս. Թէոդորոսին… թիւ տօմարական ՊԼԱ.» (1382)[121]*:*

*Երկրորդը. «Ի թուաբերութեանս ՊԽԴ. (1395), ի Հայրապետութեան Տեառն Թէոդորոսի… եւ ի յԱռաջնորդութեան [մերոյ նահանգիս Խաղտեաց՝] Բաբերդոյ Տէր Յովհաննիսի արքեպիսկոպոսի, եղեւ հրաման ի Տեառնէ Աստուծոյ մերոյ վերափոխել ի Տէր Յիսուս՝ սրբասնունդ եւ երանաշնորհ եպիսկոպոսին մերոյ Տէր Յօհաննիսի], եղեւ պակասութիւն ամենայնի մեզ ամենեցուն, եւս առաւել հրեշտակաբնակ մենաստանիս Խաղճանեայ, զոր եւ ի սատրելոյ չարին յարեան ոմանք ի մէնջ, ի մեր ազգականաց եւ հակառակեցան վանիցն, եւ ցրուեցին զուխտ եւ զամենայն, զոր ինչ կայր ի նմա, զոր Տէր Յովհաննէս հանցէ զպատիժ պատուհասին ի գլուխ հակառակողին, ամէն:*

*Ես՝ նուաստ ոգի՝ քոյր Տէր Յովհան Եպիսկոպոսի, վերստին հաստատեցի զսուրբ վանական ուխտն Խաղճեանեայ, Ուստիանէ խաթուն, եւ*

---

[1] Տեղ մ'ալ այս վանքի անուան պատահած ենք՝ «Խրախճանեաց վանք» գրուած:

*պարոն Թորոս՝ որդի իմ, եւ ժողովեցաք զանձոռ եւ զանօթ սուրբ եկեղեցեաց եւ եդաք ընդ ձեռամբ մերով, յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց՝ պարոն Աստուածատուրին եւ մօրն իմոյ Խաժիկ խաթունին, եւ կենակցին իմոյ Աւագ պարոնին, եւ դստերաց Մասխա խաթուն, Գայեանէ խաթուն, եւ Դօվլաթ խաթունին, եւ դեռաբոյս զաւակին մերոյ Մելիքին...» (տե՛ս Նոտարք, եր. 7* [վերահրատ.՝ ԺԴ. դ. յիշ., էջ 611-2*])։*

*1382 թուականներուն այս վանքի միաբանք կ'յիշատակուին, Տէր Յովհաննէս Եպիսկոպոս Վանահայր վանուցն, Տէր Խաչատուր վարդապետ, եւ Ղազար, Մարտիրոս, Սարգիս եւ Մկրտիչ աբեղաներ (Բիւզ., 1900, թ. 1043, էջ 1)*[122]*։*

## 71/3. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ԳԼԽՈՆՑԻ[123]*

*Բաբերդ քաղաքէն հինգ ժամ հեռու, արեւմտեան հիւսիսային կողմը, Գլխոնց անուն գիւղի մօտ, ապառաժուտ լերան մը տափարակ վայրին վրայ շինուած, այժմ ամայի եւ աւերակ։ Այս վանքի բոլորտիքը կ'երեւին նաեւ, ինչպէս կ'ըսէ մեզ տեղեկութիւններ հաղորդողը, հին եկեղեցւոյ եւ մատուռի մը փլփլած հիմերն ու մնացորդները (Բիւզ., 1900, թ. 1060, էջ 1)։*

## 72/4. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ԼՈՒՍՀՈՆՔԻ. - Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ԼՈՒՍՀՈՆԳԻ[124]*

*Բաբերդէն վեց ժամ հեռու, արեւելեան լեռնադաշտի մը վրայ կառուցեալ է, Լուսհոնգ անուն գիւղի մօտ։ Վանքի մատակարարութիւնն աշխարհականաց ձեռքն է. հասոյթները գիւղացիք կ'ստանան։ Ուխտաւորութեան ժամանակն է Գիւտի նշխարաց տօնին (Բիւզ., 1900, թ. 1060, էջ 1)»։*

## 73/5. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ԼՕՌԻԻ[125]*

*Բաբերդէն եօթը ժամ հեռու, հարաւ արեւմտեան կողմ, Լօռի անուն գիւղի մօտ լերան մը գլուխը կառուցուած է։ Վանքի հիմերէն միայն կէս մարդաչափ որմերը մնացած են. այսու ամենայնիւ, Գիւտի նշխարաց տօնին օրը, ամէն տարի, բարեպաշտ ուխտաւորք կ'դիմեն իրենց ուխտն ու աղօթքը մատուցանելու, եւ իրենց մոմը վառելու վանքի աւերակաց վրայ (Բիւզ., 1900, թ. 1060, էջ 1)*[126]*։*

## 74/6. ԱԼՆՈՑԻ ՎԱՆՔ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ[127]*

Բաբերդի մօտերը փոքր վանք մ'է եղեր ժամանակին, բայց կ'երեւի թէ երկու դարերէ ի վեր ամայացեալ եւ անցած է ի չարս չաբաթացեալ Հայ վանօրէից: Տասնեւեօթներորդ դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը՝ որ կ'պահուի ի Ս. Կարապետ եկեղեցին Խարբերդու, յիշատակարանին մէջ, այս վանքի համար գրուած է հետեւեալ կերպիւ. ¬ «...Արդ, ես ծառայս Աստուծոյ՝ Յովհաննէս, սկսայ զՍուրբ Աւետարանս եւ կատարեցի ի ՈԾԲ. (1203) թուականիս, ի Կաթողիկոսութեան Տէր Անանիայի, եւ յառաջնորդութեան Տէր Մխիթարայ, երկրիս Խաղտեաց, ի փոքր մենաստանիս, որ կոչի Ալնոցի վանք, ի դուռն Սուրբ Յովհաննիսի՝ ձեռնադրողին Փրկչին մերոյ...» (տե՛ս Թորոս Աղբար Բ. երես 341). (Բէ-ւ., 1900, Բ. 1060, էջ 1)[128]*:

## 75/7. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ ՊԱԼԱԽՈՌԻ[129]*

Բաբերդէ հինգ ժամու չափ հեռի, դէպ ի արեւմտեան կողմ: Կիւմիւշխանէի եւ Սիւրմէնէի սահմանագիծ եւ Պալախոռ անուն գիւղի մօտերն եղած լեռնաշղթաներուն մէկ խորշը՝ բլուրի մը արեւմտեան կողին վրայ կառուցուած է վանքս: Թէեւ հին վանքերէն մին էր, բայց ներկայիս մէջ մատուռի կամ ուխտատեղիի մը ձեւն առած է, եւ մնացած է նաեւ անտէր. Պալախոռի Հայ ժողովուրդը միայն երբեմն կ'դիմէ յուխտ եւ յերկրպագութիւն: Այս վանքի մասին Կարնոյ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ պահուած եւ ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն կ'քաղենք հետեւեալը. ¬ «...Արդ, գրեցաւ Ս. Աւետարանս, ի թուականութեանս [Հայոց] ՋԺ. (1461). ի գաւառս Խաղտեաց, ի Սուրբ Անապատս որ Սուրբ Գէորգ կոչի, որ Պալախորու վանք ասի... զսուտանուն գրչաւորս Կարապետս [զուսուցիչն իմ]...» (տե՛ս Նոտարք, երես 206)[130]*:

## 76/8. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔ ՔԱԼԱՎՐԱԿԻ[131]*

Բաբերդէն երեք ժամու չափ հեռի, դէպ ի հարաւային արեւմտեան կողմ, Քալավրակ անուն գիւղին առջեւը տափարակ տեղւոյ մը վրայ կառուցուած է: Ըստ աւանդութեան, հին ժամանակներու մէջ հռչակաւոր եւ անուանի վանք մ'էր, եւ կ'կոչուէր նաեւ «Ուրբաթու վանք Ս. Խաչ»: Ի վաղուց անտէր ու ամայի, եւ անցած է ի չարս չաբաթացեալ Հայ Վանօրէից: Այսու ամենայնիւ Քալավրակ գիւղի Հայ բնակիչք ամէն տարի Ս. Զատկի օրերը չեն մոռնար իրենց այս նուիրական վայրը, եւ կ'դիմեն յուխտ, նուիրելու համար իրենց մոմն ու խունկը:

## 77/9. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ ՔԱՂԱՎՐԱԿԻ[132*]

*Յիշեալ Քաղավրակ գիւղի հարաւային կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ, հովտի մը մէջ կառուցուած է: Այս վանքն ալ անցած է ի շարս ամայացեալ Հայ Վանորէից, թէեւ հին ժամանակներու մէջ ունեցած ըլլայ իր փայլուն ու պայծառ դիրքը: Աւանդութեամբ կ'ըսուի թէ այս վանքի աննշմարելի հիմերուն մէկ խորշը շիշ մը սուրբ իւղ թաղուած կամ պահուած է: Իր սեփական շրջակայ հողերն անցած է գիւղացիներուն ձեռքը[133*]:*

## 78/10. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ ՄԻԼԷՋԿԻԻ[134*]

*Բաբերդէն երեք ժամ հեռի, դէպ ի հիւսիսային կողմ, Միլէզկի կամ Մալասայ գիւղին հարաւային կողմը, մէկ ժամ հեռաւորութեամբ ձորի մը մէջ եղած բլրակի մը վրայ շինուած է վանքը, որ հին վանքերէն մին էր եւ կը կոչուէր նաեւ «Եօթն Խոտաճարակաց վանք»: Վանքն այժմ անշուք մատուռի մը ձեւն առած է, եւ եթէ ստոյգ է՝ կ'ըսուի թէ մատակարարութիւնն ալ Մալաթիոյ Թաղական Խորհրդոյ ձեռքն է: Ուխտաւորութեան օրն է Վարդավառի տօնին: Բարեպաշտ ժողովուրդը նոյն օրեր կ'դիմէ ուխտի համար, եւ կ'վայելէ տեղւոյն հովանաւոր եւ հրապուրիչ տեսարանն եւ քաղցրահամ ջուրը: Վանքին մօտերը բաւական ուխտատեղիներ կան եղեր զանազան սուրբերու անուամբ:*

## 79/11. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ ԵԱՂՈՒՊԻ[135*]

*Բաբերդէն չորս ժամ հեռի, դէպ ի հիւսիսային կողմ, Սէյտի Եաղուպի գիւղին մօտիկը՝ բաւական բարձրկէկ բլուրի մը վրայ կառուցուած է, թէեւ ի վաղուց անցած է ի շարս ամայացեալ Հայ Վանորէից, բայց իր այժմեայ կիսափուլ վիճակովն իսկ պատկառելի է, եւ իբրեւ ուխտատեղի մեծ յարգ ու պատիւ ունի շրջակայ գիւղերու բնակիչներէն:*

## 80/12. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ[136*]

*Բաբերդէն երկու ժամու չափ հեռի, Վարզահան կամ Իւչ Քիլիսէ անուն գիւղի հարաւային կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ բլուրի մը վրայ շինուած, բայց ի վաղուց անցած է եղեր ամայի ու աւերակ վանքերու շարքին մէջ[137*]:*

## 81/13. Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ[138*]

*Բաբերդի Խուփս անուն գիւղի յենարան Վանքեր ըսուած լեռնա-*

դաշտին վրայ շինուած: Ի վաղուց ամայի, եւ սենեակներն ալ փլած, ու վանք ըլլալէ գրէթէ դադրած է: Իր սեփական հողերը՝ զորս լսած ենք թէ՝ 70 կտորի չափ կան եղեր, մեծաւ մասամբ անջրդի ու անբեր, եւ միայն 15 կտորը ջրարբի, եւ տուն մ՚ալ ունի եղեր ի Բաբերդ, որք այժմ անցած են կ՚ըսուի Խուփս գիւղի ազգայիններու ձեռքը[139*]:

## 82/14. Ս. ՓՐԿՉԻ ՎԱՆՔ[140*]

Միեւնոյն Խուփս անուանի գիւղի եօթն բլուրներէն միոյն վրայ շինուած, եւ է նոր հաստատութիւն մը: Գիւղէն մինչեւ վանքն եղած ճանապարհը քարոտ է եւ ունի նեղ ճամբաներ: Վանքի առջեւէն գետակ մը կ՚անցնի եւ ունի վճիտ ջուր մը, չորս կողմերն ալ կանանչազարդ արտեր են բաւական հրապուրիչ: Մէկ կողմի ընդարձակ հողը գերեզմանատուն ըրած են, ուր կայ ինքնաբոյս շատ մը ալոճի ծառեր, գիւղացիք աւանդաբար, իբրեւ մեղք համարելով, բնաւ ձեռք չեն դպցներ այդ ծառերուն, միայն չորցած ճիւղերը կ՚կտրեն՝ երբ մատաղ եփելու ըլլան:

## 83/15. Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ

Բաբերդէն կէս ժամ հեռի, դէպ ի արեւելեան հարաւ Քիլխէ տէրէսի ըսուած ձորի մը մէջ շինուած է: Վանքս ժամանակին մատուռ մ՚է եղեր Ս. Օհան անուամբ, վերջէն քանի մը սենեակներ եւն. աւելցուեր, եւ ապա Բաբերդցի Կարապետ Վարդապետի ձեռօք աւելի շէննալով այժմ բոլորովին վանքի ձեւ առած է. ունի եղեր նաեւ բաւական հողային հասոյթներ:

## 84/16. ՎԱՂԾԸՆԻ ՎԱՆՔ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ[141*]

Բաբերդէն հինգ ժամու չափ հեռի, դէպ ի արեւմտեան կողմ, Օձտեղ անուն գիւղի հիւսիսային հովիտներէն միոյն կողին վրայ կառուցուած է վանքս, բայց ի վաղուց աւերակ ու ամայացեալ, միայն եկեղեցւոյ կիսափուլ կամարները կ՚երեւին: Վանքի քովերը շատ ջրաւէտ ու դալարաբոյս, եւ գեղեցիկ դիրք մ՚ալ ունի եղեր:

Տասնեւեօթներորդ դարու սկիզբները գրուած գրչագիր Աստուածաշունչի մը յիշատակարանին մէջ կ՚կարդանք այս վանքի մասին թէ՝ ¬ «...Թվին ՌԾԹ. (1610) ես Սրապիոն Վարդապետ Օձտեղցի, որ բազում տենչանս ունելով առ այս... գդորա ճապաղութիւնն [զտարաճապաղութիւն] ժողովեցի... եւ ետու կազմել զսա, յիշատակ... հօրն իմոյ՝ Յովհաննէսին եւ մօրն իմոյ՝ Խէրխաթունին, եւ հօրեղբօրն իմոյ՝ Մակար Եպիսկոպոսին... [Յիշատակ է ի վանքն Վահանաշէնու], ի դուռն Ս. Ստե-

*փանոսի: [Որ եւ ես խըխայթեալ մեղօք Սրապիոն վարդապետս, որ] այս վանքս, որ աւերակ եւ անմարդաբնակ էր դարձեր. բու աւերակի եղեալ եւ բազում պարտուց ներքոյ գրաւեալ՝ թէ՛ զգեստ, թէ՛ Աստուածաշունչ, թէ՛ Աւետարան, թէ՛ Ճաշոց, թէ՛ Յայսմաւուրք, թէ՛ Սաղմոսարան, թէ՛ Հայր Մաշտոց, թէ՛ Գանձտետր, թէ՛ Շարակնոց, թէ՛ արտ եւ թէ՛ ջաղաց, զամենեսեան պատանդ գոլով [ի ձեռս այլասեռից գերի գոլով], վերստին ազատեցի եւ զվանքն վերստին նորոգեցի մինչեւ ցերիս հազարաց Մաոչիլս ծախսելով [եւ զգրաւականն ազատելով, եւ վերստին ի վանքն ածելով մեզ յիշատակ]»[142]*: 1518 Թուականներուն վանքի Առաջնորդն է եղեր Աստուածատուր Վարդապետ, եւ միաբանները՝ Մաղաքիա, Աստուածատուր, Խաչատուր, Յուսիկ, Սարգիս, Առաքել, Սիմէոն Վարդապետներ. եւ 1610ին ալ, Առաջնորդը՝ Սրապիոն Վարդապետ, եւ միաբանները՝ Ալեքսիանոս, Անտոն, Կիրակոս, Պետրոս, Գրիգոր, Նահապետ, Գասպար, Թորոս եւ Խաչատուր Վարդապետներ[143]*:*

## 85/17. Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ ՎԱՐԻՋՆԱՅԻ[144]*

## 86/18. Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՎԱՆՔ ԽԱԽՕՅԻ[145]*

## 87/19. ՀԱԻՈԻՑ ՎԱՆՔ[146]*

## 88/20. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[147]*

## 89/21. Ս. ՄԱՐՏԻՐՈՍԻ ՎԱՆՔ ԲԼՈԻՐԻ[148]*

## 90/22. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔ ԲԼՈԻՐԻ[149]*

## 91/23. Ս. ՎԱՌՎԱՌԻ ՎԱՆՔ ԲԼՈԻՐԻ[150]*

*Այս վերջին եօթն վանքերու [17-23] անունները միայն արձանագրած ունինք մենք, բայց չորս հատին վրայ մասնաւոր տեղեկութիւններ չկրցինք ստանալ. միմիայն Բլուրի Ս. Մարտիրոս եւ Ս. Եղիայի վանքերը Բաբերդէն վեց ժամու չափ հեռի, դէպի արեւմտեան կողմ, Բլուր անուն գիւղի հարաւային բարձր լեռներու սարերուն վրայ կառուցուած, եւ Ս. Վառվառի վանքն ալ՝ Ս. Եղիայ վանքին ստորոտը կը գտնուի ե-*

*ղեր: Կ՚յիշատակուին նաեւ Խաչաքեար լեռի եւ Վարշամակ կամ Վարսամպիկ անուն երկու վանքեր ալ:*

*Բաբերդի կողմերն աւելի կամ նուազ հեռաւորութեամբ վայրերու մէջ կ՚յիշատակուին նաեւ բաւականին ուխտատեղիներ, որոցմէ մեզի ծանօթ են միայն Սարաճըրգ գիւղի Ս. Սարգիսը եւ Բլրակ գիւղի՝ Ս. Կիւրակէն, նաեւ Վարզահան գիւղի Ս. Աստուածածինը, Ս. Սարգիս եւ Ս. Գէորգ աւերակ եկեղեցիները կամ ուխտատեղիները, որոցմէ առաջնոյն որմնապատին մէկ քարին վրայ գրուած է. «ԹՎԻՆ ՉԼԲ. [1283 Թ.]», երկրորդին սեան վրայ՝ «ԹՎԻՆ ՉՂԵ. [1346 Թ.]» եւ երրորդին ներքին դրան սեմին վրայ՝ «Ս. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ... ՖՌԱՆԿԻՆ, ԹՎԻՆ ՉՁԹ. [1340 Թ.]»[151]*:*

# ԺԴ. ՔՂԻԻ ԵՒ ԽՆՈՒՍԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1901, թիւ 1521, 27/Թ-10/Ժ., էջ 1*

## 92/1. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ ԽՕՍՆԱԿԻ[152]*

*Քղիի Խօսնակ անուն գաւառակին մէջ է. որուն կ՚ըսուի նաեւ Խօսնակու Ս. Կիրակոս, հին վանքերէն մին էր եւ նշանաւոր. այժմեայ վիճակն աննախանձելի, իր ներկայ դիրքին եւ ներքին մատակարարութեան վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք, միայն թէ ունի եղեր սեփական 12 կտոր հողային մշակելի արտեր հարիւր արտավարի չափ, նաեւ ջաղացք մը, եւ բաւական ընդարձակութեամբ մարգագետին մը: Արտորայքն ամբողջովին ջրարբի, եւ բաւական արդիւնաւէտ են եղեր, եթէ մշակուին (Բիւզ. 1900, թ. 1008, էջ 1):*

## 93/2. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ԽԼՊԱՇԻ[153]*

*Քղիի Խորձէն գիւղին մէջ: Այս Վանքին կ՚ըսուի նաեւ «Հանգստանւոյ Ս. Կարապետ», «Ապառու Ս. Կարապետ», կամ ինչպէս նշանակեցինք՝ «Խլպաշի Ս. Կարապետի Վանք»: Ունի եղեր 10 կտոր արտ՝ 50 արտավարի չափ, եւ անտառ մը նաեւ բաւական ընդարձակ: Այս Վանքի մասին հին ձեռագիրներու մէջ պատահած ենք հետեւեալ երկու յիշատակարաններուն. Առաջինը՝ «Փառք... Արդ, գրեցաւ Ս. Աւետարանս յերկիրն Կեղոյ, ի Վանքն որ կոչի Խլպաշի, ընդ հովանեաւ Ս. Կարապետին, ձեռամբ... Ոնոփրիոս կրօնաւորի... ի թվին [Հայոց] ՋԵ. (1456)» (տե՛ս «Նօտարք», եր. 183 [*վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 77*]):*

*Երկրորդը. – «[...Յամս հայկազեան թուաբերութեան տումարի, յորում էր թիւ համարոյ թուականին թորգոմեան տոհմին ՋԺԳ...] Ի թուակ. ... ՋԺԳ. (1464) աւարտագործեալ եղեւ Սուրբ եւ կենսատու Աւետարանս, ... զոր իմ անարժանի եւ անպիտան եւ սուտանունՍտեփաննոս Եպիսկոպոսիս, ...եւ գրեցի զսա իմ անիմաստ եւ տկար մտաւքս, ի գաւառիս Խորձենոյ, ի վանս որ կոչի Խլպաշի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետի: ...[Գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՋԺԳ. (1464), ձեռամբ եւ անարհեստ եւ վատթար գրչի Ստեփաննոս եպիսկոպոսի, ի գաւառիս Խորձենոյ, ի վանս Խլպաշի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս] եւ ի բազմահաւաք սուրբ կրաւնաւորացս... յիշեցէք զհոգեւոր եղբայրն իմ զհանգուցեալ... Աւնոփրիոսն, եւ զգործակալքս սոցա՝ զԹորոսն, զԴաւիթն, զՅակոբն, եւ զծնողսն իմ [յիշեսցիք ի մաքրա-*

փայլ յաղաւթս ձեր] զԴաւիթ, զՆերսէսն, զՔարամն, զՀատիւն, զՅովանէսն, զՊետրոսն, [զՏաւնականն], զՏաւնապետն, եւ զՄեծպարոնն, որ ստացան զսա ի հալալ արդեանց իւրեանց... Յիշեսջիք եւ զմարմառի տուողն զՓիլիպպոսն, որ զԹուղթն ի վերայ կոկեցի...» (տե՛ս «Թորոս Աղբար», եր. 341 [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 221-2]):

Այս յիշատակարանին մէջ կ՚յիշուին նաեւ այս վանքի այն ժամանակուայ (1464ին) միաբան կրօնաւորներու անունները, որք են՝ Ստեփաննոս Եպիսկոպոս, կ՚թուի վանահայր վանքին, եւ Տ. Յովհաննէս, Տ. Նիկողոս, Տ. Կիրակոս, Տ. Մելքիսեդ, Տ. Յովհաննէս, Տ. Մաղաքիա, Տ. Սեմաւոն, Տ. Դաւիթ, Տ. Աստուածատուր, Տ. Կարապետ վարդապետ ու աբեղաներ[154]*:

## 94/3. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ

Քղիի մօտերն է թէեւ, եւ կ՚ըսուի նաեւ «Գետահայեաց Ս. Աստուածածնի Վանք», սակայն մեք այս վանքի տեղւոյն, դիրքին եւ մատակարարութեան մասին ալ ծանօթութիւն մը չկրցինք ստանալ մինչեւ ցայժմ[155]*:

## 95/4. Ս. ՓՐԿԻՉ ՎԱՆՔ[156]*

Այս վանքն ալ Քղիի մօտերն է, եւ Բաբերդի Ս. Փրկիչ անուն վանքէն զատ վանք մ՚է, դիրքով շատ փոքր, եւ կ՚ըսուի «Փոքրիկ Ս. Փրկիչի Վանք»:

## 96/5. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[157]*

Կ՚նշանակուի Քղիի մէջ (տե՛ս՝ «Նոր Մատենագրութիւն», տպգ. Վենետիկ, 1878, երես 225): Բայց այս վանքի եւ տեղւոյն վրայ որ եւ է տեղեկութիւն եւ ծանօթութիւն մը չունին նոյն իսկ տեղացիք ալ[1]:

## 97/6. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ՄԺՆԿԵՐՏԻ[158]*

Խնուսի մօտերն է, կ՚թուի ի վաղուց ամայացեալ: Վանքի տեղւոյն եւ դիրքին վրայ մասնաւոր ծանօթութիւն չունինք մեք:

---

[1] Քղիի մօտ եւ շրջակաները կան նաեւ բաւական ուխտատեղիներ, որոց մէջ ամէնէն նշանաւորն է, ինչպէս կ՚ըսուի, յանուն Ս. Լուսաւորչայ եղած ուխտատեղին, որ կ՚գտնուի Քղիի հիւսիսային կողմը Քարականձոր ըսուած սքանչելի ճեմելավայրին վարի կողմը՝ բլրակի մը վրայ, մատուռ եւ ուխտատեղի մը, որ հին է եւ նուիրական:

# ԺԵ. ԲԱՍԵՆԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բէ-ղ., 1901, Բէ-1521, 27/Թ-10/Ժ.., էջ 1*

## 98/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[159*]

*Բասենէն մէկ ու կէս, կամ երկու ժամու չափ հեռի, Հասան գալէ լերան գրէթէ ստորոտը շինուած է այս վանքը յանուն Ս. Աստուածածնի, եւ կը կոչուի նաեւ «Հասան գալէի Ս. Աստուածածնի Վանք». ունի գեղեցիկ դիրք մը, զովասուն օդ, եւ հիանալի տեսարան մը: Տաճարն ալ գմբեթաւոր է: Վանքն ունի, ինչպէս կ՚իմանանք, իր սեփական ընդարձակ վարելահողերը:*

*Կ՚աւանդուի թէ այս վանքին հիմնադիրն ու կառուցանողն եղած է ԺԱ. դարուն մէջ Գրիգոր Մագիստրոս, որուն անուամբ կոչուած է նաեւ երբեմն «Մագիստրոսի Վանք»: Նախնի ժամանակներուն այս վանքին մէջ երկու կամ երեք անգամ Ս. Միւռոնի օրհնութիւն կատարուած է, կ՚ըսուի, որ այն ժամանակ կանոնաւոր եւ նշանաւոր միաբանութիւն մ՚ունէր: Գրիգոր Մագիստրոսի խնկելի ու նուիրական ոսկերոտիքը թաղուած է այս վանքին մէջ, ինչպէս նաեւ երկու նշանաւոր կաթողիկոսներու գերեզմանները: Վանքէն քառորդ ժամ հեռի ապառաժ քարէ մը բաւական քանակութեամբ թթու ջուր մը դուրս կ՚բղխէ, որմէ տեղացիք երբեմն կ՚խմեն, որովհետեւ ջուրը հանքային է եւ կրնայ առողջարար ըլլալ, կ՚ըսեն[160*]:*

## 99/2. ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ[161*]

*Բասեն գաւառակին մէջ, թուի ի վաղուց ամայի եւ աւերակ, եւ անցած ի շարս ամայացեալ Հայ վանորէից: Այս վանքի մասին ԺԵ. դարուն մէջ (ՋԴ. 1455 թուականին) գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին հետեւեալ մասն առաջ կ՚բերենք այստեղ.*

*«...[Գրեցաւ տառս աստուածայինս եւ տիեզերաքարոզ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան աբեղայի Մովսէսի՝ փցուն եւ անարհեստ գրչի, ի թուականիս Հայոց ՋԴ. (1455)]: ...Արդ, եղեւ գրաւ Սուրբ Աւետարանիս ի [գաւառս] Բասենոյ, ի յերկնահանգէտ եւ ի գերահռչակ Սուրբ Ուխտս, որ կոչի Սպիտակ Վանք, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ կենսատու Սուրբ Նշանիս, ի Կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի, եւ յԵպիսկոպոսութեան Տէր Յուսկանն, եւ Հայրապետութիւն Մելքիսէթ քահանային... Այլ եւ կրկին աղաչեմ զձեզ մի՛ մեղադրէք մեզ, [զի ժամանակն դառն էր], եւ ոչ եղեւ իմ սրտով գիր, զի ի տնտե-*

*սատունն գրեցի՝ ի մէջ միաբանիցն, եւ այս է միաբանքս, Տէր Յովհաննէս, եւ երկու Առաքելն, եւ Կիրակոս, եւ ԺԲ. (12) սարկաւագ եւ գործաւոր: Եւ այնչափ ասել եւ [լսել] եւ կարդալ եւ պաշտել կայր, որ զամենն ոչ կարեմ գրել» (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1)*[162]*:

## 100/3. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔ[163]*

*Բասենի Ծար անուն գիւղի մօտերը կ’գտնուի եղեր: Այս վանքի վրայ մեր ունեցած ծանօթութիւնը միայն հետեւեալ յիշատակարանէն է, որ գրուած է ձեռագիր Աւետարանի մը մէջ, եւ որ սեփական է այժմ Զմշկածագի Ս. Աստուածածնի եկեղեցւոյն: «...Ձեռամբ Դաւիթ Եպսկ.ի եւ Գրիգոր սարկաւագի... Գրեցաւ երկիրն Բասենու, ի գիւղն որ կոչի Ծառո (Ծար): Ի թուականի... ՌԼԴ. (1585), ի թագաւորութեան Սուլթան Սէլիմի, ի Կաթողիկոսութեան Տէր Գրիգորին, Եպիսկոպոսութեան Ս. Խաչի վանիցս Ղազար Եպիսկոպոսին... ի ժամանակի... որ Ֆէրհատ փաշան բազում երկիր էառ... եւ շինեաց բազում նորահիմն բերդորայս...»:*

## 101/4. ԱԿՐԻԳՈՄԻ ՎԱՆՔ - Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԿՌԻԳՈՄՍ[164]*

*Բասեն գաւառին մէջ, այս վանքը կ’յիշատակուի միայն յԱսողկէ (հատոր Գ., գլուխ Թ.) – «Վանս Ակռեգոմ, որ այժմ Ս. Յովհաննէս, ի Բասեն գաւառի, առ ստորոտով լերինն Ծիրանեաց»: – Կ’թուի ի վաղուց ամայացեալ եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից: Ներկայիս մէջ մասնաւոր ծանօթութիւն մը չունինք մեք այս վանքի մասին (Բիւզ., 1900, թ. 1001, էջ 1):*

## 102/5. ԽՈՑՈՑ ՎԱՆՔ[165]*

*Բասեն, կամ Սասուն-Շատախի միջեւ ի վաղուց աւերակ եւ ամայի վանք: Այդ կողմի Խոցեվանց կամ Խոցավանց անուն հին գիւղի մը եկեղեցին, որ այս ալ շատոնց աւերակ է եղեր, կ’կոչուէր ժամանակին «Խոց Յիսուսի» եկեղեցի: Վանքի եւ գիւղի նոյն եկեղեցւոյն մէջ վերաբերութիւն մը կա՞յ արդեօք, չենք գիտեր*[1] *(Բիւզ., 1900, թ. 1083, էջ 1)* [166]*:

[1] Բասեն գաւառակին մէջ կ’յիշատակուին նաեւ «Պատրեվանք» եւ «Պատիժվան» անուն երկու վանքերու անուններ եւս, բայց մեք կ’կասկածինք եւ կ’կարծենք թէ ասոնք գուցէ գիւղերու անուններ են, քան թէ վանքերու:

# ԺԶ. ԵՐԶՆԿԱՅԻ, ՔԷՄԱԽԻ ԵՒ ԴԵՐՋԱՆԱՑ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1901, թիւ 1538, 17/Թ-30/Ժ., էջ 1*

## 103/1. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ. - Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԻ[167]*

*Երզնկայէն կէս ժամու չափ հեռի, արեւմտեան կողմ, Հայրապետ անուն գիւղի քովիկը շինուած է Ս. Լուսաւորչի վանքը, եւ այս պատճառաւ կ'կոչուի նաեւ՝ «Ս. Լուսաւորչի Վանք Հայրապետի»: Վանքի հիմնարկութիւնը՝ ժողովուրդը աւանդութեամբ կ'հանէ մինչեւ Չորրորդ դարուն, եւ ժամանակակից կ'համարէ Ս. Գրիգոր Լուսաւորչին, որովհետեւ կ'ըսեն՝ Լուսաւորիչը այս վանքի մէջ կ'գտնուէր, երբ ներկայացուցին իրեն Նիկիոյ Եկեղեցական Ժողովոյն հանգանակը, որուն վրայ աւելցուց «Իսկ մեք փառաւորեսցուք»ը:*

*Վանքը փոքրիկ, կամարակապ եւ անշուք մատուռ մ'ունի, որ աւելցուած կամ նորոգուած է 561 թուականին, եւ որ այժմ ալ կիսաւեր է: Հայրապետ գիւղացիք, որք 15-20 տուն Հայերէ կ'բաղկանան, վանքն իրենց եկեղեցի ըրած են, բայց ուխտաւորութեան օրն ալ պահած, որ է՝ Սուրբ Զատկին յաջորդող առաջին հինգշաբթին: Վանքն ունի այգի մը, պարտէզ մը, եւ ութսուն արտավարի չափ ալ մշակելի եւ ջրարբի արտորայք (Բիւզ., 1897-8, թ. 351, էջ 1, թ. 1060, էջ 1)[168]*:*

## 104/2. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ[169]*

*Երզնկայի արեւմտեան հարաւային կողմը, մէկուկէս ժամու չափ հեռի, Եփրատ գետէն անդին, Քիւրտ անուն գիւղին մօտ, Առիւծ անուն լերան կողին վրայ անտառուտ ձորի մը եզերքը շինուած է վանքը, որ նուիրուած է յանուն «Ս. Կիրակոսի՝ եւ մօր նորա Ս. Յուղիտայի». ո՛ր ժամանակին կառուցուած է ծանօթ չէ մեզի, բայց ԺԴ. դարէն սկսեալ մինչեւ վերջին ԺԹ. դարու սկիզբները ծաղկեալ վիճակ մը ունէր, իսկ այժմ, ինչպէս որ կ'լսենք, կ'կառավարուի միակ վանահայրով մը, եւ մէկ կամ երկու ծառաներով: Ունի բաւական սեփական մշակելի հող եւ կէս ժամու տարածութեամբ ալ անտառ մը: Վանուցս դիմացի Բըթնոյ անուն լերան կողը կ'տեսնուի նաեւ քարայր մը, որ մատուռ կ'անուանուի, եւ աւանդութեամբ կ'ըսուի թէ՝ յատուկ ճգնարանն եղած է Սրբոյն Կիրակոսի: Այս վանքի մասին մեր ձեռքը անցած յիշատակարաններէն մէկ քանին հարկ կ'համարենք դնել այստեղ:*

*Նախ, ԺԴ. դարուն գրչագրուած Աւետարանի մը՝ որ կ՚պահուի Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յիշատակարանին հետեւեալ կտորը. –*

*«...Եղեւ գրաւ գրութեան սորա ի Թուաբերութեան Աբեթեան գրոհի. ՉՀԴ. (1325) եւ ի գալստեան Կենարարին մերոյ ՌՅԺՁ. (1316), իսկ յելանելոյն նախնի ի մարդոյն յանուշակ վայրէն՝ ՑՉԼԸ. (6738)... Գրեցաւ տառս աստուածային... Աւետարանս ի վանս կոչեցեալ Սուրբ Կիրակոսի եւ մաւր նորին Յուղիդայ, ի հայրապետութեան տեառն Լեւովնի...» (տե՛ս Թորոս Աղբար, Բ., երես 295)[170]*:*

*Երկրորդ, ԺԴ. դարուն գրչագրուած Ժողովածոյ անուն մատեանի մը յիշատակարանէն. – «Յամի ՊԺԳ. (1364) յամսեանն Յունիս ԻԷ. (27) եղեւ գրաւ գրչութեան աղաւթական բանիցս [սրբոյն Ներսիսի Կլայեցոյն եւ Գրիգորի Սկեւռացոյն եւ Եփրեմի խորին Ասորոյ] ի գաւառս Եկեղեաց, յանապատս, որ կոչի Սուրբ Կիւրակոս, ընդ հովանեաւ սորին տաճարի, եւ կենսակիր աստուածընկալ Սուրբ Նշանիս. եւ այլ բազում նշխարաց, որ աստ կան եւ են բարեխաւս [վասն մեր ի Քրիստոս Աստուած ի տէր մեր, որ է աւրհնեալ]» (տե՛ս Տաշեան Ցուցակ, եր. 17)[171]*:*

*Երրորդ. ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Յայսմաւուրքի մը յիշատակարանէն. ¬ «Փառք... Եւ ետ զսա ի վանքն Նոր-գեղկայ, ի դուռն Սուրբ Կիրակոսի, յիշատակ անջինջ հոգւոյ իւրոյ... Այլ եւ աղաչեմ յիշել ի Տէր զերջանիկ վարդապետն, զքաղցրաձայն փիլիսոփայն զՅովհաննէս, զխարազանազգեաց ճգնաւորն, զառաջնորդ վանացս Սուրբ Կիրակոսի, որ կամակից եւ պատճառ եղեւ գրոցս գրելոյ, եւ յորդորող այսմ հոգեւոր գործոյ, եւ զՅովհաննէս աբեղայն՝ զեղբօրորդին իւր, եւ զՅովհաննէս աբեղայն զհոգեւոր սիրեցեալ որդին իւր... Դարձեալ, աղաչեմ յիշել ի Տէր զգրողք գրոցս զՄինաս Սարկաւագն, որ զառաջքն գրեաց ԺՁ. տետր. եւ զԵրեմիայ աբեղայն՝ որ Ժ. տետր գրեաց, եւ [զտէր Խաչատուր վար[դա]պետն, որ Ը. տետր գրեաց, եւ] զՅովհաննէս վարդապետն որ Ա. տետր գրեաց, եւ զիւր աշակերտքն՝ զԱստուածատուր աբեղայն, որ Զ. տետր գրեաց, եւ զԱւետիք աբեղայն, որ Դ. տետր գրեաց: Եւ ես՝ բազմամեղ եւ անիմաստ Սարգիս, որ զԴ. տետրակ՝ ի վերջք գրոցս գրեցի, եւ զցանկն ի յառաջքն, նաեւ զՄարկոս աբեղայն, որ Դ. տետր գրեաց, եւ Ներսէս աբեղայն, որ Ա. տետր գրեաց... Եւ զի գրեցաւ սա ի ՊՂԵ. (1446) ամի Թուականիս Աբեթականի... [խստացաւ սիրտ իշխանին Եզնկա քաղաքիս... եւ արար խորհուրդ ընդ դանուշմանսն, զի քակեսցեն զեկեղեցիսն՝ զքաղաքիս եւ զգեղորէիցն, նաեւ զվանորայս]: Արդ, մի՛ ոք իշխեսցէ հանել զՍուրբ մատեանս... [Իսկ եկեղեցպան եւ այլ աբեղայքդ] Սուրբ Կիրակոսի վանացդ՝ [խնամ տարէք գրոցս, զի ի ժամանակի փախստեան կամ խռովութեան զգիրքս ի քաղաք տարէ՛ք եւ պա-*

*հեցէ՛ք, եւ ի ժամանակի խաղաղութեան բերէ՛ք ի վանս եւ ընթերցէ՛ք, եւ մի՛ ախեալ եւ փակեալ պահէք, զի գիրք փակեալ կուռք են]...» (տե՛ս Նօտարք, եր. 148)։ 1446 թուականին այս Վանքի միաբանք կ՚յիշուին՝ Յովհաննէս Վարդապետ Առաջնորդ Վանուցն, եղբօրորդին Յովհաննէս, միւս Յովհաննէս, Երեմիա, Խաչատուր, Աստուածատուր, Աւետիք, Սարգիս, Մարկոս, Ներսէս Վարդապետ ու Աբեղաներ, եւ Մինաս Սարկաւագ (Բ-Դ․, 1900, Թ․ 1008, էջ 1)[172]*։*

## 105/3. ՔԱՌԱՍՈՒՆ ԽԱՉ[173]*

*Երզնկայի հիւսիսային կողմը, եւ դաշտը պարփակող լերան ստորոտը կ՚գտնուի «Քառասուն Խաչ» յորջորջուած այս վանքը, որուն փայլն ի վաղուց շիջած՝ եւ անցած է ամայի վանքերուն շարքին մէջ, եւ այժմ ալ կ՚կարծենք թէ եղած է ուխտատեղի (Բ-Դ․, 1897-8, Թ․ 351, էջ 1։ 1900, Թ․ 1049, էջ 1)։*

## 106/4. Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔ ՉԱԳՐՄԱՆԻ[174]*

*Երզնկայէն երկու ժամու չափ հեռի, հիւսիսակողմն, Չագրման գիւղի մօտիկը Քէչիչ տաղը կոչուած լերան մէկ կողին վրայ շինուած է վանքս։ Թէեւ նշանաւոր է օդի, ջուրի, եւ գեղեցիկ է դիրքի կողմանէ, բայց աննախանձելի է իր կիսաւեր վիճակով. այս վանքի մատակարարութիւնն յանձնուած էր ժամանակին աշխարհական վերակացուի մը։ Ունի այգի մը, եւ յիսուն արտավարի չափ մշակելի հող, բայց ի վաղուց դադրած է վանքի սեփականութիւն ըլլալէ։*

## 107/5. Ս. ՆԻԿՈՂՈՍԻ ՎԱՆՔ ԲԹԱՌԻՃԻ[175]*

*Երզնկայէն չորս ժամու չափ հեռի, դէպ ի արեւելեան հիւսիս, Բթառիճ անուն գիւղի մօտերը՝ բլուրի մը վրայ շինուած է Ս. Նիկողոսի վանքը որմնապատ, որ ունի հիանալի օդ եւ տեսարան։ Վանքը զուրկ է ամէն հնութենէ, բայց միայն տաճարն՝ որ գետնէն տասն ոտքի չափ բարձր կը գտնուի, հին եւ հաստատուն շէնք մ՚է։ Ուխտաւորաց յատուկ սենեակներն հազիւ երեք չորս հատ են, հատ մ՚ալ կոկիկ սենեակ մը կայ շրջապատին ներքեւ եղած մառանի մը վրան։ Ունի երկու այգի եւ մէկ պարտէզ, եւ 75 արտավարի չափ ջրարբի արտեր։ Վանահայրութիւնը սակէց առաջ քահանայի մը յանձնուած էր, այժմ ի՞նչպէս կ՚մատակարարուի՝ որոշ ծանօթութիւն մը կ՚պակսին մեզ։*

## 108/6. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[176*]

*Երզնկայէն երեք ու կէս ժամ հեռի, Ագրակ անուն գիւղին մօտերը Տաւրոս լերան Մէրճան պօղազի անուն կիրճին դիմացն եղած Մէրճան գետին եզերքը եւ բաց դաշտի մը վրայ կառուցուած է Ս. Լուսաւորիչ վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Ջարչարանաց վանք Լուսաւորչի», կամ «Տատասկի վանք Լուսաւորչի»: Որմզդական դից մեհենին տեղւոյն վրայ շինուած այս վանքն Երզնկայի վանքերուն ամէնէն պատմականն է, բաւական ընդարձակ եւ համակ որմնապատ (պարսպապատ): Օդն ու ջուրն առողջարար ու սառնահամ, դիրքն աննման, տեսարանն ակնապարար ու հիանալի, սեփական հողերով հարուստ. ունի շատ մը մշակելի արտորայք, պարտէզ եւ այգիներ: Վանքի տաճարն ալ՝ որ նուիրուած է յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, հին ճարտարարուեստական ոճով շինուած քարաշէն շէնք մ՚է: Բաց ի տաճարէն փոքրիկ մատուռ մ՚ալ կայ, որ կ՚կոչուի բանտ Ս. Լուսաւորչի: Ուխտաւորաց յատկացեալ սենեակները թէեւ բաւական կոկիկ եւ գեղեցիկ են, բայց հետզհետէ կ՚կորսնցնեն իրենց դիրքն եւ խարխուլ վիճակ մը կ՚ստանան: Վանքին ներքին մատակարարութիւնը բաւական ժամանակէ ի վեր քահանայի մը յանձնուած է: Նախանձելի վիճակ մը չունի վանքն՝ եւ ոչ ալ Միաբանութիւն: Հայերէն հին ձեռագիրներով ալ ճոխ է, կ՚ըսուի, եթէ երբեք լաւ կ՚պահպանուին:*

*Վանքին արեւելեան կողմը, քառորդ ժամ հեռաւորութեան մէջ կը գտնուի Անահտայ մեհենին տեղն, որ այժմ աւերակ է, որուն գիւղացւոց կողմէն կ՚ըսուի Քսմնգոր (Ս. Գրիգոր՞): Վանքի եւ Քսմնգորի միջավայրն եղած Մէրճան գետին արեւմտեան եզերքն է Երիզ աւանն, որ մինչեւ ցարդ կ՚յիշուի, եւ Մեղուը անուն գիւղն ալ շատ մօտիկ է վանքին (Բիւզ., 1900, Թ. 1060, էջ 1):*

# ԵՐԶՆԿԱՅԻ, ՔԸՄԱԽԻ ԵՒ ԴԵՐՋԱՆԱՅ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1902, թիւ 1614, 15-28/Ը., էջ 1*

## 109/7. ՓՈՐՁԱՎԱՆՔ[177]*

*Երզնկայի Ղուզիջան կամ Գուզուլջան անուն գիւղին մէջ շինուած էր Փորձավանք անուն այս վանքը, բայց ի վաղուց ամայացեալ, եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից (Բիւզ., 1900, թիւ 1083, էջ 1):*

## 110/8. ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ

*Երզնկա գաւառին մէջ կառուցեալ է եղեր այս վանքն ալ, զոր յիշատակած է Թովմա Մեծոփեցի եկեղեցական պատմագիրը: «Ի ՊՂ. (1441) թուականիս մեր, ազդեցութեամբ հոգւոյն սրբոյ, եւ հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ, միաբանութեամբ, եդին Կաթուղիկոս ի Ս. Էջմիածինն զսքանչելի եւ զփառաւոր այրն զՏէր Կիրակոս, Պատրիարգ եւ Հայրապետ Հայոց: Եւ այս են ժողովեալ Վարդապետք եւ Եպիսկոպոսք, Յովհաննէս վարժապետ եւ ուսուցիչ ի Սուրբ ուխտէն Հերմոնի վանուց, եւ աշակերտք իւր Դաւիթ վարդապետ [եւՍտեփաննոս վարդապետ ի տանէն Սիւնեաց...] եւն...»[178]*: Այս վանքի տեղւոյն ու դիրքի մասին կ'կարծենք թէ գուցէ տեղացիք ալ այժմ ծանօթութիւն մը չունին (Բիւզ., 1897-98, 351, էջ 1: 1900, թ. 1103, էջ 1):*

## 111/9. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[179]*

*Կ'ըսուի նաեւ «Միաւորի Ս. Կարապետի» (Եալընըզ պաղ) վանք, որ Երզնկայէն գրէթէ երկու ժամ հեռի, արեւմտեան հիւսիս, Եալընըզ պաղ անուն գիւղի մօտ, Սուբնգոր (= Ս. Գրիգոր) լերան շղթաներէն Աղտաղի ստորոտը կառուցեալ է շրջապարիսպով մը, որ մինչեւ ցայժմ կ'մնայ հաստատ:*

*Այս վանքի հիմնարկութեան ժամանակի մասին, ժողովրդական աւանդութիւնը կ'ըսէ, թէ երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիայէն Ս. Կարապետի մասունքը կ'բերէր ջորիով, կ'հասնի Երզնկայի Ջուխտակ Հայրապետի վանքին մօտն ի Թիլն աւան, ուր ժողովրդեան հետ խօսքի բռնուած պահուն, ջորին վրայի մասունքով կ'կորսուի: Անմիջապէս փնտռելու կ'ելնեն եւ կը գտնեն այս վանքին տեղւոյն վրայ մինաւոր*

պառկած: Այս դէպքին վրայ, Լուսաւորիչը կ'հրամայէ շինել այս վանքը, եւ կ'անուանէ զայն Միաւոր Ս. Կարապետ: Սրբոյն մասունքէն կտոր մ'ալ հոն կ'դնէ, ուր կ'մնայ, կ'ըսեն, մինչեւ ցարդ:

Վանքի Տաճարը փոքր եւ քարուկիր շինուած պարզ շէնք մ'է, առանց թուականի եւ արձանագրութեան: Վանքի միւս շէնքերն ալ խարխուլ վիճակ մը ունին: Դուրսն ունի նաեւ սեփական պարտէզ մը եւ 12 արտավարի չափ ալ մշակելի հողեր: Վանուց մատակարարութիւնն եւ արտօրէից մշակութիւնը ժամանակին աշխարհական հոգաբարձուի մը յանձնուած էր, իսկ այժմ ի՛նչպէս կ'մատակարարուի՝ որոշ տեղեկութիւն մը չունինք[180*]:

## 112/10. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[181*]

Երզնկայի արեւմտեան կողմն եւ երկու ժամու չափ հեռի, Սեպուհ լերան ստորոտը լեռնադաշտի մը վրայ, Շոխայ անուն թրքաբնակ գիւղին մօտերը շինուած է Ս. Աստուածածնի վանքը, որուն կ'ըսուի նաեւ Շոխայ վանք: Կ'կարծուի թէ գիւղին Շոխայ (=Շողայ) անունէն առնելով, այս Ս. Աստուածածնի վանքին ըսուած է «Շողակաթի Ս. Աստուածածին», որուն հիմնարկութիւնը կ'տրուի Թադէոս Առաքեալին, եւ ապա նորոգուած է, կ'ըսուի, Մեծն Ներսէսէ:

Վանքը թէեւ պարսպապատ, բայց պարիսպը ցած ու խարխլած է, եւ ներքին շէնքերն ալ հին ու անբնակելի վիճակ մը ստացած են: Տաճարը թէեւ քարուկիր ու կամարակապ է, բայց անշուք: 1684 թուականին նորոգութիւն տեսած է ի ձեռն Եւդոկիացի Աւետիք Պատրիարքի: Վանքին շուրջն ընդարձակ ու զուարճալի վայրեր կան, այգիներ, պարտէզներ, դալարագեղ սարեր ու ձորեր, մարգագետիններ: Հարաւային կողմն ալ, ձորէն անդին, բլուրի մը կողին վրայ, լուսաղբիւր մը, որ հին վիմափոր սենեակներ ալ ունի, որք վանքին սեփականութիւնն են: Ունի նաեւ իր մօտերը սեփական այգի մը, եւ յիսուն արտավարի չափ ալ մշակելի հող (Բիւզ․, 1900, Թ․ 1103, էջ 1):

## 113/11. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[182*]

Երզնկայէն նոյնպէս երկու ժամ հեռի, Ջախըրման անուն գիւղի քովերը շինուած է: Այս վանքին համար ալ կը կարծուի թէ գիւղին (Ջախըրման) անունէն առնելով ըսուած է Ջարխափան Ս. Աստուածածնի Վանք: Կ'տեղեկանանք, թէ այժմ վանքն ո՛չ փայլ ունի, ոչ ալ նախանձելի վիճակ մը. հետեւաբար կրնանք այս ալ դնել շաբաթացեալ վանքերու շարքին մէջ:

## 114/12. ԳԱՌՆԻԿ ԺԳՆԱՒՈՐԻ ՎԱՆՔ[183*]

*Երզնկայի հարաւ-արեւմտեան կողմը, մէկ ու կէս ժամ հեռի Տաճրակ եւ Ծրղնի անուն գիւղերէն վեր եղած լերան մը ստորոտը կ'գտնուի: Այժմ ուխտատեղի եղած է: ...զարդիս ալ կարծեմ մենաստան է, բայց ո՛չ մեր սեփական (Բիւզ., 1897-98, 351, էջ 1):*

## 115/13. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ[184*]

*Երզնկայի վերոյիշեալ Տաճրակ անուն գիւղէն կէս ժամու չափ հեռի, Պրաստիկ անուն գիւղի հարաւ-արեւմտեան կողմն է, եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանքերու, թէեւ ասկէց 40 տարի առաջ վանքին եւ իր մէջի քարաշէն ու կամարակապ տաճարին կանգուն ըլլալը գիտցողներ կան: Սեփական արտօրայքն եւ վանքին կից ընդարձակ գերեզմանավայրն անցած է այժմ յիշեալ Պրաստիկ գիւղացիներուն ձեռքը (Բիւզ., 1897-98, 351, էջ 1):*

## 116/14. ՏԻՐԱԾԷՆԻ ՎԱՆՔ[185*]

*Երզնկայի հարաւակողմն, երկու ժամու չափ հեռի, Մնձուր լերան մասն եղած բլուրի մը վրայ շինուած է չորրորդ դարուն մէջ, որ այն ժամանակի նշանաւոր վանքերէն մին էր, այժմ ալ Երզնկայի վանքերուն մէջ մեծագոյն եւ նշանաւորներէն մին է: Շրջապատը շինուած է ԺԲ. դարուն մէջ, որ կ'մնայ ցարդ: Ինչպէս Շողակաթի Ս. Աստուածածնի վանքը, նոյնպէս այս վանքն ալ նորոգած է 1684 թուականին Եւդոկիացի Աւետիք Պատրիարքն, երբ դեռ Սեպուհ լերան Կաբոսի՝ այն է Ս. Յակոբայ վանքին Առաջնորդն էր: Վանքի Տաճարը բաւական գեղեցիկ ու պայծառ է եւ ունի սիրուն Կաթողիկէ մ'ալ[186*]:*

## 117/15. ԽԱՉԿԱՎԱՆՔ[187*]

*Երզնկայի հարաւային կողմը բլրի մը վրայ շինուած է համակ շրջապատով: Կոչուած է երբեմն նաեւ Տիրաշէնի Վանք: ՉԻԱ. (1272) թուականին Սարգիս Արքեպիսկոպոսի օրով, Թիլն աւանի Ջուխտակ Հայրապետի վանքին մէջ կ'գտնուէին Մեծն Ներսէսի տապանն ու նշխարները, որք ժամանակ մը վերջը փոխադրուելով այս վանքին մէջ, նորաշէն յատուկ դամբարանի մը մէջ կ'ամփոփուին, եւ այս պատճառաւ ալ վանքը կ'կոչուի Ներսէս Հայրապետի վանք, որ գեղեցկաշէն մատուռ մը ունի Կաթողիկէիւ, ժամատուն եւ յարակից փոքր եկեղեցի մը, այս վերջնոյն հարաւային պատին կից կ'գտնուի Ներսէս Հայրապե-*

*տի գերեզմանն յատուկ արձանագրութեամբ։ Վանքն ունի պարտէզ մը, այգի մը եւ 50 արտավարի չափ ալ մշակելի հող։*

*Սոյն Խաչկավանքը, վերեւ յիշուած Տիրաշէնի Վանքին հետ շփոթողներ եւ երկուքը մէկ վանք նշանակողներ ալ կան, բայց մեք ինքնին համոզում մը գոյացուցինք թէ ասոնք առանձին առանձին վանքեր պիտի ըլլան, այսու ամենայնիւ կ՚սպասենք դարձեալ վանասէր-բանասէրներու ստոյգ եւ ճշգրիտ տեղեկութիւններուն։*

# ԺԹ. ԵՐԶՆԿԱՅԻ, ՔԸՄԱԽԻ ԵՒ ԴԵՐՋԱՆԱՑ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1902, թիւ 1644, 19/Բ-4/Գ., էջ 1*

## 118/16. ԹԻԼԱՅ ՎԱՆՔ[188]*

*Երզնկայէն գրէթէ երեք ժամ հեռաւորութիւնով, Կաբոսի Սուրբ Յակոբայ վանքն երթալու ճանապարհին վրայ: Թիլու կամ Գայլ գետակին աջակողմեան եզերքն եւ անկէց քառորդ ժամ հեռի, գեղեցիկ եւ բարձրադիր դաշտի մը վրայ կառուցուած է «Թիլայ վանքը», որ նշանաւոր վանքերէն մին էր երբեմն: Կ՚աւանդուի թէ նախկին ժամանակներու մէջ, այս վանքի տեղւոյն վրայ կանգնուած էր Աթենասայ պատկերը, եւ յետոյ այստեղ թաղուեցան Արիստակէս եւ Մեծն Ներսէս, Հայոց երկու մեծ Հայրապետները, որոց գերեզմաններուն վրայ հոյակապ ու գեղեցիկ եկեղեցի մ՚ալ կառուցուելով, վանքի դիրքն ստացաւ եւ կոչուեցաւ «Ջուխդակ Ս. Հայրապետի վանք» կամ Ս. Ներսէսի վանք: Հետզհետէ պատահած մեծ երկրաշարժի եւն երեսէն տասնեւերկրորդ դարուն մէջ վանքս աւերեցաւ եւ փլատակներու կոյտ մը եղաւ, բայց ՉԻԱ. (1272) թուականին Յակոբ Կաթողիկոսի օրովը, վանուց փլատակներու տակէն Մեծն Ներսէսի գերեզմանն ու նուիրական նշխարները գտնուելով փոխադրուեցան «Խաչկավանք», ուր պատշաճապէս տեղաւորուեցան յատուկ դամբարանի մը մէջ, եւ այդ թուականէն վերջն՝ այս վանքի անունով՝ յիշեալ «Խաչկավանք»ը կոչուեցաւ «Ներսէս Հայրապետի վանք» ինչպէս ըսած ենք իր տեղն ալ:*

*Մեր այս ըսածներէն ինչպէս կը հասկցուի, «Թիլայ վանքն» ի վաղուց անցած է ի չարս դադարեալ եւ չաբաթացեալ Հայ վանորէից (Բիւզ., 1897-98, 351, էջ 1):*

## 119/17. ԿԱԲՈՍԻ ՎԱՆՔ[189]*

*Երզնկայի արեւմտեան կողմն երեք կամ չորս ժամու չափ հեռի, Սեպուհ լերան ստորոտը, չորս կողմէն լեռներով շրջապատուած փոքրիկ գետակի մը եզերքը կառուցուած է «Կաբոսի վանք»ը, քարաշէն ու հաստատ շրջապարիսպով: Ժամանակին հռչակաւոր եւ շատ շէն վանք մ՚էր, ունէր մեծ թուով միաբանութիւն եւ գրական կարեւոր դիրք մը բռնած էր Երզնկայի վաղեմի վանքերուն մէջ:*

*Վանքին եւ տեղւոյն դիրքը գեղեցիկ է եւ ակնապարար, օդն հիանալի եւ առողջարար, ջուրը պաղ ու վճիտ: Ունի երկու տաճարներ քարաշէն եւ գեղեցկակերտ, մին նուիրուած է յանուն Ս. Յակոբայ, եւ այս պատճառաւ ալ կ՚կոչուի «Կաբոսի վանք Ս. Յակոբայ». միւսը՝ յանուն Ս. Սիօնի: Երկուքն ալ գեղեցիկ ու վայելուչ կաթողիկէ: Յանուն Ս. Յակոբայ եկեղեցիին մէջ կ՚գտնուի փոս մը ջրհորի ձեւով, ուր, ինչպէս կ՚աւանդեն, կը ճգնէ եղեր Ս. Յակոբ: Ներքին միւս շէնքերուն համար կ՚ըսուի թէ աննշան են: Վանքը 1416 թուականին պատահած մեծ հրդեհէ մը գրեթէ բոլորովին աւերեցաւ, բայց քիչ ժամանակ վերջն հետզհետէ նորոգուելով, վերստին հին դիրքն ստացաւ: 1684 թուականին ալ մեծ նորոգութիւն մը տեսաւ ի ձեռն Եւդոկիացի Աւետիք Պատրիարքին, որ ժամանակ դեռ վարդապետ եւ վանահայր Առաջնորդն էր վանուցս, բայց վերջերս հետզհետէ անտէր մնացած ըլլալով, ներկայիս մէջ ալ գրեթէ անխնամ եւ ամայացեալ է:*

*Վանքը թէեւ ունի իր սեփական արտատեղիներ, հողային 40 արտավարի չափ մշակելի հողեր, բայց ինչպէս կը մատակարարուին ասոնք՝ չենք գիտեր:*

*Այս վանքն այժմ կ՚անուանեն Կայիփոսի (իբր թէ = Կայ ի փոսի) վանք. իր տեղւոյն դիրքէն առնելով: «Փոսին մէջ» նշանակութեամբ սոյն վանքին այսպէս անուանափոխութեան մեք համաձայն չենք, ուրիշ նշանակութիւն պէտք է ունենայ Գաբոսի – Կաբոսի – Կապոսի, զոր մեք ալ կ՚անգիտանանք առ այժմ: Մեր ձեռքին տակ եղած յիշատակարանները, որոց մէջ անուան յիշատակութիւնները կան, յարմար կը դատենք դնել այստեղ:*

*Ա. Ձեռագիր Շարակնոցի մը յիշատակարանէն. – «...Գրեցաւ Շարակնոցս ձեռամբ մեղաւոր եւ սուտ անուն Սարկաւագ Ներսիսի, ի լաւ եւ յընտիր աւրինակէ, որ կոչի Խըլկցի, ընդ հովանեաւ Սրբոյ Յակովբայ Կապոսի... ի թվ. ՉԳԲ. (1343): Արդ, [աղաչեմ զձեզ եղբարք, անմեղադիր լերուք...]: Յիշեսցիք զհեզահոգի վար[դա]պետն իմ զՅովաննէս փիլիսոփայն եւ զկրաւնաւոր եղբայր իւր զՄովսէս ծաղկօղն...» (տե՛ս Տաշեան Ցուցակ, եր. 489.* [վերահրատ.՝ ԺԴ. դ. յիշ., էջ 334]*):*

*Բ. Հաւաքածոյ ձեռագրի մը յիշատակարանէն. – «...Արդ, ես՝ Յակոբ Ղըրմեցիս, ունայնագործս ի բարեաց եւ ուխտազանց գտեալս ի Տեառնէ, նայ եւ ի վատթարս ի մէջ սրբազանից ըստ անարժան գնացից, գրեցի զերեքեան գիրքս զայս իմով ձեռամբ անարհեստ գրչի: [Առաջին՝ զՀոգոց եւ զՋաւրութեանց նորին, յերկրորդ զԱռաքինութեանց հոգոյն, երրորդ՝ Վասն ընութեան հրեշտակացն]: Ի թուականութեանս [Հայոց՝ մեծ թուականին] ՊԼԸ. (1389), [եւ փոքերն ՅԸ. (306)], ի [գաւառիս] Եկեղեաց, ի հռչակաւոր վանքս, որ կոչի Կապոսի, ի ստորոտ լերինս Սե-*

պուհու, ընդ հովանեաւ կենաց բարէխաւսին սրբոյն Յակոբի, եւ ետու զսա Աբրահամ աբեղային՝ բանի սպասաւորի եւ գրոց աշակերտի քաջ հռետորին Երզնկացոյ Գէորգ վարդապետին…» եւ այլն (տե՛ս Ցուցակ Սեւանայ, Ն. Մառ, եր. 40 [վերահրատ.՝ ԺԴ. դ. յիշ., էջ 580]):

Գ. Ձեռագիր Աստուածաշունչ մատեանի մը յիշատակարանէն. «…Եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս ի Թուականիս [Հայոց] ՊՀԴ. (1425), [ի դառն եւ ի դժնեայ ժամանակիս, զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկեղեաց գաւառիս, քանզի] ի նոյն յամի յորում փոխեցաւ առ Քրիստոս հռչակելի րաբունապետն մեր Գէորգ, եկն տէրն Ամթայ ի վերայ Եզնկիս եւ … [հրդեհեաց զգեղաւանսն առհասարակ եւ զվանորայս, ընդ որ եւ] հռչակելի մենաստանս մեր Կապոսու վանքս հրդեհեալ աւերեցաւ: [Եւ երեք ամ ի խսար պահեաց զքաղաքն, եւ առեալ ապա խաղաղացոյց, եւ խնամօքն Աստուծոյ սկիզբն եղեւ շինութեան գաւառիս]: Որ եւ մեք, ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ անապատս պայծառ շինուածով՝ առաւել քան զառաջինն զժամատունն եւ զխցերն եւ զտնտեստունն եւ զայլ ամենայն շինուածսն…եւ այլն» (տե՛ս Նոտարք, եր. 80. [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 344]):

Դ. Մագաղաթեայ գրչագիր Սաղմոսի մը յիշատակարանէն. – «…Գրեցաւ Թ. Հ. ի Յոբելեան / տասն եւ ութի, / ի ԴԺ. եւ հինգն աւելիի (1496), / ի Թեմիս Եկեղեաց, / ի վանքս այս որ Կապոսի, / ի դրունքս այս գովելի Սուրբ Յակոբ եւ Սուրբ Սիօնի, / առ ոտս մեծ րաբունապետի, / Յովհաննէսի քաջ հռետորի, / ի յառաջնորդութեան այս սուրբ ուխտի, / տեառն Ներսէսի մաքրամտի, / եւ միեղէն եղբարցս բարի, / բոլոր վանիցս աբեղայի, / որ քան զերսունն են աւելի, / հաճոյական ծառայք բարի, / այլ են ստացող այս Սուրբ Կտակի, / զՏէր Կիրակոս հեզահոգի…» եւ այլն (տե՛ս Թորոս Աղբար, Բ., եր. 305 [յիշ-ս չկայ ի ԺԵ. դ. յիշ., հ. Գ.]):

Ե. Գրչագիր Աւետարանի մը յիշատակարանէն. – «…Գրեցաւ ձեռամբ քարտուղարի / եւ յոգնամեղ պիտակ գրչի../ Մեսրոբ անուն բանասէրի… / ի Թուականիս Ջ. Ի. / չորեք տասանք եւ Ը. Թուի (1519), / Մայիս ամսոյ ի վեցեկի, / ի Մ. քաղաքս Երզնկայի, / որ Եկեղեաց Թեմ կոչի, / մեծահռչակ վանք Կափոսի, / որ կայ ի լեառն Սեպուհի, / եւ տէր Ներսէս առաջնորդի, / ազնուական ի մեծ տոհմի, / սուր եւ մաքուր յոյժ գովելի, / որ հրեշտակաց է բաղձալի: / Եւ քաջ հռետորն մեր բարի, / որ Ստեփաննոս միշտ յորջորջի, / վարժէ զմանկունս յիմաստ բանի, / որք են յակճիրս աննիրհելի: / Այլ եւ զՆաղաշն գովելի, / զտէր Սիմէոնն Խարբերդցի, / որ զարդարեաց ծաղկաւք ի լի, / գոյն զգունով զարմանալի: / Զձեզ աղաչեմ, եղբարքն բարի, / որ ընթեռնուք հոգւով ի լի, / զիս յիշեցէք ի յաղաւթի, / զգրչակ Մեսրոբս Երզնկացի, / այլ եւ զհայրն

*իմ բաղձալի, / զԱմիրտովլաթն նազելի, / եւ զմայրիկն իմ գովելի...» եւ այլն (տե՛ս Թորոս Աղբար Բ. երես 329)*[190]*:

## 120/18. Ս. ՄԻՆԱՍԱՅ ՎԱՆՔ[191]*

*Երզնկայի արեւմտեան կողմը, վերեւ յիշուած Կաբոսի (Կայիփոսի) Ս. Յակոբայ վանքին մօտերը, որ Սեպուհ լերան քով է՝ շինուած էր այս Ս. Մինասայ վանքն, ուր ԺԳ. դարուն մէջ Յովհաննէս Երզնկացին իր ուսմանց առաջին ընթացքը կատարեց: Այս վանքն ալ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից եւ այժմ բեկորները կը նշմարուին (Բիւզ., 1897-98, Թ. 351, էջ 1):*

## 121/19. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔ Երկան գիւղի[192]*

*Այս ալ Երզնկայէն երեք ժամ հեռի Ս. Կիրակոսի կամ Երկան գիւղի Ս. Գէորգայ վանուց մօտերը պիտի ըլլայ. գուցէ այս ալ աւերակ: Երզնկայի մէջ ուրիշ երկու վանքեր ալ կ'յիշուին յանուն Ս. Եղիայի, մին ի Կեղզուտ, միւսն ի Հանդիսի (Բիւզ., 1897-98, Թ. 351, էջ 1):*

## 122/20. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔ[193]*

*Երզնկայի՝ Կիղզուտ գիւղի մօտերը (Բիւզ., 1897-98, Թ. 351, էջ 1):*

## 123/21. Ս. ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔ[194]*

*Երզնկայ՝ Հանդիսի գիւղի մօտերը (Բիւզ., 1897-98, Թ. 351, էջ 1)*[1]*:*

## 124/22. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[195]*

*Երզնկայի հարաւային կողմը, երեք ժամու չափ հեռաւորութեամբ, Երկան գիւղի մօտ արեւելեան հարաւ, քառորդ ժամ, բլրակի մը ետին լեռնաձորի մը մէջ կառուցուած է Ս. Գէորգայ վանքն, որուն կ'ըսուի նաեւ գիւղին անունով «Երկանայ Ս. Գէորգ»: Շուրջանակի պարսպապատ է, եւ ունի գեղեցիկ դիրք մը: Երզնկայի չէն վանքերէն մին ալ այս է, եւ վերջերս նորոգութիւններ ալ կատարուեցան: Ունի երկու հին եկեղեցիներ, մին քարաշէն եւ միւսը փայտաշէն, առաջինն յանուն Ս. Գէորգայ նուիրուած է:*

---

[1] [Ս. Եղիայի] այս երեք վանքերն ալ անցած են ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից եւ եղած են ուխտատեղիք, մանաւանդ Երկան գիւղի Ս. Եղիան՝ որ Ս. Կիրակոսի վանքին մօտն է, ուր շատ մը ուխտաւորներ կ'յաճախեն ամէն տարի:

Վանքն ունի 15-20 սենեակներ՝ բարձրադիր եւ հովասուն, աղբերակ մը, աղբիւր մը եւ լուսաղբիւր մը, որուն ջուրէն հաւատացեալք կ՚լուացուին եւ կ՚խմեն ի բժշկութիւն: Վանքին մէջ կայ նաեւ տնտեսատուն, ախոռներ, ունի 50 արտավարի չափ սեփական մշակելի հող, եւ մի մեծ մրգաստան: Իր շրջակաները կ՚գտնուին վանքերու, եկեղեցիներու եւ շատ մը ուխտատեղիներու եւ գերեզմանատուններու հետքերը:

## 125/23. Ս. ՕԳՍԵՆՏԻՈՍԻ ՎԱՆՔ[196*]

Երզնկայէն երեք կամ չորս ժամու չափ հեռի, Կարմրի անուն գիւղին մօտերը կ՚գտնուին վանքի մը եւ երկու եկեղեցիներու աւերակները, որ ըստ աւանդութեան տեղացւոց եւ գիւղացիներուն, հին ատեններ կ՚կոչուի եղեր «Օգսենտիոսի վանք»[197*]. այժմ ուխտատեղի եղած է, եւ կ՚կոչուի Ալէմճէրահ[2]:

## 126/24. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[198*]

Երզնկայի մէջ, ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանօրէից, եւ այժմ ալ ինչպէս կ՚ըսեն կ՚կոչուի եղեր Մէզիրէ (Բիւզ., 1897-98, թ. 351, էջ 1):

## 127/25. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ[199*]

Երզնկայի հիւսիսային կողմը, Ախորճըգ անուն գիւղին մօտիկը կ՚գտնուի Ս. Թորոսի վանքն, որ ի վաղուց դադրած է եւ այժմ ալ ուխտատեղի եղած է: Կը կոչուի նաեւ «Պաղ ապուրի ուխտ»:

## 128/26. Ս. ԹԱԴԷՈՍԻ ՎԱՆՔ[200*]

Երզնկայի հարաւ արեւելեան կողմը, Բոլոմէր գաւառակի պատկանեալ, Տանձիկ անուն գիւղին մէջ է Ս. Թադէոսի վանքն: Այժմ ուխտատեղի:

## 129/27. Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ[201*]

Երզնկայէն երեք ժամու չափ հեռի, Աբկաթաղ անուն գիւղին մօտիկը, եւ Թիլայ վանքին մօտերը, Թիլու կամ Գայլ գետին աջ կողմի եզերքին վրայ շինուած էր Ս. Կաթուղիկէ անուն այս վանքը, որ ի վաղուց անցած է ի շարս հանգած Հայ վանորէից:

---

[2] Այս տեղ գեղին մէջ արտ մ՚ալ կայ, որ կ՚կոչուի «Նաճդի վաճք» (Բիւզ., 1897-98, թ. 351, էջ 1):

# Ի. ԵՐԶՆԿԱՅԻ, ՔԷՄԱԽԻ ԵՒ ԴԵՐՋԱՆԱՅ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1902, թիւ 1680, 2-15/Դ., էջ 1*

## 130/28. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[202*]

*Քէմախէն դէպ ի արեւմուտք, երկու ժամու չափ հեռի, Ուռի գիւղին արեւելեան կողմն է Ս. Գէորգայ վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Ուռիի Ս. Գէորգ», եւ որ ի վաղուց անցած է, ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից:*

## 131/29. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[203*]

*Քէմախի մեծ Արմտան գիւղի հարաւ-արեւելեան կողմը: Կ՚ըսուի նաեւ «Արմտանայ Ս. Գէորգ», ժամանակին վանք մը եղած է ինչպէս կ՚աւանդեն տեղացիք, այժմ մատուռի մը ձեւն առած է եւ եղած է ուխտատեղի:*

## 132/30. ՁՆՁՈՐ ՎԱՆՔ[204*]

*Քէմախի արեւմտեան կողմը, վեց ժամու չափ հեռի, Կիրճանիսի (=Րիֆայեէ) մէջ Հոռոփուլ անուն գիւղի մօտերն է Ձնձոր Վանքը, ի վաղուց թէեւ ամայի, բայց այժմ ուխտատեղի եղած է մօտակայ գիւղացւոց բարեպաշտ ժողովրդեան (Բիւզ., 1900, թ. 1103, էջ 1):*

## 133/31. ԱՒԱԳ ՎԱՆՔ - Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՅ ԱՆԱՊԱՏ[205*]

*Քէմախի մէջ, Սեպուհ լեռնէն կէս ժամ հեռի, եռանկիւն ձորի մը մէջ է Աւագ վանքը, ըստ աւանդութեան Ս. Թադէոս առաքեալէն կառուցեալ յանուն Ս. Աստուածածնի, որուն կ՚ըսուի նաեւ՝ «Թադէոս Առաքեալի Վանք», Գառնոյ=Կառնոյ վանք՝ Գառնի գիւղը շատ մօտ ըլլալուն համար, եւ երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչն Սեպուհ լեռն աղօթարան ընտրեց իրեն, եւ երկար ժամանակ այս տեղ մնաց անծանօթ իրեններէն, այս պատճառաւ ալ կոչուեցաւ «Լուսաւորչայ Անապատ» եւ վերջերս ալ՝ «Տէրէվանք»:*

*Գեղեցիկ անտառներով շրջապատուած այս գեղեցիկ Աւագ վանքը, Սեպուհ լերան բոլոր վանքերու եւ ուխտատեղիներու իրօք աւագագոյնն է, միւս փոքր վանքերն այս վանքով կ՚կառավարուէին: Այժմ ունի երեք տաճարներ՝ առաջինը՝ ինչպէս ըսինք, յանուն Ս. Աստուածած-*

նի, երկրորդը՝ յանուն Ս. Թադէոսի, եւ երրորդը՝ յանուն Ս. Կարապետի է: Վերջին երկուքին համար կ՚աւանդուի թէ՝ ինչպէս կ՚պատահինք ձեռագիր յիշատակարաններու մէջ ալ, հիմնարկուած են Ս. Լուսաւորչէն: Ս. Աստուածածնի, Ս. Կարապետի տաճարները փոքրիկ են, իսկ Ս. Թադէոսի տաճարը մեծ եւ վայելչակերտ է, երեքն ալ առանց գմբէթի: Այս վերջնոյն փայտեայ դրան վրայ քանդակեալ է տասնեւմէկ առաքեալներու պատկերները, եւ յիշատակարան մը խոշոր եւ երկարաձեւ երկաթագրով փորագրեալ կատարեալ հնութիւն մը, որուն մէկ օրինակն հակառակ մեր փափաքանաց, մինչեւ ցարդ չկրցինք ունենալ: Կայ նաեւ իբրեւ հնութիւն «դեղթափ» անուն քար մը, որուն համար կ՚կարծուի թէ Սեղբեստրոս հայրապետի կողմէն Ս. Լուսաւորչին նուիրուած նշանաքարն է:

Վանքն ունի բաւական սենեակներ, վանքէն դուրս պարտէզ մը մրգեղէնի, եւ ուրիշ պարտէզ մը թթենիի, ընդարձակ անտառ մը, մշակելի եւ խոպան հողեր 150 արտավարի չափ: Տասնի չափ գիւղեր ունի իբրեւ իրեն թեմը: Ամէնէն մօտ գիւղն է, Գառնի՝ որ գրէթէ կէս ժամ հեռի է վանքէն:

Այս վանքի անուան շատ անգամ պատահած ենք հին ձեռագիր յիշատակարաններու մէջ, որոցմէ մէկ քանիները, համառօտած, հարկ կ՚տեսնենք դնել այս տեղ:

Ա. Բինկայ գիւղի Սասունցի անուանեալ մագաղաթեայ Աւետարանի յիշատակարանէն. – «...Գրեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ տիեզերալոյս մեծ րաբունապետին Յոհաննու Որոտնեցւոյ, յաստուածապահ գաւառս Եկեղե[ա]ց, յանապատիս Լուսաւորչի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս, զոր շինեալ է նոյն ինքն հաւրն մերոյ սրբոյն Գրիգորի: Որ եւ ի սմին եղեալ ձեռնադրութիւն Ըռստակէսի: Ի թվականութեան [Հայոց] Պ.որդի Ի.երրորդի, երկրորդի (1373), ձեռամբ յոգնեղկելի եւ բազմամեղ գրչի Գրիգորի, սպասաւորի նմին, եւ բանի, մակ՝ ըստ նախնոյն խութլուշ ի յընտիր աւրինակէ ստուգեալ...» (Թորոս Աղբար, Բ., էջ 325-27 [վերահրատ.՝ ԺԴ. դ. յիշատ., էջ 507]):

Բ. Գանձարանի մը յիշատակարանէն. – «Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զԳանձատետրս, որ ունի զգանձս տէրունական տաւնից եւ սուրբ հայրապետաց եւ սուրբ ճգնաւորաց եւ սուրբ առաքելոց եւ սուրբ մարտիրոսաց, ի լեառն Սեպուհոյ ի սուրբ անապատիս դրան Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետիս եւ երագահաս Սուրբ Մինասայ եւ սուրբ Տղայ Սուրբ Գրիգորի, եւ Սուրբ Երեք Մանկանցն եւ Սուրբ Ծիրանեացն, ի Հայրապետութեան Ներսէսի եւ ի փակակալութեան կուսակրաւն Երեմիայ աբեղին, որ ի գլխագրելն աշխատեցաւ... եւ ի դասակալութեան Մկրտիչ աբեղի, որ աղաւթիւք ձեր

*Աստուած պահեսցէ զնորընծայս՝ զԿարապետս եւ զպատուելի քահանայ զԱռաք...» (տե՛ս Տաշեան, Ցուցակ, երես 423):*

*Գ. Աւետարանի մը յիշատակարանէն. «...Ի թվ. ՊՂԸ. (1449) ի լեառն Սեպուհ, ի հռչակաւոր անապատն Սուրբ Լուսաւորչին, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին, եւ սքանչելագործին Ս[րբոյն] Մինասայ եւ Երից Մանկանցն, ի յառաջնորդութեան Մատթէոս սրբասէր կրաւնաւորի, ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի [ի Վաղարշապատ քաղաքի, եւ ի բռնակալութեան Դարանաղեաց գաւառիս Ճաւար -Բէկի...]» (տե՛ս Թորոս Աղբար, Բ, եր. 423-4)* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշատ., Ա., էջ 640][206]*:

*Դ. Յայսմաւուրքի մը յիշատակարանէն. – «...Վասն որոյ փափագող եղեալ... հեզահոգի Քահանայ Մովսէսն, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց... Եւ ետ գրել զգիրքս... ձեռամբ բազմամեղ եւ անիմաստ գծողի Սիմէոն կրաւնաւորի, ի գաւառս, որ կոչի Եկեղեաց եւ [Դարանաղեաց], ի վանքս որ կոչի Աւաք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Առաքելոցն, յառաջնորդութեան... վարդապետին Մարտիրոսի: Բայց գրեցաւ [կէսն] ի դուրս երջանիկ հաւրն մերոյ Սուրբ Լուսաւորչին, եւ միւս կէսն ի դուրս Սուրբ Առաքելոցն... [Ի Մեծ թվականիս Հայոց ՊՁԸ. (1439)]» (տե՛ս Տաշեան Ցուցակ, եր. 49-50):*

*Ինչպէս կ'տեսնուի, Ս. Լուսաւորչայ Անապատի այս Աւագ վանքի միաբանք կ'յիշուին՝ 1373 թուականին Գրիգոր վարդապետ, քիչ մը վերջն՝ Երեմիա, Մկրտիչ, Կարապետ աբեղաներ: 1440 թուականին՝ Մարտիրոս վարդապետ վանահայր վանուցն, եւ Գրիգոր, Մկրտիչ, Մարտիրոս, Յակոբ, Ներսէս, Առաքել, Մարգարէ, միւս Մարտիրոս վարդապետ եւ աբեղաներ: 1449ին ալ՝ վանուցս վանահայրը կ'յիշուի Մատթէոս վարդապետ (Բէ-ւ., 1900, Թ. 1067, էջ 1)*[207]*:

## 134/32. ԱՆԱՐԾԱԹ ԲԺԻՇԿԻ ՎԱՆՔ[208]*

*Քէմախէն մէկ ժամու չափ հեռի, Մարեք անուն գիւղի մէջ էր յանուն Կոզմայի եւ Դամիանոսի՝ անարծաթ բժշկաց, շինուած վանքը, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ հայ վանորէից*[1]*:*

[1] Կ'ըսուի թէ վանք մ'ալ կայ այս գիւղին մէջ կամ մօտիկն՝ յանուն Խնդրակատար Ս. Աստուածածնի՝ նոյնպէս աւեր, եւ տեղացիք կ'կոչեն եղեր «Խանեկտուրի վանք»: Այս երկու վանքերու ամբողջ հողերն ալ անցած են նոյն գիւղացւոց ձեռքը:

## 135/33. ԾՆԱՆ ԱՐՃՈՅ ՎԱՆՔ[209]*

*Քէմախի մէջ, բայց ո՞ր կողմը, անծանօթ կ՚մնայ մեզ: Վանքի Տաճարը նուիրուած էր յանուն Ս. Աստուածածնի: Ի հարկէ վաղուց անցած պիտի ըլլայ ի չարս չաբաթացեալ հայ վանորէից: Մեք այս վանքի անուան պատահած ենք ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Ճաշոց գրքի մը – որ կ՚գտնուի Մարսուանի Ս. Աստուածածին եկեղեցին – յիշատակարանին մէջ.*

*«Փառք սուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ... Արդ, գրեցաւ սա ի Թուականիս [Հայոց] ՊՁԸ. (1439), ի գաւառիս որ կոչի Դարանաղեաց, եւ մականուն Կամախ, ի սուրբ մենաստանիս, որ կոչի Ծնան Առճոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի Հայրապետութեան Տէր Գրիգորի եւ յեպիսկոպոսութեան Դարանաղեաց գաւառիս Տէր Կիրակոսին... Յիշեսջիք զստացող սորա զՊարոն Պակթամուրն, եւ զծնողսն իւր զՔրման-Խաթուն եւ զԱստուածատուրն, եւ զկողակիցն իւր զՄամա-Խաթուն եւ զզաւակսն իւրեանց: [Յիշեսջիք եւ զառաջնորդ սուրբ ուխտիս, այլ եւ զպարոն Պակթամուրն], որ եռափափաք եւ ջերմեռանդ եւ յօժար սրտիւ ել եւ գնաց եւ շինեաց եկեղեցին, որ անբնակ ի մարդկանէ... Շինեաց զսա վանք եւ անապատ, եւ զարդարեաց հանդերձիւք եւ գրեանօք, ամենայն զարդիւք՝ ծառօք եւ տնկօք: Ով ոք չունի իշխանութիւն ի յայս վանքս, ո՛չ դավէ առնելով, ո՛չ ծախելով, ո՛չ տանելով, ո՛չ գիրք եւ ո՛չ այլ ինչ, յիշատակ անջնջելի իւրն եւ ծնողացն»* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 498] *(Բէ-Հ., 1900, Թ. 1158, էջ 1):*

# ԻԱ. ԵՐԶՆԿԱՅԻ, ՔԸՄԱԽԻ ԵՒ ԴԵՐՋԱՆԱՅ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բէ-ւ., 1902, Թէ- 1720, 24/Ն-6/Զ.., էջ 1*

## 136/34. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[210]*

*Քէմախի մէջ, Սեպուհ լերան գրէթէ արգանդին մէջ շինուած է: Ասկէց առաջ յիշուած «Աւագ վանք»էն կամ «Ս. Լուսաւորչայ անապատ»էն երեք ժամու չափ հեռի՝ դէպ արեւմտեան հիւսիս: Այս Վանքը Դ. դարու նշանաւոր վանքերէն մին է, որուն կ՚ըսուի նաեւ «Մանեայ այր Սեպուհի», եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն այս Վանքին մէջ թաղուած ըլլալուն համար՝ կ՚ըսուի նաեւ «Հանգիստ Լուսաւորչի Վանք»: Լուսաւորչի ճգնութեան ժամանակ փոքրիկ մատուռ մ՚է եղեր, որուն վախճանումէն ետքը, Գառնիկ ճգնաւորի տեսիլքով Հայ մարդ մը՝ ըստ աւանդութեան Զենոբ՞ (Զենոն՞) անուն, շիրիմը պայծառացուցած, եւ Վանքն ընդարձակած է, որ մինչեւ ցայսօր կ՚պանծայ իր հոյակապ դիրքով ու գեղեցկութեամբը: Ունի սեփական անտառ մը, գրէթէ կէս ժամու շրջապատով, եւ բաւական մշակելի հողեր, եւ իբրեւ թեմ ունի հինգ կամ վեց գիւղեր:*

*Այս Վանքի մասին հին ձեռագիրներէն կ՚քաղենք հետեւեալ յիշատակարանները. – Ա. Ձեռագիր Սաղմոսի մը յիշատակարանէն. – «[Արդ], գրեցաւ սա ի Թուականութեանս Հայոց ՊՂԱ. [1442], [ի մէջ երկուց գաւառաց՝ Եկեղեաց եւ Դարանաղեաց], յերկնահանկէտ եւ յԱստուածաբնակ լեառս Սեպուհ, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս մերոյ Գրիգորի եւ Սուրբ Փրկչիս, եւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Կարապետիս, եւ Մանեայ Կուսին Սուրբ Գերեզմանիս, եւ այլ բազմահաւաք սրբութեանց: Եւ եդի զսա յիշատակ... ի դուռն բազմերախտ հօրն մերոյ Սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, մերձ յայրն Մանեայ...» (տե՛ս Նօտարք, եր. 129* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 539]*):*

*Բ. Ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանէն. – «...Արդ, գրեցաւ եւ ոսկով զարդարեցաւ սուրբ Աւետարանս, ի Թուաբերութեանս Հայոց ՊՂԴ. (1445), ձեռամբ սուտանուն աբեղայի Յովաննիսի, [ի մէջ երկուցն գաւառաց՝ Եկեղեաց եւ Դարանաղեաց], առ դամբարանի Սբոյն Գրիգորի Լուսաւորչիս, եւ Սուրբ Փրկչիս, ի լեառս Սեպհոյ..» (տե՛ս Նոյն, եր. 135* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 589]*):*

*Գ. Աւետարանի մը յիշատակարանէն. – «Գրեալ ի լաւ եւ յընտիր աւրինակէ, (ձեռամբ սուտ անուն) Երեմիա Կրաւնաւորէ, ի թվ. ՊՂԸ.*

(1449), ի լեառն Սեպուհ, ի հուչակաւոր անապատն Ս. Լուսաւորչին, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ Ս. Կարապետին, եւ սքանչելագործին սրբոյն Մինասայ, եւ Երից Մանկանցն, ի յառաջնորդութեան Մատթէոս սրբասէր կրաւնաւորի, ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի ի Վաղարշապատ քաղաքի [եւ ի բռնակալութեան Դարանաղեաց գաւառիս Ճաւար Բէկի]...» (տե՛ս Թորոս Աղբար, եր. 423 [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 640. տե՛ս նաեւ ծ. Հմր 133/31ի]):

Այս Վանքին համար 1442, 1445 եւ 1449 թուականներուն մէջ միաբաններ կ՚յիշուին, 1. Բարսեղ եպիսկոպոս, 2. Մատթէոս կրաւնաւոր, Առաջնորդք վանուցս, 3. Յովհաննէս վարդապետ փակակալ վանքին, 4. Թորոս, 5. Մարտիրոս, 6. Յովհաննէս, 7. Աբրահամ, 8. Աստուածատուր, 9. Աւետիք, 10. Միւս Յովհաննէս, 11. Հայրապետ, 12. Սարգիս Ապահունեցի, 13. Գրիգոր Համշէնցի, 14. Երեմիա վարդապետ եւ աբեղաներ, միաբանք Վանուցս (Բէ-ղ.,1900, Բ. 1067, էջ 1)[211*]:

## 137/35. ՍԵՐՈՎԲԷԻՑ ՎԱՆՔ[212*]

Քէմախի մէջ, Սեպուհ լերան արեւմտեան կողմը Թաւկըներ անուն գիւղին մօտերը, Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին տեղւոյն վրայ շինուած է Վանքս, որուն կ՚ըսուի նաեւ «Սերովբէք Քերովբէք»: Ունի սեփական անտառ մը երկու ժամու չափ շրջապատով, եւ երեսուն արտավարի չափ մշակելի հողեր, որք գիւղացւոց ձեռքն անցած են, կ՚ըսուի:

## 138/36. Ս. ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱՆՔ[213*]

Քէմախի մէջ, Վասլի անուն գիւղին մէջ է Ս. Թագաւորի Վանքը, որուն կ՚ըսուի նաեւ Վասլի Վանք Ս. Թագաւոր: Տաճարն եօթը խորաններով էր: Վանքն այժմ իր փայլը կորսնցուցած է[1]:

## 139/37. Ս. ՓՐԿՉԻ ՎԱՆՔ[214*]

Քէմախի Թորթան անուն գիւղին մէջ, կ՚ըսուի նաեւ Թորթանու Ս. Փրկիչ: Տաճարն կաթուղիկէիւ է, եւ տաճարին մէջ կը գտնուին ինն սրբոց գերեզմանները, Ս. Գրիգորի Լուսաւորչայ թոռանց եւ այլն եւ այլն: Վանքը շէն է, բայց այժմ եկեղեցի եղած է նոյն գիւղի ժողովրդեան: Այս Վանքի մասին հետեւեալ յիշատակարանն ունինք ի ձեռին. «...ՊՂԹ. (1450) ամի գրեցաւ, ի Թորդանայ վանքս, առ դամբարանի հօրս լուսոյ եւ որդոց եւ թոռանց նորա, ձեռամբ մեղաւոր [մեղսաներկ]

---

1 Վասլի գիւղի մէջ այս, Ս. Թագաւոր Վանքէն զատ, կան նաեւ ուրիշ վեց եկեղեցիներ, որոց վրայ մասնաւոր տեղեկութիւններ կ՚պակսին մեզ:

*ոգոյ եւ անարժան Մարտիրոս Եպիսկոպոսի» (տե՛ս Նոտարք, եր. 165* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 646]*):*

## 140/38. Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ[215]*

*Կ'ըսուի նաեւ «Արեգակ Ս. Նշան», Քէմախէն հինգ ժամու չափ հեռի դէպ ի արեւմտահիւսիս, թէեւ խիստ գեղեցիկ դիրքով է, բայց անպարիսպ, երկու գիւղ ունի իրեն թեմ, իր սեփական հողերն ալ գիւղացւոց սեփականութիւնն եղած են:*

## 141/39. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[216]*

*Քէմախի մէջ, ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից, իր սեփական վարելահողերն ալ գիւղացւոց կ'պատկանին: Գիւղացիք այս Վանքին կ'ըսեն Եղնաբեր Ս. Աստուածածին, – գուցէ Իւղաբեր Ս. Աստուածածին:*

## 142/40. Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔ[217]*

*Քէմախի մէջ, եւ ի վաղուց ամայի վանքերէն մին[2]:*

*Բյ–ւ., 1902, Թյ– 1831, 1-14/Ժ.., էջ 1*

## 143/41. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ - Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ԽԼԱՁՈՐՈՑ[218]*

*Դերջանայ մօտերն է, եւ կ'կոչուի նաեւ՝ Խլաձորոյ Վանք Ս. Գրիգորի: Այս վանքն հիմնարկուած կ'յիշատակուի Սիմոն անուն ճգնաւորէ մը տասներորդ դարուն մէջ, եւ ժամանակակից է, կ'ըսուի՝ Կամրջաձորի, Հոռոմոսի, Նարեկայ եւ Տաթեւու Վանքերուն, ինչպէս նաեւ Մշոյ մէջ եղած Ս. Ղազարու Վանքին շինութեան: Խլաձորոյ Վանքն իր ժամանակին բաւական շէն եւ մեծ գործունէութիւն մ'ալ ցուցած է, ինչպէս կ'ըսէ եկեղեցական պատմագիր մը, աւելցնելով միանգամայն թէ՝ Վանքի միաբաններն իրենք զիրենք կամովին պարտաւոր կացուցած էին օրը մի անգամ եւեթ կերակուր ուտել, եւ մի անգամ ջրով զովանալ: Վանքի այժմեան վիճակին ու մատակարարութեան վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք (Բյ–ւ., 1900, Թ. 1060, էջ 1):*

---

[2] Հին մատեաններու մէջ յիշատակուած տեսած ենք Սեբեայ անուն Վանք մ'ալ ի Քէմախ, բայց այս վանքի մասին որեւէ մասնաւոր տեղեկութիւն մը չկրցինք ստանալ տեղացիներէն, գուցէ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից:

## 144/42. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ - Ս. ԹԷՈԴՈՐՈՍԻ ՎԱՆՔ[219]*

*Դերջանայ եւ Երզնկայի միջասահման Խնձորիկ անուն գիւղին մօտ (որ այժմ կ՚կոչուի Պալապան Նահիյեէսի), լեռնադաշտի մը վրայ շինուած է Ս. Թորոսի Վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Ս. Թէոդորոսի Վանք», «Սըրըգըլը Ս. Թորոս» եւ Քորոփու = Գորոբու Վանք: Հին ժամանակներն ալ կ՚կոչուէր «Սեղիմնուտի Վանք»: Աւանդութիւնը՝ այս Վանքին եւ իր Տաճարին հիմնարկութիւնը կուտայ Ս. Գրիգոր Լուսաւորչին, որ շինած է իբր վկայարան յանուն Ս. Թէոդորոսի, որ իրեն ժամանակակից Սուրբ մ՚էր, իր կեանքն Յիսուսի համար տուած: Վանքը մինչեւ ցայսօր կանգուն է, եւ կ՚պահպանուի քանի մը միաբաններով: Երեսուն տարի առաջ Վանահայր էր Եփրեմ անուն Վարդապետ մը, որ լաւ մատակարարութիւն մը ունի եղեր: Վանքի նախկին հարստութենէն այժմ մնացած է մի միայն չորս կտոր արտ՝ քառասուն կամ յիսուն արտավարի չափ, եւ երեք ժամու շրջապատած անտառ մը, քարուտ եւ անբեր հողերով:*

*Կ՚կարծենք թէ այս Վանքի մասին գրուած պիտի ըլլայ հետեւեալ յիշատակարանը. «...Յիշեցէ՛ք զմեզ եւ զծնաւղսն մեր... Եւ զպապ Գրիգորիսն եւ զկենակից նորա զԳոհարիկն... որ ստացաւ զսա (Հաւաքածոյ գիրք մը) ի վայելումն զաւակաց իւրոց Վարդին եւ Աննային, եւ Գոհարիկ տիկնա... ո՛վ քահանայք եւ ժողովուրդք, որք միաբան եւ պտղատու էք սուրբ ուխտիս, որ կոչի Սուրբ Թորոս, ի հալալ վաստակոց ձերոց հանապազ զմեզ կերակրեցիք...» (Բիւզ., 1900, թ. 1043, էջ 1)[220]*:*

## 145/43. Ս. ԴԱՒԹԻ ՎԱՆՔ - ԾԱԿ ՔԱՐԻ ՎԱՆՔ[221]*

*Դերջանայ մէջ Ծակքարի կամ Ծաղկարի անուն գիւղին քովերը: Վանքս գիւղին անունով կը կոչուի նաեւ՝ «Ծաղկարի[3] կամ Ծակքարի վանք», կամ՝ Ծակքարի Ս. Դաւթի վանք: Եկեղեցին ալ նուիրուած է յանուն նոյն սուրբի: Որչափ գիտենք, Վանքը չէն է մինչեւ ցայսօր, ունի սեփական եւ վաթսուն քիլէ սերմնացու ցորեն պարունակող վեց կտոր մշակելի արտօրայք, ընդարձակ պարտէզ մը եւ գեղեցիկ մրգաստան մը: Ունէր նաեւ ժամանակին մեծ անտառ մը, որ ասկէց առաջ վաճառուած եւ այլոց սեփականութեանն անցած է:*

*Դերջանայ մէջ «Ապրանքի Ս. Դաւիթ» մ՚ալ կ՚յիշուի, թէեւ չենք կրնար պնդել, բայց կ՚կարծենք թէ այս միեւնոյն Ծակքարի Վանքն է (Բիւզ., 1900, թ. 1158, էջ 1)[222]*:*

---

[3] Հայր Տաշեան Վրդ.-ի մեծ ցուցակին մէջ՝ եր. 666, կ՚յիշուի Ծաթխոյ գաւառի մէջ Ծըղկունք անուն գիւղ մը: Ծըղկունք եւ Ծաղկար միեւնոյն գիւղե՞րն են արդեօք:

## 146/44. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[223]*

*Դերջանայ Շողուն անուն գիւղի մէջ, նուիրեալ յանուն Ս. Կարապետի, կ՚ըսուի նաեւ Շողունայ Վանք: Ի վաղուց անցած է ի չարս ամայացեալ Վանորէից: Եկեղեցին միայն կիսովին կանգուն կ՚մնայ եւ եղած է ուխտատեղի: Այս Վանքի հողերն ու կալուածներն ալ անցած են գիւղացւոց ձեռք:*

## ԻԳ. ՊԱՅԱԶԻՏԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1902, թիւ 1831, 1-14/Ժ, էջ 1*

### 147/1. ԴԱՐՈՒՆԻՑ ՎԱՆՔ կամ ԴԱՐՈՅՆՔ[224*]

*Պայազիտի մէջ, ուր Սուրբ Աշոտ անուն մէկը, Է. դարուն Սահակ Կաթուղիկոսի օրով, շինել տրուած է այս Դարունից կամ Դարոյնք ըսուած Վանքն ու Տաճարն, եւ նուիրուած է յանուն Ս. Ամենափրկչին: Տաճարին մէջ դնել տրուեր է, կ'ըսուի, Փրկչական Ս. Պատկերն, որ այն ժամանակները բերուած էր Կ. Պոլսէն: Վանքն հին ժամանակներու մէջ ունեցած է իր պայծառութիւնն եւ փայլունութիւնը, բայց հետզհետէ ամայացած եւ անցած է ի շարս շաբաթացեալ Վանորէից: Այս Վանքին մէջ եղած Փրկչական Պատկերին համար կ'աւանդուի թէ կ'պահուի Ս. Էջմիածնայ Տաճարին մէջ, բայց չենք գիտեր թէ կմնա՞յ մինչեւ ցարդ (Բիւզ., 1900, թ. 1083, էջ 1):*

### 148/2. ԾԱՂԿԱՎԱՆՔ

*Պայազիտէն երեք ժամու չափ հեռի, Ջիւնկիւր կոչուած սարերու եւ ձորերու մէջ՝ Արծափ անուն հին գիւղին մօտիկը՝ Գալուստի քար անունով քարաժայռին արեւելեան զառիթափին վրայ շինուած է Ծաղկավանքն, որ թէեւ մինչեւ ցայժմ կանգուն է կ'ըսուի, բայց ամայի եւ անփայլ է եւ եղած է ուխտատեղի՝ աչքի ցաւով տառապողներու համար, որք միշտ կ'դիմեն (Բիւզ., 1900, թ. 1103, էջ 1):*

### 149/3. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ

*Պայազիտէն երեք ժամու չափ հեռի, նոյնպէս Արծափ անուն վերոյիշեալ գիւղէն եւ յիշեալ Ծաղկավանքի մօտերը՝ սառն, առատաբուղխ, բայց թթուաշ ջուր ունեցող Ատմացուի աղբիւրին քովերը շինուած է այս Ս. Գէորգայ վանքն ալ, բայց ի վաղուց ամայի եւ անցած է ի շարս հանգած Հայ Վանորէից, եւ այժմ եղած է ուխտատեղի, միակ մատուռ մ'ունի, որուն արեւելեան պատին տակ վէմ մը կայ խոխրդաքար անուամբ: Ամէն ուխտաւոր խեցիի կտոր մը կ'փակցնէ այս քարին, կ'ըսեն թէ՝ եթէ փակչի խեցիի կտորն, իր մտադրութիւնը կ'կատարուի, եթէ ո՛չ՝ ընդհակառակն:*

## 150/4. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ

*Պայազիտի մէջ, Սպերէն երկու ժամու չափ հեռի, Եփրատ գետի մօտ Նպատ լերան ստորոտը Բագուանի տեղին վրայ կառուցեալ է գեղեցիկ ու խիտ անտառներով շրջապատուած Ս. Յովհաննու Վանքը, մեծադիր հոյակապ եւ հսկայ դիրքով, որուն կ՚ըսուի նաեւ, «Ս. Երրորդութիւն», «Երեք խորան» կամ «Իւչ Քիլիսէ»:*

*Այս Վանքի հիմնարկութիւնն աւանդութեամբ կ՚տրուի Ս. Գրիգոր Լուսաւորչին, որ երբ Կեսարիայէն կ՚դառնար, տեղւոյն վրայ գտնուած բագինն անմիջապէս կործանելով, իրեններուն ձեռնտուութեամբ կանգնեց եկեղեցին յանուն Քրիստոսի եւ շատերը մկրտեց, մկրտութեան ժամանակ Վանքն ալ կոչեցաւ Ս. Յովհաննէսի Վանք:*

*Տաճարն աննման է, բարձրակառոյց, ամուր, համակ քարուկիր, եւ քար ընդ քարինս շղթայեալ, բաց ի տաճարէն սակայն այժմ չունի ուրիշ որ եւ է շքեղութիւն, ունէր հարուստ սրբազան անօթներ, որք Կարին փոխադրուած են, կ՚ըսուի: Վանքն ունի չորս ջրաղաց, մէկ ձիթահան, եւ ութ հարիւր արտավարի չափ մշակելի հող: Վանքի արեւելեան կողմը կ՚իյնայ Ջիրաւ դաշտը, որուն մէկ մասն ալ իր սեփականութիւնն է, բայց ասոնք ո՛րպիսի հսկողութեամբ մը կ՚մատակարարուին, որոյ վրայ մասնաւոր տեղեկութիւններ կ՚պակսին մեզ: Այժմ գրեթէ Միաբանութիւն չունի, միայն գիտենք թէ Վանքն երբեմն Տրապզոնի Վիճակին կ՚պատկանէր եւ կ՚կառավարուէր խնամակալութեամբ մը. այժմ կ՚լսենք թէ Կարնոյ առաջնորդական թեմին ներքեւ է, եւ կ՚գտնուի քահանայ-վանահայր մը:*

*Վանքի ուխտագնացութեան օրն է Խաչվերացի տօնին, եւ իր թեմորայքն են Դարոյնք, Ծաղկոտն, Բագրեւանդ, Մաղազ եւ այլ գաւառակներ (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 151/5. ՊՂՆՋԱՎԱՆՔ[225*]

*Այս Վանքի անուան պատահած ենք 1310 թուականին գրուած ձեռագիր մատենի մը յիշատակարանին մէջ, որ կ՚ըսէ. «Դաւիթ աբեղայ, ի Պղնձավանս, ի գաւառն Սպեր ի գիւղն Խայիկ». եւ 1316 թուականին գրուած Աւետարանի մը, որ կ՚գտնուի ի Տիվրիկ՝ Սիմօն էֆ. Պօյաճեանի մօտ, յիշատակարանին մէջ, որ է. «Աստանաւոր ցանկ ելեալ աւարտեցաւ Սուրբ Աւետարանս ի թուականիս ՉԿԵ. (1316 թ.)... եկն մարախ սաստիկ եւ բազում տեղիս աւերեաց, եւ չքաւորեցան ամենեքեան, մինչեւ զորդիս վաճառեցին, ի քաղաքէն Կարնոյ աւելի քան զհազարս, եւ այնպիսի դառնութեան կայաք, եւ Սուրբ ուխտն մեր աւերեցաւ՝ անա-*

*պատն Պղնձայգւոյ, եւ ցրուեցան ամենայն սպասաւորք եկեղեցւոյն եւ բաժանեցան արտասուք...»*[1] [յիշ-ս չկայ ի ԺԴ. դ. յիշ-ք ճատորի] [226]*:

*Բէ-ւ., Թ. տ-րէ, 1905, Բէ- 2.545, 26/Ն-8/Բ., էջ 1*

## ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻ.

## ՆՈՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅ ՎԱՆՈՐԷԻՑ

*Ասկէ առաջ Բիւզանդիոն հայաթերթի Զորրորդ, Հինգերորդ եւ Վեցերորդ տարեշրջաններու ինչ ինչ թիւերուն մէջ Սեբաստիոյ, Գաղատիոյ, Գոնիայի, Տրապզոնի եւ Կարնոյ նահանգներուն եւ ասոնց գաւառ եւ գաւառակներուն մէջ գտնուած չէն եւ ի վաղուց աւերակ ու շաբաթացեալ, թուով 160էն աւելի, մեր Վանորէից համառօտ նկարագրութիւնները, կամ աւելի ճիշտն ըսելով՝ անոնց մէկ ցուցակն հրատարակած էինք: Ատկէ ետքը, մեր առաջնորդական զբաղմանց պատճառաւ, ժամանակի մը համար թէեւ դադրեցուցած, բայց այժմ կրկին կ՚սկսինք անոր շարունակութեան, հնասէր-վանասէրներու փափաքին գոհացում տալու համար, այս անգամ ալ Տիարպէքիրի նահանգէն սկսելով: Այս առթիւ կ՚խնդրենք մեր վանասէր բանասէրներէն, որ մեր այս ցուցակին եւ համառօտ նկարագրութեանց մէջ եթէ պատահին մեծ ու փոքր սխալներու, հաճին ուղղելու եւ ատով մեզ օգնելու, որուն համար կ՚յայտնենք այժմէն մեր շնորհակալութիւնները:*

---

[1] Կ՚յիշուի նաեւ Պայազիտ-Սպերի մէջ Կուսանաց վանք մը՝ Արտանուշ անունով, բայց կ՚թուի ի վաղուց ամայացեալ եւ անցած ի շարս շաբաթացեալ Վանորէից: Նոյնպէս Պայազիտի մէջ Արեւորդիք ըսուած մարազգիներուն մէկ գիւղին մէջ, ամայի եւ անբնակ վանք մ՚ալ, բայց թէ ի՛նչ անուամբ, յիշատակութիւն մը եղած չէ:

# Ա. ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

## 152/1. ՄԱԿԱԲԱՅԵՑՒՈՑ ՎԱՆՔ[227]*

Կ՚ըսուի նաեւ «Ս. Առաքեալ» կամ «Անթախու Ս. Առաքեալ», կամ «Ախթա Ս. Առաքեալ», կամ, ինչպէս յիշատակարանք կ՚ըսեն՝ սս «Ախթա Ս. Առաքեալ». կառուցուած է Տիարպէքիրի դէպ արեւելեան–հիւսիս, Լըճէ, Հազըօ եւ Ֆարգին անուն գիւղերու միջեւը, բարձր ու կոնաձեւ բլրակի մը գագաթան վրայ, զմայլելի եւ սքանչելի դիրքով, հիանալի եւ ակնապարար տեսարանով մը: Վանքին օդը շատ գեղեցիկ է, եւ ականակիտ ակունքներով ունի նաեւ շատ անուշ ու զովացուցիչ ջուր. քովերը թէեւ ապառաժ քարերով լիք է, բայց կան նաեւ այգիներ, պարտէզներ եւ անտառ մը մօտակայ: Մակաբայեցւոց այս վանքը մեր շատ հին վանքերէն մին կ՚համարուի, եւ իր Ս. Եկեղեցին՝ Տաճարը, թէեւ հետզհետէ նորոգութիւններ տեսած է, բայց իր հնութիւնն ակներեւ է մինչեւ ցայժմ հետաքրքիր խուզարկողին: Կ՚աւանդուի, թէ Թադէոս առաքեալն երբ այցելած է այս կողմերը, մատուռ մը շինած է վանքին տեղը, եւ նաեւ քովերն որ մօտ է այն հռչակաւոր կաղնիին, որ Մակաբեանց գերեզմանը կը հովանաւորէ: Այս վանքին մէջ թաղուած են Յովհաննէս Շիրակացի նշանաւոր վարդապետն եւ քանի մի ուրիշ երեւելի եպիսկոպոսներ: Նարին մականուանեալ Աստուածատուր Կաթողիկոսն ալ այս վանքին Վանահայրն եղած է, ինչպէս նաեւ Տիգրանեան Մկրտիչ Եպիսկոպոս եւ Յովհաննէս Վարդապետ Ատանացի եւն: Վանքն ունի իր սեփական 12-13 կտոր արտորայք, տուն մը Ագրակ անուն գիւղին մէջ, երկու ջաղացք, երեք այգի, եւ երեք պարտէզներ վանքին շուրջն եւ Շամշան անուն գիւղի մէջ: Այժմ կ՚ըսուի թէ միաբանութիւն չունի եւ գրեթէ լքուած վիճակի մ՚ալ ունի, բայց վերջերս Տիարպէքիրի Առաջնորդ Տ. Եզեկիէլ վարդապետ շէնցնելու փափաք ունեցած է, կ՚ըսեն: Այս վանքի մասին առ այժմ հետեւեալ յիշատակարանները միայն կ՚գտնուին մեր քով.

Ա. Տասնեւվեցերորդ դարուն մէջ գրչագրուած հաւաքածոյի մէջ. «Յիշատակ է պատմագիրքս Սուրբ Առաքելոցն Աթխա վանիցն ի դուռն Մակաբայեցւոցն Եղիազարու, եւ ես՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի Ղուկաս Վարդապետ սպասաւոր Սուրբ Առաքելոց Աթխա»:

Բ. Տասնեւութերորդ դարու սկիզբները գրչագրուած հաւաքածոյի մը մէջ. «...Ի թուականիս ՌՃԼ. (1681) ամի եկն ի Ամիթ Վարդան Վրդ. Բաղիշեցւոյն, աշակերտին Մարգարէ Վարդապետն եւ ունէր ընդ իւր զայս Իւղօրհնէքս եւ զՀիւանդաց օծման տետրս, եւ ես նուաստս յԱմ-

*Թեցի Թումայ գրիչս տեսի եւ ցանկացայ ի գրել, զոր եւ գրեալ աւարտեցի ի Մարտի ամսոյ Ժ.-ին»:*

*«Եւ ես՝ յԱմթեցի նուաստս Մարտիրոս բանի սպասաւոր, որդի ումեմն Թուխման կոչեցելոյ Պասմաճը, տեսի զՎերջին օծման Մաշտոցս եւ օրինակեցի ի թվին ՌՃՅԳ՞ (1714՞), Մայիս Ե., օրդ Դշ.ի, ի վանքն Մակաբայեցւոց, Աթխա Ս. Առաքելոց»:*

*Գ. Տասնեւվեցերորդ դարուն մէջ գրչագրուած Սարգիս Շնորհալիի մէջ. «ՌԼ. (1581) թվին Մչեցի Յոհանէս վարդապետն, որ յԱթխայ վանքն կու կենար՝ ԼԵ. (35) տարի անդ եկաց...» (տե՛ս Տաշեան Ցուցակ, էջ 753)[228]*:*

## 153/2. Ս. ԹՈՎՄԱՅԻ ՎԱՆՔ[229]*

*Այս վանքը կ՚գտնուի Տիարպէքիրի մօտերը եւ կ՚ըսուի նաեւ «Ս. Թովմայ Առաքելոյ վանք Թրջլոյ» կամ «Տէրճէլու»: Եկեղեցական միաբանութիւն չունի, ժամանակ մը աշխարհական Հայ ոմն իբրեւ վանահայր կ՚մնար վանքին մէջ իր ընտանեօք միասին: Ներկայ վիճակին վրայ ո՛եւ է տեղեկութիւն մը չունինք, թէեւ գիտենք թէ կանգուն է, եւ ունի պարտէզ ու այգիներ, բայց մշակելի հող՝ ոչ[230]*:*

## 154/3. Ս. ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔ

*Տիարպէքիրի Տըրըկ անուն աւանին մօտերը (1320 թ.) կառուցուած է «Ս. Դանիէլի վանք Տըրըկի»: Իր դիրքին, տեղւոյն եւ ներկայ վիճակին մասին տեղեկութիւնք կ՚պակսին մեզ. ի լրոյ միայն գիտենք սա, թէ հողերն անցած են մօտակայ գիւղացւոց ձեռքը[231]*:*

## 155/4. Ս. ԹՈՎՄԱՅԻ ՎԱՆՔ[232]*

*Տիարպէքիրի Հազրոյ անուն աւանին մօտ կառուցուած է վանքս, որուն կ՚ըսուի նաեւ «Այն–Ըբրըզ վանք Ս. Թովմայի», որ կ՚նշանակէ «Պայծառակն»: Կառավարած են երբեմն վարդապետ եւ երբեմն աշխարհական վանահայրեր: Վանքը թէեւ մշակելի արտորայք չունի, բայց ունի պարտէզ ու այգիներ, երկու հատ ալ ջրի աւազան, որուն վրայ ամբան ատեն զուարճալի օրեր կ՚անցընեն եղեր ուխտաւորք, որք կուգան եւ կ՚հաւաքուին մօտակայ գիւղերէն: Այս վանքի մասին հետեւեալ յիշատակարանն ունինք Տասնեւեօթներորդ դարուն գրչագրուած Աւետարանի մը մէջ. «...Ես Մահպուպս տնտես Սուրբ Թովմայի Առաքելոյ եւ Այն Էբրեղայ վանից գնեցի զայս Աւետարան... զոր տեսեալ աղիքս*

*խռովեցաւ, եւ սիրտս ի փորի խմում գալարեցաւ... Եղի յիշատակ ի վանս Սուրբ Թովմայի ի Թուին ՌՂԴ. (1645)»* [ԺԸ. դ-ի յիշ-ք, Գ.՝ չկայ այս յիշ-ը]:

## 156/5. ԲԱՐՁՐ ՎԱՆՔ

*Տիարպէքիրի Սաղտուն անուն գիւղէն գրեթէ մէկուկէս ժամու չափ հեռու եւ նոյն գիւղի վերեւը գտնուած լեռնաշղթային վրայ կառուցուած էր այս վանքը, որ ի վաղուց հանգած եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից, այժմ միայն հիմերը կ'երեւան, որուն մէջը փոքրիկ մատուռ մը շինուելով՝ եղած է ուխտատեղի: Վանքին տեղը շրջապատուած է անտառներով, ունի բարձր դիրք ու հիանալի տեսարան, առջեւը՝ մացառներուն մէջ աղբիւր մը կայ, որուն ջուրը պաղ եւ զովարար է*[1]*:*

[1] Թուխ Մանուկ Ս. Խաչ անունով շատ հին ուխտատեղի մ'ալ կայ, Տիարպէքիրի արեւելեան կողմը, երեք ժամու չափ հեռու, Սաթուգիւղ անուն գիւղին աղբիւրին մօտերը. այս ուխտատեղւոյն հնութիւնն ալ տեղացի ժողովուրդն աւանդութեամբ մինչեւ Թադէոս Առաքեալ կ'հանէ: Հին մատենագրութեանց մէջ կ'յիշուին երեք ուրիշ Վանքեր ալ ի Տիարպէքիր. Ա. Կոնոնոսի Վանք, Բ. Սեւեղոյ վանք, Գ. Հալւորկոր Վանք, բայց մեք որչափ որ գիտենք, առաջին երկուքը Սղերդի մէջ են եւ երրորդն ի Չարսանճագ, որոց վրայ պիտի գրենք իրենց կարգին:

# Բ. ԱՐՂՆԻԻ ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1905, թիւ 2·583, 11-24/Գ., էջ 1*

## 157/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ[233]*

*Արղնիի մօտ, լերան մը՝ որ կ'կոչուի Արղնիի բերդ, ահագին բարձրութեանը վրայ կառուցուած է Ս. Աստուածածնի Վանքը Բարձրահայեաց, իր տիտղոսին իրաւամբ արժանի տեսարանով մը, որ ի հարկէ, «Բարձրահայեաց» անունն ալ առած պիտի ըլլայ իր դիրքին բարձրութեանը պատճառաւ, ուրկէ կ'երեւնայ, հեռուէն, նոյն իսկ Քղիի Ս. Լոյս անուն լեռն անգամ, շատ պայծառ կերպով: Վանուցս հիմնադիրն եղած է տասնեւհինգերորդ դարուն մէջ (1442-44 թուականներուն) հռչակաւոր Մկրտիչ Եպիսկոպոս Նաղաշ, Ամթայ (Տիարպէքիր) Առաջնորդը, թէեւ աւանդութեամբ ալ կ'ըսուի թէ անկէ առաջ, վանքի տեղւոյն վրայ, Թադէոս առաքեալէն հիմնուած փոքրիկ մատուռ մը կար: Վանքի տաճարը քարաշէն է, գմբէթաւոր եւ քառակուսի ձեւով շինուած, ունի միակ խորան մը յանուն Ս. Աստուածածնի. Արեւմտեան դրան վերի շէմին վրայ քանդակուած է հետեւեալ յիշատակարանը. «ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ԱՒԹՄԱՆ ՇԱՀԻՆ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽՈՐԱՆՍ ՎԵՐԱԴԻՏՈՂՈՒԹԵԱՄԲ ՆԱԳԱՇ ՄԿՐՏԻՋ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԹՎ. Պ.Ղ.Գ. (1444)»: Նաղաշ Մկրտիչ Եպիսկոպոսէն ետքն ալ, սոյն վանքի նորոգութեան եւ բարեզարդութեան աշխատութիւն տուած է նաեւ Այնթապցի Եղիազար Պատրիարք Կաթողիկոսն, որ ժամանակ մը վանուցս վանահայր եղած է: Աւագ խորանի միակ սեղանի վրայ՝ տախտակեայ պատուանդանի մը վրայ զետեղուած, եւ արծաթեայ շրջանակի մէջ առնուած, Քրիստոսը գիրկը Ս. Աստուածածնի պատկեր մը կար՝ փոքր դիրքով, որ հին եւ նշանաւոր էր՝ եթէ մինչեւ ցայժմ կ'մնայ: Սոյն պատկերի արծաթեայ շրջանակին վրայ Յունարէն տառերով գրուածք մը՝ եւ 1786 թուականը կար, իսկ Քրիստոսի կուրծքին վրայ ալ Հայերէն գրուած էր հետեւեալը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՀԱՄՕՐԷՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ, ԱԻՈՒՐԸՆ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԹՎ. 1236, ՄԱՐՏ ԺԵ.», ԵՒ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԻՆ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ ԷՐ. «ՆԿԱՐԵՑԱՒ ՊԱՏԿԵՐՍ Ի ՂԱԼԱԹԻԱ, ՅԻՇԱՏԱԿ ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Ի ԴՈՒՌՆ ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, ԹՎ. ՌՃԳ. (1654 Թ.)»: Վանքն ունի յիսունի մօտ խառն ի խուռն սենեակներ ուխտաւորաց եւ շրջակայ բնակչութեանց համար, որք ամառն եւ տօնախմբութեան օրին բազմաթիւ կը դիմեն յուխտ եւ երկրպագութիւն. Ջուրի աղբիւր մը չունի, այլ միայն*

երկու կամ երեք մեծ ջրամբարներ, որ յատուկ ջուրով մը կ՛լեցուին: Առաջնորդարանը շատ լաւ չէնք մ՛է, կոկիկ եւ ընդարձակ, վանքի գրադարանը Առաջնորդարանին մէջն է, ուր զետեղուած են 150 կտորի չափ ձեռագիր եւ բաւական ալ տպագիր գրեանք, որ ժամանակին շատ խնամով կ՛պահուէին: Այս մասին մէջ կ՛գտնուի նաեւ սենեակ մը, յախճապակիներով զարդարուած, որուն կ՛ըսեն Ճէննէթ օտասի: Ուխտաւորութեան օրն է Ս. Աստուածածնի տօնին: Վանքն իրեն սեփական պարտէզներն ու այգիներն ունի, 40 կտորի չափ ալ մշակելի արտեր, եւ հինգ հատ խանութ Մատէնի մէջ, երկու խանութ ի Ջերմուկ, չորս հատ տուն Տիարպէքիրի մէջ, եւ տուն մ՛ալ Արղնիի մէջ: Այս վանքին մէջ կը պահուէր «Արնէ» կամ «Կայծակի ճրագ» անուն կանթեղ մը, վրան արծաթ եւ մէջը հող, զոր կ՛վառէին եկեղեցւոյ մէջ կայծակի օրեր. այս ճրագի կամ կանթեղի արծաթին վրայ հետեւեալ նշանաւոր յիշատակարանն արձանագրուած էր. «ՅԻՇԱՏԱԿ ՃՐԱԳՍ ԱՐՆԷ, Ի ՏԱՃԱՐՆ ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ. Ի ՆՈՐԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՃԷՄԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԷՆ, ՈՐ Է ԻՆՔՆ ԵՒՍ ԴԱՍՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ, Ի ՅԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏԵՂԻՈՅՍ ՄԻԱԲԱՆԻՑՆ Ի ԿԱՅԾԱԿԱՆ, Ի ԹՎ. Ռ.Մ.Զ. (1757 թ.)»: Այս Վանքի շատ մը հին Վանահայրերներէն՝ հետեւեալները միայն ծանօթ են մեզ.

1. Նագաշ Մկրտիչ Եպիսկոպոս, 2. Եղիազար Պատրիարք-Կաթողիկոս, Այնթապցի, 3. Մինաս Վարդապետ, 4. Կարապետ Վարդապետ Աճէմեան, 5. Սահակ Եպիսկոպոս, 6. Կարապետ Եպիսկոպոս, 7. Պօղոս Վարդապետ: Նորերէն ալ՝ ճգնաւոր եւ առաքինի ծերունին Յովհաննէս Վարդապետ եւ Մկրտիչ Եպիսկոպոս Տիարպէքիրցի՝ հրաշագործ մականուանեալ: Առաջնորդաց ոմանց գերեզմանները, Վանքի Տաճարին դրան կից կը գտնուին. Սահակ եւ Կարապետ Եպիսկոպոսներու գերեզմանաքարերուն վրայի յիշատակարանք են հետեւեալներն:

ՍԱՀԱԿ ԱՐՀԻ ՄԵԾ ՐԱԲՈՒՆԻՍ,
ՏԵՍՈՒՋ ՀԱՄԹԱՑ ԵՒ Ս. ՈՒԽՏԻՍ,
ԾՆԵԱԼ ՅԱՄԻԹ, ՍՆԵԱԼ ՅԱՍՏԻՍ,
ՆՆՋԵԱԼ ՅԱՅԺՄԻԿ Ի ՏԱՊԱՆԻՍ:
ՄԱՆԿՈՒԹԵԱՆԷ ՀԱՍԵԱԼ ՅԱԼԻՍ,
ՀՈԳԱՅՐ ՊԻՏՈՅՍ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ,
ՋԱՐԴՔ ԵՒ ՇԻՆՈՒԱԾՔ ԵՒ ԿԱՐԱՍԻՍ,
ԸՆԴ ՆՈՐ ՄԱՏԵԱՆՍ ԿԱԶՄԵԱՑ ԱՐՀԻՍ:
ԲՈՒՐՄԱՆ ԽՆԿՈՑ ՄԻՇՏ ԱՐԺԱՆԻՍ,
ՎԱՐՁ ԻՒՐ ՀԱՅՑԷ ՏԱԼ ՋՈՂՈՐՄԻՍ,
ԴՈՒՔ ՈՐ ՈՒՆԻՔ ՋԱՅՍ ՏԱՆ ԲԱՐԻՍ,
ԵՒ ԿԱՄ ՈՐ ԳԱՅՔ ՈՒԽՏ ՏԱՃԱՐԻՍ:
ԿՑԵԱԼ ՀԱԶԱՐՆ ԵՐԿՀԱՐԻՒՐԻՍ,

*ՅԵՕԹԱՆԱՍՆԻՆ ՈՐ ՀԱՅԻՍ,*
*ԿԱՄ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԵՕԹՆԻՍ,*
*ԹԻՒ ԿԵՆԱՑՆ ՎԱԹՍՈՒՆ ՀՆԳԻՍ:*

*– «ԱՍՏ ԱՄՓՈՓԻ ՆՇԽԱՐ Ի ԴԻՐ,*
*ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՀԻ ՊԵՏԻՆ,*
*ՍՐԲՈՅ ՈՒԽՏԻՍ ԱՐՀԻ ԴԻՏԻՆ,*
*ԵՒ ՄԵԾԱԳՈՐԾ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,*
*ԶԻ ՀԱՄԱՅՆ ՇԷՆՔ ԹԷ ԱՐՏԱՔԻՆ,*
*ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԵՒ ԹԷ ՆԵՐՔԻՆ,*
*ԱՐՀԻՈՅՍ ՋԱՆԻՒՔ ԿԵՐՏԵՂ ՅԱՆԳԻՆ»:*

*Այս վանքի մասին հետեւեալ յիշատակարաններն եւս կան մեր ձեռքին տակ.*

*Ա. Տասն եւ Չորրորդ դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մէջ. «Մինաս Վարդապետ ՌՃԺ. (1661) թվին, որ կացեալ է Վանահայր Արղնու Բարձրահայեաց Վանից ի խիստ սով ժամանակի, յորում մէկ չարեկ ցորենն տասն եւ ինն չուրուկ ղուրուշ էր, բազումք ի ծնողաց զզաւակունս ուտէին... ինքն Մինաս Վարդապետն զվանքն յամայութենէ պահէ, զմիաբանս եւ զաղքատս կերակրէ, եւ զԱւետարանս նորոգէ յիշատակ իւր եւ ծնողաց...»:*

*Բ. Տասն եւ Հինգերորդ դարուն մէջ գրչագրուած Մաշտոցի մը մէջ. «Գրեցաւ ի գաւառն Արղնոյ, ի գիւղն Բագուր, սկսեալ ի սուրբ ուխտն ի Բարձր Աստուածածնի տաճարն, ի թվին ութհարիւրորդի ութսուներրորդի երրորդի (1434), հրամանաւ Ալեքսիանոս քահանայի, ձեռամբ Յովհաննէս սարկաւագի...»* [ԺԵ. դ. յիշ-ք, Ա.՝ չկայ այս յիշ-ը]:

*Գ. Տասն եւ եօթներորդ դարուն մէջ գրչագրուած Յայսմաւուրքի յիշատակարանէն մաս մը. «...Եւ Վարդապետս Եղիազար ի Թուականին Ռ. եւ Ղ.երորդի [1641 թ.] ընկալեալ զպատիւ Վարդապետին ի Վարժապետէն Յովհաննիսէ եւ շրջեալ ի բազում քաղաքս եւ ի տեղիս, մինչ զի համբաւեցաւ լուր Վարդապետիս ընդ ամենայն երկիր եւ մեծանուն եւ փառք ստացեալ եղեւ, եւ ի Ռ. Ղ. Զ. [1647] թվին կոչեցեալ եղեւ յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Արղնոյ Ս. Աստուածածնին եւ առեալ զաստիճան եպիսկոպոսութեան ի Ս. Էջմիածնայ Կաթողիկոս Տէր Փիլիպպոսէ սքանչելագործէ, եւ դարձեալ յաթոռն իւր արար բազում ջանադրութիւն ի շինութիւն պարագայցն եւ Մենաստանի Ս. Ուխտին, որ ի բազում ժամանակաց, եւ տեղւոյն սառնապատութեան սակի բոլորիւ հասարակ շինութեան եւ նորոգման ու արտաքուստ, թէ՛ կարգաւորօք եւ թէ՛ անդադար պաշտաւն եւ սաղմոսերգութեամբ, եւ թէ ընթերցմամբ... Դարձեալ ի թվին Ռ. Ճ. եւ Բ. (1653) այս Եղիազար վարդապետս ելեալ ի Կոստանդնուպոլսէ եկն ի վիճակեալ աթոռն իւր, այսինքն՝*

*յԱրղնու Բարձրահայեաց Ս. Աստուածածինն, Բարձրագոյն Հրամանաւ եւ Նոմոսիւ, որ յաղագս այնմ իրի էր գնացեալ անդ, եւ սկսաւ նորա նորոգել զսուրբ մենաստանս, այս է զեկեղեցւոյն որմեր, ներքոյ եւ արտաքոյ սպիտակացուցեալ պայծառացոյց, եւ ի վերայ դրան սորին գաւիթ շինել ետ, որ յառաջն բնաւ իսկ ոչ գոյր, այլ եւ արտաքոյ շուրջ զեկեղեցեաւն սրահք պատշաճաւոր եւ զանազան խցեր, ի պէտս միաբանակեցաց եւ գալողաց եւ գնացողաց մեծաւ ծախիւք: Եւ գիտելի է, զի յաւրէ յորմէ հետէ շինեալ էր զսա Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոս Նաղաշն կոչեցեալ, մինչեւ ցայժմ [ի յահէ անաւրինաց] քար ի քարի վրայ աստ ոչ ոք էր եդեալ, բայց սա յԱստուած ապաւինեալ, բարեխաւս ունելով զտիրածին կոյսն, [անկասկած լեալ յահէ անաւրինացն, արիաբար] դիմեալ ի գործ հոգեւոր մշակութեանս եւ լիով կատարեաց ըստ փափաքանաց սրտի իւրոյ, զոր Տէր Աստուած պահեսցէ հաստատուն յուսով...»:[234*]:*

## 158/2. ԱՆԱՊԱՏ ՎԱՆՔ[235*]

*Արղնի գաւառակին մէջ, Ակլ կամ Ակլայ, եւ կամ աւելի ճիշտն Ակիլ (=անգեղտուն) աւանին քովերը կ'գտնուի սոյն Ս. Անապատ վանքն, որ ի վաղուց ամայի եւ աւերակ, անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից (Բէ-Ն., 1900, Թ. 1127, էջ 1):*

## 159/3. Ս. ԹՈՎՄԱՍԻ ՎԱՆՔ

*Նոյնպէս յիշեալ Ակիլ աւանին քովերը, կ'ըսուի նաեւ՝ «Ս. Թովմայ Առաքելոյ վանք», ի վաղուց ամայի եւ աւերակ, անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից:*

## 160/4. ՍԱԼԹԱՆԸՄԱՑ ՎԱՆՔ[236*]

*Նոյնպէս յիշեալ Ակիլ աւանին քովերը, շաբաթացեալ, եւ ի վաղուց ամայի եւ աւերակ:*

## 161/5. Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

*Արղընիի Թըլպաղդատ անուն գիւղին ծայրը շինուած էր Ս. Խաչ վանքս այս, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից[237*]:*

## 162/6. Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ[238]*

*Արղընիի Ջրէդան անուն գիւղին քովերը կ՚գտնուի յանուն Սրբոյն Յակոբայ կառուցեալ այս վանքն, որ ի վաղուց ամայի եւ աւերակ, անցած է նաեւ ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից:*

*Նոյնպէս Արղնի մէջ ԱԿՂ կամ ԱԿՂԱՅ անուն գիւղի մօտ, ի վաղուց ամայի եւ աւերակ վանք մը կայ (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1)*[1]*:*

---

1 Յիշեալ Վանքերէն զատ, Արղընիի մէջ կան նաեւ, որչափ գիտենք մեք, երկու մատուռներ. Ս. Փրկիչ եւ Գալիլիա անուններով, որք ուխտատեղիք են:

# Գ. ԲԱԼՈՒԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1905, թիւ 2.653, 3-16/Զ., էջ 1*

## 163/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ՔԱՂՑՐԱՀԱՅԵԱՑ[239]*

*Բալուէն երկուքուկէս ժամ հեռի, դէպ ի արեւմուտք, Հաւաւ անուն գիւղի հարաւակողմը, եւ անկէ ալ գրեթէ քառորդ ժամու հեռաւորութեամբ, փոքրիկ բայց անտառուտ լերան մը բարձունքին վրայ կառուցուած է Ս. Աստուածածնի Վանքը Քաղցրահայեաց: Ունի շատ գեղեցիկ դիրք ու բարձրութիւն մը, այնպէս որ եթէ վանքին տանիքէն մարդ վար նայի՝ կ՚սոսկայ, եւ եթէ վարէն վեր նայի՝ կ՚հիանայ, այն գեղեցիկ տեսարանով, զոր կ՚ընծայէ իր դիրքն ու տեղը: Աւանդութեամբ կ՚ըսուի թէ, վանքն հիմնուած է Թադէոս Առաքեալէն, եւ կը պատմուի նաեւ թէ Թադէոս Առաքեալն այս վանքն հիմնել կ՚ուզէ եղեր, այդ բարձունքի վարի բլրակին վրայ, բայց երազին մէջ Տիրամայրն երեւնալով, ըսած է. «Թադէ՛, Թադէ՛, բա՛րձր հայեաց, բա՛րձր հայեաց», որուն վրայ Առաքեալը կ՚պարտաւորի, աւելի վեր, այժմեայ բարձունքին վրայ հիմնել ու կառուցանել այս վանքը: Բայց ի՞նչպէս եղեր է այս վանքին անունը «Քաղցրահայեաց», չենք կրնար լուծում մը տալ. այս աւանդութիւնը աւելի լաւ կ՚պատշաճէր կարծենք, Արղընիի «Բարձրահայեաց» Ս. Աստուածածնի վանքին, թէեւ այս վանքն ալ «Քաղցրահայեաց» անունն իր վրայ կրնայ արդարացնել իր հիանալի տեսարանով:*

*Վանքն ամուր շինուած եւ չուրջանակի պարսպապատ է. երկփեղկեայ երկաթապատ մեծ դուռը դէպ ի հարաւ կ՚նայի, որուն առջեւը կարծես յատուկ զարդարուած է թթենիի, բարտիի եւ այլեւայլ բազմաթիւ ծառերով: Ժամանակին փայլուն եւ ճոխ միաբանութիւն մ՚ունէր, այժմ անշուք է իր ներքին կեանքը, եւ կորուսած է նաեւ իր նախկին ճոխութիւնն ու փայլը: Երբեմն կ՚կառավարուէր, վերջին ատեններս, միմիայն քահանայով մը՝ իբր Վանահայր, այս օրերս ալ Վանական Խորհուրդ մը կազմուած եւ իր վրայ առած է կ՚ըսուի Վանական կառավարութիւնը: Վանքն ունէր, որչափ որ գիտենք, բաւական մեծ թուով հին եւ նոր գրչագիրներ, որոնց վրայ թէ ո՞րքան զգուշութիւն կ՚տարուին, որոշ տեղեկութիւնք կ՚պակսին մեզի:*

*Վանքի տաճարը փոքրիկ է, բայց քարուկիր եւ շատ սիրուն շէնք մ՚է գմբեթաւոր, որուն ձեւն ու ճարտարապետական ոճը բացայայտ կերպով կ՚յայտնեն անոր պատկառելի հնութիւնը: Ժամանակին եղած*

այլեւայլ նորոգութիւնները, եւ վերջին անգամ 1898ին եղած նորոգութիւնը Տաճարի հնութենէն գրեթէ մեծ բան մը կորուսած չերեւիր, երբ խուզարկու աչօք դիտուի:

Վանքի բակին մէջ աղբիւր մը կայ սառնորակ ջուրով եւ աւազան մը բաւականին ընդարձակ: Ունի ուխտաւորաց յատուկ յիսունի չափ մեծ ու փոքր սենեակներ թէեւ անշուք, բակին ետեւի կողմն եղած կարեւոր շէնքերը, եւ նախկին Առաջնորդարանն իր յարակից մասերով, եւ հիւրանոց ըսուած տեղը, այրած են երբեմն պատահած մեծ հրդեհին ժամանակ, այժմ հոգ կ՚տարուի նորոգելու եւ շէնցնելու, կ՚ըսուի եւ իրօք ալ շէնցնելու է այսպիսի մեծ ու գեղեցիկ վանքը, եւ օժտելու է վարժարանով, ժառանգաւորով ու զարգացեալ կրօնական ու վանական միաբանութեամբ:

Վանքի շուրջը կան այգիներ, պարտէզներ, ծառաստաններ, եւ անտառ մը, մրգաստան ու աղբիւրներ վանքի սեփական, որք կարծես առաւել կ՚զարդարեն վանքը: Եւ հիանալի տեսարանով կ՚դիտուին մօտակայ Հաւաւ անուն գիւղը, իր տուներով, պարտէզներով, ընդարձակ այգեստաններով, համայն դաշտն իր արտերով, հովտին մէջ՝ նաեւ լեռնակողման վրայ սփռուած զանազան գիւղեր՝ իրենց պարտէզներով ու այգեստաններով: Վանքի մեծ դռնէն դուրս, քիչ մը անդին, բաւականին մեծ աւազան մը կայ նոյնպէս թթենիի ծառերու հովանւոյն տակ, որուն ներքեւն ալ կ՚գտնուի ջաղացքը, ասոնցմէ վար ալ կ՚գտնուի Սուրբ Տիկին անուն աղբիւրը, որուն առջեւն ալ ուրիշ աւազան մը կայ, բայց այժմ թէ՛ աւազաններն եւ թէ՛ ջաղացքը կիսակործան եւ քայքայեալ են: Վանքն ունի բաւական մշակելի արտօրայք, եւ իր հարաւային սահմաններուն վրայ կ՚երեւին մեծամեծ Խաչքարեր, տնկուած որոշ ուղղութեան մը վրայ, եւ իրարմէ որոշ հեռաւորութեամբ, որոց կանգնումն ալ կ՚վերագրուին, աւանդութեամբ Թադէոս Առաքեալին: Վանքի ուխտաւորութեան ժամանակն է Վարդավառի, Վերափոխման եւ Վերացման Խաչի տօնի օրերը, որ ժամանակ բաւական ուխտաւորներ կ՚դիմեն յուխտ եւ երկրպագութիւն:

Այս վանքի մասին, առ այժմ հետեւեալ յիշատակարաններն միայն ունինք ի ձեռին.

Ա. «Գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թվին ՌԻԲ. (1573 թ.), ի Բալու, ի Վանքն Հաւայ, ի լաւ եւ յընտիր աւրինակէ, ձեռամբ Անտաւն Եպիսկոպոսի»:

Բ. «Գրեցաւ Բառագիրքս Աստուածաշունչ Գրոց, որ արարեալ էր յԵրեմիա Վարդապետէ, ի դուռն Բալուայ Վանուցն Ս. Աստուածածնայ»[240*]:

## 164/2. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[241]*

*Բալուի արեւմտեան կողմը, մէկ ժամու չափ հեռի, Աղամ անուն հայաբնակ գիւղի մօտ, Դար ըսուած գմբեթաձեւ կլորիկ բլուրի մը վրայ շինուած է Ս. Կարապետի վանքը, որուն հիմնարկութեան վրայ գիւղացւոց բերնին մէջ հետեւեալ աւանդութիւնը կայ. «Երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ս. Կարապետի իրանը կ՚փոխադրէր ի Տարօն, այդ Դար ըսուած բլուրին գլուխը կ՚օթեւանի գիշեր մը, ուրտեղ սուրբին իրանէն կաթիլ մ՚արիւն կ՚իյնայ, որուն վրայ բարեպաշտ հաւատացեալք մատուռ մը կ՚շինեն, որ հետզհետէ շէնքեր աւելնալով՝ վանքի կ՚վերածուի, ուր Վարդավառի տօնին օրերը, թէ՛ մօտակայ գիւղացիք եւ թէ՛ հեռաւոր քաղաքէ եւ գիւղերէն բազմաթիւ ուխտաւորներ կուգային յուխտ եւ երկրպագութիւն. բայց այլեւայլ ժամանակներու մէջ պատահած երկրաշարժներէն, Դար ըսուած յիշեալ բլուրն այլեւայլ փոփոխութիւններ կրած ըլլալով, վանքն ալ աւերած եւ կրկին մատուռիկի մը ձեւն առած է, եւ եղած է այժմ ալ գիւղացւոց համար ուխտատեղի»:*

## 165/3. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[242]*

*Բալուի վիճակին մէջ Պաղին անուն գիւղին մօտերը կ՚գտնուի, յանուն Ս. Սարգսի կառուցուած այս վանքը, որուն կ՚ըսուի նաեւ Պաղինու Ս. Սարգիս: Այժմ ամայի եւ բոլորովին աւերակ, եւ հետզհետէ կ՚անցնի, եւ կարելի է անցած է նաեւ ի շարս շաբաթացեալ Հայ Վանօրէից (Բիւր., 1900, թ. 1019, էջ 1):*

## 166/4. Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔ[243]*

*Բալուի արեւմտեան հիւսիսային կողմը, երեք ժամու չափ հեռի, Արմուշատայ դաշտին մէջ, վերեւ յիշուած Պաղին եւ նաեւ Թիլ անուն գիւղերուն մօտ, բաւական ընդարձակ եւ բարձր դիրքի մը վրայ կառուցուած է Ս. Խաչի Վանքը, որուն ալ կ՚ըսուի, Պաղինու Ս. Խաչի Վանք, կամ Թլակայ Ս. Խաչ, հին մատենագրութեան մէջ ալ՝ «Թլայ Վանք», որուն հիմնարկութեան թուականը թէեւ աւանդութեամբ մինչեւ առաջին դարերուն կ՚հանեն, բայց մեծ հռչակ ունեցած է Տասներորդ դարուն մէջ եւ ետքերը: Ներկայիս մէջ մեծաւ մասամբ ամայի ու աւերակ, ու արգահատելի վիճակ մ՚ունի, եւ հետզհետէ ալ կ՚անցնի ի շարս շաբաթացեալ Հայ վանքերու. իր փոքրիկ բայց հոյակապ Տաճարը կանգուն կ՚մնայ: Վանքի տեղւոյն օդը շատ զով է եւ առողջարար է, ջուրը գեղեցիկ եւ քաղցրահամ, ունի բաւական մշակելի արտօրայք, պարտէզներ*

*ու այգիներ, զորս կ'մշակեն այժմ մօտակայ գիւղացիք, իրենց հաշուոյն, առանց վարձու եւ առանց փոխարինութեան[244]*:*

## 167/5. Ս. ՊՕՂՈՍԻ ՎԱՆՔ[245]*

*Բալուի Նըպչի անուն գիւղի մօտերն է, այս սրբատեղին, որուն համար շրջակայ գիւղացիք եւ մանաւանդ ծերերը, կ'ըսեն թէ ժամանակաւ վանք մ'էր չէն. ասոր համար իրենց հաստատ ապացոյցն է բազմաթիւ ուխտաւորաց երթեւեկութիւնը, որ զանազան կողմերէն կուգան աշնան ժամանակ: Սրբավայրին մէջ աղբիւր մ'ալ կայ զով եւ քաղցրահամ ջուրով, եւ որ նուիրուած է յանուն Ս. Պօղոսի: Ունի քանի մը հատ անշուք բայց օդաւէտ սենեակներ, մշակելի հող եւն.[1]:*

[1] Բալուի մէջ գտնուած յիշեալ հինգ վանքերէն զատ, անոր մօտերն ու շրջակաները, որչափ ծանօթ են մեզի, կ'գտնուին հետեւեալ ուխտատեղիներն ալ.

1. Ս. Մեսրոպայ Այրը. Բալուի մօտերը, վիմափոր եւ ընդարձակ քարայրներով կամ սենեակներով, ուխտատեղի մը բարեպաշտներուն համար, ունի իր շատ մօտը, կամ այրին դրան ապառաժ քարին վրայ 29-30 տողերէ բաղկացեալ բեւեռագիր արձանագրութիւն մը: Բարեպաշտք, շատ անգամ միշտ ուխտի կ'երթան, որոց վառած մոմերէն, քարայրին մին, Ս. Մեսրոպայ սենեակը կ'ըսեն, գրեթէ սեւցած է:
2. Հայպաթ. Ուխտատեղի մը Բալուի Զէթ անուն գիւղի մէջ, որուն շրջակայ ապառաժ քարերուն վրայ ձիու ոտքի հետքեր, եւ բեւեռագիր արձանագրութիւններ կան:
3. Ճգնաւորի Խայա. Կ'ըսեն նաեւ Ճգնաւորի քարայր, նոյնպէս ուխտատեղի մը Զէթ գիւղին մէջ, որ ահագին քար մ'է, մէջը փորուած եւ սենեկի կերպարանք առած, եւ ուխտաւորաց վառած բազմաթիւ մոմերու ծուխերէն սեւցած է:

# Դ. ՉՆՔՈՒՇԻ ՎԱՆՔԸ

## 168/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ՍԻՐԱՀԱՅԵԱՑ[246]*

*Չնքուշէն քառորդ ժամու չափ հեռի, հովտի մը բերանը կառուցուած է Ս. Աստուածածնի Վանքը Սիրահայեաց, շատ գեղեցիկ շինուածքով ու դիրքով: Ասկէ գրեթէ 60 տարիի չափ առաջ Տիարպէքիրցի Տ. Պաղտասար Վարդապետ, որ Վանահայրն ալ եղած է վանուցս, մեծամեծ նորոգութիւններ կատարելով վանքին մէջ, ի նորոյ շինած է նաեւ այժմեայ Տաճարը, որուն մեծ դրան ճակատին վրայ կ՚գտնուի հետեւեալ արձանագրութիւնը.*

*«ԹՎԻՆ ՓՐԿՉԻՆ 1841, ՀԱՆԴԵՐՁ ԲՈԼՈՐ ՇԻՆՈՒԱԾՈՎՔՆ Ի ՀԻՄԱՆՑ ՎԵՐՍՏԻՆ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ, ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆԱՒ ՍՈՒԼԹԱՆ ՄԷՃԻՏԻՆ, ԵՒ ԲԱԶՈՒՄ ՋԱՆԻՒՔ ԵՒ ՎԱՍՏԱԿՕՔ ՏԻԱՐՊԷՔԻՐՑԻ ՏԵԱՌՆ ԲԱՂԴԱՍԱՐ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ ԵՒ ՏԵՂԵԱՅՍ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ, ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ՈՒՍՏԵՐԱՑ ԵՒ ԴՍՏԵՐԱՑ ՉՆՔՈՒՇՈՅ ԵՒ ԱԴԻՇՈՅ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ, ՈՐՔ ՎԱՍՆ ՔԻՐԱՋԻ, ԱԻԱՋՈՅ ԵՒ ՓԱՅՏԻ ԿՐԵԼՈՅՆ ՅՈՅԺ ԱՇԽԱՏԵՑԱՆ, ԻՍԿ ՏՐՈՎՔ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԺՈՂՈՎՐԴՈՅ, ԵԿԱՄԸՏԻՑ ԵՒ ՄԵՐԱՅՆՈՑ, ԸՆԿԱԼՑԻ ԱՍՏՈՒԱԾ: ՍԱ Է ԴՈՒՌԸՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ, / ԱՍՏ ԲԱԶՄԵԱՑ ԵՐԿՆԻՑ ԱՐՔԱՅՆ, / ՈՐՔ ՀԱՒԱՏՈՎ ԴԻՄԵՆ ԵՒ ԳԱՆ, / ԳԸՏՑԵՆ ՃԱՐԱԿ ԴԵՂ ԹՈՂՈՒԹԵԱՆ: / ԵԹԷ ՈՉ ՏԷՐ ՇԻՆԷ ՉՏՈՒՆ, / Ի ՆԱՆԻՐ ՎԱՍՏԱԿԻՆ ՇԻՆՈՂՔ ՆՈՐԱ»:*

*Տիարպէքիրցի յիշեալ Պաղտասար վարդապետին գերեզմանը վանքի մէջն է. այս աշխատաւոր, բարեգործ եւ բարեպաշտ վարդապետին, տեղացիք «Մեծ Տէտէ» կ՚անուանեն, եւ ամէն Ս. Պատարագին ալ «Գոհութիւն եւ փառաբանութիւն» աղօթքին մէջ կ՚յիշատակեն, եւ իր գերեզմանին ալ ուխտի կ՚երթան: Ասկէց վերջը՝ 1881ին, Վանահայր եղած է վանուցս Մալաթիացի Մինաս Վարդապետ, որ սա եւս իր կարգին բաւական շէնքեր աւելցուցած է վանքին մէջ: Վանքն այժմ անշուք է եւ միաբանութիւն չունի, կ՚կառավարուի աշխարհական վանահայրով մը: Ունի բաւականին մշակելի հողեր՝ իր մօտերը, եւ երկու ջաղացքներ վանուցս սեփական, եւ քանի մը հատ ալ այգիներ բաւական հասութաբեր: Իր թեմերն են՝ Չնքուշ եւ Ադիշ: Վանքին մէջ, ժամանակին շատ խնամով կ՚պահպանուէին, բաւական կարեւոր հին ձեռագիրներ, բայց այժմ, ի՞նչ վիճակի մէջ եւ ո՞ւր են, կ՚մնան մեզ անծանօթ[247]*:*

## Ա. ԽԱՐԲԵՐԴԻ ՎԱՆՔԵՐ

*Բիւզ., Թ. տարի 20/Ժ.-2/ԺԱ, 1905, Հմր 2.772, էջ 1*

### 169/1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[248*]

*Խարբերդի Դատեմ գիւղի մօտերը կառուցուած է, եւ կ՚ըսուի նաեւ «Դատեմու Ս. Աստուածածնի վանք»: Նախնական հիմնարկութիւնը, անհաստատ աւանդութեամբ մը, կ՚տրուի Թադէոս առաքելոյն: Վանքին Տաճարը քարաշէն է, կամարակապ գմբէթաւոր, թէեւ մինչեւ ցայսօր կանգուն մնացած է, բայց հինցած ու մեծ նորոգութեան կարօտ: Միւս շէնքերը բոլորովին աւերակ եղած են եւ այժմ նստելու տեղ անգամ չի գտնուիր, կ՚ըսեն, եւ կ՚աւելցնեն նաեւ թէ քիչ ժամանակէն ալ կ՚անցնի վանքս ի շարս շաբաթացեալ Վանորէից: Ունի իրեն սեփական բաւականին մշակելի հողեր, արտորայք, որք կ՚գտնուին վանքի քովերն եւ Դատեմ գիւղի մէջ, որոց վարձքերը ժամանակին Խարբերդի Առաջնորդարանին յատկացուած էին, այժմ ի՛նչպէս կ՚տնօրինուին, տեղեկութիւն մը չունինք[249*]:*

### 170/* 2. ԱԲԴԼՄԵՍԻՀԻ ՎԱՆՔ – ՋԱՐԴԱՐԻՉԻ ՎԱՆՔ[250*]

*Խարբերդի Իջմէ եւ Ջարդարիչ անուն գիւղերու մօտերը կառուցուած է «Աբդլմեսիհի» վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Ջարդարիչի վանք»՝ գիւղին անունով: Թէեւ վանքի Տաճարը Ս. Աբդլմեսիհի անունով է, բայց, ըստ մեզ յանուն Ս. Աստուածածնի նուիրուած այս վանքն ալ ամայի վիճակին հասնելու վրայ է: Այս վանքը ժամանակին բաւական նշանաւոր եղած է կ՚ըսուի: Մեք իր անուան յիշատակութեան պատահած ենք նախ՝ Շուշէ Ս. Գէորգայ Խուլէ վանքին մէջ գտնուած Սուրբ Նշխարաց համար 1843 թուականին գրուած վկայական կոնդակին մէջ. «...Կիրակոս եպիսկոպոսն Արաբգերու քաղաքին է. Մատաթեայ եպիսկոպոս Մելիտինու. Ը. եւ քորեպիսկոպոսն Աստուածածնայ եւ Աբդլմսեհի երկուց նորաշէն վանուց, որ հրամանաւ Միլքան Ամիրային, նստին Խարբերդու դաշտն, եւ միայն խրատեն գժողովուրդն»: Երկրորդ՝ հետեւեալ յիշատակարանն ունինք ի ձեռին, որ գրուած է Տասնեւվեցերորդ դարուն գրչագրուած Ագաթանգեղոսի յիշատակարանին մէջ. «Յիշեսջիք զստացող Սուրբ Գրոցս Աստուածատուր Եպիսկոպոսն*

*եւ բանի սպասաւորն, որ կախեալ կամ ի սէր Աստուածային բանին. գրեցաւ Սուրբ Գիրքս ի դուռն Սուրբ Աբդըլմսա, ի թվին ՌԽԴ. (1595) ամին...» (տե՛ս Տաշեան ցուցակ, եր. 750):*

*Վանքի այգիներն ու պարտէզները, ու մաս մ՚ալ հողերը, մինչեւ ցարդ վանքի տրամադրութեան տակ կ՚մնան, բայց հողերուն մեծ մասին համար կ՚ըսուի թէ մօտակայ գիւղացիներուն ձեռքն անցած է (Բիւզ․, 1900, թ․ 1127, էջ 1)[251]*:*

## 171/3. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[252]*

*Խարբերդի Մէզրէէն մէկ ժամու չափ հեռու, Սորսօրու կամ Սիւրսիւրի անուն գիւղին մօտերը կ՚գտնուի Ս. Գէորգայ վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Սորսորու վանք» կամ «Սորսորու Ս. Գէորգայ վանք»: Այս վանքն ալ ժամանակէ մ՚ի վեր տարտամ ու անորոշ վիճակ մ՚ունի, թէեւ կան քանի մը սենեակներ ուխտաւորաց յատուկ, բայց տձեւ, մանաւանդ որ անբնակելի դարձած են: Վանքի տաճարն, որ նուիրուած է յանուն Ս. Գէորգայ, շատ փոքրիկ եւ անշուք է, շատ մթին ու խոնաւ: Ունի նաեւ գետնափոր եկեղեցի մ՚ալ, բայց ո՛ր սուրբին անուան նուիրուած է, անծանօթ կ՚մնայ մեզի: Վանուցս պատի դրսի մեծ դրան ճակատն արձանագրուած է հետեւեալ յիշատակագրութիւնն՝ որուն ինչ ինչ տեղերն անընթեռնլի եղած են. «...ԱՄԵՆ ԱՆԵՂԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՆՄԱՀԻՆ ՇԻՆԵՑԱՒ ԴՈՒՌՍ Ի ԹՎԻՆ Ջ.Կ.Ա. (1512) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՈՎ ԿԱՐԴԱՔ, ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՑԷՔ ԱՇԽԱՏՈՂԱՑ»:*

*Սիւրսիւրիի Ս. Գէորգայ այս վանքը, ջրալից հողերով, կալուածներով, ընդարձակ պարտէզներով, ծառաստաններով, Խարբերդի միւս վանքերէն աւելի հարուստ է, կրնայ հարիւր ոսկիի չափ արդիւնաւորութիւն մ՚ունենալ, եթէ սա ու նա ճարպիկ վարդապետ մը կամ մօտակայ գիւղացիք ձգեն, զորս կը շահագործեն, կ՚ըսուի ի շահ եւ յօգուտ իրենց անձնական քսակին: Վանքին բաւական թանկագին անօթներն ալ, եւ գրչագիր մատեանները ասոր ու անոր քով կ՚պահուին եղեր: 1892 թուականին սոյն վանքը նորոգել ուզած եւ սկսած ալ էր, Խարբերդցի Տէր Ներսէս քհն. Պալթայեան, բայց աւարտած չէ, եւ ձգած է այնպէս, ինչպէս որ էր: Վանքի մօտակայ դրացի գիւղերն են, Սիւրսիւրի, Եղեգի, Քէսրիկ եւ Հիւսէյնիկ, որոցմէ ոմանք իրենց տուները շինած են գրեթէ վանքի պատին կից: Գիւղերու եւ վանքի կողմերը ջրի առատութեամբ շատ նշանաւոր են, բաւական է որ կանգուն մը փորուի, եւ աւասիկ ուզած տեղէդ ջուր մը, աղբիւր մը կ՚պոռթկայ[253]*:*

## 172/* 4. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[254]*

*Խարբերդի Մէզրէէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ, Գուզովայի մէջ, Ղուլէ անուն գիւղի մօտերը կառուցուած է վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Խուլավանք» կամ «Ղուլէի վանք Ս. Գէորգայ», աւելի հին ժամանակներ ալ կ՚ըսուէր «Մովսեսանոց վանք» կամ «Մովսիսավանք» եւ կամ «Մովնոցի վանք»: Իր ժամանակին նշանաւոր վանք մը եղած է, հասուցած ըլլալով երեւելի եւ նշանաւոր Հայ եկեղեցականներ: Հիմնարկութեան թուականը ծանօթ չէ: Վանքին տաճարը վերջէն նուիրուած է յանուն Ս. Գէորգայ, որ բաւական կոկիկ է. հին ժամանակներ եւ մանաւանդ 1255 թուականին, Տ. Միքայէլ եպիսկոպոսի ձեռօք եղած նորոգութիւններէն զատ, նորոգութիւն մ՚ալ տեսած է 1839 թուականին:*

*Վանքը շրջապատուած է այլ եւ այլ պարտէզներով ու ծառերով, ունի իր մէջը 15ի չափ սենեակներ, եւ դուրսը բաւական մշակելի արտորայք, բայց ի՞նչպէս կ՚կառավարուին այժմ, տեղեկութիւն մը չունինք: Իր մօտը կ՚գտնուի գերեզմանատուն մը, որուն մէջ կան բարձրադիր բաւականին Խաչքարեր, որք կանգնուած պիտի ըլլան ի հարկէ, վանուցս երեւելի միաբան եկեղեցական անձնաւորութեանց ի յիշատակ, որոցմէ միոյն վրայ գրուած է. «ԹՈՒԱԿԱՆ Չ. Գ. [1254] ՅԻՇԱՏԱԿ Է ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ»: Եւ միւսին վրայ գրուած է. «Չ. Հ. Գ. [1324] ՅԻՇԱՏԱԿ Է ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ»: Մնացեալներուն վրայի յիշատակարանները, եթէ կան իսկ, մեք չունինք ի ձեռին: Նոյն գերեզմանատան քով աղբիւր մը կայ, որուն վրայի քարին յիշատակարանն է հետեւեալը. «ԿԱՄԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՒԱՍՏ ՍԻՄԷՕՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ Ս. ԳԷՈՐԳԱՅ ՇԻՆԵՑԱՔ ՋԱՂԲԻՒՐՍ»: Աղբիւրին քով գերեզման մը, որուն տապանաքարին վրայ գրուած է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ Տ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԳՐՈՑ ԱՇԱԿԵՐՏԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՐԻՍՏՈՍ... ԹՎ. Չ. [1251]»: Ս. Գէորգայ այս վանքիս նշանաւորութիւնն յայտնուեցաւ այնու նաեւ, թէ 1839ին նորոգութեան ժամանակ տուփով մը մասունք եւ Ս. Ներսէս Շնորհալիի կնքով կնքուած փոքրիկ շիշով մը Ս. Միւռոն եւ Գէորգ, Միքայէլ, Կիրակոս անուն եպիսկոպոսներու կնքով ալ մագաղաթեայ ուրիշ յիշատակագիր մը գտնուեցաւ: Չենք գիտեր, եւ տեղեկութիւն ալ չունինք՝ թէ պատուով ու յարգով կ՚պահուի՞ն այդ Ս. Միւռոնն իր շիշով եւ նշխարքն իր ամանով, եթէ ոչ անցած է այնպիսեաց ձեռքը, որոց քսակն աւելի յարգի եւ պատուով է իրենց համար:*

*Այս վանքի մասին ի ձեռին ունինք հետեւեալ յիշատակարանը միայն, որ քաղուած է ԺԳ. դարուն գրչագրուած եւ նոյն վանքի սեփական միակ Աւետարանի մը յիշատակարաններու մէջէն. «Յիշատակ է [այս] Սուրբ Աւետարանս Զմշկածէկցի Գէորգ Եպիսկոպոսիս, որ դաղ-*

*դաղեալ ձեռաւք գրեցի անարժան առաջնորդ Սուրբ Գէորգայ գերեզմանի Խուլավանից, որ զարդարել է հանգուցեալ Միքայէլ Եպիսկոպոսն: [Վասն երկիւղին Լավանկ-Թամուրին] Սուրբ Գերեզմանիս միաբանքն կային [Թագուցեալ են]՝ ի Ծով [դղեակ], եւ ի վանս Խարտիչարի, եւ Ս. Կարապետին, եւ Կարմիր վանուց: Եւ սիրով յորդորեալ ամենայն միաբանաց, կրկին ժողովեցին ինն միաբանս, եւ պայծառացուցաք Սուրբ Աթոռս. եւ երկու ագարակ գնեցաք գիւղին մերձ. եւ դաշտն. մեծ ագարակն հարիւր փարայ եւ միւսն՝ քսան, իմ հալալ վաստակէս, եւ բաց ի վանքիս մերձակայ հաւղէ, որ ածեալ քար դրաք ի ներքոյ վանացս ութն րոպէ, եւ հիւսիսային ճանապարհիւ [սուտ] Լոյսալի գիւղն, որ հեռի է կէս ժամ, եւ անտի [հողադաշտ լեռն է յարեւմտից կուսէ, դէպ ի հարաւ՝ կէս ժամ, անտի] յարեւմուտս՝ կէս ժամ, մինչեւ ի ճանապարհն Խարբերդու, եւ ճանապարհիւ ուղիղ դէպ յարեւմուտս եւ ի գլուխ գեղին՝ ածեալ քարն, հանց ջրով եւ հողով, որ բազում աշխատանաւք ստացայ... ...գրեցաւ ի Թուին Հայոց Պ.Ղ.Բ. (1443)». Թորոս Աղբար, Բ., էջ 349-50[255]*:*

## 173/5. Ս. ՆՇԱՆԱՑ ՎԱՆՔ[256]*

*Խարբերդէն ութ ժամու չափ հեռի, Տիարպէքիր երթալու ճամբուն վրայ, Կէօլճիւք գիւղի Ծովք անուն չէնին վրայ կառուցուած էր վանքս, որուն կ՚ըսուէր նաեւ «Ս. Նշանայ Վանք Ծովքի», որ ժամանակին նշանաւոր էր, իսկ այժմ փլած ու բոլորովին աւերակ դառնալով, անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից:*

*Վանուցս փլած Տաճարի պատին քովերը կ՚երեւին այժմ ալ շատ մը գերեզմանաքարեր, որոնք ի հարկէ վանքին մէջ սնած ու զարգացած եկեղեցական եւ այլ անձանց գերեզմանաքարերը պիտի ըլլան: Միակ Խաչքարի մը վրայ կ՚կարդացուի եղեր հետեւեալ Թերի յիշատակարանը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ, ԱՄԸՐ...»:*

## 174/*6. Ս. ՄԱՄԱՍԱՑ ՎԱՆՔ[257]*

*Խարբերդի Խազրիկ անուն գիւղին քովը, գրէթէ անոր կից բլուրի մը վրայ կառուցուած էր այս վանքս ալ, բայց ի վաղուց անցած էր ի շարս շաբաթացեալ Վանորէից, որուն միայն մնացորդները կ՚տեսնուէին, եւ բարեպաշտք ալ միշտ ուխտի կ՚երթային հոն իբր ուխտատեղի[1]:*

---

[1] Հին մատենագրութեանց մէջ, Խարբերդի մէջ յանուն «Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանք» մը եւս կ՚յիշուի, բայց մեք սոյն վանքի նկատմամբ ո՚եւէ ծանօթութիւն եւ տեղեկութիւն չկրցանք ձեռք անցընել: Արդեօք «Բարձրահայեաց Ս. Աստուածածին» ըսուածը վերեւ յիշուած թիւ 1

*Վերջին ժամանակներս, սոյն վանքը Թէեւ վերստին կանգնել ուզեց նոյն գիւղէն Յովհան Եազճեան բարեպաշտն, եւ բաւական գումարներ ալ ծախսեց, բայց գործը կիսատ կ՚մնայ տակաւին*[258]*:*

---

Դատեմու Ս. Աստուածածնի վա՞նքն է, թէ ոչ, այդ ալ զատ վանք մ՚է, այս մասին Խարբերդու վանասէր-բանասէրներու հետաքրքրութիւնը կ՚հրաւիրենք: Կամ Արղընիի «Բարձրահայեաց Ս. Աստուածածնի» վանքը ժամանակին Խարբերդի նահանգին մէ՞ջն էր արդեօք, որ հին մատենագիրներ ալ այնպէս արձանագրեցին:

# Բ. ԱՐԱԲԿԻՐԻ ԵՒ ԱԿՆԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., Ժ. տարի, 1905, Թ. 2.806 (29/ԺԱ.-12/ԺԲ), էջ 1*

## 175/1. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ

*Արաբկիրէն կէս ժամու չափ հեռու, դէպի արեւմտեան հիւսիս, Ղօզլուգ անուն գետին գրեթէ եզերքը կառուցուած էր յանուն Ս. Սարգսի այս վանքը, որ ի վաղուց փլփլած եւ անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից: Միայն վանքի հիմերը կանգուն կ՚մնան, եւ եղած է ուխտատեղի, ուր Ս. Սարգսի տօնին օրը Արաբկիրի բարեպաշտ ժողովուրդն ուխտի կ՚երթայ, տեղւոյն նուիրելու համար իր աղօթքը, խունկն ու մոմը (Բիւզ., 1900, Թ. 1019, էջ 1):*

## 176/*2. ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[259]*

*Արաբկիրի մօտիկը Շեբիկ անուն գիւղի քովերը, անուանի Ոսկէ գետակին բերանը, բլրակի մը ստորոտը շինուած էր, յանուն Ս. Փիլիպպոս Առաքելոյ սոյն վանքն ալ, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից, եւ որուն այժմ աւերակ քարակոյտերը միայն կ՚երեւին, եւ եղած է այս վանքն ալ ուխտատեղի, ուր բարեպաշտ ժողովուրդն ամէն տարի կ՚երթայ հոն, իր ուխտը կատարելու եւ իր մոմը նուիրելու համար:*

*Առաքելական այս ուխտատեղին, իր շրջականերով ի միասին, կ՚կոչուի Խարաբ բազար, թէ ինչո՞ւ, ասոր եւ վանքի մասին, հետեւեալ աւանդութիւնը կ՚շրջի, այդ կողմի ժողովրդեան բերնին մէջ: «Փիլիպպոս Առաքեալն իր քրոջ հետ կուգայ Արաբկիր՝ Քրիստոնէութիւնը քարոզելու համար հոն, եւ քիչ ժամանակի մէջ կ՚յաջողի իր պաշտօնին եւ, Քրիստոնէութիւնը կ՚տարածուի այդ կողմերը: Առաքեալը քարոզութեան համար ժամանակ մ՚ալ Երզնկայի կողմերը երթալ կ՚ուզէ, խոստանալով Արաբկիրցիներուն, թէ քառասուն օրէն կ՚վերադառնայ, եւ սակայն խոստացած ժամանակին չկրնար գալուն՝ նորահաւատները կ՚սկսին կասկածիլ, եւ այնպէս կ՚կարծեն, որ խաբեբայի մը հետ է իրենց գործը, եւ հետզհետէ տարակոյսը շատնալով իրենց մէջ նորածին հաւատքին հիմը կ՚խախտի, եւ Առաքեալին քոյրը ծառէ մը կ՚կախեն: Երբ Առաքեալը կ՚հասնի Արաբկիր, եւ կ՚լսէ իր քրոջը տխուր վախճանը, կ՚վրդովի, եւ սրտի ցաւէն կ՚անիծէ ժողովուրդը, ու քաղաքն ալ անմիջապէս քանդուելով խարաբ կ՚ըլլայ. եւ ա՚լ չուզելով մնալ այդ տեղերը,*

*հեռանալ կ՚ուզէ, եւ գետի ջուրին վրայ նետելով իր վերարկուն, վրան կ՚նստի միւս կողմը անցնելու համար, բայց չի կրնար, որովհետեւ փոխանակ Քրիստոնէական ներողամտութեան՝ անէծք կարդացած էր, եւ այդ սխալման պատիժը կ՚կրէր: Ասոր վրայ մեծ տրտմութեամբ մը վերարկուն ջուրէն կ՚քաշէ, եւ գետին եզերքը նստելով կ՚սկսի զղջման արտասուքներ թափել: Աստուած կ՚լսէ Առաքեալին զղջումը եւ կ՚ներէ, որուն վրայ կ՚խնդրէ Աստուծմէ, որ հոն ըլլայ իր ապաշխարութեան տեղն ու գերեզմանը. կ՚ընդունուի այս խնդիրքը: Երբ Առաքեալը կ՚վախճանի, կ՚թաղուի ճիշդ այն տեղն, ուր այսօր ցոյց կուտան Փիլիպպոս Առաքեալի գերեզման»: Երբեմն վանք եւ այժմ ուխտատեղին, ինչպէս ըսինք, Խարաբ բազարի մէջ է: Իսկ իր քրոջ գերեզմանն ալ Օճախ անուն գիւղի մէջ, որ ծանօթ է Ղարը անունով:*

## 177/3. ՎԱՂՇԷՆՈՒ ՎԱՆՔ – Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ[260*]

*Արաբկիրի եւ Ակնայ սահմանաց միջեւ, առաջինէն եօթը ժամ, երկրորդէն տասն եւ երկու ժամու չափ հեռու, դէպ ի հարաւ, Վաղշէն անուն գիւղին մէջ Քարուկիր անուանեալ տեղւոյն վրայ կառուցուած էր: Վաղշէն գիւղն այսօր գրեթէ 120 տուներէ կ՚բաղկանայ, որոցմէ 40 տունը միայն Հայ են: Վաղշէնն, որ Արաբկիրի վիճակին Առաջնորդական հոգեւոր իրաւասութեան թեմերէն է, ունի այժմ գեղեցիկ ու պայծառ, բայց փոքր եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածնի, զոր ի հիմանէ վերաշինուած է 1834 թուականին: Այս եկեղեցւոյ տեղւոյն վրայ կամ քովերը կառուցուած էր կ՚կարծուի Վաղշէնի վանքը, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Վանորէից:*

*Վաղշէն գիւղն եւ իր մօտակայ շրջականերն հին ժամանակներ ճոխ եւ լի էին Հայ վանքերով (10-12 վանքեր). Վաղշէն ըսելու տեղ գիւղին՝ եթէ Վանքշէն ըսուէր, կարծես աւելի յարմար անուն մը տրուած կ՚ըլլար, բայց ներկայիս մէջ մի միայն, ինչպէս մեր յիշած Ս. Թորոս, եւ հինգ կամ վեց ալ ուրիշ անուամբ վանքերու մնացորդները՝ հին աւերակներն ու հողակոյտերը կ՚երեւին մինչեւ ցայսօր, եւ անուններն ալ կ՚յիշուին ժողովրդեան մէջ յականէ յանուանէ, որք են.*

*1. Սուրբիյան վանք, կամ Ս. Յոհան, ձորաձեւ դաշտի մը վրայ, ի վաղուց հանգած, եւ տեղն ալ մշակելի արտի վերածուած է (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)[261*]:*

*2. Պօլենակ վանք, կամ աւելի ճիշդը «Քառասուն մանկունքի վանք»:*

*3. Խոնրկտուրի վանք, որ երբեմն ընդարձակ, անուանի եւ նշանաւոր վանք մ՚է եղեր, այժմ իր տաճարին բեմը միայն կ՚երեւի կ՚ըսեն:*

*4. Ս. Թորոս, կամ Ս. Թէոդորոսի վանք, քարուկիր անուանեալ տեղւոյն վրայ, որուն աւերակ հիմերը կ'երեւին եղեր:*

*5. Ս. Գէորգայ վանք, Հասկընի անուն գիւղին մօտերը*[262*]*:*

*6. Ս. Եղիայի վանք, փոքր բլրակի մը վրայ, եւ ուրիշներ, որոց անունները ծանօթ չեն (Բիւզ., 1900, թ. 1043, էջ 1):*

## 178/*4. ԱՐԱԿԱՅ ՎԱՆՔ[263*]

*Ակնէն վեց ժամ, եւ Տիվրիկէն երեք ժամու չափ հեռու, Արակայ անուն գիւղին մօտերը, բարձրադիր լերան մը վրայ կառուցուած էր Արակայ վանքը, որուն ճիշդ անունն է Նարեկայ վանք: Հիմնարկութիւնն եղած կ'համարուի ԺԱ. դարու սկիզբները: 1021 թուականին Վանայ Նարեկայ Ս. Սանդուխտի վանուց կրօնաւոր միաբաններէն բաւական անձինք, իրենց հետ առնելով Գրիգոր Նարեկացւոյ նշխարներէն մաս մը, կուգան ի Սըվազ, եւ անկէց ելնելով Ակնայ եւ Տիվրիկի միջեւ, այդ տեղ կ'ամփոփեն սրբոյն նշխարներն եւ կ'շինեն եկեղեցի ու վանք մը, եւ կ'նուիրեն զայն յանուն Ս. Գրիգորի Նարեկացւոյ: Վանքի եկեղեցին հազիւ ութ կանգուն երկայնութիւն եւ հինգ կանգուն լայնութիւն ունէր, փոքր խորան մը խաչքարերով եւ քանդակեալ պատկերներով: Եկեղեցւոյ առջեւը գաւիթ մը չորս կամ հինգ քառակուսի կանգուն տարածութեամբ: Վանքի ուխտի օրերն էին ժամանակին, Ս. Լուսաւորչայ, Վարդավառի, եւ Ս. Աստուածածնի տօներուն, այժմ միայն Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին օրը ժողովուրդը բազմութեամբ ուխտի կ'երթայ: Ակնցի Միսաք ամիրան իր ժամանակին, բաւական նորոգութիւններ ըրած է թէ՛ վանքին եւ թէ՛ տաճարին մէջ: Այժմ վանքը վանական վիճակէն ելած եւ եղած է մատուռ մը կամ ուխտատեղի, թէեւ Տիվրիկցիք իրենց կ'յատկացնեն եւ Ակնցիք իրենց, եւ սակայն երկուքն ալ չեն կրնար սեփականել, որովհետեւ Արակայ գիւղացիք սեփականած են տեղը:*

## 179/*5. Ս. ՓՐԿՉԱՅ ՎԱՆՔ[264*]

*Ակնէն երեք ժամու չափ հեռու կ'գտնուի Լիճք անուն գիւղը, այս գիւղէն ալ երկու ժամու չափ հեռու, բարձր եւ ձիւնապատ լերան մը կողքին վրայ կառուցուած է Ս. Փրկչայ վանքը, որուն քով «Ս. Երեւումն» անունով մատուռ մ'ալ ըլլալուն, վանքը կ'կոչուի նաեւ «Ս. Երեւման վանք» կամ «Ս. Երեւման Խաչի վանք»: Դիրքը բարձր է եւ հիանալի, հովասուն. ունի անուշ, պաղորակ եւ զովասուն ջուր. շէնքերը թէեւ մեծաշէն բայց հնացած են. Վանքի Տաճարն ալ բաւական գեղեցիկ շէնք մ'է. ծանրագին զգեստներն ու անօթները կ'պահուին եղեր*

Լիճք գիւղին մէջ, որովհետեւ վանահայր եւ միաբան վարդապետներ չունի եւ գաւառական վարչութեան հսկողութեան ներքեւ է: Ունի իր սեփական քանի չափ մշակելի արտորայք, եւ Կ. Պոլսոյ մէջ ալ երեք խանութներ: Այս վանքի մասին հին ձեռագիրներու միոյն մէջ հետեւեալ յիշատակարանին պատահած ենք. «Ի գերահռչակ Անապատիս որ Փրկչի վանք կոչի, ի դուռըս Ս. Փրկչի, Ս. Երեւմանս եւ Ս. Շամունեայ, եւ Աստուածընկալ Ս. Նշանիս, որ աստ կան հաւաքեալ»[265*]:

## 180/*6. ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔԻ ՎԱՆՔ

Ակնայ Բինկեան գիւղի մօտերը, գրեթէ քառորդ ժամ հեռաւորութեամբ, Եփրատ գետի քովիկը, մեծադիր բլուրի մը վրայ կառուցուած է վանքս, եւ այժմ ալ կանգուն կ'մնայ եւ կ'ըսուի նաեւ «Երից Մանկանց Վանք»: Վերջին տարիներս, 1902ին նորոգութիւն մ'ալ տեսաւ: Իր այժմեայ միաբան ու վանական վիճակին վրայ տեղեկութիւն մը չկրցանք ստանալ. գուցէ այս վանքն ալ կ'կառավարուի, գաւառական վարչութեան հսկողութեան ներքեւ[266*]:

## 181/*7. ԿՈԶՄՈՍԻ ԵՒ ԴԱՄԻԱՆՈՍԻ ՎԱՆՔ

Ակնայ Կառուշլայ անուն գիւղին մէկ կողմը եւ Եփրատ գետին եզերքը, ժայռի մը վրայ կառուցուած է յանուն Ս. Կոզմոսի եւ Դամիանոսի այս վանքը, որուն կ'ըսուի նաեւ «Անարծաթ Բժիշկի վանք», որ ի վաղուց ամայի մնացած ըլլալով, այժմ եղած է ուխտատեղի: Այդ Մատուռն ունի երեք փոքրիկ խորաններ. Մատուռի տանիքին վրայ ալ կայ փոքրիկ խորան մը, ուր Ս. Պատարագ կ'մատուցուի ամէն Շաբաթ, Կառուշլայ գիւղին քահանային կողմէ, ըստ խնդրանաց բարեպաշտներու: Մատրան դիմացն երկու սենեակներ կան միայն ուխտաւորաց յատուկ: Շատ մը Խաչքարեր ու ժայռեր շրջապատած են այս վայրը, եւ Եփրատ գետն ալ Մատրան տակի ժայռը համբուրելով կ'անցնի դէպ ի յարեւելս: Մատրան արդիւնքն այժմ իրենց կ'սեփականեն Կառուշլայ գիւղացիք եւ իրենց քահանան[267*]:

## 182/* 8. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՎԱՆՔ[268*]

Ակնէն մէկ ժամու չափ հեռու, Արեգի անուն Թաղին վրայ կառուցուած էր Ս. Լուսաւորչայ այս վանքը, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Վանորէից, եւ որուն այժմ կերեւին հողակոյտ եւ փլատակները միայն, ունի իրեն սեփական կալուածներ՝ արտեր, պարտէզներ եւ տուն մը: «Եթէ շինող ձեռք մ'ըլլայ, կարելի է այս վանքին գո-

*յութիւնը պահպանել»*[1]*, կ՚ըսէ Մալաթիոյ այժմեայ բարեջան եւ ուսումնասէր առաջնորդ Տ. Գէորգ Վրդ. Ասլանեան*[269]**:*

[1] Ակնայ մէջ կան նաեւ հետեւեալ ուխտատեղիներն ալ. 1. Մարն-Տնիկ, Ծարազի մօտ: 2. Ս. Սարգիս, որուն հայ-հոռոմ վանք ալ կ՚ըսուի: 3. Ս. Յակոբ, քաղաքին վրայ, Ջէնճիրլի անուն քարին քով: 4. Ս. Թալուրաս: Ակնայ արուարձանաց մէջ ալ՝ հետեւեալները. 1. Ս. Յակոբ, 2. Ներսէս Ծնորհալի, 3. Չարխափան, 4. Ս. Թորոս, 5. Ս. Նիկողոս, ուխտատեղիներ՝ որոց միշտ ուխտի կ՚դիմեն բարեպաշտ հաւատացեալները:

## Գ. ՄԱԼԱԹԻԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., 1906, թիւ 2.975 (19/Զ-2/Է), էջ 1*

### 183/1. Ս. ՓՐԿՉԱՅ ՎԱՆՔ[270]*

*Մալաթիայէն մէկ ժամու չափ հեռու, Օրտուզի անուն գիւղի մօտերը, բլուրի մը վրայ կառուցուած է «Ս. Փրկչայ Վանք»ը, որուն կ՚ըսուի նաեւ գիւղին անունով, «Օրտուզուի Վանք»: Կ՚ըսեն թէ ժամանակին վանքին մէջ քառասուն խորաններ կային, բոլորն ալ Թադէոս Առաքեալին ձեռքովն օծուած: Այժմ յունական ճարտարապետութեան ձեւով շինուած քարաշէն եկեղեցի մ՚ունի, բայց խարխլած ու նորոգութեան կարօտ: Մալաթիոյ Առաջնորդական նախորդ Տեղապահ Տ. Խաչատուր Վրդ., օժանդակութեամբ Յարութիւն էֆ. Ոսկերիչեանի, ասկէց առաջ ձեռնարկած էր թէ՛ եկեղեցին եւ թէ՛ վանքը նորոգելու, բայց թէ ո՞ր աստիճան յաջողեցաւ, տեղեկութիւն չունինք[271]*: Ս. Փրկչայ այս վանքը գլխաւոր ուխտատեղին է Մալաթիացիներուն: Վանքին մէջ կան 20-25 սենեակներ, բաւականին գեղեցիկ ու ճաշակաւոր շինուած: Միաբան վարդապետներ չունի, բայց Մալաթիոյ Առաջնորդները միշտ կ՚այցելեն վանքը: Այս վանքին մէջ կային, կ՚ըսուի, բաւական թուով գրչագիր եկեղեցական հին մատեաններ, որք ասոր անոր ձեռքն անցնելով, առ այժմ մնացած են միայն՝ Աւետարան, Յայսմաւուրք, Շարական եւ Ժամագիրք մը, չորս կտոր գրչագիր գրեանք[272]*:*

### 184/2. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ[273]*

*Մալաթիայէն երկու եւ վերեւ յիշուած Ս. Փրկչայ վանքէն ալ կէս ժամու չափ հեռու, Պէյտաղի ըսուած ապառաժուտ բլուրի մը կուրծքին վրայ կառուցուած է Ս. Լուսաւորչի այս վանքը, որուն բուն հիմնարկութեան սկզբնաւորութեան թուականը յայտնի չէ, բայց տեղացի ժողովուրդը, աւանդութեամբ, մինչեւ Չորրորդ դար կ՚հանէ. կ՚ըսեն թէ ժամանակակից է Ս. Գրիգոր Լուսաւորչին, միայն թէ մեր ձեռքը, վանքի մեծ դրան շինութեան մասին հետեւեալ յիշատակարանը կ՚գտնուի. «ՇԻՆԵՑԱՒ ԴՈՒՌՍ ՄԱԼԱԹԻՈՅ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՈՒՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ, ՁԵՌԱՄԲ ՍԻՄԷՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, Ի ԹՎԻՆ ՊՁԸ. (1439)»: Վանքին անունն հռչակաւոր է, դիրքը՝ բարձրահայեաց, տեսարանն հրապուրիչ եւ ակնապարար, օդը մաքուր եւ առողջարար, աղբիւր մ՚ունի ներսը, բակին մէջ, ականակիտ, զով եւ բարեհամ ջրով: Այս աղբիւրը շինել տուած*

*է Ս. Երուսաղէմի նախկին միաբան եւ ապա Մալաթիոյ Առաջնորդ հանգուցեալ Սահակ Եպս. (=Մկրտիչ Վրդ.) ի յիշատակ իր ընտանեաց: Վանքի տաճարը փոքրիկ է, եւ անշուք, քիչ մ՚ալ նորոգութեան կարօտ: Ունի բաւականին լաւ կահաւորուած Առաջնորդարան մը, միաբանից եւ ուխտաւորաց յատուկ, պարզ շինուած երեսուն հատի չափ ալ սենեակներ: Մալաթիոյ Առաջնորդք ամառն այս վանքին մէջ կ՚մնան, ինչպէս նաեւ Մալաթիոյ տեղացի երեւելիք եւ ժողովուրդն ալ ստէպ հոս կ՚անցընեն ամառնային երեք ամիսներն իբրեւ օդափոխութիւն: Վանքն ունի իրեն սեփականութիւն շատ մը արօտատեղիներ, եւ բաւական մշակելի հողեր ու արտօրայք, որոնք մասնաւոր անձերու վարձու կ՚տրուին ու կ՚մշակուին:*

*1899 թուականին Որբանոց մը բացուցեաւ վանքին մէջ, ուր կը պատսպարուէին երեսունի չափ որբեր: Ազգային Պատրիարքարանը սոյն որբանոցին ծախուց ի նպաստ, ամսեկան 15 ոսկի յատկացուցած է, յանուն Մոսկուայի Որբախնամներուն: Վանքէն դուրս Գօզլուգ ըսուած ջրի առուակին վայրը շատ գեղեցիկ է եւ զբօսատեղի, ուռենիներով պաշարուած, եւ շուրջն ալ անտառակ մը՝ ընկուզենիներով լեցուն: Մալաթիայէն դէպ ի վանք, ճանապարհին վրայ կ՚գտնուի Ին տէրէսի կոչուած ձորը, ուր այր մը կայ, եւ անոր մէջ աղբիւր մը: Այրին վրայ եղած կամուրջը տեղացիք կ՚անուանեն Մազէ կամուրջ: Քիչ մը վարը կ՚երեւի ուրիշ այր մ՚ալ, որուն մէկ պատին վրայ քանդակուած է, կ՚ըսուի, Ս. Գրիգոր Լուսաւորչի զգեստաւորեալ մէկ պատկերը: Ըստ աւանդութեան տեղացի ժողովրդեան, իբր թէ Լուսաւորիչն հոս պահուըտած է եղեր: Այս վանքի մասին, մեր ձեռքը կ՚գտնուի միայն սա յիշատակարանը, որ ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Գանձարան անուն ձեռագրէն քաղուած է. «Գրեալ ի վանս Սուրբ Գրիգորի Մելիտինոյ [Հայոց] ի թվին [Հայոց] ՊՁԷ. (1438)... Յիշեցէ՛ք զիս՝ զԴաւիթ աբեղայս, եւ զհայրն իմ զԻսահակ քահանայն... եւ զԿոստանդին աւագերէցն, եւ զաստուածատուր զաւակսն իւր զԹորոս քահանայն, եւ զՍտեփաննոս Հայրապետն, [որ] այժմ խնամատար եւ վերակացու են Սուրբ ուխտիս...» (Բիւզ., 1900, թ. 1066, էջ 1)[274]*:*

## 185/3. ԱՆԱՐԾԱԹ ԲԺՇԿԻ ՎԱՆՔ[275]*

*Մալաթիայէն երկու ժամու չափ հեռու, Ս. Փրկչի եւ Ս. Լուսաւորչի վանքերուն միջեւը, Փունար պաշի ըսուած տեղւոյն եզերքը շինուած էր «Անարծաթ Բժշկաց» սոյն վանքը, որուն ի հարկէ կ՚ըսուէր նաեւ «Ս. Կոզմոսի եւ Դամեանոսի վանք»: Վանքս ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից, թէեւ այժմ կ՚երեւին հողակոյտերը, եւ երբեմն տեղեր ալ հիմանց պատերը, ու փլփլած սենեակներ[276]*:*

## 186/4. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

*Մալաթիայէն մէկ ժամու չափ հեռու, դէպ ի հարաւ, «Ս. Կարապետի պօղազ» ըսուած օդաւէտ եւ սքանչելի, հիանալի տեսարան մ՚ունեցող ձորի մը մէջ շինուած էր վանքս, որուն բուն անունն անծանօթ կ՚մնայ, յիշեալ ձորին ամբողջ հողը կարմիր ըլլալուն համար, գուցէ վանքին ալ «Կարմիր վանք» ըսուած է: Ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից, այժմ միայն կ՚երեւին վանքի տաճարին աւերակները, որոց քով աղբիւր մ՚ալ կայ, սառնահամ, առողջարար եւ անուշ ջրով[2]:*

*Այժմ նոր կ՚տեղեկանանք, թէ Բաղէշ քաղաքի եկեղեցեաց միոյն անունն ալ «Կարմիր ակն Ս. Նշան» կը կոչուի եղեր, եթէ իրաւ է, արդեօ՞ք յիշեալ եկեղեցին ժամանակին վանք եղած է, եւ Կողուց վանքի մասին աւանդութիւն մը կա՞յ Բաղէշի մէջ, այս մասերուն համար կ՚սպասենք Բաղէշի վանասէրներու տալիք տեղեկութեանց)[277]*:*

*Իբրեւ ուխտատեղի, բարեպաշտ հաւատացեալները, մերթ ընդ մերթ ուխտի կ՚երթան իրենց մոմը վառելու, եւ աղօթք ու խնդրուածքնին կատարելու համար (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1) [278]*:*

## 187/5. Ս. ԱՀԱՐՈՆԻ ՎԱՆՔ[279]*

*Մալաթիայէն ութ ժամու չափ հեռու, լեռան մը բարձրութեան վրայ շինուած էր «Ս. Ահարոնի վանքը», որուն շինութեան թուականը յայտնի չէ, ուր երթեւեկութիւնը, վերելքը շատ դժուար եւ ծանրատաղ-*

---

[2] Շապին Գարահիսարի Առաջնորդարանի Դիւանապետ Աւետիս էֆ. Խ. Սահակեանի «Կողուց վանքի» մասին, եւ այլն ըրած դիտողութիւնները շնորհակալութեամբ կարդացի «Բիւզանդիոն»ի մէջ [թիւ 1091]: Ո՛րչափ առաւել ուրախ պիտի ըլլայի, եթէ ամէն կողմէն այդպիսի դիտողութիւններ հասնէին մեզի, որ երկար տարիներու աշխատութեան արդիւնք՝ մեր այս «ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ» անուն ստուար գործը, որուն համար կ՚խոստովանինք թէ սխալներէ զերծ չպիտի ըլլայ, ուղղելով՝ կարելի եղածին չափ ամփոփ գործ մը ընէինք, գուցէ օր մը առանձին հատորով հրատարակելու համար:

Մեր վերեւ յիշատակած Մալաթիոյ Կարմիր վանքէն զատ, Կարմիր կամ Հնձոց վանք մ՚ալ ունինք Կարնոյ մէջ, Կարմիր վանք մը՝ Մանազկերտի մէջ, Կարմիր վանք Ս. Կարապետի՝ ի Սիւնիս, Կարմիր վանք մը՝ Չմշկածագի մէջ, Կարմիր վանք մը՝ Մշոյ մէջ, Կարմիր վանք մը՝ Սեւ լերան՝ Մարաշի մէջ, Կարմիր վանք մը՝ Ս. Ստեփաննոս՝ Նախիջեւանի մէջ: Որովհետեւ բաց ի Շապին Գարահիսարի «Կարմիր ակն Ս. Նշան» վանքէն, «Կարմիր վանք Ս. Նշան», կամ «Կարմիր ակն Ս. Նշան» վանքի մը անուան յիշատակութեան, ուրիշ տեղի մը վրայ, գոնէ մեք մինչեւ ցայսօր պատահած չէինք, եւ որովհետեւ մեր առաջ բերած ձեռագիր յիշատակարաններն ալ Կողուց վանքը յիշատակած ժամանակնին, միեւնոյն ատեն «Կարմիր ակն Ս. Նշան» վանքն ալ կ՚յիշատակէին իբրեւ անոր մօտիկը, այս պատճառներով Կողուց կամ Կողունց վանքը Շապին Գարահիսարի Ածպտեր անուն գիւղին «Կարմիր ակն Ս. Նշան» վանքին մօտիկը դնել ստիպուած էինք, այն ալ տարակուսանօք (մեր նոյն յօդուածին մէջ փոխանակ Ածպտեր ըսելու գիւղին, սխալմամբ եւ անճապարանօք Թամզարայ ըսած ենք) [Գրքի մէջ՝ Հայ վանորայք, Իզմիր, 1914, սխալն արդէն ուղղել է - Կ. Ա.]:

*տուկ էր: Այս վանքն ալ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից, բայց կ'մնայ միշտ ուխտատեղի: Եւ այժմ կ'երեւին միայն վանքի տաճարին աւերակներն ու հողակոյտերը. տեղւոյն օդը շատ մաքուր է եւ առողջարար, ստորոտէն կ'անցնի Եփրատ գետը մեծաղղորդ ու ահարկու կերպով: Շէնքին քով կ'երեւի աղբիւր մը, որ ունի շատ զով եւ առողջարար անուշ ջուր մը: Այս ուխտատեղին կ'տարուէին ժամանակին ընդհանրապէս յիմարները, զորս կ'փակէին[3] վանքի տաճարին մէջ բժշկուելու համար: Նաեւ յղի կանայք կ'երթային հոն, բարեպաշտական ոգւով, իրենց ձեռքերը կ'խօթէին հոն գտնուած այրի մը մէջ, հանելու համար անկէց, մատաղ ընելու համար տարուած գառնուկներու ոսկորներէն, զորս կ'նետէին այդ այրին մէջ: Եթէ ծուծով ոսկոր ելնէր՝ ծնելիքն աղջիկ, իսկ եթէ անծուծ ոսկոր մ'ելնէր՝ «տղայ պիտի ըլլայ»ի համոզումը կ'ունենային. այժմ ալ կ'կատարե՞ն այս աւելորդապաշտութիւնները, տեղեկութիւն չունինք: Վանքս այժմ եղած է ուխտատեղի (Բիւզ., 1900, թ. 1158, էջ 1):*

## 188/6. Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ[280]*

*Մալաթիայէն տասներկու ժամու չափ հեռու, Մուշովկայ անուն գիւղին մօտերը, օդասուն եւ լեռնային դիրքի մը վրայ շինուած էր Ս. Թորոսի վանքը, եւ ի վաղուց անցած է այս վանքն ալ ի շարս շաբաթացեալ վանորէից, եւ եղած է ոչխարաց արօտավայր, բայց միանգամայն ուխտատեղի է յիշեալ գիւղացիներուն, որ տարին մի քանի անգամներ ուխտի կ'երթան: Վանքին աւերակներու առջեւն աղբիւր մ'ալ կայ՝ «Ս. Թորոսի աղբիւր» անունով, որ ունի շատ զովասուն եւ մաքուր ջուր մը[281]* (Բիւզ., 1900, թ. 1043, էջ 1):*

## 189/7. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[282]*

*Վերոյիշեալ Մուշովկայ անուն գիւղէն կէս ժամու չափ հեռու, լեռան մը ստորոտը, ձորի մը մէջ շինուած էր Ս. Սարգսի վանքը[4], եւ ի վաղուց անցած է այս վանքն ալ ի շարս շաբաթացեալ վանորէից, եւ տեղն ալ թէեւ արտի վերածուած է գիւղացւոց կողմէ, բայց նորէն միշտ ուխտատեղի մնացած է այն կողմի ծոմապահ բարեպաշտ հաւատացեալ-*

---

[3] Ժողովուրդը շատ անգամ յիմարները կ'տանի եւ կ'կախէ եկեղեցիի պատէն ի վար, այն հաւատքով, թէ կամ կ'բժշկուին եւ կամ կը մեռնին (ի հարկէ՝ աւելի կ'մեռնին, քան կ'բժշկուին):

[4] Բայց մեզի այնպէս կ'թուի, թէ սա ուխտատեղի մը պիտի ըլլայ, քա՛ն թէ վանք յանուն Ս. Սարգսի, որովհետեւ գիտենք թէ, գրեթէ ամէն քաղաքի եւ գիւղի մէջ ուխտավայրեր կան շինուած յիշեալ պաշտպան զօրեղ սուրբի անուան, որ միշտ կ'պաշտպանէ իրենները՝ ծոմապահ բարեպաշտները:

*ներուն: Տեղւոյն օդը շատ առողջարար եւ ախորժելի է, եւ ուխտի դիմող գիւղացիք, շատ անգամ ամառ ատեն, քանի մը գիշերներ կ’անցընեն հոն*[283]* *(Բիւզ., 1900, թ. 1019, էջ 1):*

## 190/8. ԽԱՉԱՎԱՆՔ

*Մալաթիոյ Շեփիկ անուն գիւղին շատ մօտերը կ’գտնուէր Խաչավանքը, որ անցած է ի վաղուց շաբաթացեալ վանորէից*[1] *շարքին մէջ, այժմ վանքի Տաճարին պատերը միայն կ’երեւին, եւ եղած է ուխտատեղի*[284]**:*

## 191/9. Ս. ՄԱՄԱՍԱՅ ՎԱՆՔ[285]*

*Մալաթիոյ Աղն անուն գիւղին մօտերը կ’գտնուէր այս վանքն ալ, եւ նուիրուած էր յանուն Ս. Մամասայ, եւ նոյնպէս ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից, եւ եղած է այժմ ուխտատեղի*[2] *յիշեալ գիւղացիներուն, ուր շատ անգամ կ’երթան իրենց մոմը նուիրելու եւ ուխտերնին կատարելու համար*[286]**:*

---

1 Ուրախութեամբ կարդացինք Արեւ[ելեան] մամլոյ թիւ 21 պատուական Հանդիսին մէջ, Մալաթիոյ բարեջան Առաջնորդ Գեր. Գէորգ Ծ. Վարդ. Ասլանեանի մանր դիտողութիւնները Մալաթիոյ Վանքերու մի քանիներու նկատմամբ, որ գրած էինք անկէ առաջ Բիւզանդիոնի մէջ: Շնորհակալ եմ Նորին Գերապատուութեան, որ իմ կողմանէ սպրդած փոքր սխալներն ուղղած է, պիտի ըսեմ թէ՝ անոնք ինձ տրուած շփոթ տեղեկութիւններէ առաջ եկած չեն, այլ ուղղակի իմ կողմէ, կ’երեւի բազմազբաղ մէկ ժամանակիս մէջ սխալմունք մ’ըրած եմ, որովհետեւ ինձ տրուած տեղեկութիւնները շատ ճիշտ են եղեր, երբ վերջին անգամ թղթատեցի այդ տեղեկութեանց թուղթերն եւ ապահովուեցայ: Եւ արդէն միշտ խնդրած ենք բանասէր ու վանասէր անձերէ, որ մեր այս Վանորէից՝ ո՛չ թէ պատմութիւն, ո՛չ թէ տեղեկագրութիւն եւ ո՛չ թէ համառօտ ծանօթութիւն, այլ Ցուցակին մէջ, մոռացմամբ եւ կամ սխալմամբ սպրդած սխալներն ուղղեն, այս անգամ եւս կ’կրկնենք մեր այդ խնդրանքն եւ շատ ուրախ կ’ըլլանք ու գոհ կ’մնանք, եթէ շարունակաբար ուղղուին. մեր այս գործն, որչափ ալ անկարեւոր ու անարժէք՝ կ’սրբագրենք միշտ:

2 Վերոգրեալ կանգուն վանքերէն, եւ այժմ ուխտատեղի եղածներէն զատ, ծանօթութիւն մը ստացած ենք թէ ուխտատեղի մ’ալ կայ Մալաթիոյ Վանք անուն գիւղին մէջ, որուն համար կ’ըսեն, թէ ժամանակին վանք է եղեր, թէեւ անունը ծանօթ չէ: Եկեղեցիին քարերը քակելով, գիւղին մէջ, անկէց առաջ ժողովարան մը շինած են նոյն գիւղացիք:

# Դ. ՉՄՇԿԱԾԱԳԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., Ժ. տարի, 1906, Հմր 3.014(3-16/Ը), էջ 1*

## 192/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ԽԱՐՏԻԾԱՐԻ[287*]

*Չմշկածագի գաւառին մէջ շինուած էր Խարտիշարի այս վանքը, յանուն Սրբոյն Կարապետի, որ ժամանակին եւ մանաւանդ իր սկզբնաւորութեան դարուն մէջ մեծ հռչակ ունէր, բազմաթիւ միաբանութեամբ եւ Դպրեվանքով, ուր կ՛ուսանէին, կ՛գրէին եւ կ՛ճոխացնէին վանքը զանազան եկեղեցական եւ իմաստասիրական ձեռագիրներով, որոց այժմ ո՛ւր գտնուիլն անծանօթ է շատերուն: Վանքը, վերջին ժամանակները, 1648ին նորոգութիւն մը տեսած է Տ. Միքայէլ եպիսկոպոսի մ՛օրով, որ վանահայրն էր վանուցս, որովհետեւ աւերում մը տեսած էր վանքը նոյն տարւոյն մէջ պատահած մեծ երկրաշարժէն: Այժմ վանքն ամայի եւ գրեթէ անցած է ի շարս շաբաթացեալ վանորէից: Այս վանքի մասին առ այժմ ի ձեռին ունինք հետեւեալ յիշատակարանները.*

*1. ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն. «Յիշատակ է [այս] Սուրբ Աւետարանս Չմշկածէկցի Գէորգ Եպիսկոպոսիս, որ [դաղդաղեալ ձեռաւք] գրեցի, անարժան առաջնորդ Սուրբ Գէորգայ գերեզմանի Խուլավանից, որ զարդարել է հանգուցեալ Միքայէլ Եպիսկոպոսն: [Վասն երկիւղին Լավանկ-Թամուրին] Սուրբ գերեզմանիս միաբանքն մնացեալ [Թագուցեալ] են ի Ծով դղեակ, եւ վանս Խարտիշարի, եւ Սուրբ Կարապետին, եւ Կարմիր վանուց[3]: [Եւ սիրով յորդորեալ ամենայն միաբանաց՝] կրկին ժողովեցին իննն միաբանս, եւ պահծառացուցաք Սուրբ Աթոռս:... Գրեցի այս բանս սակաւ, այլ եւ գրեալ եմ ամենայն անցք, որք ընդ իս եւ ընդ Աթոռս անցին, յիշատակագրութիւն Միքայէլ Արքեպիսկոպոսին եւ միւս Առաջնորդաց, որք յառաջ քան զմեզ, իսկ այս բանս սակաւ գրեցին Թուին [Հայոց] ՊՂԲ. (1443)»[288*]:*

*2. Դարձեալ ԺԵ. դարուն վերջը գրչագրուած Մաշտոցի մը յիշատակարանէն քաղուած. «Գրեալ ի Սուրբ Անապատն Խարտիշարայ Վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Սարգսի [Զաւրավարին], ի Թու. [Հայոց] ՋԽԶ. (1497). Աւգոստոս ամսոյ ԻԲ. (22), առ ոտս Ստեփաննոս քաջ Րաբունապետի եւ իւր եղ-*

---

[3] Խուլավանք Ս. Գէորգայ Խարբերդէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ Գուզովայի մէջ է. Կարմիր վանք՝ Մալաթիայէն մէկ ժամու չափ հեռու է, որոց վրայ գրած ենք արդէն, ինչպէս Ծով դղեակին վրայ: Կարմիր վանք մ՚ալ կայ Չմշկածագի մէջ, որուն վրայ եւս պիտի գրենք. տե՛ս վարը:

*բաւրորդոյն Յովհաննէս Հայրապետին... յիշեցէք զԿիրակոս կրաւնաւոր փծուն գրիչս...»* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 252]:

*3. ԺԶ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն. «Գրեցաւ Սուրբ Աւետարանս ի Թվ. ՋՂ. (1541) ամին, ձեռամբ Յովսէփ Եպիսկոպոսի, ի նահանգիս Զմշկածագի, ի վանքս Խարտիչարի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետի եւ Սրբոյն Սարգսի եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ այլ բազմահաւաք սրբութեանց, որ աստ կառուցեալ կան, ի յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս Տէր Կարապետ Եպիսկոպոսին, որ փոխեցաւ առ Քրիստոս, եւ ի Հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Գրիգորիսի եւ միւս Հայրապետութեան Սիսոյ Տէր Սիմէոնի: Այլ եւ զմեր Առաջնորդս զՏէր Թադէոս Հայրապետին, եւ զվանիցս միաբանքն մեծ եւ փոքր կրաւնաւորք, որ հիմի կան, են Թուով ԻԶ. [26], Թող զսարկաւագն եւ զտնտեսն եւ զմղտեսիքն եւ զգործաւորքն...»:*

*4. ԺԴ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն. «Ես Թադէոս քահանայս գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ եւ արդար վաստակոց իմոց յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց Յոհանին, եւ մաւրն Ծըհէլին եւ եղբաւրն Պողոսին... ի Հայրապետութեան Խարտիչարի վանուցս Տէր Աստուածատուրին...»:*

*5. ԺԳ. դարուն գրչագրուած մագաղաթեայ Աւետարանի մը մէջ ալ, վերջէն գրուած հետեւեալ յիշատակարանները կան: Այս Աւետարանն այժմ կ՚գտնուի ի Կ. Պոլիս Ղալաթիոյ Մատենադարանին մէջ. «Աստուած աւրհնէ զՊռաստենք գիւղն եւ զիւր ժողովուրդն՝ զՌայիս Գըտոնն եւ զիւր որդիքն զՆերսէսն եւ զՄովսէսն եւ զիւրեանց որդիքն, զմղտեսի Հարապետն, զՎարդանն եւ զիւրեանց որդիքն, որ միաբանեցան ի սէրն Քրիստոսի եւ արտ մի Գ. [3] չափու տեղ յիշատակ դրին ի դուռն Սուրբ Կարապետին, եւ Սուրբ Սարգիսին եւ Սուրբ Տիրամայր Աստուածածնին, ի վանքս Խարտիչարայ, եւ ի յառաջնորդութեան Տէր Աստուածատուր Եպիսկոպոսին, եւ Ստեփաննոս Վարդապետին, եւ Տիրատուր քահանային... Ես՝ Տիրատուր Եպիսկոպոս, վերջին ստացող Սուրբ Աւետարանիս, որ ստացայ զսա ի հալալ վաստակոց իմոց, կազմեցի կրկին եւ եդի յիշատակ ի Սուրբ Անապատս Խարտիչարայ ի գաւառս Զմշկածագայ ի դուռն Սուրբ Կարապետին եւ Սուրբ Տիրամաւր Աստուածածնին եւ Սուրբ Սարգսի»*[289]*:*

## 193/*2. Ս. ԶՕՐԱԻՈՐԻ ՎԱՆՔ

*Զմշկածագի Օձ անուն գիւղի մօտերը կառուցեալ էր վանքս այս, որ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից, որուն ալ աւերակները [ամայի տեղը] կ՚երեւին այժմ, եւ եղած է ուխտատեղի (Լոյս, 1906, Թ. 24, էջ 569-71):*

## 194/3. ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔԻ ՎԱՆՔ[290]*

*Զմշկածագի Պռաստէնք անուն գիւղին մօտերը շինուած էր վանքս, յանուն «Երից Մանկանց», որ ի վաղուց անցած է ի չարս շաբաթացեալ Հայ Վանորէից, եւ որուն այժմ աւերակները միայն կ՚երեւին, եւ իր նախկին կազմակերպութեան վրայ ալ ոեւէ տեղեկութիւն կ՚պակսի: Այս վանքի մասին հետեւեալ յիշատակարանն ունինք ի ձեռին. «...Յիշեսջիք զտնտես Ոսկիկն, որ ետ կազմել զՍուրբ Աւետարանս, իւր եւ իւր այրոջն Վարդանին եւ հաւրն Թօմասին եւ մաւրն Խրմիզին եւ մեծ պապուն Քուլէֆին, եւ մեծ մաւրն Թմլան եւ եղբարցն Պետրոսին եւ Երանէլին, եւ հաւր եղբարցն Տէր Ներսէսին եւ Խոսրովին, եւ իւր որդւոյն հոգւոյն, եւ եդ յիշատակ ի գիւղն Հազդուկ, ի դուռն Երեք Մանկանց, որ է ի Զմշկածագ» (տե՛ս Թորոս Աղբար, Բ., երես 361): Պռաստէնք գիւղին կ՚ըսուի եղեր նաեւ Պրեխիկ կամ Հազդուկ գիւղ, ուր կ՚երեւին նաեւ երկու եկեղեցիներու աւերակներն ալ (Լոյս, 1906, թ. 24, էջ 569-71):*

## 195/*4. ՎԱՍԻԼԻԿԱՅ ՎԱՆՔ[291]*

*Զմշկածագի գաւառին մէջ յիշատակուած կը գտնենք Վասիլիկայ անունով վանք մը, որուն ո՛ր գիւղին մէջ կառուցուած ըլլալուն, դիրքի եւ այլնի մասին ոեւէ ծանօթութիւն կ՚պակսի մեզ: Բայց տեղեկացած ենք, թէ ի վաղուց ամայի եւ անցած է ի չարս շաբաթացեալ Վանորէից (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1):*

## 196/*5. ՍՈՒՆԿ ՍՈՒՆԿ ՎԱՆՔ[292]*

*Զմշկածագի Խարասար անուն գիւղին քովերը կառուցուած է եղեր վանքս այս, որուն տեղացիք թէեւ Սունկ Սունկ անուն կուտան, բայց չենք գիտեր, թէ վանքին բուն իսկ անո՞ւնն է, եթէ ո՛չ, ուրիշ անուն մ՚ալ ունէր: Վանքն ի վաղուց անցած է ի չարս շաբաթացեալ Հայ Վանորէից եւ այժմ կ՚երեւին, կ՚ըսեն, ամայի մնացորդները (Բիւզ., 1900, թ. 1083, էջ 1. Լոյս, 1906, թ. 24, էջ 569-71):*

## 197/*6. ՎԱՆՔԱԿ ՎԱՆՔ – ՎԱՆՔԱՅ ՎԱՆՔ[293]*

*Զմշկածագի Զուխուր անուն գիւղին քովերը շինուած է եղեր վանքս Վանքակ անունով, որուն ամայի մնացորդները կ՚երեւին միայն այժմ: Ոմանք կ՚ըսեն, թէ Զուխուր գիւղը Զարսանճագի Առաջնորդական Վիճակին կ՚պատկանի (Բիւզ., 1900, թ. 1083, էջ 1):*

## 198/*7. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ. Ս. ՆՇԱՆԻ[294*]

*Զմշկածագի Ագրակ անուն գիւղին քովերը գտնուող բլուրի մը վրայ կառուցուած էր Ս. Նշանայ Կարմիր Վանքը, հիանալի եւ ակնապարար դիրքով ու տեսարանով մը, որուն կ՚ըսուէր եւ կ՚ըսուի նաեւ «Կարմրակ Ս. Նշան» կամ «Կարմիրակն Ս. Նշան», որ իր ժամանակին կանոնաւոր եւ կազմաւորեալ միաբանութեամբն երբեմն հռչակաւոր էր, ուրկէ յառաջ եկած են ուսեալ եւ անուանի եկեղեցականներ, որոնք՝ «խումբ առեալ դասք Քահանայից, Սարկաւագաց, Դպրաց եւ Կղերիկոսաց, մատուցանէին բուրումն անուշահոտ խնկոց, տաշխից եւ կինամոնաց» եւ ուր կը գրէին ու գրեցին բազմաթիւ եկեղեցական եւ իմաստասիրական ձեռագիրներ: Այս վանքն ալ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից եւ եղած է աւերակ ու այժմ մնացած է ամայի, միայն թէ տաճարին տեղը, եւ քովիկը մատուռն մը կամարը միայն յայտնի կ՚երեւին ներկայիս: Նոյն կամարի որմին վրայ զետեղուած են քանդակեալ երկու խաչքարեր, որոնց ստորեւը գրուած են հետեւեալ յիշատակարանները.*

*1. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՅԻՆ. Ի ԹՎ. ՋԷ. (1458)».*

*2. «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՄԻՆԱՅ ՏՆՏԵՍԻՆ ԹՎ. ՋԻ. (1471)»:*

*Այս վանքը Կարմիր անունը առած է, կ՚երեւի, իր տեղւոյն եւ շրջակայից հողերուն ու քարերու կարմիր ըլլալէն, ինչպէս երբեմն ուրիշ Վանքեր ալ (զոր օր. Մալաթիոյ մէջ եւն): Վանքն ունէր ժամանակին բաւականին ընդարձակ մշակելի արտօրայք, իր քովերն ու շրջակայքը, բայց ասոնք անցած են մօտակայ գիւղացիներուն, զորս այժմ անոնք կը մշակեն եւ սեփականութեան տէր եղած են նոյն արտօրէից:*

*Այս վանքի մասին առ այժմ հետեւեալ յիշատակարաններն ունինք ի ձեռին: ԺԵ. դարուն մէջ գրչագրուած եկեղեցական Գանձարանի մը յիշատակարանէն քաղուած է. «...Արդ, գրեցաւ սա ի նահանգիս Փռուգիոյ, ի գաւառս Երապօլեաց, որ այժմ մականուամբ կոչի [Զմշկածագ], ի համանուանադրութիւն Զմշկիկ Յովհաննէս [Թագաւորի]... Արդ, գրեցաւ սուրբ տառս ի թուականութեանս մերում ՊՁԵ. (1436) ամին, ի Հայրապետութիւն Կիլիկեցւոց Տեառն Կոստանդեայ [եւ յաշխարհակալութիւն Ալի-Պէկին], ի յերկիրս Զմշկածակու, ի Սուրբ Ուխտս Կարմիր Վանք, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին, եւ Աստուածընկալ Սուրբ Նշանացս, ի յԱռաջնորդութիւն Տէր Մէլքիսէթին, [եւ լրացաւ] ձեռամբ [յոգնամեղ եւ տարտամ ոգւոյ] անարհեստ Մկրտիչի սուտանուն կրաւնաւորի»[295*]:*

*Դարձեալ ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը մէջ, ետքէն գրուած յիշատակարանէն. «Յիշատակ է Սուրբ Աւետարանս Պա-*

տըրթըլցի Գրիգորի որդւոյն Գասպարին, Կիրակոսի որդւոյն Յովանէսին, եւ Մուրազի որդւոյն Խափլանին, եւ Տանապետի որդւոյն Մարգարին եւ Դարվիշին, եւ ծնաւղացն... եւ առին զՍուրբ Աւետարանս եւ եդին ի յիշատակ ի Կարմիր Վանք ի Դուռն Ս. Կարապետին, թվին ՌՃԽԲ. (1693): Յիշեսջիք զԱրսէն քարտողն, որ մեղապարտ ձեռաւք հպեցայ ի Սուրբ Աւետարանս եւ վերստին նորոգեցի եւ կազմեցի ի Կարմիր Վանք, ի Դուռն Ս. Կարապետի եւ Սուրբ Նշանին...»:

Դարձեալ ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Մաշտոցի մը յիշատակարանէն. «...Գրեալ ի Զմշկածագ. ի Վանքն Կարմիր. յամի ՊՂԷ. ... (1448) [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 621]»:

ԺԷ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն. «...Գրեցաւ սուրբ Աւետարանս ի Թվ. ՌՃԼԳ. (1684) ամին, ձեռամբ Արսէն Աբեղիս, ի Զմշկածագ, ի Կարմիր Վանք, ընդ հովանեաւ Ս. Կարապետին եւ Ս. Սարգսին եւ Ս. Նշանին, յԱռաջնորդութեան Սուրբ Ուխտիս Աւետիս Վարդապետի, եւ ի Հայրապետութեան Տեառն Եղիազար Կաթողիկոսին, այլ եւ Սուրբ Ուխտիս սպասաւոր է. անձն կրաւնաւորքն, որ կան ի յայս Ճեմարանիս...»:

Դարձեալ ԺԷ. դարուն մէջ գրչագրուած Շարականի մը յիշատակարանէն. «...Արդ՝ գրեցաւ Շարակնոցս, որ կոչի Խլկցի, ի լաւ եւ յընտիր աւրինակէ, ձեռամբ Վարդան կրաւնաւորիս... ի յԱնապատս ի Կարմիր Վանք, ընդ հովանեաւ Ս. Կարապետին եւ Ս. Նշանին, եւ Ս. Սարգսին, ի յԱռաջնորդութեան Սուրբ Ուխտիս... միաբանից ԺԱ. (11) անձն կրաւնաւորիս, որ կան յայս քարաժեռ Անապատիս, ի թվականիս [Հայոց] ՌՀԴ. (1625)...»[296]* («Լոյս», 1906, 24 (17/Զ), էջ 569-71):

## 199/8. ԿՈՂՈՒՑ ՎԱՆՔ. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ - Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՎԱՆՔ[297]*

Զմշկածագի գաւառակին մէջ կառուցուած էր այս վանքն ալ, որուն կ՚ըսուի եղեր նաեւ «Կողունց Վանք», «Կողունցի Սուրբ Լուսաւորիչ»: Շէնքին բուն իսկ տեղն ո՞ւր կ՚իյնայ, չենք կրնար որոշել, բայց միայն հին եւ վերեւ յառաջ բերուած յիշատակարաններէն կ՚հասկնանք, եւ եթէ չենք սխալիր կրնանք ըսել թէ, վերն յիշուած Կարմիր Վանք Ս. Նշանին շատ մօտաւոր քովերն ըլլալու է, թէեւ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից: Այս վանքի մասին ալ ունինք ի ձեռին առ այժմ հետեւեալ յիշատակարաններն.

ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Ճառընտիր Տօնականի մը յիշատակարանէն քաղուած. «...Որ ետ մեզ կարողութիւն հասանել ի յետի գիծ Ոսկեփոր Տաւնականիս, [յաստուածաբնակ ուխտս], որ կոչի Կողուց Վանք, ընդ հովանեաւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, եւ Սուրբ Նշա-

*նացն Քրիստոսի: Յառաջնորդութիւն... մեծ Րաբունապետին Յակովբայ... Արդ, գրեցաւ սա ձեռամբ... Կարապետի եւ անպիտան գրչի, յամի ՊՀԷ. թւականի մերումս տումարի (1428)»* [տե՛ս Տաշեան ցուցակ, եր. 583. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 380-1]*:*

*Նոյնպէս ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն քաղուած. «...Եւ ես՝ յոգնամեղս եւ փցունս ի գրչաց Վարդան Աբեղայ, կատարեցի ըստ իմում կարի զխնդիր [սորա] շնորհօք եւ ողորմութեամբն Աստուծոյ, ի թուականիս [Հայոց] ՋԺ. (1461) ամի, յամսեանն Մեհեկի: Արդ, եղեւ սկիզբն սորա, ի Վանքս, որ կոչի Կողուց, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչի, եւ Կարմիրակն Սուրբ Նշանի, որոց խնամօքն աւարտեցի»* [տե՛ս Նօտարք, էջ 198. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 161] *(Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1)*[1]*:*

*1428 թուականին այս վանքի, եւ կ՚երեւի նաեւ «Կարմիրակն Ս. Նշան»ի վանուց վանահայր է եղեր Տէր Մելքիսեդեկ՝ եւ միաբան վարդապետ ու աբեղաներն են եղեր Անդրէաս, Կարապետ, Յակոբ, Յովհաննէս, Մխիթար, Մարտիրոս, Հայրապետ, Դանիէլ, Ներսէս, Մկրտիչ, միւս Մարտիրոս եւ Յովհաննէս*[298]* *(Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1. «Լոյս», 1906, 24 (17/Գ.), էջ 569-71)* [299]*:*

[1] Ինչպէս տեղեկացած ենք, Չմշկածագի Վանք անուն գիւղին մէջ՝ վանքի մը, Գծորի անուն գիւղին մէջ նոյնպէս վանքի մը, Բաղաբուն անուն գիւղին մէջ երկու եկեղեցիներու եւ վանքի մը, եւ Ծէնկախ գիւղին մէջ ալ վանքի մը տեղերը մինչեւ հիմա կ՚երեւին եղեր, որոց անունները բոլորովին անծանօթ կ՚մնան մեզ, նոյն իսկ տեղացիք ալ որոշ բան մը չեն կրնար ըսել:

# Ե. ԶԱՐՍԱՆՃԱԳԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

*Բեւղ., ԺԱ. թղթ., 1907, թի. 3.145(3-16/Ա), էջ 1*

## 200/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ԵՐԿԱՆԻ[300*]

*Զարսանճագի հին վանքերէն մին: Զարսանճագի եւ Տէրսիմի միջեւ, Երկան անուն գիւղի ծայրը շինուած է, այս պատճառաւ կ՚ըսուի «Ս. Կարապետի Վանք Երկանի» կամ «Ս. Կարապետի վանք Երկանընկուզի»: Թէեւ վանքին մէկ մասին շէնքերը գրեթէ քայքայուած են, բայց միւս մասերը շէն եւ ընտիր քանդակներով ճարտարապետական գեղեցիկ շէնք մ՚է, որոց տեսքն ամենամեծ հիացում կ՚պատճառէ այցելուաց, եւ մանաւանդ հնասէր ու հնագէտ եւրոպացի ուղեւորներուն:*

*Սոյն Վանքի հիմնարկութեան թուականը Տասներորդ դարուն մէջ եղած է, եւ այս կ՚առնուի վանուց Տաճարին՝ որ նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի, արեւմտեան մեծ դրան ճակատի վերին շեմին վրայ քանդակուած յիշատակարանէն, որ է. «ԱՅՍ Է ԽՈՐԱՆ ՄԵՐ ՏԵԱՌՆ, ՅՈՐՄԷ ԾՆԱՒ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Ի ՅԱՅՐՆ ԲԵԹՂԵՀԷՄ, ՅՈՐՈՎԱՅՆԻ ՀԱՃԵՑԱՒ ԵՒ Ի ՍՐՏԻՆ ԲՆԱԿԵՑԱՒ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՀՈՎԱՆԱՑԱՒ, ԱՂԱՉԵՄ ԶՔԵԶ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԲԱՐԵԽԱՒՍԻ[Ե՞]Ա ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻ ՔՈ ՄԵԾ ՄԽԻԹԱՐԻՍ, ԶՈՐԴԻԴ ՔՈ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԴԱՒԱՆԵԼՈՅ, ԵՄ Ի ԹԻՒ/// ՄԱՆ/// ԳԱՆՁԷ/// ԹՇՆԱՄԻՈՅՆ, ՈՐ ԱՌԱՔԵԱԼՔ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՄ ՎԱՍՆ ՔՈ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆԴ ԵՒ ԶԿՆԻ ԶԽՈՐԱՆՍ ՇԻՆԵՑԻ, Ի ԹՎԻՆ Ն.Ի.Գ. (974)»: Վանքն այժմ ունի՞ միաբանութիւն, եւ ի՞նչ վիճակի հասած են ներքին կանգուն մնացած շէնքերը, հողերն եթէ ունի՛, կ՚մշակուի՞ն. այս մասերուն վրայ ծանօթութիւն մը չունինք այժմ:*

*Այս վանքի մասին ի ձեռին ունինք հետեւեալ յիշատակարանները: ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն քաղուած. «...Այլ եւ յարուեստս թուականին, / որ կայ ի գիրսն յայն արտաքին, / սա ծընաւղ է տասն թւին, / հարիւրեկին եւ հազարին: / Աւարտեցաւ սա յամսենի, / ի քսան եւ ինն ի Յունիսի, / յաւուր տաւնի ընտրեալ գնդի, / Առաքելոց գլխաւորի: / Արդ ես Դաւիթս որ գրեցի, / զԱւետարանս Տեառն Յիսուսի, / չեմ արժանի այս Սուրբ Կարգի, / զի կորուսի զփառս: / Բայց գրեցաւ յԱնապատի, / որ Ընկուզեաց անուն կոչի, / ի դուրընս Սբ. Աստուածածնի, / եւ Մկրտչին Տեառն Յիսուսի, / ի գաւառիս յԵրապաւլսի, / որ Չմշկածագ այժմ կոչի: / Ձեռամբ Դաւիթ Կրաւնաւորի, / որ եմ գերեալ սատանայի: / Արդ զԱռաջնորդ Սրբոյ*

*Ուխտիս, / ըզԱռաքել Վարդապետիս, / տացէ Յիսուս պարգեւս բարիս, / միաբանիցս առ Տէր ունիս...»:*

*ԺԷ. դարուն սկիզբը գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն քաղուած. «...Ես անարժան Յովհաննէս Եպիսկոպոս ի սրտէ խոցեալս, ի մտաց անկեալս, հոգւով զառանցեալս, գրեցի զՍբ. Աւետարանս իմ անարժան եւ մեղաւոր ձեռաւքն, պակասեալ ի լուսոյ եւ հասեալ ի ծայր կենաց եւ ի դուռն մահու, եւ սպասեմ գերեզմանի, [գրեցի]... լաւ եւ ընտիր աւրինակէ: Գրեցաւ ի թվականութեան Ռ. եւ Ծ. (1601), ի յերկիրն Ցաղմնոյ, ի վանք Երկանընկուզենց, ի դուռն Սբ. Կարապետու եւ Սբ. Աստուածածնայ եւ Սբ. Յարութնայ, եւ այլ սրբոց որ աստ կան...»*[301]*:

## 201/2. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ՀԱԼԻՈՐԻԿԻ[302]*

*Զարսանճագ գաւառին մէջ, Հալւորի անուն գիւղի քովերը, գեղեցիկ դիրքով եւ տեսարանով շինուած, նշանաւոր հին վանքերէն մին, որ այժմ ալ, կ՚ըսուի թէ, ունի քիչ շատ բնակելի վիճակ մը: Հալւորի կամ՝ Հալեւորի, կամ՝ Հալւորիկի կամ՝ Հալւորկորի Սուրբ Կարապետի վանքս այս, որուն կ՚ըսուէր նաեւ «Պառաւգրակի Վանք Ս. Կարապետի», շրջապատուած է անտառներով:*

*Հին ժամանակներէ ի վեր, մինչեւ իսկ քսան, քսանեւհինգ տարիներ առաջ Հայ ընտանիք մը, բազմաթիւ անդամներով, կ՚մնային վանքին մէջ, որոնք կ՚մշակէին վանքի հողերը, եւ այս ընտանիքի մէջէն ձեռնադրուած քահանայ մ՚ալ վանահայրութեան պաշտօն կ՚կատարէր ըստ սովորութեան: Այժմ վանքն ի՞նչ վիճակ ստացած է, եւ կ՚շարունակէ՞ նոյն ընտանիքը մնալ վանքին մէջ. այս մասին ծանօթութիւն մը չկրցանք ստանալ:*

*Այս Վանքի մասին առ այժմ ունինք ի ձեռին, ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն քաղուած հետեւեալ մասը. «...Արդ, [կատարեցաւ] Ս. Աւետարանս [Քրիստոսի] ի թվականին [Հայոց] ՋԳ. (1454), [ի յապրիլ ամսո Ա. (1)], ի վանս որ Պառուագրակ [յորջորջի], ընդ հովանեաւ [սքանչելագործ] Սուրբ Նշանիս, եւ Սուրբ Կարապետի, եւ Սուրբ Սարգսի [մեծ] Զինաւորին, [եւ այլ բազմահաւաք սրբոց, որ հաւաքեալ կան աստ, ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի մեղապարտի Կարապետ հայրապետի եւ ամենաթշուառի եւ անիմաստի: ... Արդ,... յիշեսջիք ի սուրբ եւ յարժանաւոր յաղաւթս ձեր զմեղուցեալ գծողս զԿարապետ եւ զծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՍիմէոնն եւ զմայրն իմ զՄարիամն, եւ զեղբայրն իմ զՅովաննէս կրաւնաւորն, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս եւ բազում կսկիծ եթող ի կեանս: Եւս առաւել զամենայն բարեաց արժանաւորն՝] զհաւրեղբայրքն իմ [փոխեցեալքն ի Քրիստոս.] զՈնոփրիոս հայրապետն [եւ զտէր Տիրատուրն, ...*

*եւ զամենայն արեան մերձաւորս իմ...], եւ [զմիաբանք Սուրբ] Կարապետիս զհամաւրէն եղբայրութիւնքս՝ զհնգետասան կրաւնաւորքս, զծերք, եւ զտղայք, եւ զսարկաւագունք, եւ զսպասաւորք, եւ զգործաւորք սուրբ Անապատիս առհասարակ, աղաչեմ յիշել ի տէր...»[303]*:*

## 202/3. Ս. ԹՕՐՈՍԻ ՎԱՆՔ[304]*

*Չարսանճագի Բերդակ անուն գիւղին վերին ծայրը շինուած էր Ս. Թօրոսի վանքը, հոյակապ, ընդարձակ, գեղեցկաշէն եւ գեղեցիկ տեսարանով, որուն կ՚ըսուի նաեւ «Ս. Տիկինի վանք»: Տաճարի գմբեթն ի վաղուց ինկած է, եւ եկեղեցւոյն մէջ շատ մը տեղեր քարերով, հողով լեցուած էր, բայց գիւղացիք եկեղեցւոյ մէկ մասին կամարներուն մէջէն պատեր քաշելով, մաքրելով, եկեղեցի ըրած էին իրենց: Այժմ ի՞նչ վիճակի մէջ կ՚գտնուի նոյն իսկ եկեղեցին, ծանօթութիւն մը չունինք[305]* (Բիւզ., 1900, Թ. 1043, էջ 1):*

## 203/4. Ս. ԹՕՐՈՍԻ ՎԱՆՔ[306]*

*Լամք անուն գիւղի մօտ, որ Չարսանճագի ամայի եղած վանքերէն երկրորդն ալ այս է:*

## 204/5. Ս. ՅՈՒՂԻՏ(Դ)ԱՅԻ ՎԱՆՔ[307]*

*Չարսանճագի Մաստան անուն գիւղի մօտերը կառուցուած էր, յանուն «Ս. Յուղիտայի» այս վանքը, որ այժմ ամայի, եւ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից: Կ՚կարծենք թէ այս վանքը, որ ժամանակին հաստատուած էր Ս. Կիրակոս վանքին մօտիկը, իբր կուսաստան եղած ըլլայ սա՛ հաւատաւոր Հայ Մայրապետներու, ինչպէս այսպիսի Կուսաստաններ ունէինք այլեւայլ տեղեր, մասնաւորապէս Կիլիկիոյ մէջ (Բիւզ., 1900, Թ. 1008, էջ 1):*

## 205/6. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ

*Նոյնպէս Մաստան անուն գիւղի քովերը, մերձ Ս. Յուղիտայի վանքին, բոլորովին աւերակ եղած[308]* (Բիւզ., 1900, Թ. 1008, էջ 1):*

## 206/7. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ[309]*

*Չարսանճագի Փէրին անուն գիւղին քով եւ Ջրին եզերքը:*

## 207/8. Ս. ԼՈՅՍ ՎԱՆՔ

*Նոյնպէս Փէրին անուն գիւղին մօտերը: Այս վանքին կ՚ըսուի նաեւ «Ս. Թադէոսի Վանք»:*

## 208/9. Ս. ԱՆՏՕՆԻ ՎԱՆՔ[310*]

*Զարսանճագի Ղուշճի անուն գիւղին մօտերը, բոլորովին աւերակ եղած է (Բիւզ., 1900, թ. 1008, էջ 1):*

## 209/10. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[311*]

*Ձորակ անուն գիւղին մօտերը, ձորի մը մէջ շինուած, որուն կ՚ըսուէր նաեւ «Ս. Աստուածամայրի Վանք»:*

## 210/11. Ս. ՎԱՌՎԱՌԻ ՎԱՆՔ[312*]

*Նոյնպէս Ձորակ գիւղի մօտերը, ձորի մը մէջ շինուած, եւ մերձ Ս. Աստուածամայրի Վանուց:*

## 211/12. Ս. ՊՕՂՈՍԻ ՎԱՆՔ[313*]

*Զարսանճագի Հօղէ անուն գիւղի մօտերը:*

## 212/13. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[314*]

*Սըջով՞, Աղշով՞ անուն գիւղին մօտերը, այժմ ամայի (Բիւզ., 1900, թ. 1019, էջ 1):*

## 213/14. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔԻ ՎԱՆՔ. – ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

*Զարսանճագի Լուսաւորիչ, կամ ինչպէս կ՚ըսուի՝ Լուսատարիչ՞ Լուսատարիճ՞ անուն գիւղի մօտերը, բլուրի մը վրայ շինուած էր, թէ՛ գիւղն ամայի, եւ թէ վանքը, որ հոյակապ էր, փլփլած է (Բիւզ., 1900, թ. 1049, էջ 1):*

## 214/15. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[315*]

*Բաշավանք անուն գիւղին մօտերը, բարձր բլուրի մը վրայ շինուած էր, որուն այժմեայ աւերակ հիմերուն ընդարձակութեան եթէ նայիս, կ՚ըսէ մեզի տեղեկագրողը, մարդ կ՚ստիպուի ըսել թէ, ի հնումն այս*

*վանքը շատ փառաւոր եւ ընդարձակ եղած պիտի ըլլայ (Բիւզ., 1900, թ. 1001, էջ 1):*

## 215/16. Ս. ՅՈՒՍԻԿԻ ՎԱՆՔ[316]*

*Խոզընգեղ անուն գիւղի մէկ ծայրը, որուն մէջ է նաեւ, կ՚ըսուի, Սրբոյն մարմինը: Այժմ վանքի միակ տաճարին մէկ մասն եկեղեցի ըրած են իրենց Խոզընգեղցիք:*

## 216/17. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[317]*

*Պախշիշ անուն գիւղի քովիկը, նոյնպէս այժմ ամայի[1] (Բիւզ., 1900, թ. 1019, էջ 1):*

## 217/18. ՃԵՐՄԱԿ ՎԱՆՔ[318]*

*Այս անուամբ վանք մ՚ալ կ՚յիշուի Զարսանճագի մէջ, որ ի վաղուց ամայի եւ աւերակ, չենք կրնար որոշել թէ այս վանքը վերեւ յիշուած «Սպիտակ վանքի» հետ միեւնո՞յն է, թէեւ ոմանք զատ վանք է կ՚ըսեն «Ճերմակ վանքի» համար եւ Քղիի կողմերը կ՚դնեն (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1):*

---

1 Այս վերջին տասնեւչորս [նկատի ունի՝ Հմր 4-17 - Կ. Ա.] վանքերն ալ ի վաղուց ամայի են, եւ անցած են նաեւ ի շարս շաբաթացեալ Հայ Վանորէից, որոցմէ ոմանց հիմերը եւ ոմանց ամայի շէնքերը կ՚երեւին այժմ, բացի Ս. Թորոսի եւ Ս. Յուսիկի վանքերէն, որոց մէյմէկ մասերը պատերով գոցած, միւս մասն իրենց եկեղեցի ըրած են Բերդակցիք եւ Խոզընգեղցիք, ինչպէս յիշեցինք վերը: Տէրսիմի Փախ անուն գիւղի քովերը վանքի մ՚ալ աւերակ հիմերը կ՚տեսնուին եղեր, բայց անունն յիշող ո՛չ ոք կայ այժմ:

# Ա. ԲԱՂԷՇԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., ԺԸ. տարի, 1907, թիւ 3·300(4-17/Ը), էջ 4*

## 218/1. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ ԱՄՐԴՕԼԻ[319]*

*Բաղէշի հարաւային ծայրը կառուցուած է «Ամրդօլ»ի սոյն վանքը յանուն Սրբոյն Յովհաննու, որ այժմ ժողովրդեան կողմէ կ՚հռչակուի «Ս. Յովհաննու Վանք Ամլորդւոյ», երբեմն ալ ըսուած է, կարծենք, «Ամիրդօլու» կամ «Ամրտօլու Ս. Նշան»:*

*Ամիրդօլ կամ Ամիրդօվլաթ՝ անձի մը յատուկ անունն է, եւ գուցէ այդ վանքի վերաշինութեան նպաստող մէկը, ինչպէս կրնայ հասկցուիլ, մեր վարն առաջ բերած յիշատակարաններու պարունակութենէն, հետեւաբար «Ամիրդօլ»ը՝ «Ամլորդւոյ»ի փոխել, եւ անուանել այնպէս՝ մեզի համար միշտ խնդրական կ՚մնայ:*

*Վանքը շատ գեղեցիկ դիրք մ՚ունի, եւ այժմ իր շուրջը գտնուած բարձրաբերձ բարտիի ծառերն ալ՝ ա՛լ աւելի մեծ փայլ ու գմայլում մը կուտան արդէն գեղեցիկ այդ դիրքին: Կ. Պոլսոյ մէջ Գրիգոր Մարզուանցիի Տպարանը, 1719ին տպագրուած Զենոբ Գլակի եկեղեցական պատմութեան վերջերը «Յիշատակարան պատմագրաբար» հատուածին սկիզբները, Յովհաննէս Կոլոտ եւ Գրիգոր Շղթայակիր Վարդապետք, այս վանքի դիրքին վրայ հետեւեալ կերպով գրած են. — «Գթութեամբն Աստուծոյ մեք նուաստ ծառայքս նորա, Գրիգոր եւ Յովհաննէս սպասաւորք Սուրբ Աւետարանին՝ գկնի վախճանեցման երջանկազարդի... Հօր մերոյ Տեառն Վարդանայ Րաբունապետի, հողմավարմամբ իբրու եղեալ տարաքեցիկ ի բնիկ... նշանաւոր... համալսարանէս մերմէ, ի տեղին Սալնոյ ձոր... որ ածանցեալ կոչի Բաղէշ: Ի սոյն Աստուածապահ քաղաքիս շինեալ ի վիմածիլ բլրոջ գագաթան Աստուածաբնակ ուխտ... յանուն սրբոյն Յովհաննու Կարապետին: Սահմանաւորեալ արեգակնածագ կողմամբն զարմանաշար աղբերակօք կարկաչահոսիւք եւ ծաղկապաճոյճ փոքր պարտիզիւ: Իսկ յարեւմուտն ծիծաղածաւալ երկարաչու վիմաբուղխ յորդ ընթացքն գետով, եւ թեկնաթէկ հեզաքայլ առուին, ոլորտախաղացեալ առ հարաւով՝ գեղաւորեալ ծառատնկօք պտղաւէտիւք: Իսկ Հիւսիսոյ առ մուտն արեւու՝ եւ բարձրաբերձ տամբք քրիստոնէից՝ հպաւորեալ շիրմիւք հաւատացեալ ննջեցելոց»:*

*Այս վանքի անցեալը փառաւոր եղած է, սրբավայր մը, որ ունեցաւ ծաղկեալ եւ կազմաւորեալ միաբանութիւն, եւ Ձոն Բարսեղի նման քանի մը տասնեակ գիտնական եւ գրական վարդապետներ, եւ ժամանակ*

*մ՚ալ վանքն եղաւ Եպիսկոպոսանիստ, եւ Աղբակեցի կամ Գաւառցի Բարսեղ՝ որ աշակերտն էր Ոստանձի Բրգուլթ Յովհաննէս Վարդապետին, Բաղիշեցի Վարդան մեծ Վարդապետներն ալ այս վանքի նշանաւոր ներկայացուցիչներն եղան ԺԶ. եւ ԺԷ. դարերուն մէջ. ասոնք ալ վանքը գրեթէ ի հիմանէ նորոգեցին, սրբատաշ քարերով, ու վայելուչ եւ հաստատուն կերպով, եւ հաստատեցին Ուսումնարան մը, որ հռչակաւոր եղաւ: Բարսեղ միշտ հսկող Ուսումնարանին վրայ, եւ միւսն Վարդան՝ վարժապետ, այսպէս հասուցին նշանաւոր աշակերտներ, ինչպէս՝ Յովհաննէս Կոլոտ, Գրիգոր Շղթայակիր, Տիարպէքիրցի Ծաղիկ Երաժիշտ Սարգիս, Մարզուանցի Գրիգոր Դպիր, եւն, եւն.: Յովհաննէս Կոլոտ, Գրիգոր Շղթայակիր արդէն յայտնի են, եւ Կոլոտի Դպրոցին աշակերտ՝ Նալեան պատրիարքն ալ յայտնի է, բայց Երաժիշտ Ծաղիկ Սարգիսը Սղերդի Ս. Կոնոնոսի վանքին մէջ վարդապետ եղաւ եւ միաբան. Մարզուանցի Գրիգոր Կ. Պոլիս անցնելով Տպարան մը հաստատեց, եւ Գրիգոր Շղթայակիրի աշակերտ Բաղիշեցի Մարգարն ալ՝ քահանայ ձեռնադրուեցաւ Բաղէշի վրայ:*

*Վանքի Տաճարը բաւական ընդարձակ է, ունի 15x20 ճարտարապետական կանգուն տարածութիւն, երկու կարգ երեքական սիւներու վրայ բարձր կամարներով, որոնց վրայ կ՚գտնուի փոքրիկ, բայց գոթական ոճով շինուած կաթողիկէ մը: Տաճարին մէջ որմերու վրայ քանդակուած զանազան զարդեր, բազմաթիւ Խաչեր, դռներու, խաչկալներու եւ Եպիսկոպոսական աթոռի վրայ եղած գեղեցիկ ձեռարուեստները մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեն հետաքրքիր դիտողաց: Բեմին աջակողմը զետեղուած է քար մ՚ալ, վրան մեծ Խաչ մը քանդակուած, որուն համար կ՚ըսուի աւանդութեամբ՝ թէ Թադէոս Առաքեալին օծած քարն է: Տաճարին դասին մէջ, բեմին առաջքը կ՚երեւին երկու գերեզմաններ, տապանաքարերով, որոցմէ մին՝ Բաղիշեցի Վարդան մեծ Վարդապետին է, միւսն՝ Աղբակեցի Բարսեղ Վարդապետին, արեւմտեան հիւսիսային անկիւնն ալ կան նաեւ ուրիշ գերեզմաններ, որոնց վրայի գրուածքներն առաջ պիտի բերենք վարը:*

*Ներկայիս մէջ վանուցս ներքին ու շրջափակի շէնքերը շատ մը նորոգութեան կարօտ եւ բաւական ժամանակէ ի վեր իբրեւ եկեղեցի կ՚գործածեն իրենց, Բաղէշի Ամիրդօլի Թաղեցիները: Եթէ կայ բան մը, որ այժմ յիշատակութեան արժանի ըլլայ, ինչպէս կ՚ըսուի, Վանքն ունի քաղաքին մէջ 25 կտորի չափ խանութներ, ջաղացք մը, եւ 35 կտորի չափ ալ մշակելի արտօրայք, որոնք բաւական հասութաբեր են եղեր, եւ ամէնէն աւելի յիշատակելին՝ Թանգարան մը, որ ունի եղեր իր մէջ բաւական թուով ձեռագիր մատեաններ. այլ եւ այլ տեսակներով, որոնք*

*կ՚պահուին եղեր դարակի մը մէջ[2]:*

*Գալով յիշատակարաններուն.*

*Վանքի արտաքին մեծ դրան ճակատը քանդակուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՕՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ ՇԻՆԵՑԱՒ ԳԵՂԵՑԿԱՁԱՐԴ ՏԱՃԱՐՍ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՍ ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՂԻՍ ԺՈՂՈՎՐԴՈՅ, Ի ԹՎԻՆ ՌՃԽԳ. (1694) ԱՄԷՆ»[320*]:*

*Տաճարի կաթողիկէին չուրջն ալ կայ հետեւեալը. «Ի ԾԱՅՐ ԹԼԻՈՅՍ ԻՁ. ՅՈՐԵԼԻՆԻ, ԻՆՆԵԱԿ ԹՈՒՈՅ ՊԱԿԱՍ... ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՅ ԺԱ. ՇԻՆՈՒՄՆ ԵՂԵՒ ՍՈՒՐԲ ԳՄԲԵԹԻՍ, ԾԵՐՈՒՆԱԶԱՐԴ ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՆԻՍ, ԵՌԱՆԴՈՒՆ ՀՈՎՈՒԱՊԵՏԻՍ, ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՍ, ՄԻՇՏ ՄՇՏԱՇԷՆ ՎԱՆՈՐԷԻՑՍ, ՀՕՐՍ ՄԵՐՈՅ ՏԷՐ ՂԱԶԱՐԻՆ... ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻՆ»:*

*Սոյն արձանագրութեան ներքեւ գրուած է նաեւ հետեւեալն. — «ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՎԱՆՔԻՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՌՄՂԱ. (1842) ԹՈՒԱԿԱՆԻՆ»:*

*Տաճարին մէջ Վարդան վարդապետի գերեզմանին վրայի գրուածքն է. — «ՈՎ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՓՐԿՉԻՆ, ԲԱՐԵԽՕՍ[ԵԱ] ՅՕՐՆ ԱՀԱԳԻՆ, ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԵԾ ՏԷԼԷՏԻՆ, ՇԻՆՈՂՍ ՍՐԲՈՅ ԱՅՍՄ ՏԱՃԱՐԻՆ, ԹՎ. ՌՃԽԳ. (1694).*

*Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ, ՄԱՐՄԻՆՆ ՄԱՔՈՒՐ ՄԵԾ ՀՌԵՏՈՐԻ, ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՓԱՂԵՐԱՅԻ, [ԱՐԻ ԵՒ ՔԱՋ ՎԱՐԺԱՊԵՏԻ, ԽԱՐԱԶՆԱԶԳԵԱՑ ՃԳՆԱՒՈՐԻ, ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ] ՎԱՐԺԱՊԵՏԻ [ՎԱՐԴԱՊԵՏԻ], ՈՐ Ի ՀՈՎՏԷՍ ՅԱՅՍ ՏՐՏՄԱԼԻ, ԵՂ ԱՌ ՓՐԿԻՉՆ Ի ՅՈՅՍՆ ԲՆԱՒԻ, [ԲԱՐԻ] Ի .ԻԳ. ՅՈՐԵԼԷՆԻ, ԵՐԵՔ [ԵՐՐԵԱԿ] ԹՈՒՈՎ [ԹՈՒՈՅՆ] ՅԱՒԵԼՈՐԴԻ [ՅԱՒԵԼԱԴՐԻ], ՈՐ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ՋՈՂՈՐՄԻ»[321*]:*

*Տաճարին գրէթէ մէջտեղը, այն է դասէն քանի մը քայլ դէպ ի արեւմուտք, ուրիշ երկու գերեզմաններ կան, միոյն համար կ՚ըսուի թէ՝ Մկրտիչ Եպսկ. Քարհատեանին է, եւ գրուած է վրան. «ՌՅԳ.» թուականը, եւ միւսին համար Վարդան Արքեպիսկոպոսին է, կ՚ըսեն. գրուած է վրան՝ «ԻՁ. ՅՈՐԵԼԻՆԻ. ԻՆՆ ՊԱԿԱՍ»: Տաճարին արեւմտեան հիւսիսային անկիւնն ալ կան երեք գետնատարած գերեզմանաքարեր, որոց միոյն*

---

[2] Ժամանակն է, թէեւ քիչ մ՚ալ անցած, կարծենք թէ, պէտք է այլ եւս Առաջնորդներն ու Տեղապահներ, իրենց ուշադրութիւնը դարձնեն, շաբաթը գոնէ օր մը, մեր այդ երանելի նախնեաց մաքուր մատներով տողուած, եւ անխոնջ ու մեղուաջան աշխատութիւններով ծաղկեցուցած անգին գանձերու՝ Գրչագիրներուն: Թող թղթատեն զանոնք, ցուցակագրեն, եւ այժմեայ մնացածներն ալ, որք մեզ համար դարձեալ թանկագին են, բոլորովին մօտաւոր կորուստէն ազատեն: Այս է մեր՝ եւ ամէնուն փափաքը: Եթէ յաւակնութիւն ալ համարուի, կ՚ուզենք այս տեղ ըսել թէ՝ թուով աննշան քանի մը ձեռագիրներէ ի զատ, ամբողջ Կեսարիոյ Վիճակին Վանորէից, Եկեղեցեաց եւ մասնաւորաց գրչագիրները, թուով գրէթէ 500, ըստ ներկայ պահանջման, ցուցակագրած ենք կանոնաւորապէս, եւ տպագրութեամբ ի լոյս ընծայելու համար յարմար առիթի մը կ՚սպասենք:

*վրայ գրուած է. – «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵՐՈՅ ՊԵՏԻ ԿՈՂՏԱՆՑԻ ԶԱՔԱՐԻԱՅԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԵՐԿՐԷՍ ՅԵՐԿԻՆ ՌՄ. ՔԱՌԱՍՈՒՆ ՎԵՑԻՆ, ՆՈՅԵՄԲԵՐԻ Ա.»:*

*Ամրդօլի այս վանքին համար ի ձեռին ունինք առ այժմ հետեւեալ յիշատակարաններն ալ.*

*ԺԵ. դարուն գրչագրուած Յայսմաւուրքի մը յիշատակարանն է. ա. «Փառք… Եւ ես՝ անպիտանս… գրիչս Կարապետ, տեսի զփափաք ամենօրհնեալ քրիստոնէին Խօճայ Թաճդնին, եւ յանձն առեալ գրեցի ի քաղաքս Արճէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարին, եւ այլ ամենայն սրբոցս, որք աստ կան, ի թըւականիս [Հայոց] ՊՁԶ. (1437), ի Հայրապետութեան Տէր Կոստանդնի, եւ յԱռաջնորդութեան, [երկրիս Քաջբերունւոյ] եւ ամենայն քրիստոնէից ազգի, մեծ հռետորին, եւ քաջ քարտուղարին, Թումայ Րաբունապետին, քանզի յայսմ վերջին ժամանակիս, սա միայն յայտնեցաւ ճշմարիտ քարոզող հօտիս [ազգիս հայոց] եւ պարծանք ամենայն վարդապետաց եւ կրօնաւորաց: Վասն զի առնէր եւ ուսուցանէր ամենեցուն զսրբութիւն եւ զառաքինութիւն, քանզի արեգակն էր բերան սորա եւ լոյս փայլէր ի պրակաց բանիցն, որ շուրջ էին զնովաւ…*

*Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց… անյիշելիս ի գրչաց՝ սուտանուն Կարապետ աշխարհի երէցս, ծառայ եւ աշակերտ սմին, հրամանաւ սորին եւ միջնորդութեամբն, ըստ իմում տկարութեամբս յանձն առի, եւ ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսա: Վասն զի այսչափ գծագրելս շնորհիւ եւ ողորմութեամբ սորին է՝ Թումա Վարդապետի: Որոյ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս հաստատուն եւ անշարժ պահեսցէ զսա ի վերայ գաւազանի իշխանութեան իւրոյ, [եւ յետ աստեացս ելանելոյ՝ երկնից արքայութեան արժանիս արասցէ, հանդերձ ծնողօքն եւ ամենայն արեան մերձաւորօքն, ամէն]: Ստացող գրոցս զԽօճայ Թաճդինն, եւ զծնողսն իւր [Ամիր-Հասան եւ զԹարէզ-Մելիքն], զկենակիցն զԴիլքուշատ, եւ զհանգուցեալն ի Քրիստոս զԱլամշա, եւ զծաղկեալ զաւակսն իւր [զՍքանդար եւ զՆասրադին], եւ զեղբարսն [զԱմիրդօլ, զԱբդըլքարիմ]: Նաեւ զծնօղքն մեր՝ զՅովհաննէս քահանայ եւ Զըմրութ, եւ զեղբարքն իմ զՄկրտիչ, զՄելքիսեթ, եւ զՎարդան քահանայս, եւ զուսուցիչն մեր զԹումայ Վարդապետն՝ զվերոյիշեցեալն, եւ զՅովհաննէս Եպիսկոպոսն, որ զօրինակն շնորհեաց, եւ զորդին իմ զՍտեփաննոս Սարկաւագն, որ եւ նա գրեաց: բ. [ստացողի յիշատ.] – Ես՝ [Թաճդին, Հասանի որդիս], գնեցի զՋաղացն Շամօյէն, [հայի եւ տաճկի վկայութեամբ], եւ բնական մուլք տուի Սուրբ Յովհաննիսին, Ամրդօլի, ինձ բարի յիշատակ, եւ իմ ծնողացն Ամիրի-[Հասանի]ն եւ Թավրէզ- Մէլիքին, եւ եղբարցն իմոց Ամիրդօլին, եւ Աբդըլքարամին, Կարապետին, [Մկրտչին], եւ իմ զաւակացն Սքանդարին եւ Նասրադ-*

*նին, եւ իմ կենակցին Դիլքուշատին, եւ Ալամշին, [եւ ամենայն արեան մերձաւորացն, ով որ կարդայք, լի սրտիւ աստուած-ողորմի ասացէք սոցա]:*

*[Եւ զՋաղացն մեր Թաղի վկայութեամբ ամենու, եւ քաղաքացւոցն՝ Հայու եւ տաճկի վկայութեամբ, եւ վանից երիցանու վկայութեամբ:] Ես՝ Բարսեղ Եպիսկոպոս վկայ, ես՝ Մատթէոս աբեղայս վկայ, ես՝ Աստուածատուրս վկայ, ես՝ Ատոմ աբեղայս վկայ, ես՝ Ղազար Վարդապետս վկայ, ես՝ Խոսրով աբեղայս վկայ. առաջի Աստուծոյ վկայ եմք, որ ջաղացն վանիցն գնեցաւ՝ [տաճկի եւ հայի ձեռօք]»* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 474-5]*:*

*Դարձեալ ԺԵ. դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը մէջ յիշատակարան մը. – «Փառք… Ուստի եւ տեսեալ սորա, անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից, անուն Պարոն Ամիրդօլ: Եւ ետ գրել զսա մեծաւ փափաքմամբ եւ յօժար կամօք, հրամանաւ քաջ րաբունւոյս մերոյ Ղազարայ, ի ստոյգ եւ յընտիր օրինակէ, յիշատակ հոգւոյ իւրոյ, եւ ծնողաց իւրոց, հօրն Ամիր-[Հասանին], եւ մօրն [Թավրէզ]-Մէլիքին, եւ եղբարցն իւրոց [պարոն Թաճադնին, պարոն Ապտուլ-Քարամին], պարոն Կարապետին, պարոն Մկրտիչին, եւ քըւերցն Շիրին-Խաթունին, Շադուն, [Ամիր]մէլիքին, եւ ամենայն ազգատոհմացն իւրոց… ԶԱմիր-դօլն եւ զկողակիցն իւր զՄըլքան-Խաթուն, եւ զծաղկեալ զաւակս իւր՝ զպարոն Գորգն, եւ զդստերքն զԹաւրէզ-Մելիքն եւ զԳօզալ -Խաթուն… (յիշեցէք):*

*Եւ զանպիտան գրչակս զՊօղոս աբեղայ, եւ զհոգեւոր հայր եւ զուսուցիչ իմ զՂազար Րաբունապետն, որ բազում աշխատութեամբ եւ չարչարանօք սնոյց եւ հասոյց զմեզ ի կարգս քահանայութեան, որումն վարձահատոյց ամենեցուն Քրիստոս, վարձս բարեաց հատուցանէ նմա, հարիւրապատիկ աստ եւ հանդերձեալն ամէն: Նաեւ զծնողքն իւր՝ զհայրն զԱստուածատուրն, եւ զմայրն զԱմէն-Տիկինն, զեղբարքն զՊօղոս եւ զԲաղդասարն, զհանգուցեալսն ի Քրիստոս…*

*Եւ զիս՝ զանհաւասարս ի կարգս կրօնաւորաց, …նաեւ զմարմնաւոր ծնողքն իմ՝ զհայրն իմ զՄխիթարն, եւ [զմայր իմ] զՍիրմայ, եւ զեղբարքն իմ զԿիրակոս, եւ զՄարտիրոս, եւ զԽօճայ Յակոբն… Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի Վանքս Բաղիշոյ, որ Ամիրդօլ վերաձայնի, ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննու Կարապետին եւ Սուրբ Սիոնի, [ի] Թուական[ութեանս Հայոց] ՋԴ. (1455)»* [վերահրատ. ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 56]*:*

*ԺԵ. դարուն մէջ գրչագրուած հաւաքածոյ ձեռագիր մատեանին մէջ, վերջին կազմողէն գրուած է հետեւեալն. – «Գրեցաւ սակաւ այս բան Թվ. ՌՃԺԸ. (1669), ձեռամբ Վարդանայ լոկոյ եւ դպրի Վարդապե-*

*տի Բաղիշեցւոյ, յշ. զմեզ եւ զծնողն մեր ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, եւ Աստուած զձեզ յիշէ: Յիշատակ է այս Ամիրդօլու Սուրբ Յովհաննէսին ի Բաղէշ ի ձեռս մեր»[322]* (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

Բիւզ., ԺԱ. տարի, 1907, Թիւ 3.340 (22/Թ-5/Ժ), էջ 4

## 219/2. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ԳՈՄՈՑ[323]*

*Բաղէշի հարաւային արեւմտեան կողմը, քաղաքին գրեթէ կից կ՚գտնուի այս Վանքը, որուն երբեմն կ՚ըսուէր նաեւ «Տատրկայ» կամ «Տատրաբնակ Վանք Ս. Աստուածածնի», եւ երբեմն ալ «Գոմաց» կամ «Գոմոց վանք Ս. Աստուածածնի»: Վանքի հիմնարկութիւնը թէեւ աւանդութեամբ Առաջին դարուն մէջ Թադէոս Ս. Առաքելոյն կ՚դրուի, բայց վերջէն, կ՚երեւի երկար տարիներ ամայի մնացած է, եւ ԺԶ. կամ ԺԷ. դարուն նոր վերահաստատութիւն տեսած է, կանոնաւոր ու կազմաւորեալ միաբանութեամբ:*

*Վանքը թէեւ փոքր է, բայց գեղեցիկ դիրք մ՚ունի, եզական եւ գեղեցիկ օդով, վճիտ ու մաքուր ջրով օժտեալ: Տաճարն ալ թէեւ փոքրիկ, բայց սիրուն է եւ գմբեթաւոր: Տաճարի աւագ դրան վրայ կ՚գտնուի հետեւեալ յիշատակարանը. «ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐԱՇԻՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՔՍ Ի ՀԻՄԱՆԷ ՍՐԲԱՏԱՃ ՎԻՄՕՔ ՁՈՐԵՔԱՆԿԵԱՆ, ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՄԵՍՐՈՊ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՕԳՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԽՕՍ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ Ի ԹՎԻՆ ՌՃԽ. ԱՄԷՆ (1691)»[324]*:*

*Վերջերս վանքը նոր նորոգութիւն մը եւս տեսաւ. սենեակներու, եւ այլն շինութեանց ծախքերն հոգացուած են, կ՚ըսուի, Շողիկեան տան բարեպաշտօն անդամներուն կողմէն: Ս. Երուսաղէմի նախկին միաբան եւ այժմ հանգուցեալ Սրապիոն Վարդապետի համար ալ կ՚ըսուի թէ իր անձնական ծախքով երբեմն մանր նորոգութիւններ ըրած ըլլայ վանքին մէջ, ուր կ՚բնակէր ինքն ալ երբեմն: Վանքն ունի սեփական մշակելի բաւական հողեր, եւ քաղաքին մէջ ալ խանութներ, որոնք բաւական հասութաբեր են: Կ՚ կառավարուէր մինչեւ վերջերս մասնաւոր վարդապետ-վանահօր մը միջոցաւ, բայց այս վերջին տարիներու համար մօտէն ծանօթութիւն մը չունինք:*

*Այս վանքի մասին առ այժմ ի ձեռին ունինք հետեւեալ միակ յիշատակարանը, որ ԺԶ. դարուն մէջ գրչագրուած ձեռագիր Աւետարանէ մը. օրինակուած է. «Յիշատակ Տէր Մելքիսեթ կրօնաւորին... ի դուռն Ս. Սարգսի եւ Ս. Գէորգայ... գծող Եղիա վարդապետ... ծաղկեալ եւ կազմեալ ի Բաղէշ ի Վանքս Գոմոց ի դուռն ամենօրհնեալ Սուրբ Աստուա-*

*ծածնին եւ Սուրբ Գէորգայ, յԱռաջնորդութեան տեղւոյս Տէր Սարգիս Արհիեպիսկոպոսի»*[325*]*:*

## 220/3. Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔ ԱՒԵԽԻ[326*]

*Բաղէշի արեւելեան կողմն եւ քաղաքին գրեթէ կից է, կ՚ըսուի, Ս. Թադէի վանքը, որ այժմ կիսափուլ է, բայց սիրուն եւ ճարտարարուեստ եկեղեցի մ՚ունի, որ մինչեւ ցայժմ կանգուն է, կ՚ըսեն: Վանքին մէջ կ՚բնակին քանի մը գիւղացիներ, որոնք վանքի պահպանութեան պաշտօնն ալ կ՚կատարեն, եւ վանքի սեփական արտօրէից մշակման եւ ջաղացքի գործերով կ՚զբաղին եղեր: Ջաղացքը բաւական արդիւնաւոր, եւ արտորայք ալ տարին հինգ հարիւր գրիւի չափ ցորեն կրնան արտադրել կ՚ըսուի: Ունի աղբիւր մը բաւական վճիտ ու զով ջրով:*

*Ժողովրդեան մէջ հետեւեալ աւանդութիւնը կ՚պատմուի: Իբր թէ հին ժամանակներու մէջ բորոտութենէ վարակուած օտար աղջիկ մը իր հիւանդութեան պատճառաւ կ՚լքուի իր ծնողաց կողմէն. աղջիկը կ՚սկսի շրջիլ օտար երկիրներու մէջ. երբ Բաղէշի կողմերը կուգայ, օր մը կը դիմէ Ս. Թադէի վանքը, անոր աղբիւրի ջրովը ցեխ կ՚պատրաստէ, եւ իր մարմնոյն ամէն կողմերուն վրայ քսելով ցեխը, կ՚բուժուի, եւ ասկէ կ՚առնէ, կ՚ըսեն, վանքն իր անունը «Ավեխ», որ քրթերէն կ՚նշանակէ «ջուր» եւ «ցեխ»: Եւ մինչեւ այժմ ալ բարեպաշտ հաւատացեալ կանանց համար սոյն աղբիւրի ջուրն ամենաբոյժ կ՚համարուի:*

*Այս վանքին մասին ալ առայժմ ունինք ի ձեռին հետեւեալ յիշատակարանը, որ ընդօրինակուած է ԺԵ. դարուն գրչագրուած ձեռագիր Աւետարանէ մը: «...Գրեալ յԱվեխու վանք մերձ ի Բաղէշ, յԱռաջնորդութեան Յակոբ Եպիսկոպոսի եւ Վարդան Հէրպետի, ձեռամբ Զաքարիա Սարկաւագի, ի Հայրապետութեան Տեառն Սարգսի ընդհանուր Հայոց Կաթողիկոսի [Վաղարշապատու] Էջմիածնի, եւ Աղթամարայ Տեառն Ատովմի, ի թվ. [Հայոց] ՋԽԵ. (1496), [ի ղանութեան ազգին Նետողաց Ռուստում-բէկին, ի դառն եւ ի չար ժամանակիս, որ բռնացեր են ի վերայ Հայոց ազգիս...]»*[3] [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 231]:

---

[3] Բաղէշէն կէս ժամու չափ հեռու, արեւելեան հիւսիսային կողմ, կ՚յիշատակուի նաեւ Աւեխու կամ՝ Ախեվու կամ՝ Ավհեղու, կամ՝ Աւեղի կամ՝ Աւեթի Ս. Աստուածածին անունով վանք մը եւս, որուն համար ալ կ՚ըսուի թէ կիսաւեր է, եւ ունի եղեր սիրուն, բայց փոքրիկ եկեղեցի մը հաստատուն: Ունի եղեր նաեւ բաւական արտորայք եւ ծառաստան մը: Վանքին պահպանութիւնը յանձնուած է գիւղացիի մը: Մեք այն կարծիքն ունեցանք թէ «Աւեխու Ս. Թադէի» վանքը, եւ «Ախեվու Ս. Աստուածածնի» այս վանքը գուցէ միեւնոյն վանքերն են, որովհետեւ Ս. Թադէի վանքի շրջանակէն դուրս, քիչ մը հեռուն կ՚գտնուին այն երկու քարաշէն ակերը, որք յանուն Ս. Թադէոսի եւ Բարթուղիմէոսի են, եւ ուր հիւանդ եւ ախտաւոր անձինք կ՚այցելեն ի բժշկութիւն: Ասոնց միեւնոյն եւ կամ զատ զատ վանքեր ըլլալուն վրայ կ՚սպասենք ստոյգ տեղեկութեան մը, Բաղէշի վանասէր ու բանասէրի մը կողմէն:

## 221/4. ԽՆԴՐԱԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ[327*]

Բաղէշի հարաւ-արեւմտեան կողմը, գրեթէ կէս ժամու չափ հեռաւորութեամբ, հոյակապ վանք մ'է «Խնդրակատար Ս. Աստուածածինը», եւ կառուցուած է փոքր դաշտի մը մէջ, գեղեցիկ դիրքով ու տեսարանով: Թէեւ փոքրիկ՝ բայց սիրուն եկեղեցի մ'ունի գմբեթաւոր: Եկեղեցին թէեւ վերջէն նորոգութիւններ տեսած է, բայց իր հնութիւնն երբեք կորսնցուցած չէ: Բաղէշի վանքերուն մէջ ամէնէն չէնն է, կ'ըսուի, այս Խնդրակատարի վանքը. իր դիմացը Ամպ կամ Համբ անունով փոքր գիւղ մը կայ:

Վանքին հիմնարկութեան թուականը մինչեւ Թադէոս Առաքեալին ժամանակը կ'հանեն հետեւեալ աւանդութեամբ. «Ս. Թադէոս Առաքեալը մենաստաններ շինելով, երբ կուգայ այս վանքին տեղւոյն վրայ, ինքնին մեծ փափաք մը կ'ունենայ հոն ալ Վանք մը, Մենաստան մը շինելու, եւ կ'ըսէ. Երանի՜ թէ երկրիս վրայ 1001 եկեղեցիներ շինելէս ետքը մեռնէի: Այս ի սրտէ յայտնուած խնդրանքին ու փափաքին վրայ, գիւղին վրայէն ամպէ մը ձայն մը կուգայ լսելի Առաքեալին՝ թէ «Խնդիրքդ ընդունուեցաւ». վանքը կ'կառուցուի, եւ ահա այս պատճառաւ գիւղին անունը «Ամպ», եւ Վանքին անունն ալ «Խնդրակատար» կոչուեցաւ, կ'ըսեն»:

ԺԷ. դարուն մէջ մեծ նորոգութիւններ կատարած են այս Վանքին վրայ, Բաղէշի Առաջնորդներէն Բաղիշեցի Դաւիթ Վարդապետը եւ իր աշակերտն Աւետիք Վարդապետ, որ նաեւ Առաջնորդ եղած է Բաղէշի, Դաւիթէն անմիջապէս ետքը: Վանքն ունի իրեն հինգ թեմական գիւղեր, եւ սեփական խանութներ բաւական հասութաբեր. կ'կառավարուի քահանայ Վանահայրի մը հսկողութեան ներքեւ: 1898ին Որբանոց Վարժարան մը բացուած էր Վանքին մէջ, բայց այժմ կ'կարծենք թէ գոցուած է, նիւթական պատճառներով[328*]:

Այս վանքի մասին ունինք հետեւեալ յիշատակարանները: ԺԵ. դարուն գրչագրուած ձեռագիր «Նարեկի լուծմունք» անուն մատենին յիշատակարանէն. «Փառք... Արդ ես մեղապարտս ի մանկունս Եկեղեցւոյ, Նուաստ վարդապետս Թովմա, ի յուխտէ Ս. Աստուածածնին, որ այժմ «Մեծոփայ Վանք» վերաձայնի, սրբագրեցի զաղօթամատոյցս յընտիր օրինակացն յԱստուածաբան վարդապետացն եւ հոգի ընկալ մերոյ թարգմանչացն: Հրամանաւ սուրբ եւ երջանիկ վարժապետացն մերոց, համշիրակ հարազատ հոգեւոր եղբարցն, եւ բաժանեցի յիններորդ աստիճան զաղօթս հասարակաց դիւրահաս եւ դիւրագիւտ ամենայն իմաստուն մտաց: Եւ թոշակ բարեյիշատակ եկեղեցւոյս մեր, ի փառս անմահ թագաւորին Քրիստոսի, եւ ի լուսաւորութիւն հոգեւոր պայծառութեան որդւոցդ Աստուծոյ գրոց աշակերտեալ անձանց եւ քահանայական դա-

*սուց միանձանց, ամէն: Արդ, գրեցաւ սա ի ՋԷ. (1458) Թուականիս, ի լուսազարդ անապատիս Աստուածածնի Տիրամաւր Տաճարիս, որ այժմ Խնդրակատար վանս կոչի: Յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց՝ հօրն իմ Մուրադին եւ մօրն իմ Մարգարտին, եւ հօրեղբաւրն [իմ Էվադին], եւ Տէր Աստուածատուր սրբբալոյս Քահանային...»* [մասնակի վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ. հ. Բ., էջ 109-10]*:*

*ԺԶ. դարուն գրչագրուած Գանձարան անուն ձեռագիր մատենի յիշատակարանը. «Փառք... Արդ ես յետինս ի կարգաւորաց եւ անարժանս ի Քահանայից Վարդան սուտ անուն, խաբեբայ եւ ոչ Քահանայ, շնորհիւ Տեառն սկսայ եւ աւարտեցի զսուրբ տառս, ի Թվ. Ռ. եւ ԺԶ. (1567), ի Բաղէշ քաղաքի եզերն, ի գիւղս Մարգորգ. ընդ հովանեաւ Ս. Գէորգայ, ի Թագաւորութեան Սուլթան Սէլիմին (երկրորդ), ի Կաթողիկոսութեան մերոյ Տէր Բարսեղին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, եւ Տէր Միքայէլին, եւ ի մերոյ Սուրբ ուխտի Առաջնորդութեան, Խնդրակատար Ս. Աստուածածնին Ներսէս բանիբուն եւ երջանիկ րաբունապետին, որ զԳանձարանս ետ գրել (ի յիշատակ) Շնորհաւորին, եղբօրն Մուրատշէն եւ քուերն Քնքուշին... Դարձեալ յիշեցէք զՐաբունապետն մեր զՏէր Ներսէս Բաղիշեցին եւ զհոգեւոր զաւակսն, որ են աշակերտք իւր, զՆերսէս բանիբուն եւ քաջ Րաբունապետ Ամկեցին, զՀէրապետ Վարդապետ եւ զԳրիգոր աշակերտն, եւս առաւել զմիաբանքն իւր զՂազար Աբեղայն, որ յայսմ ամի Հէրպետ էր, եւ զՅակոբ կրաւնաւորն եւ զԱբրահամն եւ զայլսն ամենայն զօտար եւ զընական. զտնտես եւ զսարկաւագունս, զմշակս եւ զայնոսիկ, որ երախտիք ունին եւ աշխատանք Սուրբ Վանուցս: Դարձեալ յիշեցէք զՏէր Ներսէս, որ ետ գրել զԳանձարանս եւ զԱւետարանն եւ զերկու ձեռք ժամու հանդերձն զպղնձագործ Մագսուտի արտերն, զմահտեսի Մուրատի արտն եւ ետ ի դուռն Խնդրակատար Ս. Աստուածածնին ոխֆ (=վագֆ) եւ յիշատակ»*[4]*:*

---

4 Բաղէշի մէջ, վերոյիշեալ Ամպ կամ Համբ գիւղի այժմեայ եկեղեցւոյն համար ալ կ'ըսուի, թէ ժամանակին իր բեմն վանք եւ երբեմն ալ ուխտատեղի եղած է յանուն Ս. Յակոբայ Տեառնեղբօր (Բիւզ., 1897-98, թ. 351, էջ 1):

# Ա. ԲԱՂԷՇԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., ԺԱ. տարի, 1907, թիւ 3.368(27/Ժ-7/ԺԱ), էջ 1-2*

## 222/5. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[329]*

*Այս վանքը, որ յանուն Անանիա Առաքելոյն կանգնուած էր, մօտի-կը կ'գտնուէր Ամիրդօլի Ս. Յովհաննու վանքին, եւ կ'ըսուէր նաեւ «Ս. Ջօրաւորի վանք», կամ՝ «Ս. Գէորգայ վանք»: Ի վաղուց անցած է ի չարս չաբաթացեալ Հայ Վանորէից: Այս վանքին մէջ, 1418 թուականին, Մկրտիչ անուն Սարկաւագը, որ կ'կարծուի թէ Մկրտիչ Նախաշն է, գրած է ձեռագիր Յայսմաւուրք մը, որուն յիշատակարանէն յառաջ կ'բերենք հետեւեալ մասը. «...Ըստ որում եւ սրբազան եւ մաքրամիտ կրաւնաւորն Մարտիրոսն, խնդիր եղեալ եռափափաք սրտիւ, եւ ստա-ցաւ զկարմրերանգ եւ զլուսաբորբոք կտակս, զպայծառութիւն Սուրբ Ե-կեղեցւոյ... ի վայելումն [անձին] իւրոյ... յիշատակ բարի ծնողաց իւրոց՝ Աբրահամուն եւ Քամալին, եւ եղբարց իւրոց Կիրակոսին եւ Մկրտչին... Եւ ես... մեղսամած եւ տարտամ ոգի Մկրտիչ գրիչս, որ կոչիմ Սարկա-ւագ, բայց բացասութեամբ եւ ոչ ստորասութեամբ, զի գործով եւ խորհրդով եւս վատթարագոյն գտանիմ քան զամենայն ոք ի ռամկաց, եւ զարտուղի մարմնական գնացիւքս, քանզի շնչմունք զանազան տա-պախառն փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ, եւ ախտք անհնա-րինք եւ հեշտութիւն ձգիչ, կարիք ի ձեռին, եւ անմտութիւն մերձ, ծու-լութիւն խաւարեցուցիչ եւ անարիութիւն պատեալ զինեւ: Արդ, թէ սխալանաց հանդիպիք՝ վասն այսր ամենայնի անմեղադիր լերուք... Գրեցաւ սա ի գաւառն Բաղիշոյ, ի գեաւղս որ կոչի Պոռ, ընդ հովանեաւ մեծաշնորհ եւ տիեզերահամբաւ սուրբ եւ գերապատիւ [առաքելոյն] Ա-նանիայի եւ Սուրբ Գէորգայ, ի Կաթողիկոսութեան մեր Աթոռոյն Տէր Պօղոսի. յամի ՊԿԷ. (1418) [Հայոց] թուականիս, բայց եղեւ կատարումն գրոյս [արաց ամսոյ ԻԱ. (21)] յաւուրն հինգշաբթի»* [Փիրղ. Նօտարք, 55-6. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 215]*:*

## 223/6. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ ՄԱՊՐԿՈՐԻ - ԾԱՊՐԿՈՐՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏ[330]*

*Բաղէշ քաղաքի շուրջը, այն է՝ Մապրկոր կամ Ծապրկորի թաղի հիւսիսային արեւելեան կողմը կառուցուած էր Ս. Կարապետի վանքը, որ թէեւ ի վաղուց անցած է ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից, բայց*

*փոքրիկ տաճարը մինչեւ ցայսօր կանգուն մնացած ըլլալով, եղած է ուխտատեղի, ուր կ՚դիմեն միշտ բարեպաշտ ուխտաւորք, եւ ամէն Կիրակի օրեր ալ տեղւոյն ժամկոչը կ՚փութայ ծխելու համար խունկը: Վանքն ունի եղեր բաւական մշակելի հողեր (երեսուն արտավար), արտորայք, որոնք այժմ այլոց սեփականութիւններ եղած են, կ՚ըսուի (Բիւ., 1897-98, Թ. 351, էջ 1):*

## 224/7. Ս. ՆԱՐԵԿԱՑԻԻ ՎԱՆՔ[331]*

*Բաղէշէն մէկուկէս ժամու չափ հեռաւորութիւն ունի Պօռ անուն գիւղը, Պօռէն ալ կէս ժամ հեռի կ՚գտնուի այս վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Պօռայ Վանք Նարեկայ», երբեմն ալ ըսուած է՝ «Ս. Յովհաննէս»: Շէն վանք մ՚է, երկու-երեք տարիներ առաջ վանահայր վարդապետ մը եւս ունէր, ունի ընդարձակ հողեր ու արտորայք՝ վանքին սեփականութիւն, եւ նաեւ պարտէզներ: Վանքին դրան առջեւն ալ կայ փոքրիկ, բայց գեղեցիկ պարտէզ մը: Այժմ ի՞նչպէս կ՚կառավարուի վանքը, եւ հողերն ի՞նչպէս կ՚մշակուին, ո՛ եւ է ծանօթութիւն մը չունինք: Այս վանքի մասին ունինք ի ձեռին հետեւեալ յիշատակարանն, որ քաղուած է ԺԶ. դարուն գրչագրուած ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանէն. «Փառք... Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ Նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս, ի թուականին Ռ. եւ Իէ. (1578). ի քաղաքիս որ կոչի Բաղէշ եւ ի վանքս Պօռայ, ի դուռն Ս. Յովհաննիսին եւ Հէրպետին Տէր Թումա մղտեսի կրօնաւորին, ի Հայրապետութեան Տեառն Սբ. Էջմիածնին Տէր Թադէոսին»[332]*: [5]*

## 225/8. ԱԹԱՆԱԳԻՆԷԻ ՎԱՆՔ[333]*

*Բաղէշէն չորս ժամու չափ հեռի, Մաճկոնք անուն գիւղի հիւսիսային կողմը, կ՚գտնուի այս վանքը, որուն կ՚ըսուի նաեւ «Ս. Աթանագինէի վանք Մաճկոնից», որ բարձրացած է պարսպապատ սարաւանդի մը վրայ գեղեցիկ դիրքով: Վանքն այժմ թէեւ կանգուն, բայց անտէր է եւ ամայի: Տաճարն եւ քանի մը սենեակներն ալ քայքայման վիճակի մը հասած են: Վանքի տաճարին դրան վրայ նորոգութեան համար յիշատակարան մը կայ, որուն թուականն է ՌՁԲ. (1633): Այս յիշատակարանն ամբողջութեամբ չունինք առայժմ ի ձեռին: Վանքն ունի եղեր ձեռագիր եկեղեցական մատեաններ, որոնք շատ անխնամ վիճակի մէջ թողուած են: Ունի նաեւ իր շուրջը մշակելի հողերով արտօրէից շարք*

---

[5] Այժմեայ Կաթողիկոսաց շարքին մէջ Թադէոս անունով Կաթողիկոս յիշատակուած չէ, սա կա՛մ փոխանորդ էր, կամ գուցէ ճակաթոռ:

*մը, ընդարձակ մարգագետին մը, անտառ եւ ջաղացք, ամենքն ալ վանքի սեփականութիւն: Հողեր ալ կան, որ գիւղային հողերուն հետ խառն են, եւ գիւղացիք գրեթէ իրենց սեփականած են եւ կ՚մշակեն միշտ: Ժամանակ մը քահանայ կ՚գտնուէր վանքին մէջ իբրեւ Վանահայր, որ իր հաճոյքին խաղալիք դարձուցած էր, կ՚ըսեն, վանքը, եւ վանքի սեփական հողերն անգամ անմշակ թողուցած:*

## 226/9. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ

*Բաղէշէն չորս ժամու չափ հեռի, Էրուն, Էրան կամ Էրէն անուն գիւղին մօտ կ՚գտնուէր Ս. Յովհաննէսի Վանքը, որ ի վաղուց անցած է ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից, այժմ միայն աւերակները կ՚երեւին (Բիւզ., 1900, թ. 1001, էջ 1):*

## 227/10. ՅԵԶՏԻԲՈՒԶՏԻ ՎԱՆՔ[334]*

*Բաղէշէն չորս ժամու չափ հեռի, Թուխ անուն գիւղին մօտը, Դատուանի ծովին վրայ կ՚գտնուէր, եւ կ՚ըսուէր Յեզտիբուզտի վանք: Այս վանքն ալ անցած է վաղուց ի չարս չաբաթացեալ Հայ վանորէից, որուն աւերակները միայն կ՚երեւին այժմ: Վանքի հողերն ալ անցած են բոլորովին Թուխ գիւղացւոց ձեռքը, որք կ՚մշակեն այժմ իբրեւ իրենց սեփականութիւն: Յեզտիբուզտ՝ պարսկերէնէ կրնայ մեկնուիլ՝ Աստուածատուր (Բիւզ., 1897-98, թ. 351, էջ 1. 1900, թ. 1127, էջ 1):*

## 228/11. Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ[335]*

*Բաղէշէն երեք ժամու չափ հեռի, Մօտկանի Դրձինք անուն գիւղին մօտ կ՚գտնուի վանքս, որ շինուած է յանուն Ս. Գէորգայ, կանգուն է այժմ, բայց ամայի է: Իր մօտիկն ունի 200-էն աւելի ընկուզի ծառեր, երբեմն ուխտի գացող բարեպաշտք այդ ծառերու պտուղէն կ՚ուտեն հոն, եւ սակայն ոչ ոք կրնայ հատ մը ընկոյզ իսկ իր հետը տանիլ, այն համոզումով թէ տանողին տունը կ՚քանդուի:*

## 229/12. Ս. ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔ[336]*

*Նոյնպէս Մօտկանի Աշպներ անուն գիւղին մէջ կը գտնուէր Ս. Դանիէլի վանքը, որ այժմ ուխտատեղի եղած է բարեպաշտներուն, ուր կ՚դիմեն միշտ յուխտ եւ երկրպագութիւն:*

## 230/13. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ[337]*

*Մօտկանի Գղեխ անուն գիւղին մօտ կ'գտնուէր այս Ս. Կիրակոսի վանքն ալ, որ նոյնպէս ուխտատեղի եղած է այժմ: Հուչակ հանած է, իբրեւ ամենաբոյժ, ինչպէս կ'հաստատեն ականատեսք: Ամէն տարի Վարդավառի տօնին օրը, ամենազգի ուխտաւորք կ'հաւաքուին եւ մատաղներ կ'մատուցանեն, կ'զոհեն մատաղի համար, բաց ի անթիւ հաւերէ ու աքաղաղներէ, մեծաւ մասամբ գառնուկներ ու ոչխարներ[338]*:*

## 231/14. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ. – ԾՂԱԿԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ[339]*

*Բաղէշի Ծղակայ անուն գիւղին մօտերը կը գտնուի եղեր այս վանքը, որուն կ'ըսուի նաեւ «Ս. Աստուածածնի Վանք Ծղակայ», կանգուն է այժմ ալ, բայց ամայի, վանքի սեփական հողերն ալ անցած են գիւղացւոց ձեռքը[340]* (Բէ-ղ. 1897-98, Թ. 351, էջ 1):*

**Բէ-ղ., ԺԲ. գալք, 1908, Թէ-3.446 (26/Ա-4/Բ), էջ 4**

## 232/15. ՄՈԻՍԿԱՑ ՎԱՆՔ

*Այս անունով վանք մ'ալ կ'յիշուի Բաղէշի Ջրհոր անուն գիւղի մօտերը: Գուցէ Յուսկայ (Յուսիկ) Վանք, որ այժմ կիսափուլ է եղեր, եւ եղած է ուխտատեղի:*

## 233/16. Ս. ԳԷՈՐԳԱՑ ՎԱՆՔ

*Բաղէշէն չորս ժամու չափ հեռի, Շամիրամ անուն գիւղի մօտերը: Այժմ թէեւ չէն է կ'ըսուի, բայց մեք ոեւէ տեղեկութիւն մը չկրցանք ստանալ թէ ինչպէս կ'կառավարուի, ունի՞ գոնէ վանահայր քահանայ մը, եւն:*

## 234/17. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

*Բաղէշէն վեց ժամու չափ հեռի Թեղուտի անուն գիւղի մօտերը կ'գտնուի, որուն կ'ըսուի նաեւ «Թէղուտի վանք Ս. Աստուածածնի»: Այս վանքն ալ չէն է կ'ըսուի, բայց մեք ասոր մասին ալ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք:*

*ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Այս տասնեւեօթը վանքերէն զատ, Բաղէշի մէջ եւ շրջակայքը կան նաեւ այլեւայլ ուխտատեղիներ, որոնց անուններն են՝ 1. Ս. Աստուածածին, 2. Գամաղիէլ[341]*, 3. Ս. Փրկիչ, 4. Ս. Յովհան, 5.*

*Երեք Մանկունք[342]*, 6. Ս. Գէորգ. ասոնք կ՚գտնուին Կորվու անուն գիւղին մէջ[1]։*

## 235/18. Ս. ԹՈՎՄԱՍԻ ՎԱՆՔ

*Մրորսայ (Ս. Թովմա՞ս) վանք, ունէր 20 արտավար հող[343]*։*

---

[1] Ս. Սիոն անունով մեծ ու ճոյակապ շատ ճին ուխտատեղի մը, Ամիրդօլի վանքին մօտերը եւ Ծէխիս անունով ուխտատեղի մ՚ալ այդ կողմերը, որուն մէջ կան քանի մը կրօնաւորներու գերեզմաններ։ Այս վերջին երկու ուխտատեղիք այժմ սեփականութենէ ելած են (Բիւզ., 1897-98, թ. 351, էջ 1)։

## Բ. ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՎԱՆՔԵՐԸ

### 236/1. ՍԻՐՈՒՆՔԱՐԻ ՎԱՆՔ[344*]

*Մանազկերտ աւանի մէջ էր այս վանքը, որ ի վաղուց անցած է ի շարս չաքաթացեալ հայ վանորէից: Այս վանքի տեղւոյն վրայ այժմ իսկ տեղեկութիւնք կ'պակսին մեզի, միայն ի ձեռին ունինք յիշատակարան մը, որ քաղուած է ԺԵ. դարուն մէջ գրչագրուած ձեռագիր Յայսմաւուրք մատեանէ մը, որ Բալուի Հաւաւ գիւղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ սեփականութիւնն է:*

*«... Գրեցաւ Սուրբ. Մատեանս ի ձեռն Մարգարէ կրաւնաւորի, ի գաւառիս Մենծկերտու, ի յանապատն որ կոչի Սիրունքարի, ընդ հովանեաւ Սուրբ Յակոբայ, ի թվ. [Հայոց] ՋԺԷ. (1468), [յաշխարհակալութեան Հասան բէկին...]: ...Այս եղեւ ի Հայրապետութեան Վաղարշապատու Տեառն Ռստակիսի Սուրբ Էջմիածնի Աստուածադիր Աթոռոյն, յեպիսկոպոսութեան Տէր Ստեփաննոսի, եւ ծերոյն՝ Տէր Ղազարոյ, արհ. Աստուած»[345*] [Թորոս Աղբար, Բ., էջ 377-8]:*

### 237/2. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

*Մանազկերտ գաւառակի Գօթանլը անուն գիւղին մօտերը: Միայն կանգուն կ'մնայ Վանքին Տաճարը, եւ եկեղեցի է այժմ նոյն գիւղացւոց:*

### 238/3. Ս. ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔ[346*]

*Մանազկերտի Տըրըգ անուն աւանին մօտերը կառուցուած է վանքս, որուն կ'ըսուի նաեւ «Տըրըգի Վանք Ս. Դանիէլ», իր տեղւոյն, դիրքին, եւ ներկայ վիճակին վրայ տեղեկութիւններ կ'պակսին մեզի, գուցէ այժմ ամայի: Ի լրոյ միայն գիտենք, թէ վանուց սեփական հողերն անցած են մօտակայ գիւղացւոց ձեռք: Վանքին*[1] *մէջ գտնուած խաչքարերու միոյն վրայ հետեւեալ թուականը կ'գտնուի եղեր, «ՈՀԷ» (1228 թ.):*[347*]

---

[1] Յովհաննէս Բազնունի անունով Վարդապետ մը ժամանակին գրած է թէ «Պարսկաստանի մէջ Տէրկոյ վանքն, որ աւերակ էր, ի հիմանց նորոգեցի»: Այս գրուածքը սոյն վանքի վրայ ո՛ր աստիճան վերաբերութիւն ունի, անծանօթ կ'մնայ մեզի: 2. Մեք ժամանակին այս վանքը, կ'երեւի սխալմամբ, Տիարպէքիրի մէջ գտնուած վանքերու կարգը դրած էինք, բայց Մուշէն Պ. Գեղամ իմացուցած է մեզի, թէ Մանազկերտի վանքերուն կպատկանի:

## 239/4. Ս. ՆԵՐՍԷՍԻ ՎԱՆՔ

*Մանազկերտի մօտերը, կէս ժամու չափ հեռաւորութեամբ տեղւոյ մը վրայ կառուցեալ էր «Ս. Ներսէս»ի այս վանքը, որ այժմ ամայի եւ պահպանութեան համար գոնէ ոչ ոք կ՚գտնուի ներսը:*

## 240/5. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

*Մանազկերտի Գարաճայ անուն գիւղին մօտերը կ՚գտնուի Ս. Աստուածածնի այս վանքն, որուն արտաքին շէնքերն ի վաղուց քայքայուած, միայն վանքի Տաճարն իր գմբեթով, թէեւ կ՚երեւի ու կ՚մնայ այժմ, բայց այն ալ կիսափուլ:*

## 241/6. Ս. ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻԻ ՎԱՆՔ[348]*

*Մանազկերտի Նորատին անուն գիւղին մօտերը, բլրակի մը վրայ կառուցուած է այս վանքը, որուն մէջ գումարած էր, Յովհաննէս Օձնեցի[2] Սրբազան Հայրապետն, եկեղեցական ժողով մը, 727-728 թուականին, բազմաթիւ Վիճակային Եպիսկոպոսներով ու վարդապետներով: Այս վանքն ալ ի վաղուց անցած է ի չարս շաբաթացեալ հայ վանօրէից, թէեւ մինչեւ ցայսօր կ՚երեւին իր պարիսպներուն հետքերը եւ վանքի բուն Տաճարին տեղւոյն վրայ եւս կայ այժմ փոքրիկ Մատուռ մը, որ ուխտատեղի է բարեպաշտ ժողովրդեան: Վանքին քով կ՚մնայ դեռ հին գերեզմանատունը, քանդակեալ մեծ խաչքարերով: Ասոնցմէ մէկուն վրայ հետեւեալ գրուածքը կայ. «Ի ԹՈՒԻՍ ՈԾԳ. (1204) ԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԿԵՆՍՈՒԿԱՆ, ԶԿԵՆՍԱԳԻՐ, ԶԿԵՆԴԱՆԱՏՈՒ ՆՇԱՆՍ ԶԱՅՍ, ՅԱՆՈՒՆ ՅՕՀՆԱՆ ՀԵՂԻՆԵԱՅ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՂԻԱՆՆԱՅ ԵՒ ԱՆԴՐԵԱՅ»:*

## 242/7. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

*Վանայ Մանազկերտ քաղաքի հարաւ-արեւմտեան կողմը, մէկ ժամ հեռաւորութեամբ տեղւոյ մը վրայ երկու եւ երեք եկեղեցիներու աւերակները կ՚երեւին, ուր բարեպաշտ ժողովուրդք միշտ ուխտի կ՚երթան, եւ կ՚աւանդեն թէ տեղս ժամանակին վանք էր, եւ կ՚կոչուէր «Կարմիր վանք» (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1)[349]*:*

[2] Երբեմն գրասէր անձինք, այս Սրբազան Հայրապետին համար կ՚գրեն Օձնեցի, փոխանակ Օձնեցիի, ըստ մեզ աւելի ճիշդ կ՚ըլլայ, կարծենք գրել Օձնեցի, որովհետեւ Օձի անունով գիւղ մը կայ Բաղէշի կողմերը, եւ այս Յովհաննէս Իմաստասէր Սուրբ Հայրապետն ալ ծննդեամբ նոյն գիւղէն էր: Ընդհ. Հայոց Հայրապետ եղաւ, 717ին եւ վախճանեցաւ 728 թուականին:

*ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. – Մանազկերտի մէջ կ՚յիշուին նաեւ Ս. Գէորգայ վանք[350]* մը, Պօսթանղայէ գիւղին մօտերը: Խանգար անուն վանք[351]* մը, Ակներ անուն գիւղին մօտերը: Ս. Սարգիսի վանք[352]* մը, Տիւկնիւկ անուն գիւղին մօտերը[3]:*

[3] Հայր Բլուր անուն վանք մը, դարձեալ Ս. Սարգիսի վանք մը, եւն., որոնք ի վաղուց անցած են ի շարս ամայացեալ ու շաբաթացեալ հայ վանորէից, թէեւ իրենց շինուածոց հիմերը, փշրանքներն աչքի առջեւ են. ոմանք ալ եղած են այժմ ուխտատեղի բարեպաշտներու համար, որոնք միշտ կ՚նուիրեն իրենց խունկն ու մոմը, եւ միշտ կ՚երթան հոգեկան սրտով տիլակի մը համար, ինչպէս կ՚ծանօթացնէ մեզ Պարոն Գեղամ:

# Գ. ՄՈՒՇԻ ՎԱՆՔԵՐԸ

## 243/1. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ[353]*

*Մուշի «Հաւատամք» անուն լեռան վրայ կառուցուած է այս նշանաւոր եւ մանաւանդ հռչակաւոր վանքը, Չորրորդ դարուն մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէն, ինչպէս կ'աւանդեն Եկեղեցական Պատմութիւնք եւ հաստատուն աւանդութիւնք: Այս վանքն ուրիշ երեք անուններով ալ կ'կոչուի, ինչպէս՝ «Գլակայ Վանք», «Իննակնեան Վանք», «Զանկը Քիլիսէ»:*

*Նախ՝ «Ս. Կարապետ» կ'կոչուի, որովհետեւ յանուն յիշեալ Սրբոյն շինուած է վանքի Տաճարը, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ ամփոփած է սրբազան նշխարները, որ Կեսարիայէն Ղեւոնդիոս Հայրապետէն նուէր տարած էին: «Գլակայ Վանք» կը կոչուի, յանուն Զենոբ Գլակայ, որ առաջին անգամ վանքին վանահայր կարգուած է Լուսաւորչի կողմանէ: «Իննակնեան Վանք» կ'կոչուի, այնչափ թուով հոն բղխած բարեհամ աղբիւրներուն համար: «Զանկը Քիլիսէ», այդ կողմի դրացի ժողովրդեան կողմանէ, կարծենք, իր մեծ Տաճարի գմբեթներուն համար: Վանքին Տաճարը շատ գեղեցկաշէն է, եւ երեք հիանալի գմբեթներով զարդարուած: Յանուն Ս. Կարապետի շինուած գերեզմանը թէեւ փոքր, բայց կճեայ գմբեթով եւ տապանաքարով է, շինուած ճաշակաւոր կերպով: Ասոր դիմացն ալ կ'գտնուի Ս. Աթանագինէ Հայրապետին շիրիմը:*

*Ս. Գէորգայ ընդարձակ վկայարանն ալ մեծ Տաճարին կից է, որ 1830 թուականէն առաջ Մատենադարան եղած էր, զանազան Ձեռագիրներու, եւ այլեւայլ եկեղեցական Մատենից: Ձեռագիրներ, որք մեծաւ մասամբ մագաղաթեայ էին, եւ ոսկեպատ, արծաթապատ, խաչազարդ եւն, որոնք այժմ խպառ ցրուած եւ կորսուած են եղեր, ինչպէս կ'տեղեկացնեն մեզի արժանահաւատ անձինք: Ունի նաեւ վկայարաններ, յանուն Ս. Ստեփաննոսի, Ս. Գրիգորի, Ս. Աստուածածնի, Ս. Յարութեան, Սրբոցն Պօղոսի եւ Պետրոսի, Ս. Սարգսի եւ Ս. Խոտաճարակաց:*

*Վանքի դիրքն ու տեսարանն սքանչելի է, ունի անուշ ջուր եւ առողջ օդ: Վանքի տեղւոյն վրայ Ն. ք. զՔրիստոս բարձրացած էին կրկին բագիններ ու արձաններ, Գիսանէի եւ Դեմետրի եւ Արձանայ: Հին ժամանակներու մէջ, այն է ԺԲ. դարուն, վանքն երկրաշարժէ վնասուած է երկու անգամներ, անգամ մ'ալ հրդեհ պատահելով այրած է մեծաւ մասամբ, եւ ապա նորոգուած: Ունի իր սեփական այլեւայլ կալուածներ, արտեր ու այգիներ, եւ երկու ագարակներ բարեբեր ու մշակելի հողերով: Այժմեայ վանահայրն է Տ. Վարդան վրդ. Յակոբեան, որ երկար*

*տարիներէ ի վեր կ՚կառավարէ զայն 3-4 միաբան վարդապետներով ու սարկաւագով:*

*Այս վանքին Վանահայրներ եղած են հետեւեալ եկեղեցականք, որչափ որ առ այժմ կրցանք ծանօթանալ ու հաւաքել հին յիշատակարաններէ եւ եկեղեցական պատմական մատեաններէ: 1. Զենոբ Գլակ, առաջին վանահայր, կարգեալ Ս. Գրիգոր Լուսաւորչէն, 302-303 թուականին: 2. Տ. Փառէն Աշտիշատի, 341ին միջոցները, որ այս վանքի Վանահայրութենէն կոչուած է Ընդհ. Հայոց Հայրապետութեան: 3. Մագիստրոս, որ բաւական շինութիւններ աւելցուցած է Վանքին մէջ: 4. Տէր Սահակ, 491 թուականին, ապա Ընդհ. Հայոց Հայրապետ եղած է: 5. Տ. Աբրահամ Եպիսկոպոս 533ին: 6. Տ. Ներշապուհ: 7. Տ. Կոմիտաս, ապա Կաթողիկոս Ս. Էջմիածնի: 8. Տ. Եպիփան, 650ին: 9. Տ. Յովհաննէս. սա վախճանած է 1464ին: 10. Տ. Աբրահամ Խօշապեցի, 1719ին, ապա Կաթողիկոս: 11. Տ. Յօնան, 1731ին: 12. Տ. Վարդան Եպիսկոպոս, Ամիրդօլի վանքին մեծ հռետոր վանահայրը, որ այս վանքին մէջ ալ ստանձնեց նոյն պաշտօնը: 13. Տ. Յովհաննէս Կոլոտ: 14. Տ. Գրիգոր Շղթայակիր: Այս վերջին երկուքն աշակերտներ են Վարդան Եպիսկոպոսի: 15. Տ. Յակոբ Վարդ. Պոլսեցի, Աղպեղ մականուանեալ: 16. Տ. Պետրոս Կուրավցի: 17. Տ. Յովհաննէս Եպիսկոպոս: 18. Կարապետ Վարդապետ Բագրատունի: 19. Տ. Զաքարիա Եպիսկոպոս Խէյպիանցի, որ վանքին մէջ վարժարան մը հաստատած է: 20. Տ. Յարութիւն Եպիսկոպոս Եդեսացի: 21. Տ. Կարապետ Եպիսկոպոս Ալակէօզեան, Կէրմիրցի: 22. Տ. Մկրտիչ Վարդապետ, ապա Կաթողիկոս Ս. Էջմիածնի: 23. Տ. Արիստակէս Եպիսկոպոս Դերձակեան: 24. Տ. Վարդան Վարդապետ Յակոբեան, այժմեայ Վանահայր: Այս Վանահայրներէն մեծ մասն արդէն վանքին միաբաններն էին: Ուրիշ նշանաւոր միաբաններ եւս կ՚յիշուին, ինչպէս 1. Տ. Խաչատուր Վարդապետ, որ «Խորհուրդ խորին» երգն երգած է: 2. Տ. Յարութիւն Վարդապետ Աւագ Լուսարարութիւն ըրած է: 3. Տ. Յովհաննէս Վարդապետ Պսկլանցի: 4. Տ. Թէոդորոս Վարդ. Մշեցի, ապա Պատրիարք եղած է Ս. Երուսաղէմի: 5. Մինաս Վարդապետ Ակնեցի, Պատրիարք եղած է Կ. Պոլսոյ, եւ ապա Կաթողիկոս Ս. Էջմիածնի: 6. Պետրոս Եպիսկոպոս Կուրավցի: 7. Յակոբ Եպսկ. Վանեցի, Թօփուզեան: 8. Մեսրոպ Վարդ. Խեծեմ մականուանեալ: 9. Յովհաննէս Վարդապետ: 10. Ղուկաս Վարդապետ: 11. Կարապետ Վարդապետ Կեսարացի: 12. Զաքարիա Վարդապետ եւլն:*

*Այս Վանքին մասին հին եկեղեցական ձեռագիրներէ հաւաքուած ունինք բաւական յիշատակարաններ, զորս յարմար առթիւ հրատարակութեան կուտանք*[354]*:

# Գ. ՄՈՒՇԻ ՎԱՆՔԵՐԸ

*Բիւզ., ԺԲ. տարի, 1908, թիւ 3.500 (29/Գ.-11/Դ.), էջ 4*

## 244/2. Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[355]*

*Մուշի արեւելեան հարաւային կողմը, երկուքուկէս ժամու չափ հեռաւորութեամբ, Տաւրոս լերան երկու կատարներուն ստորոտը, Տիրինկատար սար ըսուած տեղւոյն վրայ կառուցուած է Ս. Առաքելոց Վանքը, Չորրորդ դարուն մէջ (իբր 312ին), Ս. Գրիգոր Լուսաւորչէն, յանուն երկու սրբազան առաքելոց, ըստ պատմութեան եւ ըստ աւանդութեան (Ոմանք՝ «յանուն Մարկոսի եւ Ղուկասու», ոմանք՝ «յանուն Մատթէոսի եւ Մարկոսի» եւ ոմանք ալ՝ «յանուն Ղուկասու եւ Անդրէասայ» կ'ըսեն): Այդ առաջին ժամանակներուն մէջ, շատ հռչակաւոր եւ նշանաւոր էր վանքս եւ կ'կոչուէր «Եղիազարու Վանք», իր առաջին Առաջնորդ-Վանահօր անուամբ, որ ժամանակ մը վերջ, անուան փոքր ինչ փոփոխմամբ, ըսուեցաւ «Ղազարու Վանք», կամ «Ղազարավանք»:*

*Երբեմն կոչուեցաւ նաեւ «Թարգմանչաց Վանք», մեր նախնի Մատենագրաց եւ Թարգմանչաց մշտական բնակարան ըլլալուն համար, որոնց գերեզմանները, ըստ աւանդութեան, վանքի շրջապատին արեւելեան արտաքին կողին վրայ կ'գտնուին, մէկ կարգի վրայ, միօրինակ եւ մեծադիր խաչքարերով, որոնց վրայ գեղեցկապէս քանդակուած են այլեւայլ նկարներ եւ ծաղկենկարներ, եւ որոնք «Թարգմանչաց գերեզմանք» անունն ունին:*

*Ատեն անցնելով սկսաւ կոչուիլ «Ս. Առաքելոց Վանք», ասոր ալ պատճառն է, ինչպէս վերն ալ ըսինք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ երբ վանքը շինել տուաւ եւ Տաճարը լրացուց, ըստ աւանդութեան, երկու Առաքելոց մասունքներէն մաս մը ամփոփեց խորանին մէջ, եւ նուիրեց յանուն Ս. Առաքելոց: Այսու ամենայնիւ, ուրիշ համանուն վանքերէն որոշուելու համար նոյն անուան վրայ կցուեցաւ Մուշ անունն ալ, եւ սկսաւ կոչուիլ «Մշոյ Ս. Առաքեալք»:*

*Այժմ վանքն ունի երկու Եկեղեցիներ. առաջին Եկեղեցին կամ Տաճարը շինուած է, մաս մը սրբատաշ քարերով եւ մաս մ'ալ աղիւսով՝ վրան ճաշակաւոր եւ շատ ճարտարարուեստական երկագմբեթով: Կաթուղիկէն եւ Տաճարը՝ ներքին եւ արտաքին տեսքերով ցոյց կուտան, թէ շատ հին են: Տանիքն յարդարուած է գեղեցիկ փոքր քարերով, որոնց վրայ, տեղ տեղ, թէեւ կ' գտնուին եղեր գիրեր կամ նշանագրեր, բայց այժմ անընթեռնլի եղած են: Տաճարի ներքին աջ ու ձախ կողմերը*

*կ՚տեսնուին երկու տապաններ, մին Մարկոս՝ եւ միւսն Ղուկաս Աւետարանչաց է, կ՚ըսուի: Վկայարաններ եւս կան յանուն Ս. Աստուածածնի, Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Ս. Գէորգայ: Երկրորդ եկեղեցին շինուած է, փոքրիկ գանգակատունով մը, յաւուրս եւ աշխատութեամբ Վանահայր Կարապետ Եպիսկոպոսի, ՌԴ. (1555) Թուականին: Տաճարին ներսը ընկուզեայ դուռ մը կայ, որ շատ նուրբ եւ ճաշակաւոր քանդակուած է, այլեւայլ զարդերով եւ պատկերներով, ԺԲ. դարուն շինուած գործ մը, հնութիւն մ՚է. վրան հետեւեալ յիշատակարանը կ՚գտնուի. «ՇՁԳ. (1134) ԹՈՒԱԿԱՆԻՆ, Տ. ԹՈՐՈՍ, ԳՐԻԳՈՐ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԳԾԱԾ ԵՆ»: Եկեղեցւոյ մասնաւոր մատենադարանին մէջ ալ կ՚գտնուէին, երկու մեծադիր հատորներու բաժնուած մագաղաթեայ Ճառընտիր մատեաններ, եւ Ղըլճի ու Դաւթի անուանեալ, նոյնպէս մագաղաթեայ երկու ձեռագիր Աւետարաններ: Այս հին գրչագիր չորս մատեաններու մասին նոր տեղեկութիւն մը չունինք, թէ կ՚մնա՞ն վանքին մէջ եւ կամ թէ փոխադրուա՞ծ են այլուր, որովհետեւ վանքն այժմ շատ աղքատիկ վիճակի մը մէջ կ՚գտնուի:*

*Վերեւ յիշուած «Թարգմանչաց» գերեզմաններուն մէջ թաղուած են Դաւիթ Անյաղթ, Ղազար Փարպեցի, Մամբրէ Վերծանող, Աստղիկ, Պօղոս Տարոնացի, եւ այլ ուրիշներ, որոնք այս վանքին մէջ, հեղինակած, թարգմանած, գրով ու գրչով աշխատած ու տքնած են Հայերէն գրականութեամբ: Գերեզմաններու Խաչաքարերուն վրայի յիշատականները, գրէթէ ամբողջութեամբ, այժմ դժբախտաբար անընթեռնլի եղած են: Այս Խաչաքարերէն շատ քիչ հեռու տեղւոյ մը վրայ, իրարու քով հաւասար մեծութեամբ ու բարձրութեամբ, երկու տապանաքարեր եւս կան:*

*Վանքին մօտերը կ՚գտնուին մասնաւոր վայրեր ու ճգնարաններ, որոնք մինչեւ ցայժմ բարեպաշտ ուխտաւորներու կողմէ կ՚պատուուին ու կ՚յարգուին, եւ կ՚մատուցուին խունկ ու մոմ: Բաղիշեցի Վարդան Վարդապետն ալ, այս վանքին Առաջնորդ եղած է երբեմն*[356]**, ինչպէս նաեւ Եղիազար, Թադէոս, Պօղոս եւ Կարապետ անուն Եպիսկոպոսներ, եւն.: Այժմ վանահայրութեան պաշտօնով կ՚գտնուի վանքին մէջ Յովհաննէս Վարդ. Մուրատեան: Այս վանքին վրայ թէեւ ի ձեռին ունինք բաւական եկեղեցական յիշատակարաններ, բայց առայժմ կ՚դնենք այստեղ հետեւեալները միայն: ԺԶ. դարուն մէջ գրչագրուած մեծադիր ու ընտիր Սաղմոսէն, որ կ՚գտնուի Տիարպէքիրի Սուրբ Սարգիս եկեղեցւոյն մէջ: «... Եւ արդ գրեցաւ Սաղմոսարանս ի յընտիր աւրինակէ ի Գառնեցւոյ, ձեռամբ մեղուցեալ եւ կորուսեալ մեղսամակարթ եւ դատարկացեալ յամենայն բարեաց եւ ի շնորհաց, անարժան եւ եղկելի գրչի Աստուածատուր աբեղի... վայ է ինձ եւ եղուկ, թէ ո՛նց լինի վերջք իմ... Գրեցաւ սա ի մեծ եւ հռչակաւոր եւ յԱստուածաբնակ Սուրբ*

*Ուխտս Ղազարու. ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս եւ Սուրբ Տիրամայր Աստուածածնին, եւ Ս. Գրիգոր Լուսաւորչին: Ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի*[1] *եւ յԱռաջնորդութեան Սբ. Ուխտիս Տէր Թադէոս Արհիեպիսկոպոսի եւ Տէր Կարապետին եւ այլ միաբան եղբարց որ ամենեքեան սպասաւորք են Ս. Առաքելոցս...: Եւ արդ գրեցաւ Բ. Կանոն ի քաղաքն Ամիթ, ընդ հովանեաւ Սբ. Սարգսի, մեծ եւ արհիեպիսկոպոսն Թադէոս... զիս եբեր ի Վանքս Ղազարի, ինքն ձեռնարկեաց մեծ գմբէթին եւ ես նստայ ի գիր Սաղմոսիս եւ բազում փիշտս կրեաց, ողորմութեամբն Աստուծոյ վերստին նորոգեաց զգմբէթն Սուրբ Առաքելոցն եւ զայլ բազում խախտեալ տեղիս... Գրեցի զերգս Դաւթի ընդ հովանեաւ Սբ. Առաքելոցն»:*

*Նոյն ձեռագրին վերջերը գրուած. «Գրեալ ի հռչակաւոր ուխտին որ կոչի Ղազարու Վանք, ի Թուականին Ջ.Ջ.Թ. (1540)... ձեռամբ Աստուածատուր աբեղային, ի խնդրոյ բարեմիտ քահանային Դաւթի, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, եւ զչուրջառն, զՍուրբ Նշանն եւ զբուրվառն, եւ եդ ի դուռն Սբ. Սարգսի քաղաքիս Ամթայ...» [Տե՛ս Թորոս Աղբար, Բ., էջ 421-3]:*

*ԺԷ. դարուն գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանէն [1673] քաղուած.*

*«... Այլ եւ յիշել աղաչեմ զԲաղիշեցի [աստուածաբան] Վարդան վարդապետն, զի յայսմ ամի բերեալ զմեզ ի Վանայ եւ նստոյց ի Վանս Ղազարու, եւ զնորին փտեալ եւ փերհետեալ գրեանսն Խ. եւ Դ. գիրք վերստին ետ կազմել եւ նորոգել, այլ եւ բազում շինութիւն եւ պարտս վճարեալ, զոր մաղթեմ եղբարցդ հարազատացդ յիշել ի պաղապանծ յաղօթս ձեր զվարդապետն, րաբունապետն եւ զնորին աշակերտն/// (տողեր ջնջուած էին)»*[357*]*:*

## 245/3. Ս. ՅՈՎԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ. ԵՂՐԴՈՒՏԻ[358*]

*Մշոյ դաշտի արեւմտեան հարաւային կողմը, Սեւ սարի (հին ատենները Սիմ լեռներ կ՚ըսուէր) վրայ Եղրդուտ անուն գիւղին քովը, այս պատճառաւ կ՚կոչուի «Եղրդուտի Ս. Յովհաննէս». կառուցուած է Ս. Յովհաննէսի՝ կամ Ս. Յովհաննու Վանքը, Դ. դարուն մէջ, աննման դիրքով եւ գեղեցիկ տեսարանով մը: Վանքը որմապատ է, չորս կողմերն անտառներ եւ վճիտ ջուրերով աղբիւրակներ, օդն սքանչելի, Մշոյ դաշտը՝ վանքին առջեւը կ՚պարզուի իբրեւ կանաչ ծով մը, Թէեւ անջուր, եւ կ՚երեւին Սեփան եւ անտառուտ Խոյլի պապան:*

---

[1] Սա՛ Գրիգոր ԺԱ. Բիւզանդացին է:

*Աւանդութեամբ կ'ըսուի թէ՝ Թադէոս Ս. Առաքեալէն հիմնուած է վանքս, բայց Ս. Վրդանէս Հայրապետին կ'տրուի այս վանքին հիմնարկութիւնը[2]: Ունի ուրիշ երեք անուններ ալ. 1. Եղրդուտի Վանք, 2. Արծուաբերի Վանք, եւ 3. Շիշ իւղոյ Վանք: Եղրդուտի կամ Եղէգնի Վանք կ'ըսուի այն պատճառաւ թէ՝ վանքը շատ մօտ է Եղրդուտ անուն նուիրական ծառի մը: Արծուաբերի Վանք կ'ըսուի՝ որ հոս վանքին մէջ կ'գտնուի Արծվաբեր Կենաց Փայտ Ս. Նշանն: Շիշ իւղոյ Վանք կ'ըսուի, զի կ'գտնուի Շիշ իւղոյն: Շիշը մութ կանաչ գոյն մ'ունի, եւ Փիւնիկեան ձեռագործ, այժմ շիշը կ'պահուի տուփի մը մէջ շատ զգուշութեամբ, ինչպէս կ'պահուի նաեւ Կոնդակը Գրիգոր Կաթողիկոսի Մակուեցւոյ[3]:*

*Վանքի տաճարը քառանկիւն պզտիկ շէնք մ'է, եռագմբէթ կաթուղիկէով: Տաճարի պատերը եւ պարիսպը տեղ տեղ ճեղքրտուած են, հին ժամանակներու մէջ քանի մ' անգամ պատահած երկրաշարժէ: Զանգակատուն մ'ունի միջակ բարձրութեամբ[359]*, եւ որ շինուած է 1828 թուականին: Հետեւեալ յիշատակարանն ունի. «ՇԻՆԵՑԱՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ Ի ԹՎԻՆ ՌՄՀԷ. (1828), ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ ԽԱԼՖԱՅ ՊՕՂՈՍԻ, ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՄԻԱԲԱՆԱՑ ԵՒ ԳԻՒՂՕՐԷԻՑ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ»: Տաճարին մէջ եւ դուրսը առանձին վկայարաններ եւս կան, յանուն Ս. Աթանագինէի, Ս. Աստուածածնի, Ս. Գէորգայ եւ Ս. Սարգսի: Ուխտաւորութեան ժամանակն է, Վարդավառի, Աստուածածնի եւ Խաչվերացի տօնի օրերուն: Իր թեմերն են՝ Սլիվան, Խուլբ, Խիան եւ Սասուն գիւղաքաղաքները: Այս վանքի մասին առ այժմ ունինք հետեւեալ յիշատակարանները: ԺԵ. դարուն գրչագրուած Աւետարանի մը մէջ: «...Գրեցաւ Աստուածախօս եւ աւետաբեր Սուրբ Աւետարանս, ի թուիս [Հայոց] ՋԺԲ. (1463), ձեռամբ անարժան եւ մեղսաթաւալ գրչի, սուտանուն Ստեփաննոսի, եւ ի Կաթողիկոսութիւն Տէր Զաքարիայի, եւ յԱռաջնորդութեան Սուրբ Ուխտիս Տէր Յովհաննէս արհիեպիսկոպոսին, ի գաւառն Մուշոյ [Տարօնոյ, յերկնահանկէտ] Սուրբ Ուխտիս, եւ ի հրեշտակացոյց մենաստանիս Եղրդուտ կոչեցեալ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ Սուրբ Ստեփաննոսի Նախավկային, եւ Սուրբ Գրիգորի Լուսաւորչին, եւ օրհնութեամբ [օրհնաբուղխ] սուրբ իւղոյս [ի դառն եւ ի չար ժամանակիս, յորում է արդարութեան կողմն նուաղեալ եւ անիրաւութիւն յամենայն կողմանց զօրացեալ]: ...Յիշեցէք ի մեղսաքաւիչ յաղօթս ձեր, զընտրեալ եւ զարժանաւոր, զպատուական եւ զկուսակրօն աբեղայն*

---

2 Հին ձեռագիրներու յիշատակարաններէն ոմանք ալ կուտան Ս. Գր. Լուսաւորչին, եւ կ'ըսեն կրկին հաստատեաց:

3 Սա՛ Գրիգոր Ժ. Մակուեցի Ջալալպէյեան Կաթողիկոսն է, 1448-1466ին:

զՅովհաննէս, որ ետ գրել զսուրբ Աւետարանս... Արդ, ես՝ կրտսերս յորդիս Եկեղեցւոյ եւ անպիտանս ի կրօնաւորաց... Ստեփաննոս... աղաչեմ զձեզ, որ միոյ ողորմու արժան առնէք զչարեօք լցեալս: Ընդ նմին եւ զծնողսն մեր՝ զհայրն իմ զՅովաննէս, եւ զմայրն իմ զՀիրիքայ, եւ զեղբայրն իմ զՍահակ...» [Փիրղ., Նօտ., էջ 215. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 193]:

Ուրիշ յիշատակարան մը. «...Գրեցաւ Գանձատետրս ի Թվիս [Հայոց] ՋԺԵ. (1466), ընդ հովանեաւ Սուրբ Յովհանիսին, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Ստեփաննոս Նախավկային Եղըրդոտ կոչեցեալ, ձեռամբ Ստեփաննոս գրչի, յԱռաջնորդութեան սուրբ Ուխտիս Տէր Յովանէս Հերպետի եւ Տէր Յովհաննէս Եպիսկոպոսին, նաեւ այլ միաբանից՝ մեծի եւ փոքու...»[360*] [Փիրղ., Նօտ., էջ 227] (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):

Բիւզ., ԺԲ. տարի, 1908, Թիւ 3533 (10–23/Ե), էջ 4

## 246/4. ՄԱՄԳՈՒՆԻ ՎԱՆՔ[361*]

Կ'ըսուի նաեւ «Մամկայ Վանք»: Մշոյ Եղրդուտի Ս. Յովհաննէս վանքին հարաւակողմը, գրեթէ անկէ մէկ ժամու չափ հեռաւորութեամբ ձորակի մը վերեւը, բարձր դիրքի մը վրայ կառուցուած էր այս վանքը, Հինգերորդ կամ Վեցերորդ դարուն մէջ, թէեւ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից, որուն այժմ կ'երեւին միայն հիմերու քարակոյտները, ինչպէս կ'տեղեկանանք[4] (Բիւզ., 1900, Թ. 1158, էջ 1):

## 247/5. ՄԱՏՆԱՎԱՆՔ[362*]

Մուշէն գրեթէ չորս ժամ, կամ Գլակայ Ս. Կարապետի վանքէն հինգ ժամու չափ հեռու, Մշոյ դաշտին հիւսիսային արեւմտեան կողմը, Քարկէի անուն լեռնաշղթայէն քիչ մը վար ձորակի մը կողին վրայ կառուցուած է Մատնավանքը, որուն կ'ըսուի նաեւ «Մաղրավանք Ս. Յովհաննու Կարապետի»: Երբեմն ըսուած է նաեւ «Մանրավանք Ս. Յովհաննու», եւ «Մարգարէանոց»: Վանքին հիմնարկութիւնը, աւանդաբար կը տրուի Ս. Գրիգոր Լուսաւորչին, ուր զետեղած է կ'ըսուի, Կեսարիայէն տարած Ս. Կարապետի մասունքին մանր մասերէն քանի մը ոսկորներ, եւ այս պատճառաւ կոչած է կ'ըսեն, վանքի անունը, «Մատնավանք» կամ «Մանրավանք»:

---

4 Մշոյ մէջ, որուն վրայ մասնաւոր ծանօթութիւն ու տեղեկութիւն չունինք:

Վանքին Տաճարը, հին ճարտարապետական արուեստին նմոյշը կ՚պահէ իր կամարներով, փոքր լուսամուտներով: Երեք մասի բաժնուած է ամբողջ Տաճարը. Ա. Գաւիթը, Բ. Եկեղեցին, Գ. Մատուռը: Գաւթին քարուկիր առիքին վրայ բարձրացած է սպիտակ եւ սրբատաշ քարերով զանգակատունը, որուն վրայ խաչ մը կայ հետեւեալ յիշատակարանով. «ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑ ԽԱԼՖԱՅ ԵՂԻԱՅԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՆՈՐԻՆ. ԹՎ. ՌՃՁՂ (1737)»: Եկեղեցին փոքր եւ մութ է, Աւագ սեղան չունի, միայն աջ ու ձախ երկու սեղաններ կան. այս երկու սեղաններուն մէջտեղը գտնուած դռնով մը կ՚երթցուի Գ. մասին, որ ինչպէս ըսինք՝ մատուռ մ՚է, ուր կը գտնուին երկու գերեզմաններ, մին Սրբոյն Յովհաննու Կարապետի, եւ միւսը Սրբոյն Աթանագինէի անուամբ: Տաճարին ամենէն հին շէնքն այս մատուռն է, որ բաւական բարձր է առանց սիւնի. Մատուռն եւ բարձրադիր կամարներն իրենց նախնական ձեւերը կ՚պահեն մինչեւ այժմ: Եկեղեցւոյ եւ Մատուռի տանիքներու միջեւ գտնուած երկու լուսամուտներու քարերուն վրայ եւս կ՚գտնուին հետեւեալ երկու յիշատակարանները. ա). «ԹՎ. ՋՂԳ. (1544) ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՁԵՌԱՄԲ ԹՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ ԾՆՈՂԱՑ»: բ) «ԹՎԻՆ ՌԽԹ. (1600) ԿՐԿԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՆ, ՁԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ, ԵՒ ԽՕՃԱ ՇԷԽԻՆ, ՀՕՐԸ ՋԱՁՐԻՆ ՈՐ ԲԱԶՄԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՓԱՅՏ ԿՐԵԼՈՎ ԵՒ ԽԱՐՃԵԼՈՎ ՕԳՆԵԱՑ»:

Վանքն ամայի է այժմ, ոչ իսկ վարդապետ միաբան մը ունի: Շէնքերը խարխլած ու գրեթէ քայքայուած են: Հազիւ ունի երկու կամ երեք սենեակներ իբր բնակելի: Այս վանքի թեմորայք կ՚համարուին, Աւրան, Կուրավու, Ջխաւու, Սալորիկ, Տէրիկ, Ախճակ, Արտերթ, Ալիճան եւ Շէխ Եուսուֆ անուն գիւղերը: Վանքն ունի բաւականին բարեբեր ու մշակելի շատ մը հողեր ու արտորայք, որոնք կ՚գտնուին յիշեալ գիւղերէն առաջին հինգ գիւղերու սահմաններու մէջտեղ:

Այս վանքի մասին ունինք առ այժմ հետեւեալ յիշատակարանը միայն, որ ԺԵ. դարուն գրչագրուած Ճաշոցէ մ՚ընդօրինակուած է. «Եւ արդ, եղեւ սկիզբն Ճաշոցիս ի սուրբ ուխտս Մատնավանք, եւ աւարտեցաւ [ի քաղաքն Արծկէ], յամի [ութհարիւրերորդի, իննսուներորդի եւ երկրորդ ամի] ՊՂԲ. (1443), ի թագաւորութեան… եւ ի Հայրապետութեան Աթոռոյ Լուսաւորչին մերոյ Տեղապահի Տէր Կիրակոս[5] ընդհանուր Հայոց Կաթողիկոսի: Զի մինչ ի սոյն ամս Աջն Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Սիս էր, եւ ամենայն հաւատացեալս [իմա՛ «ազգս Հայոց»]

[5] Սա՝ Կիրակոս Վիրապեցին է, 1441-1443ին, որուն օրովը Կաթողիկոսական աթոռը Սիսէն փոխադրուեցաւ յԷջմիածին, թէեւ Վիրապեցի կ՚ըսուի իրեն, բայց ինքը Վանայ գաւառէն Խարաբաստայ գիւղաքաղաքէն է:

հնազանդեալ էաք Աթոռոյն Կիլիկիոյ, եւ այժմ շնորհիւ նորին, եւ օժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ վերստին եկն ի նոյն Վաղարշապատ [իմա՛ «Էջմիածին»] Շողակաթի Տաճարին, եւ հաստատեցաւ Աթոռ [հայկազեան սեռի գերապատիւ եւ հրաշափառ, զոր պահեսցէ տէր Յիսուս, ամէն]»[363]*:

## 248/6. Ս. ՍԱՀԱԿԱՅ ՎԱՆՔ[364]*

Մշոյ Տէրըք (Աշտիշատ) անուն գիւղի քովիկը, գրեթէ երկու քարընկէց հեռու, բլրակի մը վրայ գեղեցիկ դիրքով շինուած էր «Սրբոյն Սահակայ Պարթեւի Վանքը», Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէն, Դ. դարուն մէջ, որուն իր գաւառակի անունով ալ կ'ըսուի, «Յաշտիշատայ[6] Ս. Սահակ», որ թէեւ ԺԴ. դարէն ի վեր ամայի եւ անբնակ է. Վանքի պատերու եւն. քարերն աստ ու անդ ցրուած են, եւ այժմ հին Տաճարի տեղւոյն վրայ, կամ աւելի ճիշդը՝ քովիկը շինուած է մատուռ մը, կամ թէ ըսենք փայտաշէն Եկեղեցի մը, որուն ներքեւ նկուղի մը մէջ կ'գտնուի մեր Ս. Եկեղեցւոյն մտաւորական լոյս ջամբող մեծագործ անձին ու հանճարին՝ Սրբոյն Սահակայ Հայրապետի Դամբարանը (Սրբազան Հայրապետին համար աւանդութեամբ կ'ըսուի թէ ծնած է 350 Սեպտեմբեր ամսոյ 9ին. Հայրապետական աթոռը նստած է 390, Սեպտ. 9ին, վախճանած է Բագրեւանդ եկեղեցական թեմի Բլուր անուն գիւղի մէջ 440 Սեպտ. 9ին, 90 տարեկան ծերունի հասակով, մարմինը փոխադրված է իր սիրելի աշակերտներու միջոցաւ, եւ իր թոռան Դխտիկ տիկնոջ ծախիւք, Մշոյ Աշտիշատ գիւղն եւ ամփոփուած է այս վանքին մէջ): Ս. Սահակայ Դամբարանին քով կ'գտնուի նաեւ Սրբուհի Շուշանի գերեզմանն եւ ուրիշ երկու գերեզմաններ:

Վանքի բլրակին առջեւը կ'տարածուին Մշոյ դաշտը, Մեղր անուն գետն եւ Արածանին, նաեւ բազմաթիւ գիւղեր: Հոս այս բլրոյ վրայ, կրնայ ըսուիլ թէ, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ գտան եւ գրեցին Հայ տառերն եւ առաջին գրութիւնն, եւ թարգմանեցին Աստուածաշունչ Ս. Գիրքը:

Քայքայուած Տաճարին մէջտեղերը, կիսակործան կ'մնան դեռ, իբարմէ անջատ, երեք խորաններ կամ կամարներ որոնք եռանկիւն մը կազմած հաստատապէս կ'ցուցնեն եւ աչքի առջեւ կ'բերեն Մայր Տաճարի բուն դիրքը կամ տեղը, եւ մեծ դրան հետքն ու քովընտի մատուռները: Աւանդութեամբ կ'ըսուի թէ, նոյն երեք խորաններէն հարաւային խորանը կ'կոչուէր «Միւռոնի Խորան», եւ այս խորանին վրայ

---

[6] Աշտից անուն վանք մ'ալ կայ, որուն տեղն անծանօթ կ'մնայ մեզի, չենք կրնար որոշել, թէ այս Աշտիշատայ վանքին հետ ո՞րքան աղերս ունի, եւ թէ Աշտից վանքը զատ վանք մ'է:

*օրհնած են Ս. Միւռոնը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ իրեն յաջորդները: Աւանդութիւնը կ'ըսէ նաեւ թէ Մայր Տաճարին առաջակողմէն կ'բարձրանար չքեղ եւ հոյակապ Կաթողիկէ մը, մեծ խաչով մը: Մկրտութեան աւազանին քով մեծ խաչքար մը կ'մնայ մինչեւ այժմ, որ ժողովրդեան համար նուիրական է եւ որուն «Քրտինքի Քար» կ'ըսեն վրան կ'գտնուի հետեւեալ թուականը ՌԼ. (1581) (Բիւզ., 1900, թ. 1027, էջ 1):*

## 249/7. ԱՊԱՀՈՒՆԵԱՑ ՎԱՆՔ[365]*

*Ս. Ապահունիք՝ Մշոյ մէջ «Վերին Պուլանըխն է» կ'ըսուի, եւ կ'կարծուի թէ այս Ս. Ապահունեաց վանքն ալ Պուլանըխի մէջ ըլլայ: Շինութեան թուականն յայտնի չէ մեզի: Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցւոյն սեփական հին ձեռագիր Աստուածաշունչի յիշատակարանին վերջին մասին մէջ այս վանքի նկատմամբ հետեւեալ պարբերութիւնը կ'գտնուի: «... Զվերջին ստացող Աստուածաշնչիս զԿարապետ վարդապետն, եւ զհայրն զՄկրտիչ քահանայն, եւ զմայրն զԵղիսաբէթ, եւ զքոյրն զՄարթա, եւ զամենայն ազգատոհմսն, եւ զՅակոբ վարդապետն իւր... եւ զաշակերտսն զՅովանէս եւ զՅակոբ, եւ զՍիմէւոն, եւ զՄարտիրոս, եւ զՍիմէւոն հայրապետն, եւ զամենայն միաբանք սուրբ ուխտիս Ապահունիք կոչեցեալ՝ զՍարգիս, եւ զԹորոս, զՍողոմոն, զՅովհաննէս, զՊետրոս, եւ զմիւս Յովհաննէս սուրբ քահանայն, եւ զԳրիգոր տնտեսն յիշեսջիք ի Քրիստոս... Եղեւ գրաւ բանիս ի թվ. Հայոց ՊՂԸ. (1449)»[366]* [տե՛ս Թորոս Աղբար, Բ., եր. 296] (Բիւզ., 1900, թ. 1083, էջ 1):*

## 250/8. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ[367]*

*Մշոյ մէջ, ի վաղուց ամայի եւ աւերակ (Բիւզ., 1900, թ. 1127, էջ 1):*

# [Լ.] ԵԴԵՍԻՈՅ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅ ՎԱՆՔԵՐԸ

## 251/1. ԲԱՐՍԵՂԵԱՆՑ ԱՆԱՊԱՏ[368*]

*մ’ալ ունինք Սռոյ կողմն ի Սեւ լերին: Ժ–ԺԱ. դարու մէջ անուանի եւ հռչակաւոր էր այս անապատն Բարսեղեանց: Մատթէոս Ուռհայեցին կ’ըսէ՝ թէ 1114 թուական Նոյեմբեր 28ին, Գիւտ Խաչի տօնի կիրակին պատահած մեծ երկրաշարժէն մեծապէս վնասուեցաւ վանքն եւ երեսուն ու երկու կրօնաւորներ ալ փլատակաց տակ մնացին[369*] (Բիւզ., 1900, Թ. 984, էջ 1):*

## 252/2. ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻԻ ՄԵՆԱՍՏԱՆ

*Եդեսիոյ մէջ: Քաղաքի հիւսիսային պարսպէն դուրս երկու քարընկէց հեռու մատրան ձեւ քարայր մը, նոյն հեռաւորութեամբ դիմացի (քիւլէֆլիք ըսուած) լերան վրայ ալ աւերակ տեղ մը ու խորան մը կայ. տեղացիք առաջնոյն կ’ըսեն Եփրեմ Խուրիի ճգնարան, եւ երկրորդին՝ նոյնին անուան կառուցեալ մենաստան: Այժմ աւերակ, եւ քովերը կամ տեղւոյն վրայ ջաղացքներ շինուած են: Ահաւասիկ այսքան են յիշեալ սուրբերու անուան կառուցեալ վանքերը[370*] (Բիւզ., 1900, Թ. 984, էջ 1):*

## 253/3. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ

*Եդեսիոյ Խառան գիւղի արեւելեան կողմը, կիսաւեր (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 254/4. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ[371*]

*Ուրֆայի մէջ, քաղաքին արեւմտեան կողմը կէս ժամ հեռու լերան մը ստորոտը շինուած է: Ի հնումն մտաւոր հարստութեամբ շատ անուանի, եւ հողային հարստութեամբ ալ նշանաւոր եղած է այս վանքը, թէեւ ժամանակ մը, հողի կողմէ աղքատացած եւ ներքին շէնքերն ալ խարխլած էին, բայց ներկայ վիճակը գոհացուցիչ է: Վանեցի Մխիթարեան Խորէն Արքեպիսկոպոսի, Ս. Երուսաղէմի զաւակ, ծերունի եւ պատուական վանահայրի, տարիներէ ի վեր ունեցած մասնաւոր հոգածութեամբն եւ աշխատութեամբը, վանքի տաճարն եւ զանգակատունը, Առաջնորդարանը եւ Միաբանից Թաղը, ուխտաւորաց բնակութեան յատուկ սենեակներն եւ այլն, ճաշակաւոր ու հաստատուն կերպով նորո-*

*գուած եւ ոմանք ի հիմանէ շինուած են եւ այժմ չի տեսնուիր հինէն մնացած նոյն երեւոյթը, որ տխրութիւն կ'ազդէր ամէն այցելուի: Վանքն հին հայերէն ձեռագիրներու բաւական հաւաքածոյ մը ունի, որք կ'կարծենք թէ շատ լաւ կ'պահուին: Վերջերս, 1898ին, վանքին մէջ որբանոց մը բացուած է, որուն ամբողջ ծախքը կ'հոգացուի Նոր Նախիջեւանի որբախնամներու կողմէ[372]* (Բիւզ., 1900, Թ. 1019, էջ 1):*

## 255/5. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ

*Այնթապէն դէպ ի արեւելք 12 ժամ, բայց Հռոմկլայէ դէպ ի հարաւ 3 ժամ հեռու, Եփրատ գետին ափունքը, ժայռոտ լեռնակի մը կողին վրայ գտնուած, եւ 65 տուներէ բաղկացեալ Էհնէշ անուն Հայ գիւղի մօտիկն է այս վանքը, եւ որ շատ հին ու նշանաւոր վանքերէն էր, բայց այժմ աւերակ ու ամայի, միայն վանքի Տաճարին հաստահիմն պատերը մնացած են փոքր Աւանդատնովը (Բիւզ., 1900, Թ. 1019, էջ 1):*

## 256/6. ԲԵՐԴԱԿ ՎԱՆՔ[373]*

*Եդեսիոյ մէջ: Սսոյ Արքակաղին կամ Խճկտոր նշանաւոր ու հռչակաւոր վանքի միաբաններէն, երաժշտագէտ եւ Եդեսիոյ գիւղերէն Քարոզցի Սարկաւագին «Մանր ուսմունք» անուն տետրակին, — որ եկեղեցական երգեր կ'պարունակէ, եւ օրինակած է 1439 թուականին, Խաչատուր եւ Աստուածատուր աբեղաներու գրածէն, յիշատակարանին մէջ Բերդակ անուն վանք մը կ'յիշատակէ յԵդեսիա, որուն մէջ երկու եկեղեցիք կան եղեր, մին յանուն Ս. Աստուածածնի, եւ միւսն՝ յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի:*

*Քարոզ գիւղի համար կ'ըսուի թէ Եդեսիոյ հիւսիսային կողմն է, ուրուն այժմ աւերակները կ'երեւին եղեր. Բերդակ վանքին համար ալ կ'կարծուի թէ գուցէ Քիւլէֆլիք ըսուած լերան վրայ ըլլալու է, ուր վանքի մը աւերակները կ'երեւին եղեր: Թէեւ Բերդակի այս վանքն ոմանք կ'կարծեն թէ Բաբերդի մէջ է, բայց այս կարծիքն, ըստ մեզ, խնդրական է:*

*ՋԿԸ. (1519) թուականին գրուած հին ձեռագիր Գանձարան անուն գրքի մը յիշատակարանին մէջ ալ յիշատակուած է այս վանքն, որ է՝ «... Ի սուրբ հռչակաւոր անապատս ի վանքն Բերդակայ, ի դուռն Ս. Աստուածածնին, եւ Ս. Լուսաւորչին, յառաջնորդութեան Սուրբ ուխտին Կարապետ Աբեղային...»[374]* (Բիւզ., 1900, Թ. 1083, էջ 1):*

## 257/7. ԱՐՃԻՃՈՑ ՎԱՆՔ[375]*

*Եդեսիոյ մէջ, քաղաքին արեւմտեան կողմը, պարիսպէն դուրս Ս. Սարգիս վանքին մօտերը շինուած, հիմնարկութեան թուականին եւ արդի վիճակին վրայ տեղեկութիւն չունինք (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1):*

## 258/8. ՍՐՈՒՃԻ ՎԱՆՔ

*Եդեսիայէն դէպ ի արեւմուտք օրուան մը ճանապարհաւ հեռու է Սրուճ անուն գիւղաքաղաքն որ կ՚գտնուի դաշտի մը վրայ, այս գիւղաքաղաքին մէջ վանք մը կար «Սրուճի Վանք» անուամբ, այժմ սեփականութիւն մերայնոց չի պատկանիր թէեւ, բայց միշտ ուխտատեղի մնացած է ամէն ազգէ դիմողի համար (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1):*

## [ԼԱ. ՎԱՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՎԱՆՔԵՐԸ]

### 259/1. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[376*]

*Ախլաթէն երկու ժամ եւ Թեղուտ գիւղէն կէս ժամ հեռու Նեմրութ լերան ստորոտը գրեթէ լեռնաձորակի մը մէջ շինուած է Թեղուտայ Ս. Յովհաննէս կոչուած այս վանքը: Վանուց արտաքին պարիսպները մասամբ քայքայուած են երկրաշարժէ մը, որ 18-20 տարիներ առաջ պատահեցաւ այդ կողմերը:*

*Վանքն ունի գեղեցիկ ու զմայլելի տեսարան ու դիրք, միայն թէ Եկեղեցին բաւական մութ է, եւ կը կառավարուի վանահայր վարդապետի մը հսկողութեան տակ (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)[377*]:*

### 260/2. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ

*Աղերդի մէջ (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

### 261/3. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ[378*]

*Վանայ եւ Սպարկերտի միջեւը Կեղիս անուն գիւղի մօտերը, եւ այս պատճառաւ կը կոչուի վանքս՝ Կեղսոյ Ս. Կիրակոս, ամայի եւ աւերակ[379*] (Բիւզ., 1900, Թ. 1008, էջ 1):*

### 262/4. Ս. ՍԱՀԱԿԱՅ ՎԱՆՔ[380*]

*Վանայ կողմերը, որուն կ՚ըսուի նաեւ «Լուսապտուղ Ս. Սահակ»[381*] (Բիւզ., 1900, Թ. 1027, էջ 1):*

### 263/5. Ս. ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՆՔ

*Վանայ ծովուն եզերքը, Ս. Սահակ Հայրապետին որդւոյն անուամբ եղած գիւղի մէջ. ժամանակին գեղեցիկ ու ճոխ վանք մ՚էր: Գրեթէ 130 տարիներ առաջ Վանայ ծովն յորդելով ողողած է այս վանքն եւ աներեւոյթ ըրած է: Գիւղի ժողովուրդը իրենց երկիւղէն, ծովէն քիչ մը հեռու զառիվայրի մը վրայ կ՚քաշուին, նոր գիւղ մը կ՚հաստատեն, շինելով նաեւ յիշատակ յիշեալ ջրասոյզ եղած վանքին, եկեղեցի մը Սուրբին անուամբ[382*] (Բիւզ., 1900, Թ. 1027, էջ 1):*

## 264/6. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԱՆՔ[383*]

*Վանայ մէջ Արեղ գիւղէն կէս ժամ հեռու: Այս վանքին կ'ըսուի նաեւ «Արեղի Ս. Վարդան» կամ «Ապավանք»[1] կամ «Ապաղվանք», որ շինուած է Նարեկայ ուխտին եւ Փլավանք ու Նորշուղ անուն գիւղօրէից սահմանին միջեւն ընդարձակ ու բարձր բլրակի մը վրայ. Թէեւ այժմ ամայի, բայց տարին մի անգամ գիւղի քահանան երթալով բազմութեամբ Ս. Պատարագ կ'մատուցանէ ի մխիթարութիւն բարեպաշտից[384*] (Բիւզ., 1900, թ. 1027, էջ 1):*

## 265/7. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԱՆՔ[385*]

*Վանայ մէջ Գաւաշ անուն գիւղի դիմացը բարձր դիրքի մը վրայ շինուած. վանքն այժմ ամայի, նոյնպէս գիւղն ալ անբնակ: Վանայ մէջ կ'յիշուի նաեւ «Մոկս Ս. Վարդան» անուն վանք մ'ալ, մեզ այնպէս կ'թուի թէ այս վանքը Գաւաշայ Ս. Վարդանի հետ միեւնոյն ըլլալու է (Բիւզ., 1900, թ. 1027, էջ 1)[386*]:*

## 266/8. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՎԱՆՔ[387*]

*Վանայ Նունենից անուն ձորի մէջ, ամայի եւ անբնակ: Այս Վանքն ի հնումն կ'կոչուէր «Ս. Վարդանանց վանք», ինչպէս արձանագրեցինք, բայց կ'ըսուի թէ վերջերս եւ հետզհետէ ուրիշ անուններ եւս առաւ, որք են «Նունենից Ս. Նշան»[2] կամ «Նունենից Ս. Մինաս»[388*]:*

## 267/9. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ[389*]

*Վանայ Վարագայ լերան արեւելեան կողմը հովիտի մը մէջ շինուած է սրբատաշ քարերով, որ կ'կոչուի նաեւ «Արգելանոց Ս. Գրիգորի վանք», կամ «Վարի Վարագայ»: Շինութեան հիմնարկութիւնը կ'տրուի աւանդաբար Ս. Գրիգոր Լուսաւորչին: Վանքի դիրքն սքանչելի, օդն առողջարար, ջուրը լաւ, զուարճալի վայրերով ու տեսարաններով շրջապատուած: Թէեւ ունէր մխիթարական անցեալ մը, բայց անշքացեալ է, բաց ի քանի մը պահապան ծառաներէ, ինչպէս կը լսենք,*

---

1 Ահավանք անուն վանք մ'ալ կ'յիշուի, բայց չենք կրնար որոշել, թէ Ահավանք ու Ապավանք միեւնո՞յն վանքեր են:

2 Վանայ մէջ գտնուած, եւ մեր այստեղ ցուցակագրած յանուն Ս. Վարդանանց յիշեալ հինգ [չորս] վանքերու մասին մեզ հասած տեղեկութիւնները բաւական շփոթ էին. այս տեղ հաղորդեցինք մեր ծանօթագրութիւններն այնպէս, որպէս ստացած ենք. կ'փափաքէինք որոշ ու ճշգրիտ տեղեկութիւններ ունենալ յիշեալ վանքերու նկատմամբ, եւ զայս կ'ակնկալենք Վանայ ազնիւ բանասէր-վանասէրներէն (Բիւզ., 1900, թ. 1027, էջ 1):

*միաբանութիւն մը չունի: Վանքի արեւմտեան զառիվեր անտառակին մէջ աղօթատեղի կամ ուխտատեղի մը կայ, որ Երուսաղէմայ ձոր կ՚անուանուի տեղացւոց կողմանէ (Բիւզ., 1900, թ. 1066, էջ 1):*

## 268/10. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

*Վանայ յիշեալ Վարագայ լերան վրայ, որուն կ՚ըսուի նաեւ «Վերին Վարագայ Վանք»: Այս վանքի հիմնարկութիւնն ալ կ՚տրուի Ս. Գրիգոր Լուսաւորչին եւ իր սուրբ ժամանակակցաց: Երբեմն բանուկ վանք մ՚էր, բայց հիմայ միմիայն ներքին կողմը կանգուն կ՚երեւին քանի մը կամարները: Այս վանքն ալ վերեւ յիշուած «Վարի Վարագայ» վանքին նման դիրքով սքանչելի է, եթէ մարդ մի անգամ այցելէ եւ տեսնէ վանքին մօտակայ զուարճալի վայրերն ու ակնապարար տեսարանները, դալարիքներն ու զանազան տեսակ ծաղկանց թոյրն ու բոյրը, անտառակները, կ՚հիանայ կ՚մնայ եւ զատուիլ անգամ չուզեր այդ գեղեցիկ, եւ կրօնական տեսակէտով ալ, սրտի սփոփում ազդող վայրերէն (Բիւզ., 1900, թ. 1066, էջ 1)[390*]:*

## 269/11. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ՍԱԼՆԱՊԱՏԱՅ[391*]

*Վանայ Վարագայ լերան Կողպանից անուն գիւղի մը մօտերը ձորամէջի մը մէջ, որուն կ՚ըսուի նաեւ «Ջորոյ Վանք»: Վանքի հիմնարկութիւնը կ՚տրուի Մեծին Ներսէսի, բայց եկեղեցին շինուած էր կ՚ըսուի նախ՝ Ս. Լուսաւորչէն: «Սալնապատայ» կամ «Ջորոյ Վանքն» հռչակաւոր էր իր ժամանակին եւ Եպիսկոպոսանիստ, 1441 թուականին՝ Կիրակոս Ա. Վիրապեցի Կաթողիկոսին ընտրութեան ատեն, Ս. Էջմիածնայ եկեղեցական ժողովին մէջ գտնուած է այս վանքի այն ժամանակուայ Եպիսկոպոսը՝ Կիրակոս:*

*Յովհաննէս Կաթողիկոս Պատմագիրէն կ՚քաղենք հետեւեալ կտորն այս վանքի մասին. – «Կայր անդ Սեղան Պատարագի Ս. Գրիգորի Լուսաւորչի, եւ գաւազանն եւ գօտին մաշկեղէն, եւ հողաթափ Ս. Հռիփսիմեայ, եւ պերեզոտն՞... եւ շղարշն որ է դաստառակ...»:*

*Յովհաննէս Կաթողիկոս իր վերջին օրերն այս Սալնապատայ վանքին մէջ անցուց, եւ այս տեղ վախճանեցաւ 925 թուականին. իր յաջորդն Ստեփաննոս Բ. Կաթողիկոս, Աթոռը փոխադրեց Աղթամարայ վանքը:*

*Սալնապատայ վանքին մէջ 1898 թուականին Որբանոց մը բացուեցաւ, որուն ծախքը կ՚հոգան, Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ, Նիւ Եօրք քաղաքին որբախնամ ազգայինները (Բիւզ., 1900, թ. 1067, էջ 1)[392*]:*

## 270/12. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՔ

*Խիզանի մէջ, քաղաքի բերդէն դուրս շատ գեղեցիկ բլրակի մը վրայ շինուած է, շատ ճաշակաւոր ու կանոնաւոր շէնքով մը: Շինութեան թուականն անծանօթ է: Վանքի եկեղեցին, ըստ սովորութեան, Հայ. Եկեղեցւոյ երեք խորանով է եւ մէջինը նուիրուած Ս. Յարութեան. եկեղեցին 56 ոտք երկայնութիւն եւ 42 ոտք լայնութիւն ունի (Բիւզ., 1900, Թ. 1074, էջ 1):*

## 271/13. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՔ[393*]

*Վանայ կողմերը, ծովուն մօտաւոր Հին կամ Ացին անուն գիւղի քովերը Տէվէպօյնու կոչուած լերան մը մէջ շինուած, եւ այս պատճառաւ այժմ կը կոչուի նաեւ «Տէվէպօյնուի Ս. Յարութիւն», որ ուրիշ անուններ ալ ունի, ինչպէս «Անծղնապատի վանք» կամ «Նկարէն անապատ»: Վանքն աւերակ ու ամայի դարձած էր, Աղթամարայ նախկին Կաթողիկոսն ի հիմանէ նորոգեց զայն, վանահայրի մը յանձնեց, եւ իր սեփական հողերն որք կորուսած էին ի վեր հանեց եւ մշակելի դարձուց (Բիւզ., 1900, Թ. 1074, էջ 1):*

*Այս վանքի մասին հայերէն հին ձեռագիր Յայսմաւուրքի մը մէջ կը հանդիպինք յիշատակարանի մը, որմէ հետեւեալ կտորը կ՚ընդօրինակենք: – «Գրեցաւ ի Թվին Հայոց ՊԾԴ. (1405), յԱնապատիս Անծղնապատ, ի Հայրապետութեան Տեառն Դաւթայ (Աղթամարայ – Տէ՛ս Թորոս Աղբար, Բ. Հատոր, եր. 391)»* [վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 53]*:*

*Կ՚յիշուի նաեւ «Անձնապատ» անուն վանք մ՚ալ, որ ըստ մեր կարծեաց, կարելի է թէ միեւնոյնն ըլլայ «Անծղնապատ»ին հետ[394*]:*

## 272/14. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՔ[395*]

*Վանայ կողմերն Ասպսինկայ անուն հին գիւղի մօտերն էր, գիւղն ամայի եւ վանքն ալ ի վաղուց անցած է, կ՚ըսուի, ի շարս «շաբաթացեալ Հայ վանորէից»: Այս վանքի մասին ալ Թովմայ Մեծոփեցիի պատմութենէն կ՚քաղենք հետեւեալ կտորը. (էջ 70):*

*«... ՊԾէ. [1408] ամի եղեւ վախճան երկուց վարդապետաց մերոց Մեծին Վարդանայ եւ Րաբունւոյ Ս. Ուխտին Խառաբաստայ, աշակերտի Մեծին Սարգսի, եւ Յովհաննու ճգնաւոր վարդապետին... որ աւելի քան յիսուն ամ իբրեւ անմարմին հրեշտակ կայր կանգուն ի վերայ ոտից իւրոց յաղօթս եւ ի պաղատանս, զոր եւ տեսաք աչօք մերովք եւ վայելեցաք յաղօթից նորա, եւ էր սա ի գեղջէն Վախանից, եւ ի Ս. Ուխտէն*

*Յարութեան, որ Ասպնիկայ վանք վերակոչի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի» (Բիւ-ղ․, 1900, Թ․ 1074, էջ 1)*[396]*:

## 273/15. ՀՈԳՈՑ կամ ՀՈԳԵԱՑ ՎԱՆՔ[397]*

*Վանայ եւ Աղբակայ միջեւ՝ Կորդուկ լերան ձորին մէջ, Տիգրիս գետին ափին վրայ: Ոմանք աւանդութեամբ կ՚ըսեն թէ վանքս շինուած է Ս. Գրիգոր Լուսաւորչէն, բայց ոմանք ալ ա՛լ աւելի առաջ տանելով շինութեան սկզբնաւորութիւնը, կուտան Ս. Բարթուղիմէոսի, որ նուիրած է ի պատիւ Վերափոխման Տիրամօր, Ս. Աստուածածնի, որուն պատկերն ալ դրած է, կ՚ըսեն, այս վանքին մէջ: Եկեղեցական աւանդութիւնը ինչ որ ալ ըլլայ, պատմականօրէն սա ստոյգ է որ, այս վանքը Զորրորդ դարուն մէջ նշանաւոր վանքերէն մին էր, եւ իր մէջ ամփոփուած էին ուսումնական ու ուսումնածաւալ շատ մը միաբաններ: 1880 թուականին վանքի վանահայրն էր Կարճկանցի Մատթէոս Ծ. Վարդապետը, արդի մատակարարութեան մասին մասնաւոր տեղեկութիւն մը չունինք (Բիւ-ղ․, 1900, Թ․ 1083, էջ 1)*[398]*:

## 274/16. ԱԽԼԱԹՈՒ ՎԱՆՔ[399]*

*Ախլաթու մէջ: Ախլաթ կամ Խլաթ՝ Վանէն գրեթէ հինգ օրի չափ հեռու կ՚գտնուի, որուն Խարապաշէհիր անուն թաղին մէջ վանքի մը աւերակները կ՚երեւին, բայց ո՛չ անունը ծանօթ է ժողովրդեան, եւ ո՛չ ալ ամայութեան թուականը (Բիւ-ղ․, 1900, Թ․ 1103, էջ 1)*[400]*:

## 275/17. ԱՐԾԿԷՈՅ ՎԱՆՔ[401]*

*Վանայ ծանօթ ծովին եզերքն Արծկէ անուն քաղաքին մօտ, դէպ արեւելեան հիւսիս լերան մը վրայ շինուած: Վանքին մէջ տաշտի մը կտորը կար, որուն համար աւանդութեամբ կ՚ըսէին թէ Քրիստոսի լուացուած տաշտին մէկ մասն է: Արծկէի այս վանքի մասին Յայսմաւուրքի մէջ Գողթնացիի վարուց եւ վկայաբանութեան ատեն, իրեն եւ իր ընկերներուն համար կ՚ըսուի թէ՝ «...եկեալ հասին ի վանքն Արծկէոյ, որ կոչի Երաշխաւոր»: Եղած է ժամանակ մ՚ալ, որ այս վանքին անունը կոչուած է կ՚ըսեն, երբեմն «Ս. Խաչի Վանք», եւ երբեմն՝ «Ս. Յարութիւն» (Բիւ-ղ․, 1900, Թ․ 1103, էջ 1)*[402]*:

## 276/18. ՍԵՂԱՑ ՎԱՆՔ[403]*

*Վանայ եւ Խիզանայ միջեւը, «Ապարանից Ս. Նշան» վանքէն չորս ժամու չափ հեռու, շինութեան թուականը յայտնի չէ: Այժմ վանքի սե-*

*նեակները փլած են գրեթէ բոլորովին, բայց միայն Եկեղեցին կ՚մնայ, կ՚ըսուի, կանգուն (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1)։*

## 277/19. ԱՒԵՐ ՎԱՆՔ

*Վանայ մէջ Կէմ անուն գիւղէն քիչ մը հեռու լերան մը կողին վրայ շինուած էր այս Աւեր կոչուած վանքը, որուն հիմնարկութեան թուականն անծանօթ է։ Վանքն անցած է ի վաղուց ամայացեալ Հայ վանորէից շարքը, այժմ միայն հիմնաքարերը կ՚նշմարուին լերան ստորոտը (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1).* տե՛ս Աւեր վանք, Հ^մր^ 27։

## 278/20. ՅԱՐՊԵԼԱՆ ՎԱՆՔ - ԱՐԳԵԼԱՆ ՎԱՆՔ[404*]

*Ո՞ր կողմ կ՚իյնայ եւ ո՞ւր շինուած է այս վանքը՝ չենք կրնար որոշել. միայն վանքիս անուան յիշատակութեան պատահած ենք մեք, տասն եւ հինգերորդ դարուն մէջ գրչագրուած Շարակնոցի մը յիշատակարանին մէջ. «Ես Յոհանէս որդի Սքանդարին [իմա՛ «Ժանկտարին»], ի Դ. (4). Թանկայ Թամուրի ի չաղաթիցն գնեցի, յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, [ի վայելումն որդոց իմոց]։ Որդիքս առ Աստուած փոխեցան եւ թողին մեզ սուք անմխիթար. ետու զՇարակնոց դեռաբոյս մանկանն Յովանէս Սարկաւագին, [ի վայելումն անձին իւրոյ]՝ Տէր Եսայի որդւոյն... Գրեցաւ գիրս ի Յարպելան [իմա՛ «յԱրգելան»], ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Ներսէս վարդապետիս, եւ Յովանէս եպիսկոպոսիս, սոցա վկայութեամբ, [Աբդալու որդու Բուբաքրիս վկայութեամբ ետու զՇարակնոցս Յովանիսին], ի թվ. ՐՃՂԸ. (1449) ամին, ի հայրապետութիւն Գրիգոր Կաթողիկոսի, [ի թագաւորութիւն Ջհանշին, որ գնաց ի Հրէ ու ի Խորասան]» [Փիրղ., Նոտ., էջ 160-1] (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1)[405*]։*

## 279/21. ՊՈՒՏԼԻԿ ՎԱՆՔ[406*]

*Վանայ մէջ, այս վանքը կ՚յիշատակէ Թովմայ Մեծոփեցի եկեղեցական պատմագիրը, վանքն ի վաղուց անցած է ի շարս աւերակ ու ամայացեալ Հայ վանորէից (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1)[407*]։*

## 280/22. ԳԻՆԵԲԵՐ ՎԱՆՔ[408*]

*Վանայ Ականց անուն գիւղաքաղաքէն չորս ժամու չափ հեռու գեղեցիկ բլրակի մը վրայ շինուած էր, կ՚ըսուի, որուն համար լսած ենք թէ ի վաղուց ամայացեալ է։ Վանքը կ՚կոչուի եղեր երբեմն «Գինեբեր Ս.*

*Նշան», եւ երբեմն «Կենաբեր Ս. Գէորգի Վանք», ո՞րն է ստոյգը, Վանայ վանասէրներէն կ՚սպասենք (Բէ-դ., 1900, Թ. 1127, էջ 1):*

## 281/23. ԾԱՌԱՔԱՐ ՎԱՆՔ[409*]

*Վանայ մէջ, այս վանքի մասին ալ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք (Բէ-դ., 1900, Թ. 1127, էջ 1)[410*]:*

## 282/24. ԾՊԱՏ ՎԱՆՔ[411*]

*Վանայ գաւառին մէջ, ամենահին վանքերէն մին էր, Տաճարը նուիրուած էր յանուն Ս. Ամենափրկչի եւ կ՚կոչուէր «Ծպատ Վանք», որ ի վաղուց ամայացեալ եւ անցած է ի շարս շաբաթացեալ Հայ վանորէից: Աւանդութեամբ կ՚ըսուէր, թէ Քրիստոսի Փրկչին մերոյ երկրպագութեան գացող երեք մոգերէն Գասպարի մարմինը թաղուած էր այս վանքին մէջ: Տասնեւհինգերորդ դարուն մէջ գրչագրուած ձեռագիր Ճաշոցի մը յիշատակարանին մէջ ալ յիշուած է այս վանքը. – «...Աւարտեցաւ այս տառ ձեռամբ անարհեստ գրչի Կարապետի, ի թվին ՊՀԲ. (1423), հայ[կազեան սեռիս] տոմարի, եւ Հայրապետութեան Տեառն Դաւթի... [ղանութեան թիւրքմէն ազգի, որ Իսքանտար-բէկ անուն կոչի...]: Գրեցաւ աստուածախաւս այս տառ [յարքունական յերկիրս] Մոկաց, ի վանքն որ կոչի Ծպատ, ընդ հովանեաւ Ամենափրկչիս, որ է սրբագործ եկեղեցի, եւ ձեռնադրողին Քրիստոսի Կարապետի, [եւ զօրավարիս քաջ նահատակի]. եւ այլ հաւաքեալ սրբոց, ի խնդրոյ սրբասէր Թումա կրաւնաւորին» (Բէ-դ., 1900, Թ. 1127, էջ 1)[412*]:*

## 283/25. ԿԱԻԱԼՈՒ ՎԱՆՔ[413*]

*Ենթադրութեամբ, բայց շատ տարակուսանօք կ՚ըսենք թէ վանքս դուցէ Վանայ մէջ ըլլայ, ի հարկէ վաղուց ամայացեալ: Այս Վանքի անուան պատահած ենք տասնեւհինգերորդ դարուն մէջ գրչագրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ, որ կ՚գտնուի Վանայ «Տէր Յուսկանորդւոյ» վանքին մէջ: «...Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... Աւետիս աբեղայ... կատարեցի զՍուրբ Աւետարանս... յաստուածաբնակ ուխտ, ի վանքս որ կոչի Կաւալու, ընդ հովանեաւ Սուրբ Տիրածին Աստուածածնի, յանուն Սուրբ Կարապետին եւ Սուրբ Խաչին է կառուցեալ. ի յառաջնորդութեան Տէր Սահակ եպիսկոպոսին, եւ է ինքն բարի եւ հնազանդ օրինացն Աստուծոյ... եւ վանից միաբան տնտես մահտասի Ազ... որ է մայրագութ՝ խնամ տանի ի վերայ մեղաւորիս, հալաւ վլանալ, թափելով եւ կերակրելով, Գրիգոր ամոլավար, որ աշխատէ բազում*

*ջանիւ ի դուռն Աստուածածնին եւ Դալալին, որ է աւելածու տան եւ դռան [Աստուած- ողորմի ասացէք]: Թուին ՊԾԹ. (1410)»* [տե՛ս «Նօտարք», երես 37-8. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 116-7] *(Բիւզ., 1900, Թ. 1158, էջ 1):*

## 284/26. ԲԱՐԵՁՈՐՈՑ ՎԱՆՔ[414]*

*Խիզանայ մէջ, Շէն եւ Բրոնց անուն գիւղերուն մօտ. երբեմն այս վանքին ըսուած էր նաեւ «Եօթն Խորանի Վանք», եկեղեցին նուիրուած է յանուն Ս. Աստուածածնի, առանձին խորաններն շինուած էին յանուն Ս. Մերկերիոսի, Ս. Սարգսի, Ս. Գէորգայ եւ այլ սրբոց: Այս վանքին նկատմամբ մեր ի ձեռին ունեցած հետեւեալ յիշատակարանները կ՚դնենք այս տեղ. «...Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անի- մաստ գրչի Կարապետի... [Եւ մեր փախստական եղեալ՝] եկաք ի Հիզան, եւ եղեւ կատարումն սորա աստ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, եւ սրբոյն Սարգսի [զօրավարին], եւ Գէորգայ [քաջ նահատակի], ի Թուականիս Հայոց ՊՀԴ. (1425)...»: Բ. «Արդ ես վերջինս խնդրող բանի, որ եմ տրուպ յամենայնի, փափագանօք զտառս գրեցի, ընդ հովանեաւ Աստուածածնի, որ Բարի ձոր անուն կոչի, ի Թուականիս ութ հարիւրի, եօթանասուն եւ չորս ամի, ձեռամբ անիմաստ Թոմայի»* [Փիրղ., Ճօտ., էջ 77-8. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 328, 340]*:*

*Ձեռագիր Յայսմաւուրքներու մէջ կ՚յիշուի նաեւ հետեւեալն. «Հա- պէշ ազգաւ քահանայք, վասն կրաւնաւորութեան կան ի կողմանս Հի- զանայ, եւ վասն Քրիստոսի նահատակութեամբ կատարին անդ, եւ թա- ղին ի վանս Բարիձորոյ Սուրբ Աստուածածնի» (Բիւզ., 1900, Թ. 1158, էջ 1)[415]*:*

## 285/27. ԱՒԵՐ ՎԱՆՔ[416]*

*Վանայ մէջ, Աթանանց անուն գիւղի հարաւ-արեւելեան կողմ ձո- րակի մը մէջ շինուած, բայց ի վաղուց ամայի: Վանքի աւերակներէն քիչ մը հեռու կ՚նշմարուին նաեւ աւերակ եկեղեցւոյ մը հիմերն ալ: Այս վանքը Վանայ Կէմ գիւղի «Աւեր» վանքէն զատ վանք մ՚է, եւ Աթա- նանց գիւղը Հայոց Ձորոյ եւ Ոստանայ գրէթէ սահմանին մէկ անկիւնը կ՚կազմէ (Բիւզ., 1900, Թ. 1158, էջ 1):*

# [ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՊԱՐՍԿԱՀԱՅՔԻ ՎԱՆՔԵՐ]

## 286/1. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[417]*

*Երեւան–Էջմիածնայ միջեւ, Մօղնի գիւղի հիւսիսային կողմը կէս ժամ հեռի: Կարբի գիւղէն քառորդ ժամ է վանքս, որ Ս. Լուսաւորչէն շինուած եւ երբեմն նորոգուած Մեծն Ներսէսէ, ի հնումն անուանի՝ այժմ ո՛չ: Այս վանքը ժողովրդեան մէջ կ՚կոչուի նաեւ «Հանավանք», եւ երբեմն ալ կ՚կոչուէր «Սուղի վանք» եւ կամ «Սովու վանք», որուն պատճառն է կ՚ըսուի, վանքի առաջին վանահօր անունը, որ Սուղոս էր: Ստեփաննոս Ասողկայ (Հատոր Բ. գլուխ Զ.) յիշատակած «Սուրինայ անապատը» հաստատապէս կ՚կարծուի թէ այս վանքն ըլլայ: Վանքի մէջ, տեղ տեղ, շատ մը արձանագրութիւններ կան յանուն նորոգողներու եւ նուիրատուներու, որոց ոմանց օրինակներուն հրատարակութիւններն ուրիշ ժամանակի թողլով, այստեղ կ՚ուզենք յառաջ բերել այն վանահայրներու անուններն որք կ՚յիշուին:*

*1. Սաւղոս, առաջին վանահայր.*

*2. Յովհաննէս ոմն.*

*3. Աշոտ Դունեցի, 553ին.*

*4. Բաբելաս, որ գտնուեցաւ նաեւ Դունայ Եկեղ. ժողովոյն մէջ 596ին.*

*5. Յովհաննէս 703ին. [եւ ըստ վարուց սրբոց՝ ի ՃՁԶ. կամ ՃՁԷ. (737, 738ին) Շահխ.].*

*6. Մխիթար 1033ին.*

*7. Խաչիկ 1171ին.*

*8. Մկրտիչ 1243ին.*

*9. Համազասպ 1279ին.*

*10. Բարսեղ 1311ին.*

*11. Ներսէս 1318ին.*

*12. Աբրահամ 1352ին.*

*13. Կարապետ Եպս. 1441ին.*

*14. Գաբրիէլ Եպս.*

*15. Խաչատուր, ալթը ղուլաճ մականուանեալ.*

*16. Միքայէլ Վարդապետ.*

*17. Գրիգոր Վարդապետ. Կարբեցի 1570ին.*

*18. Մատթէոս Վարդապետ. 1593ին.*

*19. Յովասափ Վարդապետ. Սեթեանց 1618ին.*

*20. Յովհաննէս Վարդապետ. Կարբեցի 1629ին.*

*21. Առաքել Վարդապետ Դաւրիժեցի 1636ին.*

*22. Զաքարիա Եպիսկոպոս. Վաղարշապատցի 1637ին.*

*23. Յովհաննէս Վարդապետ. Կարբեցի 1651ին.*

*24. Սարգիս Վարդապետ. Կարբեցի 1679ին.*

*25. Յակոբ Վարդապետ. 1734ին.*

*26. Սարգիս Եպիսկոպոս:*

*Մենք այս վանահայրներու ցանկը հանած ենք Շահխաթունեանի գրած երկհատոր պատմութենէն (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)*[418]*:

## 287/2. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ[419]*

*ՅԱրագածոտն, յԷջմիածնայ մօտերը (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)*[420]:

## 288/3. ԽՈԾԱՎԱՆՔ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ[421]*

*Կամ Հորոմոսի վանք, կամ Հորոմի վանք, կամ Հոռոմոց վանք, Ս. Էջմիածնայ կողմերը, այժմ բոլորովին աւերակ ծանօթ քաղաքէն գրեթէ կէս ժամ հեռի շինուած այս նշանաւոր ու հռչակաւոր վանքի մասին, որ անցած է ի շարս շաբաթացեալ վանօրէից, եթէ առիթը պատահի, առանձինն գրելու դիտաւորութիւն ունինք, հրատարակելով նաեւ ամբողջ յիշատակարանները, որք ընդօրինակուած են 1848 թուականին, ի ձեռն Կարապետ Եպս. Ալակէօզեանի (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)*[422]*:

## 289/4. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[423]*

*Պարսկաստանի Սալմաստ գաւառակի Քէօհնէշէհիր քաղաքին հարաւակողմը բարձր բլուրի մը վրայ շինուած է Ս. Յովհաննու վանքը: Քէօհնէշէհիրի մէջ 50-60 տունի չափ Հայեր կան, որոնք տարին անգամ մը ուխտի կերթան վանքին (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 290/5. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ[424]

*Մեղրոյ, եւ՝ (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 291/6. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ[425]*

*որուն «Ս. Վահանայ վանք» ալ կ՚ըսուի, Սիւնեաց գաւառին մէջ են (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)*[426]*:

## 292/7. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ[427]*

*Գուգարաց մէջ (Բիւզ., 1900, Թ. 1001, էջ 1)*[428]*:

## 293/8. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ

*Կարմեղինայ, Աղուանից երկրին մէջ (Բե–Դ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 294/9. ՀԱՅՐ ՕՀԱՆԱՅ ՎԱՆՔ

*Կ՚յիշուի նաեւ «Հայր Օհանայ» վանք մ՚ալ Երեւանի մօտերը (Բե–Դ., 1900, Թ. 1001, էջ 1):*

## 295/10. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ[429]*

*Սուրբ Էջմիածնայ մօտերը, Կարբի անուն գիւղէն կէս ժամ, եւ Ուշի անուն գիւղէն քառորդ ժամ հեռու, Արագած լերան ստորոտը, բարձր բլուրի մը վրայ կ՚գտնուի, հինգերորդ դարէն ի վեր՝ շինուած Ս. Մեսրոպէ: Վանքը կ՚կոչուի նաեւ գիւղի անուամբ «Ուշի Ս. Սարգիս»: Պարսպապատ է, ունի երեք եկեղեցի՝ իրարու կից, 1827 թուականին պատահած երկրաշարժէն վանքն եւ երեք եկեղեցիներն վնասուեցան, մանաւանդ միջինը: Ժամանակի նշանաւոր վանքերէն էր, բայց հետզհետէ իր փայլը կորսնցուց: Արդի Սրբազան Հայրապետը մեծ փութով ու ջանիւք կ՚աշխատի նորոգել վանքն ու նախկին վիճակին բերել: Յառաջ կ՚բերենք այս տեղ առ այժմ հետեւեալ երկու յիշատակարանները, որք վանքի եկեղեցիներուն միոյն պատերուն վրայ կ՚գտնուին:*

*Ա. «Թվ. ՉՀԸ. (1329) ԿԱՄԱՒ ԱՆՄԱՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՊԱՐՈՆ ՔՈՒՐԴԻՆ, ԵՒ ԽՈՒՏ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՍ ՀՌՈՄ ԵՐԷՑ ՈՐ ՄԱՒՐ ԵՒ ՀԱՄԱՅ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՈՒԼՈՒ ԽԱԹՈՒՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՈՒՐԲԻՍ... ՏՈՒԱՔ ՀԱՋԱՐՄԱՆԻՆ ԱՅԳԻՆ...»:*

*Բ. «ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ, Ս. ՍԱՐԳՍԻ ԱՒԳՆՈՒԹԵԱՄԲՆ..., ՏԵՂԻՈՅՍ ԱՒԱԳ ՍԱՐԳՍԻ, ՇԻՆԵՑԱՒ ՀԱՏԱԾ ՄԵԾ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԿԱՆԳՆՈՒՄՆ ԽԱԽՏԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ԶՈՐ ԷՐ ՇԱՐԺԵԱԼ Ի ՀԻՄԱՆՑ, Ի ՏԷՐ ՅՈՎՀԱՆԻՍԷ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԻՒՐՈՑ, ՈՐՈՒՄ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՆՄԱ ՔՐԻՍՏՈՍ, ՏԱՑԷ Ի ԼՈՒՍԵՂԷՆ ՅԱՐԿԱՑՆ ՀՈԳՈՅ ՆՈՐԱՑ, ԵՒ ՏԷՐ ՀԱՄԱԶԱՍՊ... ՈՐՔ ԱՇԽԱՏԵԱԼՔ ԵՆ Ի ՍՄԱ, ԶՀԱՄԱՅՆ ՄԻԱԲԱՆՔ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏԷՐ, Ի ԹՎԻՍ ՉԺԳ. (1264)»:*

*Այս վանքի հին վանահայրներէն կը յիշուին միայն Տէր Համազասպ 1264ին, Տէր Բարսեղ վրդ. 1443ին, Տէր Միքայէլ եպիսկ. Քանաքեռցին 1636ին, Տէր Ոսկան Եպսկ. 1654ին, որ իր ժամանակին բաւական նորոգութիւններ ալ կատարած է վանքին մէջ (տե՛ս Շահխ. հ. 2, էջ 118-20) (Բե–Դ., 1900, Թ. 1019, էջ 1)[430]*:*

## 296/11. Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ[431]

*Երեւանայ նահանգին մէջ: Այս վանքին կ՚ըսուի նաեւ, «Խծկոնից», կամ «Խըծկունքի վանք Ս. Սարգսի» (Բե–Դ., 1900, Թ. 1019, էջ 1)[432]*:*

## 297/12. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔ[433]*

*Գուգարաց աշխարհին մէջ, որուն կ՚ըսուի նաեւ՝ «Գագայ Ս. Սարգիս»: Այս վերջին վանքի հետ, նոյնպէս թիւ 6 Էրզրումի, եւ թիւ 10 Երեւանայ Ս. Սարգսի[434]* վանքերուն վրայ մասնաւոր տեղեկութիւններ կ՚պակսին մեզի համար (Բիւ-ղ., 1900, Թ. 1019, էջ 1):*

## 298/13. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ԱՄԱՐԱՍԱՅ[435]*

*Կ՚յիշատակուի Աղուանից երկրին մէջ (Բիւ-ղ., 1900, Թ. 1060, էջ 1):*

## 299/14. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ՎԱՆԱՎԱՆՈՒ[436]*

*Երեւանայ կողմերն Ալիչալը անուն գիւղէն կէս ժամ հեռու: Վանքի եկեղեցին անսիւն է, թէեւ գմբեթաւոր, շինուած է յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչի (տե՛ս Ստ. Ուրբելեան, եր. 277): Տասներորդ դարուն մէջ աւելացուած է ուրիշ սեղան մը եկեղեցիին մէջ, որոյ մասին վանքի մէջ գետեղուած յիշատակարանի հրատարակութիւնը կ՚թողունք ուրիշ առթի (Բիւ-ղ., 1900, Թ. 1060, էջ 1):*

## 300/15. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ ԿԵՉԱՌՈՒ[437]*

*Երեւանէն ութ ժամ հեռու, հիւսիսային կողմ Մաքրավանք անուն գիւղի մօտերը, անտառախիտ լեռներով շրջապատուած վայելուչ ու գեղեցիկ դիրքի մը վրայ կառուցուած է վանքս, 1031 թուականին ի ձեռն Ապիրատի, եւ 1033 թուականին ալ Ս. Գրիգոր Մագիստրոսի միջոցաւ Եկեղեցին շինուելով նուիրեցաւ յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին, որուն յիշատակարանը կ՚գտնուի եկեղեցւոյն հարաւային դրան վրայ. որ է՝ «ՆՁԲ. (1033) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱՅ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ, ԻՆՁ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ, ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ, ԶԻՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ, ԱՂԱՉԵՄ»:*

*Վանքս իր նախկին փայլն ու պարծանքը չունի այժմ, ինչպէս կ՚լսենք: Երեւանցիք ամառը կ՚անցնեն այս վանքին մէջ իբրեւ օդափոխութիւն (Բիւ-ղ., 1900, Թ. 1060, էջ 1)[438]*:*

## 301/16. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ԱՌԱՊԱՐԻ[439]*

*Էջմիածնայ Մայր Աթոռէն կէս ժամ հեռու, Երեւանայ ճանապարհին վրայ, հռչակաւոր վանք, որ շինուած է Չորրորդ դարուն մէջ, փոքրիկ ու տափարակ բլրի մը վրայ Մեծն Ներսէսէ: Այժմ աւերակ, եկեղեց-*

ւոյ հիմերը միայն կ՚երեւին: Ժողովուրդն այս տեղը կ՚կոչէ «Հանգուցեալ» կամ «Հանգած վանք» (Բիւզ., 1900, Թ. 1060, էջ 1):

## 302/17. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ ԽՈՐՎԻՐԱՊԻ[440]*

Էջմիածնէն դէպ արեւելեան հարաւ, Գառնոյ գաւառին Դունա դաշտին վերջին ծայրը, Ս. Գրիգորի տարիներով մնացած Վիրապի տեղւոյն վրայ շինուած է Զորրորդ դարուն. ունի շատ գեղեցիկ ու սքանչելի տեսարան մը, պարսպապատ է քառակուսի, եւ միակ դուռ մ՚ունի արեւելեան կողմէն:

Ս. Եկեղեցին վանքի կեդրոնին միջեւն է. մեծ, ընդարձակ ու գմբեթաւոր, շինուած է քառակուսի ձեւով եւ համակ կոբածոյ քարերով, ունի երեք սեղաններ ըստ սովորութեան Հայ. եկեղեցւոյ, գմբեթը ներքին կողմէն գոյնզգոյն քարերով զարդարուած է, եւ սիւնազարդ զանգակատունն եկեղեցւոյ արեւմտեան դրան կամարակապ գաւթի չորս սիւներուն վրայ կառուցուած: Ս. Վիրապին վրայ գտնուած եկեղեցին, մեծ տաճարին հարաւային կողմն է, ունի փոքրիկ սեղան մը, որուն առջեւն է, հարաւային կողմ, վիրապին բերանն, ուրկէ վար կ՚իջնուի, 25 աստիճան սանդուղներով: 1661 թուականին Տփխիսցի Դաւիթ վարդապետի վանահայրութեան օրով, վանուցս պարիսպն հաստատուած է հաստատուն բուրգերով: Մեծ եկեղեցին եւ Ս. Վիրապայ փոքրիկ եկեղեցին հիմնական նորոգութիւններ տեսած ու զարդարուած են, որոց յիշատակարաններն են հետեւեալքն:

Ա. «Ի ԹՎԻՆ ՌՃԺ. (1661), ԵՒ ... ՅԱՒՈՒՐՍ ՅԱԿՈԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ. ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՆՈՐՈԳԵՑԻՆ ԶՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԽՕՃԱ ՇԱՄՕՆՆ ԱԳՈՒԼԵՑԻ. ԵՒ ԽՕՃԱՅ ԱՒԹԱՆԹԻԼՆ ԹԻՖԼԻԶԵՑԻ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ»:

Բ. «ՅԻՇԵԱԼ ԼԻՑԻՆ ԱՌԱՋԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԽՕՃԱՅ ՍԻՄՈՆ ԵՒ ԻՒՐ Բ. ԱՄՈՒՍԻՆՆ ԳՈՒԼՈՒՄ ԽԱԹՈՒՆ, ԵՒ ԻՒՐ ՆՆՋԵՑԵԱԼՔՆ, ՈՐՔ ՆՈՐՈԳԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՎԻՐԱՊՍ ԹՒԻՆ ՌՃԺ. (1661)»:

Վանքի հիւսիսակողմը շինուած են, միաբանաց յատուկ կամարայարկ սենեակներ, արեւմտեան կողմը՝ տնտեսատուն, շտեմարան, խոհանոց եւ այլն, որք փայտածածկ են: Վանուցս հին վանահայրերէն կը յիշուին Անտոն Եպս. 1441ին, Մանուէլ Եպս. 1603ին, Դաւիթ Վրդ. Տփխիսեցի 1661ին, որ կատարեց հիմնական նորոգութիւններ, ինչպէս վերեւ յիշեցինք, Գալուստ վարդապետ Դարունեցի 1840ին: Դաւիթ վարդապետի գերեզմանի քարը կորսուած է կ՚ըսուի, բայց վրայի տապանագիրը ժամանակին օրինակուած է եղեր, որ յառաջ կ՚բերենք այս տեղ (տե՛ս նաեւ Շահխ., եր. 279):

«Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ,

*ՄԱՐՄԻՆ ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ,*
*ՈՐ ԷՐ ՎԱՐՈՒՔ ԱՌԱՔԻՆԻ,*
*ԿԵՆՕՔ ՄԱՔՈՒՐ, ԲԱՐՈՒՔ ԲԱՐԻ.*
*ՄԵԾԱՀԱՒԱՏ ՔԱՋ ԵՒ ԱՐԻ,*
*ԽՈՆԱՐՀԱՄԻՏ ՀԵԶԱՀՈԳԻ,*
*ԱԶՆՈՒԱՏՈՀՄ ՅԱԶԳԷ ՎՐԱՑԻ,*
*ՍՆԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ,*
*ՇԻՆՈՂ, ՀԻՄՆՈՂ ՍՐԲՈՅ ՈՒԽՏԻՍ,*
*ԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ ՍՐԲՈՅ ՎԱՆԻՑՍ.*
*ԵԿԵՂԵՑԵԱՑՍ ԵՒ ՊԱՐՍՊԻՍ,*
*ԿԵՆԴԱՆԱԹԱՂ ԳԵՐԵԶՄԱՆԻՍ.*
*ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ ԱԶԳԻՍ.*
*ՈՐ ՎՃԱՐԵԱՑ ԶԿԵԱՆՍ ԱՇԽԱՐՀԻՍ.*
*ՎԵՐԱՓՈԽԵԱԼ Ի ՅԵՐԿՆԱՅԻՆՍ,*
*Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՍ*
*ՌՃԽ ԵՒ Դ. ԱՄԻՆ. [1695]*
*ՈՐ ԶՕՐԷՆ Ի ԿԻՒՐԱԿԷԻՆ,*
*ՓԵՏՐՈՒԱՐԻ Ժ. ԵՐՈՐԴԻՆ,*
*ՈՐՔ ՎԱՅԵԼԷՔ ՅԱՐԴԻՒՆՍ ՍՈՐԻՆ,*
*ԶՍԱ ՅԻՇԵՍՋԻՔ ԱՌ Ի ԲԱՐԻՆ,*
*Ի ԺԱՄ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ*
*ՅԱՂՕԹՍ ԵՒ ՅԵՐԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ» (Բիւզ., 1900, Թ. 1060, էջ 1)*[441]*:

## 303/18. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ[442]*

*Էջմիածնայ կողմերը, Փարպի անուն գիւղի արեւելեան կողմը, այգեստաններու մէջ: Շրջապատն իսպառ քանդուած, եկեղեցին ալ փլած է: Ժամանակ մը գիւղացիք եկեղեցիին վրան փայտեայ ծածկերով ծածկած իբր եկեղեցի կ՚գործածէին, բայց ներկայիս մէջ վանքն ի՛նչ վիճակ ունի տեղեկութիւն չունինք (Բիւզ., 1900, Թ. 1060, էջ 1):*

## 304/19. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՆԱՊԱՏ

*Էջմիածնայ կողմերը, Արագածու եւ Արայի միջեւ, Սաղմոսավանքի վարի կողմ, ձորին մէջ Քարցաղ գետին եզերքը. Հիմնուած է վանքս Ս. Գրիգոր Լուսաւորչէն, այժմ չունի իր անցեալ փառքն ու պարծանքը, եւ կ՚կարծենք թէ ամայացած է (Բիւզ., 1900, Թ. 1060, էջ 1)*[443]*:

## 305/20. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՎԱՆՔ[444]*

*Էջմիածնայ կողմերը, Եղիվարդ անուն գիւղէն կէս ժամ հեռու, դէպ ի արեւելեան հիւսիս, կ՚գտնուի «Եղիվարդայ վանքն», որ շինուած է*

*եօթներորդ դարուն մէջ, ի ձեռն մի ոմն Գ. Մամիկոնեանի: Թէ՛ վանքն եւ թէ՛ եկեղեցին բոլորովին քայքայուած վիճակի մէջ են, որոնց մնացորդները կ'երեւին միայն: Այս վանքի անուանց վրայ չփոթութիւնք կան, ոմանք շինուած է կ'ըսեն՝ յանուն ուրիշի, ոմանք՝ յանուն Սրբոյն Յակովբայ Առաքելոյն, բայց սակայն խնդրական են (Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1)[445]*:*

## 306/21. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ՎԱՆՔ

*Կարսի մէջ, որուն կ'ըսուի նաեւ «Նագըշլը քիլիսէ»: Այս վանքի վրայ մասնաւոր ծանօթութիւններ կը պակսին մեզի (Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1)[446]*:*

## 307/22. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ[447]*

*Սիւնեաց Թեմին մէջ. կ'ըսուի նաեւ «Աշերմոնի Ս. Գրիգոր» (Բիւզ., 1900, Թ. 1066, էջ 1)[448]*:*

## 308/23. ԲԱՐՁՐԱՔԱՂԻ ՎԱՆՔ[449]*

*Այս վանքին ուր տեղ շինուած ըլլալը մեզի ծանօթ չէ, միայն թէ իր անուան պատահած ենք, հաւանականաբար տասներորդ դարուն մէջ գրչագրուած հայերէն հին ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանին մէջ, որ կ'պահուի Սեւանայ վանուց մատենադարանը. – «... Արդ, ես ծառայ Քրիստոսի եւ աղախին անպիտան Համայս՝ դուստր Մամիկոնին, որ ոչ դուստր ունէի եւ ոչ որդի, յիշեցի զիմ մահին աւրն եւ զահեղ դատաստանն Քրիստոսի, եւ արարի ինձ յիշատակարան եւ գնեցի ի հալալ արդեանց իմոց զսուրբ եւ զոգելից եւ զաստուածային տառս զսուրբ զԱւետարանս եւ տվի Բարձրաքաղիս սուրբ ուխտին եւ սքանչելայգործ Սուրբ Գրիգորին, եւ ի ձեռն սուրբ եւ աստուածայնման Հայրայպետին Տէր Վահանայ եւ սորա ընտրեալ միայբանիցն, յառաջնորդութեան սուրբ ուխտին Տէր Վահանայ, եւ միայբանքս խոստացան ի տարին Բ. աւր պատարագել զՔրիստոսի յիմ անունս:*

*Արդ, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս տեսանելով կամ երկրպագելով, ասացէք բոլոր սրտիւ. Աստուած ողորմի Համային...» (տե՛ս Ն. Մառ, «Ցուցակ Սեւանայ», երես 2)* [վերահրատ. տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 904] *(Բիւզ., 1900, Թիւ 1158, էջ 1):*

## 309/24. ԿՈՒԳՈՑ ՎԱՆՔ[450]*

*Այս վանքին ուր տեղ շինուած ըլլալուն վրայ որոշ բան մը չենք կրնար ըսել, միայն տարակուսանօք կրնանք ըսել թէ գուցէ Վանայ մէջ ըլլայ: 1461 թուականին գրուած Պատարագամատոյց ձեռագիր մատե-*

*նին մէջ կ՚հանդիպինք հետեւեալ յիշատակարանին. – «... Արդ, գրեցաւ փրկական Խորհուրդ Պատարագի, ի Թուականիս մեր Հայոց, ՋԺ. (1461) ամի, ի [ձորս Շահապունից], եւ վանքս Կուգոյ, ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս, որ կոչի Հազարաբուրք, եւ կաթուղիկէ Սուրբ Ստեփաննոսի, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Նշան սրբոց Քառասնից, ձեռամբ յոգնամեղ եւ փծուն գրչի, եւ պիտակ անուն Յովսէփ յետին Եպիսկոպոսի»* [տե՛ս Նօտարք, երես 205. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ. Բ., էջ 159] *(Բիւզ., 1900, Թ. 1083, էջ 1)*[451]*:

## 310/25. ԿՈԹԻ ՓՈՐՈՅ ՎԱՆՔ[452]*

*Շինուած է Գուգարի գաւառին մէջ յանուն Ս. Աստուածածնի, կ՚ըսուի նաեւ «Ընկուզագոմ»: Այս վանքի մասին Վանայ Վարագայ Ս. Նշան վանքի Թանգարանին մէջ գտնուած ձեռագիր Յայսմաւուրքի մը յիշատակարանին հետեւեալ մասն առաջ կ՚բերենք այս տեղ. «...Գրեցաւ ի Թուիս Հայոց ՊՀԶ. (1427) յԱհեկի ի Բ. (2), ի տեղիս որ աւարտեցաւ՝ ի Կոթի Փորոյ վանքս, որ կոչի Ընկուզայ գոմ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, ...զՅովաննէսն ու զՍարգիս յիշէք, որ մեզ ջուր են բերել, զՄարտիրոսն, որ մեզ մեղր է տուել, Աստուած զիւր քաղցրութիւնն նմա տացէ, ամէն» (տե՛ս Նօտարք, երես 86* [վերահրատ. ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 363-4]*) (Բիւզ., 1900, Թ. 1103, էջ 1):*

## 311/26. ԼԱԶՐԷՎԱՆՔ

*Ս. Էջմիածնայ մօտերն է կ՚ըսուի, բայց կ՚կարծենք, թէ ի վաղուց անցած պիտի ըլլայ ի շարս ամայացեալ Հայ վանորէից (Բիւզ., 1900, Թ. 1103, էջ 1):*

## 312/27. ԽՈՐԱՆԱՇԱՏ ՎԱՆՔ[453]*

*Աղուանից երկրին Տաւուշ գաւառին մէջ, շինուած է երեքտասաներորդ դարուն սկիզբները հոգածութեամբ եւ աշխատութեամբ Վանական վարդապետի: Տաճարն ընդարձակ, գմբեթաւոր, զարդարուն եւ բազմախորան ըլլալուն համար, անուանեց վանքն ալ Խորանաշատ վանք: Վանական վարդապետը վերոյիշեալ երկրին նոյն գաւառէն էր, վախճանեցաւ 1251 Թուականին, 70 տարեկան ալեւոր հասակին մէջ եւ թաղուեցաւ այս վանքը, ինչպէս կը կարդանք Յայսմաւուրքի մէջ իր յիշատակութեան ժամանակ, «Գնաց աշխարհն իւր եւ շինեաց վանս եւ ի նմա փառաւոր եկեղեցի սրբատաշ վիմօք, գմբեթաւոր եւ բազմախորան, եւ անուանեաց զվանսն Խորանաշատ... լի աւուրբք հանգեաւ ի*

Քրիստոս ամաց եւթանասնից ի Չ. թուականին Հայոց, Արեգ Ժ. եւ Մարտ ԺԸ»: Այս վանքի մասին, Վանայ Ս. Վարդան եկեղեցիին մէջ գտնուած, եւ ՈՀԳ. (1224) թուականին գրչագրուած մագաղաթեայ եւ երկաթագիր Աւետարանին այլեւայլ յիշատակարաններու կարգէն, հետեւեալները կ՚դնենք այս տեղ: Ա. «Ես՝ Վանէնի աղախին Քրիստոսի դուստր Ջաջռոյ Խաղբակեանց, ամուսին Կուկին՝ որդւոյ Աբասայ Սեւատեանց... միաբանեցա ի Խորանչատոյ Սուրբ Աստուածածնիս, յիշելով զբանն Եսայա մարգարէի, «Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն», եւ ետու զծախս Սուրբ Աւետարանիս ստանալ զսա ինձ զաւակ... ի հայրապետութեան տեառն Յովանիսի, ի ՈՀԳ. (1224) թվականիս, եւ շինող եւ Առաջնորդ վանիցս Վանական Վարդապետ[ն]...» [վերահրատ.՝ Գ. Յովսէփեան, Յիշատ., էջ 839. ԺԳ. դ. յիշ., էջ 140]:

Բ. «Յանուն Տեառն ամենակալին Աստուծոյ ես ՎՆ. ու Գոհարն, զմեր որդիս Յակոբ. Ա. ամաց, տուաք Խորանչատայ Աստուածածնիս յընծայումն ի ձեռն Տր. Յով. տուեցի...»: Գ. «Կամաւ հզաւրին Աստուծոյ ես Դոյր միակեցս վախուցեալ ի մեղաց իմոց, յոյս ունենալով ի Սուրբ ուխտս Խորանաչատս, ի հալալ արդեանց իմոց միաբանեցայ ի ձեռն Տր. Յովհ. տուեցի...»: Դ. «Ես Վանականս գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի, ի դրան Սուրբ Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւըշոյ ի Մուղան, ի թաթարէն, եւ յետ երից ամաց աստ բերեալ անվնաս վաճառեցին ի ՈՁԷ. (1238) թուիս, զոր փառաւոր աւագերէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք եւ աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախաւք եւ աշխատութեամբ գնել ետուն ի մեզ...» [տե՛ս Թորոս Աղբար, երես 272-5. վերահրատ. տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 203] (Բէ-Ղ., 1900, Թ. 1103, էջ 1)[454]*:

## 313/28. ՁԱԳԱՎԱՆՔ[455]*

Երեւանայ հիւսիսային կողմը Կոտայք գաւառին մէջ Ձագ անուն գիւղի հարաւային արեւմտեան կողմը, բլրակի մը հարաւային ստորոտին վրայ շինուած է վանքս, որուն կ՚ըսուի նաեւ «Գետարգել Ս. Նշան»: Շինութեան թուականը յայտնի չէ: Վանքին մէջ երկու Տաճարներ կան, որք իրարմէ տասը քայլի չափ հեռու են, եւ մին փոքրիկ: Այս փոքրիկ մատուռն էր, որ կ՚անուանուէր «Գետարգել Ս. Նշան»: Վանքը թէեւ իր հին փառք ու փայլէն մերկացեալ, այժմ ամայի՝ եւ կրնանք ըսել նաեւ աւերակ վիճակ մը ունի, բայց մօտակայ ժողովուրդն երբեմն եւ Յինանց օրերուն մէջ կ՚երթան յուխտ եւ յերկրպագութիւն: Իր թեմորայքն էին Երեւանայ Ձագ, Աւան, Շըհապ, Արամուս, Աղասօր, Արախուս անուն գիւղերը. թէ՛ այս թեմորայք եւ թէ վանքի այլ սեփակա-

*նութիւնք այժմ կ'կառավարուին ու կ'մատակարարուին ուղղակի Ս. Էջմիածնայ Մայր Աթոռէն: Այս վանքի մէջ եղած յիշատակարանները առաջ կ'բերենք այս տեղ, քաղելով Շահխ.էն Բ. հատոր, եր. 163:*

*Ա. «Թվին ... Կամաւն Աստուծոյ ես Գրիգոր Կթ. ամենայն Հայոց, ամենայն վարդապետօք եւ եպիսկոպոսօք շնորհեցաք զՁագ ընծայ Գետադարձ Սուրբ Նշանիս, մի ոք իշխեսցէ հակառակիլ հրամանաց մերոց»:*

*Բ. «Կամաւն Աստուծոյ ես Մոծակենց Մկրտիչս Ջագավանաց հանդն գնեցի եւ ետու վախմ Գետարգել Սուրբ Նշանիս, ով որ ետեւ առաջ տանէ ԳՃԺԸ. հայրապետացն նզոված լինի, Թվին ՌՄԷ. (1758)» (Բիւզ., 1900, Թ. 1103, էջ 1)*[456]*:*

## 314/29. ԱԿՐԻ ՎԱՆՔ[457]*

*Երեւանայ կողմերն է կ'ըսուի, որուն վրայ մասնաւոր ծանօթութիւն մը չունինք (Բիւզ., 1900, Թ. 1127, էջ 1):*

## 315/30. ԴԵՐԵՔԻ ՎԱՆՔ[458]

*Միակ Հայ վանք մը Սալմաստի մէջ, շինուած ու կառուցուած է յանուն Ս. Աստուածածնի, եկեղեցին շատ փոքրիկ է իբրեւ մատուռ: Տարին մի քանի անգամ ժողովուրդն ուխտի կ'երթայ, եւ ուրիշատեններ կ'մնայ ամայի, որովհետեւ Միաբանութիւն չունի: Իր սեփական վարելահողերն ու արօտատեղիքը թէեւ ընդարձակութիւն ունին, բայց այժմ կ'մնան անմշակ եւ անմարդի: Վանքին մէջ կան երկու երեք հողաշէն սենեակներ. վերջին ժամանակներս երկու տուն երկրագործ հաստատուած են, կ'ըսուի, որք կը փորձեն եղեր վանքի սեփական յիշեալ հողերէն մի քիչ տեղ մշակելու համար: Վանքի մօտակայ վայրերուն մէջ վեց կամ եօթնի չափ այլ եւ այլ ուխտատեղիներ ալ կան եղեր, որոց անուններն առ այժմ կ'մնան մեզ անծանօթ (Բիւզ., 1900, Թ. 1158, էջ 1):*

# [ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՅ ՎԱՆՔԵՐ]

## 316/1. Ս. ԱՆՏՕՆԻ ՎԱՆՔ

*Իտալիոյ մէջ Կաֆա[459]* անուն քաղքին մէջ, վանքի Եկեղեցին յանուն Ս. Անտօնի էր, որուն մէջ առանձին սեղան մ'ալ կար՝ յանուն Ս. Աստուածածնի: ԺԵ. դարուն մէջ բաւական չէն վանք մ'էր եւ Հայ միաբանները մեղուաջան աշխատութիւններ ունէին, այժմեայ վիճակին վրայ տեղեկութիւն չունինք: Այս վանքի մասին Լիմ անապատի գրչագիրներուն մէջ եղած «Հարանց վարք»է մը, որ գրչագրուած է 1430ին Թադէոս վարդապետ Ավրամեանցի ձեռքով, քաղուած է հետեւեալ յիշատակարանի մասը:*

*«...Աւարտ սորա եղեւ ի թուին ... [Հայոց ըստ աբեթական տոմարի] ՊՀԹ. (1430) [ամի, յօգոստոս ամսոյ ԻԵ. (25), օրն երեքշաբթի], յաշխարհս Հոնաց եւ [Գազարիա կոչեցելոյ], յերկիրն Սուլղաթայ, ի մայրաքաղաքս Կաֆայիս, մենաստանիս, որ յանուն մեծի ճգնաւորին սրբոյն Անտոնի, եւ ընդ հովանեաւ նորին արժանաւոր աղօթիցն, եւ յառաջնորդութեան սորին վանից մեծի երջանիկ Րաբունապետի Սարգիս լուսաւոր Վարդապետի՝ արթուն եւ ժիր մշակի, որ զաւերս զայս եւ զամայացեալս, որ մուրալով էին կերակուր բնակչաց սորա, նորոգեաց շինելով, եւ յօրինեաց զբոլոր պակասութիւն սորա, եւ զարդարեաց եղբարբք եւ պայծառ ժամատեղաւ, եւ հաստատեաց մտաւք եւ արդեամբք...»* [Նօտարք, երեւս 92. վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 399-401] *(Բիւզ., 1900, թ. 1008, էջ 1)[460]*:*

## 317/2. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

*Նաբօլիի մէջ, որուն վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք (Բիւզ., 1900, թ. 1066, էջ 1):*

## 318/3. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑ ԱՆԱՊԱՏ

*Խրիմի մէջ: Արեւ. Փոքր Ասիայէն Հայերու մեծ բազմութիւն մը գաղթած էին ի Խրիմ, ուր տեղ Հայ եկեղեցականք շատ մը եկեղեցիներ ու վանքեր հաստատեցին: Այս վանքերէն մին ալ էր Ս. Լուսաւորչայ անապատը, ուր Սիմէոն անուն կրօնաւոր մը ՊԾԹ. (1410) թուականին գրեց Հարցմանց գիրք, որ այժմ կ'գտնուի Ս. Էջմիածնայ Մատենադարանին մէջ[461]*:*

## 319/4. Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ[462*]

*Հայ Վանորէից մէջ յանուն Ս. Յարութեան երեք վանքեր միայն ունինք[463*], միշտ ըստ մեր ծանօթագրութեան, որոց ցուցակն այս տեղ ներկայացնելէն առաջ, յիշատակենք հոս փառաւոր ՏԱՃԱՐՆ եւ հրաշալի Ս. Գերեզմանն ի Ս. Երուսաղէմ, որ այժմ ընկերովի գլխաւորապէս երեք ազգերու, այն է՝ Հայոց, Յունաց եւ Լատինաց կը պատկանի, որուն արդէն ընդարձակ պատմութիւնն ըրած ենք, մեր «Ս. Երկիր» անուն փանաքի աշխատասիրութեան մէջ (տե՛ս անդ եր. 152-240) (Բիւզ., 1900, Թ. 1074, էջ 1)[464*]:*

# ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա.

## Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿԻ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ՎԱՆՔԵՐ

### 320/1. ՔՈՒԹԵՆԱՒՈՐԻ ՎԱՆՔ

### 321/2. ՔՈՆՈՑ ՎԱՆՔ

*Տեղ. բառ., Ե/440. Քռնայի Ս. Աստուածածին, Կուսաբեր, Վերին վանք, Քռնայի մենաստան, Քռնայ վանք, Քռնիի վանք, Քռնի, Քռնոյ վանք. - Վանք Մեծ Հայքի Սիւնիք աշխարհի Երնջակ գաւառում: Աւերակները գտնւում են Ջուղայի շրջանի Քռնայ գիւղի մօտ, Երնջակ գետի ձախ կողմում: Անուանուել է Քռնայ գիւղի եւ վանքի Ս. Աստուածածին (Կուսաբեր) եկեղեցու անունով: Վանքը կառուցուել է Քռնայի հին եկեղեցիներից մէկի աւերակների վրայ: Այդ են վկայում 1740-ից լքուած համալիրի գաղտնարաններից յայտնաբերուած հին եկեղեցուն վերաբերող վիմագրերն ու զանազան առարկաները: Ըստ վկայութիւնների՝ գիւղի աւագ Գէորգը շինել է Ս. Աստուածածին վանքը եւ նուիրել Թոռներին 1330 թ.: Այնուհետեւ կաթոլիկութիւն տարածելու նպատակով Բարդուղիմէոս Բոլոնիացու եւ Յովհաննէս Քռնեցու ջանքերով հիմնադրուած միաբանութիւնը դառնում է միջնադարեան Հայաստանի բարձր կարգի կրթական հաստատութիւններից մէկը: Վանքի գրչատանը օրինակուել են ձեռագրեր, կատարուել թարգմանութիւններ եւ մեկնողական աշխատանքներ: Այս վանքում 1330-40-ական թթ. բեղմնաւոր գործունէութիւն են ծաւալել Յովհաննէս Քռնեցին, որը յայտնի է «Յաղագս Քերականին» նշանաւոր գործով, Յակոբ Քռնեցին, Զաքարիան, Սահակ Վանեցին եւ ուրիշներ: Աղբիւրներում կոչւում է նաեւ Ս. Գէորգ: Թիւերի՝ Հ^մր^ 828, էջ 147, վիճակ՝ կանգուն:*

*Յիշ. 1331 թ.՝ «...Եւ թարգմանեցաւ գիրքս այս ի ժամանակի, որում էր թիւ մարդեղութեան Քրիստոսի աստուծոյն մերոյ Ռ. եւ Գձ, ԼԱ. (1331)... Եւ ես՝ նուաստս եւ յետինս ի բանասիրաց Յակոբոս, որ արժանի եղէ միաբանութեան սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, եւ հասա առ ոտս... տէր Բարթուղիմէոսի, եւ իբրեւ ծարաւ ոք... Զի տէր Բարթուղիմէոս ուսեալ էր զպարսիկ լեզուն, նաեւ ես սակաւ մի ծանօթ էի այն լեզուին, որով եւ զգիրքս զայս բազում ջանիւք փոխեցաք ի հայս, ի գեղեցկանիստ*

*երկիրս, որ կոչի Երընջակոյ գաւառ, ի գեղս Քռնայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, որ նոր շինեցաւ զօրութեամբ կուսին Հ. (70) աւր...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 216:*

*Յիշ. 1368 թ.՝ «Արդ, գրեցաւ գիրքս այս ձեռամբ Զաքարի ի վերին վանքս Քռնո, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի,... ի թվ. մարդեղութեանն Քրիստոսի ՌԳՃ. եւ ԿԸ. եւ ի հայոց՝ ՊԺԷ. (1368)...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 487:*

*Յիշ.՝ 1329, 1343, 1345 թթ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 216-7, 338, 343:*

## 322/3. ՔԱԹԻԼՈՑ ՎԱՆՔ

*Հաւանաբար պէտք է լինի Քաթիշոյ վանք, որի մասին ունենք հետեւեալ տեղեկութիւնները. Տեղ բառ., Ե/287. «Քաթիշայ վանք- Վանք Շուշիի գաւառում, Քթիշ լեռան մօտ: Նաեւ այսպէս է անուանուած Արցախ աշխարհի Միւս Հաբանդ գաւառի Քթիշ կամ Գտիչ վանքը: Ղ. Ալիշանի վկայութեամբ (Հայապատում)՝այստեղ հայոց իշխան Աբու Մուսեն Թ. դարում դիմադրել է արաբ զորավար Բուղային եւ հիմնել է այս վանքը, մինչդեռ Գտիչը յիշատակուած է Ե. դարից»: Թիերի՝ Հմր 779, էջ 139, վիճակ՝ կանգուն:*

*Շահխաթունեանը հրատարակել է արձանագրութիւն, որտեղ եկեղեցու շինարարութեան մասին յիշատակութիւնից հետո թուարկուած է շարժական եւ անշարժ գոյքի նուիրատուութիւնը: «Քաթիշայ վանից արձանագիրն է՝ «ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԵՍ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՆ ԵՊՍՔ ՀԻՄՆԱՐԿԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ՈՂ.(1241) ԹՈՒԻՍ ՇԱՏ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԶԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ ԽՓԵՑԱՒ. ԵՒ ԵՂԲԱՅՐՍ ԻՄ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ Ի ՔՍ ՓՈԽԵՑԱՒ. ԵՍ ՏԷՐ ՎԱՐԴԱՆ ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ ԻՄՈՎՔ ՈՂԷ.(1248) ԹՈՒԻՍ, Ի ԴԱՌՆ ԵՒ Ի ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՈՐ ԱԶԳՆ ՆԵՏՈՂԱՑ ԶԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌՍ ԱՒԵՐԵՑԻՆ ԵՒ ՄՆԱՑ ԱՅԼԱՍԵՌԻՑ ԱԹՈՌ ԵՒ ՎԻՃԱԿ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԱԼ ԱԶՈՎ ԵՒ ՍԲ. ՆՇԱՆԱՒՆ ԵՒ ԳԱՒԱԶԱՆԱՒՆ ՍՐԲՈՎ. ՎԻՃԱԿԵՑԱՒ ԵՒ ՍԱՀՄԱՆՈՎ Ի ՅԱՂՈՒՆԱՑ ԳԵՏՈՅ ՄԻՆՋ Ի ԵՐԱՍԽՆ...», տե՛ս Շահխաթ., հ. 2, էջ 366-7:*

## 323/4. ՑԱԽԱՔԱՐԻ ՎԱՆՔ

*Տեղ. բառ., Ե/151-2. Ցախացքար, Աստուածածնի անապատ, Արեգունոյ Ս. Գրիգոր, Արեգունու Ս. Գրիգոր, Ս. Գրիգոր, Ս. Կարապետ, Ղոշավանք, Տցախքար, Ցախացկար, Ցախացքարի վանք, Ցաղացքար – Վանք Սիւնիքի Վայոց ձորի մարզում, Եղեգիս գիւղից 6-7 կմ հս-արլ:*

Ըստ Ասողիկի վանքը հիմնել է հայր Ստեփանոսը 10-րդ դարում, իսկ Ստ. Օրբելեանի ասելով՝ կառուցուել է 1041 թ., Գագիկ Բ. Թագաւորի ժամանակ: Վանքի համալիրը բաղկացած է չորս եկեղեցիներից՝ Ս. Կարապետ, Ս. Յովհաննէս, Ս. Աստուածածին, Ս. Նշան: Եկեղեցիների վրայ կան 13-14-րդ դդ. 34 արձանագրութիւններ, որոնցից 19-ը հրատարակուել են մեր օրերում: Եկեղեցիները բաւական բարուոք վիճակում են եւ ճարտարապետական առումով մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում: Առանձնապէս ակնահաճոյ է 1041 թ. կառուցուած Ս. Կարապետ, մեծ եկեղեցին: Վանքը եղել է մշակոյթի նշանակալի կենտրոն եւ ունեցել է բազմամարդ միաբանութիւն: Թիերի՝ Հմր 640, էջ 115, վիճակ՝ կանգուն:

## 324/5. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՎԱՆՔ

## 325/6. ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Դ/540. Սարկաւագի վանք, Սարկաւագանց վանք, Սարկաւագան վանք. – Վանք Հայաստանում: Տեղադրութիւնը՝ անորոշ: Ղ. Փիրղալէմեանը հնարաւոր է համարում նոյնացնել Հաղպատի վանքին: Թիերի՝ Հմր 946, էջ 169, վիճակ՝ անյայտ: Թիերին ենթադրաբար տեղադրում է Սիւնիքում, Տաթեւից ոչ հեռու (էջ 169):

Յիշատ.՝ ա. 1410 թ. «...Արդ գրեցաւ Աստուածաշունչ տառս ի թու ՊԾԹ. (1410), ձեռամբ մեղապարտ եւ անմար գրչի Աբէլ սուտանուն աբեղայի, ի վանս Սարկաւագանց կոչեցելոյ, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս, առ ոտս բազմերախտ հաւր իմոյ եւ վարժապետին Յովանէս Կարմրի». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 112:

բ. 1459 թ.՝«Շմաւոն վարդապետս յիշեցէք, որ գքերական գիրքս ի Սարկաւագանց վանիցն բերաք ի վանս Եւստաթէի սուրբ առաքելոյս: Գիրքս այլ ի Տաթեւ վանիցս է եղել, մեծ վարդապետն Գրիգոր՝ Յովհաննէս վարդապետին էր տուեալ՝ մականուն Կարմիր» մեք այլ վերստին բերաք ի վանքս: ...Ի թվ. ՋԸ. (1459) էր երբ բերաք զգիրքս». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 122:

## 326/7. ՋՈՐԵՀԱՆԳՍՏԻ ՎԱՆՔ

Հ. Ոսկեան Համազասպ. Բարձր Հայքի վանքերը, էջ 49. - Դարանաղիքի մէջ: Լուսաւորչաշէն: Նոյնացուած Ս. Լուսաւորչի վանքի հետ: Համանուն վանք մըն ալ կը ցուցուի Տարօնի մէջ: Ջեռագրի մը մէջ կը

յիշուի Զորեհանգստի վանք մը եւ իր Ղազար առաջնորդն ու միաբանները:

Թիերի՝ Հմր 177, էջ 34, վիճակ՝ հիմնովին աւերուած:

Յիշ.՝ 1363 թ. «Գրեցաւ աստուածային այս մատեան ի թուին Հայոց ՊԺԲ. (1363), ի դամբարանի սրբոյ Լուսաւորչիս Զորեհանգիստ կոչեցելոյ, ընդ հովանեաւ Սուրբ մօրս լուսոյ Աստուածածնիս...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 460:

## 327/8. ՊԵՐՃ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Ե/254. Փերճեր, Պերճեր, Պերճերի վանք, Փերճերի վանք, Փերճոց վանք. Վանք (անապատ) Լեռնային Կիլիկիայում, Ադանայի նահանգի Քոզանի գաւառում, Բարձրբերդից ոչ շատ հեռու՝ Լեւոնբերդի մօտ, Խորին վանքի հարեւանութեամբ: Առաջին անգամ յիշատակուած է 1290 թ. այստեղ օրինակուած մի Աւետարանի յիշատակարանում: Յիշատակարաններում վկայուած է նաեւ Պերճեր տառադարձութեամբ: Եղել է գրչութեան եւ մշակոյթի կենտրոն, գեղեցկաշէն վանք, որն իրաւունք է տալիս Փերճեր անունը կապել «Պերճ» բառի հետ: Թիերի՝ Հմր 003, էջ 3, վիճակ՝ անյայտ:

Յիշ.՝ ա. 1292 թ. «Արդ գրեցաւ սա յամի ՉԽԱ. (1292) թվ. ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ որդւոյ Լեւոնի թագաւորի... Արդ գրեցաւ սայ ի գաւառիս Կիլիկէոյ, ի յանապատիս որ կոչի Փերճեր ընդ հովանեաւ սուրբ Սիոնի». վերահրատ.՝ ԺԳ դ. յիշ., էջ 699-700:

բ. 1299 թ.՝«...Յամի Ջ.երորդի Խ.երորդի (1299) ի թուականութեան Հայոց, ի թագաւորութեանն Կիւլիկեցւոց նահանգիս Հեթմոյ եւ ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի գրեցաւ աստուածախաւս սուրբ մատեանս ի հռչակաւոր ուխտս Պերճեր ընդ հովանեաւ սուրբ Սիովնի եւ կենսակիր սուրբ Նշանիս». վերահրատ.՝ ԺԳ դ. յիշ., էջ 851:

գ. 1312 թ.՝«Գրեցաւ գիրք ԺԲ. մարգարէիցս ի թուիս Հայոց ՉԿԱ. (1312) ի վանքս, որ կոչի Փերճոց ընդ հովանեաւ սրբոյ մաւրս մերոյ Սիոնի եւ սուրբ Նշանացս եւ ի թագաւորութեան Աւշնի եւ որդւոյ նորա Լեւոնի...». վերահրատ.՝ ԺԴ դ. յիշ., էջ 90:

Այլ յիշ.՝ 1311, 1325 թթ., տե՛ս Հ. Ոսկ., 1957, էջ 272-5:

## 328/9. ԾՈՂԱԳԱՑ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Դ/145. Ծողագավանք, Ծաղագայ վանք, Ծողագայ Ս. Առաքելոց վանք, Ծողագայի Ս. Պողոս-Պետրոս վանք, Ծողակաթ, Ծողակավանք, Ծողավանք, Ծողւագավանք. Վանք ՀՀ Մարտունու շրջանի Զորագիւղում (հնում՝ Ծողագայ): Հիմնադրել է Սիւնեաց իշխան Վա-

*սակ-Գաբուռի կինը՝ Աշոտ Բագրատունի Թագաւորի դուստր Մարիամը, Թ. դարի 80-ական թթ.: Գլխաւոր եկեղեցին Ս. Պետրոս աւերուած վիճակում է, պահպանուել են միայն հս պատը եւ միւս հատուածների հիմնապատերի առանձին մասեր: Համալիրի շրջակայքում կան բազմաթիւ տապանաքարեր եւ խաչքարեր, որոնցից հնագոյնը՝ 1216 թ.: Թիերի՝ Հմր 809, էջ 143, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:*

*Թիերին այս վանքը տեղադրել է Արցախի Մարտունիում, շփոթելով Գեղարքունիքի նոյնանուն բնակավայրի հետ, հմմտ. Ալիշան, Սիսական, էջ 50՝ Գեղարքունի եւ Սոդք.*

*«... կայ ի ձորավայրի ի վերայ վտակին ի միջի բարձր առապարից. ի հնումն կոչէր Շողագայ կամ մանաւանդ Շողուագայ, «յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ» ըստ Ասողկայ պատմչի, կոչի եւս ի յետնոց եւ Շաղավանք. 93 տունք Հայոց նշանակէին ի նմա յամի 1873, գարդիս թերեւս աւելի քան զ100...»:*

*Յիշատակարան՝ «Շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ, յանուն սրբոց Առաքելոյն Պետրոսի եւ կարգէ ի նմա Կրօնաւորանոց, դասս բազմահոյլ քահանայից, վասն հոգեաց տեառն իւրոյ Վասակայ իշխանի Սիւնեաց եւ գնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուագայ՝ ընդ վաթսուն հազար դրամի, ազատ յամենայն աշխարհական հարկաց, ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս եւ գեօղ մի ի Մազազ գաւառի ընդ երեք հազար դահեկանի գնէ եւ տայ ի սուրբ եկեղեցին...». տե՛ս Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 51:*

## 329/10. ՇԱՂԱԳՈՄՔ ՎԱՆՔ

*Տեղ. բառ., Դ/62. Շաղագոմքի վանք. Վանք (անապատ) Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Շաղագոմք գաւառում: Տառերի գիւտից հետո այստեղ Մեսրոպ Մաշտոցը բացել է հայալեզու առաջին դպրոցներից մէկը: Թիերի՝ Հմր 230, էջ 44, վիճակ՝ անյայտ:*

*Բարձր Հայքի գաւառներէն է Շաղգոմք... Մովսէս Խորենացին Ս. Մեսրոպի համար կը գրէ. «Կացեալ յանապատ եւ ի հովանաւոր տեղիսն, որ Շաղգոմքն անուանին». տե՛ս Հ. Ոսկ., Բարձր Հայքի վանքերը, էջ 191:*

## 330/11. ԺԱԼԷԹՈՒ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ

*Տեղ. բառ. Ե/765-6. Վանք Բուն Աղուանքի Վարդաշէնի շրջանի Ժալէթ գիւղում: Գիւղի հս ծայրում, անտառապատ սարերով շրջապա-*

տուած գեղատեսիլ վայրում պահպանուած է Ս. Աստուածածին հուշակաւոր ու պատմական փառաւոր անցեալով նշանաւորուած վանական համալիր-յուշարձանը: Վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից, միաբանութեան սենեակներից, պարսպապատերից ու գերեզմանոցից: Վանքը երկրամասի յայտնի մշակութային կենտրոններից էր, գրչօջախ, կաթողիկոսանիստ (ԺԵ-ԺԶ. դդ): Վանքի հին եկեղեցին կառուցուել է 1411 թ.: Հետագայ դարերում այն ենթարկուել է մասնակի նորոգումների: Նոր եկեղեցին ԺԹ. դ. է եւ կոչուել է Ս. Աստուածածին: Թիւերի՝ Հմր 897, էջ 159, վիճակ՝ անյայտ: Տեղադրութիւնը համարում է անորոշ:

Յիշատ.՝ ա. 1432 թ. «...եւ ետ գաղափարել զսա ի ձեռն անարժան եւ փանաքի գրչի ...ի թվ. Հայոց ՊՁԱ. (1432), ի գաւառիս Ղապալոյ. յառաջնորդութեան Տեառն Մատթէոսի Աղուանից կաթողիկոսի... ի մենաստանիս Ճալէթոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ սուրբ աջերուն Գրիգորի եւ Աթանագինի, եւ նոցին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 425:

բ. 1499 թ.՝ «...Արդ, գրեցաւ Աւետարանս հպատակ հոգոյ Ստեփաննոս եպիսկոպոսի, ի յաթոռն Ճալէթոյ, ի յաշխարհն Աղուանից... ի թվականիս Հայոց ՋԽԸ. (1499): Եւ բերաք ի գաւառս Արարատեան, ի վանս Հառընջոյ Տիրամօր Սուրբ Աստուածածնիս: Եւ աստ ծաղկեցաւ ոսկով եւ բազմերամ գուներով ի բազում միջոցաւ, զի ժամանակս երերան էր եւ ոչ գոյր խաղաղութիւն». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 281:

Ճալէթի վանքի մասին տես՝ Մ. Բարխուդարեան, Պատմութիւն Աղուանից, Ա, էջ 210, Շահխաթունեան, հ. 2, էջ 343-4. Արձանագիրք Ճալէթու վանից:

## 331/12. ՄԵԾԻՐԱՆԻՑ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Գ/314. Ս. Յակոբի վանք, Ս. Յակոբայ վանք, Ս. Յակոբ Հայրապետի վանք, Մեծարանից վանք, Մեծիրանից վանք, Մեծիրանց վանք, Ներքին Խաչեն - Վանք Արցախ աշխարհի Խաչեն գաւառում, այժմեան Մարտակերտի շրջանում: Ծաղկման շրջան է ապրել ԺԲ-ԺԳ. դդ.: Եղել է գրչութեան յայտնի կենտրոն: Կառուցուել է հաւանաբար 9-րդ դարում, ԺԵ-ԺԶ. դարերում վերանորոգուել է: Յայտնի կենտրոն էր նաեւ ԺԷ-ԺԸ. դդ.: Աւերակները բաւական բարուոք վիճակում հասել են մինչեւ մեր օրերը: Ուներ երեք եկեղեցի, գաւիթ, շրջապարիսպ, զանազան սենեակներ: Արձանագրութիւնների թիւը հասնում է աւելի քան 40-ի: Թիւերի՝ Հմր 798, էջ 142, վիճակ՝ կանգուն:

Տե՛ս Խ. Վ. Դատեանի յօդուածները՝ ա. Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, Արարատ, 1896, էջ 42-5. բ. Մեծարանց որ եւ Ս. Յակովբայ վանից արձանագրութիւնները, Բանասէր,

*1901, հ. Գ., էջ 135-47: Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 81-91, յիշատ.՝ 1297, 1383, 1569 1577, 1644 թթ.:*

## 332/13. ՃԻԼԻՄՈՆ ՎԱՆՔ

*Հ. Ոսկեան Համազասպ, Բարձր Հայքի վանքերը, էջ 91-4. Ծլեմոնի վանքը. Եկեղեաց գաւառին մէջ: Արդեօք կրնա՞յ նոյն ըլլալ Հերմոնի վանքին հետ: Այս վանքը ծանօթ է զոյգ յիշատակագրութենէ: Մին տպուած Սրուանձտեանցի «Թորոս Աղբար» գրքին Բ. հատորին մէջ, իսկ երկրորդն անտիպ (էջ 329): Թիերի՝ Հ$^{մր}$ 1007, էջ 177, վիճակ՝ անյայտ:*

*Յիշատ.՝ ա. «Աստուած աւրհնէ զըռայիս Խանապետն եւ զիւր որդին գՋանազիզն, որ երետ զՄուրատին սագն Խաչերեսին տուած արտովն յիշատակ Ճելիմոնի վանուցն Ս. Աստուածածնին եւ Ս. Ստեփաննոսին եւ Ս. Լուսաւորչին եւ Ս. Աւգսենտին եւ Ս. Սարգսին. յիշատակ Խանապետին...»:*

*բ. 1338 թ.՝ «Ի չրջագայութեան ժամանակաց յամի եւթն հարիւրերրորդի Ձէ. (1338) Հայոց թուականի, ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի եւ ի հայրապետութեան Տեառն Յակոբայ եւ յեպիսկոպոսութեան մերոյ տէր Սարգսի: Գրեցաւ Դ. գլուխ Աւետարանացս... Արդ գրեցաւ սա յԵկեղեց գաւառս ի յԵզնկայս եւ վասն դառնութեան ժամանակիս ի հինգ տեղիս փոխեցեալ եղաք ի գրել սորա, զի սկիզբն սորա ի Տիարին եղեւ եւ աւարտումն սորա ի Ճլեմոնիս ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Գէորգա զաւրավարին եւ Սուրբ կաթուղիկէիս եւ այլ սրբոցս». տե՛ս Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, էջ 91-3:*

## 14. ԿՈՒԳՈՑ ՎԱՆՔ

*Սիւնիքի Շահապոնք գաւառում. տե՛ս Արեւել. Հայաստանի վանքերը, Հ$^{մր}$ 309/24:*

## 333/15. ԿԱՐՊՈՑ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

## 16. ԿՈԹԻՓՈՐԱՑ ՎԱՆՔ

*– Գուգարքում. տե՛ս Արեւել. Հայաստան, Հ$^{մր}$ 310/24:*

## 334/17. ԾԻՐԱՆԱՒՈՐԻ ՎԱՆՔ

*Յիշատակարանք.՝ ա. 1428 թ. «...Զոր եկեալ բնակեալ մեր ի քաղաքիս Արճէշ, եւ եղեւ աւարտումն սորա աստ, առ ոտս Սուրբ Ծիրանաւոր*

*Աստուածածնիս եւ աստուածաբնակ վանորէիցս՝ Մեծափու Սուրբ Աստուածածնիս եւ Արծւաբեր Սուրբ Աստուածածնիս...ի մեծ թուին Հայոց ՊՀԷ. (1428)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 379:*

*բ. 1481 թ.՝«...Գրեցաւ Գանձարանս ձեռամբ Խաչատուր իրիցու՝... ի գիւղս որ կոչի Ճիխէլ, ընդ հովանեաւ Ծիրանաւոր Սուրբ Աստուածածնիս, հրամանաւ եւ ծախիւք սրբասէր եւ գերալուր անձին Անտոն կրաւնաւորի, որ է հայր վանաց Ջոլդու Աստուածածնին: ...Գրեցաւ ի թվ. Հայոց ՋԼ. (1481)». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 16:*

*գ. 1486 թ.՝«...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս Արճէշ, ի դուռն Ծիրանաւոր Սուրբ Աստուածածնին... եւ ի թըւին Հայոց ՋԼԵ. (1486), ձեռամբ անարժան եւ սուտանուն գրչի Ստեփանոսի». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 87:*

*դ. 1601 թ.՝«...Գրեցաւ սբ. Աստուածայշունչ Աւետարանս ի յերկիրս Նախէջեւանայ, ի գեաւղս որ կոչի Յաւղբին, ընթ հովանեաւ Ս. Ծիրանէոր Աստուածածնիս, ի աթոռն Խոտակերաց Ս. Նշանին, ի հայրապետութիւն տէր Մարտիրոսի, ի կաթողիկոսութիւն տեառն տէր Մէլիքսէթին, ի եղանակս ձմերային... ի թվին ՌԾ. (1601) էր, տանուտէր Խոյն էր». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 11:*

*ե. 1626 թ.՝ «Արդ՝ գրեցաւ սբ. տաւս, որ կոչի Նարեկացի, ձեռամբ մեղսամած Զաքարայ գրչի, ի Վան քաղաքի, ի դուռն Ծիրանաւոր Սուրբ Աստուածածնին, ի թուականիս Հայոց ՌՀԵ. (1626), ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ Մելքիսեդի, եւ հայրապետութեան տեառն Աղթամարայ Ստեփանոսի». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 216:*

*զ. 1634 թ.՝ «...ձեռն արկեալ գրեցի զսա ի դուռն Ս. Աստուածածնիս, որ կոչի Ծիրանաւոր, եւ յայլ սրբութեանցս, որ աստ կան հաւաքեալ. ամէն: Ի թուականիս Հայոց ՌՁԳ. (1634) ամին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 570:*

*է. «...եւ եդին ի դուռն Գաղողայ Կանաչաւոր Ս. Աստուածածնին եւ Ս. Յակոբին... Եւ Ս. Գէորգ զօրավարին, Ծիւրանաւոր Ս. Աստուածածնին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 308:*

*ը. 1659 թ.՝ «...Եւ արդ՝ գրեցաւ գիրքս այս ի յերկիրս Վանայ, ձեռամբ Անդրիաս մեղաւորի, ի ՌՃԸ. (1659) թուականի, ի գեօղս որ Արարք ասի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Ծիրանաւորի...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 890:*

*Ինչպէս երեւում է յիշատակարանների վկայութիւններից Ծիրանաւոր Ս. Աստուածածին անուամբ մի քանի եկեղեցիներ եւ վանքեր են եղել տարբեր վայրերում:*

*Ուղղակի Ծիրանաւոր կամ Ծիրանաւոր Ս. Աստուածածին անունով ըստ Տեղանունների բառարանի հեղինակների յայտնի են՝ ա. գիւղ, ուխ-*

տատեղի (Փառխոս գաւառում), բ. Եկեղեցի Աշտարակ քաղաքում, գ. Թաղ, եկեղեցի Բայազետ քաղաքում, դ. Մատուռ Արցախի Գարդման գաւառում, ե. Մատուռ Կարսի մարզի Կաղզուանի օկրուգում, զ. Վանք Նոր Բայազետի գաւառի Ալափարս գիւղում, է. Վանք Վանում, ը. Ուխտատեղի Թիֆլիսի նահանգում:

Տեղ. բառ., հ. 2, էջ 852:

## 335/18. ԾԱՌԻԿՈՒ Ս. ԱՆՆԱՅԻ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Բ/843. Վանք պատմական Հայաստանում, ըստ 15-րդ դ. մի ձեռագիր յիշատակարանի՝ 1447 թ. այստեղ օրինակուել է Աւետարան: Տեղը չի ճշտուած: Թիերի՝ Հմր 1001, էջ 176, վիճակ՝ անյայտ:

Յիշատ.՝ ա. 1447 թ.՝«...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԶ. (1447), ի հայրապետութեան տեառն Կարապետի... ի վանս Ծառիկու, ընդ հովանեաւ Սուրբ Աննայի, ձեռնատուութեամբ Սիմէոն քահանայի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 615:

բ. 1448 թ.՝«...Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԷ. (1448)... ընդ հովանեաւ Ծառիկու Սուրբ Աստուածածնիս եւ միաբանից սուրբ ուխտիս Աստուածատուր կուսակրաւն աբեղային...». [տե՛ս Արարատ, 1905, 731-2, վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 620]:

## 336/19. ԽՆԱԾ[Տ]Ի՞ ՎԱՆՔ

Էփրիկեան, Բնաշխ. բառ., հ. 2, գիրք Ա, էջ 181: Խնատի վանք, Գուգարաց աշխարհի մէջ: Կը յիշէ Գրիգոր Մագիստրոս Կ. եւ ԿԱ. թղթոց խորագրի մէջ, որոց առաջինն է. «Առ հայրն Սամուէլ առաջնորդ Վանիցն Խնատի» եւ երկրորդը՝ «Առ կրօնաւորսն Խնատին»: Ինչպէս կ՚երեւի Գր. Մագիստրոսի երկրորդ թղթոյն վերջաւորութենէն, վանքս ժամանակին նշանաւոր մենաստաններէն մին էր: Մանրամասն տեղեկութիւնք կը պակսին: Թիերի՝ Հմր 1000, էջ 176, վիճակ՝ անյայտ:

## 337/20. ԽԱՉԱՓԱԿԻ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Բ/420. Խաչակապի վանք, տե՛ս Թարգմանչաց վանք. - Թարգմանչաց անապատ, Խաչակապի Թարգմանչաց վանք, Խաշլաբակայ վանք, Խաչլաբակայ վանք - Վանք Ուտիք աշխարհի Գարդմանաձոր գաւառում: Աւերակները պահպանուել են: Եկեղեցին փոքր է, շարուած անտաշ քարերով: Ունի երկու փոքր եւ մէկ աւագ խորան, կաթողիկէ, տաս լուսամուտ, ...ինչպէս նաեւ հիւրասենեակներ եւ օժանդակ շինութիւններ: Ողջ համալիրը շրջապատուած է եղել պարիսպներով:

Կառուցուել է 989 թ., իսկ ըստ աւանդութեան՝ Ե. դարում, Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնութեամբ: Շրջակայքում պահպանւում են բազմաթիւ խաչքարեր, մահարձաններ ու տապանաքարեր, ստորերկրեայ դամբարան: Մինչեւ Ի. դարի սկզբները վանքը գործում էր: ԺԹ. դարի վերջերին այն վերանորոգուել է: Միջին դարերում վանքը եղել է գրչութեան նշանաւոր կենտրոններից: Թարգմանչաց վանքում պահպանւում էին երեք ձեռագիր աւետարաններ, 1362, 1640 թթ., եպիսկոպոսական թագ եւ այլ հնութիւններ: Այժմ Երեւանի ՄՄ մատենադարանում է պահպանւում Թարգմանչաց վանքում ԺԳ. դարում գրուած «Թարգմանչաց աւետարան» կոչուած ձեռագիրը: Վանքը լքուել ու ամայացել է Ի. դարի սկզբներին:

Թիերի՝ Հմր 866, էջ 154, վիճակ՝ կանգուն:

## 338/21. ԽՈՅԱԼՈՒ ՎԱՆՔ

Տեղ. բառ. Բ/768 ունի. «Վանք պատմական Հայաստանում: Յիշատակուած է 15-րդ դարի մի ձեռագիր յիշատակարանում, առանց տեղադրութեան ճշտման»:

Ակադ. Լ. Խաչիկեանի կարծիքով Խուլայոյ վանք, Խուլայ վանք եւ Խոյալու վանք՝ նոյն վանքի տարբեր անուանումներն են, տե՛ս Խարբերդի վանքեր, Հմր 172/4, Ս. ԳԷՈՐԳԱՅ ՎԱՆՔ:

## 339/22. ԹՈՒՐՔԹԻ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Բ/461. Թիւրքթի - Վանք Կիլիկիայում, նրա հս կողմում, հաւանաբար Բարձրբերդ գաւառում, Ակներ վանքի մօտակայքում: Վանքի համակառոյցում յիշատակւում են Ս. Աստուածածին, Կենսակիր Ս. Նշան եւ Ս. Փրկիչ եկեղեցիները: Հաւանաբար հիմնադրուել է ԺԳ. դարում: Վանքի առաջնորդ Գրիգորը մասնակցել է Սսի 1310 թ. ժողովին, իսկ Ադանայի 1316 թ. ժողովին ներկայ է եղել Հայրապետ վանահայրը: Թիերի՝ Հմր 017, էջ 5, վիճակ՝ անյայտ:

Տե՛ս նաեւ Ալիշան, Սիսուան, 1899, էջ 166, Հ. Ոսկ., Կիլիկիայի վանքերը, էջ 202-6:

Յիշատակարանք.՝ ա. 1314 թ. «Արդ, գրեցաւ սայ ի թվ. ՉԿԳ. (1314), ի թագաւորութեան Հայոց Աւշնի եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս, որ կոչի Թիւրքթի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Փրկչիս, եւ կենսակիր Սուրբ Նշանացս, ի յառաջնորդութեան Գրիգորի վարդապետի». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 108:

բ. 1335 թ.՝ «Արդ, եղեւ աւարտ սորա ի թվ. Հայոց ՁՁԴ. (1335), ...ի մեծ եւ ի հռչակաւոր անապատս, որ կոչի Թիւրքթի, երդ աւրհնութեան, եւ ձայն սաղմոսաց...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 277:

## 340/23. ԵՐԳԵՎԱՆՔ

Տեղ. բառ., Բ/213. Բերդ, ամրոց Ուտիք աշխարհի Տաւուշ գաւառում: Ենթադրւում է որ գոյութիւն է ունեցել եւ նոյնանուն վանք: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Արցախի վանքերը, էջ 145:

## 341/24. ԴԱՍՆՈՑ ՎԱՆՔ

Տեղ. բառ., Բ/38. Դասնոյ անապատ, եկեղեցի, վանք Արցախ կամ Ուտիք աշխարհի Գարդման գաւառում, տե՛ս Կարմիր եկեղեցի. տե՛ս Տեղ. բառ., Գ/54. Կարմիր եկեղեցի, Դասնոյ անապատ, Կարմիր վանք, Հոռոմաշէն – Եկեղեցի, վանք Ուտիք աշխարհի Գարդմանաձոր գաւառում: Յիշատակւում է 12-րդ դարից: Աւերակները գտնւում են Շամխոր գետի աջ կողմում, բարձր ժայռի վրայ: Կառուցուած է կարմրաւուն քարով: Համալիրը ամբողջովին աւերուած է: 1184 թ. Մխիթար Գոշը այստեղ է գրել իր «Դատաստանագիրքը»: Ըստ աւանդութեան եկեղեցին հիմնել են Բիւզանդիայից Հայաստան փախած հոգեւորականները 751 թուականին: Հմմտ. Հ. Ոսկ., Արցախի վանքերը, էջ 131-2:

Թիւրի՝ Հմր 883, էջ 156, վիճակ՝ անյայտ:

Յիշատ.՝ 1184 թ. «...Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղեւ ի թուականութիւն ՈԼԳ. (1184) եւ ի շրջանին երթալոյ ի բաց ԾԱ. (101)՝ որ կոչի Փոքր, իսկ Հոռոմին ՆԵ. յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղընջուց՝ ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ... ի հայրապետութեան տեառն Գրիգորի Հայոց, ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի տանս Աղուանից՝ յաշխարհիս Առանայ, ի նահանգիս, որ կոչի Գանձակ՝ յանապատս եւ յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանաց յիշեցելոց, ձեռնտուութեամբ հաւր Յովսեփայ, եւ եղբաւր Պաւղոսի, յորդորմամբ առաջարկութիւնս». տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 101-2:

## 342/25. ԴԱՓՈՒՑ ՎԱՆՔ

Էփրիկ., բնաշխ. բառ., հ. 1, էջ 570-1. Գեղարքունի գաւառի հին վանքերէն մին, որ է ըստ Սիմէոն կաթողիկոսի (Ջամբռ, էջ 284) այժ-

*մեան Ս. Լուսաւորիչ եկեղեցին, Նորատուս գիւղի հարաւ. կողմը: ...Ու-նի որմոց վրայ շատ արձանագրութիւններ, որոնցմէ կը յայտնուի թէ կառուցուած է ԺԳ. դ. սկիզբը եւ նորոգուած է 1344ին: Թէ ինչ հիման վրայ Կուսանաց վանք կը համարուի այս եկեղեցին եւ թէ Դափուց վանք անունն ե՞րբ տրուեր է ասոր, յայտնի չէ: Եկեղեցւոյ մօտ կան խաչքարեր, հանդերձ արձանագրութեամբք, հնագոյն ծանօթ արձա-նագրութիւնն ունի ՈԿ. (1211) թուականը: Թիերի՝ Հ^մր 688, էջ 122, վի-ճակ՝ կանգուն:*

## 343/26. ԳԵՏԱՄԷՋԻ ՎԱՆՔ

*Տեղ. բառ., Ա/843. Գետամիջոյ վանք, Ծար, Ծարի Ս. Աստուածածին – Վանք Արցախում, Ջրաբերդի շրջանում, Ծար բնակավայրի մօտ, Խաթրա վանքից ոչ հեռու: Աղբիւրների տուեալներով կառուցուել է 1331 թ.: Միջին դարերում եղել է հայ գրի ու գրչութեան կենտրոն, պահպանուել են 15-17-րդ դդ. գրուած մի քանի ձեռագրեր: Թիերի՝ Հ^մր 861, էջ 153, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել ար-տաքին տեսքը:*

*Յիշատ.՝ ա. 1411 թ. «...Գրեցաւ եւ զրաւ առեալ աւարտեցաւ տօնա-զարդ եւ աստուածամեծար սուրբ գիրքս ի թուաբերութեան հայկազեան տոմարիս ՊԿ. (1411), ...յաստուածաչէն երկիրս Ծար կոչեցելոյ, ի վանս Գետամէջ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ այլ սրբոց նշա-նացս, զոր սօքօք ամրացեալ փրկեսցին յամենայն որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ, ամէն». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 122:*

*բ. 1456 թ.՝ «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղիմ եւ անընդաբոյս եւ ամենայն առաքինութեամբ զարդարեալ՝ տեսականաւն եւ գործնականաւն՝ Թովմայի կուսակրաւն աբեղայի, ի թվականու-թեանս հայկազեան տումարի ՋԵ. (1456), ի հայրապետութեան Աղուա-նից նահանգի Տեառն Յոհանիսի՝ որդոյ մեծի իշխանին Հայոց պարոն Ջալալին, եւ յաչխարհակալութեանն արեանարբու բռնաւորին Ջհանշա-յի, ի սուրբ եւ ի հռչակաւոր վանքս Գետամիջոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, եւ Մարդաղօնեաց Սուրբ Ստեփանոսիս, եւ այլ բազ-մութեան սրբոց». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 66:*

*Յիշ.՝ 1473 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 344:*

## 344/27. ԲԵԴԱՆԻԱ ՎԱՆՔ

*Էփրիկ., բնաշխ. բառ., հ. 1, էջ 393. Բեթանիա, Տփղիսի մօտ, վանք եւ տոհմային գերեզմանատուն Օրբէլեանց. ուր հանդիսով թաղեցին քաջն Լիպարիտ:*

## 345/28. ԲԱՂԱԿՈՒ ՎԱՆՔ

*Էփրիկ., բնաշխ. բառ., հ. 1, էջ 359-61. Բաղաբերդ, հռչակաւոր եւ հին բերդ Բաղաց սահմանակից Սիւնեաց Ձորք (Կապան) գաւառի մէջ: Օրպէլեանի (գլ. Կ.) պատմածի համեմատ, 1126 թուին Ամիր Հարոնը եկաւ առաւ «գքարն Բաղակու, որ էր վանք, յորում մթերեալ կայր բազում սրբութիւնք, խաչ եւ վկայարանք ոսկի եւ արծաթի եւ կտակարանք...»:*

*Տեղ. բառ., Ա/570. Բաղակու վանք, Բաղակու քար- Վանք Մեծ Հայքի Սիւնիք աշխարհի Ձորք կամ Կապան գաւառում, Բաղաբերդի մօտ: Ըստ աւանդութեան Սիսական Բաղակ Նահապետի անունով: Վանքը յիշատակւում է Ժ-ԺԳ. դդ. պատմիչների կողմից: Վանքը մինչեւ 1923 թ. կանգուն էր: Այժմ նրա աւերակները նշմարւում են: Թիերի՝ Հմր 705, էջ 125, վիճակ՝ անյայտ: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Արցախի վանքերը, էջ 8-10:*

## 29. ԲԱՐՁՐԱՔԱՂ ՎԱՆՔ

*ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. Գրիգոր, Բարձրաքաշ Ս. Աստուածածին - Վանք Գուգարքի Տաշիրք գաւառում. տե՛ս Արեւել. Հայաստան, Հմր 308/23:*

## 346/30. ԱԲԳԱՐՈՒ ՎԱՆՔ

*Որպէս եկեղեցի Եդեսիայում յիշատակւում է Էփրիկեանը. տե՛ս Բնաշխարհիկ բառ., հ. Ա., էջ 622:*

# ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

*ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ*

## ԳԱՒԱԶԱՆԱԳԻՐՔ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԶՄԻՌՆԻՈՅ

*1. ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ... - 1689*

*Ասոր անունը կը յիշուի Զմիւռնիոյ Ս. Ստեփաննոսի եկեղեցւոյ նորոգութեան արձանագրութեան մէջ, որ է.*

*«Ի թվին ՌՃԼէ. (1688) Յունիսի 30, շարժ եղեւ յԻզմիրս, առաջին եկեղեցին ի հիմանց տապալեցաւ, իսկ ի թվին ՌՃԼԸ. (1689) Յունուարի 29, եւ ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի Տեառն Եղիազարու, շնորհօքն Աստուծոյ, կամօք եւ տրօք հասարակ վաճառականաց եւ ժողովրդոց, ես Իզմիրու Առաջնորդ Յովսէփ Վարդապետս ապաւինեցայ յողորմութիւն Աստուծոյ, ի Սուրբ Ստեփաննոս եւ ի Սուրբ Բարթուղիմէոս, եւ զեկեղեցիս հիմնարկեցաք, եւ առաջնորդութեամբ Հոգւոյն Սրբոյ ի նոյն թուոյ ի Մայիսի 18 ի կատարումն հասուցաք եւ ի տօնի Գալստեան Հոգւոյն Սրբոյ օրհնեցաք եւ Պատարագ մատուցաք եւ կանգնեցաք զսոսա տան Աստուծոյ, նորոգ արձան, մշտնջենաւոր յիշատակ ինձ եւ ամենից ողորմածոց եւ աշխատողաց»:*

*2. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ*

*Զմիւռնիոյ Առաջնորդական պաշտօնին վրայ գտնուած է հաւանականաբար ԺԷ. դարուն վերջը, կամ ԺԸ. դարուն սկիզբները, բուն թուականը յայտնի չէ մեզի: Ծանօթ է արդէն սա Տէրեայի ծածկանունով իբր Աշուղ, իր աշխարհականութեան եւ եկեղեցականութեան ատենները երգած է բաւականին երգեր Հայերէն եւ Թուրքերէն:*

*3. ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ.*

*Իզմիրի նուիրակութեան պաշտօնին մէջ էր 1735-1737 թուականներուն, երբ կոչուեցաւ ամենայն Հայոց Կաթողիկոսութեան 1738 թուականին:*

*Իր հեղինակած գրքերէն տպագրութեամբ հրատարակած է 'ի Կ. Պոլիս, Դրախտ Ցանկալի 1735ին, Երգարան 1737ին, Աստուածաղերս 1744: Այս վերջին գիրքը երկու տպագրութիւններ եւս ունեցած է 1786ին ի Բեղրսպուրկ, 1792ին ի Նոր Նախիջեւան:*

*4. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՊՍ. ԳԱՐԱԳԱՇ*

*Սա 1726-1729 թուականներուն ի Ս. Էջմիածին, Կարապետ Ուլնեցի Կաթողիկոսի օրով աթոռակալ եղած է, եւ յետոյ Զմիւռնիոյ Առաջնորդ:*

*Այս պաշտօնը որ թուականին ստանձնած է եւ որ թուականին ձգած է յայտնի չէ, 1753 թուականին Կաթողիկոս ընտրուած է եւ 1755ին վախճանած: Բնիկ Կոստանդնուպօլսեցի էր:*

*Իր պաշտօնավարութեան օրովը 1743ին վերստին նորոգուած է Ս. Ստեփաննոս եկեղեցին 1743ին, եւ եկեղեցւոյ ձախակողմն ալ Ս. Մինասայ մատուռը կ՚աւելցուի: Ասոնք յայտնի են հետեւեալ յիշատակարանէն:*

*«Ի թուին ՌՃՂԲ. (=1743) Յունիսի 15, Աստուծով եւ օժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ սկիզբն եղեւ վերստին նորոգութեան Ս. Ստեփաննոս եկեղեցւոյս եւ Սրբոյն Մինասայ տաճարին ձախակողմեան աւանդատանն եւ օծաւ սոյն թուին Սեպտեմբերի 11, եղեւ աւարտ ի ժամանակս Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի տեառն Ղազարու ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ արքեպիսկոպոսութեան Զմիւռնիոյ քաղաքիս Ալեքսանդր Վարդապետին Կոստանդնուպօլսեցւոյ, արդեամբք եւ տրօք առհասարակ ժողովրդոց լուսաւորչածնից տեղացւոց եւ վաճառականաց եկաց եւ բնակաց»:*

*Նալեան Յակոբ Պատրիարքի 1745ին տպագրուած «Մեկնութիւն Նարեկի» անուն գրքին յիշատակարանին մէջ եւս, կայ հետեւեալ յիշատակութիւնն.*

*«... Յիշեսջիք եւ զմեծապատիւ եղբայր մեր ի Քրիստոս, զսփոփիչն ցաւալի եւ վշտապատ կենաց իմոց, Զմիւռնիոյ քաջ դիտապետն եւ արքեպիսկոպոսն, զտէր Աղեքսանդրոս պաշտօնակիցն մեր ի Քրիստոս եւ զԱստուածաբան Վարդապետն, որ յԵպիսկոպոսութեան մերում ի ժամանակս եռերանեան առն Աստուծոյ Լուսահոգի Կարապետ Սրբազան Կաթողիկոսին գոլով աթոռակալ ի Սուրբ Էջմիածին, եղեւ խարտաւիլակ եւ սպասաւոր ի պաշտօն առաքելական աստիճանի եպիսկոպոսութեան մերում ընդ տեառն Իսահակայ Աստուածաբանութեան խրոխտ եւ քաջաբարբառ քարոզչի...»:*

*5. ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ.*

*Սա կը յիշուի 1746ին Զմիւռնիոյ Առաջնորդ, բայց որ աստիճան ստոյգ չենք կրնար մեր կողմէն բան մը ըսել:*

*6. ՍԱՀԱԿ ԵՊՍ.*

*Բնիկ Քղեցի, մականուանէր Ահագին, աշակերտ էր Կոլոտ Յովհաննէս Պատրիարքի: Սա 1755ին Իզմիրի նուիրակ էր՝ այն է առաջնորդ Զմիւռնիոյ:*

*Աղեքսանդր Գարագաշ Կաթողիկոսին մահէն յետոյ, 1756ին սկիզբները թէեւ անոր յաջորդ կաթողիկոս ընտրուած է, բայց բաւական ատեններ Կ. Պոլիս եւ ապա Էրզրումի Ս. Լուսաւորիչ վանքը մնալուն, 1759ին Յակոբ Շամախեցին Կաթողիկոս ընտրուած է, եւ ինքն ալ ա-*

*ռանց օծումի նոյն վանքին մէջ մնացած, եւ վախճանած է 1763 թուականին:*

*7. ԱԲՐԱՀԱՄ ԵՊՍ.*

*Բնիկ Աստապատցի, յաջորդած է վերեւ յիշուած Սահակ Եպս. Քղեցիի 1756ին, ինը տարիներ շարունակած Իզմիրի առաջնորդութեան պաշտօնը եւ 1764ին Կ. Պոլիս դարձած: Աբրահամ Եպս. 1762ին Մաղնիսայի Ս. Սիօն եկեղեցւոյն վրայ երկու քահանայ կը ձեռնադրէ, այս մասին նոյն եկեղեցւոյ սեփական Ոսկեփորիկ անուն ձեռագիր վերջին թղթին վրայ հետեւեալ յիշատակարանը կայ. «Տէր Յակոբոս, Տէր Պետրոս քահանա օրհնեցաք Ազդապատցի առաջնորդ Աբրահամ Վարդապետէ թվն ՌՄԺԱ. Դեկտեմբերի Ը.»:*

*8. ՂՈՒԿԱՍ ԵՊՍ.*

*Բնիկ Կարնեցի, հաւանաբար 1764ին յաջորդած է Աբրահամ Եպս. Ասդապատցիի: Զմիւռնիոյ առաջնորդական պաշտօնին վրայ մնաց կ'ըսուի մինչեւ 1780 թուականը, բայց 1775ին Զմիւռնիոյ Առաջնորդ Եսայի Վարդապետ մը կը յիշուի, գուցէ ասիկայ Առաջնորդի բացակայ եղած ժամանակները փոխանորդութեան պաշտօն կը վարէր, այս մասին մենք չենք կրնար որոշ բան մը ըսել: [Պալեանի լրացում- ճշտումը՝ [«Ի թվւոյն Հայոց 1226 (1777), ի Յուլիս ամսոյ 27, ի Զմիւռն քաղաքիս, որ ես սպասաւոր յառաջնորդի սորին տեառն Եսայի յոգնաշատ վարպետի, որ հարկեցաւ զանպիտանս ձեռնադրել հապեղայ (աբեղայ) ի յայսմ թվոջն, որ առաջին անունս էր Սարգիս, եւ յայժմ նոր անունս եղեւ Կարապետ»: ...այժմ այս յիշատակարանէն բացորոշ է, թէ Եսայի վրդ. Զմիւռնիոյ առաջնորդ եղած է եւ 1777 ալ վարդապետ ձեռնադրած է իր փոքրաւորն]: Տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 116:] Ղուկաս Եպիսկոպոսի օրովը 1779ին կը հիմնուի Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանը որ համբաւաւոր եղած է ժամանակին եւ այժմ իսկ:*

*Ղուկաս Եպս. 1780ին Կաթողիկոս ընտրուած է Ս. Էջմիածնի, եւ օծումը Կ. Պոլսոյ մէջ կատարուելով, ապա մեկնած է Ս. Էջմիածին, հոն տասն եւ ութը տասն եւ ինը տարիներ պաշտօնավարելով վախճանած է 1799 թուականին:*

*9. ՍԱՀԱԿ ԵՊՍ. կամ ԻՍԱՀԱԿ ԵՊՍ.*

*Այս ալ կը մականուանէր Սահակ Ահագին, բայց տարբեր անձ էր միւս Սահակ Ահագինէն: Սա՛ իբր Էջմիածնայ նուիրակ Կ. Պոլիս եկած է 1784ին, եւ նոյն տարին Իզմիր ղրկուած է առաջնորդութեան պաշտօնով: Կ'երեւի թէ հազիւ քանի մը տարիներ պաշտօն վարած է, եւ կ'ըսուի թէ վախճանած է ի Զմիւռնիա:*

*10. ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ.*

*1788ին Իզմիրի առաջնորդ կը յիշուի Գալուստ Վրդ.ը: Այս նուի-*

րակ վարդապետին համար, Էջմիածնի ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Ղուկասու կողմէն գրուած կոնդակ մը կայ եղեր ի Զմիւռնիա, որ ուղղուած է եղեր մահտեսի Կարապետ Աղայ Չէլիկեանի Զմիւռնիացւոյ, եւ թուականն է ՌՄԼԹ. (=1790) Յուլիս 25, որուն մէջ գրուած կայ եղեր հետեւեալն ալ.

«... Նաեւ՝ հոգեւոր որդւոյն մերոյ Գալուստ հանճարունակ վարդապետին օժանդակել ի գործսն մինչեւ վճարեսցէ, որ ըստ մերս վարկման, մինչ ի ժամանել թղթոյս այդր թերեւս յաւարտ իցէ հասուցեալ զնուիրակութիւն, եւ ի պատրաստութիւն վերադարձման լինիցի: Եւ մեք մտադրեալ եմք Աստուծով դէպի յաշնան եղանակն զնոր նուիրակ եւ Առաջնորդ պատրաստել եւ ուղեւորել...»:

Այս կոնդակին մէջ յիշեալ Գալուստ Վարդապետին՝ Մաղնիսա եւ Ագհիսար գացած ըլլալն ալ կը յիշուի եղեր:

11. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ.

Իր առաջնորդական պաշտօնին սկզբնաւորութեան թուականն անծանօթ է մեզի. միայն թէ Մաղնիսայի Վարի Թաղի Ս. Խաչ Եկեղեցւոյ սեփական Ոսկեփորիկ անուն ձեռագրի առաջին էջին վրայ կայ հետեւեալ անթուական գրուածքն.

«...Իզմիր քաղաքի առաջնորդ Բարսեղ վարդապետ եկի ՚ի քաղաքն՝ Մանիսեայ, որ երկու քահանայ ձեռնադրեցի ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն սպասաւոր... որ է գտէր Պօղոսն եւ տէր Բարսեղ...»:

12. ԴԱՆԻԷԼ ԵՊՍ. ՍՈՒՐՄԱՌԵՑԻ

1796ին Կ. Պոլիս կուգայ եւ ըստ սովորութեան առաջնորդական պաշտօնով եկած է Իզմիր 1797ին: Բայց Իզմիրի մէջ բաւականին հակառակորդներ ունենալուն համար, պաշտօնանկ եղած է Էջմիածնայ Տ. Տ. Ղուկաս վեհափառ Կաթողիկոսի կողմէն, եւ մեկնած է Իզմիրէն 1798ին:

13. ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊՍ.

Բնիկ Կեսարացի, միաբան Ս. Էջմիածնի, կը յաջորդէ Դանիէլ Եպիսկոպոսին 1798ին: Ասոր օրովը 1799ին[1] մեծ մղում կը տրուի Իզմիրի Մեսրոպեան վարժարանին, օժանդակութեամբ Շնորհք ամիրայի, եւ Յովհաննէս քահանայ Վանանդեցին ալ դասախօս կը կարգուի որ մեծ անուն հանած էր իր ժամանակին: Մարտիրոս Եպ. Կեսարացին 1800ին Սեղանի մեծ վարագոյր մը յիշատակ ղրկած է Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, որուն վրայի յիշատակարանն է.

«Ընծայեցաւ վարագոյրս ի տէր Մարտիրոս եպիսկոպոսէ Կեսարացւոյ, եւ դիտէ մեծի Զմիւռնոյն, ի սպաս հրաշագան Վանից սրբոյն Յով-

---

[1] Տ. Յովհան քհնյ Վանանդեցիի ուսուցչական պաշտօնին սկզբնաւորութիւնն ոմանք 1797, եւ ոմանք ալ 1798 կ՚ըսեն:

*հաննու Կարապետին մեծին Կեսարիոյ, յիշատակ վասն իւր եւ բնաւ իւրայնոցն կենդանեաց եւ հանգուցելոց ՌՄԽԹ. (=1800)»:*

*Ասոր օրովը շինուած է Զմիւռնիոյ Ս. Լուսաւորչեան Ազգ. Հիւանդանոցը 1801ին, եւ 1805ին ալ Էօտէմիշ քաղաքի Ս. Հռիփսիմէ եկեղեցին.*

*«Արեւելեան Մամուլ» կ'գրէ իր անցեալ ամսու թիւերէն միոյն մէջ.*

*«Ձեռքս անցած այդ հաշուետետրը, որու մէջ նոյն ժամանակի կարեւոր դէպքերն ալ նշանակուած են, շատ հետաքրքրական վաւերատետր մըն է, որ իբրեւ հնութիւն մը ինծի համար ունի մեծ արժէք.*

*Փոքրիկ դիրքով մագաղաթանման թղթի վրայ, գրաբառ եւ թուրքերէնով խառն գրուած է, մաքուր եւ այն ժամանակի գրելու ձեւով:*

*Այն տետրակին մէջ կայ նաեւ հետեւեալ արձանագրութիւնը, զոր կը յանձնեմ ուշադրութեանը պատմաբաններու, զայն լուծելու համար:*

*«1802 Մարտի 26ի Զմիւռնիոյ Առաջնորդ Մարտիրոս արհիեպիսկոպոսի աքսորման հրովարտակ եկաւ չավուշով եւ սարկաւագ մը ի միասին Առաքել անվամբ, որ յառաջագոյն 2 օր յառաջ Առաջնորդ հայրն մեր զօղեալ էր ի տան Սալաւանեան Օհաննէս Աղայի ռուսեցւոյ, որ համայն ընչիւքն, եկեալ ոչ գտին եւ մնաց ի տան յիշեալ աղային որ ի Պիռնովայ մինչ ի Նոյեմբեր 8: Ի Տօնի Ս. Հրեշտակացն եմուտ քաղաքս մեծաւ հանդիսիւ»:*

*Ինչպէս յայտնի կ'ըլլայ, այդ Մարտիրոս արքեպ. աքսորելու հրաման եկեր է, բայց ռուսահպատակ հայու մը տունը ապաստանած ըլլալով չեն յաջողեր աքսորել եւ ապա շուրջ 8 ամիս ետք, կ'երեւի ներուելով վերադարձեր է իր աթոռը: Սակայն մութ կը մնայ թէ ո՞ւսկից եկած է աքսորման հրամանը, կառավարութենէ՞ն թէ կաթողիկոսէն, այն ժամանակ Իզմիր Էջմիածնայ թեմ ըլլալով եւ թէ ո՞վ է այդ Մարտիրոս Արքեպ.-ը:*

*Մարտիրոս Եպս. կտակ մըն ալ ըրած է 2500 ղրուշի, Իզմիրի Հայոց Խօրային, անոր տարեկան տոկոսն՝ 250 ղրշ. զանազան բարեպաշտական հաստատութեանց բաժնուելու համար:*

*Մինչ 1810ին Զմիւռնիոյ առաջնորդութեան պաշտօնին վրայ էր, անկէ յետոյ քանի մը տարի եւս շարունակած է եւ ո՞ր թուականին ձգած է իր պաշտօնն, անծանօթ կը մնայ:*

*14. ՓԻԼԻՊՊՈՍ ԵՊՍ.*

*Ո՞ր թուականին Իզմիրի առաջնորդական պաշտօնին վրայ անցած է, անծանօթ կը մնայ, միայն թէ ի Կ. Պոլիս Արշակ Ա. Ալպօյաճեանի քով գտնուած գիրքի մը լուսանցքին վրայ հետեւեալ յիշատակարանը կը գտնուի, ինչպէս կը գրէ Ալպօյաճեանը:*

*«Ի Փիլիպպոս Նուաստ Եպիսկոպոսէ Զմիւռնոյն հոգին որ ընծայ*

*մեծայարգի Կարապետ ամիրայի Աղնաւորեան, ի սէր անմեկնելի, յամի Տեառն 1820ի Հոկտ. 20 յԻզմիր»:*

*15. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊՍ. ԱՂԱԻՆԻ*

*Բնիկ Պրուսացի, մականուամբ Զաքարեան Ս. Էջմիածնի կողմէն նուիրակներու գալու պարագայներուն դժուարութեան պատճառաւ, առաջին անգամ Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն, Պատրիարքական փոխանորդ կը ղրկուի ի Զմիւռնիա 1825ին:*

*Ստեփաննոս Եպս. ձեռնարկած էր Իզմիրի Մեսրոպեան վարժարանի վերաշինութեան 1825 Մայիս 11ին, հիմնարկէքի արարողութիւնն ալ կատարեց, բայց շինութիւնը չը լրացուցած Նիկոմիդիոյ վիճակին Առաջնորդ կարգուած ըլլալուն մեկնած է Իզմիրէն նոյն թուականին:*

*16. ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ԵՆՈՎՔԵԱՆ*

*Էջմիածնայ միաբան, որ 1825ին յաջորդած է Ստեփաննոս Եպս. Աղաւնիին, Էջմիածնայ կողմէն ղրկուելով: Մեսրոպեան վարժարանի վերաշինութիւնը որ նախորդին օրովը սկսուած էր, Ենովքեան Եպս. աջակցութեամբ Զմիւռնիացի ազդեցիկ անձնաւորութեանց 'ի գլուխ հանած է եւ լրացուցած է 1825 Նոյեմ. 15ին:*

*Ենովքեան Եպս. երկար ատեն չէ կրցած մնալ Զմիւռնիոյ Առաջնորդական պաշտօնին վրայ, որովհետեւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը կրկին յաջողած է Իզմիրի վիճակն իր իրաւասութեան ներքեւ առնել եւ ղրկած է նոր Առաջնորդ մը 1826ին:*

*17. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊՍ. ԳԱՊԷՆՃԱՆԵԱՆ*

*Բնիկ Եղեսիացի, միաբան Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանուց: Ինչպէս ըսինք Կ. Պոլսոյ Պատրիարքարանին կողմէն Զմիւռնիոյ վիճակին առաջնորդ կը ղրկուի 1826ին, եւ Իզմիրը կ'ենթարկուի վերջնականապէս Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան:*

*Յարութիւն Եպս. կը շարունակէ իր պաշտօնն երեք տարիներ եւ ապա կը մեկնի Իզմիրէն 1829ին:*

*18. ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՂԻԱԵԱՆ*

*Բնիկ Նիկոմիդիացի եւ Պատրիարք Ս. Երուսաղէմի: Իր պատրիարքական պաշտօնին մէջ տեղի ունեցած բողոքներուն վրայ Կ. Պոլիս կը կանչուի, եւ հոն քանի մը տարիներ մնալէ յետոյ 1829ին Երուսաղէմի Պատրիարքութեան աթոռոսը վրան մնալու պայմանաւ, Կ. Պոլսոյ Պատրիարքարանի կողմէն Զմիւռնիոյ վիճակին վրայ Առաջնորդ կը կարգուի, եւ կուգայ Իզմիր:*

*Ապա իր ծերութիւնը առաջ բերելով կը վերադառնայ յԵրուսաղէմ ու կը մնայ հոն իբր միաբան մինչեւ իր վախճանը:*

*19. ԹԱԴԷՈՍ ԵՊՍ.*

*Կը յաջորդէ Գաբրիէլ Պատրիարքին 1824ին, եւ կը պաշտօնավարէ*

տասն եւ երեք տարիներ միայն, որովհետեւ իբր Առաջնորդ այցելութեան կ'ելլայ Թեմերու 1837 Թուականին, եւ երբ Սէօքէ կը հասնի հիւանդանալով կը վախճանի այնտեղ:

20. ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԹԱԳԹԱԳԵԱՆ

Բնիկ Պրուսացի, 1838ին կը յաջորդէ Թադէոս եպիսկոպոսին: Իր առաջնորդական պաշտօնին մէջ մեծ գործունէութիւն ցոյց կուտայ Իզմիրի մէջ, եւ 1841ին ալ համայն Զմիւռնիացւոց հաւանութեամբ եպիսկոպոս կը ձեռնադրուի Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսէն: Սակայն երկար ատեն Իզմիր չի մնար, նոյն Թուականին այն է 1841ին Կ. Պոլիս կը կանչուի Պատրիարքութեան խորհրդականի տիտղոսով եւ կը մնայ հոն մինչեւ 1845 Թուական. երբ վերստին կը կոչուի Իզմիրի առաջնորդական պաշտօնին, ինչպէս պիտի տեսնենք վարը:

21. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ՉՈՒԽԱՃԵԱՆ

Բնիկ Կ. Պոլսեցի կը յաջորդէ Պօղոս եպիսկոպոս Թագթագեանին 1841ին, երբ ան Պատրիարքութեան խորհրդականի տիտղոսով Կ. Պոլիս կ'երթայ:

Իր պաշտօնավարութեան օրով Աւետիք Էքիզեանի ձեռամբ 1842ին կը նորոգուի Իզմիրի Ս. Լուսաւորիչ հիւանդանոցը եւ կը կառուցուի նաեւ Ս. Լուսաւորիչ մատուռը:

Մատթէոս Եպս. 1844 Յուլիս ամսոյն մէջ Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի եւ կ'երթայ ի Կ. Պոլիս տարին:

22. ՊՕՂՈՍ ԵՊՍ. ԹԱԳԹԱԳԵԱՆ

Իզմիրը՝ 1844 Օգոստ. ամսէն սկսեալ տասն եւ տասներկու ամիսներ առանց առաջնորդի կը մնայ եւ այս միջոցին, այն է 1845 Յունիս 21ին մեծ հրդեհ մը ամբողջ Հայոց Թաղը, Ս. Ստեփաննոս Եկեղեցին, Առաջնորդարանը, եւ այլն մոխիր կը դարձնէ:

Ասոր վրայ ժողովուրդը Առաջնորդի մը պէտքն զգալով Կ. Պոլիս Պատրիարքարան կը դիմէ որպէսզի Առաջնորդ մը ղրկուի Իզմիր:

Կ. Պոլսոյ Պատրիարք Մատթէոս Եպս. Չուխաճեան, առաջնորդական պաշտօնով կրկին անգամ կը ղրկէ Պօղոս եպիս. Թագթագեանը 1845ին:

Երբ Իզմիր կը հասնի, կը հաստատուի Ս. Լուսաւորչի հիւանդանոցին մէջ իբր առաջնորդարան որ այդ մեծ հրդեհէն ազատուած միակ ազգապատկան շէնքն էր:

Պօղոս եպիս. Թագթագեան առանց ժամանակ կորսնցնելու անմիջապէս կ'սկսի գործի եւ Ս. Ստեփանոսի այժմեայ հօյակապ, ընդարձակ եւ շքեղ շէնքը կը կառուցուի քարուկիր, կամարակապ, եւ երկու կարգի վրայ տասն եւ երկու մարմարեայ սիւներով: Եւ 1858ին ալ Առաջնորդարանը կը շինուի: Եւ այսպէս կը շարունակէ իր գործունէութիւնը

*արժանաւորապէս մինչեւ 1863ին, որ ժամանակ Կ. Պոլսոյ Պատրիարք կ՚ընտրուի, եւ առանց ձգելու իր առաջնորդական պաշտօնը նոյն թուականին կը մեկնի ի Կ. Պոլիս:*

*Թագթագեան իր պատրիարքութեան սկիզբէն մինչեւ 1869, վեց տարուան շրջանին մէջ, Իզմիր կը ղրկէ պատրիարքական փոխանորդի պաշտօնով:*

*1. Յակոբոս Վրդ. Զիլինկիրեանը. 1864ին, որ սա Ս. Երուսաղէմի միաբան վարդապետներէն էր:*

*2. Գէորգ Վրդ. Դերձակեանը, 1865ին, սա ալ Արմաշու վանուց միաբաններէն էր:*

*3. Կարապետ Վրդ. Ալեքսանեան Կեսարացին 1867ին:*

*Պօղոս Եպս. Թագթագեան 1869ին պատրիարքական պաշտօնէն հրաժարելով կը վերադառնայ ի Զմիւռնիա, եւ նորէն կը շարունակէ իր Առաջնորդական պաշտօնը, եւ բաւականին ծախքով կը նորոգէ Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը, եւ իր կենդանութեան, իր ունեցած ամբողջ հարստութիւնը, որ 680 լիրայ է եղեր, կանոնաւոր կտակով մը կը նուիրէ սոյն հիւանդանոցին:*

*Օր մը սրտնեղութեան մը ժամանակ բարձրաձայն աղաղակած է.*

*«Ինքնահաւան Զմիւռնացիք,*
*«Աղքատ հպարտ Մէնէմէնցիք*
*«Ֆէրման ի գլուխ Մանիսացիք,*
*«Կէս հայ կէս վայ Գասապացիք,*
*«Բամպակի տուփ Ագհիսարցիք,*
*«Օրհնեալ ըլլան՝ Էօտէմիշցիք»:*

*Պօղոս Եպս. Թագթագեան վախճանած է 1872 Սեպտ. 9-ին ի Զմիւռնիա: Եւ թաղուած է Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ գաւիթին մէջ:*

*Պօղոս Եպս.ի մահէն յետոյ թէեւ Առաջնորդ կ՚ընտրուի Կ. Պոլսեցի Նար-Պէյ Խորէն Եպիսկոպոս, բայց նա չ՚ընդունիր այս պաշտօնը, որով տեղի ունեցած շատ մը պատճառներով Կ. Պոլսոյ Պատրիարքարանը կ՚ստիպուի Տեղապահ նշանակել նախ Յովհ. Եպս. Եդեսեան, Գէորգ քահանայ Տէր-Պետրոսեանը եւ ապա Պետրոս Վրդ. Ներկարարեանը, բայց առաջինը Իզմիրցւոց կողմէն կը մերժուի, երկրորդը չը կրնար օգտակար գործունէութիւն մը ունենալ, եւ այսպէս անորոշ վիճակը կը շարունակուի մինչեւ 1876 թուականի վերջերը:*

*23. ՄԵԼՔԻՍԵԴԵՔ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ*

*Բնիկ Շամհատանցի[465]* միաբան Ս. Երուսաղէմի եւ Ս. Յակովբեանց վանուց: Զմիւռնիոյ Գաւառ. Ժողովոյ կողմէն օրինաւորապէս Զմիւռնիոյ վիճակին առաջնորդ կ՚ընտրուի 1877 Յունվար ամսոյ 19ին, կը հաստատուի եւ Իզմիր կը հասնի Մարտ ամսոյ 3ին:*

*Առաջնորդական պաշտօնավարութեան երկրորդ տարին, այն է 1878ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի Կ. Պոլսեցի Գէորգ Դ. Վեհ. Կաթողիկոսէն:*

*Մելքիսեդեք Եպս. իր այս առաջին Առաջնորդական պաշտօնավարութեան միջոցին, որ տասն եւ մէկ տարի տեւած է, մեծ գործունէութիւն ցոյց կուտայ Իզմիրի մէջ, թէ՛ դպրոցական ու կրթական գործերու համար եւ թէ՛ եկեղեցապատկան հաստատութեանց շինութիւններով եւ վերաշինութիւններով եւլն:*

*Իր Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութիւնը Ռուսական կառավարութեան կողմէ չ՚վաւերացուելուն պատճառաւ, Իզմիրի եւ վիճակային թեմերու եկեղեցիներու մէջ Մակար Կաթողիկոսի անունը «յիշուի» եւ «չը յիշուի» խնդրոյն վրայ, Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի հետ իր յարաբերութիւնը ձգտած ըլլալով, 1887 Դեկտ. 1ին հրաժարած է Զմիւռնիոյ Առաջնորդութենէն, եւ 1888 Յունվար 23ին ալ մեկնած է Իզմիրէն:*

*Այս մեկնումին վրայ, Առաջնորդական Տեղապահի պաշտօնին կը կոչուի.*

*1. Տէր Յովհաննէս քհնյ. Մինասեան 1888ին:*

*Եւ ապա Պատր. Փոխանորդի տիտղոսով Պատրիարքարանի կողմէ կը ղրկուի:*

*2. Յովսէփ Ծ. Վրդ. Այվազեան Կարնեցի 1889ին:*

*Այս վերջինը կը մնայ Իզմիր մինչեւ 1891 Թուականին, եւ կը մեկնի նոյն Թուականին երբ նոր Առաջնորդի ընտրութիւնը կը կատարուի:*

*24. ՆԵՐՍԷՍ Ծ. ՎՐԴ. ԱՐՍԼԱՆԵԱՆ*

*Բնիկ Կ. Պոլսեցի, 1890 Ապրիլ ամսոյ մէջ, Զմիւռնիոյ Գաւառ. Ժողովի կողմէն Թէեւ Առաջնորդ կ՚ընտրուի, բայց ինքը Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդի պաշտօնը ունենալուն, նոյն տարին չը կրնար գալ Իզմիր, այլ յաջորդ տարին, այն է 1891-ին կուգայ եւ կ՚սկսի իր պաշտօնին, եւ կը շարունակէ մինչեւ 1898, եւ ապա կը մեկնի հրաժարեցուցուելով իր պաշտօնէն:*

*25. ՄԵԼՔԻՍԵԴԵՔ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ*

*Ներսէս Վրդ. Ասլանեանի մեկնելէն յետոյ, Տէր Յովհ. քահանայ Մինասեան որ կրկին Առաջնորդական տեղապահի պաշտօնը կը վարէր. ասոր նախագահութեան ներքեւ Զմիւռնիոյ Գաւ. Ժողովը երկրորդ անգամ 1899ին Առաջնորդ կ՚ընտրէ Գեր. Մելքիսեդեք Արքեպիսկոպոս Մուրատեանցը: Նոյն տարին կուգայ Իզմիր, բայց այս անգամ հազիւ չորս տարիներ եւ 1903 Յուլիս 12ին կը վախճանի ի Զմիւռնիա, կը Թաղուի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ գաւիթին մէջ:*

*26. ԴԱՆԻԷԼ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ*

*Բնիկ Կ. Պոլսեցի, միաբան Ս. Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանուց. 1903-ին Պատր. Փոխանորդի տիտղոսով կը ղրկուի Իզմիր Կ. Պոլսէն տարիէ մը քիչիկ աւելի կը մնայ իր պաշտօնին վրայ, եւ Զմիւռնիոյ Գաւ. Ժողովոյ կողմէն Եղիշէ Եպս. Դուրեան Իզմիրի Առաջնորդ ընտրուելուն, ինքն ալ կը մեկնի Կ. Պոլիս:*

Մաղնիսա ՏՐԴԱՏ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ (Ճարունակելի)
*«Դափնի», Զմիւռնիա, 1921, էջ 25-8, 59-63, 91-93[466]*:*

# ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1]* Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1902, էջ 211-2. «Գաղատիոյ վանքը. Լուսաւորչական Հայոց սեփականութիւն է, Անկիւրիոյ հիւսիսային կողմը՝ գրեթէ կէս ժամ հեռու դաշտի մէջ գտնուող՝ Ս. Աստուածածնի վանքը, յորում կը նստի քաղաքին առաջնորդը, երկու կամ երեք վարդապետներով: ... Տաճարս ոչ այնչափ մեծագործութեամբ, որչափ հնութեամբն պատկառելի է: Անկիւրիոյ պարծանք եւ միաբանութեանս բազմարդիւն եւ սրբակեաց անդամներէն մին՝ Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, իր գեր. Ստեփանոս եղբօրմէն առնելով բերած է ի Ս. Ղազար Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանաց ձեռագիր յիշատակագիր մը 152 էջերով: Այս յիշատակագրի մեծ մասն բռնած են նոյն վանաց նուիրատուաց անուանք եւ նուիրաց քանակն եւ նկարագիրն: Պատմական եւ կարեւոր կտոր մ՚ալ կայ, որով կը յայտնուի, թէ վանքս հաստատողն եղած է ոմն ի Հայոց Տէր Ներսէս, զոր ապա հայկական ՋԺԸ. (1469) թուին, իւր հարազատ եղբայրը Տէր Նիկողայոս արքեպիսկոպոս՝ աւելի կարգաւորած եւ շէնցուցած է: Թէեւ վանացս վրայ գրելու շատ նիւթ կայ, որոնցմով մինչեւ անգամ կարելի է հատորիկ մը ձեւացնել, սակայն բառագրոյս ոճէն չշեղելով՝ այսչափով բաւականանանք»:

[2]* Յիշ. ա. 1439 թ.՝ «Ընդ նմին եւ զԱբրահամ անարժանս աղաչեմ յիշել ի Տէր, զի զջնջեալ եւ զաղալեալսն որ ի սմա ուղղեցի, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն... Եղեւ նորոգումն սորայ ի թուին Հայոց ՊՁԸ. (1439), ի յուլիս ամսո ի ԻԱ. (21), ի դուռն Սուրբ Աստուածածնիս, որ եւ վանքս իսկ է, ի փառս Քրիստոսի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 389:

բ. 1441 թ.՝ «...Բայց եղեւ գրաւ սորա ի թուիս Հայոց ՊՂ. (1441), ի հայրապետութեան տեառն Գրիգորի: Գրեցաւ ձեռամբ մեղսաթաւալ եւ անպիտան գրչի Ստեփաննոսի սուտանուն աբեղայի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ի վանքս Անկիւրիոյ, ի յառաջնորդութեան տէր Յովսէփի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 398:

գ. 1464 թ՝. «...Արդ, եղեւ գրաւ գրչութեանս, որ է Մաշտոց, ի մայրաքաղաքս Գաղատիա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի թուականութեանն Հայոց ի ՋԺԳ. (1464)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 228: Յիշ. 1601, 1607 թթ.՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 5, 274:

դ. 1609 թ.՝ «...Յամի հազարերորդի յիսուն եւ իններորդի (1609) Հայոց թուականութեանս շարագրեցաւ աստուածաբան մատեանս, որ կոչի Աստուածայշունչ Հին եւ Նոր կտակարան... Եւ գրեցաւ սայ ի Գաղատիեայ, որ որջորջեն յԱնկիւրիա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնայ ի տիրածին կուսին տաճարիս ի փառս Փրկչին. եւ է բերդին մէջ...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 355:

ե. 1616 թ.՝ «ՌԿԵ. (1616) նորոգեցաւ յերկիրս Գաղատիոյ, ի սբ. ուխտիս, որ կոչի Աստուածածնի վանք». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 588:

զ. 1621 թ.՝ «...Շնորհիւ Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին գրեցաւ Տաւնացոյցս ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ, ի թվին Հայոց ՌՀ. (1621), ի յուլիս ամսոյ ԺԳ. (13), աւրն ուրբաթ, ի յերկիրն Գաղատիա, ի դուռն Ս. Աստուածածնին ձեռամբ... Գրիգոր գրչի...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 9:

Յիշ. 1621, 1622, 1634, 1636, 1637, 1638, 1640 թթ.՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 31, 37, 79, 564, 672, 710, 751, 817:

Յիշ. 1644, 1646, 1647, 1648, 1649, 1653, 1654, 1656, 1659 թթ.՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 128, 224, 271, 326, 370, 536, 629, 739, 901:

[3]* Տեղ. բառ., Գ/98-9. Կեսարիայի Ս. Կարապետ, Էֆքէրէ բոյուկ Մանաստրը, Ս. Կարապետ - Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգում: Աւանդութիւնը նրա հիմնադրումը վերագրում է Թադէոս Առաքեալին: Վանքը աւելի յաճախակի յիշատակւում է 1206 թ.ից եւ նրան տրուած «Մայրավանք», «Հրաշալի Ս. Աթոռ», «Մեծահռչակ Ս. Ուխտ» եւ այլ մականունները վանքի մեծ ու հեղինակաւոր եկեղեցական հաստատութիւն լինելու ապացոյցն են: Պահպանուած խաչքարերի արձանագրութիւններից ամենահինը վերաբերում է 1729 թ.: Գլխաւոր տաճարը՝ Ս. Հրեշտակապետ... կից հս. կողմում է գտնւում Ս. Կարապետ եկեղեցին... Վանքի տարածքում էր գտնւում նաեւ [Տրդատ] Եպս. Պալեանի ջանքերով 1890՞ [1888] թ. հիմնած վարժարանի նոր ու յարմարաւէտ շէնքը (կառուց. 1900-1903 թթ.) եւ մատենադարանը: 1914 թ. մատենադարանն ունէր 2000 անուն գիրք եւ 200ից աւելի ձեռագրեր, ոսկուց եւ արծաթից պատրաստուած ծիսական իրեր եւ այլն: Վանքը վերանորոգուել է 1846 թ. Յակոբ Գաղատացու ջանքերով: Վանքի մոտակայքում, Ս. Խաչ լեռան փեշերին գտնւում են Ս. Դանիէլ եկեղեցին (վանքը) եւ բազմաթիւ այլ եկեղեցիների ու բնակավայրերի աւերակներ: 1915 թ. փլատակների կոյտի վերածուեց հայկական մշակոյթի նաեւ այս հոյաշէն կենտրոնը: Նրա անվթար մնացած յարկաբաժինները մինչեւ 1920ական թթ. օգտագործում էին որպէս հիւանդանոց»: Թիերի՝ Հ[մր] 326, էջ 62, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն են:

[4]* Հմմտ. Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 77, ուր արձանագրութիւնն այսպէս է. «ՈՐՔ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԸՂՁԻՒ ՍԻՐՈՑ ԱՌ ԻՍ ԴԻՄԵՆ, / ՀԱՄԱՅՆ ԱԽՏԻՑ ԾՆՈՐՀԻՒ ՓՐԿՉԻՆ ԴԵՂ ԳՏԱՆԵՆ. / ԵՒ ՈՐՔ ԹԵՐԻ ՄՏՕՔ ԼՐԲԻՆ, ԶՈՒՐԿ ԵԼԱՆԵՆ, / ԶԻ ՉԱՐԱՉԱՐ ՍԻՐՈՎ ԽՆԴՐԵՆ ԵՒ ՈՉ ԱՌՆԵՆ. / ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՂԻՇԵՑԻՆ ՔԱԶԻՄԱՍՏ, / ԸՆԴ ԶԻՄԱՌՑԻ ՅԱԿՈԲ ՊԵՏԻՆ ՈՐ ՆՈՒԱՍՏ, / ԾԻՆՄԱՆ ԵՒ ԻՄ ՊԱՐՏՈՒՑՍ ԵՂԵՒ ԾԱՏ ՆՊԱՍՏ, / ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ԼԻՑԻ ՆՈՎԱՒ ԱՌԱԳԱՍՏ»:

[5]* Յիշ.ի վերահրատ. տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 24. այստեղ «ուրբաթ» բառի փոխարէն՝ «շաբաթ»:

[6]* Փակագծերի մէջ առնուած լրացումներն ըստ՝ Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1867, որ ունի հետեւեալ նշումը. «Անտիպ. Առնուած Տրդատ եպ. Պալեանի ձեռագիրէն»:

[7]* Յիշ. 1642 թ.՝ «...Թորոս Համթեցի, որ եւ Տիգրանակերտ քաղաք առձայնի, որ եմ թափառական եւ պանտուխտ... Որոյ շնորհիւ Տեառն սկիզբն արարի սբ. գրքիս... եւ օգնականութեամբ նորին յանկ հանի, ի թվականութեանս մերում արմենեան սեռի ՌՂԱ. (1642) ամին... ի յերկիրս Մաժաք, որ այժմ ասի Կեսարիայ, ընդ հովանեաւ Սբ. Կարապետայ դամբարանիս եւ այլ ամենայն սրբոցն... Եւ ի առաջնորդութեան այսմ ուխտի Դաւիթ հայրապետի եւ տեսչի այսմ նահանգի...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 55: Ըստ այս յիշատակարանի՝ Դաւթի պաշտօնավարութիւնը 1642 թուին դեռ շարունակւում էր:

[8]* Գրքի մեր ունեցած օրինակի էջ 41, ստ. լս-ում Գ. Բամպուքճեանի ձեռքով գրուած է. «ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԿԵՍԱՐԱՑԻ՝ Տէր Կարապետ մականուանեալ, որ հաւանաբար Ս. Կարապետի միաբաններէն եղած ըլլալու [է]///. աթոռը բարձրացած է 1676-1679, 1680-1681, 1681-84, 1686-87, 1688-89, յորում կը վախճանի»:

[9]* Նոյն՝ գրքի մեր ունեցած օրինակի էջ 41, ստ. լս-ում Գ. Բամպուքճեանի ձեռքով գրուած է. «ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԱՑԻ (Սարը մականուանեալ) - 1692-1694 երկու տարի Պոլսոյ պատրիարքութեան աթոռը բարձրացած է»:

[10]* Նոյն՝ գրքի մեր օրինակի էջ 41, ստ. լս-ում Գ. Բամպուքճեանի ձեռքով գրուած է. «Կես[արիոյ] վանքի միաբաններէն Ուղուրլու Գրի[գոր] եպս. 5 տարի Կիլիկիոյ կաթող[իկոսութիւնը] կը վարէ. 1721-1726»:

[11]* Յիշ. ա. 1206 թ.՝ «...Գրեցաւ եւ ծաղկեցաւ Աստուածաբուղխ Սուրբ Աւետարանս Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ եւ փցուն [անիմաստ եւ յանցաւոր] գրչի՝ Գրիգոր քահանայիս ի Տումարծու, [որ անուամբ գոչիմ եւ ո՛չ գործօք], ի թուականութեանս Հայոց ՈԾԵ. (1206) յաւարտեցաւ, Յունվար ամսոյ Գ. (3) աւր ուրբաթ (շաբաթ), ի գաւառս Կեսարիոյ Կապադովկեցւոց, ի հովանաւոր անապատիս Սրբոյն Կարապետի Յովհաննու, եւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ Սրբոյն Թէոդորոսի եւ Սրբոյն Մեռկերիոսի եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, ի յեպիսկոպոսութեան Տէր Ազարիա վերայտեսչի: Որոյ ցանկացող եղեալ այս փրկագործ սուրբ Աւետարանիս զհեզահոգի եւ զհաւատարիմ ծերունին զԽըստըրպաշին...». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 24:

բ. 1212 թ.՝ «...Ի հայկազնեայ թուաբերութեանս, ի վեց հարիւրորդի վաթսներորդի առաջնորդի (1212), յամի, յոր ելեալ թագաւորն Հայոց բազմութեամբ քրիստոնէական զաւրաւք ի վերայ անաւրինաց եւ պաշարեալ զնոսա ի մայրաքաղաքն Կապոդոկեցւոյ Կեսարի, մինչեւ հնազանդեցոյց զնոսա եւ բազում շահաւք դարձաւ ի Կիդիկեա: Գրեցաւ սա ընդ հովանեաւ Սրբոյ Յովաննու Կարապետիս». - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 758, վերահրատ.՝ ԺԳ. դ. յիշ. էջ 81:

գ. 1438 թ.՝ «Արդ, ի ծաղկալից գրքոյս յոյժ հնացեալ էր եւ... մեք տեսեալ զնա աւդէն եդաք թուական գրքոյս, որ էր ՊՁԷ.ումն (1438), ապրիլի Է.ումն աւետեաց տօնին աւարտ եղեալ էր: Գրեցաւ ձեռամբ Յովհաննէս վրդպին ի Կեսարիայ, որ է Ղայսարի քաղաքին, ի հրաշալի սբ. աթոռն սրբոյն Յովհաննու Կարապետին. վասն այն գրեցաք, զի զաշխատանս նորին տեսանելով մէկ բերան տացին զողորմին...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1846:

դ. 1553 թ.՝ «...կրկին նոր նորոգեցաւ... Աւետարանս ի թվականութեան Հայոց ՌԲ. (1553), յունվար ամսոյ Դ., ի գաւառն ի Կեսարիոյ, ի մեծահռչակ սուրբ Ուխտս ի դուռն Կարապետին. ի հայրապետութեան Տէր Ստեփանոս կաթողիկոսին եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տէր Յովանէս եպիսկոպոսին...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1853:

ե. 1574 թ.՝ «Գրեցաւ Աւրհնութիւնաբեր ցուցակս այս՝ Մաշտոց ի թվականին ՌԻԳ. (1574), ձեռամբ անարժան, անարհեստ, փծուն գրչի Մշեցի անպիտան Աստուածատուր տրուպ եպիսկոպոսէ, ի գաւառն ի քաղաքն ի Կեսարիա կոչի, ի հռչակաւոր վանքն ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Թէոդորոսին». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 100:

զ. 1656 թ.՝ «Արդ... գրեցաւ Տօնացոյցս եւ քաղուածոյս ըստ իւրաքանչիւր աւուրց ի միասին, ի թվականութեանս Հայոց ՌՃԵ. (1656) ամի, եւ կատարեցաւ... ի մայրաքաղաքս Կեսարիայ, ի գիւղն Եւքառայ, ի դուռն Ս. Կարապետայ եւ ամենայն սրբութեանցն, ձեռամբն ոգնամեղ անձին Սրապիոն ոմն անարժանի, պիտակ անուամբն սարկաւագիս...». - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 692:

է. 1676 թ.՝ «Գրուած է ձեռամբ Սրապիոն Սարկաւագի ի թվին ՌՃԻԳ (1676)... ի յերկիրն Կապադովկեա Կեսարիա քաղաքի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետի». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1877:

ը. 1683 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ եւ անարժան եւ անպիտան եւ փցուն գրչի Յովսէփ երէց անցաւորի, ի թուականութեանս Հայոց ՌՃԼԲ. (1683) ամին, ի մայրաքաղաքն Կեսարիոյ. ի գիւղաքաղաքս որ կոչի Յեւքառայ, ի դուռն Սրբոյն Ստե-

փաննոսի Նախավկային եւ Սրբոյն Սարգսի եւ Սրբոյն Գէորգայ զօրավարացն եւ այլ համօրէն աստ հաւաքեալ սրբոցն...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1879-80:

թ. 1691 թ.՝ «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌՃԽ. (1691) ի քաղաքն Կեսարիա, ի գիւղն Եւքառա, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս եւ Սրբոյն Ստեփաննոսի եւ այլ բազմահոյլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1880:

ժ. 1706 թ.՝«...Գրեցաւ հոգիաբուղխ աստուածային գանձարանս ի նայ... տումարի ՌՃԾԵ. (1706), ի մայրաքաղաքիս Կեսարիոյ Կապաթովկացւոց, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս եւ Սուրբ Ստեփաննոսիս եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ, ձեռամբ յոգնամեղ եւ անպիտան ծառայի Աստուծոյ Արութին քահանայի, որ միայն անուն ունիմ եւ գործն՝ ոչ». տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 99:

ժա. 1721 թ.՝ «...Արդ, գրեցաւ Սբ. Աւետարանս ի թուականութեանս ՌՃՀ. (1721)... եւ ի յառաջնորդութեան յայսմ նահանգիս Կեսարիոյ Կապաթովկացւոց Ցակոբ վարդապետի, ընդ Սբ. Կարապետիս եւ Սբ. Ստեփաննոսիս եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1886:

ժբ. 1727 թ.՝ «... Արդ, գրեցաւ Սբ. Մաշտոցս, ի յերկիրս Կեսարիա, ի գեղն Եւքառա ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնայ, Սբ. Կարապետի, եւ Սրբոյն Ստեփաննոսի եկեղեցեաց... Ի թվականիս ՌՃՀԶ. (1727) ամի...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1888:

ժգ. 1754 թ.՝ «...Կազմեցաւ եւ ծաղկեցաւ ոսկեզօծ եւ ձոյլ արծաթապատ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ Ցովհաննէս անարժան իրիցու, ի թուահաշուութեանս ՌՄԳ. (1754)... ի յառաջնորդութեան յայսմ նահանգի Կեսարիոյ Տէր Դաւիթ հեզահոգի վարդապետի, ընդ հովանեաւ Ամենասուրբ Աստուածածնին եւ սրբոյն Ցօվհաննու Կարապետի եւ այլ սրբոցն որք աստ կան...». տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1900:

ժդ. 1788 թ.՝«Ես Պօղոս մեղսամած վարդապետ, որ եմ տեղեաւ Կեսարու գիւղ վանքցի (=Տէրէվանք)... յօժարութեամբ արարի զայս ծայրագոյն Աստուածաբանութեան մեկնութիւն, յիշատակ Կեսարու սուրբ Կարապետու հրաշալի վանուց նորահաստատ դպրատան, զոր ընթերցեալ յիշել արժանի համարիցեն զիս մեղսամածս... (Կնիք մը) (Պօղոս վրդ. 1784):

Գրեցաւ ՌՄԼԷ. (=1788) թվն. օգս. ԻԵ. Ձ.Գ.Յ.: Տե՛ս Պալեան, Ցուցակ Ս. Կարապետի, Վիեննա, էջ 37-8, նաեւ՝ 39, 43-4, 47:

ժե. 1807 թ.՝„...եւ կարողութիւն նուաստ ծառայիս Կեսարիացի՝ ի գեղջէն Թալասու Ցակոբ սարկաւագիս յօրինակել զսա՝ դեռ համբակագոյն էի, յամի Փրկչին 1807ի եւ ի մերում թուականին ՌՄԾԶ. Ցունվարի 4, ի գերահռչակ վանս Սրբոյն Ցովհաննու Կարապետի, ոը ի մեծին Կեսարիայ եւ ի վերատեսչութեան նորին տեառն Ստեփաննոսի առաքելաշնորհ եպիսկոպոսի եւ քաջիմաստ հովուի„ . – տես Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 78:

ժզ. 1823 թ.՝ «Համառօտակի բանք տրամաբանականք օրինակեցան ի Կեսարացի Ցովհաննէս ապարդին աբեղայէս եւեթ, ի ՌՄՀԲ. (1823) թուին մերոյ, ի վանս սրբոյ Ցովհաննու Կարապետի, ի Մաժակ կառուցելոյ, յաւուր վերատեսչութեան տեառն Ստեփաննոսի երջանկազարդ արքեպիսկոպոսի՝ հոգեւոր ծնողին իմոյ...». - տե՛ս Ցուցակ Ս. Կարապետի, էջ 64, հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1906:

ժէ. 1823 թ.՝ «Ի խնդրոյ Գերապատիւ Ցակոբ Չէլէպւոյն Տիւզեան զչորեքտասան ճառս սրբոց հարց օրինակեցի ի գաղափարէն՝ որ կայ ի գրքատանս Սրբոյ Կարապետի հրաշալի վանիցն ի Կեսարիա, ի 1823, եւ ի Սեպտեմբերի 16, նուաստ գրագիր Պետրոս վարդապետ Թալասցի Կիւլպէկեանց». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1906:

ժը. 1834 թ.՝ «...Եօթնաձայն փող Յիսուսեան՝ յօրինեալ ի նուաստ Թալասցի Թուրապեան Կարապետ սարկաւագէ, ի հրաշափառագոյն վանս Սրբոյ Կարապետին Քրիստոսի մեծին Կապադովկեան Կեսարու, ի վերատեսչութեան տեառն տեառն Յակոբայ մեծի րաբունապետիս... ի Թալասցի Կարապետ րաբունւոյ վանահայրութեանն, ի Կարապետ տրուպ սարկաւագէ, յամի մարդեղութեան փրկչին 1834 եւ ի Նոյեմ. 5». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 28:

ժթ. 1848 թ.՝ «...Եւ յետոյ ՌՄՂԷ.ին (1848) ի ամսեանն Փետրվարի քըսան եւ ինն օրն Կիրակի, Մեծ պահոց, Սուրբ Թորոսի կիրակին, եւ ես մեղապարտ Տէր Սարգիսըս քահանայ օրհնըվեցայ Սրբոյն Յովհանու Կարայպետի հրաշալի վանուց, Յակոբոս արհիապան եպիսկոպոսէն...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1909:

ի. 1890 թ.՝ «Յիշեցէ՛ք անարժանս՝ զՏէր Տրդատ վարդապետ Պալեան Թալասցի, առաջնորդ մեծին Կապադովկիոյ եւ վանահայր Ս. Կարապետի վանուց Կեսարիոյ, որ ունիմ աշխատութիւնս մեծամեծս. թվ. ՌՄԼԹ. (1890)». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 50:

[12]* Տեղ. բառ., Բ/23-4. Ս. Դանիէլ, Ս. Աստուածածին - Վանք Կապադովկիայում, Կեսարիա քաղաքի մօտակայքում, Պալակէս գիւղից ներքեւ... Հիմնադրման ժամանակը յայտնի չէ: Ոմանք նրա հնութիւնը հասցնում են մինչեւ Ա-Դ. դդ. վանքի հնագոյն մատուռը՝ Ս. Աստուածածին կառուցուած համարելով Թադէոս Առաքեալի ձեռքով: Վանքն իր անունն ստացել է համեմատաբար նոր ժամանակներում, հավանաբար ԺԵ. դ., ճգնաւոր Դանիէլի անունից: Պահպանուած մնացորդները ԺԱ. դ. աւելի հնութիւն չունեն: Ս. Աստուածածին եկեղեցին շինուած է 1842ին, նախկինում գոյութիւն ունեցած եկեղեցու տեղում: Կիսականգուն վիճակում այժմ գոյութիւն ունի միայն տաճարը: Միակ հնութիւնը Օշին իշխանի (որը վանքի իսկական հիմնադիրն է, ԺԱ. դ.) գերեզմանաքարն էր, որ փոխադրուած է ոչ հեռու գտնուող Ս. Կարապետի վանքը:

Այս, ինչպէս նաեւ Ս. Պարսամ, Պալակէսի Ս. Աղօթիկ եւ Տարսիախի Ս. Գրիգոր Նարեկացի վանքերի մասին Թիերին ունի հետեւեալ ծանօթագրութիւնը. «Ս. Կարապետ վանքի հարեւանութեամբ գտնւում են այսօր անյայտ կորած բազմաթիւ փոքր սատելիտ հիմնարկութիւններ եւ որոնց անուններն են ահա. Ս. Դանիէլ, Ս. Պարսամ, Պալակէսի Ս. Աղօթիկ եւ Տարսիախի Ս. Գրիգոր Նարեկացի». տես Թիերի, Repertoire..., էջ 62, ծնթ. 15:

[13]* Այս՝ Ս. Դանիէլի վանքի ձեռագրերի նկարագրութեան վերջում Պալեանն իր սովորութեան համաձայն գրել է մի փոքրիկ ծանօթութիւն. «Կարապետ եպիսկոպոս այս՝ Կեսարիոյ վիճակին Առաջնորդ եղած չէ՛, այլ միայն Ս. Դանիէլի վանուց վանահայր եղած է. եւ կը մականուանէր Տէտէ, եւ մինչեւ ցայժմ ալ այսպէս կը յիշատակուի ժողովրդեան բերնին մէջ». - տե՛ս Ցուցակ Ս. Կարապետի, էջ 74:

[14]* Պահպանուած այդ երկու տետրակները ,,Համառօտ տեղեկագրութիւնք եւ յիշատակարանք Անի քաղաքի եկեղեցեաց եւ վանօրէից,, վերնագրով Պալեանը հրապարակել է 1912 թ. Զմիւռնիայի ,,Դաշինք,, օրաթերթում՝ նկատի ունենալով Ն. Մառի պեղումներով պայմանաւորուած Անիի նկատմամբ եղած մեծ հետաքրքրութիւնը եւ «... այդպիսի աշխատաւոր եպիսկոպոսի մը աշխատութեան գոնէ մէկ մասն ալ ցեցերու կեր ըլլալէ ազատելու» հանգամանքը: Սակայն, սա եւս, մեզ յայտնի միակ հրապարակումն է, նախատեսուած շարունակութիւնը՝ արդէն որերորդ անգամ՝ չունենք:

[15]* Կոնդակ-յիշ. ա.՝ 1838 թ.՝ «...Մեք ձեռնտու եղաք՝ վկայութեան եւ յորդորանաց թուղթ տալով: Իսկ դոյն Սուրբ Դանիէլի վանս՝ գոլով ի սրբազան Թադէոս առաքելոյն հիմնաւորեալ սակս նորա հաւատացելոցն (որպէս մեծ Աւազանն նորա կայ ի մատրուն

նորա արդ): Յետոյ Օշին զեկեղեցին գմբէթաւոր՝ կից մատուռնն կարուցեալ, ի ՌՄԻԵ. (1776) թուին հայոց յանձնեցին անարժանութեանս ըզսուրբ վանս... Ողջ լերուք ըստ խնամօք բարձրելոյն եւ օրհնեալ ի սրբոյն Դանիէլի եւ ի մէնջ. ամէն: Գրեցաւ կոնդակս օրհնութեան ի ՌՄՁԷ. (1838) եւ Դեկտ. 25, ի Սուրբ Դանիէլի հրաշապայծառ վանսն Կեսարիոյ Մեծի». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 42:

բ. 1670 թ.՝ «Արդ, երես անկեալ պաղատիմ հանդիպողացդ... յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվերջին ստացող սուրբ գրոցս... որ ստացաւ զսայ եռափափաք սրտիւ եւ սերտ հաւատով, ի խնդրոյ քաջ Րաբունապետի Յովսէփ վարդապետին, որ ի Կեսարիոյ յղեաց թուղթ առ սիրելին իւր՝ մահդասի Զաքարիայ Ղալիֆային ի Կոստանդինուպօլիս՝ եւ խնդրեաց զսուրբ գիրքս վասն պակասութեան վանացս սուրբ Դանիէլին, եւ նա անտրտունջ եւ լի՛ սերտ սիրով, որոնեալ եւ խնդրեալ եգիտ զգիրքս զայս, եւ առեալ գնեաց իւր հալալ արդեամբքն, եւ գրել ետուր զպակասորդս՝ լի եւ անթերի եւ կատարեալ, եւ յղեաց ի մայրաքաղաքն Կեսարիայ, ի գեօղն Պալակասի ի վանսն Սուրբ Դանիէլին, յիշատակ իւր հոգւոյ... եւ եդ յիշատակ ի վանսն սուրբ Դանիէլի ի թվականիս ՌՃ. եւ Թ. եւ Ժ.աներորդի [1670], եւ Յուլիս ամսոյ Ա...». - տե՛ս Ցուցակ Ս. Կարապետի, էջ 78:

գ. 1804 թ.՝ «...Բանք ոսկիական կոչեցեալ գրքոյն հաւաքեալ եւ ծաղկաքաղ արարեալ ի մեղապարտ Մեսրոպ Աբեղայէ Կոստանդնուպոլսեցւոյ, ի թուին ՌՄԾԳ. (1804) ի շնորհազարդ վանս Սրբոյն Դանիէլի, որ ի Կեսարիա». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1904:

դ. 1804 թ.՝ «Գիրք որ կոչի հաւաքաբանականի աստուածաբառ ի բազմազանից սուրբ գրեանց... այժմ վերստին ընդօրինակեցաւ ի Դանիէլի վանս [1804] ձեռամբ Մեսրոպ մեղսակիր Աբեղայի յԻսկիւտարցւոյ, նախ ի վայելումն իմոյ անձին եւ ապա ընթերցասէր սիրելեացն իմոց բաւ է». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1904:

16* Տեղ. բառ., Ա/964. Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգում, Տարսիախ գիւղում: Վանքի եկեղեցին կոչւում է Ս. Աստուածածին, որի արեւմտեան դռան ճակատին կայ 1711 թ. հայերէն արձանագրութիւն: Գրականութեան մէջ երբեմն նոյնացւում է Տարսիախի Ս. Անդրէաս եկեղեցու հետ:

17* Գրքի մեր օրինակի էջ 76. «Արքունի ճարտարապետ Արապօղլին եւս Տարսիախցի Է. Գ. Բ. 1989»:

18* Տեղ. բառ., Ա/965. Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգում, Նիրզէ գիւղում, Ս. Կարապետ վանքից արլ: Ի. դ. սկզբներին դեռեւս կանգուն էին փոքրիկ եկեղեցին եւ արտաքին պարիսպները... Վանքի հիմնադրման ճշգրիտ ժամանակը յայտնի չէ, ըստ երեւոյթին կառուցուած պէտք է լինի ԺԳ. դ. առաջ, որովհետեւ 1206 թ. Ս. Կարապետ վանքում Գրիգոր գրիչը ընդօրինակել է մի Աւետարան եւ նուիրել Գրիգոր Նիւսացի վանքին: Ըստ վկայութիւնների վանքի աւերակներում յայտնաբերուել է 1205 թ. հայերէն արձանագրութիւն: Թիերի՝ Հ^մր 327, էջ 62, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

19* Յիշ. 1206 թ.՝ ա. «...Ի թուականիս Հայոց ՈԾԵ. (1206) յաւարտեցաւ, յունվար ամսոյ Գ. (3)... Յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԽտրպաշին, որ ստացաւ զսուրբ Աւետարանս եւ յետ յիշատակ ի վանս Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյն, որ է եղբայր սրբոյն Բարսեղայ հայրապետին: Արդ, մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սորին...». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 24:

բ. 1469 թ.՝ «Գրեցաւ այս ի թուաբերութեան Հայոց ՋԺԸ. (1469), ձեռամբ... Կիրակոսի սուտանուն եպիսկոպոսի Տրապիզոնեցոյ, ի գաւառիս Կեսարիոյ, ի գիւղս որ կոչի

Նիւսիա, ընդ հովանեաւ սուրբ հայրապետիս Գրիգորի, եղբաւր Բարսղի, եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ բնակեալ աստ կան... (յիշեցէք) նաեւ զվարպետն մեր զՅովանէս նախաշն Եզնկացի, որ եմք պանդուխտ յերկրիս այս...». - տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 295, լրիւ տարբերակը տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 452:

գ. 1478 թ.՝ «...ի թուականիս ՋԻԷ. (1478)... Աստուած ողորմի Օրթակօյցի Տէր Սարգսին եւ կողակցուն Ղոհմրուին հոգւոյն, եւ իւր որդի Տէր Գրիգոր Աբեղային հոգւոյն, որ ետ զԳանձատետրս ի դուռն Սուրբ Գրիգոր Նիւսացոյ վանիցն՝ յիշատակ, կենդանեաց եւ ննջեցելոց հոգոյն. յիշատակն աւրհնութեամբ եղիցի...». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 80, հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1847-8:

դ. 1481 թ.՝ «...Արդ, գրեցաւ Տարեգիրքս ի թուականիս... ՋԼ. (1481), ձեռամբ տէր Յովանէս Նաղաշին եւ աշակերտին իւրոյ Ստեփաննոս մեղաւք թաղձեալ ոգւոյն, ի գաւառս Կեսարիոյ, ի սուրբ ուխտս՝ որ է աթոռ սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի Նիւսացւոյն, եւ սուրբ Թէոդորոսի Զինաւորին, եւ սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետին, եւ սուրբ Ստեփաննոսի Նախավկային եւ Մեոկերիոսի Զինաւորին եւ այլ բազում ս. նշխարացս եւ մասանցս որ աստ կան հաւաքեալ». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 88, հմմտ. ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 19:

ե. 1484 թ.՝«...Ի թվականութեան Հայոց ՋԼԳ. (1484)։ Արդ, գրեցաւ սա եւ ծաղկեցաւ եւ ոսկով զարդարեցաւ ձեռամբ մեղաւոր եւ անարժան եւ փցուն եւ տխմար գրչի Յովհաննէս յանցաւորի, ի հռչակաւոր անապատս Ս. Գրիգոր Նիւսացոյն, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին եւ Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն եւ եղաւ յիշատակ ի Ս. Աստուածածինն...». - տե՛ս Ցուցակ Ս. Կարապետի, էջ 14։ Վերահրատ.՝ տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1848-9։ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 67։

զ. 1486 թ.՝«...Գրեցաւ եւ ծաղկեցաւ եւ ոսկւով զարդարեցաւ աստուածաբուղխ սբ. Աւետարանս... ի թվականիս հայոց ի յինն հարիւր ԼԵ. (1486) ի գաւառս Կեսարիայ Կապադովկիացւոց ի հռչակաւոր անապատիս սրբոյն Գրիգորի Նիւսացոյն ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին, եւ սրբոյն Ստեփաննոսի Ուլնեցւոյն եւ սրբոյն Մեոկեոիոսի զինաւորին եւ այլ բազմահաւաք սրբութեանցս...». - տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 91, հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1846-7:

է. 1491 թ.՝«...գրեցաւ ձեռնադրութեան գիրքս ձեռամբ Յովանիսի յանցաւորի ի գաւառս Կեսարիոյ, ի հռչակաւոր անապատս սրբոյն Գրիգորի Նիւսացոյն։ ...Եւ մեք վասն առաւել գեղեցկութեան գրեցաք սա ի թվ. ՋԽ. (1491) ի խնդրոյ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 181, հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1849:

[20]* Տեղ. բառ., Ա/634. Ս. Բարսամ, Ս. Պարսամ - Վանք Կեսարիայի շրջանում, Կեսարիա քաղաքից մոտ 16 կմ հր-արլ.։ Ծինութեան թուականն անյայտ է։ ԺԹ. դ. վերջերին կիսաւեր եւ ամայի էր։

[21]* Տեղ. բառ., Ա/186. Վանք Կեսարիայի շրջանում, «Աւետիք» կամ «Աղօթիկ» ձորի հս. լանջին։ Կառուցման եւ կործանման թթ. անյայտ են։

[22]* Տեղ. բառ. Դ/521. Ս. Սարգիս, Դերեվանք, Ս. Սարգսի վանք, Տէրէվանք, Տէրէվանքի Ս. Սարգիս - Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգի Դերեվանք գիւղից 2-3 կմ հր-արմ.։ Հիմնադրման ժամանակը յայտնի չէ։ Մինչեւ 1915 թ. գործում էր, 1915ից հետո հիմնայատակ աւերուեց։ Պահպանուել է 1623 թ. Խոջա Ջաֆարի այստեղ ընդօրինակուած Աւետարանը։ Թիերի՝ Հ[մր] 325. 4, էջ 62, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած։

[23]* Յիշ. ա. 1606 թ.՝«...Յարմարեալ չնչին բանքս ի թուականի յաբեդական տումարիս, որ ըստ Հայոց ՌԾԶ. (1606), սահմի ի ԺԲ. (12) եւ ըստ հռովմայեցւոց դեկտեմբեր

ամսոյն ԼԱ. (31), յաւուր չորեքշաբթի, յերկոտասաներորդ ժամուն, ի քաղաքն Կեսարիայ Կապադովկացոց, ի դուռն Ս. Սարգսի զաւրավարին». - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 210:

բ. 1608 թ.՝«...Արդ, անկ ելեալ կատարեցաւ սա ի մայրաքաղաքս Կապադովկիայ, որ է Կեսարիայ՝ Հայքն Առաջին, եւ միս անունն որ է Մաժակ. ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի եւ Սուրբ Աստուածածնի եւ այլ սրբոց, որ աստ կան ի օգնութիւն քրիստոնէից: Արդ, գրեցաւ սա ձեռամբ անարժան գրչի Յակոբ քարտուղարի եւ ի թվականութեանս մերում հայկազան տումարի ՌԾԷ. (1608) մայիս ամսոյ ԻԶ. (26), աւրն հինգշաբթի...». տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1865. հմմտ. ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 322:

գ. 1610 թ.՝«...Արդ, կապեցաւ վերջին կապս ի քաղաքն Կեսարիա, ի դուռն Ս. Աստուածածնին եւ Ս. Սարգսի զինաւորին եւ որդւոյն նորա Մարտիրոսին եւ Ս. Մեռկերիոս զինաւորին եւ այլ բազում հաւաքեալ սրբոցն, ի թվին ՌԾԹ. (1610), ձեռամբ...». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 54:

դ. Յիշ.՝ 1621 թ. - տե՛ս ծնթ. հմր 26*, էջ 205, վերահրատ.՝ ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 46:

ե. 1623 թ.՝«Զվերջին ստացաւղ սուրբ Աւետարանիս զխաւճա զԶաֆարն եւ զեղբայրն իւր՝ զՍաֆարն, եւ զհայրն իւրեանց՝ Նիկողայոսն, եւ զմայրն՝ Մուղալն, եւ այլ ամենայն ազգականաց իւրեանց. ստացան եւ եդին յիշատակ ի Կեսարիա, ի վանքն որ կոչի Սուրբ Սարգիսս... Գրեցաւ ի թուին ՌՀԲ. (1623)». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 25:

Յիշ. 1630 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 382:

Յիշ. 1644, 1655 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 152, 651:

զ. 1669 թ.՝ «Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զխօճա Ճաֆարի որդի զմահտեսի Ղարաղօչն յիշեսջիք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք, որ ետ վերստին նորոգել զսա ի հալալ արդեանց իւրոյ՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց, եւ որդոցն, եւ այլ ամենայն ննջեցելոց իւրոց, որ է յիշատակ ի դուռըն Սուրբ Սարգսա: ...Նորոգեցաւ ի թվին ՌՃԺԸ. (1669), Նոյեմբեր ամսոյ ԻԶ. (26), ի քաղաքս Կեսարիա, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մարկոս վարդապետի». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 26:

է. 1705 թ.՝«...Եւ արդ, գրեցաւ սա ի թվականիս մերում ՌՃԾԴ. (1705), Յունիս ամսոյ ԻԳ. (23), եւ ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ տեառն Նահապետ կաթողիկոսի ամենայն Հայոց, եւ ի հայրապետութեան այսմ նահանգի Կեսարիոյ Ամսն օղլու Յովէփ վարդապետի, ձեռամբ ամենամեղ եւ անարհեստ գրչի... ի գեղն Տումարզայ, գրեցաւ աստուածախօս Աւետարանս Սուրբ Սարգսայ զօրավարի անապատն եւ յայլ համօրէն, որ աստ հաւաքեալ սրբոցն». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 88:

ը. 1708 թ.՝«Այս ինչ է, զոր գրեցի ի քարտէզս այս, զի ես Թալասցի Տէր-Յովհաննէսս եկի ի Սարգսի վանքն ի սուրբ յԵրուսաղէմէ, որ էր թուականն Հայոց ՌՃԽԷ. (1698), եւ երբ ՌՃԾ. (1701) թիւն լցաւ, նա՛ Հաճի Աղան պատճառ եղեւ շինութեան Սուրբ Սարգսի եկեղեցիս՝ վերատեսութեամբ իմով անարժանութեանս: Եւ յետ որոյ բարձրացաւ թուականն Հայոց եւ եհաս ՌՃԾԷ. (1708) եւ...». - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 36:

թ. 1729 թ.՝ «Գրեցաւ գիրս ի Մաժակ քաղաքի գիւղն Հոռի վանք ի վանքն սրբոց զօրավարացն սրբոյն Գէորգայ եւ սրբոյն Սարգսի զինաւորին թուականութեան Հայոց ՌՃՀԸ. (1729)...». - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1891:

ժ. 1767 թ.՝ «Ես անարժան Գէորգ իբր կրօնաւորս... օրինակեցի ի ՌՄԺԶ. (1767) թուին ի հայրապետութեան տեառն Սիմէոնի կաթողիկոսի ի Կեսարիա ի վանքն սրբոյն

Սարգսի զօրավարին, որ եւ լերուք ողջ ամէն». - Ցուցակ Ս. Կարապետի, էջ 66. հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1901:

ժա. 1769 թ.՝«...իսկ գրութիւն մատենիս եղեւ ի ՌՄԺԸ. (1769) ի վանս սրբոյն Սարգսի, որ ի Կեսարիա, յիշողքդ զմեզ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր...» - Ցուցակ Ս. Կարապետի, էջ 42:

ժբ. 1834 թ.՝«...Եօթնաձայն փող Յիսուսեան՝ յօրինեալ... տես ծնթ. հմր 12*/ժբ:

[24]* Թիերի՝ Հ[մր] 325.2 էջ 61-2, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[25]* Յիշ. 1621 թ.՝ - «Եւ արդ, գրեցաւ սուրբ գիրքս ի թվականիս Հայոց Ռ. եւ Հ. (1621). ի մայրաքաղաքն Կեսարիա, որ է Մաժեակ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Բարսղի հայրապետին, եւ Սուրբ Սարգսի զաւրավարին, եւ սուրբ Մեռկեռիոսի զինաւորին...» - Ցուցակ Ս. Կարապետի, էջ 12, հմմտ. ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 46. տե՛ս նաեւ Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1866-7:

[26]* Տեղ. բառ., Բ/439. Ս. Թէոդորոս եւ Մերկերիոս - Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգում, Կեսարիա քաղաքից 3-4 կմ հեռու: Յիշատակւում է 1206 թ. գրուած մի յիշատակարանում որպէս «հռչակաւոր անապատ»: Ի. դ. սկզբներին աւերուած ու լքուած էր: Թիերի՝ Հ[մր] 325. 3, էջ 62, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերը աւերուած:

[27]* Վերահրատ. տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 24:

Յիշ. ա. 1481 թ.՝ - «...Արդ, գրեցաւ տարեգիրքս ի թուականիս ՋԼ. (1481) ձեռամբ Տէր Յովանէ Նաղաշին եւ աշակերտին իւրոյ Ստեփաննոս մեղաւք... ի գաւառս Կեսարիոյ ի սուրբ Ուխտս, որ է աթոռ Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, ընդ հովանեաւ Սբ. Գրիգորի Նիւսացւոյն, եւ Սբ. Թէոդորոսի զինաւորին եւ Սբ. Յակոբայ Մծբնայ հայրապետին, եւ Ս. Ստեփաննոսի Նախավկային եւ Մեռկերիոսի զինաւորին, եւ այլ բազում Ս. Նշխարացս եւ Մասանցս որ աստ կան հաւաքեալ» - Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 88:

բ. 1552 թ.՝ - «...Գրեցաւ եւ ծաղկեցաւ եւ զարդարեցաւ աստուածաբուխ սբ. Աւետարանս... ի թվականիս Հայոց ի յինն ՌԱ. (1552), ի գաւառս Կեսարիա Կապադովկացւոց ընդ հովանեաւ սբ. Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի Զաւրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ սրբոյն Մերկերիոսի զինաւորին, եւ այլ բազմահաւաք սրբութեանց...» - Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1853:

գ. 1561 թ.՝ - «...Գրեցաւ եւ ծաղկեցաւ եւ զարդարեցաւ աստուածաբուխ սուրբ Աւետարանս Քրիստոսի ձեռամբ բազմամեղ եւ փծուն, անիմաստ եւ անցաւոր գրչի Պաւղոսի Քաստողանցւոյ, ի թվականիս հայոց ի յինն ՌԱ. (1561), ի գաւառս Կեսարիա Կապադովկացւոց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի զաւրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ Սրբոյն Մերկերիոսի զինաւորին եւ այլ բազմահաւաք սրբութեանց, ի յեպիսկոպոսութեան այսմ նահանգիս Տէր-Յովանէս սրբասնեալ արքեպիսկոպոսի». տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 53:

դ. 1610 թ.՝ «...Արդ, կապեցաւ վերջին կապս ի քաղաքս Կեսարիա, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սարգսի զինաւորին եւ որդւոյն նորա Մարտիրոսին եւ Սուրբ Մերկերիոսի զինաւորին եւ այլ բազում հաւաքեալ սրբոցն, ի թվին ՌԾԹ. (1610), ձեռամբ եղկելի...» - Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 54:

ե. 1621 թ՝. - տե՛ս ծնթ. հմր 26*, էջ 205, (Ցուցակ Ս. Կարապետի, էջ 12, վերահրատ.՝ ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 46):

զ. 1644 թ՝., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 152:

է. 1718 թ.՝ - «Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղապարտ, անարժան եւ անպիտան եւ փցուն գրչիս Արութիւն քահանային յանցաւորի, ի թվականութեան Հայոց ՌՃԿԵ. (1718) ի քաղաքն Կեսարիոյ եւ ի գեօղն որ կոչի Եւգառա, ի դուռն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ սրբոյն Մեռկերիոսի զինաւորին եւ Սրբոյն Գէորգիա եւ Թէոդորոսի զօրավարացն...». - Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1885:

[28]* Տեղ. բառ., Ա/634-5. Ս. Բարսեղի վանք, «Այվասիլի», Ս. Բարսեղ Հայրապետի վանք - Աւերակ վանք Կեսարիայի շրջանում, Թոմարզայի Ս. Աստուածածին վանքից արլ.: Վաղուց աւերուած եւ ամայի է: ԺԹ. դ. նշմարւում էին միայն վանքի եկեղեցու հիմքերն ու կամարների մնացորդները եւ տեղացիները միայն աւանդութեամբ են ասում, թէ այդտեղ Ս. Բարսեղ վանք կար:

[29]* Տեղ. բառ., Բ/468. Թոմարզայի Ս. Աստուածածին, Ս. Աստուածածնի վանք, Ս. Խաչ, Զարխափան վանք, Տոմարզայի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգում, Թոմարզա գիւղաքաղաքի մօտ: Հիմնադրման ժամանակը յայտնի չէ: Ըստ աւանդութեան կառուցուել է Թադէոս առաքեալի կողմից: Ոմանք համարում են Թ. դ. կառոյց: Վանքի մասին ամենահին յիշատակութիւնը վերաբերում է 1516 թ., առաջին անգամ վանք է անուանւում 1619 թ.: Վանքի տեղում ըստ երեւոյթին եղել է աւելի հին մատուռ, երկու եկեղեցիները՝ Ս. Խաչ, Ս. Սարգիս կառուցուել են հետագայում: Շինութեան վրայ կան հայերէն հինգ արձանագրութիւններ: 1915 թ. լքւում եւ ամայանում է: Ըստ աւանդութեան այստեղ է թաղուած Գագիկ Բ. Բագրատունու թագաւորը: Թիերի՝ Հ^մր 331, էջ 63, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[30]* Տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 64-5: Թոմարզայի Ս. Աստուածածին վանքի առօրեայ կեանքի մի դրուագ է ներկայացնում կեսարացի անանուն թղթակցի յօդուածը՝ ,,Վանքերու օգուտը. Թոմարզայի Ս. Աստուածածին վանքը,, հրապարակուած՝ ,,Մանզումէի էֆքեար,, 1906, թիւ 1634:

[31]* Յիշ. ա. 1516 թ.՝ «...Կազմեցաւ յետոյ սուրբ Աւետարանս ձեռամբ Մովսէս քահանայիս, ի գիւղն որ կոչի Տումարզայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի թվ. հայոց ՋԿԵ. (1516) եւ ի հայրապետութեան տեառն Տէր-Յոհաննէս կաթուղիկոսի...» - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 64:

բ. 1576 թ.՝ «Արդ, գրեցաւ եւ աւարտեցաւ գանձարանս աստուածային մատենից ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ ոգոյ սուտանուն Գրիգոր Երիցու ի գիւղն Տոմարզձայ, ընդ հովանեաւ ամենաւրհնեալ տիրամաւրն Աստուածածնին եւ Սուրբ առաքելոյն Պետրոսի եւ Ս. Սարգսի զօրավարին եւ այլ ամենայն սրբոց որք աստ յիշատակին. ամէն: Ի թվականութեանս Հայոց ՌԻԵ. (1576)...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1857:

գ . 1579 թ.՝ «Զանարժան եւ զանպիտայն ծառայն Աստուծոյ՝ զկազմող սուրբ Աւետարանիս զմեղապարտ Մշեցի Աստուածատուր եպիսկոպոսն եւ զիւր ննջեցեալքն յիշեցէ՛ք առ Քրիստոս. թվին ՌԻԸ. (1579), Յուլիս ամսոյ ԻԶ. (26)՝ Վարդավառի կիրակին վճարեցաւ գիւղաքաղաքն ի Տումարզայ, առ ոտս Սուրբ Աստուածածնին, յիշատակ Տէր-Վարդանին եւ իւր ննջեցելոցն...» - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 64, հմմտ. Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1857:

դ. 1582 թ.՝ «Գրել ի թվ. ՌԼԱ. (1582) ի գիւղաքաղաքն ի Տոմարզձայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի եւ Ս. Պետրոսի առաքելոյ...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1858:

ե. 1588 թ.՝ «Արդ, գրեցաւ Տարեգիրքս ի թվականի Հայոց ՌԼԷ. (1588) ձեռամբ... ի գիւղս Տումարզձայ ի դուռն Սբ. Աստուածածնին եւ Սբ. Առաքելոյն Պետրոսի եւ Պաւղոսի եւ Սբ. Սարգսի արագահաս զաւրավարի եւ համաւրէն աստ հաւաքեալ սրբոց» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1858:

զ. 1621 թ.՝ «...ի Կեսարիա եկայ, եւ անդ գտի, զոր որոնեաց անձն իմ, մի ոմն ի բանասիրէ Սաւընցի Ազարիեա վերակոցեցելոյ: Բայց խիստ էր եղծեալ յօրինակն: Ապաւինեցա Աստուած, մտի ի քննութիւն ՌԿԸ. (1619) թվականի, ի Տօմարզու վանքն Ս. Աստուածածին եւ աւարտեցի զսայ ՌՀ. (1621) թվին, Պօղտանայ յերկիրն ի Սէջով Ս. Օգսէնդ վանքն» - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 30-1:

է. 1630 թ.՝ «...Արդ, եղեւ զրաւ գրութեան սորա ի թուականիս Հայոց ՌՀԹ. (1630) ի գաւառս Կեսարու, ի գիւղս Տումարզայ՝ ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի եւ այլ սրբոցս որք աստ կան ի պարծանս հաւատացելոց...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1868:

ը. 1638 թ.՝ «...Աստանաւր անկեալ աւարտեցաւ եղանակաւոր տաոս, որ կոչի Ծա-րակնոց՝ յաստուածապահ կղզիս, ի գաւառն Կեսարու Կապադովկացւոց, ի գեաւղն Տու-մարզա, ընդ հովանեաւ ի դուռն Սուրբ Աստուածածնայ եւ Պետրոս եւ Պաւղոյս եկե-ղեցւոյս, եւ այլ ամենայն բազմահաւագ սրբոցս որ աստ կան, ի պարծանս հաւատա-ցելոց, ի թվին ՌՁԷ. (1638)...» - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 27:

թ-ժդ. 1621, 1629, 1630, 1632, 1633, 1640 թթ.՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 46, 361, 382, 398, 499, 515, 817:

ժե. 1654 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 629:

ժզ. 1661 թ.՝ «...Արդ, եղեւ զըրաւ գրչութեան սորա ի գիւղն Տումարզա, ի դուռն Սուրբ Աստուածածնայ եւ Սուրբ Պետրոսի եւ Պաւղոս եկեղեցոյս: Եւ արդ, գրեցաւ սա ի թուականիս հայկազեան տումարի ՌՃԺ. (1661) եւ ի հայրապետութեան Սուրբ Էջ-միածնայ տեառն Յակոբ կաթուղիկոսի, եւ ի յառաջնորդութեան յայսմ գաւառի Առաքել եպիսկոպոսի» - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 94:

ժէ. 1670 թ.՝ «...Արդ, կատարեցաւ եւ կազմեցաւ Սբ. Առաքելադիր եւ հայրապե-տադիր կանոնքս, ի թվին ՌՃԺԹ. (1670)... ի մայրաքաղաքս Կեսարիայ, ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնայ եւ Սբ. Սարգսայ, ձեռամբ...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1875:

ժը. 1677 թ.՝ «...գրեցաւ հոգեկիր քնարս Դաւթայ մարգարէի ի ստոյգ եւ ընտիր օրինակէ Գառնեցւոյ ի թվին ՌՃԻԶ. (1677)... ի մայրաքաղաքս Կեսարիա Կապադով-կացոց, ի յաստուածաբնակ մէնաստանս Սուրբ Աստուածածնայ եւ Սուրբ Սարգսայ...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1877:

ժթ. 1805 թ.՝ «Իսկ այժմ վերստին օրինակեցաւ յամի փկչին 1805, ի Թօմարզա, մերձ ի հրաշալի վանս Առաքելաշէն Չարխափան Սբ. Աստուածածնի, ձեռամբ նորապսակ առաջնորդի նորին Տեառն Մեսրոպայ մեղսակիր վարդապետի Պոլսեցւոյ» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1905:

[32]* Բիւզանդիոն, 1901, թիւ 1360, 22/Գ.-4/Դ., էջ 1՝ Պալեանը գրել է. «Մինչեւ ցայս վայր նշանակուած 15 վանքերէն, ինչպէս տեսանք, ոմանք ի վաղուց հանգած, ոմանք ամայացած եւ ոմանք ալ ուխտատեղի եղած են: Կեսարիոյ մէջ շէն վանք առ այժմ միայն չորս են, որոց վրայ յաջորդիւ»:

[33]* Տեղ. բառ., Դ/10. Ս. Նշան, Արեգակ Ս. Նշան, Ս. Խաչ, Ս. Խաչի վանք, Յոհան Ոսկեբերանի վանք, Ս. Յովհան Ոսկեբերան, Ս. Նշանի վանք, Ոսկեբերանի վանք, Սեբաստիայի Ս. Նշան: Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Թոքատի գաւառի Պիզենի գիւղում: Աւերուել ու կողոպտուել է 1915 թ.: Թիերի՝ Հ^մր 402, էջ 75, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուա՞ծ:

[34]* Յիշ. ա. 1021 թ.՝ «Յամի Փրկչին 1021, Հայոց թվին ՆՀ. ամին՝ աստուածընկալ սուրբ Նշանս այս ի ժամանակս... Իսկ յորժամ եկն Դաւիթ առ հայր իւր Սենեքերիմ, ոչ սակաւ ուրախութիւն արար արքային. իսկոյն էառ զսուրբ Նշանն Վարագայ եւ ընդ նմին

բազում գործիքն Քրիստոսի եւ մասունք սրբոց՝ եկն եհաս ի Սեբաստիա, զսուրբ Նշանն կանգնեաց անդ...» - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 213-4:

բ. 1058 թ.՝ «...Եւ յոյժ ուրախացաւ թագաւորն ի տեսանելն զկաթուղիկոսն տէր Պետրոսն: Եւ կեցեալ անդ սուրբ հայրապետն մեր ի Կոստանդինուպօլիս ամս Դ. եւ օր ըստ օրէ յաւելոյր պատիւ կաթողիկոսին ի կայսերէն: Եւ ապա յետ Դ. ամացն մեծարանօք եւ պատուով արձակեաց զնա երթալ յաթոռն իւր յԱնի: Եւ նա ոչ ժամանեաց գալ ի յԱնի, զի անտիրացեալ էր ի թագաւորաց: Այլ եկեալ ի Սեբաստիա եւ մնաց անդէն առ որդիսն Սենեքարիմայ Արծրունոյ: Եւ անդէն վախճանեալ եդաւ ի վանս սուրբ Նշանին, ի թուականիս մերոյ ԵԾ. եւ Է. (1058) ամին, կեցեալ ամս ԽԲ. յաթոռ հայրապետական». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 419:

գ. 1173 թ.՝ «...Աստուածային եւ ցանկալի բանից սուրբ առաքելոյն Պաւղոսի՝ փափագաւղ եղեւ սրբասէր վարդապետն Գրիգորէս եւ սիրելի եղբայր նորին Խաչիկ՝ պատուական քահանայք եւ եղբաւրորդիք սրբազան եպիսկոպոսի տեառն Գրիգորի, Սեբաստիոյ նահանգին առաջնորդի եւ սրբոյ Նշանին սպասաւորի, եւ ետուն գրել զսա ի վայելումն իւրեանց եւ ի յիշատակ հոգւոյ տեառն Գրիգորի, հոգեւոր հաւրն իւրեանց: Եւ գրեցաւ սա ի սրբազան ուխտս Դրազարկիս, որ կոչի Աւագ վանք, ձեռամբ Թորոսի՝ անիմաստ կրաւնաւորի եւ սուտ գրչի, ի թուականիս ի ՈԻԲ. (1173), ի հայրապետութեանն տեառն Ներսիսի եւ առաջնորդութեան այսր անապատի տեառն Սամուէլի» - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 511-2:

դ. 1333 թ.՝ «... (Ճառընտիր, Հայրապետ կրօնաւոր) ի գերահռչակ սուրբ ուխտս եւ ի հրեշտակաբնակ սուրբ մենաստանս, որ բարձրակառոյց հաստատութեամբ շինեալ է արքային Հայոց Դաւթայ յանուն աստուածունակ եւ լուսակիր սուրբ Նշանին Քրիստոսի եւ սրբոյն Գէորգայ քաջ զօրականին Քրիստոսի մերձ ի մայրաքաղաքս Սեբաստիայ, ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ, եւ ի թագաւորութեան Լեւոնի, եւ յառաջնորդութեան մերոյ նահանգիս եւ սուրբ ուխտիս սրբազան մեծ արքեպիսկոպոսի տէր Սիմէոնի» - տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 257:

ե. 1350 թ.՝ «...Ի վայելումն Աւետիս քահանային... զոր ընկալցիս աստուածորդի... զճգնութիւն սուրբ Գրիգորի... Հայոց ազգի Լուսաւորչի, տէր Սիմէովն հայրապետի, որոյ գաւառս Սեբաստի, աթոռ սորա մենաստանի, եւ սուրբ Նշան եւ սուրբ Գէորգ զօրավարի... Գրեցաւ գիրքս աստուածային ի թուականութիւնս Հայոց ՉՂԹ. (1350)...». տե՛ս ԺԴ. դ. յիշ. էջ 386:

զ. 1487 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի թւականիս Հայոց ՋԼԶ. (1487), ի բազում տեղիս՝ ի յերկիրս Սեբաստիոյ, ի գեաւղս որ կոչի Կովտուն, ի դուռն սուրբ Աստուածածնիս, եւ ի վանս սուրբ Նշանիս, եւ ի քաղաքն Սեբաստիա, ի դուռն սուրբ Լուսաւորչին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 96, նաեւ՝ էջ 99:

է. 1492 թ.՝ «...Գրեցաւ եւ աւարտեցաւ Գանձարանս աստուածային մատենից ձեռամբ յոգնամեղ ...Յովանէս գրչի, ի գաւառս Սեբաստիոյ, ի դրանս սուրբ Նշանիս, ի թվականութեանս Հայոց ՋԽԱ. (1492)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 189:

ը. 1616 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 594:

Յիշ. 1621, 1625, 1636, 1640 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 8, 198, 679, 795:

Յիշ. 1643, 1658 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 114, 836:

Ս. Նշան վանքի պատմութեան կարեւոր աղբիւր է ԺԹ. դարի նշանաւոր հոգեւոր գործիչ, 1809-1829 թթ. Սեբաստիայի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս Սեբաստացու գրած Պատմութիւնը, որը ժամանակագրօրէն ընդգրկում է ԺԱ-ԺԸ. դարերը եւ որի լրիւ վերնագիրն է՝ «Յաղագս երեւելի ինչ ինչ անցիցն, որք անցին ընդ հրաշափառ վանս, որ

յանուն արփիափայլ սրբոյ Նշանի Տեառն կառուցեալ կայ ի մայրաքաղաքս Սեբաստիա, սկսեալ ի հիմնարկութենէ եւ ի շինութենէ անտի սրբոյ մենաստանիս ի Յոհաննէսէ, այսինքն է ի Սենեքարիմ բարեպաշտ արքայէն Արծրունեաց, յամի տեառն 1021 եւ Հայոց թուին ՆՀ.»: Այս աշխատանքը, որ ոչ միայն Ս. Նշան վանքի պատմութիւնն է եւ յայտնի է իրաւամբ որպէս «Պատմութիւն Սեբաստիոյ», մասնակիօրէն հրատարակել է Գիւտ աւագ քահանայ Աղանեանցը իր «Դիւան հայոց պատմութեան» Ժ. հատորում, 1912 թ., առանց խորագրի (էջ ԾԱ-ԾԲ., բնագիրը՝ էջ 383-438): Պատմութեան վերջին՝ գիտական հրատարակութիւնն արել է Բ. Չուգասզեանը. 1974 թ.. տե՛ս Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ. Աշխատասիրութեամբ Բ. Չուգասզեանի, Երեւան, 1974 (առաջաբան, համեմատական բնագիր, յաւելուածներ, ծանօթագրութիւններ եւ բառարաններ):

Վանքում պահպանուող ձեռագրերի մէջ եղել են նաեւ Ս. Նշան վանքի եւ նրա առաջնորդների, ինչպէս նաեւ Սեբաստիայի միւս վանքերի եւ սեբաստահայերի պատմութեան համար կարեւոր նիւթեր պարունակող ձեռագրեր՝ «Վարք եւ պատմութիւն Առաքել վարդապետի առաջնորդին Սեբաստիոյ (1722-47), Օրագրութիւն Գրիգոր արքեպ. Գաղատացւոյ, առաջնորդին Հայոց Սեբաստիոյ, Պատմաբանութիւն Ս. Նշանի վանուց եւ միաբանութեան, Ցանկ-տետրակ՝ Կարապետ եպս-ի օրով քահանայից, ժողովրդոց, դպրաց եւլն, Հաշուեգիրք եւ այլն Պետրոս եպս-ի օրով Ս. Նշանի վանատան, Ցուցակ քահանայից, ծխական ժողովրդոց, պսակելոց եւ նշանելոց Սեբաստիոյ» եւ այլն:

Սեբաստիայի վերջին առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեանը 1908-13 թթ. ընթացքում հասցրել է կազմել Ս. Նշան, Ս. Հրեշտակապետ վանքերի, Սեբաստիա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցում պահուող եւ Գուշակեանի նախորդ առաջնորդ-վանահայր Պետրոս եպս. Թահմիզճեանի՝ ընդհանուր հաշուով՝ 283 ձեռագրերի ցուցակը: Նա եւս, Պալեանի նման, այդ նկարագրութիւններն ուղարկել է «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւն, որի խմբագիր եւ Ցուցակի հրատարակիչ՝ Ն. Ակինեանը գրում է. «Այս ձեռագիրները այժմ գոյութիւն չունին Ս. Նշանի վանքին մէջ: Անոնք 1915ին Սեբաստիոյ հայ բնակչութեան տարագրութեան ժամանակ ցրուեցան կամ ի սպառ ոչնչացան: Ինչ ինչ բեկորներ միայն, ինչպէս կը հաւաստէ ինձ Պր. Սիրունի, հասած են Կ. Պոլիս, զորոնք Հայ Արուեստի Տունը ձեռք բերած է մեծագին եւ այսպէս փրկած կորուստէն: Անշուշտ մաս մ՚ալ անցած են օտարներու ձեռքեր, որոնք երեւան պիտի գան ապագային: Ձեռնարկելով հրատարակել այս ցուցակը, մեր փափագն է ներկայացնել գիտութեան ձեռագիրներուս գոնէ երբեմնի գոյութիւնը» - տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Առաջաբան Ն. Ակինեանի, Վիեննա, 1961, էջ բ:

Հայկ Պէրպէրեանը, յղելով Յովհաննէս Սեբաստացուն, Սենեքերիմին վերագրում է միայն Ս. Նշան եկեղեցու, այլ ո՛չ թէ վանքի կառուցումը, որոնք էլ յաճախ շփոթւում էին: Այդ եկեղեցուն կից էին աւելի վաղ կառուցուած երկու՝ Ս. Կարապետ եւ Ս. Աստուածածին եկեղեցիները: Սակայն նոր եկեղեցին լինելով աւելի գեղեցիկ, շքեղ ու փառաւոր, հետագայում էլ աւելի ընդարձակուելով եւ բարեկարգուելով Սենեքերիմի որդիների կողմից, ժամանակի ընթացքում իր անունով կոչուեց վանական ամբողջ համալիրը. տե՛ս Հայկ Պէրպէրեան, Սեբաստիոյ Ս. Նշան վանքին հիմնադիրը.- «Սիոն», 1957, էջ 59-62:

35* Տեղ. բառ., Ա/248-9. Անապատ - Մենաստան Փոքր Հայքում, Սեբաստիայից հս., Ս. Նշան վանքի մօտ, Դաւրա գիւղից ոչ հեռու: Եկեղեցին՝ Ս. Յակոբ (1201 թ.): 1890ական թթ. եկեղեցին վերանորոգուել ու նուիրուել է Չարխափան Ս. Աստուածածին

վանքին: 1900ական թթ. կարճ ժամանակով դարձուել է որբանոց: 1915 թ. աւերուել ու ամայացել է: Թիերի՝ Հմր 405, էջ 75-6, վիճակ՝ անյայտ:

36* Յիշ-ս չկայ ԺԳ. դ. յիշ.ների ճատորի մէջ:

Յիշ. ա. 1499 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ... գրչիս՝ սուտանուն Խաչատուր աբեղիս, որ զանուն ունիմ, բայց ի գործոցն յոյժ թափուր եւ ճեռի, ի թվականիս մերոյ ՋԽԸ. (1499), ի քաղաքս Սեբաստիա, ի վանս որ կոչի Անապատ ի դրունս Սուրբ Աստուածածնին, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Սողոմոնին եւ տեառն Խաչատուրին, եւ այլ միաբան եղբարցս» - տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 289:

բ. 1611 թ.՝ «Վերջին կազմող երգարանիս ի Վանքն ի յԱնապատին, ի դուռն Ս. Աստուածածնին, ձեռամբ Սարգիս երիցուս, ի թվին ՌԿ. (1611)» - տե՛ս Հ. Ոսկեան, Սեբաստիայի վանքերը, էջ 163, վերահրատ.՝ տե՛ս ԺԷ դ. յիշ., Ա., էջ 456:

գ-դ. 1626, 1640 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 233, 795:

ե. 1643 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 114:

37* Տեղ. բառ., Գ/313. Վանք պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Դաւրա գիւղի ծայրում: Աւերուել է 1895 եւ 1915 թթ.:

38* Տեղ. բառ., Գ/444. Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի Հողդար թաղում, մի բարձրադիր ժայռի վրայ, թուրքերը դարձրել են մզկիթ: Թիերի՝ Հմր 404, էջ 75, վիճակ՝ վերածուած է մզկիթի:

39* Յիշ. 1643 թ.՝ «Եւ գրեցաւ ի Սեբաստիա, ընդ հովանեաւ Ս. Նշանին, Ս. Աստուածածնին, Ս. Կարապետին եւ Անապատի Ս. Աստուածածնին, եւ Խնդրակատար Ս. Աստուածածնին, եւ Ս. Յովանիսին, եւ միւս Խնդրակատարին, եւ Ս. Հրեշտակապետացն, եւ Սրբոյն Գէորգեայ, այսինքն՝ վանորէից եւ քաղաքի Ս. Քառասնից, Ս. Աստուածածնին, եւ Ս. Սարգսին, թվին ՌՂԲ. (1643)» - տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 114:

40* Տեղ. բառ., Ե/305. Քառասնից վանք, Ս. Քառասնից վանք, Ս. Քառասուն Մանկանց եկեղեցի, Քառասուն Մանկունք - Վանք պատմական Փոքր Հայքում: Թիերի՝ Հմր 401, էջ 75, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

41* Պէտք է լինի՝ զտէրն, վրիպումը Տաշեանի ցուցակինն է:

42* Յիշ. չկայ ԺԴ. դ. յիշ. ճատորի մէջ: Յիշատակարանի թերթային տարբերակը, որ գրաքննութեան պատճառով թերի ու աղճատուած է, ունի հետեւեալ տեսքը. «Թվին ՊԼԳ..., Ստեփաննոս եպիսկոպոսն վախճանեցաւ եւ Քառասնից վանքն փակեցաւ». վերահրատ. տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատ., էջ 207:

43* Այս վանքն աւերուած չի մնացել, ըստ Հ. Ոսկեանի հրատարակած՝ 1555, 1568, 1576, 1579 թթ. վերաբերող յիշատակարանների (տե՛ս Սեբաստ., էջ 78) վկայութիւնների՝ ԺԶ. դարի երկրորդ կեսին վերաշինուել է, եւ, թերեւս, կարելի է մտածել, որ մինչեւ ԺԸ. դարի կէսերը եղել է շէն եւ գործող վանք:

Յիշ. ա. 1313 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց Ձ.երրորդի Կ.երրորդի եւ յերկրորդի (1313), ի հռյակապ եւ յականաւոր մայրաքաղաքս Սեբաստիոյ, առ դուրս սրբոյ տաճարիս սուրբ Փրկիչ կոչեցելոյ, որ է հանդէպ վկայարանին գերահռչակ եւ սխրագործ արեամբ ներկեալ վկայիցն սրբոց Քառասնիցն՝ մեծի Կաթողիկէ եկեղեցւոյն, որ զանձն աստուածային՝ նշխարք սրբոցն անդ կան ի պահեստի» - տե՛ս ԺԴ. դ. յիշ. էջ 96:

բ. 1621 թ.՝ «Գրեցաւ մեկնիչս սբ. Պատարագին թվականին Հայոց ՌՀ. (1621), յունիս ամսոյ ԻԵ. (25), ձեռամբ ումեմն անարժան եւ անյիշելի, լոկ եւ սոսկ Ստեփանոս չերիցու, ի քաղաքս Թօխաթ, որ է միջոց Սեբաստիոյ, ուր Ս. Քառասունքն կատարեցան,

եւ... վարդապետն Յովհաննէս յետ աքսորանացն աստ եկեալ վախճանեցաւ, եւ այլ բազմահաւաք սրբոցն, ի թաղս Ս. Քառասունք» - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 9:

գ. 1630 թ.՝ «Արդ, գրեցաւ Աղաւթամատոյցս ի Սեբաստիեայ, ի դուռն Ս. Աստուածածնին եւ Ս. Քառասնիցն, ընդ հովանեաւ սրբոցն, որք աստ կան հաւաքեալ: Գրեցաւ ի թվիս ՌՀԹ. (1630)» - տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 384:

դ. 1643 թ.՝ - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 114:

[44]* Թիերի՝ Հմր 400, էջ 75, վիճակ՝ վերածուած է մզկիթի:

[45]* «...Այդ թուականէն [1592 թ.] յետոյ Ս. Լուսաւորչի յիշատակութիւն ինձ անծանօթ է եւ այն շատ բնական, վասն զի՝ «Զեկեղեցին սուրբ Լուսաւորչին առին ի ձեռաց մերոց եւ արարին իւրեանց մզկիթ». տես՝ Հ. Ոսկ., Սեբաստիայի վանքերը, Ա., Սեբաստիա քաղաքի վանքերը, Վիեննա, 1946, էջ 13-4:

Յիշ. ա. 1211 թ.՝ «...Յամի վեցհարիւրորդ վաթսըներորդի (1211) թուականիս եղեւ աւարտ աստուածեան մատենիս սուրբ Աւետարանիս ի խնդրոյ... Արդ, գրեցաւ սա յանուն Աստուածածնին եւ Սուրբ Գրիգորի Լուսաւորչին, որ կոչի վանք Փուրընդիայի, ի հայրապետութիւն Գրիգորի եւ եղբաւր իւրոյ Վրթանիսի սուրբ եւ ընտրեալ կրաւնաւորաց՝ ի վայելումն իւրեանց եւ միաբանաց եւ յիշատակ այնոցիկ, որք աշխատութեամբ եւ արդիւնաւորութեամբ ազնական են լեալ» - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 752-3. ըստ Գ. Յովսէփեանի՝ սա Սեբաստիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքն է (տե՛ս տեղանունների ցանկ, էջ 1103): Վերահրատարակութիւն՝ տես ԺԳ դ. յիշ., էջ 74-5:

բ. 1651 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 459:

[46]* Տեղ. բառ., Բ/744-5. Խոնըրկտուր, Խոնըրկտուր Ս. Աստուածածին, Խոնըրկտուրի վանք, Սուրբ Խնդրակատար - Վանք, մենաստան պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում... 1635 թ. այստեղ օրինակուել է Աստուածաշունչ: ԺԹ. դ. սկզբին աւերակ էր, կանգուն էր միայն վանքի քարաշէն տաճարը: 1915 թ. կողոպտուել ու աւերուել է: Թիերի՝ Հմր 406, էջ 76, վիճակ՝ անյայտ:

[47]* Յիշ.՝ 1643 թ. «Զոր եւ եռափափագ սրտիւ եւ յաւժար կամաւք ետ աւրինակել եւ գրել բարեպաշտն... Եւ գրեցաւ ի Սեբաստիա, ընդ հովանեաւ Ս. Նշանին, Ս. Աստուածածնին, Ս. Կարապետին եւ Անապատի Ս. Աստուածածնին, եւ Խնդրակատար Ս. Աստուածածնին, եւ Ս. Յովանիսին, եւ միւս Խնդրակատարին, եւ Ս. Հրեշտակապետացն, եւ Սրբոյն Գէորգեայ, այսինքն վանորէից եւ քաղաքի Ս. Քառասնից, Ս. Աստուածածնին եւ Ս. Սարգսին, թվին ՌՂԲ. (1643)». տես ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 113-4:

Յիշ. 1649 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 366:

[48]* Թիերի՝ Հմր 408, էջ 76, վիճակ՝ անյայտ:

[49]* Տեղ. բառ., Գ/462. Յաղթու Ս. Հրեշտակապետի վանք, Ս. Հրեշտակապետ, Ս. Հրեշտակապետաց վանք - Վանք, ուխտավայր պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Յաղթ գիւղի մօտ: Ունէր երեք տաճար՝ Ս. Հրեշտակապետ, Ս. Կարապետ, Ս. Աստուածածին: Յիշատակւում է 1176 թ.-ից: Ունի հարուստ պատմութիւն: Գործել է մինչեւ 1915 թ.: Թիերի՝ Հմր 419, էջ 78, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[50]* Յիշ. ա. 1453 թ.՝ «Ի թուականիս Հայոց յինն հարիւր եւ յԲ. (1453), ի դառն եւ դժնեայ ժամանակիս, յորում տարաբերեալ ծփիմք պանդխտութեամբ, պատահեալ մեր ի գաւառս Սեբաստիոյ, ի սուրբ անապատս սրբոյ Հրեշտակապետաց ես... տեսեալ զաստուածաշունչ գիրս զայս հնացեալ եւ անփոյթ ընկեալ. եւ կազմել ետու աշակերտին իմոյ Կիւրեղ...» - տես ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 37-8:

բ. 1621 թ.՝ «...Արդ, գրեցաւ սբ. Մաշտոցս ի թուայքերութեանս Հայոց ՌԿ. (1621), ձեռամբ յոգնամեղ եւ եղկելի սուտանուն Ցաւետիս անարժանիս, ի գաւառն Սեբաստիու, ի գիւղն որ կոչի Աղտքըն, ի դուռն Ս. Կարապետոյ եւ Հրեշտակապետին, ի յառաջնորդութեան տէր Մելքիսէթ վարդապետին. ամէն» - տես՝ ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 37:

գ-դ. 1619, 1620 թթ., տես՝ ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 712, 725:

ե-զ. 1638, 1640 թթ., տես՝ ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 753, 795:

է-ժգ. 1643, 1646, 1648, 1649, 1651, 1652, 1659 թթ., տես՝ ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 114, 205, 324, 375, 464, 519, 853, 870:

51* Տեղ. բառ., Բ/383. Ս. Թագւոր, Թագւորի վանք, Վասլի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Զառա գք-ի մօտ, Վասիլի կամ Վասլի գիւղում: Ունեցել է 7 խորաններով եկեղեցի: Վերանորոգուել է 1889 թ.: Ի. դ. սկզբներին աւերուել ու լքուել է:

52* Յիշ. 1223 թ.՝ «Արդ, եղեւ զրաւ գրութեան սորա ի թուականիս Հայոց ի ՈՀԲ. (1223), ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամաւրն, յանապատիս Թագւորի վանք, ընդ հովանեաւ Մամեսդիոյ քաղաքին, ի թագաւորութեանն Հայոց մեծաց...» - տե՛ս Գ. Յովսէփ., Յիշ.-ք, էջ 825, հմմտ. ԺԳ. դ. յիշ., էջ 135:

53* Տեղ. բառ., Բ/84. Դէւէքսէի Ս. Գէորգ, Ս. Գէորգ, Դայոցայի վանք, Դէւէքսէի վանք, Դեւօձկայի Ս. Գէորգ, Դիւօծի վանք, Խօջասարի Ս. Գէորգ, Տայոցայի վանք, Տէվէրէկի Ս. Գէորգ, Տէւէքսէի վանք, Տեւօծի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Դէւէքսէ գիւղում: Առաջին յիշատակութիւնը վերաբերում է 1350 թ.: ԺԹ. դ. վերջերին վանքը աւերուած ու լքուած էր:

54* Յիշ. ա. 1533 թ.՝ «...Ի թվին ՋՁԲ. (1533) զՏեւոցու վանացն աբեղայն պյրեցին» - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 208:

բ. 1636 թ.՝ «...Արդ, եղեւ սկիզբն գրոյս թուին ՌՁԵ. (1636)... եւ կատարումն սբ. գրոյս եղեւ թուին ՌՁԹ. (1640). եւ եդաւ կամաւք ամենայն ժողովրդեանն յիշատակ ի դուռն նորաշէն Ս. Սարգիս եկեղեցւոյ, եւ ի հայրապետութեան եւ ի կաթողիկոսութեան տէր Փիլիպպոսի ի սբ. աթոռն Էջմիածնայ, եւ տէր Սիմէոն կաթուղիկոսն ի Կիլիկիայ, եւ յաւուրս եպիսկոպոսացն՝ Անդրէաս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Նշանի, եւ Յովհաննէս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Անապատի, եւ Նիկողոս եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Հրեշտակապետաց, եւ Մկրտիչ եպիսկոպոսի, որ յաթոռ Ս. Գէորգեայ [Տեւէկսէյու վանից] եւ ի հայրապետութեան աշակերտիս մերոյ Ալեքսիանոս երիցու ի դուռն Խնդրակատար Ս. Աստուածածնին». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 795:

գ. 1643 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 114:

55* Պալեանի ունեցած 12ի փոխարէն Հ. Ոսկեանը թուարկել է Սեբաստիայի 15 անուն վանք (տե՛ս Հ. Հ. Ոսկեան, Սեբաստիայի վանքերը, Ա. մաս, Սեբաստիա քաղաքի վանքերը, Վիեննա, 1946, 79 էջ), սակայն պակաս երեք՝ Ս. Աթանագինէ, Ս. Թորոս եւ Ս. Նիկողայոս վանքերը Պալեանի ուշադրութիւնից չեն վրիպել, այլ արտացոլուած են ծանօթագրութիւնների մէջ:

56* Տեղ. բառ., Գ/201. Ս. Կարապետի վանք, հ. 3, էջ 22 - Տե՛ս Կոմանայի Ս. Կարապետ, Ս. Կարապետ Կոմանայի վանք, Կոմանայ Ս. Կարապետ - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, նախկին Կոմանա քաղաքի մօտ: Թիերի՝ Հ^{մր} 330, էջ 63, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

57* Տեղ. բառ., Բ/750. Խնձորի Ս. Աստուածածին, Խնձորի վանք - Վանք պատմական Փոքր Հայքի Ծամնդաւ գաւառում: Աւերակները գտնւում են Սեբաստիայի նահանգի Ազիզիէ գաւառակի Սվղըն գիւղում: 1562 թ. մի յիշատակարանից իմացւում է, որ

գտնւում էր համանուն գիւղում եւ կանգուն էր: Աւերակների մնացորդները մինչեւ Ի. դ. սկիզբները նշմարւում էին: Եղել է գրչութեան կենտրոն: Թիերի՝ Հմր 328, էջ 62, վիճակ՝ անյայտ:

58* Յիշ. 1652 թ.՝ «Յամի ՌԺԱ. (1562) թուականիս Հայոց... Արդ, գրեցաւ ի յերկիրս Գամրաց ի գիւղս Խնծորի, ի դուռն Սբ. Աստուածածնին... ի յառաջնորդութեան Սբ. ուխտին Տէր Յակոբ եպ.ին ի ձեռութեան դառն ժամանակին...» - տե՛ս Ալպ., Կեսարիա, Բ., էջ 1855:

59* Տեղ. բառ. Դ/335. Պիզու վանք, Բիզու վանք, Ս. Խաչ Պիզու վանք, Պիզառու Ս. Խաչ, Պիզառու Ս. Նշան, Պիծառու Ս. Խաչ - Վանք Փոքր Հայքի Պիզու քաղաքում, որը տեղադրում են Սեբաստիայի նահանգի Կեսարիայի շրջանում, Արգէոս լ-ն մօտակայքում: ...1663 թ. առաջ գրուած մի ձեռագրում յիշատակուած Պիզառու Ս. Նշան կամ Ս. Խաչ վանքը նոյնացնում են Պ. վ.-ի հետ, որը ԺՁ. դ. դեռեւս կանգուն եւ գործող վանք էր: Թիերի՝ Հմր 1008, էջ 178, վիճակ՝ անյայտ:

60* Տեղ. բառ., Գ/440. Ս. Յովակիմ Աննա, Ս. Յովակիմ եւ Աննա, Յովակիմի եւ Աննայի վանք, Ս. Յովակիմ Մայրավանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Եւդոկիա քաղաքի շրջակայքում: Մինչեւ ԺԹ. դ. կէսերը գործում էր, իսկ յետոյ լքուել է: Թիերի՝ Հմր 431, էջ 80, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

61* Յիշ. 1644, 1651 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 138, 154, 437:

62* Տեղանուների բառարանում՝ Դ/10. Սեբաստիայի Ս. Նշան եւ Եւդոկիայի Ս. Նշան վանքերի մասին տեղեկութիւնները շփոթմամբ միացուած եւ վերագրած են մէկ Ս. Նշան վանքի: Թիերի՝ Հմր 432, էջ 80, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

63* Յիշ. ա. 1494 թ.՝ «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ եւ անարհեստ Գրիգոր գրչիս... ի քաղաքիս Եւդոկիայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, եւ սրբոյն Պարսամայ, եւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ սրբոյն Մինասայ, ի թուիս ՋԽԳ. (1494)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 209:

բ. 1497 թ.՝ «... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽՁ. (1497), որ ստացաւ սայ ի հալալ հնչից իւրոց յիշատակ... ի յերկիրս կողմանս Եւդոկիայ, ի գիւղն Կոմանայ, ի դուռն կենաստու սուրբ Նշանին եւ լուսաբորբ սուրբ գերեզմանացն». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 472-3:

գ. 1644 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 131, 137:

Բազմավաստակ Ա. Ալպօյաճեանն իր «Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց (տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով համադրուած» (Գահիրէ, 1952) հանգամանալի ուսումնասիրութեան տարբեր էջերում անդրադարձել է Եւդոկիայի այս վանքերին:

64* Տեղ. բառ., Դ/224. Զարխափան Ս. Աստուածածին, Զարխափան Ս. Աստուածածնի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Ամասիայի գաւառակում, Ամասիա-Մարզուան ճանապարհին: ԺԹ. դ. վերջերին արդէն աւերակ էր, վերջնականապէս ամայացել է 1915 թ.: Թիերի՝ Հմր 037, էջ 9, վիճակ՝ անյայտ:

65* Թերթային տարբերակը՝ Բիւզ., թիւ 1286, այստեղ ունի բաւական ընդարձակ ծանօթագրութիւն, որ գրքում արտացոլուած է վանահայրերի ցանկի մէջ:

66* Թերթային տարբերակը աւարտւում է հետեւեալ կերպ՝ ներքոյիշեալ տապանագիրը, վանահայրերի ցանկը (թուարկում է ինն անուն), որից յետոյ ունի. [«Եւ երեւելի միաբանք կ՚յիշուին Յովհաննէս Եպս. Սէթեան, Գրիգոր Եպս. Բաբերդցի, Մեսրոպ վարդապետ, եղբայր Գրիգոր Եպիսկոպոսի, Սահակ վարդապետ Պարթեւեան»]:

[67]* Ինչպէս վերն ասել ենք, «Արեւելք» լրագրի 1907 թ. 6556, 6583, 6588 համարներում Պալեանը հրապարակել է Ամասիայի եւ Մարզուանի վանքերի եւ առաջնորդական յաջորդութեան ցանկը, սակայն Երեւանի գրադարաններում օրաթերթի այս համարները չկան. այսուհանդերձ՝ նկատի ունենալով, որ գրքում տպուածը պէտք է լինի աւելի առաջ հրատարակուած լրագրային տարբերակի մշակումը, կարծում ենք, որ ներկայ հրատարակութիւնն այս իմաստով էական պակաս ունենալ չի կարող:

Կիպրաբնակ ամասիացի Գաբրիէլ Յ. Սիմոնեանի «Յուշամատեան Պոնտական Ամասիոյ» (1966) գրքի 381-405 էջերում զետեղուած է Ա. Ալպօյաճեանի շարադրած՝ «Ամասիոյ եւ Մարզուանի առաջնորդութիւնը եւ առաջնորդներու գաւազանը», որ կազմել է գրքի հեղինակի խնդրանքով եւ որի մէջ մեծապէս օգտուել է Պալեանի կազմած ցանկից. «1745էն անընդմիջաբար իրարու յաջորդող առաջնորդներու շարքը կազմած է Տրդատ Եպս. Պալեան, Կեսարիոյ շինարար եւ գործունեայ առաջնորդը... Այս ցուցակէն օգտուելով, 1745-1910 շրջանի առաջնորդներու յաջորդութիւնը կը ներկայացնեմ, ինչ ինչ ճշտումներով, լրացումներով եւ յաւելումներով...»: ՄՄ, Ա. Ալպօյաճեանի թօղոն, թղթ. 7, վաւ. 18/1, 54 թերթ, էջ 24, հմմտ. գրքի էջ՝ 405: Առաջնորդութիւն Հայոց Ամասիոյ եւ Մարզուանի:

Յիշ. ա. ԺԶ. դ. վերջ. «Զվերջին ստացւող աստուածազարդ բուրաստանիս՝ ըզՊաղշի թոռոյն, զՏատուրի որդին՝ զխաւնայ Սարգիսն, որ իւր հալալ արդեանցըն գնեց եւ եդեր յիշատակ ի դուռն Սուրբ Աստուածածնին՝ ի Մարզըւան գիւղաքաղաքն...» - Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 25:

բ. 1618 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի ՌԿԷ. (1618) ամի յաբեթական տումարի տոհմիս, ի գիւղաքաղաքս Մարզուան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարիս, ձեռամբ փցուն գրչի սուտ անուն Սարգիս դպրի Մարզուանցւոյ» - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 653:

գ. 1625 թ.՝ «...Որ եւ ինքն Տէր մեր Յիսուս ետ ուժ եւ կարողութիւն տկար եւ տառապեալ անձին իմոյ Միքայէլ մեղսամած գրչիս գրել եւ կատարել զՅիսուս Որդիս... ի լաւ եւ յընտիր աւրինակէ, ի քաղաքն Մարզուան, ի դուռն Ս. Աստուածածնին, թվականութեանս Հայոց ՌՀԴ. (1625), ի դառն...» - տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 181:

դ-ը. 1628, 1631, 1634, 1635, 1636 թթ. - տե՛ս ԺԷ. դ. յիշ. Բ., էջ 301, 411-2, 558, 586, 592, 642:

թ-ժա. 1642, 1648, 1656 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 74, 318, 705, 712:

[68]* Տեղ. բառ., Ա/444-5. Ս. Արիստակէս, Ս. Արիստակէս Հայրապետ, Չելթեկ - Աւերակ վանք եւ ուխտատեղի պատմական Փոքր Հայքում, Ամասիայի շրջանում, հետագայի Զիլէ քաղաքից հարաւ: Ծրջակայքում ունեցել է մատուռներ, յուշարէն արձանագրութիւններով խաչքարեր:

[69]* Թիերի՝ Հմր 238, էջ 46, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[70]* Տեղ. բառ., Գ/61. Կարմրակ Ս. Նշան, Կարմրակն Ս. Նշանի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Շապին-Գարահիսարի Ածպտեր գիւղի մօտ: Թիերի՝ Հմր 423, էջ 79, վիճակ՝ անյայտ:

[71]* Այս վանքի մասին 1901 թուականին Պալեանը գրել է. Շապին Գարահիսարի գաւառին մէջ «Քառասուն Մանկունք» անուամբ վանք մ՚ալ թէեւ կ՚յիշուի, բայց ըստ մեզ քննելի է, որովհետեւ մօտ ատեններս այդպիսի վանքի մը գոյութիւնը հաստատող որեւէ տեղեկութեան կամ յիշատակութեան մը չպատահեցանք» - Բիւզ., 1901, թիւ 1333: Իսկ ընդամէնը մէկ ամիս անց Աւետիս Սահակեանից ստացել է վանքի գոյութիւնը հաստատող յիշատակարան (1689 թ.) եւ շնորհաւորանք՝ «Աչքը լո՛յս ուրեմն Տրդատ Սրբազանին, որ շէնք շնորհք վանքի մ՚ալ տէր եղաւ», նաեւ՝ տեղեկութիւն մի հնավայր վանքի

մասին, որին «Ի վաղուց անտի, ինչպէս Հայը, նոյնպէս օտարազգին կ՚յորջորջէ զայն «Երեւան Վէնքի» - Բիւզ., 1901, թիւ 1362): Թիերի՝ Հմր 239, էջ 46, վիճակ՝ անյայտ:

[72]* Տեղ. բառ., Ա/323. Վանք Փոքր Հայքում, Ծապին-Գարահիսարի շրջանում, Նիկոպօլիս քաղաքի մօտ, Աշխարօվա դաշտում, գտնւում է Սիս գիւղում: Կառուցումը վերագրում են Վասպուրականի թագաւոր Սենեքերիմ Արծրունու երկու որդիներին: Թիերի՝ Հմր 421, էջ 78, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[73]* Տեղ. բառ., Գ/199. Ս. Լուսաւորչի վանք - տե՛ս Կողուց վանք, Լուսաւորիչ Կողունց վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Շապին-Գարահիսարի գաւառում, Թամզարա գք.-ի Կարմրակ Ս. Նշան վանքի մօտ: Յիշատակուած է 1428 եւ 1461 թթ. երկու ձեռագիր յիշատակարաններում: Կոչուել է նաեւ Ս. Լուսաւորիչ եւ Կողունց վանք: Թիերի՝ Հմր 425, էջ 79, վիճակ՝ անյայտ:

Հ. Ոսկեանի կարծիքով (Վասպուրականի վանքերը, էջ 417) Կողուց վանքը Վանի նահանգի Արծկէի գաւառակի համանուն վանքն է, որ Պալեանը տեղադրում է Շապին Գարահիսարի շրջանում: Կարելի է ենթադրել, որ վերոյիշեալ հեղինակները հիմնուել են Պալեանի լրագրային հրապարակման վրայ եւ գիրքը նկատի չեն ունեցել, մինչդեռ հրատարակուած հատորում (էջ 165-6), որ լրագրային հրապարակման ճշտուած, մշակուած, լրացուած տարբերակն է, Պալեանը ունի՝ Ս. Լուսաւորչի վանք (Վանքիկ), որ չի նոյնացնում Կողուց վանքի հետ, այլ համարում է տարբեր վանքեր, իսկ Կողուց վանքը տեղադրում է Չմշկածագի վանքերի մէջ. դա հիմնաւորելով 1428 եւ 1461 թթ. յիշատակարանների տեղեկութիւններով. տես ծնթ. հմր. 297-9:

[74]* Թիերի՝ Հմր 426, էջ 79, վիճակ՝ անյայտ:

[75]* Թիերի՝ Հմր 424, էջ 79, վիճակ՝ անյայտ:

[76]* Տեղ. բառ., Բ/439. Տե՛ս Ս. Թէոդորոս - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում Կիւրինի գաւառակի Մանճըլըգ գիւղում: Ենթադրւում է, թէ կառուցուել է ԺԶ դ.: Թիերի՝ Հմր 345, էջ 65, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[77]* Թիերի՝ Հմր 346, էջ 66, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[78]* Տեղ. բառ. Բ/824. Ս. Լուսաւորչի վանք, տե՛ս Խուռնաւիլի վանք, Ս. Լուսաւորիչ, Ս. Լուսաւորչայ վանք, Խուռնաւիլու վանք, Խուռնաւուլայ անապատ, Ս. Կիւրեղի վանք, Կիւրղի անապատ, Կիւրղի վանք, Տիվրիկու Ս. Լուսաւորչի վանք - Վանք, անապատ պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Խուռնաւիլ գիւղի մօտ... Կիւրեղի անունով (որը շինել է վանքը 1021 թ.) կոչուել է Կիւրեղի, Ս. Լուսաւորչի, ապա՝ գիւղի անունով՝ Խուռնաւիլի վանք: Յիշատ.՝ 1505, 1555, 1592 թթ. եւլն: Թիերի՝ Հմր 414, էջ 77, վիճակ՝ կանգուն:

[79]* Այս Յիշատակարանը չկայ ԺԳ. դ. յիշ. հատորի մէջ:

Այլ յիշ.՝ ա. 1021 թ.՝ «Յամի Փրկչին 1021, Հայոց թվին ՆՀ. ամին՝ աստուածընկալ սուրբ Նշանս այս... Իսկ յորժամ եկն Դաւիթ առ հայր իւր Սենեքերիմ, ոչ սակաւ ուրախութիւն արար արքային. իսկոյն էառ զսուրբ Նշանն Վարագայ եւ ընդ նմին բազում գործիքն Քրիստոսի եւ մասունք սրբոց՝ եկն եհաս ի Սեբաստիա, զսուրբ Նշանն կանգնեաց անդ, եւ յիշխանացն նորին՝ Կիւրեղ անուն իշխան մի, ի սոյն գաւառն Տիւրիկու՝ յանուն Ս. Լուսաւորչի վանք մի շինեցոյց, որոյ մականուն կոչի Կիւրղի անապատ. սուրբ Աստուածածնայ եւ սուրբ Նշան եկեղեցիքն մերձ նորին նա շինեաց. աստանօր եդ զսուրբ Նշանն աստուածընկալ...» - տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատ., էջ 213-4:

Յիշ.՝ 1424, 1432 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 317, 426:

Յիշ.՝ 1454 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 47-8:

բ. 1467 թ.՝«...Արդ, գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՋԺԶ. (1467), ի վանքս որ կոչի Կիւրդի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին եւ սուրբ Յովհաննու աւետարանչին եւ սուրբ Նշանին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 263, 264:

գ. 1475 թ.՝«...Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՋԻԴ. (1475), ի գաւառիս Տիվրիկոյ, ի սուրբ եւ գերահռչակ անապատս, որ կոչի Խուռնաւիլու, ի դուռս սուրբ Աստուածածնին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 388:

Յիշ.՝ 1474 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 370:

Յիշ.՝ 1488 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 124:

[80]* Տեղ. բառ., Գ/314. Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Տեւրիկի գաւառակում, Տեւրիկ գք.-ից մօտ 15 կմ արմ. ունէր մի տաճար եւ մի քանի սենեակներ, թուրքերը կոչել են «Յալընըզ Քէշիշ վանք»: Թիերի՝ Հմր 412, էջ 77, վիճակ՝ անյայտ:

[81]* Տեղ. բառ., Ե/229. Փայլեվանք – Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Տեւրիկի գաւառակում, Տեւրիկ քաղաքից ոչ շատ հեռու, Օդուռ գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերին աւերակ էր: Յիշատակուած է մի հին ձեռագրում: Նոյն գիւղի մօտ յիշատակւում է նաեւ Ս. Յակոբ աւերակ վանք-ուխտատեղին: Թիերի՝ Հմր 417, էջ 77-8, վիճակ՝ անյայտ:

[82]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 294:

Այլ յիշ. 1474 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց Ջ. եւ ԻԳ.ն (1474), ի վանքս որ կոչի Կիւրդի... Ես՝ Սահակ երէցս Խուռնաւիլու, որ փափաքեցա... գրել տուի զսուրբ Աւետարանս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ զաւակաց եւ ամենայն արեան մերձաւորաց, ի հալալ արդեանց իմոց եւ եդի յիշատակ ի Վաւտին ժամատեղն՝ ի դուռն սուրբ Առաքելոցն...» - տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 370:

[83]* Թիերի՝ Հմր 413, էջ 77, վիճակ՝ անյայտ:

[84]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 369:

Այլ յիշ. 1467 թ.՝ «Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց Ջ. եւ ԺԶ. (1467)... Ես՝ Գրիգոր աբեղայս, որ փափաքեցա այս սուրբ եւ աւետաքարոզ Աւետարանիս եւ մարգարէին բանին, թէ՝ «Երանի որ ունիցի յիշատակ ի Սիովն եւ ընդանեակ յԵրուսաղէմ», եւ գրել տուի զսուրբ Աւետարանս ինձ եւ ծնաւղաց իմոց յիշատակ՝ ներկըրար Գրիգորին եւ մաւրն իմոյ Ծուշանին... եւ դըրի յիշատակ ի վանքն որ կոչի Աւթմընա, ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յակովբայ...» - տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 264:

[85]* Տեղ. բառ., Դ/356. Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Տեւրիկի գաւառակում, Ջիմարա գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերին աւերակ ու ամայի էր: Թիերի՝ Հմր 162, էջ 32, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[86]* Տեղ. բառ., Գ/987. Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Տեւրիկի գաւառակում, Ջիմարա գիւղի մօտ: 1176թ. այստեղ ընդօրինակուել է Աւետարան: Թիերի՝ Հմր 161, էջ 31, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած: Տիվրիկի առաջին երեք վանքերի՝ Ս. Լուսաւորիչ, Ս. Յակոբ եւ Փայլեվանք (Վօտուռ) վանքերի մասին իր ճամփորդական տպաւորութիւններն է նկարագրել Գրիգոր քհնյ Զարդարեանը «Փունջ» թերթում՝ 1893, Հմր 2343, 1-2:

[87]* Տեղ. բառ., Բ/478. Ս. Թորոս, Ս. Թըռիշի վանք - Վանք պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Տիվրիկի շրջանի Կուրասին գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերից աւերուած ու լքուած էր: Ըստ աւանդութեան՝ Լէնկ Թեմուրից հալածուած հայերը, որոնք ապաստանել էին վանքում, աղաւնի դարձած թռչում, հեռանում են

այդտեղից, որտեղից էլ առաջացել է թուիչքի աղաւաղուած Թըրիշի վանք անունը: Թիերի՝ Հմր 403, էջ 75, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[88]* Նկատի ունի Ս. Յակոբի վանքը:

[89]* Ամենայն հաւանականութեամբ Պալեանը իր այս նախնական ենթադրութիւնը հետագայում վերանայել է, քանի որ Ս. Թորոս՝ նաեւ Դերձկի կոչուած վանքը տեղադրել է Մալաթիայի վանքերի մէջ, տես հմր 188/6:

[90]* Տեղ. բառ., Ա/215-6. Ս. Ամենափրկիչ - Վանք Տրապիզոնի նահանգում... Կառուցուել է Ստեփանոս Հայի կողմից 1424 թ., քարաշէն է եւ ընդարձակ: Մէկ այլ վարկածով կառուցել է տուել Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: ԺԱ. դ. կէսերին մի որոշ ժամանակ այստեղ է բնակուել Պետրոս Գետադարձը: Հետագայում՝ արքեպիսկոպոսանիստ: Արձանագրութիւններից մէկի համաձայն կառուցուել է 873 թ.: 1342 թ. Սսի եկեղեցական ժողովին այստեղից մասնակցել է Ստեփանոս եպիսկոպոսը: Թիերի՝ Հմր 433, էջ 80, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[91]* Ա. Մխիթարեանի կարծիքով դա «Ս. Յարութիւն անուամբ շինուած է. արձանագրութիւն՝ «ՇԻՆԵՑԱՒ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ԽՈՃԱՅ ՍՏԵՓԱՆՆՈՍԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԻՒՐՈՑ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՈՅՆ ԻՒՐՈՑ ՄԵԼԻՔՍԱԹԻՆ ԵՒ ԶԱՒԱԿԱՑՆ ԻՒՐՈՑ Ի ԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՊՀԱ. (1422)». Ա. Մխիթ., Վէպ..., էջ 122:

[92]* 1897-1901 թթ. Տրապիզոնի առաջնորդ Խոսրով վարդապետ Պէհրիկեանի կազմած առաջնորդների ցանկը ըստ Էութեան Աբէլ վարդապետ Մխիթարեանի հրատարակած «Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնու» (Կ. Պոլիս, 1857) գրքի «Առաջնորդք Հայոց Տրապիզոնի» հատուածի լրացրած տարբերակն է:

[93]* Այսպէս է գրքում:

[94]* Յիշատակարան՝ ա. 1384 թ. «...Եւ գնեցաք զսուրբ Աւետարանս, ամէն խարճով նստաւ ինձ եւ Յովանիսին ՃԽ. (140) սպիտակ. ես զՅովանիսի բաժինն ի յինքն վճարեցի եւ սուրբ Աւետարանս եղաւ ինձ, յիշատակ հոգւոյս եւ մարմնոյս, ի թուիս ՊԼԳ. (1384) բերի ի Տրապիզոնս եւ ետու ի Չարխափան սուրբ Աստուածածինս». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 545:

Յիշ. 1422 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 298:

բ. 1427 թ.՝ «... Գրեցաւ ի թվ. ՊՀԶ. (1427), ի յանապատս Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ սուրբ Յովհաննէսիս... ձեռամբ Ղազարի Ղրիմեցոյ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 370:

գ. 1432 թ.՝ «Գրեցաւ գիրգս այս ի Պոնտոս քաղաքին, որ անուն կոչի Տրապիզոն, եւ ի դուռն սուրբ Փրկչին, եւ մատուռ նորին սուրբ Կարապետին, որ է արդեամբ շինեալ խոճա Ստեփանոսին: Գրեցաւ թուաբերութիւն Հայոց ՊՁԱ. (1432), յունվար Ժ. (10), ձեռամբ բազմամեղ սուտանուն Յակոբ աբեղի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 427: Նաեւ յիշ.՝ 1437 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 481, 482:

դ. 1455 թ.՝ «...Գրեցաւ Սաղմոսարանս այս ի թվին ԹՃԴ. (1455) ամի, եւ աւարտեցաւ փետրուարի մին, ձեռամբ ապիկար գրչի Յակոբ սուտանուն աբեղի: Եւ եդի զսա ի հռչակաւոր մենաստանս Տրապիզոնու, որ կոչի Վերի Աստուածածին, յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց եւ եղբարցն իմոց...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 61:

Յիշ.՝ 1467, 1468, 1478 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 265, 278, 433:

Ծնթ. 1468 թ. յիշատակարանը ԺԵ. դ. յիշ., Բ. հատորում հրատարակուելուց հետո կրկին՝ որպէս լրացում հրատարակուել է ԺԵ. դ. յիշ., Գ., հատորի Յաւելուած, Ա., բաժնում, էջ 449, սակայն առաջին անգամ հրատարակուել է որպէս Պլովդիւի հայերէն

ձեռագրական հաւաքածուի Հմր 33, իսկ երկրորդ անգամ՝ Երեւանի մատենադարանի Հմր 10283:

Յիշատ.՝ 1466, 1472 թթ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., Յաւելուած, Ա., էջ 447, 454:

դ. 1468 թ.՝ «Արդ, գրեցաւ գիրքս այս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարհեստ գրչի Աւետիք աբեղայի տրապիզոնցւոյ ի թւին ՋԺԷ. (1468), ընդ հովանեաւ սուրբ Փրկչին եւ սուրբ Կարապետին եւ ամենայաղթ սուրբ Նշանին... եւ եդի զսա ի վերին եկեղեցին, որ կոչի սուրբ Աստուածածին, ի վայելումն մանկանց...». տե՛ս Ա. վրդ. Մխիթարեանց, Վէպ գաղթ. Հայոց Տրապիզոնու, Կ. Պոլիս, 1857, էջ 36: Յիշ. չկայ ԺԵ. դ. յիշ., Բ., հատորի մէջ:

Այլ յիշ.՝ 1605, 1608, 1611 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 189, 293, 329, 428:

Յիշ. 1637 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 714:

Յիշ. 1659 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 900:

95* Տեղ. բառ., Դ/521. Վանք Տրապիզոնի նահանգի Գիւմուշխանէի գավառում, Կելկիթի գաւառակում, Գայլգետ գիւղաքաղաքի մօտ:

96* Թիերի՝ Հմր 439, էջ 81, վիճակ՝ անյայտ:

97* Տեղ. բառ., Ա/838. Կառուցման ժամանակը՝ անորոշ: Թիերի՝ Հմր 437, էջ 81, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

98* Թիերի՝ Հմր 438, էջ 81, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

99* Թիերի՝ Հմր 440, էջ 81, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

100* Տեղ. բառ., Ա/842. Փոքրիկ մի շինութիւն է: Ենթադրւում է, որ կառուցուել է Պետրոս Գետադարձ կաթողիկոսի պատուին: Թիերի՝ Հմր 434, էջ 80, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

101* Թիերի՝ Հմր 435, էջ 81, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

102* Տրապիզոնի հայկական վանքերի ներկայ վիճակի մասին տե՛ս Հ. Յ. Պզտիկեան, Տայք, Բարձր Հայք. Ճամբորդական նօթեր, Երեւան, 2005:

103* Տեղ. բառ., Ա/917. Տե՛ս Գիւմուշխանէի վանք, Ս. Ամենափրկիչ, Գիւմուշխանայի վանք, Կումիշխանայի վանք, Ս. Փրկիչ - Վանք Տրապիզոնի նահանգում, Գիւմուշխանէ ք.-ից մօտ 4 կմ հս-արմ.: Վանքը, որ երբեմն ուղղակի համարուած է մատենադարան, եղել է նաեւ գրչութեան կենտրոն: Մինչեւ 1915 թ. կանգուն էր, ունէր սեփականութիւն: Թիերի՝ Հմր 241, էջ 47, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

104* Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանը Գ. Սրուանձտեանցի թղթերից արտագրել եւ հրատարակութեան է յանձնել յիշատակարաններ՝ «Տեղագրութիւն Ս. Կարապետի վանուց ի Մուշ ի գրութեանց Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանց. Կիւմիշհանէի Ս. Փրկչի վանուց ձեռագիր մատեանք եւ յիշատակարանք» վերնագրով. տե՛ս Արարատ, 1905, էջ 711-37:

Յիշատակարան՝ ա. 1673 թ.՝ «...Յիշեցէք զնուաստ Պետրոս երեցս, որ ետ Հոգին սուրբ կարողութիւն գրել եւ աւարտ ածել զԱւետարանս ի քաղաքս, որ կոչի Գիմիշխանա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Ամենափրկչին... ի թուականութեանս մերոյ ՌՃԻԲ. (1673) ի հայրապետութեան Տեառն Յակոբայ երից երանեալ երջանիկ Հայրապետին...»: Արարատ, 1905, էջ 724:

բ. 1672 թ.՝ «...Յիշեցէք յաղօթս Ձեր զնուաստ Պետրոս երեցս, որ ետ Հոգին սուրբ կարողութիւն գրել եւ աւարտ ածել զԱւետարանս ի քաղաքս փոքրիկս, որ կոչի Գիմիշխանա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Ամենափրկչին. զոր եւ գրեցաւ Աւետարանս Աստուածահոտ եւ Աստուածաշունչ, ի թուականութեանս մերոյ ՌՃԻԱ. (1672) ի Հայրապետութեան Հայոց Տեառն Յակոբայ երիցս երանեալ երջանիկ Հայրապետին, եւ մերոյ քաղաքիս Առաջնորդութեան Սահակ վարդապետին...»: Արարատ, 1905, էջ 725:

[105]* Յիշ. 1670 թ.՝ «Սաղմոսարան լաւ եւ ընտիր աւրինակէ ումեմն անարժանի Գրիգոր Կողոնեցոյ, թվին ՌՃԺԹ. (1670) ամին, Փետրվարի ԺԵ. (15), աւրն Դ.շի, ի քաղաքն Նիկտայու, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Թօրոսին եւ Սուրբ Կարապետին եւ այլ միահամուռ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի կաթողիկոսութեան Հայոց Տէր-Յակոբ կաթողիկոսին...» - տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 29:

[106]* Տեղ. բառ., Գ/426. Հնձուց վանք, Ս. Աստուածածին, Աստուածածնայ Կարմիր վանք, Խնձուց վանք, Կարինի Հնձուց վանք, Կարմիր վանք, Կարմրի Ս. Աստուածածին, Կարմրի Ս. Աստուածածնի վանք, Հինձք, Հինձքի Կարմիր վանք, Հնձուց Կարմիր վանք: 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրով Էրզրումի շրջանի հազարաւոր բնակիչներ Արեւել. Հայաստան գաղթելուց յետոյ վանքն անշքանում է, բայց իբրեւ գործող վանք այն այնուամենայնիւ շարունակում է գոյութիւնը: Ամայացել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Այժմ աւերակները կան: Հմմտ. Էփրիկեան, Բնաշխ. բառ., հ. 2, գիրք Ա., էջ 330-1: Թիերի՝ Հ[մր] 212, էջ 40, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[107]* Քօսեան, Կարնոյ գիւղերը, էջ 120. «Երբ 935 թուականներուն Հայաստանի շատ մը տեղերը վանքեր կը շինուին, ինչպէս կ'ըսէ Ասողիկ, նոյն դարուն մէջ՝ ըստ գրութեան Չամչեանի, «Սարգիս վարդապետ ոմն շինեաց զվանքն Հնձուց ի Կարին»:

[108]* Ակներեւ է, որ Տեղանունների բառարանի հեղինակները թէ՛ այս եւ թէ՛ բազմաթիւ այլ տեղանուն-բառայօդուածներում օգտագործել են Տրդատ Եպս. Պալեանի հրապարակումները:

Պալեանից յետոյ Հ. Յ. Քօսեանն էր երեւի, որ ձեռնարկել եւ բարեբախտաբար, հասցրել է հաւաքել ու հրատարակել Կարնոյ գիւղերում եղած վանքերի վերաբերեալ բնաւոր զրոյցները, վիմագիր արձանագրութիւնները, տապանագրերը, խաչքարերի, եկեղեցական իրերի ու առարկաների վրայի արձանագրութիւնները, ձեռագիր յիշատակարանները (տե՛ս Հ. Յակոբ Ծ. վ. Քօսեան, Բարձր Հայք, հ. Բ., Կարնոյ գիւղերը), որոնցից մի քանիսը դնում ենք այստեղ, իրենց համապատասխան հատուածներում:

ա. Ճաշոց տպեալ ի Վենետիկ ՌՃԼԵ. (1686) թղթի վրայ գրուած. «Յիշտկ է Ճաշոց գիրքս այս ի դուռն Հընձուց Կարմիր վանքին, Արզրումցի նահատակի որդի Տր Ղեւոնդին... թվ. ՌՃՁԵ. (1736)...», էջ 113-4:

բ. ...կը գտնուի եկեղեցւոյս մէջ ձեռագիր Յայսմաւուրք մ'ալ. գրուած բոլորգիր, սստանուն Եսայ գրչէ. Դաստակերտ գիւղը, ՌՃԺԱ. (1662) թուականին, էջ 115:

գ. Վանքէն եւ եկեղեցիէն դուրս մտադրութեան արժանի է գերեզմանատունը: Հոս կը տեսնուին հին խաչքարերու մնացորդներ. կը գտնուին մէկ կարգի վրայ երեք շիրիմ. որոնցմէ մէջտեղինն է Առաքել վարդապետի շիրիմը... Խաչքարիս տակը գրուած է՝ (չափածոյ)

«Այս է տապան եռամեծի / Առաքէլ վարդապետի / սրբոյ ուխտիս դետապետի / որոյ ձեռամբ նորակերտի / բոլոր սագերս. ընդ գմբեթի / եկեղեցիս պայծառ ծաղկի / եւ նորաշէն պարիսպ կապի / սակս տեղւոյս հարկաւորի / տասնութեամբ առաջնորդի /

ապա առ տէր վերահանգչի / մարմին ստոր վիմիս դընի / հոգին որ եւտն վերաչւի / այս թւոյս թւականի / յաբեթական մեր տոմարի / հազար հարիւր ութսունորդի / հնգօք ամօք աւելորդի / հանդիպողքդ տուք ողորմի / վս զի մերս այսպէս լինի / ողորմ խնդրո յոյժ կարօտի»:

Պատուանդանին վերի կողմը գրուած է յաջորդը.

«Եւ տապանս այս հանդերձ խաչիւ / զԵղեայ բազմաշխատ պետիւ / որ զհետ գործոց գիշեր եւ տիւ / թ.ին ՌՃՁ. (1731 թ.) ութիւ կազմեցաւ սովիւ»: ...գետին ինկած խաչքարին միոյն վրայ կը կարդացուին անթուական երկու բառեր. «Թորոս երէց»: ...սոյն կրկին շիրիմներու մնացորդները շատ հին ժամանակի աշխատութիւն կ'երեւան... Գերեզմանատան մէջ կը տեսնուի կարմիր խաչքար մ'ալ. որուն վրայ քանդակուած է հետեւեալ յիշատակագրութիւնը.

«Յովասափ վարդապետի / եւ սբ ուխտիս դիտապետի / մարմին սորա աստ ամփոփի / որք հանդիպիք տուք ողորմի / Տէր հատուցէ փոխանակի / թվին Հայոց ՌՃՂԵ. (1746)». տե՛ս Քօսեան Յ., Կարնոյ գիւղերը, էջ 115-7:

Այս հարցի մասին տե՛ս նաեւ՝ ա. անհեղինակ (գուցէ հանդէսի խմբագրի) Կարնոյ Առաջնորդներ 1828էն ի վեր, (Բիւրակն, 1899, 361-2), բ. Ս. Ծեհրեր, Հնձուց կամ Կարմիր վանք, Բիւրակն, (1899, թիւ 28, էջ 444-50) հետաքրքիր յօդուածները: գ. Հ. Հ. Ոսկեանի Կարնոյ վանքերը, ուր մէկ համաձայնելով, մէկ էլ հակադրուելով Պալեանին թուարկել է տասն անուն վանք՝ տե՛ս Բարձր Հայքի վանքերը, էջ 116-152: Յիշատ.՝ 1642, 1711, 1714 թթ., էջ 133-5: դ. Ն. եպս. Պողարեանի կարծիքով՝ «Հնձուց վանքը պատմական տեսակէտէ յիշատակելի երկու շրջաններ ունի, առաջին՝ Ժ-ԺԱ. դար եւ երկրորդ՝ ԺԸ. դար», տես Ն. եպս. Ծովական, Հայկական վանքեր, Հնձուց վանք, Սիոն, 1963, էջ 343:

Յիշ. 1645 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 184:

Յիշ. 1680, 1711 թթ., տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 314-5, 316:

109* Տեղ. բառ., Գ/905. «Մուտուրկայ վանք, Ս. Լուսաւորիչ, Ս. Լուսաւորչի վանք, Մատուռկայ Ս. Լուսաւորիչ, Մատուրկայ Ս. Լուսաւորիչ, Մդրկու վանք, Մտրկու վանք, Մուտուռկայ Ս. Լուսաւորիչ, Մատուռկայ վանք, Մուտուռկու վանք, Մուտուրկայ Ս. Լուսաւորիչ, Մուտուրկու Ս. Լուսաւորիչ, Մուտուրկու վանք: Առաջին յիշատակութիւնները վանքի մասին վերաբերում են ԺՁ. դ.: Այստեղ էին նստում Կարինի հոգեւոր առաջնորդները: Վանքի շրջակայքում կան գերեզմաններ ու խաչքարեր: Վանքը լքուել ու ամայացել է 1915 թ.: Հմմտ. Էփրիկեան, Բնաշխ. բառ., հ. 2, էջ 112: Թիերի՝ Հմր 207, էջ 40, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

110* Հ. Ոսկեանը (Կարնոյ վանքերը, էջ 145-7) հրատարակել է 1596, 1648, 1664, 1667, 1672, 1715, 1719, 1725, 1756, 1840 թթ. յիշատակարաններ:

Յիշ. 1756 թ.՝ «Արծաթապատեցաւ եւ գնեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Կարնոյ առաջնորդ Աւետիս աստուածիմաստ վարդապետին, տրօք հաւասար ժողովրդեանն, եւ եդաւ յիշատակ Մուտուրկու Ս. Լուսաւորիչի վանիցն...» - տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 558 (տողատակի ծնթ. 37):

Յաջորդող յիշատակարանները քաղել ենք Հ. Քօսեանի գրքից (Կարնոյ գիւղերը, Բ., էջ 143-49):

ա. Աւետարան տպեալ ի Կ. Պոլիս 1805. ՌՄԾԴ. կողքին յիշատակագրուած այսպէս. «Յիշ Տէր Յարութիւն քահան 1836 սբ Լուսաւորչայ»:

բ. Ճաշոց տպեալ ի Կ. Պոլիս 1799. յիշատակարան՝ 1844 թ.:

գ. Յայսմաւուրք տպեալ ի Կ. Պոլիս յՕրթագիւղ 1834. ՌՄՁԳ. յիշատակարան՝ 1846 թ.:

դ. Եկեղեցւոյս մէջ կայ նաեւ ձեռագիր Աւետարան մը. գրուած բոլորգիր. Նահապետ գրչէ, ՌՃԺԸ. (1669) թուականին:

ե. Եկեղեցին... 1859 ի երկրաշարժին կիսակործան եղաւ եւ 1861ին շինուեցաւ ի հիմանց Վեհապետեան Յարութիւն արքպ.ին առաջնորդութեան օրով... Ս. Սարգիս եկեղեցւոյ հարաւ. որմին մէջ հիւսուած է խաչքար մը, որուն վրայ կը կարդանք հետեւեալ արձանագրութիւնը. «ՆՈՐՈԳԵՑԱՒ ՏԱՃԱՐՍ ՎԵՐՍՏԻՆ ՍԲ / ՍԱՐԳՍԻ ԶՕՐԱՎԱՐԻ. ՁԵՌԱՄԲ ԽԱՉԱ/ՏՈՒՐ ՎՐԴՊՏԻՆ ԿՈՍՏԱՆԴՆԻՊՕԼՍՑՈՅ / ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՅՍ ՍԲ ՈՒԽՏԻՆ ՈՐ / ԵՒ ՏՐՆ ՈՂՈՐՄԵՍՑԻ. ԹՎԻՆ ՌՃԿԹ. (1720) / ԵՒ ՆՈՐԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՄԱԿԱՐ ՎՐԴՊՏ.»:

Յիշատակագրութիւն մը, որուն թուականը միայն լաւ կը կարդացուի «Թվ. ՌՃ. (1651)»:

զ. ...կան այժմ Արծնեան Վարժարանի թանգարանին մէջ չորս կտոր ձեռագիրներ, որոնք ժամանակին վանուցս կը պատկանին եղեր:

Թիւ Ձեռագրին 817. Աւետարան գրուած բոլորգիր. Գրիգոր աբեղայէ. ՋՂԸ. (1549) թուականին. ասոր վերջը գրուած վերջին յիշատակագրութիւնն է. «... եւ Աստուած ողորմի ասացէ՛ք վարպետ Ալթունին, որ ստացաւ զայս վարդափթիթ բուրաստանս ի յարդար վաստակոց իւրոց եւ եդ յիշատակ ի դուռն Մուտուրկու վանից, որ յանուն սուրբ Լուսաւորչին կառուցեալ, հանդերձ չորիւք փոքրիկ ձեւով եւ միով մեծաչափ խաչիւ, որ ի միջի նոցին պարփակեալ զիրերաւ ի վերայ կողիցն, յաջմէ եւ յահեկէ. վասն որոյ ոչ ոք մ՛ի իշխեսցէ ձեռնամուխ լինել յաղագս ծախելոյ եւ կամ գրաւելոց. եւ թէ ոք յանդգնեսցի՝ զպատիժն Կայենի եւ զմասն Յուդայի եւ զխաչահանուացն ընկալցի: Իսկ խնամածուքն եւ հոգաբարձուքն երանաւէտ ձայնին արժանաւորեսցին, ի Քրիստոսէ պսակեսցին եւ զանվաղճան ուրախութիւնն ժառանգեսցեն. ամէն, Հայր մեր: Ի թուականի հայկազան սեռի ՌՃԻԱ. (1672) վերստին նորոգեցաւ»:

Թիւ Ձեռ. 820. Խորհրդատետր, գրուած բոլորգիր, Յովհաննէս դպիրէ, Կարին քաղաք, ՌՃԼԱ. (1682) թուականին. ասոր վերջը գրուած յիշատակագրութիւնն է. «Այս հրաշափառ մեծի տաւիս / քեզ երանի, երբ հանդիպիս. / արդ, զիս յիշեայ զմեռեալ հոգիս՝ / զՅովհաննէս դըպիր գըծող տառիս: / Թուականիս Հայոց ազգիս / ՌՃԼԱ.իս / կատարեցաւ Կարնոյ միջիս. / որ այժմ Արզրում վերաձայնի. / եդ յիշատակ ի սուրբ վանքի՝ / Լուսաւորիչ անուն կոչի: / Որք հանդիպիք տուք զողորմի / քեն իմոյ Աննա խաթունի / եւ համօրէն արեան զարմի: / Եւ ի դրանէ հանօղքն նզովի. առցէ մասն Կայենի»:

Թիւ Ձեռ. 827. Աւետարան. գրուած բոլորգիր, Խաչատուր գրչէ, Պապզոյ վանքը. իբր ԺԴ-ԺԵ. դար, ասոր մէջ թղ. 84բ. գրուած է յիշատակագրութիւնս. «Յաւուրս վերատեսչութեան Տեառն Կարապետ սրբազան Արքեպիսկոպոսի եւ Աստուածաշնորհ րաբունապետի նուիրեցաւ սուրբ Աւետարանս Մուտուրկայու Սուրբ Լուսաւորչի հրաշալի վանից, արդեամբք Տէր Սիմօնեան հանգուցեալ տիրացու Մկրտչի որդի Տէր Կարապետ քահնյին Կարնեցւոյ. յիշատակ ծնողաց իւրոց եւ ամենայն զարմից եւ զաւակաց իւրոց՝ կենդանեաց եւ հանգուցելոց: Ի ՌՄՀԳ. (1824) թուոջ Հայոց եւ ի յունվարի ԺԸ.»:

Թիւ Ձեռ. 848. Աւետարան. գրուած բոլորգիր. ՌԻԸ. (1579) թուականին. ասոր մէջ թղ. 183բ. գրուած է յիշատակագրութիւնս. «Աւետարանս է Խնդրակատար Սուրբ Աստուածածին, յիշատակ է սուրբ Աւետարանս Անծեղի մանչ մահտեսի Յովանէսին եւ իւր հաւասար ննջեցելոցն հոգուն՝ ի դուռն Մուտուրկու Սուրբ Լուսաւորչի վանից, ի ձեռն առաջնորդ Խաչատուր վրդպտին. եթէ ոք իշխեսցէ զայս Աւետարանս հեռացընել վանից դուրս՝ պարտաւոր լիցի ատենին Քրիստոսի: ՌՃԾԹ. (1710)»:

[111]* Տեղ. բառ., Բ/673. Ս. Խաչ, Խաչավանք, Խաչի վանք, Խաչոնկայ վանք, Խաչովանք: Էրզրում քաղաքից մօտ 20 կմ հիւսիս, համանուն գիւղում: Ենթադրւում է, որ վանքը աւելի հին է, քան գիւղը: Տաճարի հարաւային կողմում կան արձանագրութիւն ունեցող դամբարաններ, ունի միաբանների խցեր եւ ուխտաւորների սենեակներ: Շրջապատում կան խաչքարեր, դրանցից մեկը 1229 թ. է: Ըստ աւանդութեան Հերակլ կայսեր Պարսկաստանի դէմ մղած կռիւների ժամանակ այստեղ է բերուել Քրիստոսի խաչափայտը, որի խփուած տեղից իբր բխել է այն աղբիւրը, որի մօտ կառուցուած է վանքը: Այստեղից էլ առաջացել է վանքի եւ գիւղի անունը: Մի քանի անգամ վերանորոգուել է: Թիւերի՝ Հմր 210, էջ 40, վիճակ՝ անյայտ:

[112]* Յ. վ. Քօսեանը, ինչպէս յայտնի է, 1912 թ. անձամբ այցելել է այդ վայրերը. նրա՝ ականատեսի տպաւորութիւնները եւ ուսումնասիրութիւնները շատ արժեքաւոր են, ուստի եւ քաղում ենք (տե՛ս Քօսեան Հ. Յակոբ ծ. վ. Բարձր Հայք, հ. Բ., Կարնոյ գիւղերը, էջ 40-7).

1. «Գիւղս նշանաւոր է իւր մէջ գտնուած վանքովն... վրան արձանագրուած յիշատակագրութիւն մը, որ անընթեռնելի դարձած է եւ է հետեւեալը. «///ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՈՒԲ/// ԱՇԽԱՏՈՒԲ ԵՒ ՋԱՆԻՒ ԷՐԶՐՈՒՄՑԻ ԳԱԼԱՑՉԵԱՆ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍՐԲՈՑ ԽԱՉԿԱՎԱՆԻՑՍ ՇՐՋԱՊԱՏ ՊԱՐԻՍՊՔՆ Ի ՀԻՄԱՆԷՆ/// ՇԻՆԵՑԱՒ ... ՌՄԼԸ.»: Արձանագրութիւնս կը ցուցնէ թէ 1789 թուականին վանքին շրջապատ պարիսպը շինուած է ի հիմանէ. անտարակոյս «վերաշինեցաւ» պիտի ըլլայ, որ չի կարդացուիր:

Տնտես տան մէջ կը տեսնուի պղնձէ սկաւառակ մը, որուն շուրջը բոլորակի գրուած է հետեւեալ յիշատակագրութիւնը. «1812 ՅՇՏԿ ՍԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՆՔԻ ԿԱՐԻՆ ՄԱՌՏԻԿԻ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԵԱՆ»:

2. Վանքի շէնքերը հին եւ խարխուլ են. մէջը ուրիշ նշանաւոր բան մը չկայ, բացի մեծ խաչքարէ մը՝ որուն վրայ արձանագրուած է. «Ի ԹՈՒ ՈՀԸ. (1229) ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՏԷՐ ԹՈՐՈՍՈՒ ԴԵՐՋԱՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ»:

Տաճարին դրան որմին մէջ հաստատուած կը տեսնենք փոքրիկ խաչքար մը, պարզ քանդակագործութեամբ, որուն վրայ փորագրուած է յիշատակագրութիւն մը. այսպէս. «ՅԻՇԱՏԱԿ Է / ԽԱՉՍ ՄՈՒՐԱՏԻ / ԹՎԿ ՌԲ. (1553)»:

3. Քանի մը անգամ Խաչկավանուցս այցելութիւն ըրած եւ միշտ Տաճարիս նկատմամբ հնագոյն արձանագրութիւն՝ թուական մը գտնել հետամուտ եղած էի. բայց ի զուր: ... օր մը Երկնիստէն Դվնիկ գացած պահուս հայ մշակներ ճամբուն վրայ ջրոյ ակի մը գլուխը նստած կը հանգչէին. վայրկեան մը հանգիստ առնելու համար նստեցայ եւ ես քովերնին: Խօսակցութեան սկսելով հարցումներ ուղղեցի իրենց. գիւղացի մշակներէն մին ըսաւ «Տէր հայր, Խաչկավանուց տաճարին թուականը դրսի մասին սիւնին վրայ գրուած է»: Ո՞վ կ՚ըսէ, հարցուցի, ուստի գիտես, ըսի. «Մեր պարպերէն լսած եմ» ըսաւ: Կ՚երեւայ թէ ընդհանուր աւանդութիւն մ՚էր այս: Երկրորդ օրը (1912. Օգ. 21) դարձեալ գացի Խաչկավանք. ... գտայ փորագրուած զանազան ձեռքէ եւ իրարմէ տարբեր գրերով հետեւեալները. «ՏԻՐԱՑՈՒ ՀԱՄԲԱՐ ԹՎ. ՌՄԺ.ԻՆ ՄԱՐՏԻՆ Ե. / «ՄԵՓԱՆՈՍ Մ ՎԱՐԴԱՆ / ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՋԸ. (639) ՏԱՃԱՐԻՆ Է»:

...ՋԸ. = 639 թուականը, որ կոտրած քարի մը վրայ գրուած եւ գտնուած է եղեր, կը լուսաւորէ Խաչկավանուցս պատմութեան էջերը:

...կը տեսնուի խաչքար մը խորանին քով. որուն վրայ կը կարդանք հետեւեալ արձանագրութիւնը. «ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ԱԾ ՍՏԵՓԱՆԻՆ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ՋԻԱ. (1472)»:

4. Տաճարէս զատ մտադրութեան արժանի է նաեւ գիւղիս գերեզմանոցը, որ մեծ առնչութիւն ունի Խաչկավանուցս հետ: Ի մէջ այլոց մտադրութեան արժանի է առաջի կարգին վրայ երեսն ի վար գետին ինկած մեծ խաչքար մը (3.22x1.60x0.36): Ձախ կողմը՝ վերէն ի վար գրուած է հին գրերով 44 տողէ յիշատակագրութիւն մը. ժամանակաւ գրութեանս մէկ մասը հող ծածկած էր. հողը փորելով մաքրելով ամբողջ գրութիւնը մեծ աշխատութեամբ ի վեր առած ենք. որ է.

«ՈՋԱ. [ՈՋԱ.] (1232) ԹՈՒ ԲԱՋՈՒՄ ՓԱՓԱՔԱՆԱՒՔ ԵՒ ԱՒԳՆԱԿԱՆՈՒ-ԹԵԱՄԲ ՍԲ ՅԱՐՈՒԹԵԱՆՍ ԵՒ ՍԲ ՍԵՂԱՆԻՍ ԵՒ ԽԱՉԱՍՐԱՒՆ ՍԲ ԵՂԲԱՐՑՍ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԽԱՉՍ Ի ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԵՑՆ ԱՌԱՋ-ՆՈՐԴԻ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ ԲԱՐՍԵՂԻ ԵՒ ԳՈՒԳՈՐԻ ԵՒ ԱՐԵՒ-ԳԵՂԻՆ ԵՒ ԱԾԱՏՐԻ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԱՂԲԱՅՐ ԿԱՆ ԵՒ ՍԱՏՈՒՏԻՆ ԵՒ ՔԵՌՑ ԻՒՐՈՑ ԱՂԱՉԵՄ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ ԶԳԻՐՍ ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵ-ՑԷՔ ԱՒԵՏԵՑՆ Ի ՔՍ ԶՄԽԻԹԱՐ ՅԻՇԵՑԷՔ. Ի ՔՍ ՎԱՐԴՊԵՏ ՏԻՐԱՏՈՒՐ ԱՂԱՂԱԿ(ԵՄ Ի ՏԷՐ) ՎԱՐԴ ԱՐԵՎ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱՂԱՉԵՄ»:

Բացի այս խաչքարէն. կը տեսնուի ուրիշ խաչքար մըն ալ գերեզմանատանս գրեթէ միջավայրը կանգնուած, որ իւր վրայ ունի յիշատակագրութիւն մը այսպէս. «ՍԲ ՆՇԱՆՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ Է: ՈՋԷ. (1248)»:

Կան նաեւ ուրիշ հինգ խաչքարեր եւս մեծ ու փոքր՝ կանգուն մնացած, որոնց վրայ չի տեսնուիր յիշատակագրութիւն»:

Յիշ. 1181 թ.՝ «...Բայց արդ, գրեցաւ Աւետարանս այս ի թուականիս ՈԼ. (1181), ի Կարին գաւառի, ի վանս Խաչկայ, ընդ հովանեաւ Սուրբ Յարութեանս եւ առ ոտս աստուածընկալ Սուրբ Նշանին Դաւթայ, յառաջնորդութեանն Տէր Ստեփաննոսի հեզի եւ խոնարհի...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 489: Վերահրատ.՝ Ե-ԺԲ. դ. յիշ., էջ 236-8: Ա. Մաթեւոսեանը (էջ 237) թուականը վերծանել է 1183 թ.՝ «...թանաքակեր հետքերով նշմարւում է միաւոր թիւը՝ ՈԼԲ.»:

Խաչկավանքի հիմնադրման մասին աւանդութիւնը տե՛ս Յակոբ Կարնեցու «Տե - ղագիր Վերին Հայոց» գործի վերջին մասում՝ Մանր ժամանակագրութիւններ, հ. Բ., էջ 576-7:

Հ. Ոսկեանը (Կարնոյ վանքերը, էջ 121-3), Ն. Ակինեանի յիշատակարանների անտիպ հաւաքածոյից վերցնելով, հրատարակել է 1488, 1629 (վերջինի վերահրատ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 324), 1714, 1768 թթ. յիշատակարաններ:

[113]* Տեղ. բառ., Դ/520. Կարին քաղաքից ոչ հեռու, Խանդամլու գիւղում: Ի. դ. սկզբին աւերուած ու լքուած էր: Թիերի՝ Հմր 205, էջ 39, վիճակ՝ անյայտ:

[114]* Յիշ. 1310 թ.՝ «...Գրեցաւ սուրբ եւ աստուածային տառք բարձրաբան սուրբ աւետարանչացն ձեռամբ անարժան եւ յետնորդ քահանայի, որ Սերոբէ անուն կոչի: ...Գրեցաւ սայ ի հուչակաւոր աւրինակէ. թվ. ՉԾԹ. (1310), ի քաղաքիս Թէոդոյպաւլիս, ի դրան սուրբ Կարապետիս եւ սուրբ Զաւրավարիս». տե՛ս ԺԴ. դ. ձեռ. յիշատ., էջ 73:

[115]* Թիերի՝ Հմր 208, էջ 40, վիճակ՝ անյայտ:

[116]* Հմմտ. Քօսեան Հ. Յակոբ Ծ. վ., Կարնոյ գիւղերը, էջ 20-4, որտեղից քաղում ենք.

«Գիւղս հայաբնակ գիւղ մ'է. ունի 200 տուն հայ եւ 30 տան չափ եւս տաճիկ: Հայք ունին եկեղեցի եւ մատուռ մը, կրկին վարժարաններ եւ երկու քահանայ: Եկեղեցին անուն Ս. Աստուածածնի, շինուած է 1858ին, հնագոյն եկեղեցւոյ տեղը, գիւղին մէջտեղը գրեթէ, բաւական ընդարձակ, շուրջը բաց եւ անպարիսպ:

Մատուռիս դրան վերեւն որմին մէջ հաստատուած կարմրագոյն քարի մը վրայ փորագրուած է միայն թուական մը «1884». որ է մատուռիս վերաշինութեան թուականը: Մատուռիս ներքինն ալ պարզ է. արեւելեան որմին վրայ ունի խորան մը Աստուածածնի պատկերով. խորանիս աջ կողմը որմին կից կանգնուած է խաչքար մը, որուն բարձրութիւնն է 2.58 սմ. լայնութիւնը 1.15 սմ. եւ թանձրութիւնը 0.29 սմ.: Խաչքարս Կարնոյ շուրջը գտնուած վանքերուն, գիւղերուն եկեղեցիներու, գերեզմանատանց մէջ գտնուած խաչքարերէն տարբեր ձեւ մ'ունի, գլուխը սրածայր, եպիսկոպոսական թագի մը ձեւով. քարին վրայ քանդակուած ձախակողմեան փոքրիկ խաչերուն թեւին քով շեղ դիրքով կը տեսնուին գրեր, «ԹՃԼԹ.», թէպէտ գրերս շատ մաշած են, բայց լաւ մտադրութիւն ընելով, ՃԼ. գրերը որոշ կը տեսնուին. ըստ այսմ թուականիս «ՃԼԹ.ին» (690) քանդակուած է խաչքարս: Խաչքարիս համար կ'ըսուի թէ, Իմաստասէր կաթողիկոսը այս կողմերը շրջած ժամանակ, ինքն անձամբ օծած է զայն. յետոյ մատուռ մը շինուած եւ խաչքարս մէջը կանգնուած, մատուռս ալ «Ս. Յովհաննէս Օձնեցի» անունը առած»:

Կարինի մասնաւորապէս առաջին երեք վանքերի մասին արժէքավոր աղբիւր է ԺԷ. դարի հեղինակ Յակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէոդուպօլիս, որ այժմ Արզրում վերայձայնեալ կոչի» երկը, որ առաջին անգամ հրատարակել է Կ. Կոստանեանցը՝ Տեղագիր Վերին Հայոց, Յիշատակարան ԺԷ. դարու. Վաղարշապատ, 1903 թ. (թարգմանել է ֆրանս. Ֆ. Մակլերը 1919 թ. - H. Karnetsi, Erzeroum ou Topographie de la Haute Armenie. Journal Asiatique, trad. F. Macler, 153-237), համեմատական բնագիրը պատրաստել եւ 1956 թ. հրատարակել է Վ. Յակոբեանը տես՝ «Մանր ժամանակագրութիւններ», հ. 2, էջ 541-86:

117* Այժմ՝ Ս. Պետերբուրգի Արեւելագիտութեան հիմնարկի Հ$^{\text{մր}}$ 65. տե՛ս Յովսէփեան, Յիշատակարանք, էջ 533-4, Ե-ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 254:

118* Տե՛ս Խ. Լեւոնեան, Հին Աւետարան մը եւ անյայտացած վանք մը.- Բիւզանդիոն, 1902, Հ$^{\text{մր}}$ 1682, էջ 1: Յիշատակարան 1188 թ.՝ «...Յովաննէս ստացայ զսուրբ եւ զլստակահամ ակունս քառանկիւն յեդեմական գետոյ, ի յարբուցումն եւ ի վայելումն անձին իւրում եւ լսողաց: Եւ յետ ելից աստի՝ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց եւ ամենայն ազգականաց: Բայց գրեցաւ սուրբ Աւետարանս ի Կարին գաւառի, յանապատիս, որ կոչի Խանատամլուց, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի, յառաջնորդութեան հաւր Կիրակոսի եւ ի բռնակալութեան անաւրէն ազգին Քանանու: Եւ էր թիւս Հայոց ՈԼԷ. (1188)...». վերահրատ.՝ Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 534, Ե-ԺԲ. դդ. յիշատակարաններ, էջ 254: Թիերի՝ հմր 209, էջ 40, վիճակ՝ անյայտ: Երզնկայի վանքերի մասին տե՛ս նաեւ թեմի առաջնորդ Դանիէլ վրդ. Յակոբեանցի «Սեպուհ լերան սրբավայրերը».- Արարատ, 1901, էջ 362-5:

119* Տեղ. բառ., Բ/631. Խաղճանեաց Ս. Աստուածածին, Խաղճանեաց մենաստան, Խրախճան, Խրախճանեաց վանք - Վանք-մենաստան Էրզրումի նահ-ի Բաբերդի գաւառակի Դոմնա-Թոմնա գ-ի մոտ: Սրա աւերակներից ոչ հեռու, լեռան ստորոտին գտնւում են Ս. Թորոսի վանքի մնացորդները: Յիշատակուած է ԺԴ. դ. յիշատակարաններում, որպէս գրչութեան կենտրոն: Ոմանք այս երկու վանքերը համարելով մեկ համալիր՝ անուանում են Խաղճանեաց (Խրախճանեաց) Ս. Աստուածածին եւ Ս. Թէոդորոսի վանք: Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 245, էջ 47, վիճակ՝ անյայտ: Հմմտ. Թիերի՝ հմր 266, էջ 51:

120* Տեղ. բառ., Բ/478-9. Ս. Թորոսի վանք, Ս. Թէոդորոս, Ս. Թորոս - Վանք Երզնկայի գաւառի Բաբերդ քաղաքի մօտ, Դոմնա-Թոմնա գ-ի մօտի լեռան ստորոտին: Եղել է գրչութեան կենտրոն: Յիշատակւում է ԺԴ. դ. հայերէն մի քանի ձեռագրերում:

Քիչ վերեւ գտնւում է Խաղճանեաց Ս. Աստուածածին վանքը: Երկու վանքերը երբեմն համարւում են կրօնական մէկ միաւոր եւ անուանւում Խաղճանեաց Ս. Աստուածածին եւ Ս. Թէոդորոս: Ի. դ. սկզբներից Ս. Թորոս վանքը աւերուած ու լքուած էր: Տե՛ս նաեւ Հ. Ոսկեան, Սպերի, Բաբերդի եւ Թորթումի վանքերը, էջ 179-83: Թիերի՝ Հմր 246, էջ 48, վիճակ՝ անյայտ:

[121]* Յիշատակարանս չկայ ԺԴ. դարի յիշատակարանների հատորի 1382 թ. հատուածի մէջ:

[122]* Յիշ. 1380, 1394 թթ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 535, 609:

Յիշ. 1430 թ.՝ «...Յամի ութհարիւրերորդի եւթանասուներորդի եւ իններորդի թուականութեանս Հայոց նոր տումարի (1430), ի գաւառս Խախտեաց, ի հրեշտակաբնակ մենաստանս, որ կոչի Բերդակայ վանք, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ սրբոյ Լուսաւորչիս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 661:

Յիշ. 1471 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 326:

Յիշ. 1489, 1491 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 141, 179:

Յիշ. 1608 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 329:

Յիշ. 1642 թ.՝ «...Արդ, գրեցաւ վարդափթիթ սուրբ տառս, որ կոչի Աղաւթմատոյց, ի թվականին Հայոց ՌՂԱ. (1642), Խախտեաց գաւառն ի գիւղն որ կոչի Դոմնաս, ի դուռն Ս. Սարգսին, Ս. Մինասին, Ս. Աստուածածնին, Ս. Թորոսին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 67:

Յիշ. 1645, 1647, 1648, 1649, 1651 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 190, 245, 282, 306, 337, 341, 461:

[123]* Տեղ. բառ., Ա/873. Գլխոնցի Ս. Լուսաւորիչ, Ս. Լուսաւորիչ, Գլխոնցի Ս. Լուսաւորչի վանք: Տե՛ս նաեւ Հ. Ոսկեան, Սպերի, Բաբերդի... էջ 174: Թիերի՝ Հմր 257, էջ 49, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[124]* Տեղ. բառ., Բ/603. Լոռնքի Ս. Լուսաւորիչ, Լուսաւորչի վանք, Լուսհոնգի Ս. Լուսաւորիչ, Լուսհոնքի Ս. Լուսաւորիչ, Լուսոնք - Վանք Արմ. Հայ-ում, Բաբերդ գաւ.-ի Լոռնք գ-ում: Բաղկացած է մի հին մատուռից, որի կառուցման ժամանակը յայտնի չէ եւ օժանդակ մէկ այլ եկեղեցուց, որը կառուցել է յայտնի ճարտարապետ Կարապետ Պալեանը: Վանքը գործում էր մինչեւ 1914 թ., աւերուել ու ամայացել է մեծ եղեռնի ժամանակ, 1915ին: Տե՛ս նաեւ Հ. Ոսկեան, Սպերի, Բաբերդի... էջ 178: Թիերի՝ Հմր 259, էջ 50, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[125]* Թիերի՝ Հմր 258, էջ 49, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[126]* Տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 178:

[127]* Տեղ. բառ., Ա/276. Անոց վանք, Ալնոցի Ս. Յովհաննէս, Ալնոցի վանք: Հմմտ. Էփրիկեան, Բնաշխ. բառ., հ. Ա, էջ 52: Թիերի՝ Հմր 924, էջ 165, վիճակ՝ անյայտ:

[128]* 1203ի յիշ-ի վերահրատ. տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, Յաւելուած, էջ 1031: ԺԳ. դ. յիշ., էջ 35: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 167-70. հրատարակել է յիշատ. 1340, 1476 (վերահրատ. ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 410), 1486 (վերահրատ. ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 89), 1508, 1623, 1653 թթ., (վերահրատ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 120, ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 581):

[129]* Տեղ. բառ., Ա/551. Բալախոռ, Բալախոռի Ս. Գէորգ, Բալախոր, Բալախորի Ս. Գէորգ, Պալախոր, Պալախոռ, Պալախորու Ս. Գէորգ - Վանք Էրզրումի նահ-ի Բաբերդ գաւառում, Բալախոռ գ-ի մօտ: Եկեղեցին՝ Ս. Գէորգ: ԺԹ. դ. վերջերին լքուած ու աւերուած էր: Պալախոռ ձեւով յիշատակում է ԺԶ-ԺԷ. դդ. հեղինակ Գրիգոր Դարանաղցին: Թիերի՝ Հմր 251, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[130]* Յիշ. վերահրատ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 166, սկիզբը տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 437: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 192-3, յիշ՝. 1476 թ. (վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. Բ., էջ 409), 1495 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 216:

1629 թ. յիշ.՝ «...Արդ, գրեցաւ սբ. մատեանս, որ կոչի Հայր Մաշթոց, ի գիւղս, որ կոչի Պալախաւր, ընդ հովանեաւ Ս. Յոհաննու եւ Ս. Սարգսի եւ Ս. Նշանիս եւ յանապատին Ս. Գէորգայ, ի թվաբերութեանս Հայոց ՌՀԸ. (1629), ի յուլիս ամսոյ...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 327-8:

[131]* Թիերի՝ Հմր 262, էջ 50, վիճակ՝ անյայտ:

[132]* Տեղ. բառ., Ե/321. Քարավրակի Ս. Նշան, Ս. Խաչի վանք, Ուրքաթի Ս. Նշան, Ուրքաթու Ս. Խաչ, Ուրքաթի Ս. Նշան, Ուրքաթու Ս. Նշանի վանք, Քարավրակի Ս. Խաչ, Քարավրակի Ս. Նշանի վանք, Քարավրակի Ս. Նշան - Վանք Բաբերդի գաւառակում, Քարաւերակ գ-ից հր., գտնահովտում: Բարձր Հայքի երբեմնի հռչակուած վանքերից էր, որը վաղուց կործանուած էր եւ Ի. դ. սկզբներին միայն ուխտավայր էր: Ըստ աւանդութեան՝ վանքի հիմքում մի շիշ սուրբ իւղ է թաղուած եղել: Տե՛ս նոյնը Ս. Խաչի վանք Քալավրակի-Քարավրակի: Թիերի՝ Հմր 261, էջ 50, վիճակ՝ անյայտ:

[133]* Այս երկու (Հմր 76, 77 / 8, 9) վանքերը Տեղանունների բառարանը՝ Ե/321, նոյնացնում է եւ ունի միայն «Քարավրակ» տարբերակը: Հ. Ոսկեանը եւս օգտագործում է «Քարավրակ» ձեւը, սակայն, կրկնելով Պալեանին, ընդունում է երկու առանձին վանքերի գոյութիւնը. տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 203-4:

[134]* Տեղ. բառ., Գ/818. Միլէզկի Ս. Նշան, Եօթն Խոտաճարակաց վանք, Ս. Նշանի վանք - Վանք Էրզրումի նահանգի Բաբերդ գաւառակում, Մալասա (Միլէզկի) գ-ի մօտ: ԺԹ. դարի վերջերին աւերուած ու լքուած էր: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 191: Թիերի՝ Հմր 263, էջ 50, վիճակ՝ անյայտ:

[135]* Տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 191: Թիերի՝ Հմր 244, էջ 47, վիճակ՝ անյայտ:

[136]* Տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 189: Թիերի՝ Հմր 252, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[137]* «Փունջ» շաբաթաթերթի Դպիր ծածկանունով յօդուածագիրը, որպէս իր նախորդ յօդուածների (տե՛ս ծ. Հմր 84 վանքի) լրացում 1893 թ. հրապարակել է Կարմիր վանքի մասին մի պատմութիւն, որ աւելորդ չենք համարում այստեղ ներկայացնել. «Վանքիս պատմութիւնը առնուած է Աւետարանէ մը, զոր այժմ Ախալքալաքի գեղերը տարած են գաղթականք: Այդ Աւետարան վանքէն վար Ջորդուր ըսուած տեղը, կամուրջին ներքեւ ջրոյն մէջ մնացեր է ժամանակ մը: Մի օր օրիորդ մը անտի կանցնի եւ աներեւոյթ ձայն մը կը խնդրէ, որ գայ զինքը փրկէ ջրէն. գեղջկուհին զարհուրեալ կահաբեկի. ընկերներն կը հասնին եւ կը փրկեն Աւետարանն ու ահաբեկեալը»: Այնուհետեւ աւելացնում է. «Այս վանքին վայրն այցելեցի, բայց հիմանց հետք մը չկայ». տե՛ս «Փունջ», 1893, թիւ 2352:

[138]* Տեղ. բառ., Ե/444. Ս. Քրիստափոր, Քրիստափորի վանք, Բաբերդի Խուփս գիւղի մօտ, լեռնադաշտի վրայ: Վանքի տեղում հնում եղել է Օհան անունով մատուռ, որը Կարապետ Բաբերդցին վերակառուցելով դարձրել է վանք: 1870-ական թթ. վանքը գործում էր եւ ունէր բարւոք տնտեսութիւն: 1895 թ. աւերուել է: Թիերի՝ Հմր 253, էջ 49, վիճակ՝ անյայտ:

[139]* Տեղանունների բառարանը (Ե/444) զարմանալի տրամաբանութեամբ նոյնացրել եւ որպէս մէկ միաւոր է ներկայացրել Ս. Քրիստափորի երկու վանքերը (Հմր 81, 83 /13, 15): Հ. Ոսկեանը համամիտ է Պալեանի հետ եւ գրեթէ նոյն բառերով է

նկարագրել այս երկու վանքերը. տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 204-5՝ «Հոս «յառաջնորդութեան տէր Յովհաննէս Վ. Ստամպօլցուն» Գրիգոր Խփսեցի Ծաչոց մը կը ստանայ եւ զայն 1742ին յիշատակ կը դնէ՝ «Ի դուռն սուրբ սքանչելի ուխտին Քրիստափոր առաքելոյն ի ձեռն այժմու քահանայից տէր Անդրէասին, տէր Խաչատուրին եւ Գրիգորին»:

[140]* Տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 200: Թիերի՝ Հմր 254, էջ 49, վիճակ՝ անյայտ:

[141]* Տեղ. բառ., Դ/736. Վահանաշէնի Ս. Ստեփանոսի վանք, Ս. Ստեփաննոս, Ս. Ստեփաննոսի վանք, Վահանաշէնի Ս. Ստեփաննոս, Վահանաշէնու Ս. Ստեփանոսի վանք, Վահանաշինու վանք, Վաղաշէն, Վաղշէնի Ս. Ստեփաննոս, Վաղշէնի վանք - Վանք Էրզրումի նահ. Բաբերդի գաւառակի Վահանաշէն գիւղի մօտ: Ի. դ. սկզբին աւե - րակ էր: Գտնուել է նոյն գւոկ-ի Օձտեղ գիւղի հս. կողմում եւ սխալմամբ (ինչպէս նաեւ նոյնացուել են Վահանաշէն եւ Օձտեղ գիւղերը) նոյնացւել է Օձտեղի Ս. Լուսաւորիչ վանքին: Ուրիշները սխալմամբ սրան են նոյնացրել նոյն գաւառի Լօռի գիւղի Ս. Լուսաւորիչ վանքը: Պահպանուել են ԺԴ-ԺԶ. դդ. այստեղ ընդօրինակված Աւետարան, Գանձարան, Աստուածաշունչ, Երգարան: ԺԶ-ԺԷ. դդ. այստեղ դասաւանդել է Սրապիոն վրդ. Օձտեղցին, որին աշակերտել է պատմիչ Գր. Դարանաղցին: Թիերի՝ Հմր 265, էջ 51, վիճակ՝ անյայտ:

Վանքերի նոյնականացման վերոյիշեալ շփոթը աւելի խճողուած կրկնել է, վերցնելով Հ. Ոսկեանից, Թիերին՝ Պալեանին վերագրելով նաեւ «Բիւզանդիոն»ի (թիւ 2897) մէկ այլ յօդուածագրի (Դարբինեան) տեսակէտը. տե՛ս Թիերի, էջ 51, ծնթ. 10, հմմտ. Հմր 260, էջ 50:

[142]* Յիշատակարանի մի փոքր այլ տարբերակ, որից քաղուած են մեր փակագծուած լրացումները, տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 387. սա առնուած է Ղ. Փիրղալէմեանի Նշխարքի Բ. հատորից (Մատենադարանի ձեռ. 4515, էջ 381-3). ձեռագիրը պատկանել է բաբերդցի Գրիգոր քհյ. Տէր- Յակոբեանին (հմմտ. ձեռ. 4515, էջ 106), Փիրղալէմեանը յիշ-ը Կ. Պոլսում օրինակել է 1880 մայիսի 10ին՝ Վահան վ. Տէր-Մինասեանի մօտ:

[143]* Ոսկեանը ունի՝ «Վահանաշինու Ս. Ստեփանոսի վանք» (էջ 194-8) եւ «Վաղշէնի Ս. Ստեփանոսի վանք» (էջ 194), որոնք նոյնացնում է, կարծելով թէ Բաբերդից ո՛չ թէ երեքուկէս, ինչպէս գրել է Պալեանը, այլ հինգ ժամ հեռու գտնուող Վահանաշէն գիւղի վանքն էր Ս. Ստեփանոսը, որ «սպա գուցէ կոչուած ըլլայ Ս. Լուսաւորիչ, բայց ոչ՝ Վաղշէնի Ս. Աստուածածին կամ Օձտեղի Ս. Ստեփանոս, ինչպէս Պալեան կը նշանակէ» եւ յղում է՝ Փունջ, թիւ 2255, 2307 (էջ 194). տե՛ս Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 194-98, հմմտ. նաեւ էջ 117: Հրատարակել է յիշ.՝ 1339 թ. (վերահրատ. տե՛ս ԺԴ. դ. յիշ. էջ 322), 1476 թ.:

Ոսկեանն այստեղ վիճարկում է, ինչպէս իրեն թուացել է, Պալեանի եզրակացութիւնները, մինչդեռ իր յղած «Փունջ»ի Դպիր ծածկանունով յօդուածագիրը, ինչպէս պարզեցինք, ոչ թէ Պալեանն է, այլ ուրիշ մէկը, որ եթէ բաբերդցի չէ, ապա գոնէ 1891-92 թթ. մշտապէս ապրում էր Բաբերդում եւ պարբերաբար թղթակցում «Փունջ»ին: Նրա հրապարակումներն էլ վերաբերում են բացառապէս Բաբերդին. «Ցուցակ վանորէից Բաբերդի՝ հնոց եւ նորոց, կանգուն կացելոց եւ կործան անկելոց» («Փունջ», Հմր 2307 եւ 2311) յօդուածում թուարկել է քսան վանքի (նրանց շարքում՝ նաեւ Բերդակ վանքի, որի վերաբերմամբ Պալեանը կասկածներ ունէր) եւ մի քանի ուխտավայրի անուններ: Հիմնականում աւանդութիւններ է պատմում եւ ափսոսում, որ «վանորէից անցելոյն համար կը կարօտիմք այն յիշատակարանաց՝ զորս 1830ին գաղթականք տարեր են յԱխալցխա

քաղաք, բազում ծանրագին զգեստուց եւ անօթոց հետ»: Պալեանը, ամենայն հաւանականութեամբ ծանօթ է եղել այս յօդուածներին եւ իհարկէ յօդուածագրին, ինչպէս գրում է «Ծաղիկ» հանդէսի մէջ, «Հայ աշուղներ» յօդուածում. «Ծաղիկ»ի նախորդ թուոյն մէջ, Դպիր ստորագրող բանասէր մը Բաբերդի գիւղորէից 14 Հայ աշուղներու մանրամասն ցուցակը հրատարակելով, զայն ինձ կը նուիրէր եւ փափաք կը յայտնէր...». տես Ծաղիկ, 1893, թիւ 8, էջ 55:

Յիշ. 1603 թ.՝ «...Ի թվին ՌԾԲ. (1603) որ ես՝ Գրիգոր՝ բանի խնդրողս եկի յԱրարատեան յերկրէն ի յերկիրս Խախտեաց, որ այժմ Բաբերթ ասի, առ ոտս երջանիկ հաւրս մերում եռամեծին եւ տիեզերալոյս վարդապետին՝ Սրապիոն քաջ հեռետորին, որ է այժմ ի վանսն Վահանշինու եւ առաջնորդ է սուրբ ուխտիս ի յանբարի ժամանակիս, վասն զի չորրորդ մասն աշխարհիս ապականեալ է ի բազում հինիցն իսմայելացոց...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 212: Հմմտ. Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ., Մ. վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 39:

[144]* Տեղ. բառ., Դ/789. Վարիջնայի Ս. Նշան, Ս. Նշան - Վանք Էրզրումի նահանգի Բաբերդի գաւառակի Վարիջնայ գիւղում: Թիերի՝ Հմր 264, էջ 50, վիճակ՝ անյայտ:

[145]* Տեղ. բառ., Ե/304. Ս. Քառասնից վանք - Վանք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Բաբերդ գաւառակի Խախտ գիւղի մօտ: Գիւղի անունով կոչուել է նաեւ Խախտ. տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Սպերի, Բաբերդի... էջ 178-9: Թիերի՝ Հմր 250, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[146]* Տեղ. բառ., Գ/381. Վանք Արմ Հայաստանում, Էրզրումի նահանգի Բաբերդի շրջանում: Աւերակները նշմարւում են: Թիերի՝ Հմր 242, էջ 47, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[147]* Թիերի՝ Հմր 243, էջ 47, վիճակ՝ անյայտ:

[148]* Տեղ. բառ., Գ/741. Ս. Մարտիրոս, Ս. Մարտիրոսի անապատ - Վանք Էրզրումի նահանգի Բաբերդի գւռկ-ի Բլուր գիւղից հր., լեռան վրայ: Եղել է գրչութեան կենտրոն: Այստեղ ապրել եւ ստեղծագործել է Խաղ աբեղան, որի ծաղկած երկու Աւետարանը պահւում են Մատենադարանում: Թիերի՝ Հմր 248, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[149]* Տեղ. բառ., Բ/186-7. Վանք Բաբերդի գաւառակում, Բաբերդ քաղաքից մոտ 30 կմ արմ., Բլուր գիւղի մոտակայքում, լեռան վրայ: Թիերի՝ Հմր 247, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[150]* Տեղ. բառ., Դ/765. Վանք Էրզրումի նահանգի Բաբերդի գաւառակում, Բաբերդ քաղաքից մօտ 30 կմ արմ, Բլուր գ-ի մօտ: Թիերի՝ Հմր 249, էջ 48, վիճակ՝ ամբողջովին, մինչեւ հիմքերն աւերուած:

[151]* «Փունջ»-ի Դպիր ծածկանունով թղթակիցը նոյնպէս թուարկել է Բաբերդի մի քանի ուխտատեղիներ. «...Ահաւասիկ աւերակեալ սրբավայրերու մի քանիին անուններն. Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Յակոբ, Ս. Նիկողոս, Ս. Գրիգոր, Ս. Համբարձումն» (Փունջ, 1893, թիւ 2352, էջ 1):

[152]* Տեղ. բառ., Բ/783. Խօսնակու Ս. Կիրակոս, Ս. Կիրակոս, Ս. Կիրակոսի վանք, Օսնակի Ս. Կիրակոս - Վանք Էրզրումի նահանգի Քղիի գաւառակում, Աստղաբերդ գիւղից հս-արմ., Աստղաբերդ գետի մօտ, ջրառատ եւ անտառախիտ վայրում: Եղել է պարսպապատ եւ ունեցել է մի քանի եկեղեցիներ: Քղիի առաջնորդարանն էր, ունէր ուսումնարան: Աւետիս վարդապետը ԺԹ. դ. այն վերանորոգել է: Այժմ աւերակ է: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 215: Թիերի՝ Հմր 048, էջ 12, վիճակ՝ կանգուն:

[153]* Տեղ. բառ., Ա/306. Ապառու Ս. Կարապետ, Ապարու վանք, Առապարի Ս. Կարապետ, Ս. Աստուածածին, Բարձր Աստուածածին, Գետահայեաց Ս. Աստուածածին, Գետահայեաց Ս. Կարապետ, Խլպաշի վանք, Խլբաշի Ս. Կարապետ, Խլպաշու անապատ, Ս. Կարապետ, Հանգստանոյ Ս. Կարապետ, Ծոխայի Ս. Ծողակաթ, Քղիի Ս. Կարապետ - Վանք Բարձր Հայք աշխարհի Խորձեան գաւառում: Աւերակները գտնւում են Էրզրումի նահանգի Քղիի գաւառում: Եկեղեցին կոչւում է Ս. Աստուածածին: Ճարտարապետական կերտուածքով նման է Մուշի Ս. Կարապետին, նրա «մանրակերտն» է: Ըստ աւանդութեան հիմնադրել է Գր. Լուսաւորիչը մեհեանի տեղում, այլ տարբերակում՝ հիմնադրել է Թադէոս առաքեալը, իսկ մի երրորդ աւանդութեան համաձայն հիմնադրուել է Սահակ Պարթեւի կողմից, եւ առաջին առաջնորդը եղել է Խադ եպիսկոպոսը: Ծինութեան մոտակայքում կան 1522, 1547, 1559, 1600 թթ. խաչքարեր, որոնք վանքի առաջնորդների շիրիմներն են: 1888 թ. ուժեղ ջրհեղեղից վանքի օժանդակ կառոյցները աւերուել են, իսկ վանքը մնացել է անվթար: Թիերի՝ Հմր 051, էջ 12, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[154]* Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 215-24: Հրատարակել է յիշատակարաններ՝ 1442 թ. (վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. Ա, էջ 539-40), 1464 թ. (մասնակի), 1522 թ. (խաչքարի), 1547, 1694, 1721 թթ., վանահայրերի ցանկ մինչեւ 1912 թ.:

[155]* Թիերի՝ Հմր 044, էջ 11, վիճակ՝ կանգուն: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 211-4: Յիշատ.՝ 1364 (վերահրատ.՝ ԺԴ. դ. յիշ. էջ 464), 1586 թթ.:

Յիշ. 1627 թ.՝ «Արդ, գրեցաւ գիրս այս աղաւթից եւ փրկականն խորհուրդ սբ. պատարագին ի թուականիս Հայոց ՌՀԶ. (1627) ամին, ի գաւառն Խորձիւնի, ի Կեղա լեառն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութիւն սբ. ուխտիս Մարտիրոս քաջ երաժիշտ...». (վերահրատ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 275:

[156]* Տեղ. բառ., Ա/215. Ս. Ամենափրկիչ, Փոքրիկ Ս. Փրկիչ - Վանք Արմ. Հայաստանում, Քղի քաղաքի մօտ, Խուբս եւ Սերկեւիլ գիւղերի մօտ: Եղել է շրջակայքի հայերի եւ քրդերի համար կարեւոր սրբավայր: Լքուել ու ամայացել է 1890ական թթ.: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 224-5: Թիերի՝ Հմր 043, էջ 11, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[157]* Տեղ բառ., Ա/837. Վանք Քղիի գաւառի Աստղաբերդ գիւղում: Կառուցման ժամանակը՝ անորոշ: Թիերի՝ Հմր 047, էջ 12, վիճակ՝ անյայտ: Տե՛ս Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 214:

[158]* Տեղ. բառ., Գ/815. Մժնկերտու Ս. Կարապետ, Բժնկերտու Ս. Կարապետ, Ս. Կարապետ, Մժնկերտի վանք, Պժնկերտու Ս. Կարապետ - Վանք Էրզրումի նահանգի Խնուսի գաւառակում, Մժնկերտ գիւղի մօտ, նրա արլ. կողմում, կանաչապատ գեղեցիկ բլրի վրայ: Եկեղեցին գմբէթաւոր էր, շրջակայքում կային շինութիւնների աւերակներ: Գործել է մինչեւ ԺԹ. դ. կէսերը: Տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Քղիի եւ Խնուսի վանքերը, էջ 229: Թիերի՝ Հմր 215, էջ 41, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[159]* Տեղ. բառ., Ա/348. Ս. Աստուածածին, Աստուածածնայ վանք, Բասենոյ վանք, Կարմիր վանք, Հասանկալայի Ս. Աստուածածին - Վանք Բասեն գաւառում: Եղել է Բասենի եպիսկոպոսանիստը: Ըստ աւանդութեան կառուցուել է ԺԱ. դ. Գրիգոր Մագիստրոսի կողմից... սակայն որոշ յիշատակութիւնների հիման վրայ նրան կարելի է վե րագրել տակաւին Է.-Ը. դդ. հնութիւն: ...Տապանաքարեր՝ 1007, 1034 թթ.: Վերջին վե - րանորոգումը կատարուել է 1800ին, աւերուել եւ ամայացել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, պահպանուել են միայն աւերակները:

[160*] Յիշատակարան՝ ա. 1602 թ.՝«...Արդ, գրեցաւ ի յերկիրն Բասենու, ի գիւղն որ կոչի Խաչլու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին... Արդ, գրեցաւ սա ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ աճ պատեալ էր զամենեսեան, ի թվականիս ՌԾԱ. (1602)». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 57:

բ. 1654 թ.՝«...Արդ, նորոգեցաւ գիրքս յերկիրն Բասենու, ի վանս Ս. Աստուածածնին՝ բարձրահայեաց եւ գմբէթայարկ, յառաջնորդութեան տեղւոյն Աւետիս արհի եպիսկոպոսին Բաղիշեցւոյ, որ մականուամբ Կորեկոնց ասի, ձեռամբ սուտանուն Թումայ երիցու նորոգեցաւ ի թուին ՌճԳ. (1654)». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 616:

Յիշ. 1741 թ., տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 380:

[161*] Թիերի՝ Հմր 232, էջ 45, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[162*] Յիշ-ի վերահրատ տե՛ս ԺԵ. դ. յիշատ., Բ., էջ 53:

Յիշ. 1456 թ.՝ «...Եւ սոքա դրին զգիրքս ի դուռն Սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութիւն արհիեպիսկոպոսիս տէր Յուսկան եւ տեսուչ Բասենու գաւառիս եւ... եւ եդիր յիշատակ ի սուրբ Աստուածածնիս դուռն ի Սպիտակ վանքս, անջինջ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց:... Գրեցաւ ՋԵ. (1456)». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 67:

[163*] Թիերի՝ Հմր 220, էջ 42, վիճակ՝ անյայտ:

[164*] Թիերի՝ Հմր 233, էջ 45, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[165*] Տեղ. բառ., Բ/805. Ս. Թովմասի վանք, Թումայի Խոցոց վանք, Խողց, Խոց, Խոց Յիսուսի վանք - Վանք Արմ Հայ-ում, Բիթլիսի նահանգի Սասունի Խոց գ-ում: Աւերուել ու լքուել է ԺԹ. դ. վերջերին: Ըստ աւանդութեան այստեղ բուժւում էին խոց ունեցողները, որից եւ առաջացել է վանքի անունը: Թիերի՝ Հմր 361, էջ 68, վիճակ՝ շատ վատ սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[166*] Յիշ. 1309 թ.՝ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 62: Յիշ. 1636 թ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 639:

[167*] Տեղ. բառ., Բ/609. Հայրապետի Ս. Լուսաւորիչ - Վանք Արմ Հայ-ում, Երզնկայի գաւ-ի Հայրապետ գ-ում: Թիերի՝ Հմր 141, էջ 28, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[168*] Յիշ. 1375, 1558 թթ., տե՛ս Հ. Ոսկեան, Բարձր... էջ 90:

[169*] Տեղ. բառ., Գ/145. Ս. Կիրակոս, Երզնկայի Ս. Կիրակոս, Երզնկայի Ս. Կիրակոսի եւ Յուղիտայի վանք, Ս. Կիրակոս-Յուղիտա, Ս. Յուղիդա - Վանք Էրզրումի նահանգի Երզնկա քաղ-ի մոտ 7-8 կմ հեռավորութեամբ: Կառուցուած է Աոիծ լ-ն ջրառատ եւ գեղատեսիլ լանջին: Կառուցման ժամանակը յայտնի չէ: Յիշատակւում է ԺԳ. դարից: Մինչեւ Ի. դ. սկիզբները կանգուն էր եւ առաջնորդարանի նստավայրն էր: Մինչեւ աւերուելը ունէր ձեռագրեր ու գրքեր, որոնք ցիր ու ցան եղան 1915-18 թթ., իսկ վանքը աւերուեց, ամայացավ: Թիերի՝ Հմր 140, էջ 28, վիճակ՝ անյայտ:

[170*] Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 200: Լ. Խաչիկեանը սրբագրել է՝ «ի հայրապետութեան»ը «Գրչական սխալ է, պէտք է լինէր «ի թագաւորութեան»: Թէեւ Պալեանը այս յիշատակարանը վերագրում է Երզնկայի Ս. Կիրակոս վանքին, սակայն թւում է, թէ սա վերաբերում է Չարսանճագի նոյնանուն վանքին:

[171*] Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 465:

[172*] Յիշ. վերահրատ. տես ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 601-2:

Յիշատ.՝ 1332 թ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 250:

ա. 1335 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի թուաբերութեանս Հայոց ՉՁԴ. (1335), ձեռամբ սուտանուն աբեղայի Ներսէսի, ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի, եւ ի հայրապետութեան տեառն Յակովբայ, ի դառն եւ յամբարի ժամանակս, ի գաւառս

Եկեղեաց, առ ստորոտով լերինն Բըթնոյ, ի վանքս սրբոյն Կիրակոսի եւ սուրբ Նշանիս...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 276:

բ. 1339 թ.՝«...Գրեցաւ եղանակաւոր տառս ի թիւս աքեթական գրոհի ՉՁԸ. (1339), ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի, եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ի գաւառիս Եկեղեաց, առ լերամբն Բթնոյ, ի յանապատիս սրբոյն Կիրակոսի, ձեռամբ Ներսէս գրագրի, եղբաւրորդեկիս մերոյ Սարգիս տղայի, ի վայելումն անձանց մերոց եւ յիշատակ ծնաւղաց մերոց». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 320: Նաեւ յիշ.՝ 1351, 1364 թթ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 390, 465:

173* Տեղ. բառ., Ե/305. Քառասուն Խաչեր - Վանք Երզնկայի գաւառում, Ս. Գրիգոր լ-ան ստորոտում, տարածքում կային գերեզմաններ: ԺԹ. դ. վերջին աւերակ էր: Թիերի՝ Հմր 153, էջ 30:

174* Տեղ. բառ., Դ/355-6. Չագրամանի Ս. Պողոս -Պետրոսի վանք, Չագրման, Չախըրմանու վանք, Չախրման, Պողոս-Պետրոս - Վանք Երզնկայի գաւառում, Երզնկա քաղաքից հս -արլ, Չախըրման Մեծ եւ Փոքր գ-երի մոտ, մի հսկա ժայռի վրա: Ունէր քարաշէն փոքրիկ եկեղեցի, մի քանի օժանդակ շէնքեր, մշակելի հողեր: ԺԹ. դ. վերջերին ամայի ու լքուած էր: Մինչեւ աւերուելը վանքը պահպանում էին Տատեան գերդաստանի անդամները: Թիերի՝ Հմր 149, էջ 30, վիճակ՝ հիմնովին աւերուած:

175* Տեղ. բառ., Գ/987. Ս. Նիկողայոս, Բթառիճու Ս. Նիկողոս, Ս. Նիկողայոս Սքանչելագործ, Ս. Նիկողոսայ վանք, Փթառիճի վանք - Վանք Երզնկայի գաւառում, Բթառիճ գիւղի մօտ: Վանքն ունէր մի հին եկեղեցի եւ տարբեր նպատակների համար կառուցուած շինութիւններ: Աւերուել ու լքուել է 1915 թ.: Թիերի՝ Հմր 151, էջ 30, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

176* Տեղ. բառ., Դ/225. Չարչարանաց վանք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Լուսաւորչի Չարչարանաց վանք, Մերձանայ վանք, Մերձանի վանք, Չարչարանաց Ս. Լուսաւորչի վանք, Տատասկավանք, Տատասկի վանք - Վանք Եկեղեաց գաւառում, Երզնկայից *20-22* կմ հռ-մք: Գաւառի ամենահին ու ամենամեծ վանքն էր: Ըստ Ագաթանգեղոսի կառուցուել է Տրդատի ու Գրիգոր Լուսաւորչի օրոք, հեթանոսական մեհեանի տեղում: Մշակոյթի կենտրոն էր, ունէր ձեռագրեր, սրբերի մասունքներ: Թիերի՝ Հմր 144, էջ *29*, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

177* Տեղ. բառ., Ե/275. Երզնկայի գաւ., Երզնկա քաղաքից հս-արլ: Ի. դ. սկզբներին աւերակ էր: Թիերի՝ Հմր 143, էջ 29, վիճակ՝ հիմնովին աւերուած:

178* Հմմտ. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, Երեւան, 1999, էջ 218: Պալեանն ըստ երեւոյթին թիւրիմացութեան մէջ է. յայտնի է, որ նշանաւոր Հերմոնի վանքմենաստանը Վայոց ձորում էր, որ հաստատում են այնտեղ ընդօրինակուած բազմաթիւ ձեռագրերի յիշատակարաններ (տե՛ս Հմր 306): Երզնկայում Հերմոնի վանքի գոյութիւն արձանագրելու նրա միակ հիմք-աղբիւրը Մեծոփեցին է. սակայն, ըստ ամենայնի, իրաւացի է Հ. Աճառեանը (Հայոց անձնանուն. բառ., հ. Գ, էջ 653-4), որ «Եկեղեաց» ձեւը համարում է «Եղեգեաց»ի սխալ ընթերցման արդիւնք: Մեծոփեցին բացի վերոյիշեալ Յիշատակարանից, որ Կ. Կոստանեանցը հրատարակել է 1892 թ., իր Պատմութեան մէջ գրել է. «...Եւ նորա ժողովեալ զբազումս ի յաշակերտաց իւրոց՝ զՄխիթարն ի Տաթեւու, զՅովհաննէսն ի յԵղեգեաց ի վանիցն Հերմոնի...». տե՛ս Մեծոփեցի, Պատմագրութիւն, Երեւան, 1999, էջ 76-7:

179* Տեղ. բառ., Գ/21. Ս. Կարապետ Միաւորու վանք, Միամոր Ս. Կարապետ, Միաւոր Ս. Կարապետ, Միաւորու վանք - Վանք Երզնկայի գաւառում: Գտնւում էր Երզնկայից 8-10 կմ հեռավորութեամբ, Սեպուհ լեռան գեղատեսիլ եւ օդասուն լանջին: Ունէր

քար ու կրով կառուցուած մի փոքրիկ տաճար եւ պարիսպներ: Ծրջակայքում մնում էին կիսաւեր շէնքեր: Ըստ աւանդութեան կառուցուել է այնտեղ, որտեղ գտնուել է Գր. Լուսաւորչի կորած ջրհին: Այստեղ Գր. Լուսաւորիչը 310 թ. իր որդի Արիստակէսին եպիսկոպոս է ձեռնադրել: Ոմանք գտնում են, որ ժամանակակից է Գլակայ վանքին: Թիերի՝ Հմր 152, էջ 30, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[180]* Յիշ. 1201 թ.՝ «...Յամի վեց հարիւրերորդի յիսներորդի (1201) թուականութեանս Հայոց, ի գաւառիս Դարանաղեաց ի լեառն սրբոյ Լուսաւորչին մերոյ՝ մեծին Գրիգորի, մերձ ի յայրս սրբուհոյն Մանէ, ի ստորեաւ ի խոնարհ առաջի հանգստարանաց նոցին, յանապատիս, որ կոչի սրբոյն Գրիգորի, որ ինքն սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգորիոս կառուցեալ ձեռամբ իւրով ի յանապատիս յայս մատուռ մի յանուն սուրբ Կարապետին: Ընդ հովանեաւ այս սուրբ Կարապետիս գրեցաւ ամենագով եւ հռչակելի, գերակատար... սուրբ Աւետարանս, չորեքճառագայթեան...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 681:

Յիշ. 1363 թ.՝ «Գրեցաւ աստուածային այս մատեան ի թուին Հայոց ՊԺԲ. (1363), ի դամբարանի սրբոյ Լուսաւորչիս Ջորեհանգիստ կոչեցելոյ, ընդ հովանեաւ սուրբ մօրս լուսոյ Աստուածածնիս, ձեռամբ մեղուցեալ ոգւոյ Սամուէլի սուտանուն կրօնաւորի... ի յստոյգ եւ յընդրելագոյն օրինակէ... ի յառաջնորդութեան հայր Աստուածատրոյ...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 460:

Յիշ. 1373 թ.՝ «...Գրեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ տիեզերալոյս մեծ րաբունապետին Յոհաննու Որոտնեցւոյ յաստուածապահ գաւառս Եկեղեաց, յանապատիս Լուսաւորչի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, զոր շինեալ է նոյն ինքն հայրն մերոյ սրբոյն Գրիգորի: Որ եւ ի սմին եղեալ ձեռնադրութիւն Ըռստակէսի: Ի թվականութեան Հայոց Պ.-որդի, Ի.-երրորդի, երկրորդի (1373...)». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 507:

[181]* Տեղ. բառ., Դ/144. Ծոխայի Ս. Ծողակաթ, Իշոխի վանք, Ծոխայի վանք, Ս. Ծողակաթ Աստուածածին, Ծողակաթ Ս. Աստուածածին վանք, Ծողակաթի վանք - Վանք Երզնկայի գաւառում, Երզնկա քաղաքից արմ, Ծող գիւղից վերեւ: Ըստ աւանդութեան՝ վանքը հիմնադրել է Թադէոս առաքեալը, ապա վերաշինուել է Ներսէս Մեծի կողմից: Կանգուն էր եւ գործում էր մինչեւ 1915 թ.: Թիերի՝ Հմր 133, էջ 27, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[182]* Տեղ. բառ., Ա/348. Ս. Աստուածածին, Չարխափան Ս. Աստուածածին - Վանք Երզնկայի մօտ, Սեպուհ լեռան ստորոտում: Ըստ աւանդութեան հիմնադրել է Թադէոս Առաքեալը, իսկ առաջին անգամ հիմնական վերանորոգել է Ներսէս Մեծ կաթողիկոսը: Վերջին անգամ նորոգուել է 1684ին: Նոր ժամանակներ էր հասել միանգամայն խարխլուած վիճակում: Աւերուել է 1915 թ.: Թիերի՝ Հմր 148, էջ 29, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[183]* Տեղ. բառ., Ա/794. Գառնիկ Ճգնաւոր - Վանք, ուխտատեղի Երզնկայի գաւառի Տաճրակ գիւղի մօտ: Ըստ աւանդութեան հնում եղել է Գառնիկ Ճգնաւորի նախ ճգնարանը, ապա՝ գերեզմանը եւ նոյնանուն վանք: Հետագայում այն դարձել էր թուրքական ուխտատեղի՝ Սուլթան սէիդ անունով: Հմմտ. Գառնկայ (Աւագ) վանք Դարանաղի գաւառում: Թիերի՝ Հմր 138, էջ 28, վիճակ՝ անյայտ:

[184]* Տեղ. բառ., Ե/444. Ս. Քրիստափոր վանք - Վանք Բարձր Հայքի Եկեղեաց գաւառում: Մինչեւ ԺԹ. դ. վերջերը կանգուն էր: Աւերակները գտնւում էին Երզնկա քաղ.ի եւ Տաճրակ գիւղի միջեւ, Պրաստիկ գիւղի հր-արմ կողմում: Հին եկեղեցու քարերը օգտագործուել են Արմ. Եփրատի կամրջի համար: Թիերի՝ Հմր 132, էջ 27, վիճակ՝ անյայտ:

[185]* Տեղ. բառ., Ե/102-3. Խաչկավանք, Մեծն Ներսէսի վանք, Ս. Ներսէսի վանք, Ս. Ներսէս Հայրապետ, Ջուխտակ Հայրապետ, Տիրանաշէն, Տիրաշինուց վանք - Վանք, մենաստան, անապատ, ուխտ Եկեղեաց գաւառում: Հիմնադրուել է Տրդատ (ըստ այլ աղբիւրների՝ Տիրան) թագ.-ի օրոք՝ Դ. դ.: Հետագայում՝ 1273 թ., երբ Ներսէս Հայրապետի աճիւնը Թիլ աւանից տեղափոխում են այստեղ, վանքը վերանուանում են նրա անունով՝ Ներսէսի վանք: Այստեղ է թաղուել նաեւ Արիստակէս հայրապետը: ԺԴ.-ԺԵ. դդ. եղել է գրչութեան յայտնի կենտրոն: Գործել է մինչեւ 1915 թ.: Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 182, էջ 35, վիճակ՝ անյայտ:

[186]* Յիշատակարանք՝ ա. 1302 թ.՝ «... Ի թվ. ՉԾԱ. (1302) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Կարապետի մեղաւորի... ի յանապատիս, որ կոչի Տիրաշէն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսակիր սուրբ Նշանիս եւ այլ վեհագոյն սրբոցն...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 11:

բ. 1310 թ.՝ «...Արդ, գրեցաւ գանձտետրս ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ կենսակիր սուրբ Նշանիս, ի Տիրաշէնն, ձեռամբ յոգնամեղ եւ տխմար գրչի Կարապետի. ՉԾԹ. (1310):» ԺԴ. դ. յիշատ., էջ 73-4:

գ. 1314 թ.՝ «... թվ. Մեծ Հայոց էր ՉԿԳ. (1314): ...Եւ զի ծննդեամբ էի յերկրէն Խարբերդոյ, ի գաւառէն Ծաղման կոչեցեալ, եւ մայրական գրկօք եկեալ ի գաւառն Եկեղեաց, եւ անդ սնեալ ի մեծահռչակ վանքն Տիրաշէն, եւ անդ ուսեալ, որպէս ասացի, եւ կրօնաւորեալ...»: ԺԴ. դ. յիշատ., էջ 103:

Յիշ.՝ 1391 թ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 593-4:

Յիշ.՝ 1465 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 241:

[187]* Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 158, էջ 31, վիճակ՝ անյայտ:

[188]* Տեղ. բառ., Բ/451. Թիլ, Թիլնի վանք, Թլայ վանք, Ս. Խաչ, Ջուխտակ Հայրապետ, Ջուխտակ Հայրապետաց վանք, Ջուխտակ սուրբեր - Վանք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Եկեղեաց գաւառում, Թիլ աւանում: Կառուցուել է Դ. դարից յայտնի Կաթողիկէ եկեղեցու տեղում: 1273 թ. կաթողիկոսների աճիւնները տեղափոխուել են Երիզա-Երզնկա ք-ի մօտի Տիրաշէն վանքը: Թիլայ վանքի հիմնադրման եւ աւերման ժամանակները յայտնի չեն: Ի. դ. սկզբներին վանքից մնում էր միայն մի փոքրիկ կիսաւեր մատուռ: Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 142, էջ 28, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[189]* Տեղ. բառ. Բ/930. Գայլիփոս, Կայլիփոսի Ս. Յակոբ, Մծբնայ Հայրապետի վանք, Կապոս, Կապոսի Ս. Լուսաւորիչ վանք, Կապոսի Ս. Յակոբի վանք, Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետի վանք, Ս. Յակոբ Կայլիփոսի վանք - Վանք, անապատ Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գաւառում: Հիմնուել է ԺԲ. դ., բայց աւանդաբար նրա կառուցումը կապում են Տրդատ Գ.-ի ժամանակների հետ: ԺԹ. դ. վերջերին եւ Ի. դ. սկզբներին արդէն աւերուած ու ամայի էր: Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 174, էջ 34, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[190]* Յիշ. 1230 թ.՝ «...Բայց գրեցաւ աստուածային գանձս ի տաւնայխմբութիւն սրբոց մարտիրոսաց, ի թուականութեան Հայկազեան տոմարի ՈՀԹ. (1230), ի լեառն Սուրբ Լուսաւորչիս, յանապատիս որ կոչի Կապոսի, հրամանաւ պատուական քահանայից...». տե՛ս ԺԳ. դ. յիշատ., էջ 165:

Յիշ.՝ 1255, 1270 թթ., տե՛ս ԺԳ. դ. յիշատ., էջ 282, 392:

Յիշ.՝ 1416, 1425 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 186, 343:

Յիշ.՝ 1466 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 251:

Նաեւ յիշ.՝ 1489, 1490, 1494, 1495, 1496, 1497, 1498, 1499 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 141, 142, 160, 203, 205, 207, 220-2, 232, 233, 234, 247, 248, 249, 272, 287:

191* Թիերի՝ Հմր 179, էջ 35, վիճակ՝ անյայտ:

192* Թիերի՝ Հմր 145, էջ 29, վիճակ՝ հիմնովին աւերուած:

193* Թիերի՝ Հմր 485, էջ 89, վիճակ՝ անյայտ:

194* Տեղ. բառ., Բ/187. ԺԹ. դ. վերջերին արդեն աւերակ էր: Թիերի՝ Հմր 137, էջ 28, վիճակ՝ հիմնովին աւերուած:

195* Տեղ. բառ., Բ/243. Երկանի Ս. Գէորգ, Ս. Գէորգ Զորավար, Երկանայ Ս. Գէորգ, Երկանի վանք - Վանք Արմ Հայ-ում, Երզնկա գաւ-ում: Թիերի՝ Հմր 146, էջ 29, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

196* Տեղ. բառ., Ե/457. Ալեմջերահ, Ս. Օգսենդ, Ս. Օգսենիոսի վանք, Օգսենտի վանք - Վանք Երզնկայի գաւառում, Կարմրի գիւղի մօտ: Ի. դ. սկզբին աւերակ ուխտատեղի էր եւ կոչւում էր Ալեմջերահ: Ունեցել է երկու եկեղեցի: Թիերի՝ Հմր 154, էջ 30, վիճակ՝ հիմնովին աւերուած:

197* Յիշատակարան 1488 թ.՝ «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուաբերութեանս Հայոց ՋԼԷ. (1488), ձեռամբ մեղաւոր եւ անպիտան ծառայիս Աստուծոյ Ղազար երիցու, ի գաւառս Եկեղեաց, ի վանքս սուրբ Աւգսէնդ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 121:

198* Թիերի՝ Հմր 156, էջ 31, վիճակ՝ անյայտ:

199* Տեղ. բառ., Բ/478. Պաղ ապուրի վանք - Յիշատակւում է ԺԴ. դարից: Աւերուել ու լքուել է ԺԹ. դ. վերջերին: Պաղ ապուրի վանք է կոչվել, քանի որ մեծ պասի ժամանակ այստեղ այցելող ուխտաւորները սնուել են միայն պաղ ապուրով: Թիերի՝ Հմր 135, էջ 27, վիճակ՝ անյայտ:

200* Տեղ. բառ., Բ/385. Ըստ աւանդութեան հիմնադրել է Թադէոս Առաքեալը: Աւերուել է 1895 թ. թուրքերի կողմից, որից հետո լքուել ու ամայացել է: Թիերի՝ Հմր 486, էջ 89, վիճակ՝ անյայտ:

201* Տեղ. բառ., Բ/885. Ներսէս Հայրապետի վանք, Աբկաթաղի վանք - Գոյութիւն ունէր Դ. դարից: Ըստ ոմանց՝ այստեղ է թաղուել Ներսէս կաթողիկոսը, որի պատճառով էլ վանքը երբեմն յիշատակւում է նրա անունով: Թիերի՝ Հմր 139, էջ 28, վիճակ՝ հիմնովին աւերուած:

202* Տեղ. բառ., Ե/201՝ Վանք Էրզրումի նահանգի Երզնկայի գաւառում, Կամախի գաւառակի Ուռի գիւղում: Թիերի՝ Հմր 170, էջ 33, վիճակ՝ անյայտ:

203* Տեղ. բառ., Ա/473. Արմտանայ Ս. Գէորգ - Վանք Բարձր Հայքի Դարանաղի գաւառի Արմտան գիւղում: Նոր ժամանակներում սովորական մատուռ էր, որ աւերուել է Ի. դ. սկզբներին: Չպէտք է շփոթել նոյն գաւառում գտնուող Կամախի Ս. Գէորգ եւ Ուռիի Ս. Գէորգ վանքերի հետ: Թիերի՝ Հմր 164, էջ 32, վիճակ՝ հիմնովին աւերուած:

204* Տեղ. բառ., Գ/481. Ջնձոր, Ցընցորի վանք, Ցնձոր, Ցնձորի վանք, - Վանք Երզնկայի գաւառի Կամախի գւոկ-ում: Թիերի՝ Հմր 197, էջ 38, վիճակ՝ անյայտ:

205* Տեղ. բառ., Ա/354-5. Ս. Առաքելոց վանք, Ս. Բարդուղիմէոս Առաքեալի վանք, Գառնկավանք, Գառնոյ վանք, Դարանաղեաց Աւագ վանք, Դերեվանք, Ս. Թադէոս Առաքեալի վանք, Լուսաւորիչ Մեծ, Ս. Լուսաւորչի մենաստան, Ս. Լուսաւորչի Չարչարանաց վանք, Կառնոյ վանք, Տերեվանք - Վանք Դարանաղի գաւ-ում: Գտնւում էր Սեպուհ լեռան վրայ եւ կանգուն էր ու գործում էր մինչեւ 1915 թ.: Ըստ աւանդութեան վանքը հիմնադրել են Թադէոս Առաքեալն ու Գրիգոր Լուսաւորիչը: Ծաղկման էր հասել ԺԳ. դարում: ԺԲ-ԺԵ. դդ. գրչութեան եւ մատենագրութեան յայտնի կենտրոն էր: Թիերի՝ Հմր 169, էջ 33, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

206* Այս յիշատակարանը թերեւս վերաբերում է աւելի շուտ Հմր 136/34՝ Ս. Լուսաւորչի վանքին:

[207]* Հմմտ. Հ[մր] 114/12՝ Գառնիկ Ճգնաւորի վանք: Երզնկայի գաւառի վանքերի մշակութային դերին եւ նշանակութեանն է նուիրուած Կ. Տէր-Մկրտչեանի յօդուածը, որտեղ հրապարակել է Աւագ վանքում 1599 թ. գրուած մի ընդարձակ չափածոյ յիշատակարան. տե՛ս նրա՝ «Մահմեդական լուծը եւ նրա բռնութեան ներքոյ ծաղկող հայ վարդապետարանները» յօդուածը (Արարատ, 1913, էջ 586-604): Գ. Ստեփանեանն իր «Երզնկա» աշխատութեան (Երեւան, 2005, էջ 158-229) էջերում անդրադարձել է Երզնկայի վանքերին եւ թուարկել երեսունմէկ անուն:

Յիշ. 1200 թ.՝ «Արդ, յանգ ելեալ կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Վարդանա... ի գաւառիս, որ կոչի Դարանողեաց, ի լերինս Սեպուհ, յորում կա հանգստարան Սուրբ Լուսաւորչին՝ առընթեր գոլով վկայուհւոյ բնակութեան եւ շիրմի, որ կոչի Մանէ Այրի, որում ողորմեսցի Քրիստոս Աստուած ամենեցուն, ի մենաստանիս, որ կոչի Աւագ վանք, առ դրան Սրբոյ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Առաքելոցս... Յամի Ո.որդի յիսներորդի, միով պակաս (1200) կատարեցաւ գծագրութեամբ սուրբ Աւետարանս...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 646:

Յիշ. 1227 թ.,՝ տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 851, 854:

Յիշ. 1331 թ.,՝ «...Ես՝ Կոստանդին ծառա Քրիստոսի, գրեցի զսուրբ մատեանս... Բայց եղեւ զրաւ գրչութեան սորա ի սուրբ ուխտս կոչեցեալ Աւագ անապատ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս, ի թուականիս Հայոց ՉՁ. (1331), հայրապետութեան տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան քրիստոսապսակեալ արքային Լեւոնի». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 242-3:

Յիշ. 1336, 1366, 1371, 1372, 1383 թթ.,՝ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 290, 475, 500, 505-6, 546:

Յիշ. 1405, 1407, 1408, 1411, 1418, 1439, 1445 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 54, 83, 88-9, 130, 138, 139, 222, 495, 588:

Յիշ. 1463, 1464, 1469, 1471, 1480 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 190, 206, 211, 212, 213, 294, 327, 446:

Յիշ. 1481, 1482, 1483, 1484, 1485, 1486, 1487, 1488, 1491, 1494, 1496 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 18, 32, 51, 66, 74, 90, 93, 105, 123, 179, 207, 233:

Տե՛ս նաեւ ԺԵ. դ. յիշ., Գ., (Յաւել. Ա.), 1409, 1432, 1464 թթ., էջ 321, 372, 440:

[208]* Թիերի՝ Հ[մր] 165, էջ 32, վիճակ՝ անյայտ:

[209]* Տեղ. բառ., Բ/858. Ծնանառճի Ս. Աստուածածնի վանք, Ծնանառճի մենաստան, Ծնան Առճոյ անապատ, Ծնան Առճոյ վանք - Վանք՝ անապատ, մենաստան Բարձր Հայքի Դարանաղի գաւ-ում, Սեպուհ լ-ան մօտ: Թիերի՝ Հ[մր] 168, էջ 33, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[210]* Տեղ. բառ., Ա/964. Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մանեայ այր Սեպհոյ, Մանեայ այրք, Մանեայ վանք, Մանեաց այր, Մեծ Լուսաւորիչ, Սեպհոյ վանք, Սեպհոյ Մեծ Լուսաւորիչ, Սեպուհի վանք, Սեպուհ Ս. Լուսաւորիչ - Վանք Երզնկայի շրջանում, Սեպուհ լեռան բլուրներից մէկի վրայ: Ունի գեղեցիկ եկեղեցի, որի պատերի վրա պահպանւում էին հայերէն արձանագրութիւններ: Մինչեւ 1915 թ. կանգուն էր եւ շրջակայքի հայութեան սիրած ուխտավայրերից էր: Ըստ աւանդութեան կառուցել է Գր. Լուսաւորիչը... Վանքի մօտ կայ մի յորդառատ աղբիւր (Լուսաղբիւր), որը իբր բխել է Լուսաւորչի հրամանով: Միջին դդ. եղել է գրչութեան կենտրոն, մեզ են հասել 1201, 1207, 1224, 1446 թթ. այստեղ ընդօրինակուած ձեռագրեր: Աւերուել ու լքուել է 1915-18 թթ.: Թիերի՝ Հ[մր] 175, էջ 34, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[211]* Յիշ. 1201 թ.՝ «...Յամի վեց հարիւրերորդի յիսներորդի (1201) թուականութեանս Հայոց, ի գաւառիս Դարանաղեաց, ի լեառն սրբոյ Լուսաւորչին մերոյ մեծին Գրիգորի,

մերձ ի յայրս սրբուհւոյն Մանէի, ի ստորեւ ի խոնարհ առաջի հանգստարանաց նոցին, յանապատիս, որ կոչի Սրբոյն Գրիգորի, ընդ հովանեաւ նորին գրեցաւ ամենագով եւ հռչակելի... սուրբ Աւետարանս...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 686-7. վերահրատ.՝ ԺԳ. դ-ի յիշ-ք, էջ 14-8:

Յիշ. 1295 թ.՝ «Եւ արդ, գրեցաւ սա ի թուաբերութեան Աբեդական տումարիս ՉԽԴ. (1295)... ի մէջ երկուց գաւառաց Եկեղեաց եւ Դարանաղեաց, եւ հռչակաւոր մենաստանս Սուրբ Գրիգոր կոչեցեալ, առ դամբարանի Սրբոյն Լուսաւորչին մերոյ, ձեռամբ Ստեփանոսի... Գիրքս այս սուրբ Գրիգոր Լուսաւորչին գերեզմանին է, որ է ի լերինն Սեպոյ, ի յայրսն Մանեայ, որ է յընկերաց Սրբոց Հռիփսիմեանց...». տե՛ս ԺԳ. դ. յիշ. էջ 762-3:

Յիշ. 1296 թ.,՝ տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 780:

Յիշ. 1310 թ.՝ «Գրեալ ի թվ. ՉԾԹ. (1310), ի գաւառին Դարանաղեաց, ի սուրբ եւ հռչակաւոր ուխտս Սուրբ Գրիգոր, մերձ առ դամբարան սուրբ Լուսաւորչին, ի լերինն Սեպուհ եւ Մանէ այր կոչեցեալ...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 72:

Յիշ. 1434, 1442, 1449 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 441, 539, 640:

Յիշ. 1457 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 94:

Յիշ.՝ 1487, 1499 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 469, 473-4:

212* Տեղ. բառ., Դ/591. Ս. Սերովբէ եւ Ս. Քերովբէ վանք, Ս. Մինաս, Ս. Մինասի անապատ, Սեբէ, Սեբեայ, Ս. Սերովբէից վանք, Սերովբեք-Քերովբեք, - Վանք Եկեղեաց գաւառում, Երզնկայից արմ, Կայիփոսի վանքի մօտ: Ըստ աւանդութեան հիմնադրուել է Դ. դ., Գր. Լուսաւորչի ջանքերով: Թիերի՝ Հ^մր 180, էջ 35, վիճակ՝ կանգուն:

213* Թիերի՝ Հ^մր 181, էջ 35, վիճակ՝ անյայտ:

214* Թիերի՝ Հմր 173, էջ 33-4, վիճակ՝ կանգուն:

215* Տեղ. բառ., Դ/9. Ս. Նշան, Արեգակ Ս. Նշան, Թորդանայ վանք, Թորդանի Ինն սրբոց գերեզմանք, Թորդանի վանք, Թորթանու Ս. Փրկիչ, Ինն գերեզմանք, Ինն սրբոց վանք, Ս. Խաչ, Ս. Մինաս, Ս. Նշանի վանք, Ս. Փրկիչ - Վանք Դարանաղի գաւառի Թորդան աւանում: Ըստ աւանդութեան կառուցուել է Դ. դ., Գրիգոր Լուսաւորչի նախաձեռնութեամբ, հեթանոսական մեհեանի տեղում: Վանքի համալիրն ունէր ներքին եւ արտաքին երկու տաճար: Ներքին տաճարի բեմի տակ են թաղուած Տրդատ Գ. թագաւորը, Աշխէն թագուհին, նախարարներ, թագաւորի քոյր Խոսրովիդուխտը: Հիւս. կողմում, կամարի տակ ամփոփուած են Վրթանէսի, Յուսիկի աճիւնները, իսկ արմ. կամարների տակ գտնւում են Գր. Լուսաւորչի գերեզմանը եւ այլ շիրիմներ: Դրա համար էլ վանքը անուանուել է նաեւ Ինն սրբոց գերեզմաններ: Թիերի՝ Հ^մր 178, էջ 34, վիճակ՝ անյայտ:

Տեղան. բառարանը անհիմն կերպով նոյնացրել է Ս. Փրկիչ եւ Ս. Նշան վանքերը (Դ/9): Ս. Փրկիչը՝ յայտնի «Ինն սրբոց գերեզմանք», տարբեր է Ս. Նշանի վանքից. տե՛ս Յակոբեանց Դանիէլ վրդ. (առաջնորդ Երիզայի)՝ Սեպուհ լերան սրբավայրերը, Արարատ, 1901, էջ 362-5, Հ. Ոսկ., Բարձր Հայքի վանքերը, էջ 29-31:

216* Տեղ. բառ., Բ/190. Աստուածածին Աւագ, Կամախի Ս. Աստուածածին, Իւղաբեր Ս. Աստուածածին, Քէմախի Ս. Աստուածածին - Վանք Երզնկայի գաւ-ում, նոր ժամանակներում արդէն աւերակ ու ամայի էր: Մինչեւ Ի. դ. սկզբները պահպանւում էին եկեղեցու շէնքի աւերակները: Ունէր երկու կաթողիկէ, որ հայերը կոչում էին Եղնաբեր Ս. Աստուածածին:

217* Թիերի՝ Հ^մր 172, էջ 33, վիճակ՝ տաճիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[218]* Տեղ. բառ., Բ/739. Խլաձորի վանք, Ս. Գրիգոր, Խլաձորի Ս. Գրիգորի վանք - Վանք Դերջան գաւառում, ԺԱ. դարում սելջուկները կողոպտել են վանքը: Հետագայում նորից բարձրանում է այն: Հմմտ. Հ. Ոսկ., Բարձր Հայքի վանքերը, 1951, էջ 162: Թիերի՝ Հմր 199, էջ 38, վիճակ՝ անյայտ:

[219]* Տեղ. բառ., Ա/956-7. Գորոբու վանք, Գորոփու Ս. Թէոդորոս, Գորոբու Ս. Թորոս, Դերջանի Սրըխլը Ս. Թորոս, Սեղեմնուտի վանք, Սրըգլը Ս. Թորոս, Սրխչի Ս. Թորոս, Քորոփու վանք - Վանք Երզնկայի գաւառում: Ըստ աւանդութեան կառուցել է տուել Գր. Լուսաւորիչը՝ Թէոդորոս Առաքեալի յիշատակին: Ըստ տեղեկութիւնների Ե. դ. այս վանքում որոշ ժամանակ ապրել ու ստեղծագործել են Փաւստոս Բուզանդն ու Ղազար Փարպեցին: Մինչեւ 1915 թ. կանգուն էր եւ շրջակայքի հայերի սիրուած ուխտատեղին: Վանքի վրայ այն ժամանակ կար 1764 թ. մի արձանագրութիւն: Թիերի՝ Հմր 150, էջ 30, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[220]* Յիշ. 1406 թ.՝ «Ի թվ. ՊԾԵ. (1406), ի մայիս ԻԲ. (22), ընդ հովանեաւ Գորոփոսիսի՞ սուրբ Թէոդորոսի մեծափառ բարձրապատիւ ուխտի, ի դուռն սուրբ Սարգսի զաւրավարի եւ որդւոյ նորա Մարտիրոսի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 65:

[221]* Տեղ. բառ., Բ/43. Ապարանից Ս. Գրիգորի վանք, Ս. Դաւիթ, Ծակքարի Ս. Դաւիթ - Վանք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դերջան գաւ-ում: Հիմնադրուել է հաւանաբար ԺԳ. դ., ոմն Դաւթի կողմից, որի գերեզմանը պահպանւում էր վանքի բակում: Ունէր մի մատուռ՝ մի խորանով: Շրջակայքում կային խաչարձաններ, աւերուել է 1915 թ.: Թիերի՝ Հմր 201, էջ 39, վիճակ՝ կանգուն:

[222]* Յիշ. 1202 թ.՝ «Պոոխորոս Գ. ամովք յետոյ գրեցի, ի վանքս Դաւթա ՈԾԱ. (1202) թուին». տե՛ս Գ. Յովս., Յիշ., էջ 636, վերահրատ.՝ ԺԳ. դ. յիշ., էջ 32:

[223]* Տեղ. բառ., Դ/146. Շողունի Ս. Կարապետ, Ս. Կարապետ, Շողունայ վանք - Վանք Էրզրումի նահանգի Դերջանի գաւառակում, Շողուն գիւղում: Աւանդաբար վանքի հիմնադիրը համարուել է Գրիգոր Լուսաւորիչը: 1902 թ. եկեղեցին դեռեւս կիսականգուն էր: Թիերի՝ Հմր 214, էջ 41, վիճակ՝ անյայտ:

[224]* Տեղ. բառ. Բ/65, արձանագրում է նոյնանուն վանք Գեղարքունիքի գաւառում:

[225]* Թիերի՝ Հմր 200, էջ 38, վիճակ՝ անյայտ:

[226]* Յիշ. 1406 թ.՝ «Յանուն ամենակալին Աստուծոյ հօր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ. նուաստ Ենովք աբեղայս ի Պղնձայգոյ անապատէն գնեցի զսուրբ տառս, որ է տեսութիւն Սաղմոսին եւ Երեմիայի եւ Երգ երգոցին՝ մի մեկնիչ եւ այլ բազում բանք պիտանիք եւ աւգտակարք:... Ի թվ. ՊԾԵ. (1406), յունիս ամսոյ ի ԺԴ. (14)». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., (Յաւել. Ա.), էջ 317:

Յիշ. 1451 թ.՝ «Ի թուականութեանս Հայոց Ջ. (1451) գրեցաւ տառս աստուածայինս եւ տիեզերաքարոզ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան աբեղի Մովսէսի... Բայց գրեցաւ սա ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս ի Պխընձայգոյ աւագ անապատս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, եւ սուրբ Կարապետիս, եւ սուրբ Լուսաւորչիս, եւ սուրբ Սարգսիս, եւ սուրբ Նշանացս, եւ սուրբ Նշխարացս, եւ այլ բազմահաւաք սրբոց, որ կան աստ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 10-11:

[227]* Տեղ. բառ., Ա/113. Ախթայ, Անթախու վանք, Ս. Առաքեալ վանք, Թադէի վանք, Թարգմանչաց վանք, Մակաբայեցւոց վանք, Սպիտակ վանք - Վանք Արմ. Հայաստանում, Դիարբեքիրի նահանգում: Ըստ աւանդութեան կառուցուել է Թադէոս առաքեալի կողմից: Կոչւում է նաեւ Թադէի կամ Ս. Առաքեալ վանք: 1321 թ. երկրաշարժից փլուել է, ապա վերանորոգուել: Եղել է գրչութեան կենտրոն: Թիերի՝ Հմր 113, էջ 23, վիճակ՝ անյայտ:

[228]* Գ. Տէր-Կարապետեանը 1895 թ. եղել է Մակաբայեցւոց վանքում եւ տեսել է ընդամէնը 25-26 կտոր ձեռագիր, որոնցից «Տասնչորս ձեռագիրք ունէին միայն յիշատակարաններ, զորս ամբողջութեամբ հաւաքեցի». տե՛ս Գ. Տէր Կարապետեան, Տարօնի..., Ուղեւորի յիշատակներ, էջ 224:

Յիշ. 1321 թ.՝ «Յամի Տեառն 1321 եւ Տումարիս ՉԸ. [ՉՀ.] ի Հայրապետութեան Տէր Կոստանդինի եղեւ ահագին շարժ յարեւելս, եւ զԹադէոս Առաքելոյ վանքն եւ զեկեղեցի կործանեց, եւ զտունս փլեց, վերստին շինեաց զվանքն եւ զեկեղեցի Տէր Զաքարէ». տե՛ս Գ. Տէր-Կարապետեան, Տարօնի..., Ուղեւորի յիշատակներ, էջ 221:

Յիշ. 1665 թ.՝ «Յիշատակ է Աւետարանս հալէպցի խոճա Միւրատճանին, ամենապայծառ վանուց Աթախու, որ ասի Ս. Առաքեալ ի, վայելումն Աստուածատուր վարդապետին, ի բազմիլն այնմ աթոռայ արքեպիսկոպոս Դանիէլ վարդապետի, թվ. ՌՃԺԴ. (1665)». տե՛ս Գ. Տէր Կարապետեան, Տարօնի..., Ուղեւորի յիշատակներ, էջ 239:

Յիշ. 1620 թ.՝ «Զստացող սբ. տառիս զտէր Բարսեղ աստուածաբան վարդապետն յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ դասք ընթերցողաց, որ ստացաւ զսուրբ գիրքս եւ եդ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղաց իւրոց, ի հայրենի եւ ի սեփհական երկիրն իւր, աստուածապահ գաւառն Յաթախ, ի դուռն Ս. Առաքելոց, որ են անդ նշխարք սբ. Մակաբայեցւոցն... Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս հայկազնեայ ՌԿԹ. (1620...)». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 720:

Յիշ. 1582 թ.՝ «...Եւ յերկարեալ անդ ամս Ե. (5) փոխի յաստեացս մեծ վարդապետն Յոհաննէս ծերացեալ ամաւք, ՌԼԱ. (1582) թուին, որ էր վերատեսուչ Ամիթ քաղաքին, եւ բնակէր ի սուրբ ուխտն առ դամբարանի սրբոյն Շամունի, եւ եօթն որդւոց նորա ի վանս Աթխայ...». տե՛ս Ցուցակ Ս. Կարապետի, էջ 23:

[229]* Տեղ. բառ., Բ/473. Թըրջիլի վանք, Ս. Թովմա Առաքելոյ վանք, Ս. Թովմասի վանք, Ս. Թովմաս Առաքեալ, Թոճըլու վանք, Թրջիլի վանք, Թրջլոյ վանք - Վանք Արմ. Հայաստանում, Դիարբեքիրի նահ.-ում, Հազրոյի գաւ-ի Թրջիլ գ-ում: Աւերուել ու ամայացել է ԺԹ. դ. վերջերին: Չշփոթել մօտակայքում գտնուող միւս Ս. Թովմաս վանքի հետ: Թիերի Հմր 104, էջ 22, վիճակ՝ անյայտ:

[230]* Գեղամ Տէր Կարապետեանը 1895 թ. այցելել է այս վանք եւ բաւական մանրամասն նկարագրել. տե՛ս նրա Տարօնի վանքերը, Ուղեւորի յիշատակներ, Երեւան, 2003, էջ 217-8:

[231]* Տե՛ս Մանազկերտի Ս. Դանիէլի վանք (Հմր 237/3, ԾԱՆՕԹ.) աւելի ուշ մի ծանօթագրութեան մէջ սրբագրել է ինքը՝ Տ. եպս. Պալեանը. (Բիւզ., 1908, Հմր 3446, էջ 4):

[232]* Տեղ. բառ., Բ/473. Ս. Թովմաս - Վանք Արմ. Հայաստանում, Հազրոյի գաւառի Թրջիլ գ-ի մօտ: Չշփոթել Ս. Թովմաս վանքի հետ, որը անուանւում էր նաեւ Թրջիլի վանք: Թիերի Հմր 103, էջ 21, վիճակ անյայտ:

[233]* Տեղ. բառ., Ա/629. Ս. Աստուածածին, Ս. Աստուածածին Փոքր, Արկնոյ վանք, Ս. Բարձրահայաց վանք, Բարձր վանք, Սեւիդայի Ս. Աստուածածին, Սիրահայեաց Ս. Աստուածածին - Վանք, մեռաստան Պաղնատուն գաւառում, հին Արկնիի մոտակայքում, Չնքուշից 1,5-2 կմ հեռաւորութեան վրա: Ըստ վիմագիր արձանագրութիւնների վանքը հիմնել է Նաղաշ Մկրտիչ եպիսկոպոսը 1433 [1444 թ.] եւ նորոգուել է 1663 [1653 թ.] Եղիազար Այնթապցու կողմից: Եղել է թեմական աթոռանիստ: Աւերուել է առաջին համաշխարհային պատ. տարիներին: Թիերի՝ Հմր 101, էջ 21, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն: Հմմտ. հմր 168/1՝ Չնքուշի վանքը:

[234]* Յիշ-իս մասնակի վերահրատ. տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 582:

Այլ յիշ. 1433 թ.՝ «...Եւ սա զամենայն եկեղեցիս խախտեալ եւ ճնացեալ եւ զճողաշէնս՝ նոր նորոգեաց... որպէս զԲարձր Աստուածածինն ի գլուխ բարձր բերդին Արղնոյ: ...Դարձեալ, ի ՊՁԱ. (1432) թուին նստի յաթոռ ճայրապետական, եւ ՊՁԲ. (1433) թուին շինէ զԲարձր Աստուածածինն ի յԱրղնու բերդն...». տե՛ս Տիգրան Մկունդ, Ամիտայի արձագանգները..., էջ 300-1: Համառօտել է վերցնելով Ալիշանից, ճմմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 572-3: Յիշատակարանի վերաճրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 625-7:

Յիշ. 1449 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 632:

Յիշատ.՝ 1649, 1657, 1659 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 363, 784, 894:

բ. 1649 թ.՝ «Յիշատակ է սա Հոոմկլայեցի Եղիազար վարդապետին, ի դուռն Արղընու Բարձրաճայեաց Ս. Աստուածածնի, որ էր տեսուչ այսմ նաճանգի. տեսողքդ ասացէք զողորմին. թվին ՌՂԸ. (1649)». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 365:

[235]* Թիերի՝ Հ^{մր} 100, էջ 21, վիճակ՝ անյայտ:

[236]* Տեղ. բառ., Դ/468. Վանք Դիարբեքիրի նաճանգի Արղանամադենի գաւառում, Հրետան գիւղում: ԺԹ. դ. վերջերից աւերուած ու լքուած էր: Թիերի՝ Հ^{մր} 099, էջ 21, վիճակ՝ անյայտ:

[237]* Յիշ. 1649 թ.՝ «Արդ, գրեցաւ փրկական խորճուրդ պատարագի... ի թվականիս Հայոց ՌՂԸ. (1649), գրեցաւ ի դուռն Ակլայ Ս. Նշանին, Ս. Աստուածածնին, որ է դիւաց ճալած եւ բժիշկ ամենայն ցաւոց». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 363:

Յիշ. 1653 թ.՝ «...Նորոգեցաւ Մաշտոցս ի քաղաքն Ակլայ, ի դուռն Ս. Նշանին, ի թվին Հայոց ՌՃԲ. (1653) ամին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 575:

[238]* Տեղ. բառ., Գ/314. Վանք Արմ. Հայ-ում Դիարբեքիրի նաճ. Արղանամադենի գաւառում, Արղնիի գոկ-ում, Հրեդան գիւղի մօտ: ԺԹ. դ. երկրորդ կէսին արդէն աւերակ ու ամայի էր: Թիերի՝ Հ^{մր} 098, էջ 20, վիճակ՝ անյայտ:

[239]* Տեղ. բառ., Ե/293. Քաղցրաճայեաց Ս. Աստուածածնայ վանք, Հաւաի վանք, Հաւաու Ս. Աստուածածին, Քաղցրաճայեաց Ս. Աստուածածին, Քաղցրաճայեաց Ս. Աստուածածնի վանք, Քաղցրաճայեաց վանք - Վանք Արմ. Հայաստանում, Դիարբեքիրի նաճ-ի Բալուի գաւառակում, Հաւաւ գիւղի մօտ: 1890-ական թթ. մասամբ խարխլուած էր: Եղել է եպիսկոպոսանիստ եւ Բալուի առաջնորդների աթոռանիստը: Եղել է գրչութեան կենտրոն, ունեցել է վարժարան, տպարան, շատ ձեռագրեր: Թիերի՝ Հ^{մր} 125, էջ 25-6, վիճակ՝ շատ վատ, սակայն ճնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[240]* Յիշ. 1293 թ.՝ «...Իսկ ես՝ մեղուցեալս եւ մեղաւք լցեալս... անպիտանս Պարսոմոյ գծի սակաւ գիծս զայս... ի թուականիս Հայոց ՉԽԲ. (1293) ...Գրեցի զսա ի գեղաքաղաքիս Հաւաւ, ընդ ճովանեաւ Սուրբ Աստուածածնին». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 720:

Յիշ. 1468 թ.՝ (չափածոյ) «...Ազգանազեան գրոճի / Թուաբերութեանս տումարի / Իննճարիւր տասն եւ եւթի (1468) / Ջրաւ եղեւ այսմ տարի, / Որ անուամբ Մաշտոց կոչի / Յամուր դղեակս երեւելի, / Որոյ անուն Բալու կոչի, / Ընդ ճովանեաւ Սուրբ Աստուածածնի, / Որ Հաւավանք վերակոչի, / Աթոռ մերոյ ճայրապետի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., ճ. Բ., էջ 276:

Յիշ. 1623 թ.՝ «...Արդ, նորոգեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Բալու, ընդ ճովանեաւ Ս. Աստուածածնին, ...ի թվին ՌՀԲ. (1623), ձեռամբ անարժան Ռապատցի Սիմէոն սարկաւագի, որ մականուամբ Սառուխան կոչեն...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 112:

Յիշ. 1681 թ.՝ «Յիշատակ է գիրքս Սամուէլ վարդապետին եւ Խաչատուր վարդապետին, ի դուռն Բալուայ վանաց Սբ. Ա[ստուա]ծածնայ, որ է ճանդէպ Հաւվաւ գիւղին. չունի ոք ոչ ճրաման ծախելոյ կամ գրաւ դնելոյ, ո՛վ ոք յանդքնի վանացն ճանէ մասն

Ցուդայէ առցէ եւ պատիժն Կայենէ, լաւ պահողն եւ խնամ տանողքն օրհնի յԱստուծոյ եւ ամենայն սրբոցն. ամէն: Թուին ՌՃԼ. (1681)ի»:

Վերջին յիշատակարանը վերցրել ենք Կորիւն վարդապետի «Ճամբուս վրայ տեսած ձեռագիրներս», «Բանասէր» հանդէս (Փարիզ, 1905, էջ 274-80), որտեղ հեղինակը խոստանում է վանքի պատմութիւնը գրել «յետոյ, յարմար առիթի մէջ»:

Ցիշ. 1599, 1609, 1691 թթ.՝ տե՛ս Բանասէր, 1905, 277-9:

241* Տեղ. բառ., Գ/21. Վանք Բալուի գաւառակի Ալամ գիւղի մօտ, Քաղցրահայեաց Ս. Աստուածածին վանքից արմ: Ըստ աւանդութեան Դ. դ. Գր. Լուսաւորիչը այստեղ կառուցել է մատուռ, որը հետագայում վերակառուցել, վանք են դարձրել: Թիերի՝ Հմր 934, էջ 167, վիճակ՝ անյայտ:

242* Թիերի՝ Հմր 477, էջ 87, եկեղեցի կամ վանք, որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

243* Տեղ. բառ., Բ/450. Թիլ, Թլակայ Ս. Խաչ, Պաղինի Ս. Խաչ, Պաղինու վանք, Ջուխտակ հայրապետաց վանք - Վանք Արմ Հայ-ում, Բալուի Թիլ գիւղում: Ճարտարապետական յօրինուածքով նման էր Էջմիածնի մայր տաճարին: Մինչեւ 1915 թ. գործում էր, ունէր վարժարան: Լքուել ու ամայացել է 1916-18 թթ.: Թիերի՝ Հմր 447, էջ 83, վիճակ՝ հիմնովին աւերուած:

244* Ցիշ. 1493 թ՝. «Գրիչք Մարգարէ եւ Ղուկաս դպիր, ստացող պարոն Աւրան, գրեալ ի Բալու եւ եղեալ ի Ս. Խաչ Սղամայ՞ [1493]». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 197:

245* Թիերի՝ Հմր 128, էջ 26, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

246* Տեղանունների բառարանի (Ա/629 , Դ/622) հեղինակները նոյնացրել են Չնքուշի Սիրահայեաց Ս. Աստուածածին եւ Արղնի Քաղցրահայեաց Ս. Աստուածածին վանքերը: Թիերի՝ Հմր 097, էջ 20, վիճակ՝ կանգուն:

247* Չնքուշի Սիրահայեաց վանքի պատմութիւնը (1561-1808 թթ.) գրել է վանքի միաբան տէր Մովսէսը (1792-1808). հրատ. տե՛ս Թորոս Աղբար, Բ., էջ 457-61: Գառնիկ Գէորգեանը իր՝ «Չնքուշն անիրաւուած, Հայ Չնքուշը ԺԸ-Ի. դար (Բազմավէպ, 1964, էջ 123-32, 218-25), Թրքական տիրապետութիւնը Հայոց վրայ ԺԶ-ԺԹ. դարերուն եւ Չնքուշը, Սխալներ Չնքուշի ԺԹ. դարու վանահայր առաջնորդներու մասին (Սիոն, 1966, էջ 212-16, 480-88)» յօդուածներում փորձում է բացատրել նախ գրականութեան մէջ եղած անտեղեակութիւնը Չնքուշին վերաբերող հարցերին, եւ ապա՝ թուրքական բռնակալութեան պայմաններում նրա ունեցած կիսանկախ վիճակի պատճառը՝ «որովհետեւ հոն առկայ էր միատարր, մարտական հայութիւն մը, եւ քուրտերն ու ենիչէրիները չէին համարձակեր արգելք ըլլալ անոր վանքին պարիսպներով ամրացման, ինչպէս նաեւ հաստատմանը Արեւմտեան վարդապետարանի մը, որ այդ դարաշրջանի լուսոյ վառարանը ու հոգեւոր մշակութային կեդրոնը հանդիսացաւ» (Բազմավէպ, 1964, էջ 131-2):

Ցիշ. 1561 թ.՝ «Արդ, ի թվ. ամի Տեառն 1561. եւ ի Հայոց թվին Ռ. Ժ. ... Ցայսմ դառն եւ դժուար ժամանակի, որ էր թվական Ռ.Ժ.ին. նախ եւ առաջ Պաւղոս վարդապետ այր հոգեշնորհ, որ էր յերկրէն Հաւսառանայ, որ է նահանգէն Ջերմուկայ... մինչ ի Ռ. Խ. Բ.ին (1593) լինի զրաւ կենաց նորին: Եւ յետ նորին յաջորդէ զաթոռն Մարտիրոս վարդապետն Ճէնքուշցի, որ է այր փիլիսոփայ եւ քաջ քարտուղար, որոյ գոն ծրեալ մատանց նորին յոլով գրեանք ի սուրբ վանքս եւ յեկեղեցին որ ի Ճէնքուշ... Անպիտան եւ մեղսաներկ պաշտաւնեայ ծառայ Տեառն, բիւր քանքարաց պարտապան Տէր Մովսէս գրեցի մատեանս վարդապետաց ի հին աւրինակաց տեսեալ ծրեցի ըստ կարեացս». տե՛ս Թորոս Աղբար, Բ., էջ 457-8:

Յիշ. 1646 թ.՝ «Տաւնագրիս ի թվին ՌՂԵ. (1646) նուաստ Հոռմկլայեցի անուամբ եւեթ վարդապետ կոչեցեալս, ըստացա հալալ արդեամբս զայսուհետ բուրաստանս, այսինքն... ետու յիշատակ ի դուռն Ծէնքուշոյ վանքին, որ կոչի Ս. Աստուածածին». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 210:

Յիշ. 1677, 1758, 1766, 1802 թթ.,՝ տե՛ս Թորոս Աղբար, Բ., էջ 461, 465, 467, 471, 485-6:

Թէոդիկի «Գողգոթա», էջ 282-ում կարդում ենք. «Զնգուշ, Հայ բնակչութիւն՝ 600 տուն, Զնգուշի մօտ է Սիրահայեաց Ս. Աստուածածին մենաստանը, եկեղեցին՝ Ս. Կարապետ»:

[248]* Տեղ. բառ., Բ/47. Դատեմավանք, Դատեմի վանք, Դատեմու վանք - Վանք Մեծ Հայքի Հանձիթ գաւ-ում: Տաճարը կոչւում էր Ս. Աստուածածին, կառուցուած Է. դ., թերեւս դրանից առաջ: Եղել է եպիսկոպոսանիստ, ԺԹ. դ. երկրորդ կէսին արդէն աւերուած: Աւերուել ու ամայացել է առաջին համաշխարհ. պատ.ի տարիներին: Թիերի՝ Հմր 116, էջ 24, վիճակ՝ կանգուն:

[249]* Յիշ. 1651 թ.՝ «Գրեալ ձեռամբ Աստուածատուր երիցու, ի խնդրոյ Արիստակէս վարդապետի, ի թվին Հայոց Ռ. ըն Ճ. (1651)ի, դառն եւ ի նեղ ժամանակիս, ի Պաւլիս, ի դուռն Ս. Սարգսի զաւրավարին, ի հայրապետութեան մերոյ տեառն Փիլիպպոսի: Ես՝ Արիստակէս վարդապետս ետու գրել զգիրքս յիշատակ ինձ եւ ծնողաց... եւ ետու ի վանքն Դատեմու Ս. Աստուածածնի». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 469:

[250]* Տեղ. բառ., Ա/6. Աբդլմսեհ, Աբալմսեհ, Աբդուլմսեհ, Ապալմսեհ, Ապտլ-Մսեհ, Ապտուլ Մուսեղ, Ջարդառիճ, Ջարդարիչ, Իչմէ, Ս. Մերկերիոս - Վանք Խարբերդի շրջանում, Ջարդարիչ գիւղի մօտ, Մաստան լեռան վրա, ջրառատ վայրում: Կառուցուել է ԺԲ. դ., առաջին յիշատակութիւնը՝ 1295 թ.: Մինչեւ ԺԷ. դ. Կեսարիայի թեմի առաջնորդների նստավայրն էր: ԺԹ. դ. կէսերին ունէր 24 գիւղ, դարավերջին աւերուած էր: Ծագումը՝ հայերէն Մուշեղ անձնանունից°: Թիերի՝ Հմր 115, էջ 24, վիճակ՝ անյայտ:

[251]* Յիշ. 1481 թ.՝ «...Գրեցաւ եղանակաւոր տաոս ի թուականիս ՋԼ. (1481) ի վանքս սուրբ Կարապետոյ եւ Ապտըլմսեհին քաջ նահատակի եւ այլ բազմահաւաք...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 10:

Յիշ. 1631 թ.՝ «...Արդ, գրեցաւ փրկական Ս. Խորհուրդս պատարագի յաստուծայ-բնակ սբ. ուխտս Ս. Պարսամ սբ. եկեղեացս եւ Ս. Ապտըլմսեհ եկեղեցոյ եւ Ս. Նշանացս, որ աստ կան հաւաքեալ, ի Ջերմուկ քաղաքի... ի թուականիս Հայոց ՌՁ. (1631) ամի...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 370:

Յիշ. 1637 թ.՝ «...Եւ ոմանց եղբարց բարձեալ տարան զնա ի շէնն, որ կոչիւր Ջեր-մուկ, եւ ուրբաթ ի Թ. (9)-երրորդ ժամուն վճարեաց զհասարակաց զպարտսն, փոխեցաւ յաստի կենացս եւ եդաւ ի Ս. Աբդլմսեհ եկեղեցին ի թվին ՌՁԶ. (1637) օգոստոս ԻԵ. (25): Որք հանդիպիք Աստուած ողորմի ասացէք. ամէն». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 697:

[252]* Տեղ. բառ., Դ/727. Սուրսուրի Ս. Գէորգ, Սորսիւրայ վանք, Սորսիւրի վանք, Սորսորի Ս. Գէորգ, Սորսորի վանք, Սորսորու Ս. Գէորգ, Սորսորու վանք, Սորսորու վանք. Վանք Արմ Հայ-ում, Խարբերդի գաւառի, Սուրսուրի գ.-ում: Եկեղեցին կոչւում էր Ս. Գէորգ: Գ. Սրուանձտեանցի հաղորդմամբ վանքի պարսպի դռան վրայ եղած արձանագրութեան համաձայն հիմնադրուել է Հայոց 961 (1512) թ.: Ունէր շրջապարիսպ եւ կանգուն էր մինչեւ ԺԹ. դ. կէսերը: 1895 թ. հայկական կոտորածների ժամանակ վանքը աւերուել, վանականները կոտորուել, ունեցուածքը կողոպտուել է, որից հետո այն ամայացել եւ լքուել է: Թիերի՝ Հմր 118, էջ 24, վիճակ՝ անյայտ:

[253]* Յիշ. 1470 թ.՝ «...Որ ետ յիշատակ ի վանս անապատան, որ կոչի Սուր... Արդ, գըրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս որ կոչի Խարբերդ, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զաւրավարի եւ որդւոյն նորա Մարտիրոսի... եւ յեպիսկոպոսութիւնն տէր Սիմէոնի րաբունապետին, որ նստի յանապատն, որ կոչի Սուր վանք... Ի թըւիսն Հայոց ՋԺԹ. (1470)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 297:

[254]* Տեղ. բառ., Ա/837. Գուլէի վանք, Խուլայ վանք, Ղուլայ վանք, Ղուլեի Ս. Գէորգ, Մոսեսավանք, Մովսէսի վանք, Մովսիսավանք - Վանք Խարբերդի գաւառում: Ենթադրում են՝ հիմնադրուել է Ժ. դարում: Ունէր մի հին ու գեղեցիկ եկեղեցի, որի կառուցումը վերագրւում է Թադէոս Առաքեալին: Եղել է գրչութեան կենտրոն: Վանքը մինչեւ 1915 թ. Մեծ եղեռնը կանգուն էր, շրջապատուած բաւական մեծ թուով հայաբնակ գիւղերով: Ողջ նահանգի հետ Ս. Գէորգ վանքը իր ունեցուածքով կողոպտուեց եւ քարուքանդ արուեց 1915-18 թթ.: Թիերի՝ Հ[մր] 119, էջ 24, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[255]* Յիշ-ս վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 559. ինչպէս այս էջի ծանօթութեամբ իրաւացիօրէն նկատել է ակադ. Լ. Խաչիկեանը, այս յիշատակարանը «Եթէ ամբողջութեամբ կեղծիք չէ... որ արուած է Խուլավանքի սեփականած կալուածքների հաստատութեան համար, ապա, անտարակոյս, աղաւաղուած ու փոփոխուած է եւ իր ներկայ ձեւով չի կարող 1443 թուականի շարադրանք համարուել»:

Յիշատակարան՝ ա. 1468 թ.՝«...Աւարտեցաւ Սահմանք Դաւթի... Ի թվին ՋԺԷ. (1468), սեպտեմբեր ամսոյ Թ. (9), ի Խուլաու վանքս, որ է սուրբ Գէորգ, ի Խարբերդ». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 275:

բ. 1471 թ.՝«...Շնորհիւ տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զքրիստոսաւանդ սուրբ մատեանս ի սուրբ անապատս Խուլայ, ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսի Զօրավարին... Արդ, գրեցաւ ի թուին Հայոց ՋԻ. (1471), ի վերադիտողութիւն սուրբ անապատացս Խուլայ եւ Աբդըլմսիհայ՝ երիցս երանեալ քաջ հռետորի Գրիգոր վարդապետի եւ այլ ամենայն միաբանիցն». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 326:

Նաեւ յիշ.՝ 1481, 1482 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 17, 31:

Յիշ. 1482 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 464:

գ. 1602 թ.՝ «Փառք... որ ետ զաւրութիւն իմոյ տկարութեանս հասանել ի յաւարտ այսմ լուսափայլ եղանակաւոր տառիս, որ կոչի Շարական, ի թվականիս Հայոց մեծաց ՌԾԱ. (1602), ի յերկիրս Խարբերդու, ի հռչակաւոր յանապատ որ կոչի Խուլավանք...». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 79:

Յիշ. 1605 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 186:

Յիշ. 1627 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 246:

Ս. Գէորգ վանքի արձանագրութիւններ հրատարակել է Թիերին, տե՛ս J. M. THIERRY, Le couvant Saint-Georges de Xule (Xulevank), ReArm. t. XXII, 1990-91, 225-251.

1. ՇԻՆԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ՄԵԼՔՈՆ ԹՎԻՆ ՀԱՒՅՈՑ ՋԿԳ. 963 (1514).

2. ԱՊՈՒՋԱՂՑԻ. ԱՐՓԻՈՅՆ. ՄԱՀՏԵՍԻ. ԿԱՍՊԱՐ. ԱՄԻՐԱՅԵ ԱՆՊԱՏԺԱՌ. ՇԵՆԵՑԱՒ ԹՎԻՆ [թիւը՝ ١٢٨٥]

3. ԱԿԸՆՑԻ ՄԻՍԱՔԵԱՆ. ԳԻՎՈՐՔ ԱՂԱՆ. ՊԱՏԺԱՌ. ՇԵՆԵՑԱՒ ԹՎԻՆ 1890.

4. ԱՅՍ Է... ՄՈՎՍԷՍ ԿՐՕՆԱՒՈՐ Ի ԹՎ ՋԻԵ (1476).

5. ՇԻՆԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ԹՈՄԱ ԱԲՂՆ ԵՒ ԽՉՏ. ԱԲՂՆ ԹՎԻՆ ՌԿԴ (1615):

[256]* Տեղ. բառ., Դ/9. Վանք Արմ Հայ.-ում Դիարբեքիրի նահանգի Արղանամադէնի գաւառում, Ծովք գիւղում: Կան կարծիքներ, որ այստեղ ժամանակին ապրել ու գործել է Ներսէս Շնորհալին: ԺԹ. դ. կէսերին աւերուած ու լքուած էր: Պահպանուել է 1478 թ. այստեղ ընդօրինակուած Գանձարան: Թիերի՝ Հմր 130, էջ 26, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[257]* Թիերի՝ Հմր 120, էջ 24, վիճակ՝ անյայտ:

[258]* Յիշ. 1457 թ.՝ «...Արդ, գրեցաւ աստուածային գանձարանս որ կոչի Աւետարան, ի յանապատիս որ կոչի սուրբ Մամաս, ձեռամբ Մաթէոս աբեղայի, ի թվիս Հայ տոհմիս տումարի ՋԶ. (1457)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 84:

[259]* Տեղ. բառ., Ե/257. Ս. Փիլիպոս, Փիլիպպոս Առաքեալ, Ս. Փիլիպպոս Առաքեալի վանք - Վանք Խարբերդի նահանգի Արաբկիր գաւառում, Շեփիկ գիւղի մօտ, Ոսկեգետակի ափին, մի բլրակի ստորոտում: ԺԹ. դ. վերջերին աւերակ էր: Թիերի՝ Հմր 196. 1, էջ 38, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[260]* Տեղ. բառ., Բ/478. Ս. Թորոս, Վաղշէնի Ս. Թորոս - Վանք Խարբերդի նահանգում, Ակնի գաւառակի Վաղշէն գիւղի մօտ, Քարուկիր կոչուող վայրում: ԺԹ. դ. վերջերից լքուած ու աւերուած էր: Թիերի՝ Հմր 123, էջ 25, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[261]* Թիերի՝ Հմր 454, էջ 84, վիճակ՝ անյայտ:

[262]* Թիերի՝ Հմր 122, էջ 25, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[263]* Տեղ. բառ., Ա/386. Արակայի վանք, Ս. Գրիգոր Նարեկացի, Նարեկայ վանք - Ուխտատեղի, վանք Արմ Հայաստանում, Սեբաստիայի նահանգի Ակնի շրջանում, Արակայ գիւղի մօտակայքում: Գրականութեան մէջ այս վայրը անուանւում է նաեւ Վանք, որը ճիշտ չէ: Շինութեան հարաւային կողմում գերեզմանատունն է, աղբիւրն ու «Զոպնի գերեզման» ուխտատեղին: Թիերի՝ Հմր 410, էջ 76, վիճակ՝ կանգուն:

[264]* Տեղ. բառ., Բ/232. Ս. Երեւման վանք, Ուխտ Փրկչին, Ս. Փրկիչ - Ըստ աւանդութեան կառուցուել է 100-120 թթ.: Ակնի առաջնորդի աթոռանիստն էր: Վանքի մօտ կար հանքային աղբիւր: Թիերի՝ Հմր 160, էջ 31, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[265]* Յիշ. 1165 թ.՝ «...Գործեցաւ այս ի Հայոց թուականիս ի ՈԺԴ. (1165)... Եւ գրեցաւ սոյն Աւետարանս ի լերինս Տօրոսի, ի սահմանս Սանսնոյ... ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ Սրբոյ Աստուածածնի, յառաջնորդութեան տեառն Ստեփաննոսի... Եւ ետ զսուրբ Աւետարանս ի Սուրբ Փրկիչն, յորում է գերեզման դստեր իւրոյ, ի յիշատակ նորա եւ ի պայծառութիւն տօնից տէրունականաց եւ ի զուարճութիւն մանգանց եկեղեցւոյ...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 402-4, հմմտ. Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 314-7:

Երկրորդ՝ 1446 թ. յիշատակարանը նաեւ վանքի միւս՝ «Ս. Երեւումն», «Ս. Երեւման Խաչի վանք» անունների ծագման աւանդութեան մասին է. «...Արդ, գրեցաւ սուրբ մատեանս աստուածային ձեռամբ գրչի Մինաս սարկաւագի, ի յերկիրն Արապկերոյ, ի մեծ հռչակաւոր ուխտն Փրկչին, զոր տէր ի կերպարանս երեւեալ եղին եղջեւրաւորի Ապլակիդոսի, եւ խաչ սառնանման ի յեղջիւրսն. եւ ելեալ ձայն ի խաչէն առ Ապլակիտոս եւ ասէ. Զի՞ հալածես զիս: Եւ նա ի տեսլէնէն զարհուրեալ դարձաւ ի տուն իւր, հաւատաց ի Քրիստոս, եւ մկրտեցաւ ամենայն տամբ իւրով, եւ անուանեցաւ Ստաթէոս, շինեաց զտեղին վանս հռչակաւոր եւ անուանեաց զտեղին Փրկչին վանք: Զոր յանգ ելեալ աւարտեցաւ սուրբ գիրքս ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ ոգւոյ Մինաս սարկաւագի ի թըւականութեան հայկազեան տումարի ՊՂԵ. (1446) ամի, ի հայրապետութեանն Կիւլի-

կեցւոց Տէր Կարապետի, եւ ի թագաւորութեանն Եգիպտոսի սօլթան Տահիրի՝ ազգին մահմեդականի…». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 603, նաեւ՝ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 407:

266* Յիշ. 1623 թ.՝ ա. «Գրեալ ի սբ. անապատս որ կոչի Կարմիր վանք, [Մալաթիայի Կարմիր վանքն է], ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Կարապետիս եւ Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի, ի թուականիս ՌՀԲ. (1623), ի յեպիսկոպոսութեան տէր Թումայիս եւ տէր Աստուածատուր եպիսկոպոսին եւ այլ միեղէն եղբարցս՝ ԺԱ. (11) անձն կրաւնաւորացս, որ կան ի յայս քարաժեռ անապատիս, ձեռամբ… աբեղայի Վարդանի… Ես՝ Վարդան քարտուղար ծառայ եմ սիրեցեալ արհի եւ քաջ եպիսկոպոսին տէր Յոհաննէսին, Բենկի առաջնորդին, որ ետ փափագանաւք գրել զսուրբ Աւետարանս եւ եդ յիշատակ ի սուրբ ուխտն…», գ. «Աստուած ողորմի Պահրի տնտեսին հոգւոյն, գնեց զսուրբ Աւետարանս… եդիր ի յիշատակ ի դուռն Ս. Երեք մանկանց, անջինջ յիշատակ». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 119:

267* Թիերի՝ Հմր 183, էջ 35, վիճակ՝ անյայտ:

Յիշ. 1654 թ.՝ «…Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքն Ստամպօլ որ է Կոստանդինապօլիս Բիւզանդի, ի դուռն սրբոյն Սարգսի զօրաւարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին, ի թվականիս Հայոց ՌՃԳ. (1654), ձեռամբ սուտանուն Յովանէս դպրի զոր եւ յիշել զիս առ Տէր մաղթեմ: Այլ եւ յիշեսջիք զմահտեսի Ղազարն եւ զիւր եղբայրն զՓիլիպոսն եւ այն, որ եդեալ են յիշատակ Ակնայ քաղաքն ի գիւղն Կարուշլա, ի դուռն սրբոց Անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի: Վերստին նորոգեցաւ ՌՃԿԸ. (1719) օգոստ. ԻԴ.». տե՛ս Ճանիկեան, էջ 95: Վերահրատ.՝ ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 614:

Յիշ. 1683 թ.՝ «…Արդ, շնորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանկ ելեալ աւարտեցաւ շնորհաբաշխ մատեանս Աստուածաբան եւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ Յակոբ քահանային, թվին ՌՃԼԲ. (1683). ի քաղաքն Ստամբօլ: Արդ, ցանկացեալ եղեւ քրիստոսասէր եւ մեծազգի այրս այս մահտեսի տիրացու Պետրոսն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց եւ եդ յիշատակ հոգոյ իւրոյ… ի գիւղն Կարուշլայ, ի դուռն սրբոց Անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի». տե՛ս Ճանիկեան, էջ 96:

268* Թիերի՝ Հմր 340, էջ 65, վիճակ՝ հիմնովին աւերուած:

269* Ակնի վերաբերեալ հետաքրքիր մանրամասնութիւններ տե՛ս Յ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895:

270* Տեղ. բառ., Ե/281. Գաւառի ամենանշանաւոր վանքերից էր: Աւերուել ու ամայացել է Լենկթեմուրի արշաւանքների ժամանակ, սակայն հետագայում վերականգնուել է եւ գործում էր մինչեւ 1900-ական թթ.: Ըստ աւանդութեան հիմնադրել են Թադէոս եւ Բարդուղիմէոս Առաքեալները առաջին դարում:

271* Ալպ., Մալաթիա, էջ 594. Արդարեւ՝ 1895ի կողոպուտէն եւ աւերումէն ետք, այս անձնաւորութիւնը, որ եկեղեցպան կամ հոգաբարձու նշանակուած էր այս վանքին, իր 1895ի ջարդէն եւ իրեն դէմ թուրքերու զրպարտութենէն ազատած ըլլալուն համար ուխտ ունէր, յաջողած է շինել պզտիկ մատուռ մը, ուր կը կատարուէին արարողութիւնները, եւ 10 քարաշէն սենեակներ: Դժբախտաբար Ոսկերիչեան 1915ին նահատակուած է քաղաքին ծանօթ դէմքերուն հետ:

272* Յիշ. 1295 թ.՝ «…Ի թւին Հայոց ՉԽԴ. (1295), ի յերկիրն ի Մելտենի, ի գիւղն Յամոսի, ի դուռն Սուրբ Փրկչին եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սարգսին…». ԺԳ. դ. յիշ., էջ 770:

Ա. Ալպօյաճեանն իր «Մալաթիա…» աշխատութեան մէջ (էջ 1222-25) հրատարակել է այս վանքին վերաբերող ԺԶ. դարի յիշատակարաններ, որոնց համառօտումներն են.

Յիշ. 1544 թ.՝ «Փառք ամենասուրբ... Գրեցաւ սա ի թվին Հայոց ՋԴԳ. (1544), նոյեմբեր ամսոյ... ի յերկիրս ի Մելտինի, ի գիւղն յԱմաւսի, ի դուռն Սուրբ Սարգսի եւ Սբ. Աստուածածին եւ Սբ .Փրկչին եւ յեպիսկոպոսութեան տր. Ըոստագիսին եւ տր. Մկրտչին, ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ ոգոյ Գրիգոր գրչի...». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1222:

Յիշ. 1560 թ.՝ «Ի բռնակալութեան սուլթան Սուլէյմանին, ի գաւառն ի Մելտինի, ի գիւղն յԱմոսի ի դուռն Ս. Փրկչին եւ Ս. Աստուածածնին եւ Ս. Սարգիսին գրեցաւ Աւետարանս... (1560)». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1223:

Յիշ. 1568 թ.՝ «... Արդ, ի վերջին աւուրս յետնեալ ժամանակիս, ի թուականութեանս Հայոց ՌԺԷ. (1568), ի բռնակալութեան սուլթան Սուլէյմանին եւ ի կաթողիկոսութեան Տէր Խաչատուրին, ի յերկիրն ի Մելիտինի, ի գիւղն յԱմոսի, ի դուռն Սուրբ Փրկչին եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սարգիսի գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անպիտան հողիկս Գրիգոր Երէցիս՝ ի յիշատակ հաւրն մղտեսի Փոլատին եւ մաւր Խանդուդին եւ որդւոցն Թորոսին, Մարտիրոսին եւ եղբաւրն Մուղամին եւ կնոջն Մանային եւ ինձ անարժան Գրիգոր գրչի, որ գրեցի եւ ծաղկեցի եւ կազմեցի...». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1224:

Յիշ. 1568 թ.՝ «Աւարտեցաւ Ս. տառս, որ այժմ Մաշտոց կոչի... ի յամի ՌԺԷ. (1568), ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի տաճարին եւ Ս. Սարգսին եւ Ս. Փրկչին ի գաւառն ի Մելտինի, ի գիւղն Համոսի, ի յերիցութեան Գրիգորի Տէր Թորոսեան եւ ի կաթողիկոսութեան Տէր Խաչատուրի... Ով եղբարք... յիշեցէք զԳրիգոր գծող, հայրն մղտեսի Փոլատն, եւ որդիք զԹորոս...». տե՛ս Ալպ., Մալաթ., էջ 1225:

[273]* Թիերի՝ Հմր 335, էջ 64, վիճակ՝ կանգուն: Լրացնելով Թիերիի տեղեկութիւնը վանքի «կանգուն» վիճակի մասին, աւելացնենք, որ 1918 թ. թուրքական կառավարութիւնը վանքն իր կալուածներով վաճառել է քրդերին՝ «անոր յիշատակն ալ ջնջելու համար», որոնք վանքը վերածել են գոմի, եկեղեցին էլ՝ յարդանոցի. տե՛ս Ա. Ալպ. Մալաթիա, էջ 614:

[274]* Յիշ. վերահրատ. եւ 1430-40 թթ. է թուագրել է Ալպ., Մալաթիա, էջ 1218. այլ վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 491: Այլ յիշ. «Ես՝ Անանիա դպիրս, որ ծաղկեցի զսուրբ Աւետարանս ի դուռն սուրբ Լուսաւորիչն ի Մելիտինոյ վանքս, եւ առաջին ծաղիկս այս էր, որ ուսայ ի վարդապետէն իմոյ տէր Սիմէովնի՝ արհիեպիսկոպոսի այս ուխտիս...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 874 (Յաւելուած), տե՛ս նաեւ ԺԴ. դ. յիշ., էջ 637 (ԺԴ. դարի անթուական յիշատակարաններ):

Յիշ. 1493 թ.՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 197, որի ամբողջական հրատ. տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 114-5. «Արդ, գրեցաւ սայ ի թվին հայոց ՋԽԲ. (1493), Ապրիլի Լ (30), ձեռամբ անարժան գրչի Սահակ աբեղիս, ի վանքս Մելտինոյ, ի դուռն Սուրբ Լուսաւորչին. ո՛վ մանկունք վերնոյն Սիոնի...»:

[275]* Տեղ. բառ., Ա/251. «Անարծաթ բժշկաց վանք - Ըստ աւանդութեան վանքը հիմնադրել են Հայոց Աբգար թագաւորը եւ Թադէոս ու Բարդուղիմէոս առաքեալները, առաջին դարում: Մինչեւ 1850ական թթ. կանգուն էր եւ գործում էր: 1900ական թթ. աւերուել է: Այժմ կանգուն են միայն շինութեան երկու կամարները: Մալաթիայի նշանաւոր վանքերից էր»: Թիերի՝ Հմր 334, էջ 64, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[276]* Յիշ. ա. «Գրեցաւ ի շրջագայութեան թուականիս հայ տոմարիս Ռ. եւ ԺԹ.երորդի քառասներորդի (1590), ի Մելիտինի գաւառիս, որ կոչի տաճիկ բառով Մալաթիեայ, ի մենաստանիս, որ կոչի յանապատ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ընդ հովանեաւ

սրբոյն Յովանիսի, եւ սրբոց Անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի...». տե՛ս Ալպ., Մալաթիա.., էջ 1229:

բ. 1598 թ.՝ «...Փառք... ի շրջագայութեան թուականին Հայոց տումարիս ՌԽ. եւ ՌԹ. երրորդի քառասներորդի (1598), ի Մելտինի գաւառիս, որ կոչի յանապատ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Ընդ հովանեաւ սրբոյ Յովանիսի, եւ սրբոց Անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ սրբոյն Սոփիայի, ի յառաջնորդութեան եւ ի հայրապետութեան Հայոց ազգին տեառն Ազարիայի Հայոց կաթողիկոսի...». տե՛ս Ալպ., Մալաթիա..., էջ 1230-31:

[277]* Ի հաստատումն Պալեանի ենթադրութեան՝ յիշ. 1623 թ. «Փառք... Արդ, գրեցաւ լուսալի եւ նորափիթիթ տառս աստուածընկալ, որ է երգ Դաւթի մարգարէի եւ բանք սրբոյն Ներսէսի Կլայեցւոյ, ի քաղաքիս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին եւ կենսատու Ս. Նշանիս, որ Կարմիր Ակ վերակոչի, ձեռամբ մեղապարտ Գրիգոր երիցու, ի թվականիս Հայոց ՌՀԲ. (1623) ամին, ի խնդրոյ տէր Սահակ կրաւնաւորի, յիշատակ իւր եւ ծնօղաց իւրոց. ամէն». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 112:

Յիշ. 1625 թ.՝ «Գրեցաւ Տաւնացոյցս եւ Պարզատոմարս եւ Մարմնախաղացս ձեռամբ սուտանուն էրիցուս, ի քաղաքս Բաղէշ, որ մականուն Յովասափ Քուչկանց կոչի, ընդ հովանեաւ Կարմրակ Ս. Նշանին, թուին ՌՀԴ. (1625)». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 183:

[278]* Յիշ. 1623 թ.՝ «...Արդ, եղեւ աւարտումն սբ. գրոցս այս, որ կոչի Ճառընտիր-խութիւն, ձեռամբ մեղսամած Վարդան կրաւնաւորիս, որ անուամբս եմ աբեղա... ի մաքուր անապատս ի Կարմիր վանք, ասախ զմեզ որ տի զրկինք ի յայս սբ. ուխտարանէս ի յերերման ժամանակաց... ի թվին Հայոց ՌՀԲ. (1623), ապրիլ ամսոյ ԺԳ. (13), ի խնդրոյ տէր Յովհաննէս եպիսկոպոսի Մելտենցոյ, ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ ծնաւղաց իւրոց եւ ամենայն մերձաւորացն՝ կենդանեացն եւ ննջեցելոցն...». ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 85:

[279]* Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 124, էջ 25, վիճակ՝ տաճիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[280]* Տեղ. բառ., Բ/92. Դերձիկի Ս. Թէոդորոս, Դերձիկի վանք, Դերձկոյ վանք, Ս. Թէոդորոս - Վանք Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգում, Տեւրիկի գաւառակում: Եղել է գրչութեան կենտրոն: Պահպանուել է 1447 թ. Մկրտիչ սարկաւագի գրած Ճաշոցը, նաեւ 1450-80-ական թթ. գրուած մէկ Գանձարան եւ մէկ Ժողովածու: ԺԹ. դ. վերջերին արդէն աւերուած վիճակում էր: Թիերի՝ Հ$^{\text{մր}}$ 416, էջ 77, վիճակ՝ անյայտ:

[281]* Յիշ. 1437, 1441 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., (Յաւելուած Ա.), էջ 385, 395:

Յիշ. 1443 թ.՝ «Ի թվին ՊՁԲ. (1433), ընդ հովանեաւ Մելիտինէի սբ. Թէոդորոս Զինւորի, որ այժմ կոչի Դերձկի վանք...». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1219 (սա չկայ ԺԵ. դ. յիշատ. Ա. հատորի մէջ):

Յիշ. 1447 թ.՝ «... Արդ, գրեցաւ սա ի թուիս Հայոց ՊՂՋ. (1447), ի դառնաբեր ժամանակիս... ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի Զինաւորին, զոր այժմ Դերձկի կոչի, եւ այլ բազմահաւաք նշխարաց...». տե՛ս ԺԵ. դ. յիշատ., Ա., էջ 615:

Յիշ. 1457 թ.՝ «...Զոր եղեւ զրաւ գրչութեան սորա ի թուականիս Հայոց ՋԶ. (1457), ի սուրբ անապատիս Դերձկոյ, ընդ հովանեաւ սուրբ Թորոսու, ձեռամբ Սիմէոն անարժան կրաւնօորի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 91:

[282]* Տեղ. բառ., Գ/897. Մուշողկունի վանք, Ս. Սարգիս - Վանք Խարբերդի նահանգի Մալաթիայի գաւառի Մուշովկայ գիւղում: Յիշատակուած է այստեղ գրուած հայ. ձեռ. յիշատակարաններից մէկում, ըստ որի վանքն ունէր չորս եկեղեցի՝ Ս. Թորոս, Ս. Խաչատուր, Ս. Յակոբ, Ս. Սարգիս անուններով. կարելի է ենթադրել, որ մեծ ու ընդարձակ համալիր էր:

[283]* Յիշ. 1576 թ.՝ «Ի թվ. Հայոց ՌԻԵ. (1576) ի հայրապետութեանն Հայոց տեառն Խաչատուր կաթողիկոսին, գրեցաւ... յերկիրն Մելտինի, ի գիւղն Մուշուղկան, ի դուռն Ս. Սարգսի, ձեռամբ... Գրիգոր եպիսկոպոսի». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1226:

Յիշ. 1596 թ.՝ «Գրեցաւ ի թվ. ՌԽԵ. (1596), յերկիրն Մելտինի, ի գիւղն Եղեգնոց Ջորոյ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի, ձեռամբ Կիրակոս սարկաւագին...». տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1230:

[284]* Մալաթիայի առաջնորդ Գ. վրդ. Ասլանեանը 1907 թ. հրատարակուած իր «Մալաթիոյ վանքերը» յօդուածում, անդրադառնալով Տ. Պալեանի նոյնանուն յօդուածին, որոշ ճշտումներ է կատարել, նշելով մասնաւորապէս, որ.

1. Ս. Փրկիչ վանքը, «...որուն թուականը ըստ աւանդութեան Փրկչի առաջին դարերուն կը հասնի, ընդարձակ շէնքերու բեկորք հաստատ ապացոյցներ են երբեմնի նոխութեան ու փայլին, այժմ եւս շէն...»:

2. Մալաթիայում չկան Խաչավանք, Մամասի անունով վանքեր, ինչպէս նաեւ Ծփիկ, Աղն եւ Վանք # անուններով գիւղերը, որտեղ գտնւում են այդ վանքերը, ոչ թէ Մալաթիայի, այլ Ակնի (Արաբկիրի) գիւղեր են, «հետեւաբար այդ վանքերն ալ պէտք է Ակնայ վանքերուն կցել, ոչ թէ Մալաթիոյ. Ակնայ առաջնորդական տեղապահութեանս քաղած եմ ասոնց վրայ տեղեկութիւններ»:

Ակնեցի Յ. Ճանիկեանը եւս համակարծիք է Գ. վրդ. Ասլանեանի հետ՝ Վանք գիւղի եւ նրա վանքի՝ Ակնում գտնուելու մասին: «Վանք - Ակնայ հիւս. կողմը... Գիւղին եկեղեցին՝ Ս. Գէորգ... Հաւանականաբար ի հնումն վանք մ՚է եղեր, եւ սորա անուամբ գիւղն Վանք կոչուած է». տե՛ս Ճանիկ., էջ 57-8:

3. Հինգ վանքեր՝ Ս. Կոնոնոս, Ս. Սէրգիոս, Ս. Գէորգ, Ս. Թորոս, Ս. Մարտիրոս վանքերը՝ «ամենն ալ կիսականգուն շաբաթացեալ են»:

4. Կասկածելի է համարում Մալաթիայում Կարմիր վանքի գոյութիւնը, քանի որ այդ անունով վանքի գոյութիւնը հաստատող գրաւոր կամ բանաւոր որեւէ տեղեկութիւն, պատմութիւն կամ շինութեան մնացորդ չի պահպանուել, թէեւ ընդունում է որ՝ «...իրաւ է, թէ հոս Ս. Կարապետի անուամբ ուխտատեղի մը կայ եւ քովերն ու հեռուներն ալ կարմրագոյն հողով արտեր...»: Սակայն հետագայում «Պատառիկներ լուսածիր շաբաթացեալ վանքերէն» յուշ-յօդուածաշարում Մալաթիայի հինգ շաբաթացեալ վանքերի շարքում նշելով նաեւ Կարմիր վանքը, գրել է. «Կարմիր վանք. Հին օրերուն մէջ նշանաւորներէն է եղած... Մալաթիայէն մէկ ժամու հարթ բլրակի մը երկայնքին ամբողջ կողերուն ու ոտքերուն տակ կարմրահողերուն փռուած է դարերով:... Կէս դար առաջ դեռ ընդարձակ հիմքերու եւ բաժանումներու կիսաքանդ աւերը երկար շարքով կան եղեր, եւ հողերու մէկ մասին ալ Հայոց կողմանէ մատակարարուիլը կը խօսուէր, ու այս աւանդութիւն չէր այլ իրականութիւն...». տե՛ս Բազմավէպ, 1937, էջ 299, նաեւ՝ Ալպ. Մալաթիա, էջ 623-4:

5. Անարծաթ բժշկի վանքը Մալաթիայի նախկին առաջնորդի խօսքերով՝ «...մինչեւ 1850 թուականը շէն եւ կը մատուցուի եղեր Ս. Պատարագ, այժմ շաբաթացեալ»:

Ա. Ալպօյաճեանը այս վանքի միակ յիշատակութիւն է համարում 1590ին գրուած ձեռագրի յիշատակարանը եւ եզրակացնում է, որ սա միակ գրաւոր վաւերագիրն է, որ հաստատում է, թէ Մալաթիայում 1590 թ. կար այս անունով վանք կամ եկեղեցի, «որ ուրիշ ոչ մէկ տեղ յիշուած է»: Սակայն գոյութիւն ունի եւ երկրորդ՝ 1598 թ. յիշատակարանը, որ դարձեալ ինքն է հրատարակել Փարիզի Նուպարեան մատենադարանում պահուող՝ Վահրամ Մանկունու հաւաքածոյից. տես ստ, ծնթ. 277ի բ. յիշատակարանը:

6. Գ. վրդ. Ասլանեանը տեղեկութիւններ է հաղորդում Մալաթիայի տարբեր վանքերում պահուող ձեռագրերի մասին: Հրատարակել է ձեռագիր մի Աւետարանի յիշատակարանը, որ չկայ ԺԴ. դ. յիշ-ք հատորում եւ հետեւեալն է՝ «...Յամի ութ հարիւր Ժ. երրորդի թովականութեանս Հայոց (1361) եղեւ գրաւ գրչութեան, սուրբ եւ տիեզերալոյս Աւետարանիս: Աւգոստոս ամսոյ է աւարտեալ, ի Միլիտինէ քաղաք հայոց. ի սուրբ մենաստանիս, որ կոչի Լուսաւորիչ... Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգիք՞ ի սմանէ կամ կարդայք կամ աւրինակէք կամ տեսանէք, յիշեսջիք առաջի գառինն Աստուծոյ ի ժամ սուրբ պատարագին ի մաքրափայլ յաղաւթս Ձեր զփծուն գրիչս զՀայրպտ սուտանուն աբեղա. զծնողս իմ եւ զհայրն իմ զՄատթէոս քահանայն. Եւ զամ[ենայն] արեան մերձաւորն իմ. այլ եւ զհոգեւոր եղբարքս իմ եւ զԿարապետ կուսակրաւն աբե - ղան որ զթուղթն կոկեաց. եւ Ստեփաննոս աբեղան, եւ Ղազար կուսակրաւն եւ զՄովսէս քահանայն, որ զաւրինակն շնորհեաց...». տե՛ս Արեւելեան մամուլ, 1907, էջ 517-20, հմմտ. նոյն հեղինակի «Պատառիկներ լուսածիր շաբաթացեալ վանքերէն» յօդուածաշարը՝ հրատարակուած Բազմավէպի 1933-38 թթ. համարներում:

7. ԺԶ. դ. մէկ այլ յիշատակարան հրատարակուած է Վենետիկի մխիթարեան վարդապետ Անդրէաս Աղեքսանդրեանի «Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ» գրքի մէջ (Վենետիկ, 1911, էջ 402). «Գրեցաւ Ս. Աւետարանս ձեռամբ Պօղոս եպիսկոպոսի, յերկիրն Մելտենի, ի գիւղն Մուշողկուն վանքն, ի դուռն Ս. Սարգսայ եւ Սրբոյն Յակոբայ եւ Ս. Թորոսու եւ Ս. Խաչատուրայ եւ Ս. Կարապետի եւ Ս. Ստեփանոսի ի խնդրոյ բանի Մղտեսի Խոճայ Պակէ որդւոյն Կասպարին: Արդ, գրեցաւ ի թուին ՌԻԷ. (1578 թ.) ի թագաւորութեան շահ Մուրատի, որ ուղարկեաց զիւր վազերն բեռ* ՌԵԱ. (*այսինքն հարիւր հազար) հեծելով ի վերայ Կարսին, ի Կաթողիկոսութեան Տէր Խաչատուրոյ եւ ի Վանից առաջնորդութեան Տէր Աստուածատրոյ աբեղայի եւ մեր եղբարցս Համշիրակ Տէր Գրիգորի եպիսկոպոսի եւ Ծերուն եպիսկոպոսի որ է պարթեւ եւ աշակերտին իմոյ Տէր Յովհաննէսին եւ Տէր Յակոբին եւ Մալազին Տէր Գէորգին եւ այլ միաբանից յիշեցէ՛ք ի Քրիստոսի զԹարուկղն եւ զԾահզատան եւ զՍուլթան եւ զՄելիքն». յիշ-ի վերահրատ. տե՛ս Ալպ., Մալաթիա, էջ 1226-27:

Պալեանը չի հասցրել անդրադառնալ Մալաթիայի բոլոր վանքերին, այդ բացը լրացրել է Ա. Ալպօյաճեանը իր «Պատմութիւն Մալաթիոյ Հայոց» (Պէյրութ, 1961) ստուարածաւալ աշխատութեան մէջ (էջ 591-639), հրատարակելով ԺԱ-ԺԷ. դդ. յիշատակարաններ՝ Էջմիածնի (Երեւանի), Վենետիկի, Երուսաղէմի, Վիեննայի ձեռագրական հաւաքածուներից եւ չպահպանուած այլ հաւաքածոների նկարագրութիւններից:

285* Թիերի՝ Հմր 123.1, էջ 25, վիճակ՝ անյայտ: Սա պէտք է լինէր Ակնայ վանքերի ցուցակի մէջ:

286* Յիշ. 1457 թ.՝ «...Արդ, գրեցաւ աստուածային գանձարանս որ կոչի Աւետարան, ի յանապատիս որ կոչի սուրբ Մամաս, ձեռամբ Մաթէոս աբեղայի, ի թվիս Հայ տոհմիս տումարի ՋԶ. (1457)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 84:

Յիշ. 1646 թ.՝ «...Գրեցաւ եւ աւարտեցաւ սրբոց պատմութիւնս, որ կոչի Այսմաւուրք. թուականիս Հայոց ՌՂԵ. (1646) ի քաղաքն Ըստամպօլ ընդ հովանեաւ Ս. Լուսաւորչին... որք եդին իւրեանց հոգւոյն յիշատակ ի յԱկին քաղաք ի Վան գեղի ժամն...». տե՛ս Ճանիկ., էջ 79, վերահրատ.՝ ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 234:

Յիշ. 1627 թ.՝ «Արդ, գրեցաւ սա ձեռամբ փցուն գրչի Սահակ անցաւորի, ի թվին ՌՀԶ. (1627), ի սբ. ուխտս ատենահաս Ս. Սարգիս, ի գիւղն որ Վանք կոչի: Որք հանդիպիք սմա յիշեսջիք... զծնաւղս իմ եւ զմերձաւորքս իմ...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 268:

[287]* Տեղ. բառ., Բ/711. «Խարտիշարի Ս. Կարապետ, Խարտիշարայ Ս. Կարապետի վանք, Խարտիշարոյ Ս. Անապատ, Խարտիշարու Ս. Կարապետ, Խարտիշարու վանք - Վանք Խարբերդի նահանգի Չմշկածագի գաւառում: Յիշատակւում է ԺԵ. դ. սկզբներին՝ 1434 թ.: 1648 թ. կործանուել է երկրաշարժից եւ նոյն տարին էլ նորոգուել Միքայէլ եպս. կողմից: 1915ին վանքից մնացել էր մի մատուռ, որ պահպանուել է որպէս ուխտատեղի: Շրջակայ հնութիւններից յիշարժան են «Խոյի քար» եւ «Մարմար քար» արձանները, երկու խաչքարեր, որոնց վրայ եղել են արձանագրութիւններ:

Թիերի՝ Հմր 448, էջ 83, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[288]* Գ. Սրուանձտ., էջ 349-50, վերահրատ.՝ ԺԵ. դ. յիշատ., Ա, էջ 558-9:

[289]* Յիշ. 1434 թ.՝ «Գրեալ ի վանս Խարտիշարայ [1434 թ.], ընդ հովանեաւ սուրբ Կարապետին եւ սուրբ Աստուածածնին, ձեռամբ Ստեփանոսի կրօնաւորի». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 447: Յիշ. 1489, 1491, 1500 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 143, 181, 299: 1648 թ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 328:

[290]* Տեղ. բառ., Ե/664. «Երեք Մանկունք - Վանք Խարբերդի նահանգի Չմշկածագ գաւառակի Պոատիկ գիւղի մոտակայքում: Գտնւում էր աւերուած վիճակում. տե՛ս նաեւ Քառասուն Մանկանց վանք»: Թիերի՝ Հմր 450, էջ 83, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[291]* Թիերի՝ Հմր 460, էջ 85, վիճակ՝ անյայտ:

[292]* Թիերի՝ Հմր 456, էջ 84, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերի մէջ, առանց որեւէ այլ տեղեկութեան:

[293]* Թիերի՝ Հմր 458, էջ 84-5, վանք (կամ եկեղեցի), որ միայն յիշատակւում է ցանկերի մէջ, առանց որեւէ այլ տեղեկութեան:

[294]* Տեղ. բառ., Գ/57. «Կարմիր վանք, Ագրակու Կարմիր վանք, Կարմիր մենաստան, Կարմիր վանքի Ս. Նշան, Կարմրակ Ս. Նշան, Չմշկածագի Ս. Նշան - Վանք Խարբերդի նահանգում, Չմշկածագի Ագրակ գիւղի մօտ: Ենթադրում են, որ հիմնադրուել է ԺԴ. դ.: Ըստ յիշատակութիւնների ունեցել է Ս. Աստուածածին եւ Ս. Նշան եկեղեցիներ: ԺԸ. դ. վերջերից բազմիցս ենթարկուել է աւազակային յարձակման, կողոպտուել ու աւերուել: 1870 թ. վերանորոգուել է: Ականատեսների պատմածով 1920 թ. հազիւ նշմարւում էին տաճարի հիմնապատերը, մատուռի մէկ կամարը, փլուած պատերի բեկորներն ու շրջապարսպի մնացորդները: Աւերել էին գերեզմանատունը, թալանել տապանաքարերն ու խաչքարերը: 1880ական թթ. այստեղից Չմշկածագի Ս. Աստուածածին եկեղեցի տեղափոխուեցին բազմաթիւ հայերէն ձեռագրեր ու գրքեր»: Թիերի՝ Հմր 453, էջ 84, վիճակ՝ անյայտ:

[295]* Յիշ-ս վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 466, նաեւ լրիւ տարբերակը՝ ԺԵ. դ. յիշ., Գ., (Յաւելուած Ա.), էջ 381-2:

[296]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 198:

Այլ յիշատ.՝ 1435 թ. «Արդ, գրեցաւ սա սուրբ մենաստանիս, որ կոչի Կարմիր... ի յամի ՊՁԴ. (1435) թըւին, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, եւ ի բռնակալութեանն Աւթման-Բէկին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 448:

Յիշ. 1613, 1618 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 504, 641:

Յիշ. 1621, 1623, 1629, 1631 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 7, 33, 119, 344, 852:

Յիշ. 1642, 1646 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 71, 229:

[297]* Թիերի՝ Հմր 455, էջ 84, վիճակ՝ հիմնովին աւերուած:

Յիշատ.՝ 1497 թ. «...Աւարտեցաւ քառաբուխ եւ քառավըտակ աստուածախաւս սուրբ Աւետարանս այս ի թուաբերութեան հայկազեան տումարիս ՋԽԶ. (1497) ամին, ի սուրբ ուխտս Կողուց վանքն, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորիս եւ սուրբ Կարմիրակ Նշանիս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 243:

[298] Յիշ. 1613 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 504:

[299]* Հմր 193-4/2-3, 196/5, 198-9/7-8 վանքերի՝ «Լոյս»ում (1906, 17/Զ, Հմր 24, էջ 569-71. գրուած է «շարունակելի», բայց չի շարունակուել) հրատարակուած նկարագրութիւնների տարբերութիւնները փակագծերի մէջ մուծել ենք «Բիւզանդիոն»ի (1906, թիւ 3.014, էջ 1) տարբերակի մէջ, որով «Լոյս»ի տարբերակի առանձին տպագրումն անիմաստ է դառնում:

[300]* Տեղ. բառ. Բ/243. «Ս. Կարապետի վանք, Երկան Ընկուզի Ս. Կարապետ, Երկան, Երկան Ընկուզեաց վանք, Երկան Կուզիկի Ս. Կարապետ - Վանք Խարբերդի նահանգի Երկան գիւղում: Համալիրի մեջ մտնում են Ս. Աստուածածին եւ Ս. Կարապետ հոյակապ եկեղեցիները, որոնցից անցեալ դարի կէսերին պահպանուել էին միայն աւերակներ: Պահպանուել են այդտեղ գրված մի քանի ձեռագրեր, որոնցից մէկը՝ 1601 թ.»:

Թիերի՝ Հմր 444, էջ 82, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

Այս վանքը ըստ յիշատակարանների վկայութիւնների պէտք է լինէր Չմշկածագի վանքերի շարքում:

[301]* Յիշ. վերահրատ.՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 46:

Յիշ. 1434 թ.՝ «...Եւ աւարտեցաւ ի Ցաղման գաւառի, ի նահանգին Չմշկածակի, ի սուրբ ուխտիս Երկէն-Ընկուզեց, յառաջնորդութեամբ Առաքել վարդապետի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին եւ սուրբ Աստուածածնին... եւ ի թուականութեանս Հայոց ՊՁԱ. (1432) ամին». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 426:

Յիշ. 1434, 1435 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 442, 449, 458:

Յիշ. 1608, 1612 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 319, 474:

[302]* Տեղ. բառ., Գ/309. «Հալւորի Ս. Կարապետ, Ս. Կարապետ, Հալւորի վանք, Հալւորկոր վանք, Հաւլորու Ս. Կարապետ, Ս. Հրաշագործ - Վանք Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառում, Հալւորիկ գիւղում: Կառուցուել է 974 թ.: Վերջին անգամ վերանորոգուել է 1648 թ.: Ունէր հոյակապ տաճար, որը երկրաշարժի պատճառով մեզ է հասել կիսաւեր ու ամայի վիճակում, վերջնականապէս լքուել է 1915 թ.: Ըստ աւանդութեան կառուցուել է Դ. դ. Գր. Լուսաւորչի ժամանակ, իբր Գր. Լուսաւորիչը Ս. Կարապետի դիակը Տարօն բերելիս վանքակիր բլրի վրա նրա դիակից արիւն է կաթում, եւ այստեղ էլ նա կառուցում է մի մատուռ, որը հետզհետէ վերածւում է վանքի»: Այս աւանդութիւնը Պալեանը պատմում է Բալուի Ս. Կարապետ վանքի վերաբերեալ, տե՛ս Հմր 164/2: Թիերի՝ Հմր 443, էջ 82, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[303]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 46-7, ուր բնագիրը բաւական տարբեր է Պալեանի հրատարակութիւնից, որովհետեւ «յիշատակարանի բովանդակութիւնն իր խօսքերով վերապատմել է Գ. Սրուանձտեանը իր Թորոս Աղբարի Բ. հատորում...», իսկ Լ. Խաչիկեանը վերցրել է Ֆ. Մակլերի նկարագրած Լէյդենի համալսարանի Ցուցակից (Հմր 38, էջ 95-8). տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 47:

Յիշատ. չափածոյ՝ 1419 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 231-2:

Յիշատ.՝ 1421 թ. «...Գրեցաւ տաղերս ձեռամբ անիմաստ գրչի սուտանուն Աստուածատուր դպրի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, ի յանապատիս, որ կոչի Պառուագրակ, ի թվ. ՊՀ. (1421)». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 267:

Յիշ. 1454, 1455, 1475 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 46, 60, 386. տե՛ս նաեւ ԺԵ. դ. յիշ., Գ., 1458 թ., էջ 431:

304* Տեղ. բառ., Բ/478. «Ս. Տիկին - Վանք Խարբերդի նահանգի Չարսանջակի Բերդակ գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերին աւերուած ու լքուած էր: Վանքի աւերակներից նոյնիսկ երեւում է, որ այն կանգուն ժամանակ եղել է մեծ ու հոյաշէն կառոյց»: Թիերի՝ Հմր 479, էջ 88, վիճակ՝ հիմնովին աւերուած:

305* Յիշատ.՝ 1437 թ. «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՊՁԶ. (1437), յաթոռակալութեան տեառն Կոստընդեայ, եւ յառաջնորդութեան արհի եւ երջանիկ, հեզահոգի, քաղցր եւ արի եւ ամենայն գովութեանց արժանաւորի տէր Մարտիրոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Թէոդորոսի, յերկիրս որ կոչի Բերդկան, ի վանքս սուրբ Տիկնայ. եւ յիշատակարանս գրեցաւ ի քաղաքս որ կոչի Հարբերդ, ընդ հովանեաւ ամենասուրբ Աստուածածնի, եւ սուրբ Ստեփաննոսի եւ սուրբ Սարգսի Զաւրավարին, ի յառաջնորդութեան թեմիս Հարբերդու քաջ եւ արի արհիեպիսկոպոսի տեառն Ստեփաննոսի, որ է երեւելի եւ իշխան ամենայն եպիսկոպոսաց աշխարհիս այսմիկ»: Յիշ. հրատ. տե՛ս Պալեան Յուցակ Ս. Կարապետի, էջ 26, վերահրատ՝. ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 383: Յիշ. 1640 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 822:

306* Տեղ. բառ., Բ/478. «Վանք Արմ Հայ-ում, Չարսանջակի Լամք գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերին աւերուած ու լքուած էր»: Թիերի՝ Հմր 480, էջ 88, վիճակ՝ հիմնովին աւերուած:

307* Տեղ. բառ., Գ/464. «Յուղիդա, Ս. Յուղիդայի վանք - Աւերակ վանք Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառում, Մաստան գիւղի մօտ: Հաւանաբար կանգուն ժամանակ ունէր նաեւ կուսանոց: ԺԹ. դ. աւերակները պահպանուել էին»: Թիերի՝ Հմր 473, էջ 87, վիճակ՝ հիմնովին աւերուած:

308* Յիշատ.՝ 1325 թ. «...Եղեւ զրաւ գրութեան սորա ի թուաբերութեան Աբեթեան գրոհի ՉՀԴ. (1325)... Գրեցաւ տաոս աստուածայինս... Աւետարանս ի վանս կոչեցեալ սուրբ Կիրակոսի եւ մաւր նորին Յուղիդայ, ի հայրապետութեան [թագաւորութեան - Լ. Խ.] տեառն Լեւովնի...». տե՛ս ԺԴ. դ. յիշ. էջ 200. տե՛ս նաեւ Ս. Յուղիտայի վանք:

309* Թիերի՝ Հ$^{մր}$ 443.1, էջ 82, վիճակ՝ ջրասոյզ եղած:

310* Թիերի՝ Հմր 462, էջ 85, վիճակ՝ անյայտ:

311* Թիերի՝ Հմր 481, էջ 88, վիճակ՝ հիմնովին աւերուած:

312* Թիերի՝ Հմր 482, էջ 88, վիճակ՝ հիմնովին աւերուած:

313* Թիերի՝ Հմր 475, էջ 87, վիճակ՝ հիմնովին աւերուած:

314* Թիերի՝ Հմր 476, էջ 87, վիճակ՝ հիմնովին աւերուած: Հ$^{մր}$ 5-13ի նկարագրութիւնը սահմանափակուած է մէկական նախադասութեամբ:

315* Թիերի՝ Հմր 052, էջ 13, վիճակ՝ անյայտ:

316* Թիերի՝ Հմր 483, էջ 88, վիճակ՝ անյայտ:

317* Թիերի՝ Հմր 478, էջ 87, եկեղեցի կամ վանք, որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան:

318* Թիերի՝ Հմր 469, էջ 86, եկեղեցի կամ վանք, որ միայն յիշատակւում է ցանկերում, առանց որեւէ այլ տեղեկութեան: Ինչպէս Պալեանին, նոյնպէս եւ ուրիշ մէկի առայժմ չի յաջողուել ճշգրտել Ճերմակ վանքի աշխարհագրական դիրքը, այնպէս որ ենթադրաբար տեղադրում են Բասենում, Դէրսիմում եւ Գուգարքում: Ճշտուած չէ նաեւ նոյնականացման հարցը. արդեօք մէ՞կ Ճերմակ, թէ՞ Սպիտակ, կամ տարբեր վանքերի մասին է խօսքը. տե՛ս Տեղ. բառ., Գ/610:

[319]* Տեղ. բառ., Ա/221. «Ամրդոլու վանք, Ամլորդավանք, Ամլորդուովանք, Ամրդոլավանք, Ամրդոլի վանք, Ամրտոլուվանք, Արմտոլու վանք: 1915 թ. վանքը աւերուել ու կողոպտուել է: Այժմ ամայի է»: Թիերի՝ Հ[մր] 053, էջ 13, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[320]* Արձանագրութեանս վերահրատ. տե՛ս է Ն. վ. Ակինեան, Բաղէշի դպրոցը, էջ 273:

[321]* Փակագծերի մէջ դրել ենք Ն. վ. Ակինեանի վերահրատարակութեան ձեւերը. այն սկսւում է «ի տապանի» բառերով, դրանից առաջ երկու տողը՝ մինչեւ ՌՃԽԳ. համարում է «խաչքարի մը արձանագրութիւնը». որ է՝ «Ով կենսատու Սուրբ Խաչ Փրկչին Ներկեալ արեամբ կենարարին, Բարեխօսեա յօրն ահագին, Վասն Վարդանայ մեծ տէլէտին. Ծինող սրբոյ այսմ Տաճարին, Թվին ՌՃԽԴ. (1695)». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 263, 274:

[322]* Յիշատ. ՝ ա. 1598 թ. «...Արդ, գրեցաւ ի մեծ թվականին Հայոց ՌԽԷ. (1598) ի մայրաքաղաքս Բաղէշ ի դուռն սուրբ Յոհաննու Մկրտչին որ Ամիրդօլու վանք վերաձայնի: Եւ գրեցի զսա մեղսամած մատամբ իմով յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց...». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 80:

բ. «Թուին ՌԽԸ. (1599) վերստին նորոգեցաւ վանքս Ամիրտօլու վերակացութեամբ Բարսեղ վարդապետին». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 71:

գ. 1684 թ.՝ «...Յիշեցէք զուսուցիչն իմ զԲաղիշեցի տէր Վարդան վարդապետն զմեծ հռետորն, որ յայսմ ամի գնաց յԵրուսաղէմ հնգետասան աշակերտօքն՝ մխիթարել զհոգեւոր եւ զմարմնաւոր եղբարսն որ անդ: Եւ կատարեալ զուխտն դարձեալ եկն, ի բնիկ աթոռն իւր Ս. Յովհաննէս Մկրտչին, որ Ամիրդօլ վերաձայնի: Այլ եւ զՎանեցի զՍահակ վարդապետն, որ ուսոյց ինձ զկապն, զծաղիկ: Ես գրողս Յովհաննէս քահանայ, ի Ջրօրհնեաց սկսեցի եւ աւարտեցի ի Նոր Կիւրակէ... թվ. ՌՃԼԳ. (1684)». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 256:

դ. 1703 թ.՝ «Ջեռնտու օժանդակութեամբ... պանծալի քաջ րաբունապետ Վարդան աստուածաբան վարդապետի... ի նահանգիս Բաղէշ կոչեցելոյ, ի թուականիս հայկազուն սեռի ՌՃԾԲ. (1703) ամին. ընդ հովանեաւ Ս. Յովհաննու Կարապետին մականուամբ Ամրդօլու վանք վերաձայնելոյ...». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 324-5: Յիշ-ներ՝ 1455 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 56:

Յիշ.՝ 1487, 1493, 1495 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 103, 196, 219:

Յիշ.՝ 1607, 1610, 1614 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 276, 386, 536:

Յիշ.՝ 1653, 1656, 1657, 1658, 1659 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 554, 578, 730, 731, 774, 802, 899:

Յիշ.՝ 1675, 1680, 1685, 1687, 1690, 1693, 1696, 1697, 1704 թթ. տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 250-1, 260-1:

[323]* Տեղ. բառ., Ա/937-8. «Ս. Գէորգ, Գոմաց Աստուածածին, Գոմաց վանք, Գոմուց Ս. Աստուածածին, Կոմաց Աստուածածին, Տատրաքնակ Աստուածածին, Տատրակաբնակ Աստվածածին, Տատրկայ վանք - Վանք Բիթլիսի նահանգում, Գոմս գիւղի արլ կողմում: ԺԳ. դ. գաւառի թեմական կենտրոնն էր: 1889 թ. վանքին կից գործում էր վարժարան: Վանքը աւերուեց ու կողոպտուեց թուրք ջարդարարների ձեռքով 1915-18 թթ.: Եղել է հայ գրչութեան կենտրոն, որտեղ արտագրուած ձեռագրերից մի քանիսը՝ գրուած 1578, 1661 եւ այլ թթ. պահպանուել ու հասել են մեզ»: Թիերի՝ Հ[մր] 058, էջ 14, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[324]* Ն. Ակինեանը՝ Բաղէշի դպրոցը, էջ 208, ունի՝ «վերակացութեան», եւ «ՌՃԽ.» (1691)ի փոխարէն «ՌՃԹ.» 1660):

[325]* Յիշ. 1414 թ.՝ «Գրեցաւ ի գերահռչակ ուխտս Գոմուց վանք կոչեցեալ, մերձ աստուածաշէն քաղաքս Բաղէշ անուանեալ... ձեռամբ... Մելքիսէտ պիտակ անուն բանի խնդրողի... ի ՊԿԳ. (1414) թվին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 165:

Յիշ.՝ 1483 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 41:

Յիշ.՝ 1607 թ.՝ «Եւ արդ՝ ես՝ յետին ի գրչաց եւ անպիտան եւ անարժան ի մանկունս սբ. եկեղեցւոյ... Յովսէփ եպիսկոպոսս... Ծնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսբ. Աւետարանս ի մեծ թուին Հայոց ի Ռ. եւ ԾԶ. (1607), ի քաղաքս Բաղէշ, ի վանքս Գոմոց, ի դրունս Ս. Աստուածածնին եւ Ս. Գէորգեայ Ջաւրավարին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 272:

Յիշ.՝ 1623 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 98:

Յիշ.՝ 1650 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 401:

Յիշ.՝ 1656 թ.՝ «...Ի թուականին Հայոց ՌՃԵ. (1656), ի դրունս Ս. Կարապետին, եւ Ս. Աթանագինէ հայրապետին, եւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, եւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ Ս. Յարութեան... Եւ արդ՝ դիտելի է, զի Գանձատետրս գրեալ էր յեզր Բաղէշ քաղաքի, ի վանքն Գոմոց կոչեցեալ, առ դրունս Ս. Աստուածածնին եւ Ս. Գէորգայ զաւրավարին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 732:

[326]* Տեղ. բառ., Ա/361. «Աւեխու Ս. Աստվածածին, Աւեխու վանք, Աւեղ, Ս. Թադէի վանք - Վանք Բաղէշ քաղաքի մօտ: Ըստ աւանդութեան հիմնադրուել է առաջին դ., Թադէոս առաքեալի կողմից: Այստեղ է ապրել Վարդան Բաղիշեցին, եղել է գրչութեան կենտրոն: Վանքի մօտի երկու աղբիւրները կոչւում էին Թադէոս եւ Թովմաս Առաքեալների անուններով: Վանքը Ի. դ. սկզբներին աւերուել եւ ամայացել է»:

Թիերի՝ Հմր 056, էջ 13, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[327]* Տեղ. բառ., Բ/745. «Դրակատարու վանք, Խնդիրկատար Ս. Աստուածածնի վանք, Խնդրակատար Ս. Աստուածածնայ վանք - Վանք (անապատ) Արմ. Հայաստանում, Բաղէշի երեք մենաստաններից ամենամեծն է: Եկեղեցին, որ շինել է ԺԷ. դ. Աւետիք վարդապետը, ունէր գեղեցիկ գմբեթ եւ քարածածկ էր: Վանքի հիմնադրումը վերագրուած է Թադէոս առաքեալին, բայց ենթադրւում է, որ վանքը հիմնադրուել է աւելի ուշ շրջ-ում, հաւանաբար ԺԳ. դարում: Դաւիթ Բաղիշեցին 1651 թ. նշանակուել է վանքի վանահայր եւ նորոգել է վանքը: Եղել է գրչութեան կենտրոն: 1881 թ. այստեղ բացուել է մի նոր դպրոց: Եղեռնի ժամանակ Բիթլիսից տեղահանուած հայերը ապաստանել են վանքում եւ դիմադրել թուրքերին: Այժմ աւերակ է»: Թիերի՝ Հմր 057, էջ 13, վիճակ՝ անյայտ:

[328]* Ծնթ. Ֆրանսիայի Ազգային գրադարանում (Հայ. Հմր 195) է պահւում Խնդրակատար Ս. Աստուածածին վանքի պատմութիւն-յիշատակարանը՝ Պատմութիւն վանուց Սրբոյն Աստուածածնայ Բաղիշու, որ Ֆ. Մակլերը հրատարակել է Notre-Dame de Bitlis վերնագրով՝ «Բանասէր» հանդէսում, 1905 թ., էջ 289-303, վերահրատարակութիւն՝ ֆրանսերէն՝ Journal Asiatique, 1915, էջ 344-57: Ձեռագրի վերջին, նոր նկարագրութիւնը տե՛ս Manuscrits armeniens de la Bibliotheque Nationale de France. Catalogue, Paris, 1998, էջ 763:

Յիշ. 1514 թ.՝ «...Ի յայս բարի ժամանակս, որ էր թվականն ՋԿԳ. (1514), շինեաց Ներսէս վարդապետն ձեռամբ խօջայ Թումաջանին զպարիսպն Խնդրակատար Ս. Աստուածածնին». տե՛ս Ն. Ակինեան (վերցրել է «Բանասէր»ից, 1905), Բաղէշ, էջ 32:

Յիշ. 1547 թ.՝ «Եւ արդ, ես՝ նուաստս եւ յետինս... վերստին նորոգեցի եւ կազմեցի զպատուական եւ զվարդափըթիթ գիրքս այս Հարանց վարքս... ի թվին ՋՂԶ. (1547)

նորոգեցաք, զի մնասցէ ի դուռն Խնդրակատար սուրբ Աստուածածնին ի բարի եւ անջինջ յիշատակ…». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 43:

Յիշ.՝ 1647, 1652 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 257, 487:

[329]* Տեղ. բառ., Ա/247. «Ս. Անանիա, Ս. Գէորգ, Զորավար - Վանք Վանայ լճի հր-արմ կողմում, Բաղէշ ք-ի մոտակայքում: Պահպանուել են 1418 եւ 1575 թթ. այստեղ ընդօրինակուած Յայսմաւուրք եւ Աւետարան»: Թիերի՝ Հմր 054, էջ 13, վիճակ՝ տաճարն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[330]* Թիերի՝ Հմր 060, էջ 14, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[331]* Տեղ. բառ., Ա/730. «Բոռայ Ս. Յոհան, Ս. Յովհաննէս, Նարեկայ վանք, Պոռայ Ս. Յոհան, Նարեկացու վանք, Պոռայ վանք - Վանք Բաղէշ քաղաքից հս-արլ, Բոռ գիւղի մօտ: ԺԴ-ԺԵ. դդ. եղել է հայ գրչութեան յայտնի կենտրոններից, որտեղ ապրել եւ ստեղծագործել են Մկրտիչ Նաղաշը եւ Առաքել Բաղիշեցին: ԺԹ. դ. վերջերին վանքն արդեն աւերուած ու լքուած էր»: Թիերի՝ Հմր 055, էջ 13, վիճակ՝ կանգուն:

[332]* Յիշ. 1610 թ.՝ «Փառք… Արդ, գրեցաւ Ճարակնոցս ի վանքս Պոռայ, ի դուռն Ս. Յովհաննու Մկրտչին, ձեռամբ Յոհանէս աբեղայի, մինչ ի Մանկտիքն, եւ փոխեցաւ ինքն առ Աստուած: Եւ անտի ի յետ մինչ ի յաւարտն ես անարժան Յովսէփ Տատկցիս գրեցի ի վանքս, որ կոչի Բարիձոր [տե՛ս Վան… Հմր 283/26], ի դուռն Ս. Աստուածածնին. որ էր տեղապահ եւ հայր վանացս տէր Բարսեղ. ի թվիս մեր ՌԾԹ. (1610)…». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 395:

Յիշ. 1708 թ.՝ «Արդ, գրեցաւ սա ի Մուշ քաղաք, ընդ հովանեաւ Ս. Յարութեան տաճարին, … ի թուականիս Հայոց ՌՃԾ. եւ Է. (1708) ամին ձեռամբ… Յակոբ երիցու… Զի մինչ ես որ զայս սուրբ գիրքս աւարտեցի երեք տեղ փոխեցայ վասն դառն ժամանակին եւ հարկապահանջութեան չար բռնաւորին Սահատ խանին: Նախ ի Բաղէշ քաղաք եւ անտի ի Պոռայ սուրբ Նարեկացոյ վանքն եւ անտի ի Մուշ քաղաք…». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 328:

[333]* Տեղ. բառ., Ա/51. «Աթանագինէ, Աթանիա, Աթանեայ վանք, Անթանեայ վանք, Մոճկոնից վանք - Վանք Աղձնիքի Տատիկ գաւառում, Մոճկոնք գիւղի մօտ: Ըստ աւանդութեան կառուցուել է Դ. դ. Գր. Լուսաւորչի որդի Արիստակէսի կողմից եւ իբր այստեղ են հանգչում ս. Մկրտչի եւ Աթանագինէի աճիւնները: 1849 թ. վերանորոգուել է Պողոս վարդապետի կողմից: Եղել է Սասունի հայերի եւ քրդերի ամենասիրուած ուխտատեղին: Մինչեւ 1880-ական թթ. ունէր ընդարձակ կալուածքներ… Աւերուել եւ լքուել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»: Թիերի՝ Հմր 059, էջ 14, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[334]* Տեղ. բառ., Գ/398. «Ս. Յեզդիբուզդի վանք, Ս. Յիզտիբուզտի վանք - Վանք Բիթլիսի գաւառակում, Վանայ լճի հր-արմ ափին, Թուխ գիւղի մօտ: ԺԹ. դ. վերջերին արդէն աւերակ էր»: Հմմտ. Տեղ. բառ., Գ/413՝ Յիզտիբուզտի վանք:

[335]* Թիերի՝ Հմր 082, էջ 18, վիճակ՝ անյայտ:

[336]* Թիերի՝ Հմր 080, էջ 17, վիճակ՝ անյայտ:

[337]* Թիերի՝ Հմր 083, էջ 18, վիճակ՝ անյայտ:

[338]* Յիշ. 1603 թ.՝ «Արդ, գրեցաւ սբ. Աւետարանս ի թվականիս Հայոց Ռ. եւ ԾԲ. (1603), ի քաղաքս Բաղէշ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին, ձեռամբ անարժան եւ մեղսաշաղախ… սուտանուն Մարտիրոսի…». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 82:

Յիշ. 1604 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., 156:

Յիշ. 1623 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 112:

Յիշ. 1658 թ.՝ «...Եւ արդ, ես՝ յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս եւ անարժանս... սուտանուն Դաւիթ էրէցս, շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի սբ. տէրունեան Աւետարանս, ի թուականիս Հայոց մեծաց ՌՃ. եւ Է. (1658) ամին, ի մայրաքաղաքիս Բաղէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Կիրակոսին եւ Կարմրակ Ս. Նշանին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 826:

[339]* Տեղ. բառ., Բ/855. «Ծղակու Ս. Աստուածածին, Ծղակու վանք - Վանք Արմ Հայ-ում, Բիթլիսի նահանգում, Վանայ լճի արմ ափին: Եղել է գրչութեան կենտրոն: Յիշատ.՝ 1474, 1511 թթ.: ԺԹ. դարի վերջին կիսաւեր էր»: Թիերի՝ Հմր 084, էջ 18, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[340]* Յիշ. 1474 թ.՝ «...Եւ արդ, գրեցաւ սա ի վանըս Ծղաքու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածընի տաճարիս, եւ սուրբ Յակոբայ, եւ սուրբ Գէորգայ զաւրավարիս, ի թըւիս Հայոց ՋԻԳ. (1474), ի թագաւորութեան Հասան-բէկի եւ որդոց նորին, եւ ի կաթողիկոսութեան Ըղըստակիսի ընդհանուր Հայոց, եւ Աղթամարա՝ տէր Ստեփանոսի: Յայսմ ամի, յորում Հասան-բակն զԲաղէշ խըսարեաց եւ զբազումս ի մարաց ազգէն կոտորեաց. եւ Հայոց ազգիս յոյժ ողորմած է, զի գերի ոչ առնէ. եւ այս ի խնամոցն Աստուծոյ պիտի իմանալ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. հ. Բ., էջ 365:

Յիշ. 1645, 1648 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 168, 192, 293:

[341]* Թիերի՝ Հմր 075, էջ 16, վիճակ՝ անյայտ:

[342]* Թիերի՝ Հմր 081, էջ 18, վիճակ՝ անյայտ:

[343]* Թիերի՝ Հմր 090, էջ 19, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն: Այս վանքի անունը վրիպե՞լ է արդեոք, թէ ի՞նչ պատճառով՝ չկայ ԲԱՂԵՇԻ ՎԱՆՔԵ-ՐԸ ընդարձակ շարքի նկարագրութեան մէջ: Որպէս դպրոցներ՝ Բաղէշի Ամրդոլու, Ս. Աստուածածին Գոմաց, Աւեխի Ս. Աստուածածին եւ Խնդրակատար Ս. Աստուածածին վանքերի մասին տե՛ս Ն. Ակինեանի «Բաղէշի դպրոցը (1500-1704)» ուսումնասիրու-թիւնը. տե՛ս նաեւ Տ. Պալեանի խնդրանքով գրուած՝ Կ. Թուխմանեանի յօդուածը՝ Բաղէշի եկեղեցիներն ու վանքերը, Բիւզանդիոն, 1897, թիւ 328 (24/ԺԱ.-6/ԺԲ.), էջ 1:

[344]* Տեղ. բառ., Դ/625. «Սիրունքար, Սիրունքարի ուխտ - Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառում, Մեծկերտ գք մօտ»: Թիերի՝ Հմր 468, էջ 86, վիճակ՝ անյայտ:

[345]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 272-3:

Յիշ. 1467 թ.՝ «...Գրեցաւ եղանակաւոր տաւս ի թու. ՋԺԶ. (1467), ի սուրբ ուխտս որ կոչի Սիրունքարի, ի գաւառիս Մեծկերտու, ընդ հովանեաւ սուրբ Յակովբա, ձեռամբ բազմամեղ գրչի Մարգարէ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 262:

Յիշ. 1468 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 272:

Յիշ. 1494 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 208:

[346]* Թիերի՝ Հմր 351, էջ 67, վիճակ՝ անյայտ:

[347]* Յիշ. 1323 թ.՝ «...Աւարտեցաւ քրիստոսահիմն եւ առաքելախաւս, մարգարէաշէն հոգիաբուխ այս տառ ի թուաբերութիւն հայկազեան սեռիս տումարի ՉՀԲ. (1323), ի հայրա[պետութիւն] Հայոց տեառն Կոստանդեա, ի թագ[աւորութիւն] Հայոց աստուա-ծասէր եւ բարեպաշտին Լեւոնի... ի հոյակապ եւ ի նշանաւոր գաւառիս Ապահունեաց, որ կոչի Մանձկերտ, ի գեաւղս, որ անուամբ կոչի Գումբայթ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին եւ սրբոյն Դանիէլի. ի գաւառիս Ապահունեաց, որ ունի յինքեան զհռչակաւոր ուխտն...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 184:

[348]* Տեղ. բառ. Գ/446. «Վանք Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Ապահունիք գաւառում, Մանազկերտի շրջանի Նորատին գիւղի մօտ...»: Թիերի՝ Հմր 396, էջ 74, վիճակ՝ անյայտ:

[349]* Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս, Վիեննա, 1940, էջ 184:

[350]* Թիերի՝ Հմր 392, էջ 73, վիճակ՝ անյայտ:

[351]* Թիերի՝ Հմր 394, էջ 74, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[352]* Թիերի՝ Հմր 393, էջ 73, վիճակ՝ անյայտ:

[353]* Տեղ. բառ., Գ/22. «Առաքելավանք, Աւետիքի վանք, Գլակայ-Իննակնեայ վանք, Գլակայ Ս. Կարապետ, Գլակայ վանք, Իննակնեայ վանք, Հացեաց վանք, Յովհաննէս Կարապետի վանք, Յովհաննէս Մկրտիչ, Յովհաննու Կարապետի վանք, Յովհաննու Մկրտչի վանք, Ս. Յովհաննու վանք, Մատթէոսի եւ Մկրտչի վանք, Մշոյ Ս. Կարապետ, Մշու սուլթան Ս. Կարապետ, Մուրատատուր Ս. Կարապետ, Ողական վանք, Չանգալի վանք, Չանկլի դիւան Ս. Կարապետ, Տարոնի վանք, Տարոնոյ Ս. Կարապետ»: Թիերի՝ Հմր 368, էջ 70, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[354]* Հմմտ. նաեւ՝ Գեղամ, Ս. Կարապետի մենաստանը. Բիւզանդիոն, 1906, թիւ 2.876, էջ 1, թիւ 2.879, էջ 1-2: Յարմար առիթ, դժբախտաբար, այլեւս չունեցաւ Պալեանը, եւ ո՛չ միայն նա: Մուշի առաջնորդարանի նախկին քարտուղար Նազարէթ Մարտիրոսեանը 1914 թ. Պոլսի Իզմիրեան գրական մրցանակի յանձնաժողովին է ներկայացրել «Նշխարք Տարօնոյ» աշխատութիւնը, որ պարունակել է գիւղերում, վանքերում եւ եկեղեցիներում պահուող 159 ձեռագրի նկարագրութիւն, վիմագիր արձանագրութիւններ, տապանագրեր, խաչքարեր, եկեղեցական իրերի ու առարկաների վրայի գրութիւններ: Այդ աշխատանքը հրատարակուել է Երուսաղէմում, 1967 թ.: Արձանագրութիւնների հատուածը հրատարակուել է Սիոն ամսագրում, նոյնպէս 1967 թ., գրուելուց աւելի քան 50 տարի յետոյ: Պալեանի եւ միւսների հաւաքած նիւթերը մշակութային փրկուած բեկորներն են հայկական արեւմտեան հատուածի մշակոյթի եւ այսօր իսպառ կորստից փրկելու միակ ելքը նրանց հրատարակութիւնն է:

Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Նշխարք Տարօնոյ, [Արձանագրութիւններ՝ շինարարական, նորոգութեան, տապանագրեր] «Սիոն», 1967-68:

Մուշ. Սուրբ Կարապետ վանք

1. Խաչքար գերեզմանատան արեւել. պատի վրայ. «ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ... ԵՒՍ ԱՒՐՆ ՏԵՂ...ՅԻՆ ՊՂՋ. (1447) ԵՒ ԾՆՈՂԱՑՆ»:

2. Ս. Ստեփաննոսի դրան վրայ. «ՇԻՆԵՑԱՒ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՋՀԵ. (1526) ՁԵՌԱՄԲ ՂԻԿՍ (ՂՈՒՆԿԻԱՆՈՍ) ԱԲԵՂԻ»:

3. Վարդապետաց սենեակներուն առջեւ. «ԹՎԻՆ ՌԺԲ. (1563) ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՑՆ ՏԷՐ ՄԵԼՔԻՍԵԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻՆ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ՄԵՐՈՑ ԱՄԷՆ»:

4. Խաչքար աւագ սեղանին առջեւ. «Ի ԹՎԻՆ ՌՃԺԳ. (1664) ԵՍ ԱՐԻՍՏԱԿԷՍ... ՆՈՐՈԳԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՔՈՒՄԲԷԹ ԵՒ ԶՍԱԳ, ԱՅԼ ԵՒ ԶՍԱԳ ՍՐԲՈՑ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԶՊԱՐԻՍՊՆ ՇՔԵՂԱՊԱՏ ԵՒ ԶԱՂԲԻՒՐՆ ԲԱՐԵՀԱՄ ԵՒ ԵՐԿԱԹԱՊԱՏ ԴՌՆՈՎ ԵՒ ՏՆՏԵՍՏՈՒՆ ԽՑԻԿՆԵՐՈՎ ԵՒ ԶՏԵՂ ԽՈՏԱՃԱՐԱԿ ՃԳՆԱՒՈՐԱՑ ՀՈՅԱԿԱՊ ԵԿԵՂԵՑԻՆ, ՅԻՇԱՏԱԿ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ»:

5. Խաչքար. գերեզմանատան մարմարեայ երեք խաչքարեր. ա. «ՈՎ ՔԱՌԱԹԵՒ ՆՇԱՆ ՓՐԿՉԻՆ ԲԱՐԵԽՕՍԵԱ ՎԱՍՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՓԱԶԵԱՆ ՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ Է ԲԻՒԶԱՆԴԻՆ, ԼԵՐ ՕԳՆԱԿԱՆ ՅՕՐՆ ԱՀԵՂԻՆ, ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՒՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՆ, ԹՎԻՆ ՌՃԿԷ. (1718):

բ. «ՅԱՂԹՈՂ ՆՇԱՆ ԿԵՆԱՐԱՐԻՆ ... ՓՐԿՉԻՆ, ԲԱՐԵԽՕՍԵԱ ՅՕՐՆ ԱՀԵՂԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՄԿՐՏՉԻՆ, ՎԱՍՆ ԱԲՐԱՀԱՄ ՊԵՏԻՍ ՉՆՉԻՆ, ԼՈՒՍԱՒՈՐԵԱՑ ԼՈՒՍՈՎ ՔՈՅԻՆ, ԵՒ ՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ, ԱՐԺԱՆ ԱՌՆԵԼ ՋՄԵՋ, ԽԵՂՃ ՀՈԳԻ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ԹՎԻՆ ՌՃԿԷ. (1718)»:

գ. «ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՎԱՍՆ ԾԵՐՈՒՆԻ ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԵՒ ԻՒՐ ԾՆՕՂԱՑՆ ՆՈՅԻՆ. ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ. ԹՎԻՆ ՌՃԿԷ. (1718)»:

6. Խաչքար աւագ սեղանին առջեւ. «ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՅՍ, ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻՒՆ, ԵՍ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏՆ, ՍՊԱՍԱՒՈՐ ՍՐԲՈՑ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ԾՆՈՂԱՑ Տ. ՍԱՐԳՍԻՆ»:

7. Գերեզմանատան գմբէթին. «ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍՐԲՈՑ ԿԱՐԱՊԵՏԻՍ ԳՈՒՄՊԷԹՍ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՊՈԼՍԵՑԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ԱՐԴԵԱՄԲ ՄԱՍԱՄԲ ԻՒԻՔ ՈՒՐԻՇԻՆ ՊԱՊԱԿԱՆ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՎԱՍՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՑ, Ի ԹՎԻՆ ՌՄԻԸ.ԻՆ (1779)»:

8. Ժամատան դրան վերեւ. «ՅԻՇԱՏԱԿ Է ԳՈՒՄԲԷԹՍ ԿԱՐՆԵՑԻ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՀԱԿԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑ, ՀՕՐՆ ՎԱՐԴԱՆԻՆ, ՄՕՐՆ ԿԻՒՆԷՋԻ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՈՑՆ ԻՍԿՈՒՀԻՈՑՆ ԵՒ ՈՐԴԻՈՑՆ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՅԱԿՈԲԻՆ ՌՄԼԵ. (1786)»:

9. Խաչքար Ս. Ստեփանոսի սեղանին առջեւ. «ՅԻՇԱՏԱԿ Է ՕՏԱՍ ԲԱԼՈՒԵՑԻ ՅԱՌԱՋՆՈՐԴԻ, ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԹՎԻՆ ՌՄԽԴ.ԻՆ (1795)»:

10. Տապանաքար. «ԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆ ՄԱՐՄՆՈՑ ՏԵՂԻ, ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲԱՑ ԱՐՀՈՑ ԴԻՏԻ ՍՐԲՈՑ ԳԱՀԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ, ՍԱ ԷՐ ՏԵՂԵԱՒ ՍԱՄԱԹԵՑԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՔԱՐԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՉՈՐԵՔՏԱՍԱՆ ԱՄՍ ՏՈՒՆՍ ՀՈՎՈՒԵԱԼ ԵՒ ԶԲԱԶՈՒՄ ՊԱՐՏՍ ՎՃԱՐԵԱԼ, ՈՐ ՍՈՒՐԲ ՏԱՆՍ ՎՐԱՑ ԴԻԶԵԱԼ... ՀԱՅՑԷ Ի ՁԷՆՋ ԱՂԵՐՍՈՎԻ, ԱՍԵԼ ՀՈԳԻՈՅՆ ՋՈՂՈՐՄԻ, ԹՎԻՆ ՌՄԾԶ.ԻՆ (1807) ՄԱՅԻՍ Է.ԻՆ»

11. Խաչքար գերեզմանատան սեղանին առջեւ. «ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՕՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՎԱՍՆ ԶԱՔԱՐԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑ ՆՈՅԻՆ, ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ ԹՎԻՆ ՌՄԿԷ. (1818)»:

12. Տաճարին հարաւ. պատին. «ԹՎԻՆ ՌՄՀԸ. (1829) ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ԹԱԼՆԵՑԻՆ»:

13. Գերեզմանատան գեղաքանդակ դրան վրայ. «ԹԱՒՇԱՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՈՐԴԻ ՅԱԿՈԲՈՒ ՔԱՋ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՈՐ Ի ՊԷԿ ՕՂԼՈՒ»:

«ՎԱՍՆ ԵՂԲՕՐ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՐՈՆ ԹՈՐՈՍԻՆ ՇԻՆԵԱՑ ՅԻՇԱՏԱԿ Ի ՀԱՅՈՑ ԹՎԻՆ ՌՄՁԲ. (1833)»:

14. 15. 16. Գերեզմանատան աջակողմեան եւ ձախակողմեան, Ս. Ստեփանոսի ոսկեզօծ խաչվառներուն, ամբարի դրան վրայի արձանագրութիւններ):

Յիշ. ա. 618-19 թ.՝ «...Յետ մահուան Յուսկանն կալաւ զքահանայապետութիւնն Հայոց Փառներսեհ ումն, մի յագարակէն մատրանն Յովհաննու ի Տարաւն գաւառէ ի մեհենագեաւղն, որ մայր է եկեղեցեացն Հայոց, այսինքն նախ անդ եկեղեցի զառաջինն շինեալ: ...Քսան եւ իններորդ ամի (618-19) Խոսրովոյ արքայից արքայի, որդւոյ Որմզդի». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 21:

բ. 1269 թ.՝ «...Գրեցաւ սուրբ Աւետարանս, որ է հրամանք փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն: ...Բայց եղեւ այս ի ժամանակս... յորում էր թիւ տոմարին ՉԺԸ. (1269): ...Ես՝ տրուպս ամենայն վանականաց Ստեփաննոս կրաւնաւոր ընտացա գնոյ արծաթոյ յարդար վաստակոց ագարակս՝... եւ աւանդեցի ի տաճար Սրբոյ Կարապետին՝ ի վանս Գլակայ՝ յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց, եւ ամենայն ազգականաց...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 380:

Յիշ. 1315, 1347, 1368 թթ.,՝ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 118, 356, 483:

Յիշ. 1408 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 89:

Յիշ. 1472 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 336:

Յիշ. 1493 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 196:

Յիշ. 1611, 1613 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 451, 481:

Յիշ. 1624, 1630, 1635 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 139, 153, 393, 394, 627:

Յիշ. 1728 թ.՝ «Յիշատակ է սուրբ պատկերքս Մշոյ սուրբ Կարապետի առաջնորդ Աբրահամ աստուածաբան վարդապետին ի սուրբ Երուսաղէմ ի մէջ Ս. Յարութեան... ի թվին ՌՃՀԷ. (1728) ամին...». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 375-6: Յիշ. 1727, 1730 թթ.:

Յիշ. 1509, 1512, 1529, 1549 1588 թթ.՝ տե՛ս Հ. Ոսկ., Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 186-96:

[355]* Տեղ. բառ., Ա/322-3. «Ս. Առաքել, Ս. Առաքեալ, Ս. Առաքելարանք, Ս. Առաքեալք Մշոյ, Ս. Եղիազարի վանք, Երկոտասան Առաքելոց վանք, Թարգմանչաց վանք, Ս. Ղազարի վանք, Մշոյ Ս. Առաքելոց վանք - Վանք Տուրուբերան աշխարհի Տարոն գաւառում, Մուշից հր-արլ: Եղել է գրչութեան կենտրոն: Գոյութիւն ունի Ե. դարից: Վանքը կողոպտուել ու ամայացուել է 1915 թ.»: Թիերի՝ Հ^{որ} 359, էջ 68, վիճակ՝ տաճիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[356]* Վարդան եւ Դաւիթ Բաղիշեցիները Առաքելոց վանքի միաբանների խնդրանքով են գալիս Տարոն 1671 թ.՝ օգնելու նպատակով եւ իրօք օգնում են. վանքը ազատում են պարտքերից, ետ են բերում գրաւ դրուած իրերը, վերանորոգում են եկեղեցիները: Այնուհետեւ Վարդան Բաղիշեցին հրաւիրում է Սահակ վարդապետ Վանեցուն, որպէսզի վերջինս նորոգի, կազմի մատենադարանի քայքայուած ձեռագրերը, որից հետո Սահակ Վանեցուն հրաւիրում է Ամրդոլի վանքի ձեռագրերը կարգի բերելու, ինչպէս նաեւ ուսուցանելու վանքում գրչութիւն, մանրանկարչութիւն եւ կազմարարութիւն: «Յիշատակարան՝ «... (1671) Կարգեալ հաստատեաց առաջնորդ եւ սպասաւոր ԺԲ. Առաքելոց (վանաց) զԴաւիթ վարդապետ զհոգեւոր հարազատն իւր եւ ինքն վերակացու եւ խնամատար գոլով ամենեցուն՝ օր ըստ օրէ յաւելու ի շինումն Ս. Եկեղեցւոյ եւ ի բարեձեւութիւն սուրբ Մենաստանիս» Տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 220:

[357]* Յիշատակարանի վերահրատարակութիւն տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 247:

Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Նշխարք Տարօնոյ, [Արձանագրութիւններ] «Սիոն», 1967-68:

Մուշ. Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանք.

1. Խաչարձան. «ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ»: Աւանդութեամբ կ'ըսեն, թէ ասիկա Պօղոս վարդապետ Տարօնցիի գերեզմանն է: Զամչեան ասոր վախճանիլը ՇԾ.ին (1101) կը դնէ:

2. Խաչարձան. «ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ, ՈՐ ԿԱՆԳՆԵԱՑ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ... ՇՀԲ. (1123) ԶՅԵՍՈՒ ԳՇՈՂՍ»:

3. Խաչարձան. «Ի ԹՎԻՆ ՇՀԴ. (1125) ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՔՍ, ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍՈՐԱ... ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ ՎԱՐ(ԴԱՊԵՏԱՑ) Տ. ՂԱԶԱՐ (Փարպեցին) Տ. ՍՏԵՓԱՆՆՈՍ (Ատողիկն ըլլալու է)»:

4. «Ի Թ. Հ. ՇՁԳ. (1134) ԵՍ ՏԷՐ ԹՈՐՈՍ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԳԾԻ (սուրբ Առաքելոց դուռ)»:

5. Խաչքար. «Ի Թ. Հ. ՈԼԱ. (1182) ԵՍ ԽԱՉԻԿ ՈՐ ՋԽԱՉՍ ԿԱՆԳՆԵՑԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՑ ԻՄՈՑ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՂԱՉԵՄ»:

6. Ժամատան մէջտեղի սեան վրայ. «Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՌԴ. (1555) ՇԻՆԵՑԱՒ ԺԱՄԱՏՈՒՆՍ ՋԵՌԱՄԲ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԻՒՐ ԵՒ ԾՆԱՒՂԱՑ ԻՒՐՈՑ ՅԻՇԱՏԱԿ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՋՓՈՐԱԳՐՈՂՔ»:

7. Սուրբ Ստեփանոսի դրան վերեւ. «ՇԻՆԵՑԱՒ Ի ԹՎԻՆ ՌՃԺԴ. (1665) ԲԱՂԻՇԵՑԻ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ»:

Յիշ. 1104, 1204 թթ.՝ տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 289-90, 714-5:

Յիշ. 1205 թ.՝ «...եւ ըստ Հայկազեան տոմարի, որ լինի վեցհարիւրերորդ յիսներորդ եւ չորրորդ (1205), սկսա կազմել զքազմերանեան շտեմարանս աստուածային գանձուց՝ ի նահանգիս, որ կոչի Ղազարու վանս, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս, ի մէջ աստուածատես աստուածախաւս սրբեցելոց եւ մաքրազարդից արանց». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 47:

Յիշ. 1275 թ.՝ «... Գծագրեցաւ մատեանս այս թուականն Հայոց ՉԻԴ. (1275) էր, եւ թագաւոր Լեւոն, եւ կաթողիկոս տէր Յակոբ, եւ բնակութիւն տեղի Ղազարու վանք, եւ տեղւոյս առաջնորդ տէր Հայրապետ, եւ վարդապետ եւ ուսուցիչ Ներսէս՝ ստացաւղ գրոցս, եւ անուն գծողիս Բարսէղ...». տե՛ս ԺԳ. դ. յիշատ., էջ 459:

Յիշ. 1279 թ.՝ «Ի ՉԻԸ. (1279) գրեցաւ կանոնական սահմանադրութիւն... վանականաց, յարմարեալ եւ շարակարգեալ... ի հռչակաւոր եւ յականաւոր սուրբ ուխտս Եղիայզարու, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցն Պաւղոսի եւ Պետրոսի եւ Անդրէի...». տե՛ս ԺԳ. դ. յիշատ., էջ 490: Յիշ. 1299 թ., տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 854: Յիշ. 1314 թ.՝ «Ի թուիս Հայոց ՉԿԳ. (1314) գրեցաւ սուրբ Աւետարանս այս ի գաւառիս Տարաւնոյ, ի հռչակաւոր ուխտիս Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոց, եւ ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, եւ ի թագաւորութեան Կիլիկեցոց նահանգին՝ Աւշինին...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 105:

Յիշ. 1312, 1315, 1316, 1324, 1419, 1505, 1547, 1573, 1673, 1751, 1834 թթ.՝ տե՛ս Հայկական վանքեր, Առաքելոց կամ Ղազարու վանք, Սիոն, 1971, էջ 369-72:

Յիշ. 1332, 1339, 1378 թթ.՝ տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 245, 321, 525:

Յիշ. 1422 թ.՝ «Յարմարեցաւ ճառս ի վանքն Ղազարու, ձեռամբ ամենամեղ եւ եղկելի թշուառական անձին Առաքել վարդապետի, ի թվականիս Հայոց ՊՀԱ. (1422)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 293:

Յիշ. 1439 թ.՝ «Այլ եւ զվերջին կազմող լուսազարդ տառիս եւ ծաղկաւէտ բուրաստանիս՝ զՀէրապետ կրաւնաւոր աղաչեմ յիշել ի տէր... յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Պօղոս եպիսկոպոս, զի ի ժամանակիս այսմիկ, որ էր թիւ Հայոց ՊՁԸ. (1439), էր սա առաջնորդ սուրբ ուխտիս Առաքելոց...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 497:

Յիշ. 1443, 1450 թթ.՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 545, 649:

Յիշ. 1453, 1454, 1456, 1468 թթ.՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 33, 46, 68, 71, 271:

Յիշ. 1489, 1496 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 140, 231: Նաեւ՝ ԺԵ. դ. յիշ. Գ., (Յաւելուած Ա. ), 1419, 1422, 1439 թթ., էջ 350, 357, 388:

Յիշ. 1604, 1605, 1610, 1616, 1617, թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 154, 169, 397, 584, 628:

Յիշ. 1621, 1627, 1630, 1632, 1636, 1637 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 29, 36, 239, 378, 471, 640 712:

Յիշ. 1644, 1645 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 157, 158, 193:

Յիշ. 1671, 1673, 1699 թթ.,՝ տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 220-21, 324:

[358]* Տեղ. բառ., Բ/193-4. «Արձուաբեր Ս. Նշանի վանք, Եղեգնի Ս. Յովհաննէս, Եղրդուտոյ Ս. Յովհաննէս, Եղրդութ, Ս. Յովհաննէս Եղրդուտի վանք, Ս. Յովհաննէս Մկրտչի վանք, Ծիշիւղոյ վանք - Վանք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գաւառում: Վանքի ու նրա անուան հետ կապուած մի քանի աւանդութիւններ են պահպանուել: Դրանցից մէկի համաձայն այստեղ էր գտնւում Յովհաննէս Մկրտչի մասունքը եւ դրա համար էլ վանքը կոչուել է նաեւ նրա անունով. ըստ մի այլ աւանդութեան՝ կանաչ շշի մէջ լցուած այստեղ են բերել Քրիստոսի եւ իր առաքեալների օծանելիք հիւթից, որից էլ ստացել է Ծիշիւղոյ անունը: Իր նշանակութեամբ վանքը ոչնչով չի զիջել Ս. Կարապետին, միջնադարում եղել է գրչութեան յայտնի կենտրոններից, նշանակալի դեր է խաղացել նաեւ նոր ժամանակներում: Տաճարից բացի վանքն ունէր մի շարք վկայարաններ, մատուռներ եւ այլ սրբավայրեր: Վանքը գործել է մինչեւ 1915 թ.»: Թիերի՝ Հ[մր] 365, էջ 69, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[359]* Այստեղ ճշգրտուած է, իսկ լրագրային տարբերակում գրել էր. «Ունի կաթողիկէ եւ շատ բարձր զանգակատուն մը, այժմեայ վիճակն աննախանձելի է» (Բիւզ. 1900, թիւ 1001):

[360]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 250:

Յիշ. 1460, 1463, 1466, 1467, 1477 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշատ., Բ., էջ 148, 193, 250, 262, 423:

Յիշ. 1221 թ.,՝ տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատակարանք, էջ 816:

Յիշ. 1490, 1497 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 159, 248. տե՛ս նաեւ ԺԵ. դ. յիշ., Գ., 1485 թ., էջ 467:

Յիշ. 1608 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 322:

Յիշ. 1627 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 247:

Յիշատ.՝ 1696 թ. «Ես Եղիազար վարդապետս ի համար ածի զմերեանս Ս. Յովհաննու Եղրդուտի վանաց: Յայսմ ամի. եւ առի զիշխանութիւն վարդապետութեան ի Վեհէն Վարդանայ վարդապետի Բաղիշեցւոյ թվին ՌՃԽԵ. (1696)». տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 314:

Յիշ. 1706 թ.,՝ տե՛ս Ն. Ակինեան, Բաղէշ, էջ 327:

Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Նշխարք Տարօնոյ, [Արձանագրութիւններ] «Սիոն», 1967-68:

Մուշ. Եղրդուտի Ս. Յովհաննու վանք

1. Արձուաբեր Ս. Նշանի վրայ. «ԿԱԶՄԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԹՎԻՆ ՋԵ. (1456) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՁԵՌԱՄԲ ԱԾՐԱՖԻՆ»:

2. Ս. Յովհաննու վանուց գերեզմանատան եփենոսէ դրան վրայ. «ԾԻՆԵՑԱՒ ԴՈՒՌՍ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՋԻ. (1471) ՁԵՌԱՄԲ»:

3. Ժամատան սեան վրայ. «ՋԾԻՆԱԻՂ ԺԱՄԱՏԱՆՍ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԻԱԲԱՆԱԻՔ ԵՒ ԵՐԿՐՈՎ, ՈՐՔ ԵՐԱԽՏԻՔ ՈՒՆԻՆ Ի ՍՄԱՅ ՅԻԾԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՑԷՔ, ԹՎԻՆ ՋԿ (1511) ԾԻՆԵՑԱԻ»:

4. Արծաթեայ խաչի մը վրայ. «ՅԻԾԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ Ի ՀԱՄԱԻՐԷՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՄՈՒՓԱՐԳԻՆ. ԹՎԻՆ ՌՃԻ. (1671)»:

5. «ՅԻԾԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ ԽՈՐԵՆԱՑԻ ԽՈԾԿԱՆՑ ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐԳԱ-ՐԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆԱԻՂԱՑՆ ՀՈԳԻՈՅՆ. Ի ԴՈՒՌՆ ՄԾՈՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ. ԹՎԻՆ ՌՄ. (1751) ՄԱՅԻՍ Ե-ԻՆ»:

6. «ՅԻԾԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ՕՎԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ, Ի ԴՈՒՌՆ ՄԾՈՒ ՍՈՒՐԲ ՅՈՎԱՆՆԷՍԱՅ, ԹՎԻՆ ՌՄԺԹ. (1770) ՄԱՐՏԻ Ժ. ՕՐՆ»:

7. Գաւազանի մը վրայ. «ՅԻԾԱՏԱԿ Է ԳԱՒԱԶԱՆՍ Ի ԴՈՒՌՆ ՄԾՈՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍՈՒ ՁԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՎԻՆ ՌՄԼԲ. (1783)»:

8. Սուրբ Աստուածածնայ գմբէթի արեւմտ. կողմ. «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒ-ԾՈՅ ԾԻՆԵՑԱՒ ԿԱԹՈՂԻԿԷՍ ՁԵՌԱՄԲ ԽԱՆԱՄԵՐՍԻ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵ-ՏԻՆ, ԹՎԻՆ ՌՄԾԸ. (1809)»:

[361]* Թիերի՝ Հմր 382, էջ 72, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[362]* Տեղ. բառ., Գ/715. «Մատրավանք, Յովհաննու մարգարէանոց, Մանրավանք, Մատնեվանք, Մատռավանք, Մատրան վանք»: Թիերի՝ Հմր 385, էջ 72, վիճակ՝ անյայտ:

[363]* Յիշ. վերահրատ.՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 548:

Յիշ. 1348 թ.՝ «Արդ, ի յայսմ դառնացեալ ժամանակիս, որ է թիւս Հայոց ՉՂԷ. (1348), երջանիկ եւ ընտրեալ կրօնաւորն Ստեփաննոս՝ հայր եւ առաջնորդ սուրբ ուխտին Մատներոյ վանիցն եւ սքանչելագործ զօրավարին սրբոյն Գէորգայ, վերստին ետ կազմել զսուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ամենայն երախտաւորաց սուրբ ուխտին». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 372. տե՛ս նաեւ յիշ.՝ 1468 թ., ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 272:

[364]* Տեղ. բառ., Ա/300. «Աշտիշատ, Աշտիշատայ Ս. Սահակ Պարթեւ, Աշտից վանք, Հաշտիշատ, Հաշտից վանք - Վանք Տուրուբերան աշխարհի Տարոն գաւառում, Աշտի-շատ աւանում, Ս. Կարապետ վանքի մոտակայքում: 301 թ. քրիստոնէութեան ընդունե - լուց հետոյ, Գր. Լուսաւորչի նախաձեռնութեամբ կառուցուեց եկեղեցի: Վանքի կա-լուածքները համարւում էին կաթողիկոսի անձնական սեփականութիւնը: Սահակ Պարթեւի մահից հետո (439 թ.) դրանք կտակով անցան Մամիկոնեան նախարարական տոհմին: Աշտիշատում են թաղուած Սահակ Պարթեւը եւ նրա դուստր Շուշանիկը: Է. դ. Աշտիշատի վանքի աւերուելուց հետո, տեղում կառուցւում է նոր եկեղեցի, որը գո-յութիւն ունէր մինչեւ 1915 թ.: Վերջինս աւելի շատ անուանւում էր Ս. Սահակ»: Թիերի՝ Հմր 384, էջ 72, վիճակ՝ անյայտ:

[365]* Տեղ. բառ., Ա/305. «Ապահունեաց Ս. Նիկողայոսի վանք, Ս. Նիկողայոսի վանք - Վանք Տուրուբերան աշխարհի Ապահունիք գաւառում: Կառուցման ժամանակը յայտնի չէ: Առաջին անգամ հանդիպում է Երզնկա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցուն պատկանած 1449 թ. մի Աստուածաշնչի յիշատակարանում» [Նոյնը Պալեանի մօտ]: Թիերի՝ Հմր 391, էջ 73, վիճակ՝ անյայտ:

[366]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 639:

Յիշ. 1367 թ.՝ «Վերըստին ստացայ զաստուածախաւս սուրբ Աւետարանս ես՝ նուաստ ծառայս աստուծոյ Տիրացուս՝ որդի Ներսիսին, եւ կենակից իմ Եղիսաբէթ...

Գնեցաք ի հալալ արդեանց մերոց եւ եդաք մեզ յիշատակ եւ... եդաք ի սուրբ ուխտն ի վանքն Ապահունեաց՝ ի սուրբն Նիկողայոս, առ գերեզմանին սուրբ վարդապետին Գրիգորի... Գրեցաւ գիրս ի Հայոց թվականին ՊԺԶ. (1367), մարտին ԻԲ. (22), զի յայսմ ամի գնեցաք»․ տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 481:

Յիշ. 1383 թ.՝ «...այժմ աղաչեմք զձեր սրբութիւնդ, զի ով որ բնակի ի սուրբ ուխտս՝ յԱպահունեաց վանքս, եւ պատարագէ զՔրիստոս ի սուրբ Նիկողաոսի տաճարս, ի ժամ սուրբ... Գրեցաւ ի թվիս ՊԼԲ. (1383), յիշեցէք զգրիչս զԱռաքել սարկաւարգս»․ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 547:

Յիշ. 1413 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 146:

Յիշ. 1490 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 148:

367* Թիերի՝ Հ<sup>մր</sup> 397 էջ 74, վիճակ՝ հիմնովին աւերուած: Տե՛ս Հ. Ոսկեան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, էջ 245՝ Կարմիր կամ Կարմրո վանքերէն մէկը կը գտնուի Վարդո գոռկ-ին մէջ, Կիւնտէմիր գիւղի մերձ. Գլակայ վանքի հիւսիսային կողմը, բայց անկէ հինգ ժամ հեռու, ամայի: Իսկ միւսը՝ կանգնուած էր Մառնիկ գիւղի հարաւ-արլ կողմը: Երբեմն ունեցած է բազմաթիւ միաբաններ, բարգաւաճ վիճակ: Աւերակներէն դատելով օժտուած է գմբէթաւոր տաճարով եւ պարիսպով:

368* Տեղ. բառ., Ա/635՝ ամփոփելով յայտնի բոլոր տեղեկութիւնները ներկայացնում է. «Ըստ Ե. Քասունու այս վանքն է, որ հետագայում Գէորգ Մաշկեւորի անունով կոչուեց Մաշկեւորի վանք, Դիւլորիէն այն նոյնացնում է Շուղրի, իսկ Ալիշանը՝ Վարդկան վանքի հետ (Սիսուան, 407, Կիլիկիա, 227), որ անընդունելի է»․ տե՛ս նաեւ Հ. Ոսկ., Կիլիկիայի վանքերը, էջ 133-4: Թիերի՝ Հ<sup>մր</sup> 269, էջ 51, վիճակ՝ անյայտ:

369* Յիշ. 1174 թ.՝ «...Ես՝ Բարսեղս՝ փցուն գրիչս եւ յետին յամենայն որ մեծ ջանիւ եւ աշխատութեամբ ի յանգ ածի զսայ ի թուականիս հայոց ՈԻԳ. (1174), ի մեծ եւ հռչակաւոր քաղաքիս Եդեսիայ, ընդ հովանեաւ Սրբոյ հայրապետիս Վասլի»․ - Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 103:

Յիշ. 1300 թ, չափածոյ՝ «...Այս Տետրակս ցանկալի, / Աստուածային գանձովն լի, / Գրեալ ձեռամբ անարժանի, / Որ Յովհաննէս անուն կոչի: / Ի յանապատս Բարսղի, / Որ ի լերինս Տաւրոսի, / Մերձ առ դրան Սուրբ Սիովնի / Ընդ հովանեաւ Աստուածածնի / Վարդապետին Տիրացուի... [Հետագայ ստացողի յիշատ.՝ ՉԽԹ. (1300)]»․ տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 860:

370* Յիշ. 1651 թ.՝ «Եւ եղեւ աւարտ գրչութեան տառիս ի քաղաքն Եդեսիայ, որ կոչի Յուրհայ, ի դուռն Բարձրահայեաց Տիրամայր Ս. Աստուածածնին, հիմնարկեալն յառաքելոյն Թադէոսէ եւ ի փրկչական պատկեր սբ. դաստառակին եւ Եփրեմ սբ. վարդապետին եւ սբ. Գուրիասանց վկայիցն սրբոյն Յակոբայ եւ ի սբ. Սարգսի զօրավարին եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն քաղաքիս: Ձեռամբ... Մաղաքեայ գրչի. եւ ի թուականութեանս մերում Ռ. եւ Ճ. (1651) ամի...»․ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 431:

Յիշ. 1641, 1649, 1650, 1653, 1654 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 46, 362, 389, 570, 621 (չափածոյ), 634:

371* Տեղ. բառ., Դ/521. «Վանք Վերին Միջագետքում, Եդեսիա քաղաքից 2-3 կմ հեռավորությամբ: ԺԹ. դ. վերջերին վերանորոգուել էր եւ գործում էր մինչեւ 1915 թ.»: Թիերի՝ Հ<sup>մր</sup> 276, էջ 52, վիճակ՝ անյայտ:

372* Եդեսիայի Ս. Սարգիս եւ Արճիճի վանքերի, Եփրեմ Խուրի մենաստանի մասին տեղեկութիւններ տե՛ս Էփրիկեան, Բնաշխարհիկ պատկերազարդ բառարան, հ. Ա, էջ 617, 621-22: Ս. Սարգսի վանքը շէն եւ գործող էր, եդեսացիների կողմից փայփայուած ու

սիրուած ուխտավայր. տե՛ս Փունջ, 1893, թիւ 2362, էջ 1., Գ. Տէր-Կարապետեան, Տարօնի… էջ 189:

[373]* Տեղ. բառ., Ա/664. կրկնել է Տ. Պալեանի գրածը եւ աւելացրել. «Պալեանը սխալ է համարում այս վանքը Բաբերդում տեղադրելը: Հաւանաբար սա եւ Բաբերդի վանքը համանուն տարբեր վանքեր են»:

[374]* Յիշ. 1161 թ.,՝ տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 377-8:

Յիշ. 1491 թ.՝ «…ՋԽ. (1491) թւին ազատեցին զսուրբ գիրքս Կիրակոս Հաւջօշ Էրէցն եւ Դաւիթն ի Սօփու թալանէն, գնեցին ի հալալ արդեանց եւ ձրի յուղարկեցին ի Բերդակա վանքն յիշատակ…». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 177-8:

Յիշ. 1637 թ.՝ «Շնորհիւ Տեառն… վերստին նորոգեցաւ եւ կազմեցաւ սբ. Աւետարանս ի քաղաքն Եդեսիա, ի դուռն Ս. Աստուածածնին, ի յառաջնորդութեանն տէր Նահապետ արհիեպիսկոպոսի, ՌՁՂ. (1637) թվականին». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 712:

[375]* Տեղ. բառ., Ա/463. «Վանք Հայկ. Միջագետքի Եդեսիա քաղաքում: Յիշատակում է ԺԲ. դ. հայ պատմիչ Մատթէոս Ուռհայեցին: Նրա այդ վկայութիւնից երեւում է, որ վանքը գտնւում էր քաղաքի պարիսպներից դուրս»:

[376]* Տեղ. բառ., Բ/435. «Թեղուտի Ս. Յովհաննէս, Դեղուաց Ս. Յովհաննէս, Թեղուդայ Ս. Յովհաննէս, Ս. Յովհաննէս, Ս. Յովհաննէս Մկրտչի վանք - Վանք Բիթլիսի նահանգում, Խլաթի գւռկ-ում, Թեղուտ գիւղի մօտ: Վանքի շինութեան աւարտը վերագրում են 1592 թ.: Գործում էր մինչեւ 1915թ.»: Թիերի՝ Հմր 064, էջ 15, վիճակ՝ տանիքն աւերուած, բայց պատերը կանգուն են:

[377]* Յիշ.՝ 1592 թ. «Աւարտեցաւ ի յամի ՌԽԱ. (1592) ի յերկիրն Խլաթայ ի յանապատն Թեղուտայ ընդ հովանեաւ սուրբ Յովհաննէսին եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգ զօրավարին եւ Թուխ Մանուկ սուրբ Խաչին, որ է օծեալ մերոյ Լուսաւորչին…». տես Հ. Ոսկ., Տարօն-Տուրուբերանի…, էջ 130: Ոսկեանը կարծում է, որ կարելի է այս վանքը Բաղէշի վանքերի մէջ դասել:

[378]* Տեղ. բառ., Ա/831. «Գեղսու Ս. Կիրակոս, Կեղսու Ս. Կիրակոս - Վանք Վանի նահանգի Մոկսի գւռկ-ում, Գեղիս գիւղում: Պահպանուել է 1432 թ. այստեղ Յովհաննէս աբեղայի կողմից ընդօրինակուած հայերէն մէկ Մաշտոց: Վանքը գոյութիւնը պահպանել է մինչեւ 1914-18 թթ.»: Թիերի՝ Հմր 077, էջ 17, վիճակ՝ անյայտ:

[379]* Յիշ. 1432 թ.՝ «…Արդ, գրեցաւ սա ձեռամբ… Յովաննէս պիտակ անուն աբեղայի, ի վանս սուրբ Կիրակոսու, ի թուաբերութեանս հայկազեանս տոհմի ՊՁԱ. (1432)». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 432:

[380]* Տեղ. բառ., Բ/609. «Ս. Սահակ Լուսապտուղ, Ս. Սահակ Պարթեւ - Վանք Արմ Հայ-ում, Վանի նահանգում: Կառուցուած է 1608 թ., անմշակ քարերով, ունի տաճար եւ գաւիթ, որտեղ թաղուած է Սահակ ճգնաւորը: Լքուել ու ամայացել է 1915 թ.»: Թիերի՝ Հմր 535, էջ 97, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[381]* Գ. Տ.-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թ. մի համառօտ նկարագրութիւն. «Յովհաննէս վարդապետ Հիւսեան. Համառօտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերու, որոնք մինչեւ 1915 թուական շէն եւ միաբանական վանքեր էին…».- Արեւագալ, Բ., 2004, էջ 113 - «Ս. Սահակայ վանքը կը գտնուի Գնունեաց գաւառի (Վերի Թիմարի) Խադգլուխ լեռան հիւսիսային լանջին, ապառաժի վրայ հիմնարկուած: Հարաւ-արեւմուտքէն սահմանակից է Էջմիածին վանքին, իսկ հիւսիսէն Էրերին գիւղին: Հիմնարկութիւնը կը համարուի Դ. դար: Այս վանքին մէջ ըստ պատմական աւանդութեան ապրած եւ թարգմանութեամբ պարապած է Ս. Սահակ Պարթեւ հայրապետը, վանքիս մագաղաթ կոնդակի պատմութեան համեմատ, ի յիշա-

տակ սոյն եղելութեան, երբ կը վախճանի մեծ հայրապետը, վանքիս վանահայրը, Գնունի իշխաններու հետ միասին կը գնան Տարօն ս. հայրապետի աջը խնդրելու՝ առ ի յիշատակ եւ ի մխիթարութիւն Վասպուրականի ժողովրդեան: Ստանալով այդ պատուական պարգեւը, կը բերեն կը դնեն Էրերնայ վանք, եւ այդ թուականէն ալ յիշեալ վանքը կը կոչուի Ս. Սահակայ վանք կամ Լուսապտուղ Ս. Սահակ: Այս վանքի մէջ կը մնար նոյն պատուական գանձն՝ Սահակ հայրապետի սուրբ աջը լուսաձիր, եւ տարուէ տարի գարնան՝ Համբարձման տօնին գաւառի ժողովուրդ խուռն բազմութեամբ ուխտի եւ համբոյրի կու գային մեծ հայրապետի լուսատու աջին: Իսկ ԺԹ. դարու վերջի կիսուն՝ երբ վանքը միաբանութիւն ունենալէ կը դադրի, հետ այնու այլեւս անապահով կը համարուի ս. աջը թողուլ այնտեղ, Լիմ անապատի վանահայր Թոփուզեան Յակոբ եպիսկոպոսի կարգադրութեամբ Ս. Սահակայ վանքէն ս. աջը կը փոխադրուի Լիմ անապատ, այնտեղ ալ կը մնար մինչեւ մեր օրերը, որն (1915թ.) նահանջին ս. աջն ալ Լիմ անապատի Ազգ.-եկեղեցական հնութեանց հետ անվտանգ եւ անկորուստ իմ իսկ ձեռօք բերի յանձնեցի ի Ս. Էջմիածին, Տ. Գէորգ Ե. կաթողիկոսին, իբրեւ աւանդ ի պահ ցապագային»:

382* Յիշ. ա. 1386 թ.՝ «Գրեցաւ աստուածաշունչ տառս ձեռամբ... Ոհաննէս երիցու... ի թուականին Հայոց ՊԼԵ. (1386), ի քաղաքիս Վան, ընդ հովանեաւ սուրբ Վարդանայ...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 566:

Յիշ. 1391 1393 թթ.,՝ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 587, 604:

բ. 1416 թ.՝ «...Արդ, գրեցաւ Մաշտոցս ի քաղաքիս որ կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Վարդանա... ի թվ. ՊԿԵ. (1416)». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 188:

Յիշ. 1418, 1444, 1446 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 218, 568, 596:

Յիշ. 1452, 1453, 1458, 1460, 1462, 1463, 1467, 1474, 1475 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 24, 35, 104, 146, 186, 187, 198, 258, 259, 364, 383:

Յիշ. 1611 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Ա., էջ 407:

գ. 1621 թ.՝ «...Դարձեալ երեւ անկեալ աղաչեմ ձեզ ո՛վ մանկունք սբ. եկեղեցոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհաւատարիմ տանուտէր մահդասի Նուրամիրն, եւ զծնաւղս իւր, որ ըստացաւ սբ. գիրս, որ կոչի Մաշտոց, ի հալալ ըստացուածոց իւրոց եւ ետ վերըստին նորոգել եւ եդ ի դուռն Ս. Վարդանայ Ջաւրավարին անջինջ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնաւղացն իւրոց եւ որդոցն ամենայն... Վերըստին նորոգեցաւ տառս ի թւաբերութեան հակազան սեռիս, աբեթան տոհմիս ՌՀ. (1621) ձեռամբ...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 20:

383* Տեղ. բառ., Ա/304-5. «Ապազվանք, Ապաղվանք, Ապավանք, Ս. Վարդան - Վանք Վասպուրական աշխարհի Նարեկայ վանքի արեւելեան կողմում, Աղթամար կղզու դէմ դիմաց: Եկեղեցին՝ Ս. Վարդան: Յիշատակուել է ԺԴ. դ. գրիչ Ծերունի յիշատակարանում: Եղել է գրչութեան կենտրոն եւ ենթարկուել Վարագայ վանքին: Ըստ աւանդութեան իբր այստեղ է թաղուած Վարդան Մամիկոնեանի մասունքը, որի համար կոչվում է նաեւ Ս. Վարդան»: Թիերի՝ Հմր 541, էջ 98, վիճակ՝ անյայտ:

384* Յիշ. 1390 թ.՝ «...Գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՊԼԹ. (1390), ի քաղաքիս Ոստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային... Արդ, ցանկացող եղեալ այսմ աստուածային եւ սուրբ կտակիս երջանիկ եւ պատուական հայրն Յոհաննէս՝ առաջնորդ վանաց սրբոյն Վարդանայ, որ կոչի Ապազվանք, քանզի յոյժ փափագմամբ ետ գրել զսա յիշատակ...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 583:

385* Տեղ. բառ., Դ/776. Ս. Վարդան, Ս. Վարդան անապատ, Ս. Վարդանանց վանք, Վարդանայ վանք, Վարդանայ ուխտ, Ս. Վարդանի վանք - Վանք Վասպուրականի

Ռշտունիք գաւառում, Գաւաշ գաւառակից արեւմուտք: Միհասեանց Թովման իր տարեգրութեան մէջ յիշատակում է այս վանքի վանահայր Թովմային, որը նորոգել է վանքը: Այստեղ ապրել եւ ստեղծագործել է Աստուածատուր աբեղան (ԺԵ. դ.), որտեղ ընդօրինակել է մի շարք ձեռագրեր:

[386]* Յիշատ.՝ ա. 1418 թ. «...Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... Աստուածատուր սուտանուն աբեղայս... կատարեցի զսուրբ գիրքս զայս ի դառն եւ ի նեղութեան ժամանակիս, ի թուականութեան հայկազեան տումարիս ՊԿԷ. (1418)... ի յերկիրս Ըռշտունեաց, ի սուրբ եւ ի հռչակաւոր անապատս, որ կոչի Սուրբ Վարդան, որ է հանդէպ Գաւաշից, ի դուռն Սուրբ Աստուածածնիս եւ ի Սրբոյ Վարդանայ Ջաւրավարիս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ *220*:

բ. 1419 թ.՝ «...Այլեւ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի յանապատիս Սուրբ Վարդանայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ ի Սուրբ Վարդանայ Ջաւրավարիս, ի հայրութեան Թումայի, ...եւ ի թուականութեանս Հայոց ՊԿԸ. (1419), ձեռամբ Աստուածատուր աբեղայի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ *227*:

[387]* Տեղ. բառ., Դ/776. Ս. Վարդան, Մոկսի Ս. Վարդանանց վանք, Վարդանանց վանք, Ս. Վարդանայ վանք, Վարդան Ջորավարի վանք, Ս. Վարդանի վանք - Վանք Վանի նահ. Մոկսի գաւառակում. տե՛ս նաեւ Ս. Մինաս: Հմմտ. Նոնեճից Ջորի Ս. Վարդանայ վանք: Տեղ. բառ., Դ/34. Նոնեճից Ջորի Ս. Վարդանայ վանք, Նոնեճից Ս. Մինաս, Նոնեճից Ս. Նշան, Նոնեճից վանք - Վանք Վանի նահանգի Նոնեճից ձորում: Թիերի՝ Հ[մր] 566, էջ 102, վիճակ՝ անյայտ:

[388]* Յիշատ.՝ 1645 թ. «...Արդ, կազմեցաւ սա ի յերկիրն Մոկաց, ի վանքն Նոնեճից, ի սուրբ ուխտն Ս. Վարդան, ի թվականիս Հայոց ՌՂԴ. (1645)». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 196:

[389]* Թիերի՝ Հ[մր] 490, էջ 89, վիճակ՝ տաճարը աւերուած, բայց պատերը կանգուն են:

[390]* Տեղ. բառ., Դ/771. Վարագ Վերին, Ս. Խաչ, Ս. Նշան – Վանք Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Տոսպ գաւառում, Վանից արլ Վարագայ լեռան լանջին, Վարագավանքից հս-արլ, մի բարձունքի վրայ: Ըստ աւանդութեան վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսաւորիչը, Հռիփսիմէ կոյսի թաքցրած կենաց փայտի տեղում: Բաղկացած էր երկու եկեղեցիներից: Կիսաւեր էին եւ եկեղեցիները, եւ խցերն ու պարիսպը: Վանքի շրջակայքում կային կիսաւեր մատուռներ եւ աղբիւրներ: Արձանագրութիւններ չկան: Թիերի՝ հմր 491, էջ 90, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել նախկին տեսքը:

«Վարագը հիմնարկուած է չորրորդ դարում եւ վերանորոգուած է 981 թուականին: 1915 թուի Վանայ հայկական հիահրաշ ինքնապաշտպանական կռուին վանքի մէջ պահապան դրուած թիրք ժանդարմներէն սրախողխող նահատակուեցան վանահայր Վրթանէս եւ Արիստակէս վարդապետները, չորս աշխատաւորներով միասին, թալանուեցաւ վանքը, եւ այրուեցան գեղակերտ շինութիւնները: Վարագայ վանքն ունէր 500 կտորէ աւելի ձեռագրեր, որոնք, բարեբաղդաբար, վաղօրօք եկ.-սրբազան անօթեղինաց հետ, պահուած էին եկեղեցւոյ մէջ գտնուող թագստոցները, երկու մասով: ...- Գ. Տ.-Վարդ.,՝ Յովհ. Հիւ., էջ 115-6):

Յիշատակարան՝ ա. 1425 թ. «Ես խօջայ Աստուածատուրս... գնեցի զՆարեկացիս ի գերութենէ թուրքմանին... ի ՊՀԴ. (1425) ամին: Եւ շատ աւիրութիւն արարին, եւ զսրբութիւնսն զամէն գերի առին, եւ հանդիպեցաւ այս Նարեկացիս, որ ի Վերի Վարագայ բերին, եւ գնեցի զսա ի հալալ արդեանց իմոց եւ ետու ի սուրբ ուխտն Վերի Վարագ, ուր եղեալն էր, ի յիշատակ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 328:

բ. 1474 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս ի Վերին Վարագ, ընդ հովանեաւ սուրբ խորանացս... ի թուաբերութեան Հայոցս ՋԻԳ. (1474)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 362-3:

391* Տեղ. բառ., Ա/962-3. Արգելանոց, Ս. Գրիգորի վանք, Սալնապատ, Սալնապատի Ս. Գրիգոր, Սալնապատու Ս. Գէորգ, Վարի Վարագայ վանք Ս. Գրիգոր, Ս. Գրիգորի վանք, Սալնապատի Ս. Աստուածածին, Սալնապատու Ս. Գրիգոր - Վանք Վանի նահանգի Վան ք.-ից 6-8 կմ արլ, Վարագայ լ-ն հս լանջին: Մինչեւ 1915 թ. վանեցիների սիրած ամառանոցավայրը: Ըստ աւանդութեան հիմնել է Գրիգոր Լուսաւորիչը Դ. դարում եւ ասել. «սա է լաւ անապատ», որից էլ առաջացել է Սալնապատ անունը: Վանքի համալիրի մէջ մտնում են Ս. Աստուածածին եւ Ս. Կարապետ տաճարները եւ մէկ ժամատուն: Առաջին երկուսի գմբեթների կողերին կան 1260 եւ 1559 թթ. հայերէն վիմագիր արձանագրութիւններ: Լեռնային մի շաւղով կապւում է Վարագի վանքի հետ: Գրականութեան մէջ Ս. Գրիգոր վանքը նոյնացւում է Ձորովանքի հետ: Վանքը յատկապէս ԺԹ. դարի վերջերին բազմիցս կողոպտուել ու աւերուել է, 1915ին այն վերջնականապէս դադարեց գոյութիւն ունենալուց: Թիերի՝ Հ^մր 508, էջ 92, վիճակ՝ անյայտ:

392* «Ս. Գրիգորի վանքի մէջ եղած հարիւրաւոր գրչագրերը, եկեղեցական ս. անօթեղինաց եւ հնութեանց հետ թալանի մատնուեցան, եւ շինութիւնները հրկիզուեցան»: - Գ. Տ.-Վարդ.,՝ Յովհ. Հիւս., էջ 116):

Յիշատակարան՝ ա. 1294 թ. «Ի թուականութեանս Հայոց ՉԽԳ. (1294) ես տէր Յովհաննէս տուի զսուրբ Աւետարանս Սուրբ Կարապետիս Սալնապատայ, յառաջնորդութեան հոգեւոր եղբօր մերոյ՝ Յովհաննիսի». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 743:

բ. 1299 թ.՝ «...Էր թվին Հայոց ՉԽԸ. (1299), ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ՝ այր բարեպաշտի: Աւարտեցաւ իմով ձեռամբս յաստուածաբնակ մենաստանիս ի Ձորովանս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սիոնի եւ մերոյին գլխոյ Հայաստանեայցս Լուսաւորչի...». տե՛ս ԺԳ. դ. յիշ. էջ 853:

գ. 1338 թ.՝ «...Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսումն եւ առընթեր՝ կցուրդ փոխման Աստուածածնի, ի թվին ՉՁԷ. (1338), ի թագաւորութեան հայոց Լեւոնի, որդւոյ արքային Աւշնի, եւ ի հայրա[պետութեանն] տեառն Յակոբա, յանապատս, որ կոչի Ձորոյվանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ կենսաբեր սուրբ Նշանիս...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 314:

դ. 1449 թ.՝ «...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառս Քաջբերունեաց, ի յանապատս, որ կոչի Ձորոյվանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ կեանսաբեր սուրբ Նշանիս... եւ ի թուականութեանս մերոյ ՊՂԸ. (1449)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 637:

ե. 1481 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի վանսն որ կոչի Սայլաւ անապատ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչիս, ի թվականիս Հայոց ՋԼ. (1481), ձեռամբ մեղսամած... գրչի Մկրտիչ աբեղայի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 17:

Յիշ.՝ 1485 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 74:

393* Տեղ. բառ., Ա/276. Անծղնապատ, Անձղապատ, Անձնապատ, Դավաբոյնի Ս. Յարութիւն, Ս. Յարութիւնի վանք, Նկարէն անապատ, Նկարենայ Ս. Ստեփանոսի վանք, Նկարինայ մենաստան - Վանք Վասպուրական աշխարհի Ռշտունիք գաւառում, Ծատաւն գիւղի մօտ: Ի. դ. սկզբներին գտնւում էր անխնամ վիճակում: 1915-18 թթ. աւերուել է ու լքուել: Ըստ աւանդութեան մօտակայ քարայրներում դեւեր լինելու պատճառով կոչուել է նաեւ Դաւաբոյնի, Դեւեբոյնի: Վանքի պատերին եղած արձանագրու-

թիւնների համաձայն նորոգուել է 1589 թ. Ստեփանոս եպիսկոպոսի կողմից: Թիերի՝ Հ^մր 542, էջ 98, վիճակ՝ կանգուն:

394* Յիշատակարան՝ ա. 1401 թ. «...Արդ, գրեցօ ցանկալի մատեանս այս յերկիրս Ըռըշտունեաց, եւ ի հրեշտակայբնակ յարկիս, որ կոչի Նկար, ընդ հովանեաւ Սրբութեանս, եւ սուրբ Աստուածածնին, եւ սուրբ Ստեփաննոսին...» [1401]. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 17:

բ. 1403 թ.՝ «...Գծագրեցաւ սուրբ մատեանս ի թվականութեանս հայոց ՊԾԲ. (1403), ի ցանկալի յանապատիս Անձնապատիս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 41, լրիւ տարբերակը տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., (Յաւելուած Ա.), էջ 311:

գ. 1423 թ.՝ «Գրեցաւ ի թու. ՊՀԲ. (1423)... ապա իմ՝ եկեալ յերկիրս Ռշտունեաց, ի գերահռչակ ուխտն Անձնապատ կոչեցեալ, եւ ոչ տային դադար գրելոյ կամ կարդալոյ, զի անկանք ի մէջ տգիտաց...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 302:

դ. 1428 թ.՝ «Աւետիս աբեղայն ի Նկարենոյ վանիցն, բազում աշխատութեամբ շրջեալ... հանդիպեցաւ ի սուրբ ուխտս Նախավկայս, հանգեաւ խաղաղութեամբ առ Քրիստոս ի թվ. ՊՀԷ. (1428)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 389:

Յիշ. 1461 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 162:

Նաեւ յիշ.՝ 1403, 1420 թթ., տե՛ս ԺԵ. դ. Գ., (Յաւել., Ա.), էջ 311, 354:

ե. «Եւ յետ այսորիկ (յետ նահատակութեան Գրիգորի Խլաթեցւոյ) յետ երկու ամի՝ նոյն քուրդն յազգէն Մարաց ի Բաղիշու գնաց յերկիրն Ռշտունեաց, եւ զերջանիկ եւ զտօնասէր աղօթարար վարդապետն Յակոբ Ովսաննայի ի յԱնծղնապատի ուխտէն նահատակեալ՝ եդին զնա մերձ գերեզմանին Գրիգորի Նարեկայ վանից». տե՛ս Հայոց նոր վկաները (1155-1843), Վաղարշապատ, 1903, էջ 282:

395* Տեղ. բառ., Ա/340. Ասպիսընկայ վանք, Ասպիսընկալ վանք, Ս. Աստուածածին, Ս. Յարութիւն, Ս. Ուխտ Յարութեան վանք - Վանք Վասպուրական աշխարհի Արճեշ քաղաքից հիւսիս, Ասպիսնակ եւ Յարութիւն գիւղերի միջեւ, Մեծոփայ վանքից ոչ հեռու: Ըստ տաճարի արձանագրութեան վանքը վերակառուցել է ԺԳ. դ. պարոն Աւետենց Սահմադինը: Աւերուել է ԺԵ. դարում: Աւերակները նշմարւում են առայսօր: Թիերի՝ Հ^մր 528, էջ 96, վիճակ՝ հիմնովին աւերուած:

Իսկական եւ նախկին անունն եղած ըլլալու է Ս. Աստուածածին, եւտքէն Ս. Յարութիւն անուանուած է համանուն գիւղին եւ անոր եկեղեցւոյն անուններովը. տես Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 268, հրատարակել է արձանագրութիւն՝ ի թվիս ՉԽ. - 1291 թ., յիշատակարաններ՝ - 1281, 1299, 1304, 1307, 1308 թթ.: Հ. Ոսկ., Վասպուրական-Վանի վանքերը, Բ., Վիեննա, 1942, էջ 390-5:

396* Յիշ. ա. 1298 թ.՝ «...ՉԽԷ (1298) թուականիս հայոց գրեցաւ գիրքս ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Յարութեանս, ի գաւառիս Արճիշոյ, յանուանեալ ուխտիս Ասպիսնկա վանք, յառաջնորդութեան տեղւոյս Տէր-Աբրահամու, հրամանաւ հաւրեղբաւր իմոյ՝ Սարկաւագ կոչեցեալ անուն կրաւնաւորի» - Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 136-7:

բ. 1307 թ.՝ «Գրեցաւ... ի թուականութեան Հայկազնեան տումարիս ՉԾԶ. (1307), յանապատիս Ասպիսնկայ, ի հայրութեան Ստեփանոս վարդապետի՝ ժրի եւ ամբծի: Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, եւ սուրբ Յարութեանս, եւ այլ սրբոց...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 54:

գ. 1308 թ.՝ «Գրեցաւ... ի թուիս ՉԾԷ. (1308), յանապատիս, որ կոչի Ասպիսնկայ, ընդ հովանեաւ սուրբ Յարութեանս... յառաջնորդութեան Ստեփաննոս վարդապետի». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 57:

Նաեւ յիշ.՝ 1486, 1488, 1489, 1495, 1498 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 87, 118, 130, 218, 255:

Յիշ. 1608 թ.,՝ ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 304:

397* Տեղ. բառ. Գ/427-8. Հոգեաց վանք, «Աթոռ Անանիայ», Անձեւացեաց վանք, Ս. Աստուածածին, Դարբնաց քար, Դարբնաքար, Խոկոց վանք, Հնձանիս, Հոգաց վանք, «Հոգեաց վանք», Հոգոց վանք, Հոգւոց Ս. Աստուածածին, Տեր-Միրհեմ, Տիր-Միրեեմ, Քիլիսե - Վանք, մեձաստան Վասպուրական աշխարհի Անձեւացեաց գաւառում: Նոր ժամանակներում մտնում էր Վանի նահանգի Խոշաբի գոկ-ի մէջ: Վանքի մոտ է գտնւում Լուսաւորչի աղբիւրը: Ըստ աւանդութեան վանքի գլխավոր՝ Ս. Աստուածածին տաճարը հիմնել է Բարդուղիմէոս առաքեալը՝ իր կարգադրութեամբ քանդուած Անահիտի տաճարի տեղում, իսկ մի այլ աւանդութեան համաձայն վանքից ոչ հեռու գտնուող Ս. Սիոն եկեղեցին կառուցել է Գր. Լուսաւորիչը: Հիմնական վերակառուցման է ենթարկուել 1730-1765ին եւ 1904ին՝ 1895 թ. աւերումից հետոյ: Վերջնականապէս ամայացել է 1915ին: Թիերի՝ Հ$^{մր}$ 579, էջ 104, վիճակ՝ հիմնովին աւերուած:

398* Յիշատակարան՝ ա. 1221 թ. «...Այս է նշան սուրբ Գեղարդեանն Քրիստոսի: Այլ Աստուածամօրն պատկերն ի Հոգեաց վանքն կա՝ յԱղբակայ գաւառին: Եւ շիշ յիւղոյն յերկիրն Տարօնոյ՝ ի վանքն Եղրդի: ...Եւ արդ, այսպէս օրհնակեցաւ տնօրինական սրբութիւն, եւ օրինակս թարքմանեցաւ ի հոռոմ գրոց ի հայ գիր՝ ի թվին ՈՀ. (1221), ամէն...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատ., էջ 816:

բ. 1317 թ.՝ «...Արդ, այս... գործոց սրբոց առաքելոցս սիրաբար ցանկացա ես՝ տէր Խաչատուր եպ[իսկոպոս], յիշատակ հոգոյ իմո, եւ ծնաւղաց իմոց... կացցէ հաստատ յիշատակ մեզ ի դրան սուրբ Աստուածածնին Հոգեաց վանից... Եւ արդ, գրեցաւ գործքս սրբոց առաքելոցն... ի թվ. հայոց ՉԿԶ. (1317)...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 131-2:

Յիշ. 1453 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 38 (ծնթ.):

գ. 1637 թ.՝ «...Արդ, գրեցաւ քարոզգիրք ի թուականիս մերոյ ՌՁԶ. (1637) ի սբ. ուխտն Հոգոց վանք, ընդ հովանեաւ կենդանայգիր սբ. պատկերին Աստուածածնին եւ սբ. Սիոնին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 714:

399* Տեղ. բառ., Գ/714. Մատնավանք, Խլաթի Մատնավանք, Մատնավանից Ս. Աստուածածին, Մատնեվանք - Վանք Խլաթի գաւառակում, համանուն գիւղի մօտ: 1402 թ. Գր. Խլաթեցին այստեղ ընդօրինակել է Աւետարան: Թիերի՝ Հ$^{մր}$ 067, էջ 15, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

400* Յիշատակարան՝ ա. 1348 թ. «Արդ, ի յայսմ դառնացեալ ժամանակիս, որ է թիւս Հայոց ՉՂԷ. (1348), երջանիկ եւ ընտրեալ կրօնաւորն Ստեփաննոս՝ հայր եւ առաջնորդ սուրբ ուխտին Մատներոյ վանիցն եւ Սքանչելագործ Ջօրավարին սրբոյն Գէորգայ, վերստին կազմել ետ զսուրբ Աւետարանս...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 372:

բ. 1402 թ.՝ «...Եւ ես յետինս բանասիրաց եւ տրուպս կարգաւորաց Գրիգոր պիտակ անուն խնդրողս բանի, տեսի... մոռացայ զտկարութիւն անձինս զպակասութիւն աչաց լուսին եւ ձեռնարկեալ գրեցի զսուրբ Աւետարանս ընդ հովանեաւ ամենամաքուր սուրբ Աստուածածնի ի վանս Մատնեվանի, մերձ Խլաթայ՝ մայրաքաղաք Բզնունեաց գաւառի... Եւ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ի ՊԾԱ. (1402) ամին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 26, եւ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 308:

գ. «...ՊԿԲ. (1413) գրեցաւ: Աղաչեմ անպարսաւ թողուլ զիս: Ջայս ի հին գիրս գտի, ի Խլաթայ վանս». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 147:

Յիշ. 1440 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 509:

Յիշ. 1468 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 272:

դ. 1490 թ.՝ «Աւարտեցաւ ոսկիափոր Տաւնականս ի մայրաքաղաքս Խլաթ, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Մատնէվանից սուրբ Աստուածածնի ԺԱ. (11) խորանաց, եւ սուրբ Գէորգ Զաւրավարի, յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Վարդան... յամի Ջ. եւ ԼԹ. (1490)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 153:

Նաեւ յիշ.՝ 1451, 1466 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 420, 445-6:

Յիշ. 1657թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 767:

[401]* Տեղ. բառ., Դ/729. Սքանչելագործ Ս. Նշան, Աւեր, Արծկէի վանք, Երաշխաւորի վանք, Երաշխաւոր ուխտ, Խաչի վանք, Ս. Նշան, Պատերազմի Ս. Նշան, Սքանչելագործ վանք - Վանք Վանի նահանգի Արծկէի գաւառակում: Հնում մտնում էր Տուրուբերանի Բզնունիք գաւառի մէջ: Յիշատակուած է Վահան Գողթնեցու վարքում: Մասնագէտների կարծիքով հիմնադրուած պէտք է լինի Է. դ. վերջերին, Ը. դ. սկզբներին: Աւերուել է 1895 թ., վերջնականապէս լքուել՝ 1915ին: Թիերի՝ Հ$^{մր}$ 062, էջ 14, վիճակ՝ կանգուն:

[402]* Յիշատակարանք՝ ա. 1205 թ. «...Եւ այլ եւս սպասաւորք սուրբ ուխտին, որ կոչի Արծկէոյ վանք, նոքա եւս քան զեւս վառեցան բորբոքեցան ի սէր սուրբ կտակիս: ...ըստ Հայկազեան տոմարի, որ լինի վեցհարիւրերորդ յիսներորդ եւ չորրորդ (1205), սկսա կազմել...». տե՛ս ԺԳ. դ. յիշ. էջ 45:

բ. 1313 թ.՝ «Յամի ՉԿԲ. (1313)-երորդի Հայկազեան տոհմիս տումարի... գրեցաւ աստուածային այս մատեան գանձ անկապուտ... Բարսեղ կրօնաւոր, ստացայ զսուրբ Աւետարանս... եւ ետու զսա բաղձանօք որդի ի վանս Արծկէոյ, ընծայ սքանչելագործ սուրբ Նշանին, ի լուսաւորութիւն եւ ի հրճուանս մանկանց սուրբ եկեղեցւոյ...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 92-3:

գ. 1317 թ.՝ «...Գրեցի եւ հաստատեալ կառուցի... զբանս աստուածայնոյն... ի թուականութեան հայկազեան տոհմիս տոմարիս ՉԿԶ. (1317): Ես անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ Յոհ[աննէս] անուն՝ գրեցի... եւ կարգեցի ի դէմս քարտենի, ի գաւառիս Բզնունեաց, յանապատիս Արծկէու, ընդ հովանեաւ սրբոյ աստուածաբնակ խորանացս՝ սուրբ Սիոնի, եւ մաւրս լուսայ Աստուածածնիս, եւ սուրբ եւ աստուածընկալ Նշանիս՝ պայծառ անուամբ սքանչելագործիս...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 131:

դ. 1319 թ.՝ «...Յամի ՉԿԸ. երորդի ի հայկազեան տոհմիս տոմարիս (1319)... գրեցաւ աստուածային այս մատեան... յանապատիս Արձկեու վանս առ[ձայն]եալ, ընդ հովանեաւ սուրբ զՍքանչելագործիս, յառաջնորդութիւն տեղւոյս Սիմէոն աբեղայի...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 154:

ե. 1338 թ.՝ «...Յամի ՉՋԷ. (1338)-երրորդի հայկազեան տոհմիս տումարի... գրեցաւ աստուածային այս մատեան... յանապատիս Արծկոյ վանս առձայնելոյ, ընդ հովանեաւ սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնի, եւ սուրբ Նշանի Սքանչելագործի եւ այլ հաւաքեալ սրբոցս. յառաջնորդութիւն տեղւոյս Յաւհաննէս հաւր». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 314:

զ. 1414 թ.՝ «Գրեալ... ի թուականութեան Հայկազեան տոմարի Պ.-երորդի, Կ.-երորդի, Գ.-երորդի (1414), յերկիրն Արծրունեաց, ի վանքս որ կոչի Սքանչելագործ, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս Սքանչելագործի, օծեալ ձեռամբ առաքելոյն Թադէոսի». տե՛ս ԺԵ. դ. յիշատ., Ա., էջ 167:

է. 1475 թ.՝ «...Աւարտեցաւ քրիստոսահիմն եւ քաջ նահատակաց եւ մարտիրոսաց հոգիաբուխ սուրբ տառս, ի յամի Ջ. եւ ԻԴ. (1475)երրորդի, ի յԱրծկէ քաղաքի, ընդ հովանեաւ ամենամաքուր Սուրբ Աստուածածնին եւ Պատերազմի Սուրբ Նշանին, եւ Սուրբ Սքանչելագործին եւ Նախավկայ Սուրբ Ստեփաննոսին, ի հայրապետութեան Էջմիածնին տեառն Տէր-Սարգսին, ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի Ղազար

քահանայի, ի խնդրոյ սրբասնեալ եւ բարեմիտ գրոց աշակերտին Տէր-Գրիգորին, որ ետ գրել զսա յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց». տե՛ս Ցուցակ Կեսարիոյ-Զմիւռնիոյ, էջ 131:

Յիշ. 1438, 1441, 1442, 1447 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 485, 517, 538, 608:

Յիշ. 1459, 1460, 1463, 1464, 1466, 1467, 1471, 1472, 1475, 1476 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 124, 135, 138, 139, 196, 216, 217, 247, 260, 324, 331, 380, 402:

Յիշ. 1481, 1482, 1483, 1486, 1488, 1491, 1493, 1499, 1500 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 9, 28-9, 38, 85, 119, 173, 175, 195, 276, 283, 296:

Յիշ. 1601 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 7:

1652 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 486, 507:

403* Տեղ. բառ., Դ/565. Դերժկու Ս. Աստուածածնի վանք, Ս. Խաչ - Վանք Բիթլիսի գաւառում, Խիզանի գաւառակում, Սեղ գիւղի մօտ, աւերակ:

404* Տեղ. բառ., Ա/404. Արգելանայ Ս. Աստուածածին, Արգելանի վանք, Արգելանից Ս. Աստուածածին, Արգելան քարանձաւ, Տէր Յուսկան Որդի, Տէր Յուսկան Որդու վանք - Վանք, մենաստան, անապատ Վասպուրական աշխարհի Ծաղկանց լեռների լանջին: Արգելան եւ Տէր Յուսկան Որդի վանքերը երկու տարբեր վանքեր են եղել, հետո միանալով կազմել են մէկ միաբանութիւն: Մինչեւ ԺԹ. դ. վերջերը կանգուն էր: Թիերի՝ Հ^մր 581, էջ 104, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

405* Յիշատ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 639: «Արգելանից վանք՝ ապա Տ. Յուսկան որդւոյ վանք. - Բուն Արգելանից հին վանքն կը գտնուի Բերկրի գաւառի հիւսիսային կողմի լեռան մէջ, կիսակործան, իսկ Վերին Արգելանից վանքէն կէս ժամ հեռաւորութեամբ դէպի Բերկրիի դաշտ զառիվայր իջնելով, լեռան կրծքին մէջ խրուած կառուցուած է Տէր Յուսկան որդւոյ վանք: Այս վանքին մէջ թաղուած է յայտնի Տէր Յուսկան որդի (Արտամետ գիւղացի) Ս. Ստեփաննոս վարդապետը: 1915 թուին սպաննուեցաւ վանքիս վանահայր Տ. Մանուէլ քահանան, վանքն ալ միւսներու նման թալանուեցաւ եւ այրուեցաւ: Գ. Տ.-Վարդ.,՝ Յովհ. Հիւ., էջ 117): Տէր Յուսկան որդւոյ վանուց ձեռագրերն ալ Բերկրի գաւառի գիւղերու եկեղեցիներու ձեռագիրներու հետ ամբողջապէս կորստեան մատնուեցան):

Յիշատակարան՝ ա. 1294 թ. «Գծագրեցաւ... ի թուաբերութեան Հայոց տումարի եւթնհարիւր երրորդի քառասուներորդի երրորդի (1294) ի գաւառիս Տուրբերունոյ... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Արգիլանա Տէր Սարգսի, ընդ հովանեաւ կենունակ Սուրբ Նշանիս Յուսկան որդո եւ Սուրբ Աստուածածնիս, եւ այլ սրբոց...». տե՛ս ԺԳ. դ. յիշ. էջ 735, նաեւ՝ էջ 737:

բ. 1331 թ.՝ «...Յամի Հայկազեան տաւմարի Աբեդական տոհմի ՉՁ. (1331)-երրորդի, ...յեպիսկոպոսութիւն ստացողի գրոց տէր Վարդանայ, ի մենաստանին, որ կոչի Արգելան, ընդ հովանեաւ Աստուածածնիս, եւ սուրբ Նշանիս, եւ Յուսկայ որդոյ սուրբ գերեզմանիս, եւ՝ Յովաննէս... գծագրեցի զշնորհալից զտառս սրբարար եւ աստուածահրաշ...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 235:

գ. 1414 թ.՝ «Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԳԿ. (1414), ի գաւառիս, որ կոչի Տարբերունի, ի սուրբ ուխտս, որ կոչի Յուսկայ որդի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, եւ սուրբ Յարութեանս, եւ սուրբ Կարապետի, եւ սքանչելագործ սուրբ Նշանիս, որ կոչի Կարմիրակն...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 169:

Յիշ. 1418, 1419, 1420, 1425, 1439, 1441, 1449 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 213, 232, 241, 329, 500, 527, 639:

Յիշ՝. 1455, 1457, 1462, 1464, 1473, 1475, 1478 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 54, 79, 175, 218, 352, 381, 425:

Յիշ. 1497 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 238:

Նաեւ՝ յիշ.՝ 1420, 1437, 1450, 1466 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., (Յաւելուած Ա.), էջ 351, 352, 384, 416, 444:

Յիշ. 1634 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 571:

Յիշ. 1425 թ.՝ «Արդ, գրեցաւ սա ի լուսազարդ եւ ի գեղեցկալեղց, աստուածըՆկալ եւ քրիստոսաբըՆակ աՆապատիս Տէր Յուսկայ որդւոյ, ի գաւառիս Բերկրոյ, ըՆդ հովաՆեաւ սուրբ եկեղեցեացս Սուրբ մաւրս լուսոյ տիրամաւր ԱստուածածՆի կուսիՆ, եւ Սուրբ ԿարապետիՆ, եւ Սուրբ ՅարութեաՆս, եւ Սուրբ ԳերեզմաՆաց, եւ Սուրբ Տէր-ՅուսկաՆ որդւոյ ՍտեփաՆՆոս վարդապետի. ըՆդ որս եւ ես՝ աՆպիտաՆս ի մաՆկաՆց եկեղեցւոյ... Գրեցաւ քարոզութիւՆ սուրբ ԱւետարաՆիս... ի թուականՈւթեաՆս ՊՀԴ. (1425), եւ ըՆծայեցաք Տիրամաւր ԱստուածածՆիՆ ի վաՆս Խառաբաստայ, զոր Տէր Աստուած վայելել տացէ յամեՆայՆ ժամաՆակի ի դուռՆ Սուրբ ԱստուածածՆիՆ. ամէՆ». տե՛ս Յուցակ Կեսարիոյ-ՋմիւռՆիոյ, էջ 73:

Այս վաՆքի թուով չորս արձաՆագրութիւՆ Թիերին հրատարակել է իր հետեւեալ յօդուածում. Monasteres Armeniens du Vaspurakan. ReArm, t. XI, 1975-76, p. 377-421. Les couvents d’Argelan et de Saint-Etienne, fils de Ter Housik (Argelanivank et Ter Huskan ordi vank), p. 388-95.

1. ՋՅՈՎՍԻԱՆ ԵՒ ՋԾՆՈՂՍ ԻՒՐ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱՄԷՆ

2. ԹՎ. ՌԾԴ. (1605) ՋԽԱՉՍ ԿԱՆԳՆԵՑԱՒ... ՅԻՇԵՑԷՔ

3. ԹՎ. ՊՀԴ. (1425) ԵՍ ՄԿՉ ՎԴՊՏ ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱ... ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ ՀԱՒՐ ԻՄՈՅ ԱՒՐՊԷԼԻ: ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ ԴՈՎԼԱԹԻ

4. ԵՍ ՅԿԲ ՎՐՊՏՍ ԿՆԳՅԻ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՌ ԱԾ ԹՎ Ջ...

[406]* Տեղ. բառ., Դ/371. ՊըտըլիկՒ վաՆք, ՊտլկՒ վաՆք - ՎաՆք ՎասպուրականՒ ՌշտուՆիք գաւառում, Վանայ լճի հր ափիՆ: ԺԵ. դ. ուՆէր բազմամարդ միաբաՆութիւՆ: Այս վաՆքի աՆուՆից է վերցրել իր աՆուՆը Յովհ. ՊուտլկեցիՆ: Այժմ աւերակՆերՆ իսպառ ջՆջուել եՆ:

[407]* ՅիշատակարաՆ 1444 թ.՝ «Եւ արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքս ՈստաՆ, ի դուռՆ Քարի սուրբ ԱստուածածՆիՆ, որ է ծովահայեաց... ի թուականիս Հայոց ՊՂԳ. (1444)... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս... եւ զայլ ամեՆայՆ հաւատացեալ ՆՆջեցեալք, որ ըՆդ հովաՆեաւ սուրբ եկեղեցեացս հաՆգուցեալ եՆ եւ եղեալ ի սուրբ ուխտս Պըտըլկի վաՆք կոչեցեալ...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 573-4:

[408]* Տեղ. բառ., Ա/865. ԳիՆաբերի վաՆք, ԳիՆաբեր Ս. ՆշաՆ, ԳաՆձակայ ԿեՆաբեր վաՆք, ԳաՆձակայ ԿեՆսաբեր Ս. ԱստուածածիՆ, ԳեՆաբերի վաՆք, ԳիՆեբեր Ս. ՆշաՆի վաՆք, ԿեՆաբեր Ս. Գէորգ, ԿեՆափորի վաՆք - ՎաՆք ՎաՆի ՆահաՆգի Արճէշ (ԱկաՆց) գք-ից մոտ 20 կմ հեռու, ԳաՆձակ գիւղի մօտ: Աւերուել է 1895-96 թթ., 1909 թ. քարուքաՆդ է արուել կաՆգուՆ մՆացած գմբեթՆ ու տաճարը: Հմմտ. Նաեւ Հ. Ոսկ., ՎասպուրականՆ-ՎաՆի վաՆքերը, Բ., ՎիեՆՆա, 1942, էջ 416-7. ԷփրիկեաՆ, ԲՆաշխ. բառ., էջ 528): Թիերի՝ Հմր 523, էջ 95, վիճակ՝ հիմՆովիՆ աւերուած:

[409]* ՏեղաՆուՆ. բառարաՆը ՆոյՆաՆուՆ երկու վաՆք է Նկարագրում. մէկը ՎասպուրակաՆ, միւսը՝ Այրարատ ՆահաՆգՆերում. տես՝ Տեղ. բառ. Բ/842-3. «Ծառաքար, Ծառքար – ՎաՆք Մեծ Հայքի Այրարատ աշխարհի, ըստ ոմաՆց՝ ԳաբեղեաՆք գաւառում, ըստ այլոց՝ Շիրակ գաւառում, ԱՆիի մօտ: Մխիթար ԱյրիվաՆեցու վկայութեամբ կառուցել է 1011 թ. Պետրոս կաթողիկոս Գետադարձը: ՎաՆքի մասիՆ վկայութիւՆՆեր կաՆ Նաեւ Կիրակոս ԳաՆձակեցու, ՎարդաՆ Արեւելցու պատմութիւՆՆերում: ԳաՆձակեցու վկայութեամբ 1028 թ. Վեստ Սարգիսը, Ծառաքար վաՆքը պարսպապատելով եւ

ամրացնելով, փոխում է բերդի»: Հմմտ. տեղ. բառ., Բ/843. «Ծառաքարի վանք՝ Վանք Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, Վան-Տոսպ գաւառում: Պալեանը ենթադրում է, որ այդ վանքը ուղղակի գտնւում էր Վանում»:

Հ. Ոսկեանը գրում է. «Սոյն անունով բաւական հռչակաւոր վանք մը կայ Գաբէղէնք գաւառի մէջ: Պալեան համանուն վանք մըն ալ կը դնէ Վանի նահանգին մէջ». տես Վասպուրական-Վանի վանքերը, Ա., էջ 236:

Թիերի՝ Հմր 321, էջ 60, վիճակ՝ հիմնովին աւերուած:

[410]* Յիշ. «...զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ պարապեալ հաստահեղոյս բրգամբք. յորում ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն Ս. Գէորգայ, շինէ այլ երկուս յարակիցս գմբեթաւորս, զՍ. Յովհաննէս եւ զՍ. Սիքենոս...» տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 47:

[411]* Տեղ. բառ., Ա/309-10. Ապարանքի Ս. Խաչ, Ապարանի Ս. Խաչ, Ապարանից Ս. Խաչ, Ապարանի Ս. Նշան, Ապարանից վանք, Ապարանց, Ապարանց ուխտ, Ապարանք, Ապարանքի վանք, Ս. Աստուածածին, Ս. Խաչ, Ծպատ, Ծպատի վանք, Կանանց վանք, Ս. Կանանց Մեծափառ անապատ, Ս. Կարապետի վանք, Ս. Նշան, Սբկանց Ս. Կարապետ, Սուրբ Կանանց վանք - Վանք Վանի նահանգի Մոկք գաւառում, Ապարանք, Աւնդուք եւ Սբկանց գիւղերի մոտ: Կառուցուել է Ժ. դ.: Մեծ տաճարի դռան վրա կայ մի արձանագրութիւն, ըստ որի այն կառուցել (գուցե վերակառուցել) են Յովհաննէսը, Թուման եւ Ղազարը 1408 թ.: Պահպանուել են այստեղ գրուած մի շարք ձեռագրեր, որոնցից ամենահինը ԺԴ. դ. է: Ըստ աւանդութեան վանքի եպիսկոպոս Ստեփանոս Սիւնեցին 983 թ. Բիւզանդիայից այստեղ է փոխադրել Քրիստոսի մասունքը, մէկ այլ աւանդութեամբ՝ իբր այս վանքում է պահուել նաեւ Ս. Կարապետի ճկոյթը, իսկ Հռիփսիմեան կոյսերի այստեղ հանգրուանելու պատճառով վանքը անուանուել է նաեւ Կանանց վանք: Վանքը լքուել ու ամայացել է 1915 թ.: Թիերի՝ Հմր 554, էջ 100, վիճակ՝ տանիքն աւերուած, բայց պատերը կանգուն են:

[412]* Յիշ. վերահրատ. տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 306:

Այլ Յիշատ.՝ ա. 983 թ. «Ի թուականին Հայոց ՆԼԲ. (983), ի հայրապետութեանն տեառն Վահանայ... Եւ արտաքոյ սորին ունիմք այլ բազում բանս գովեստի երանելոյս խաւսեցեալ, որ են այսոքիկ. Պատմութիւն կենսատու խաչին, որ բերաւ ի Կոստանդինուպաւլսէ ի Հայս ի վանսն կոչեցեալ Ապարանք, ի թագաւորացն պարգեւեալ եւ յարմարեալ ընդ նոյն ներբողեան սուրբ խաչին ըստ այբուբենից տառից...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 143-4:

բ. 1305 թ.՝ «... Արդ, գրեցաւ սա ի թուականութիւնս Հայոցն ՉԾԴ. (1305), ի գաւառիս Քաջբերունւոյ, յանապատիս, որ կոչի Սուրբ Կուսանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Սարգսի...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 37:

գ. 1369 թ.՝ «Գրեալ յերկիրն Մոկաց, ի վանքն Ծպատ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչին, ձեռամբ Ստեփանոսի, ի թվ. ՊԺԸ. (1369): Յիշեցէք զՍարկաւագ քահանայն...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 490:

դ. 1380 թ.՝ «... Գրեցաւ աստուածաբան մարգարէութիւնս Եսայեայ ի սուրբ եւ յընտիր աւրինակէ, ի գաւառս Մոկաց, ի վանս, որ կոչի սուրբ Կանաց, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, ձեռամբ յոգնամեղ եւ անպիտան ու փցուն գրչի Նահապետի, ի թվականիս Հայոց ՊԻԹ. (1380)». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 534:

Յիշ. 1401, 1413, 1421, 1425 թթ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 17, 148, 268-9, 340:

Յիշ. 1488 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 108:

Յիշ. 1604 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 129, 154:

Յիշ. 1630, 1631, 1637, 1638, 1640 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 371, 464, 703, 720, 869:

Յիշ. 1642, 1659, 1660 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 74, 904, 943:

413* Տեղ. բառ., Բ/964. Վանք Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Տոսպ գաւառում, Վան քաղաքի մոտակայքում: Հիմնել է Սահակ եպս.-ը: Ի. դ. սկզբներին վանքի աւերակները հազիւ են նշմարւում: Թիերի՝ Հ^մր 951, էջ 169, վիճակ՝ անյայտ:

414* Տեղ. բառ., Ա/617. Բարակաձորի Ս. Աստուածածին, Ս. Աստուածածին, Բալիձորի վանք, Բարակաձորոյ վանք, Բարեձորի վանք, Բարիձորի Ս. Աստուածածին, Բարձրաձորոյ վանք, Խորանաց վանք, Եօթն Խորան Ս. Աստուածածին, Եօթն Խորան, Եօթն Խորանաց վանք, Եօթն Խորանավանք - Վանք Մոկքում, Խիզանի աւերակներից 7,5 կմ հր-արմ, նոյնանուն ձորում: Վանքի համակառոյցը բաղկացած էր մէկ եկեղեցուց (Ս. Աստուածածին), երեք մատուռներից (Ս. Գէորգ, Ս. Սարգիս, Ս. Մերկերիոս) եւ օժանդակ զանազան շինութիւններից: Մինչեւ ԺԹ. դ. վերջերը բարեկարգ էր ու գործում էր: Կողոպտուել է քրդերի կողմից 1895ին: Վանքի եկեղեցու ընկուզենու փայտից պատրաստուած դուռն ունեցել է ՆՂ (1041) թուակիր արձանագրութիւն, իսկ դռան կամարի վրա՝ կառուցողի անունը՝ «ՋԾԻՆՈՂ ՍՈՐԱ ՀԱՅՐ ԿԱՐԱՊԵՏ»: Վերջնականապէս աւերուել ու ամայացել է 1915 թ.: Թիերի՝ Հ^մր 068, էջ 15, վիճակ՝ տաճարն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

415* Յիշատ.՝ 1497 թ. «...Այլ եւ գրեցաւ սուրբ Գանձարանս ձեռամբ Մկրտչի, ի թվականիս Հայոց ՋԽԶ. (1497), եւ ի հայրապետութեան Էջմիածնի տեառն Սարգսի... Այլ եւ կայցէ սուրբ Գանձարանս ի վանքս Բարիձորոյ, ի դուռըս սուրբ Աստուածածնի եւ ի սրբոցս, որ աստ կան հաւաքեալ...». տես՝ ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 237-8:

Յիշ. 1451 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. Բ., էջ 9:

Յիշ. 1497 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 238:

Յիշ. 1610 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 395:

Յիշ. 1621 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 41, 44:

416* Տեղ. բառ.՝ Ա/362. հեղինակները ընդունում են երկու տարբեր Աւեր վանքերի գոյութիւնը, իսկ հ. Բ., էջ 744 (տե՛ս Աւեր վանք, Հ^մր 19)՝ համարում են, որ Խնդրակատարի վանքն է միակ Աւեր վանքը. «Խնդրակատարի վանք - Կէմ գ-ի հս կողմում: Այժմ աւերակ է: Պալեանը Վասպուրականում յիշատակում է երկու աւեր վանքեր. մէկը՝ Կէմ, միւսը՝ Աթանանց գ-ի մօտ: Սրանք հարեւան գիւղեր են, եւ հաւանաբար երկու դէպքում էլ նկատի պիտի ունենանք այս վանքը»: Վասպուրականի վանքերի մասին տե՛ս Խաչիկ Լեւոնեանի «Այց մը մի քանի մոռցուած վանքերու - Աղթամարի թեմերը» յօդուածը, Բիւզանդիոն, 1902, Հմր 1905, էջ 1-2:

417* Տեղ. բառ., Գ/442-3. Յովհաննավանք, Ամատունեաց Ս. Կարապետ, Անավանք, Ս. Իոհանի վանք, Հանավանք, Հաննավանք, Յովանավանք, Յովաննու վանք, Յովհանայ անապատ, Յովհանավանաց մենաստան, Ս. Յովհաննու Կարապետի վանք, Յովհաննու վանք, Սիւղի վանք, Սովի վանք, Սուղի վանք, Օհանավան, Օհանավանք - Վանք Արագածոտն գաւառում, Քասախ գետի ափին, գեղատեսիլ վայրում: Կառուցուել է Ե-ԺԳ. դդ.: Աւանդութիւնը նրա հիմնադիր համարում է Գր. Լուսաւորչին: Սկզբում վանահոր՝ Սիւղի անունով կոչուել է Սիւղի կամ Սովի վանք, իսկ ժողովուրդը կոչել է Հաննավանք: Վանքի հնագոյն կառոյցը Ե. դ. է, որ խարխուլ վիճակում հասել է մինչեւ օրս: Գլխաւոր տաճարը կառուցուել է 1216-1221 թթ., Վաչուտեան իշխանի հրամանով: Գաւիթը, որ կցուած է նշուած եկեղեցիներին, կառուցել է տուել նրա որդի Քուրդ իշխանը 1250 թ.: Զ. դարից ի վեր արդէն յիշատակւում է որպէս «մեծահռչակ»: ...Պատերին

կան ԺԳ-ԺԸ. դդ. բազմաթիւ արձանագրութիւններ, որոնք վերաբերում են վանքի կառուցումներին ու վերանորոգումներին, նուիրատուութիւններին: ԺԹ. դ. սկզբներից վանքի գործունէութիւնը դադարում է: Վանքի պատմութիւնը գրել է Զաքարիա Սարկաւագը: Ունէր հարուստ մատենադարան: Եղել է հայ գրչութեան յայտնի կենտրոններից: Վանքի համալիրը վերջին անգամ վերանորոգման է ենթարկուել խորհրդային տարիներին: Այն պահպանւում է պետութեան կողմից: Թիերի՝ Հ$^{մր}$ 632, էջ 113, վիճակ՝ կանգուն, վերականգնուած:

[418]* Ծահխաթունեանի վանահայրերի ցանկը ունի 32 անուն: Տ. Պալեանի մօտ անհասկանալիօրէն բացակայում են հետեւեալ անունները՝ ա. Գրիգոր Լուսաւորիչ, գ. Ղազար Փարպեցի, ժէ. Գրիգոր, ժթ. Նահապետ, իգ. Ղուկաս ի թուին ՌԽԸ. (1599), իզ. Ղուկաս ի թուին ՌՁ. (1631), իէ. Յովհաննէս եպս. Կարբեցի ի ՌՁԳ. (1634). տե՛ս Ծահխաթ., հ. Բ., էջ 111-2: Միաժամանակ՝ Ծահխաթունեանը չունի ցանկի վերջին՝ «Սարգիս եպս.» անունը:

Յիշատակարան՝ ա. 1154 թ. «Ես Գրիգոր նուաստ ի մակս քանակութեանց ուսումնական, արտադրութեանց, յազատ տանէ, ստացա զմարգարիտս հաւատոյ, յաւերժ ցնծութիւն անձին եւ յիշատակ հոգոյ. ի ՈԳ. թուոյ կազմեցի ձեռամբ իմով, յաշխարհն Այրարատեան՝ ի վանս Յովհաննու, ի դուրս սրբոյ Կարապետիս: Աղաչեմ, որք աւկտիք, յիշել աղաւթիւք եւ զենմամբ մարմնոյն Քրիստոսի». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատ., էջ 365-6, վերահրատ.՝ ԺԳ. դ. յիշ., էջ 173:

բ. 1288 թ.՝ «...Արդ, գծագրեցաւ սա ի նոյն վանս Յոհանու Սրբոյ Կարապետիս եւ մաւր լուսոյ Սրբոյ Կաթողիկէիս, հրամանաւ եւ արդեամբք տէր Համազասպայ, ի թվաբերութեանս Հայոց ՉԼԷ. (1288)...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 612:

Յիշ. 1289, 1293, 1294 թթ.,՝ տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 633, 635, 722, 733:

գ. 1310 թ.՝ «...Արդ, գրեցաւ գիրս ձեռամբ ամենամեղ անձին՝ Սարկաւագիս, յընտիր եւ յստոյգ աւրինակէ... Ի թուականիս Հայոց ՉԾԹ. (1310), յաշխարհակալութեան ազգին նետողաց... եւ ի դասապետութեան մեծ իմաստնոյ Եսայոյն: Ի գաւառս Այրարադու Անբերդ կոչեցելոյ, ի սուրբ եւ յաստուածաբնակ հանդիսարանիս Յոհանավանք, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս եւ մեծափառ Կաթուղիկէիս գրեցաւ, յեպիսկոպոսութեան եւ յառաջնորդութեան աթոռայս տէր Ներսէսի...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 65-6:

Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, Գ. հատորը՝ բաղկացած 16 գլխից, Յովհաննավանքի պատմութիւնն է:

Յիշ. 1317 թ.,՝ տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 129:

Տե՛ս նաեւ յիշ.՝ 1462, 1476, 1477 թթ., ԺԵ. դ. յիշատ., Բ., էջ 171, 408-9, 417:

Յիշ. 1625, 1631 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 177, 424:

Յիշ. 1651, 1656, 1659, 1660 թթ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 428, 444, 708-9, 887, 914-5, 917-9:

[419]* Թիերի՝ Հ$^{մր}$ 629, էջ 113, վիճակ՝ կանգուն:

[420]* Յիշատակարան՝ 1450 թ. «Արդ, գրեցաւ սա ի գաւառս Այրարատեան, սկսումն սորա՝ ի սուրբ Էջմիածինն, եւ կատարում սորա ի Բիւրական, ընդ հովանեաւ սրբոյն Յովհաննու Մկրտչի ձեռամբ ամենամեղ եւ թարմատար գրչի Գրիգորի, ի թվականութեանս Հայոց մեծին ՊՂԹ. (1450) ամի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 412:

[421]* Տեղ. բառ., Գ/438-9. Հոռոմոս, Խոշավանք, Խորոմիզի վանք, Կարմիր վանք, Կոշավանք, Հոռոմոսի մենաստան, Հոռոմոսի Ս. Յովհաննէսի վանք, Հոռոմոց վանք, Հորոմի վանք, Հոռոմոսի վանք, Ղոշավանք: - Վանք Շիրակ գաւառում: Հիմնադրուել է Ժ. դ. առաջին կէսին Աբաս Բագրատունի թագաւորի օրոք, Բիւզանդիայից Հայաստան

փախած հայ վանականների կողմից, (այստեղից էլ ծագել է նրա անունը՝ հոռոմների վանք): Վանքի համալիրը բաղկացած է Ս. Մինաս (930-953) ու Ս. Գէորգ (կառուց. 1013ից հետո) եկեղեցի-դամբարաններից եւ Ս. Յովհաննէս եկեղեցուց, գաւթից՝ 1038 թ., հիւրատնից, մատուռներից, խաչքարերից: Ենթադրում է, որ սովորաբար այս վանքում էին տեղի ունենում Բագրատունի թագաւորների գումարած արքայական ժողովները: Վանքը նորմալ գործել է մինչեւ ԺԳ. դ. վերջերը, որից հետո աստիճանաբար անշքացել է, իսկ պարսիկներին անցնելուց հետո իսպառ աւերւում է եւ ամայի մնում մինչեւ 1685 թ.: ԺԷ. դ. վերջերից այն նորից է աշխուժանում ունենալով բաւական բազմամարդ միաբանութիւն: Մեր օրերն է հասել կիսախարխուլ վիճակում: Թիերի՝ Հմր 313, էջ 59, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[422]* Պալեանը, ինչպէս խոստացել է, 1912 թուականին ձեռնարկել է Կարապետ եպիսկոպոսի կազմած «Համառօտ տեղեկագրութիւնք եւ յիշատակարանք»ի վեց տետրակներից պահպանուած երկուսի հրատարակութեան՝ սկսելով Անի քաղաքի եկեղեցիներից ու վանքերից: Յայտնի է նրա հրատարակած մէկ յօդուած, որ շարունակելի պէտք է լինէր (տե՛ս «Դաշինք» օրաթերթ, 1912, Զմիւռնիա, թիւ 755): Սակայն, քանի որ թերթի հաւաքածուն մեր գրադարաններում ամբողջութեամբ չկայ, դժուար է ասել՝ հասցրել է հրապարակել ամբողջը, թէ՝ այդ միակ հրապարակմամբ էլ մնացել է անաւարտ, ինչպէս որ Պալեանի շատ գործերին էր վիճակուած նոյն բախտը: Հմմտ. ծնթ. 15*:

Հոռոմոսի վանքի մասին գրել է Ա. Մխիթարեանը՝ «Պատմական տեղեկութիւնք զհաստատութենէ Հոռոմոսին վանաց ի Շիրակ», Արարատ, 1870:

Յիշատակարանք՝ ա. 1181 թ. «...Գրեցաւ աստուածային եւ կենարար Աւետարանս ի թուիս Հայոց ի ՈԼ. (1181) ի տիեզերահռչակ վանս Հոռովմոսի, ընդ հովանեաւ սուրբ Յովաննիսի, ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ յառաջնորդութեան ուխտիս Խաչատրոյ...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 484, վերահրատ.՝ Ե-ԺԲ. դ. յիշ., էջ 233:

Յիշ. 1187, 1211, 1225 թթ.,՝ տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 517, 750, 841-2, 844:

բ. 1214 թ.՝ «Եւ գրեցաւ ի թուիս ՈԿԳ. (1214), ձեռամբ Իգնատիոս մեղաւորի:... Հոռոմոսի վանացն ոսկետուփ Աւետարանն եւ այս՝ մին գրչի է գրած». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 84:

գ. 1232 թ.՝ «...Եւ արդ, գրեցաւ սա ձեռամբ Իգնատիոսի ապաշնորհ եւ մեղապարտ գրչի, ի ՈՁԱ. (1232) թուականի, ի մեծահռչակ ուխտս ի Հոռովմոսի կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետիս...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 888: Վերահրատ.՝ ԺԳ. դ. յիշ., էջ 179:

դ. 1249 թ.՝ «Աւետարանս Հոռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս յԱւետեացս, որդոյ Խաչեղբաւրն, աղաչէ յիշել յաղաւթս: Ի ՈՂԸ. (1249) թվին». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 252:

Յիշ. 1459 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 122:

Յիշ. 1485 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 70:

[423]* Տեղ. բառ., Գ/445. Յովհաննու Մկրտչի վանք - Վանք Սալմաստի գաւառում, Սալմաստ գք-ից հս: Ի. դ. սկզբներից ամայի է:

[424]* Տեղ. բառ., Գ/443. Մուղուդի Ս. Յովհաննէս, Նուխուդի վանք - Վանք Մեղրու շրջանում Մեղրի քաղաքից ոչ հեռու: Յիշատակւում է ԺԱ-ԺԳ. դդ.: Ստ. Օրբէլեանի մետրոպոլիտութեան ժամանակ մտնում էր Նորավանքի եպիսկոպոսական վիճակի մէջ եւ ունէր խստակրօն բազմամարդ միաբանութիւն: Երկար ժամանակ շրջակայ հայ բնակիչների համար ուխտավայր էր: Աւերակներն այժմ կան, եւ դրանց դիմաց նշմարւում է

մի գիւղատեղի: Թիերի՝ Հմր 723, էջ 128, վիճակ՝ տաճիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[425]* Տեղ. բառ., Դ/736. Տե՛ս Վահանավանք, Յովհաննավանք, Ս. Յովհաննէսի վանք, Յովհաննու վանք, Վահանու Ս. Ուխտ, Վահանուվանք, Վահանու ուխտ - Վանք Սիւնիքի Ջորք գաւառում: Աւերակները գտնւում են Կապան քաղաքից 6-7 կմ արմ: Կառուցել է Սիւնիքի իշխան Վահանը 911 թ. եւ իր անունով կոչել Վահանավանք: Հետագայում, մինչեւ ԺԱ. դ. վերջերը վանքի համալիրին աւելացուել են նոր շինութիւններ: Վանքի գլխաւոր եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ չափերով փոքր, բայց աւելի շքեղ ու գեղեցիկ Ս. Աստուածածինը այժմ աւերակ են: Ժ-ԺԱ. դդ. Սիւնիքի կրօնա-ուսումնական խոշոր կենտրոններից էր, որի միաբանների թիւը հարիւրից աւելի էր: Այստեղ են թաղուած Հայոց Արեւելից կողմանց եւ Սիւնիքի իշխաններն ու թագաւորները: Ենթադրում են, որ այստեղ պէտք է թաղուած լինի նաեւ Դաւիթ Բէկը: 1960-70-ական թթ. վանքում կատարուել են պեղումներ եւ վերականգնման աշխատանքներ: Տարածքում յայտնաբերուել են տապանագրեր եւ արձանագրութիւններ: Թիերի՝ Հմր 704, էջ 125, վիճակ՝ տաճիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[426]* Ստեփանոս Օրբէլեան պատմիչը, որ իր Պատմութեան մէջ բազմաթիւ էջեր նուիրել է Սիւնեաց աշխարհի վանքերին ու եկեղեցիներին (Յախացքար, Հերմոնի վանք, Գնդեվանք, Թանահատի վանք, Նորավանք) այս վանքի մասին գրել է. «...Վահան ոմն... կամեցաւ շինել վանս եւ հաստատել կրօնաւորական դասս մշտապաշտօն քահանայից: ...նախ խնդրէ աղօթիւք ի Տեառնէ յաջողել զգործս ձեռաց իւրոց եւ ապա հրաւիրէ զեղբարսն իւր ի նոյն գործ. եւ սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն եւ կանգնէ տուն փառացն Աստուծոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբեթայարկ եւ եռախորան, հաստահեղոյս եւ տաշածոյ վիմօք. եւ կարգէ զնա տուն կրօնաւորաց: Կոչէ Վահան զվանսն յիւր (անուն) Վահանու վանք. եւ այնուհետեւ եւ օր ըստ օրէ հանդիսանայր նա իբրեւ քաղաք բազմաժողով: ...Եղեւ շինութիւն սուրբ ուխտին յ360 (911) թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ, յիշխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, ի Բաղաց Ջեւանշէրի, յեպիսկոպոսութեան Սիւնեաց՝ Տեառն Յովհաննիսի»: Տես՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, էջ 238-41:

[427]* Տեղ. բառ., Ե/475. Տե՛ս Օձունի վանք, Ս. Յովհաննէս, Յովհաննու վանք, Յովհաննու Օձնեցւոյ ուխտ, Ս. Յովհան Օձնեցի, Յովհան Օձնեցու վանք, Օհան Ուձնեցու ուխտ, Օհան Օձնեցիի վանք, Օձնայ Ս. Աստուածածնի վանք, Օձուն - Վանք Գուգարք աշխարհի Տաշիր գաւառում: Աւերակները գտնւում են Լոռու մարզում Արդվի գիւղից հարմ: Բաղկացած է կիսաւեր տաճարից, սրան կից կառուցուած կամարակապ մատուռից, որի հս կողմի խորանում, սեղանի առաջ գտնւում է Յովհաննէս Օձնեցու գերեզմանը: Վանքը կառուցել է կաթողիկոս Յովհան Օձնեցին Ը. դ.: Վանքից քիչ բարձր, Ծեղ Աղբիւր լ-ն գագաթին կայ մի այր, որտեղ ըստ աւանդութեան ճգնել է Յովհան Օձնեցին, որի համար էլ անուանուել է Օհան Օձնեցու այր: Հմմտ. Հ. Ոսկ., Գուգարքի վանքերը, էջ 54-7:

[428]* Յիշատակարան՝ ա. 1397 թ. «...Թվ. ՊԽՋ. (1397) բերաւ սա ի Կիլիկիոյ գաւառէն... ձեռամբ Յովանէս նուիրակիս, եւ կազմեցաւ ի սուրբ անապատս, որ կոչի Գուգարաց վանք, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու Մկրտչին եւ մօր լուսոյ սուրբ Աստուածածնին...». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 619:

բ. 1478 թ.՝ «...Որ եղեւ աւարտ սորա ի թվականիս Հայոց ինն հարիւրի եւ ԻԷ. յաւելորդի (1478), ի գաւառիս Տաշրա, ի սուրբ ուխտս Յոհանու Ուձունեցո...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 429:

[429]* Տեղ. բառ., Ե/193-4. Տե՛ս Ուշիի Ս. Սարգիս, Ուշի վանք, Յուշոյ վանք, Ս. Սարգիս, Ս. Սարգսի վանք, Ուշի գիւղի մենաստան, Ուշի Ս. Գէորգի մենաստան, Ուշի Ս. Սարգիս, Ուշոյ Ս. Սարգիս, Ուշոյ վանք - Վանք Արագածոտնի մարզում, Ուշի գիւղից արմ: Վանքի Ս. Սարգիս եկեղեցին հաւանաբար Ե-Է. դդ. է կառուցուել: Ժ. դ. կառուցուել է մատուռը: ԺԱ-ԺԲ. դդ. Ս. Սարգիս եկեղեցուն կից կառուցուել է ընդարձակ գաւիթը, որի դռան վրայ կայ 1329 թ. մի անաւարտ արձանագրութիւն: Աւելի հին է արմ դռան արձանագրութիւնը՝ 1264 թ... Կանգուն էր մինչեւ ԺԹ. դ. վերջը: Տաճարի տանիքն ու գմբեթը խարխլուել են 1827 թ. երկրաշարժից, հետո նորոգուել են: Եղել է գրչութեան կենտրոն: Յիշատակում են Առաքել Դաւրիժեցին եւ Սիմէոն Երեւանցին: Ղ. Ալիշանը վկայում է մի աւանդոյթ, ըստ որի՝ Մեսրոպ Մաշտոցն է հիմնադրել այս վանքը եւ այնտեղ թաղել տուել Ս. Սարգսի մասունքը: Թիերի՝ Հ[մր] 631, էջ 113, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը: Ոսկան Երեւանցու ընդօրինակած մի Ժողովածուի 1656 թ. յիշատակարանը ամբողջութեամբ հրատարակել է Ն. Եպս. Պողարեանը «Հայկական վանքեր» շարքի մէջ՝ Ս. Սարգիս վանք Ուշոյ. տե՛ս Սիոն, 1966, էջ 548-9:

[430]* Յիշատակարան՝ 1310 թ. «...Արդ, գրեցաւ գիրս ձեռամբ ամենամեղ անձին՝ Սարկաւագիս, յընտիր եւ յստոյգ աւրինակէ... Ի թուականիս Հայոց ՉԾԹ. (1310)... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ եւ արդեամբք ամենաւրհնեալ Մամախաթունին եւ ընծաեցաւ Ուշոյ սուրբ զաւրավարին Սարգսի, մի ոք իշխեսցէ հանել եւ հեռացուցանել ի վկայարանէ սուրբ զաւրավարին...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 65-6:

Յիշ. 1660 թ.,՝ տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 914:

[431]* Տեղ. բառ., Բ/741-2. Խծկոնք, Բեշքիլիսա, Ս. Գրիգոր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Խծկոնից մենաստան, Խծկոնից վանք, Խծկոնքի վանք, Խծկունք, Խծկունքի վանք, Խնձկոնք, Խցկունք հինգ, Հինգ սուրբք, Ս. Սարգիս, Ս. Սարգսի վանք - Վանք (մենաստան, ուխտ) Շիրակ գաւառում, Տեկորի վանքից 2-3 կմ արմ: Վանքի համալիրը կազմուած է հինգ եկեղեցիներից, կառուցուած Թ-ԺԱ. դդ., խաչքար-կոթողներից, վանքի օժանդակ շինութիւններից: Առաջին տաճարը՝ Ս. Կարապետ (Է. դ.), արմ ճակատին եղել է 1006 թ. արձանագրութիւն: Ս. Կարապետին կից են Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին եկեղեցիները: Ս. Սարգիսը Սամուէլ Անեցու վկայութեամբ շինել է Վեստ Սարգիսը 1027 թ., հնագոյն արձանագրութիւնը՝ 1033 թ.: Արձանագրութիւններից մէկը (1211 թ.) յիշատակում է Զաքարէ սպասալարին: Եկեղեցու հս կողմի խաչքար-կոթողին կան 1031 թ. եւ 1216 թ. արձանագրութիւններ: Վերջինս Զաքարէի որդու՝ Շահնշահի ձեռքով վանքի վերնորոգման մասին յիշատակութիւն էր: Ս. Աստուածածին եկեղեցին կառուցուել է 955 թ.: Եղած արձանագրութիւնները, որ հասնում են մինչեւ ԺԳ. դ., գրեթէ ամբողջութեամբ վերաբերում են նուիրատուութիւններին: 1240-ական թթ. վանքը համարեայ լքւում է: 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ վանքը ազատւում է թուրքական տիրապետութիւնից եւ վերանորոգւում, յարմարեցւում է դպրոցի համար: Ի. դ. սկզբներին այս վանքի հինգ գեղեցիկ գմբեթներով եկեղեցիները, թէեւ լքուած ու ամայի, բայց դեռեւս մնում էին կանգուն՝ իրենց փառայեղ գեղեցկութեամբ: Գրեթէ նոյն տեղեկութիւնները՝ հմմտ. Էփրիկեան, հ. 2, գիրք Ա, էջ 177-81: Թիերի՝ Հ[մր] 316, էջ 59, վիճակ՝ նախ՝ տանիքն աւերուած, պատերը՝ կանգուն, ապա՝ հիմնովին աւերուած:

[432]* Յիշատակարան՝ 1236 թ. «...Թուական ՈՁԵ. (1236): Արդ, մեծ յուսով եւ հաւատով ստացայ զաստուածախաւս մատեանս զայս պայծառ նիւթով եւ գեղեցիկ գրով եւ ընտիր բանիւք, ցանկալի ամենայն տեսաւղաց՝ ի յարդար վաստակոց իմոց եւ աւանդեցի զսա ի հրեշտակաբնակ ուխտն Խծկաւնս, որ Տիկորայ վանք կոչի, ի Սուրբ Սարգիս եւ ի Սուրբ Գրիգոր եւ ի Սուրբ Յակոբ՝ ի ձեռն Պաւղոս վարդապետին...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 910, վերահրատ.՝ տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 193-4:

[433]* Տեղ. բառ., Ա/765. Գագայ Ս. Սարգիս, Ս. Սարգիս - Վանք այժմեան Նոյեմբերեանի շրջանի Կոթի գիւղից մօտ 7 կմ արլ: Ըստ մի աւանդութեան կառուցել է Ս. Մեսրոպը ու իբր այստեղ է գտնւում նրա գերեզմանը, ինչպէս եւ Ս. Սարգսի մասունքները: Ունի երկու մատուռ եւ մի գաւիթ: Եկեղեցու վրայ կան արձանագրութիւններ, որոնցից մէկի համաձայն եկեղեցին վերակառուցել է կոթեցի Արզուման Խաչատրեանը 1838 թ.: Այժմ աւերակները պահպանւում են: Տե՛ս նաեւ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 217-8): Թիերի՝ Հմր 895, էջ 158, վիճակ՝ անյայտ:

[434]* Նկատի ունի Ս. Սարգսի տօնի առթիւ «Բիւզանդիոն, 1900, թ. 1019»-ի հրապարակման մէջ եղած համարակալումը:

[435]* Տեղ. բառ., Ա/211-2. Ամարազ, Ամարէն, Արմարաս, Մարաս - Վանք Արցախի Միւս Հաբանդ գաւառում: Հիմնադրուել է Գր. Լուսաւորչի կողմից, Դ. դ. սկզբներին: Երկար ժամանակ Աղուանքի կաթողիկոսական կենտրոնն էր: Վերջին անգամ վերանորոգուել է 1858 թ.: ԺԹ. դ. վերջերից վանքը լոկ ուխտատեղի է: Ունէր իր դպրոցը՝ հիմնադրուած Ե. դ. Մաշտոցի կողմից: Այստեղ է թաղուած Գր. Լուսաւորչի թոռը՝ Հայոց Աղուանից կաթողիկոս Գրիգորիսը: Թիերի՝ Հմր 804, էջ 142, վիճակ՝ տաճիքը պահպանուած, կանգուն: Հմմտ. Խ. վ. Դատեան, Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, Արարատ, 1896, էջ 42-5. նաեւ՝ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 25-30 (յշտկ.՝ 1559, 1664):

[436]* Տեղ. բառ., Դ/755. Վանեվան, Ս. Գրիգոր, Կթանոց, Կթանոցի վանք, Վանավան, Վանավան Ս. Գր. Լուսաւորիչ, Վանավանի վանք, Վանավան Միւս, Վանավանու մենաստան, Վանավանք, Վանաց վանք, Վանեվանայ մենաստան, Վանեվանից վանք, Վանեվանք - Վանք Սիւնիք աշխարհի Գեղարքունիք գաւառում, Արծուանիստ գիւղի մօտ: Համալիրի մէջ մտնում են երկու եկեղեցիներ, երեք մատուռ եւ գաւիթ: Եկեղեցիներից մէկը կոչւում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Վանքը կառուցել է Սմբատ Ա. Բագրատունի թագաւորի որդին՝ Ծապուհ Բագրատունին, 903 թ., որի մասին վանքի վրայ թողնուել է արձանագրութիւն: Նուիրատուներից յիշատակուած է նաեւ պատմիչ Ստեփանոս Օրբելեանի հայրը՝ Տարսայիճը: Գիւղի եւ վանքի տարածքում յայտնաբերուել են ուրարտական թագաւոր Ռուսա Ա.ի՝ 730-714 թթ. սեպագիր արձանագրութիւնը: Տե՛ս նաեւ Ծահխաթունեան, հ. 2, էջ 250-1: Թիերի՝ Հմր 712, էջ 126, վիճակ՝ կանգուն:

[437]* Տեղ. բառ., Գ/91-2. Տե՛ս Կեչառիս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Դարաչիչակի վանք, Էջառիս, Կեչառու վանք, Կեչառիսի վանք, Կեչառոս, Կեչառուած Ս. Աստուածածին, Կեչառուաց վանք, Կեչառուոց վանք, Կեչառոյք, Կեչառուս, Կեչառուսի վանք, Կեչառու Ս. Լուսաւորիչ - Վանք Հրազդանի շրջանի Ծաղկաձոր քաղաքում: Ճարտարապետական մեծ համալիր է, որը ձեւաւորուել է ու ամբողջացել ԺԱ-ԺԳ. դդ. Պահլաւունի եւ Պռօշեան իշխանների ջանքերով:... Համալիրի եկեղեցիներից է Ս. Գրիգոր Լուսաւորիչը, կառուցուել է Գր. Մագիստրոսի նախաձեռնութեամբ 1003 թ., վերանորոգուել է ԺԲ-ԺԳ. դդ., զգալիօրէն տուժել է 1827 թ. երկրաշարժից: Եկեղեցուն կից ԺԲ. դ. կառուցուել է գաւիթը: Ս. Նշան եկեղեցին վերանորոգուել է ԺԳ. դ.: Կաթողիկէ եկեղեցին կառուցել է Խաղբակ իշխանի որդի Վասակը: Ճարտարապետը եղել է Վեցիկը, որի

գերեզմանը գտնւում է եկեղեցու մօտ: Համալիրից փոքր ինչ արմ. գտնւում է Ս. Յարութիւն՝ փոքրիկ, բայց գեղեցիկ ու ճաշակաւոր եկեղեցին: Յուշարձանի տարածքում կան պատմա-ճարտարապետական այլեւայլ կոթողներ: Վերանորոգուել է 1939, 1947-48, 1957 թթ.: Թիերի՝ Հ[մր] 670, էջ 120, վիճակ՝ կանգուն, վերականգնուած:

[438]* Յիշատակարանք՝ ա. 1184 թ. «...Այսպէս ես թշուառս Աստուածատուր լոկ անուամբ կրօնաւոր եւ անպիտան աբեղայ, ցանկացեալ սուրբ եւ երկնատեղեաց տանիս... ի միասին հաւաքեալ է աշխատասէր եւ արի մշակին Տեառն հմտասէր եւ հանճարեղ իմաստիւք Հոգւոյն՝ Սարգիս կոչեցեալ եւ Կունդ, ժողովեալ զսոսա ի միասին, զերկոցունց գլխոց աւետաբեր բանից Տեառն զմեկնութիւնս... Եւ արդ, գրեցաւ ի վանս հռչակաւոր եւ հրաշազան հանդիսարանիս Կեչառուս, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, որ եւ պայծառապէս ճոխացեալ ի սկզբանն... Բայց գրեցաւ ի թուականիս Հայոց ՈԼԳ. (1184)». տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 399, վերահրատ.՝ Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 497-500: Ե-ԺԲ. դ. յիշ., էջ 245-6:

բ. 1232 թ.՝ «Զխաղաղութիւնն եւ զողորմութիւնն Քրիստոսի ի սուրբ ուխտէս Կե - չառուաց անպակաս արասցէ [ՈԶԱ. 1232]». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 185:

գ. 1491 թ.՝ «Արդ, եղեւ կատարումն սուրբ Աւետարանիս ի թվականութեան հայկազեան տումարի Ջխ. (1491) թվականին, ի դառն եւ ի չար ժամանակի... եղեւ յաւարտ խնդրոյս իմոյ՝ Գալուստ անարժան աբեղի, ի յաստուածապահ գաւառս Բուժկան, ի յերկնահանգէտ եւ ի գերահռչակ ուխտս Կէչառուս, ի դրան մաւրս լուսոյ սուրբ Աստուածածնիս, եւ հրաշափառ սուրբ Գրիգոր կաթողիկէիս, եւ Աւագ սուրբ Նշանիս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 164:

Յիշ. 1499թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ *282*:

[439]* Տեղ. բառ., Ա/319. Առապարի Ս. Գրիգոր - Վանք Այրարատ աշխարհի Արագածոտն գաւառում: Հաւանաբար հիմնադրուել է Գ. դ., Ջուարթնոցի տեղում: Այդ պատճառով էլ սովորաբար նոյնացնում են նաեւ Ջուարթնոցի հետ: Հմմտ. Տեղ. բառ., Բ/320-1՝ Ջուարթնոց - Առապարի Ս. Գրիգոր, կառուցուել է Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի յանձնարարութեամբ: Շինարարութիւնը տեւել է 643-652 թթ.: Ջուարթնոցի տեղում հետազոտութիւններ կատարել են Խաչիկ վրդ. Դադեանը, ճարտարապետ Թորոս Թորամանեանը: Այստեղ պահպանուել է նաեւ Ռուսա Բ.ի սեպագիր արձանագրութիւնը: Ջուարթնոցի օրինակով Հայաստանում հետագայում կառուցուած կոթողներից լաւագոյնը Անիի Գագկաշէն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին է (ԺԱ. դ.): Ջուարթնոցը որոշակի ազդեցութիւն է ունեցել նաեւ եւրոպական ճարտարապետութեան վրայ: Աւե - րուել է ըստ երեւոյթին Ը-Թ. դդ.: Էփրիկ., Բնաշխ. բառ., հ. Ա., էջ 236-7. «Վաղարշապատու Առապարի մէջ, Էջմիածնէն կէս ժամ հեռու՝ արեւելակողմն կը գտնուէր երբեմն հռչակաւոր եկեղեցիս, որ այժմ գրեթէ բոլորովին անհետացած է: ...Է. դարու մէջ Ներսէս Գ. Շինող կառուցանել տուաւ հոյակապ եւ հրաշակերտ եկեղեցի մը, որ Սե - բէոսի գրածին համեմատ, նախ կոչուեցաւ յանուն երկնաւոր Ջուարթնոց, եւ ի վերջոյ փոխուած է յանուն Ս. Գրիգորի...»: Հմմտ. Այրարատ, էջ 244-6: Թիերի՝ Հ[մր] 658, էջ 118, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[440]* Տեղ. բառ., Բ/803. Խոր Վիրապ, Արտաշատի մենաստան, Ս. Գրիգորի վանք, Ս. Գրիգոր, Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Լուսաւորչի վանք, Խորվիրապ, Խորվիրապ Ս. Գրիգոր, Խորվիրապ վանք - Վանք Այրարատի Ոստան գաւառում: ...Վանքը ԺԸ. դ. երկար ժամանակ ամայանում է: Միայն 1765 թ. Սիմէոն Երեւանցին կարողանում է կրկին վերանորոգել այն: Համալիրը հիմնովին վերանորոգուել է մեր օրերում: Թիերի՝ Հ[մր] 618, էջ 111, վիճակ՝ կանգուն, [վերականգնուած]:

[441]* Յիշատակարանք՝ ա. 1266 թ. «...Կատարեցաւ սա ի Վիրապն, մինչ կաար մեք ի յուսման, ի թվին ՉԺԵ. (1266)...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 346, 347:

բ. 1267 թ.՝ «...Բայց առաջին սկիզբն սորա եղեւ ի տիեզերահռչակ սուրբ ուխտն Վիրապին... [1267]». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 351:

գ. 1267 թ.՝ «...Եւ սկսաք ՉԺԶ. (1267) թուին, ի Սուրբ Վիրապին, եւ կատարեցաւ ՉԺԷ. (1268), ...ի սուրբ ուխտս Աղչոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիա...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 365:

դ. 1271 թ.՝ «...Ի թվին Հայոց ՉԻ. (1271) գրեցաւ յետին գիրս, առ դրան Սրբոյ Վիրապիս». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 402:

Յիշ.՝ 1662, 1671, 1675, 1676 թթ.,՝ տե՛ս Ն. եպս. Ծովական, Հայկական վանքեր, Խոր Վիրապ, Սիոն, 1968, էջ 262-3:

[442]* Տեղ. բառ., Ա/963. Ս. Գրիգոր, Ս. Գէորգ, Մայրաքաղաք, Փարպիի վանք - Վանք, մենաստան Աշտարակի շրջանի Փարպի գիւղի մօտ, նրա արլ. կողմում: Պահպանուել են աւերակները: Ըստ աւանդութեան կառուցել է տուել Գր. Լուսաւորիչը Դ. դ.: Արձանագրութեան մէջ ասւում է, որ այն նորոգել է տուել Աբուղա իշխանը 1264 թ.: Ստ. Ասողիկը անուանում է Ս. Գէորգ: - Էփրիկեանի բառարանը (հ. Ա, էջ 537) այս նոյն տեղեկութիւններից բացի ունի 1264 թ. արձանագրութեան յիշատակութիւն եկեղեցու դռան վրայ:

[443]* Տեղ. բառ., Դ/482-3, (Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՆԱՊԱՏ-Սաղմոսավանք՞). Վանք ՀՀ Արագածոտնի մարզում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գաւառի մէջ: Վանքը տեղադրուած Քասաղ գետի աջափնեայ գեղատեսիլ բարձունքի վրայ: Սիմէօն Երեւանցու հաղորդած աւանդութեամբ՝ Սաղմոսավանքը հիմնադրուել է Գրիգոր Լուսաւորչի նախաձեռնութեամբ, Դ. դարի առաջին տասնամեակներում: Համալիրը բաղկացած է Ս. Սիոն եկեղեցուց, գաւթից, գրատնից եւ Ս. Աստուածածին եկեղեցուց: Շրջակայքում պահպանուել են ԺԳ., ԺԴ. դդ. խաչքարեր, ու տապանաքարեր: Կառոյցի պատերի վրայ ներսից ու դրսից կան վիմագիր արձանագրութիւններ: Գլխաւոր շինութիւնը Ս. Սիոն եկեղեցին է, որը կառուցել է Վաչուտեան Վաչէ իշխանը 1215 թ.: 1255 թ. կառուցուել է վանքի գրատունը, 1235 թ.՝ Ս. Աստուածածին եկեղեցին (վերանորոգուել է 1669 թ.): Վերանորոգուած: Թիերի՝ Հմր 630, էջ 113, վիճակ՝ վերականգնուած:

Յիշ.՝ 1185-8 թ., Տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 508:

Յիշ.՝ ա. 1195 թ. «...Գրեցի զսայ յանապատ քարանձաւի, որ է մերձ ի վանս Սաղմոսի, ըստ չափոյ խարմանի ճանապարհի: ...Եւ զՅովհաննէս սրբասէր քահանայ, որ զընտրեալ գաղափարս ետ, որ ի վանիցն Յովհաննու, յիշեսջիք ի Քրիստոս: Ի ՈԽԴ. (1195)». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ.-ք, էջ 595-6:

բ. 1320 թ.՝ «Բայց գրեցաւ սայ ձեռամբ թարմատար եւ... ի թվ. Հայոց ՉԿԹ. (1320), ի սուրբ քաւարանիս, որ անապատ կոչի եւ Վանք Սաղմոսի, եւ է Աստուծով, որոց աղաւթիւք սոցա աւժանդակել...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 163-4:

գ. 1413 թ.՝ «...Ի թուականիս Հայոց ՊԿԲ. (1413) գրեցաւ լուծմունքս ի սուրբ մենաստանիս Սաղմոսի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 144:

Յիշ.՝ 1436 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 465:

Յիշ.՝ 1496 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 226:

Յիշ.՝ 1623, 1635 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 97, 621:

դ. 1651 թ.՝ «...Արդ, ես՝ Սարգիս էրէցս ըստացայ զսբ. Աւետարանս եւ ետու զսայ ընծայ եւ նըւէր յիշատակ վերոյ գրելոցս ի սմայ ի սբ. եւ հրեշտակայբնակ անապատսն

Լուսաւորչին մերոյ ի ձորն Սաղմոսայվանից եւ դուռն Ս. Աստուածածնին եւ այլ սրբոցն... Ի թվիս Հայոց Ռ. եւ հարիւր (1651)». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 426:

ե. 1657 թ.՝ «Ի թվականիս Հայոց ՌՃԶ. (1657) ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տեառն Յակոբայ... ես՝ Յովհաննէս եպիսկոպոս, սպասաւոր եւ վերակացու Սաղմոսավանից եւ Լուսաւորչի սբ. յանապատիս, տուէլ էր Ապարանցի մելիք Յովասափ...». տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 763:

Յիշ.՝ 1657, 1659, 1660 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 758, 786, 887, 926:

[444]* Տեղ. բառ., Բ/318. Ս. Զօրավար, Առաքելոց վանք, Եղիվարդայ վանք, Եղիվարդայ մենաստան, Եղիվարդի վանք, Ս. Թէոդորոս, Ս. Լուսաւորչայ վանք, Ս. Լուսաւորչի անապատ - Վանք Նաիրիի շրջանի Եղվարդ աւանից 3 կմ հս-արլ: Կառուցել է իշխան Գր. Մամիկոնեանը 661-685 թթ.:

[445]* Յիշատակարան՝ ա. 912 թ. «...Եւ ի բռնակալութենէ հարաւային զօրացն, բազում տանջանք եհաս ի ժամանակին յայնմիկ: ...սեւագունդ զօրքն պարսից բազում ուխտս աւերէին, եւ զսպաս եկեղեցեաց անհուն բազմութեամբ խաղացոյց ի Բաբելոն, եւ զմեծ մենաստանն որ կոչի Բագուանու վանք, բազում ոսկովք եւ ակամբք պատուականաւք եւ արծաթեղէն սպասուք եւ մեծագին հանդերձիւք, զայն ամենայն յաւար առեալ եւ զսուրբ Կաթողիկէն ի Վաղարշապատ քաղաքին, որ կոչի Ծողակաթ, եւ զսուրբ Գրիգորն եւ վանքն Եղեւվարդու եւ զվանքն Վահանա, եւ զվանքն Ծապհոյ եւ զբազում ուխտս եկեղեցեաց յաւարի առեալ, խաղացոյց ի Բաբելոն եւ խաւար գծեաց աշխարհիս Հայոց, մինչեւ եկն եհաս առ մեզ, որ կոչի Խաչի վանք եւ յափշտակեալ զսպաս եկեղեցացս: ...Ապա յերեք հարիւր վաթսուն եւ մէկ թուականին Հայոց, ի կատարման Սմբատայ, մեծ կործանումն եղեւ աշխարհիս Հայոց եւ առհասարակ երկիրս աւերեալ կործանեցաւ». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 15-6:

բ. 1318 թ.՝ «...Արդ, գրեցաւ սայ ի թուաբերութեանս Հայկազեան տոմարիս եաւթնհարիւր եւ վաթսուն եւ եաւթն (1318) ի խընդրոյ հրաշափառ եւ... Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղսասէր քահանայի Ներսէսի, ի յԱյրարատեան գաւառիս, ի մեծ մենաստանիս յԵղիվարդ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, եւ սուրբ Գրիգորիս, եւ սուրբ Յակոբիս, եւ այլ միահամուռ սրբոց առաքելոց, հրամանաւ եւ արդեամբք պարոն Ազիզպէկին եւ Վախախին...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 142:

Յիշ.՝ 1465 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 232:

[446]* Տեղ. բառարանը՝ Բ/609, նոյնպէս սրանից աւելին չունի:

Յիշատ.՝ 887 թ. «...Թագաւորէ Հայոց Աշոտ ամս Ե.: Հայ թվականն ՅԼԶ. (887) էր: ...Թագաւորէ Աբաս ամս ԻԴ.: Սա շինեաց վանս՝ Կաթուղիկէն, զԿարուց մեծ եկեղեցին, զսուրբ Գրիգորն ի Քաղաքուդաշտի:...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատակարանք, էջ 87:

[447]* Տեղ. բառ., Գ/408. Տե՛ս Հերմոնի վանք, Ահերմոն, Ահերմոնի Ս. Գրիգոր, Ահերմոնի վանք, Ս. Գրիգոր, Հերմոնավանք, Սիւնեաց Ս. Գրիգորի վանք, Քարավանք, Քարէ վանք - Վանք Սիւնիք աշխարհի Վայոց Ձոր գաւառում: Հիմնադրել է 936 թ. Սիւնիքի Սմբատ իշխանը, հետագայում վանքի համալիրը լրացուել է նոր եկեղեցիներով, ԺԳ. դ. այն համարւում էր Սիւնիքի առաւել յայտնի վանքերից մէկը: Վանքի համալիրը բաղկացած էր մի քանի եկեղեցիներից, պարսպապատ ընդարձակ բակից, տնտեսական շինութիւններից, գերեզմանոցից: Առաջին եկեղեցին կառուցուել էր Ժ. դ. եւ կրում էր Գրիգոր Լուսաւորչի անունը: Ինչպէս այդ, այնպէս էլ հետագայում կառուցուած միւս եկեղեցիները՝ Ս. Յակոբ, Ս. Ստեփանոս, Ս. Սահակ եւ միւսները հիմնայատակ աւերուել էին: Նրանց աւերակների վրայ, նոյն եկեղեցիների քարերով ԺԶ-ԺԷ. դդ. կառուցուել է ներկայումս հին անունով կոչուող Ս. Գրիգոր եկեղեցին: Թուական ունեցող արձանա-

գրութիւններից հնագոյնը 1226 թ. է, իսկ նորագոյնները՝ ԺԶ-ԺԷ. դդ.: Միջնադարեան Հայաստանի գրչութեան եւ մշակոյթի յայտնի կենտրոններից է: ԺԴ. դ. Տիրատուր վարդապետը հիմնել է Հերմոնի դպրոցը: Թիերի՝ Հմր 643, էջ 115, վիճակ՝ շատ վատ, սակայն հնարաւոր է վերականգնել արտաքին տեսքը:

[448]* Յիշատակարանք՝ ա. 1338 թ.՝ «...Գծագրեցաւ ի նահանգիս Վայոձոր, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի... (1338)». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 303:

Յիշ.՝ 1348 թ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 369:

բ. 1349 թ.՝ «Գրեցաւ աստուածային եւ հոգեբուխ մատեանս... ի նահանգիս Սիւնեաց, ի Ջորս Վայոց, ի վանս Հերմոոնի, ...ի թուականութեան յաբեթեան տոհմիս տաւմարի մերձ կատարման վեշտասան յոբելինին, պակաս երկու ամ՝ ՉՂԲ. (1349)». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 378:

գ. 1394 թ.՝ «...Խնդրող բանին տեառն Յիսուսի... յեղակարծ ժամու գտեալ եղեւ ի յարկեղս գրոց ի հին վարժարանի ի Հերմոնի վանս կոչեցեալ, առ ոտս Ծերուն րաբունւոյ... Գրեցաւ սա ի թվիս ՊԽԳ. (1394), ի դուռն...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 608:

դ. 1413 թ.՝ «Արդ, գրեցաւ եւ յանկ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային... ի թուաբերութեանս Հայոց յՊ-երորդի վաթսներորդի երկրորդի (1413)... եւ մասն ինչ ի վանս Հերմոնի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 143:

Յիշ.՝ 1414, 1415, 1418, 1419, 1424, 1426, 1441, 1449 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 163, 164, 174, 175, 214, 320, 349, 527, 638, 656:

ե. «Թվ. ՋԱ. (1452): Ջվերջին ստացող սուրբ Աւետարանիս զՍարգիս վարդապետ Հազարենց Հերմոնավանից՝ Արեւելից, որ գնեցի զսուրբ Աւետարանս եւ եմիփորոն մի ի գրաւէն, եւ եդի ինձ յիշատակ ի սուրբ Յակոբ ի յԵրուսաղէմս...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 28:

Յիշ.՝ 1457, 1460, 1469, 1472, 1473, 1478 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 85, 133-4, 290, 291, 338, 348, 429:

զ. 1481 թ.՝ «...Ի թվականիս Հայոց ՋԼ. (1481) եղեւ զրաւ սորա ի վանս Հերմոնի ի յերկիրս Վայիձոր յորջորջեալ. առաջնորդ սուրբ ուխտիս Սարգիս քաչ եւ արի վարդապետի եւ այլ միաբանիցս, որ անդ կան ժողովեալ. յիշեցէք յաղօթս եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ., էջ 15:

Նաեւ յիշ.՝ 1423, 1451 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Գ. (Յաւելուած Ա.), էջ 361, 419:

[449]* Տեղ. բառ., Ա/630-1. Բարձրաքաշ Ս. Աստուածածին, Ս. Աստուածածին, Բարձրաքաշ Ս. Գրիգոր, Ս. Գրիգոր, Ճերմակ վանք - Վանք Գուգարքի Տաշիրք գաւառում: Կառուցուել է ԺԱ. դ. Մամիկոնեանների կողմից: Յուշարձանների այս համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից: Մեծ եկեղեցու շինութիւնը սկսել է Մարզպան Մամիկոնեանը 1221 թ., որի մասին եկեղեցու հարաւ. պատին կայ համապատասխան արձանագրութիւն: Վանքում եղել է Մամիկոնեանների այդտեղի ճիւղի պանթեոնը: Այդ կառոյցների վրայ կան տարբեր բովանդակութեամբ ու տարբեր ժամանակների (Ժ-ԺԴ. դար) մինչեւ 41 վիմագիր արձանագրութիւններ: Վանական կառոյցների մի մասը սպիտակ քարից է եւ այդ պատճառով էլ կոչւում է նաեւ Ճերմակ վանք: Իսկ նրա միւս անունը՝ «Բարձրաքաշ», ըստ աւանդութեան ծագել է նրանից, որ կաթողիկէ տաճարը շատ բարձր է եղել եւ նրա գմբեթի ծայրը երեւում էր հեռու տարածութիւններից: Վանքի ճակատին պահպանուել է Մամիկոնեանների տոհմանշանը: Յուշարձանների այդ համալիրը մեր օրերն է հասել կիսաւեր վիճակում: Թիերի՝ Հմր 754, էջ 134, վիճակ՝ տանիքն աւերուած է, բայց պատերը՝ կանգուն:

[450]* Տեղ. բառ., Ա/984. Գուքիի Ս. Նշան, Գուգոյ վանք, Գուքի վանք, Գուգիոյ վանք, Կուգիի վանք, Կուգոյ վանք, Կուքիի Հազարափրկիչ, Կուքիի Ս. Նշան, Կուքի վանք, Կուքոյ վանք, Հազարաբիւր, Հազարաբիւրաց Ս. Նշան, Հազարաբիւրաց վանք, Հազարափրկիչ Ս. Նշան - Վանք Սիւնիքի Ճահապոնք գաւառում, Գուքի գիւղում, [այժմ Նախիջեւանի շրջանի Քիւքիւ գիւղ]: Նշմարւում են վանքի ու նրան կից դպրատան պատերի աւերակները՝ գետնից 2-3 մ բարձր: Պարիսպներից դուրս հս-արմ կողմում վանքի գերեզմանատունն է: Կառուցուել է ԺԲ-ԺԳ. դդ., վերանորոգուել՝ ԺԷ. դ.: Միջին դդ. այն եղել է Սիւնիքի նշանաւոր մշակութային կենտրոններից մէկը, որտեղ գրուած ձեռագրերից մի քանիսը պահպանուել ու հասել են մեզ: Ճէնքի քարաբեկորների եւ 20ի չափ գերեզմանաքարերի վրայ կան հայերէն արձանագրութիւններ: Թ'իերի՝ Հմր 820, էջ 145, վիճակ՝ տանիքն աւերուած, բայց պատերը կանգուն են:

[451]* Յիշատակարան՝ ա. 1278 թ. «Գրեալ յամի Տեառն ՌՄՀԶ. (1276), թվին Հայոց ՉԻԷ. (1278), ի վանս Կուքուայ». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 468:

բ. 1332 թ.՝ «... Մարկոս կրօնաւոր, եւ յետոյ գտեալ դրուագրեաց ըստ պատշաճին: Եւ գրել ետ զսայ ի վանս Կուքոյ, ի տան մեծի սրբարանիս եւ աստուածաբնակ տաճարիս Աստուածածնիս եւ սուրբ եւ ահեղ, հզօր Նշանիս՝ Հազար ու Բուրացս... Արդ, գրեցաւ սա ի ժամանակս հայրապետութեան Հայոց տեառն Յակովբա, եւ ի թագաւորութեանն Լեւոնի... Ի խաղանութեանս Պուսահտին, զոր ԺԸ. (18) էր ամ խանութեան նորա, եւ ի յառաջնորդութեան ուխտիս մերոյ տէր Սարկաւագիս [1332 թ.]». տե՛ս ԺԴ. դ. յիշատ., էջ 247:

գ. 1462 թ.՝ «...Արդ, գրեցօ սա ի թվականիս Հայոց ՋԺԱ. (1462), ձեռամբ անարհեստ եւ փցուն գրչի Յուսեփ յետին եպիսկոպոսի, ի ձորս Ճահապունից, ի վանքս Գուգոյ, ընդ հովանեօ սուրբ Խաչիս որ կոչի Հազարաբուրք, եւ Կաթուղիկէ սուրբ Ստեփանոսի, եւ սուրբ Աստուածածնի, եւ սուրբ Նշանիս Քառասնից, եւ նշխարաց սուրբ Վարդանանց...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 171:

Յիշ.՝ 1471, 1478 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ., Բ., էջ 318-9, 430:

Յիշ.՝ 1488, 1492, 1493, 1495, 1496 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 117, 186, 192, 217, 230:

[452]* Տեղ. բառ., Գ/188. Կոթիփորոյ վանք, Ընկուզագոմ, Ընկուզագոմի վանք, Կոթիփոր, Կոթիփորայ Ընկուզագոմ, Կոթիփորոյ Ընկուզագոմ - Վանք Գուգարք աշխարհում, նախկին Կոթի կամ Կոթիփոր (այժմ՝ Նոյեմբերեանի շրջանի Ճաւարշաւան) գիւղում: Յիշատակարան՝ 1427 թ. վանքի կառուցման աւարտի մասին: Հմմտ. Հ. Ոսկեան, Գուգարքի վանքերը, էջ 32): Թ'իերի՝ Հմր 963, էջ 171, վիճակ՝ անյայտ:

[453]* Տեղ. բառ., Բ/793. Խորանաշատի վանք, Խորանաշատ վարդապետարան, Խորենաշատ, Խորենաշատի վանք Վանականի, Վանական Վարդապետի վանք - Վանք Մեծ Հայքի Ուտիք գաւառում: Հիմնադրել է Յովհաննէս Վանական Վարդապետը: Հմմտ. Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, 1953, էջ 148-60: Թ'իերի՝ Հմր 751, էջ 133, վիճակ՝ կանգուն:

[454]* Յիշատակարան՝ 1223 թ. «Աւրհնեալ է Աստուած յաւիտեանս, որ հասին ի վերջին գիծս Նախախնամական գրոցս, ի թովիս ՈՀԲ. (1223), ի տաւնի Աստուածածնիս, ի վանք Խորանաշատու, շինեալ Վանականի իմ վարդապետիս...». տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 136-7:

Յիշ.՝ 1252, 1255, 1283 թթ. տե՛ս ԺԳ. դ. յիշ., էջ 264, 281, 539:

Յիշ.՝ 1627, 1631, 1637, 1639, 1640 թթ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 255, 466, 700, 785, 809:

Յիշ.՝ 1642 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 72:

[455]* Տեղ. բառ., Գ/472. Գետարգել, Գետարգել Ս. Նշանի վանք, Գետարգելայ Ս. Նշան, Ջագաւան, Ջագաւանից մենաստան, Ջագաւանից վանք, Ս. Նշան, Ս. Նշանի վանք - Վանք Այրարատ աշխարհի Կոտայք գաւառում, այժմեան Աբովեանի շրջանի Առինջ գիւղի արլ կողմում: Ունէր երկու տաճար, որոնցից մէկը՝ Ս. Նշան (Է. դ.), իսկ միւսը՝ ԺԳ. դ., եղել է երկհարկանի շինութիւն: Երկրորդ հարկը չի պահպանուել: Պատերին կան բազմաթիւ վիմագիր արձանագրութիւններ: ԺԷ. դ. եպիսկոպոսանիստ էր: Աւերուել է հիմնականում 1679 թ. Երեւանի երկրաշարժի ժամանակ: Թիերի՝ Հմր 605, էջ 109, վիճակ՝ տանիքն աւերուած, բայց պատերը կանգուն են:

[456]* Յիշատակարան՝ ա. 1024 թ. «Ի սմին աւուր յիշատակ ըսքանչելեացն, որ եղեն ի Գետարգել Ս. Նշանէն, ձեռամբ Պետրոսի կաթուղիկոսին, յամի ԳԾ. եւ ՀԳ. (1024) թուականիս Հայոց՝ առաջի մեծ կայսերն Վասլի ի Տրապիզոն...». տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշ., էջ 215-6:

բ. 1425 թ.՝ «Արդ, գրեցաւ սա յաստուածաբնակ սուրբ ուխտս, որ կոչի Ջագավանք, ընդ հովանեաւ սուրբ Գետարգելիս, եւ սուրբ Սարգսիս՝ Կուրանց կոչեցեալ... Գրեցաւ գիրքս ի թվականիս Հայոց ՊՀԴ. (1425), ի խնդրոյ հօր վանիցս Դաւթի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 334, նաեւ էջ 336:

Յիշ.՝ 1481 թ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 14:

[457]* Տեղ. բառ., Ա/145. Վանք Երեւանի նահանգի Նոր Բայազետի գաւառում, Սեւանայ լճի ափին: Յիշատակւում է ԺԹ. դ. երկրորդ կէսի աղբիւրներում, այժմ աւերակ:

[458]* Տեղ. բառ. Բ/91. Դերիկի Ս. Աստուածածին, Դերիկայ Աստուածամոր վանք, Դերիկ, Դերիքի Ս. Աստուածածին, Տերիկի Ս. Աստուածածին - Վանք Սալմաստի գաւառում: Հնում՝ Առնա վանք, Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհում: Չի յիշատակւում, թէ երբ է հիմնադրուել, եղել է նշանաւոր ուխտատեղի, 90-ական թթ. սկզբին վանքը վերանորոգուել է, սակայն նրա բարւոք վիճակը երկար չի տեւում: 1894ին հարձակվում ու քարուքանդ են անում վանքը, որի կառոյցներից այժմ պահպանուել են միայն մի քանի բեկորներ: Հմմտ. Տեղ. բառ. Ե/806՝ Ուղղուած կամ ճշգրտուած տեղանուններ): Թիերի՝ Հմր 905, էջ 161, վիճակ՝ անյայտ:

[459]* Անհասկանալի վրիպում է, Պալեանը չէր կարող Ղրիմը շփոթել Իտալիայի հետ:

[460]* Յիշատակարանք՝ ա. 1428 թ. «...Գրեցաւ Խազտետրս ի թուականութեան Հայոց ՊՀԷ. (1428) ... ի յաշխարհս Հոնաց, ի մայրաքաղաքս Կաֆայ, ընդ հովանեաւ եւ յառ ոտն սրբոյն Անտոնի անապատականին...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 390:

բ. 1429 թ.՝ «...Գրեցաւ Ճարակնոցս ի թվին Հայոց ՊՀԸ. (1429) ամի... Արդ, եղեւ սկիզբն եւ զրաւ եղանակաւոր տառիս յաշխարհս Հոնաց, ի վանս սուրբ Անտոնին, առընթեր Կաֆայ... քաղաքին, առաջնորդութեամբ վանացս... տեառն Սարգսի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 395:

Յիշ.՝ 1431, 1432, 1439, 1440, 1445 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 414, 428, 502, 511, 591:

գ. 1435 թ.՝ «...Գրեցաւ Խազտետրս ի թվ. Հայոց ՊՁԴ. (1435) ամի, ձեռամբ ապիկար... գրչի Աւգսէնդ կրաւնաւորի... յաշխարհս Հոնաց, ի վանս, որ յանուն սրբոյն Անտոնի, որ է առընթեր մեծի մայրաքաղաքի Կաֆայի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա, էջ 459:

դ. 1441 թ.՝ «...Արդ, գրեցաւ Տաւնացոյցս բոլոր տարոյն ի թվ. Հայոց ՊՂ. (1441) ամի, ձեռամբ անարհեստ եւ փցուն գրչի Աւգսէնդ սուտանուն աբեղայի..., ի մայրաքաղաքս ի Կաֆայս, առ ոտս սրբւոյն Անդոնի ճգնաւորին». տե՛ս ԺԵ. դ. յիշ., Ա., էջ 527:

Յիշ.՝ 1427, 1433 թթ., տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., (Յաւելուած Ա. ), էջ 368, 373:

Յիշ.՝ 1640 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 798:

Յիշ.՝ 1643 թ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Գ., էջ 90:

461* Պալեանը յիշատակարանի սոսկ այս նշումով էլ աւարտում է, առանց հրատարակելու յիշատակարանը: Լրացնում ենք այդ բացը յիշատակարանների հրատարակութեան ԺԵ. դարի Ա. հատորից: Սակայն, յայտնի է եւ մէկ յիշատակարանի գոյութիւնը՝ 1346 թ., որ ժամանակագրութիւնը չխախտելու համար դնում ենք 1410 թ.ից առաջ:

Յիշատակարան՝ ա. 1346 թ. «...Յամի եւթնհարիւրերորդի իննսուններորդի հինգերորդի, թուաբերութեանս Հայոց նոր տումարիս (1346), ի գաւառիս Խրիմի, ի մայրաքաղաքիս Սուրխաթ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի...». տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 350:

բ. 1410 թ.՝ «...Արդ, եղեւ կատարումն եւ զրաւ գրոցս Հարցմանց ի յայսմ տարոջ, որ արփիածին եւ երջանիկ մեծ հռետորն Գրիգոր վարդապետն... Ի շրջագայութեան Հայկազեան տումարի ի ՊԾԹ. (1410) գրեցաւ այսմ մեծարգոյ նահանգիս Ղազրաց աշխարհի Ղրըմիս, ի շրջակայ մենաստանս եւ ի հրեշտակաբնակ անապատս, առ դուրս սուրբ Լուսաւորչին: Աղաչեմ... յիշել զՅովանէս աբեղայն՝ զհարազատն իմ... եւ զՍիմէոն կրօնաւորս յիշել...». (տե՛ս Նօտարք, եր. 36) (Հիւզ., 1900, թ. 1066, էջ 1). վերահրատ.՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 108-9:

Նաեւ յիշ.՝ 1356, 1359 թթ., տե՛ս ԺԴ. դ. յիշ., էջ 419, 442, 444:

Յիշ. 1431 թ.,՝ տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 415:

գ. 1412 թ.՝«...Ծրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տումարի հայկազեան սեռից՝ հարիւրից կրկնակի քառից եւ միոյ թուոյ եւ Ժ.-անց վեցից (1412), զղանութիւնն Ծալալատին սուլտանն, որդի Թօղթամիշին. եւ տիրեաց աշխարհիս մերում, որ կոչի Սուրխաթ: Գրեցաւ սայ ի յայսմ նահանգիս ի հրեշտակաբնակ վանորեայս, առ դուրս սուրբ Լուսաւորչիս, որ է հուպ սուրբ Յովանէսին, որ կոչի Օթուզ. ետ եւ զպատուելի ծերունին զՏաւնական վարդպետն, եւ զհեզահոգի եղբայրն մեր զԹադէոս կրօնաւորն. եւ զՍարգիսն յիշեցէք». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., (Յաւել. Ա.) էջ 328:

դ. 1483 թ.՝ «...Գրեցաւ Մաշդոցս ի մայրաքաղաքս ի Կաֆաս, ի վանքս առ ոտս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի հայրապետութեան Տեառն տէր Սարգսի եւ եպիսկոպոսութեան տէր Յոհանէս Բանձարկերի, եւ առաջնորդի վանացս տէր Թորոս եպիսկոպոսի, թվին Հայոց ՋԼԲ. (1483), դէկտեմբերի Ի. (20), ձեռամբ Մեղիտէ սստանուն աբեղի...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Գ., էջ 51:

ե. 1601 թ.՝ «...Արդ, գրեցաւ սա ի մայրաքաղաքս Կաֆայ, առ ոտս Ս. Լուսաւորչին, ի թվին Հայոց ՌԾ. (1601)...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 7:

Յիշ.՝ 1606, 1607, 1610, 1611, 1612, 1615 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ., Ա., էջ 235, 246, 375, 415, 471, 546:

Վանքի մասին նոյն տեղեկութիւնները տե՛ս Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխ. բառ., հ. 2, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 111:

462* Թիերի՝ Հ^մր 923.1, էջ 165, վիճակ՝ կանգուն:

463* Միւս երեք վանքերի նկարագրութիւնը տես՝ «Վանի եւ շրջակայքի...» բաժնում, հմր. 270-2:

464* Յիշատակարան՝ ա. 1432 թ.՝ «...Եւ գրեցաւ սա ի սուրբ... ընդ հովանեաւ սուրբ Յարութեան եւ սուրբ Գողգոթային... Ի թուականութեանս Հայոց ՊՁԱ. (1432)...». տե՛ս ԺԵ. դ. յիշ. Ա., էջ 429:

բ. 1625 թ.՝«Գրեցօ Մեկնութիւն սաղմոսացս Ներսէս Լամբրօնացւոյն ի թվին Հայոց ՌՀԴ. (1625), ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յարութեան եւ լուսաբուխ ս. գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ սբ. Աթոռ Հայոց ազգին Ս. Յակոբ՝ Զեբեդայ որդին...». տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 182:

Յիշ.՝ 1625, 1630, 1634, 1638 թթ. տե՛ս ԺԷ. դ. յիշ., Բ., էջ 182, 390-2, 566, 572, 864:

Յիշ.՝ 1651, 1652 թթ., տե՛ս ԺԷ. դ. յիշ. Գ., էջ 458, 512:

465* Պէտք է գրէր՝ «Ծամշատինցի», որովհետեւ Մ. եպս. Մուրադեանը ծննդով Հայաստանի ներկայիս Տաւուշի մարզի Տաւուշի ենթաշրջանի Տաւուշ (Թովուզ) գիւղից էր:

466* Արշակ Ալպօյաճեանը, Իզմիրի հայոց առաջնորդները, «Դափնի», 1922, էջ 280-2՝ արել է Պալեանի շարադրանքի լրացումներ. «Թող ներուի ինծի ցոյց տալ մի քանի պակասներ եւ թերիներ Գերապատիւ հեղինակին»: